



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝



Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



ՎԵՐԺԻՆԵ ՄՎԱԶԼՅԱՆ

**ԴՈՒՍԱՆԱՅՈՅ
ԲԱՆԱՆԻԿՈՒԹԻՒՆ**





Ն.Ա.Տ. ՄԵՍՐՈՊ Բ. ՊԱՏՐԻԱՐԷ
ԿՈՍՏԱՆՆՆՈՒՊՈԼՍՈՅ

201

Մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնենք
Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք
Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արք. Սուրբաֆեանին,
քանզի իւր հովուապետական բարեշնորհ
հովանաւորութեամբ
ի սպառ կորուստէն կը փրկուին
եւ
սերունդներուն կ'աւանդուին
Պոլսահայոց ժողովրդական բանահիւսութեան
սոյն նշխարները:

Վ. Ս.

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

VERJINÉ SVAZLIAN

**THE FOLKLORE
OF THE ARMENIANS OF
CONSTANTINOPLE**

“Gitutian” Publishing House of NAS RA
YEREVAN - 2000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԵՐԺԻՆԷ ՍՎԱԶԼԵԱՆ

**ՊՈԼՍԱՂԱՅՈՑ
ԲԱՆԱՂԻՒՍՈՒԹԻՒՆԸ**

ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն
ԵՐԵՒԱՆ - 2000

դՏՅ 398=919.81
ԳՍԴ 82.37
Ս 850

Կը տպուի ԳԳ ՉՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԳՁԱԳՐՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐԻՈՒՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Պատասխանատու խմբագիր՝ Բանասիրական գիտություններու Տօքթօր,
Փրոֆեսօր **Սարգիս Յարութիւնեան**

Լեզուաբան-խմբագիր՝ Բանասիրական գիտություններու Տօքթօր,
Փրոֆեսօր **Պետրոս Պետիրեան**

Գիրքը հրատարակութեան են երաշխաւորել գրախօսներ՝
բանասիրական գիտություններու թեկնածուներ
Ալվարդ Ղազիեանը ԵՒ **Սվետլանա Վարդանեանը**

Համակարգչային շարուածք՝ **Հարութիւն Մարութեան**

ՍՎԱԶԼԵԱՆ Վ.Գ.

Ս 850 Պոլսահայոց Բանահիւսութիւնը / Խմբ.՝ Ս. Յարութիւնեան: ԳԳ ՉՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԳՁԱԳՐՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՄԻ - Եր.: ԳԳ ՉՆԱ «ԳԻՏՈՒԹԻՒՆ»
հրատ., 2000, 592 էջ, 1 մամ. ներդիր:

Ս ոյն ժողովածուն կ'ընդգրկէ արդի պոլսահայ համայնքէն գրի առնուած
հայ ժողովրդական բանահիւսութեան բոլոր տարատեսակներէն նմոյշներ, ինչպէս
նաեւ ազգագրական ծեսեր:

Պատմամշակութային Ակնարկին մէջ կ'ուրուագծուի 1461-ին Թուրքիոյ
Հայոց Պատրիարքութեան հիմնադրումէն մինչեւ մեր օրերը յարատեւող հայ հա-
մայնքին մշակութային կեանքին պատկերը:

Առանձին բաժինով կը տրուի բանահիւսական նիւթերուն ընդհանուր
բնութագրութիւնը:

Ժողովածուն ունի նաեւ Բանահիւսական Նիւթերու Յաւելուած, Բա-
ռարան, Երգերու Նօթագրութիւններ, Բանասացներու եւ այլ պատկերներ, Ծա-
նօթագրութիւններ, ինչպէս նաեւ անգլերէն ամփոփում:

ԳՍԴ 82.37

Ս 4702080105 2000
703(02) - 00

ISBN 5 - 8080 - 0404 - 7

© Վ. ՍՎԱԶԼԵԱՆ, 2000



ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադե-
միայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գի-
տական աշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆե-
սոր Վերժինե Սվազլյանի սույն աշխատությունն ուշագրավ ներդրում
է հայ բանագիտական մտքի պատմության մեջ: Առաջին անգամ է մե-
զանում պոլսահայ բանավոր ավանդությունն արժանանում բազմաժա-
նրր գրառման, հետազոտման և ամբողջական հրատարակման: Ուշա-
գրավ է նաև այն, որ այդ տքնաջան աշխատանքն իրագործվել է ար-
մատներով պոլսահայ մտավորականի՝ հայաստանաբնակ մասնագետի
անձնական մախաճեռնությամբ, այն էլ կարճատև ժամանակամիջո-
ցում, հեղինակի համառ ջանքերի և հոգեռանդ նվիրումի շնորհիվ:

Ներկա հատորն ամփոփում է արդի պոլսահայության, այդ թվում
նաև ընթացիկ դարի 20-ական թվականներից Թուրքիայի գավառներից
Մտամբուլ ապաստանած հայության ներկայացուցիչներից, մասամբ
նաև հայաստանաբնակ պոլսեցիներից անձամբ հեղինակի գրառած
բանավոր ավանդության հարուստ տեսականին, որ հատկանշվում է
ոչ միայն բանահյուսական դասական ժանրերով, այլև պոլսահայու-
թյան կենցաղն ու հոգեբանությունն արտացոլող ազգագրական ու մշա-
կութաբանական արժեքավոր տվյալներով:

Այդ հարուստ ու բազմաժանր նյութերը հատորում ենթարկվել են
գիտական պատշաճ համակարգման, օժտվել անհրաժեշտ ծանոթա-
գրություններով, բանասացների սեռատարիքային տվյալներով ու լու-
սանկարներով, օտար ու բարբառային բառերի բացատրական բառա-
բանով, պոլսահայ համայնքը բնութագրող պատմամշակութային ներա-

ծական ակնարկով, ինչպես նաև ժողովածուի մեջ ընդգրկված բանահյուսական-ազգագրական բազմաժանր նյութերի սեղմ բնութագրումներով:

Հեղինակի համառ, տքնաջան, նպատակամետ աշխատանքի շնորհիվ այսօր հայ ընթերցողի սեղանին է դրվում պոլսահայության արդի բանավոր ավանդության համայնապատկերը բնորոշող բանագիտական մի ամբողջական աշխատություն, որն իր հայագիտական անուրանալի արժեքից բացի ունի նաև համազգային ու համամարդկային նշանակություն՝ ժողովուրդների խաղաղ, ստեղծագործ համակեցության առումով:

Սույն աշխատությունը մեկ անգամ ևս վկայում է ծագումով պոլսահայ հեղինակի անմնացորդ հոգեհարազատությունն արևմտահայությանը, որի տարբեր հատվածների բանավոր ավանդության հազարավոր նմուշների գրառման, հետազոտման ու հրապարակմանն է նվիրել նա իր գիտակցական ու գիտական ամբողջ կյանքը:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

16 հունիսի, 1999



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Այ բանագիտութեան անբաժանելի մասը կազմող արեւմտահայ բանահիւսութիւնը հետազոտելու ընթացքին առանձնապէս կարեւոր է անոր բնօրրանը հանդիսացող երբեմնի Կ. Պոլսի, այսինքն ներկայիս Ստանպուլի հայութեան բանահիւսական ժառանգութեան ուսումնասիրութիւնը:

Արդի Ստանպուլը կը ներկայացնէ թուրքիոյ զանազան գաւառներէն եկած եւ հոն բնակութիւն հաստատած հայերու խայտաբղէտ խճանկար մը: Հանգամանք մը, որ առաւել հետաքրքրական կը դարձընէ ժողովրդագիտական որեւէ ուսումնասիրութիւն:

Նման աշխատանք մը անշուշտ անկարելի պիտի ըլլար երբեւէ իրականացնել, եթէ 1996-ին ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի շարք մը գիտական աշխատողներու հետ հրաւիրուած չըլլայի թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան հիմնադրման 535-ամեակին առթիւ կազմակերպուած Վարդավառի կրօնական միջազգային եզակի գիտաժողովին, զոր այնքան խնամքով եւ բարձր մակարդակով նախապատրաստած էր Պատրիարքական Փոխանորդ (ներկայիս Պատրիարք), Գերաշնորհ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սուրբաֆեան:

Երբ հասանք Ստանպուլ, տպաւորութիւնը ցնցող էր: Քանի որ ընդամէնը եօթ տասնամեակներու ընթացքին թուրքիոյ ժողովրդավարական հանրապետութիւնը վիթխարի յառաջընթաց էր արձանագրած՝ դառնալով կազմակերպուած գիւղատնտեսութեամբ, զարգացած ճարտարուեստով եւ մշակոյթով քաղաքակիրթ երկիր:

Սակայն կապուտակ Սարմարայի զոյգ ավերուին սփռուած գեղածիծաղ Ստանպուլը, բացի իր բնական հմայքներէն եւ տեսարժան

հնավայրերէն, ինծի համար մէկ ուրիշ հմայք ունէր, եւ այդ հմայքին արմատները շատ խոր էին. անոնք ձեւաւորած էին արեւմտահայի իմ էութիւնս, իմ ներքին հոգեւոր աշխարհս: Այո՛, այդ արմատները շատ խոր էին եւ կը հասնէին մինչեւ իմ պոլսեցի մեծ-հայրս, որ կը սիրէր զիս իր ծունկին վրայ նստեցնել եւ «մինի-մինի վերժնէին» հեքիաթներ պատմել...

Արժանայիշատակ մեծ-հօրս, ծագումով պոլսեցի քերոքէ Աղա-Չրաքեանին, ամբողջ գիտակցական կեանքը եղած էր նուիրում մը իր ժողովուրդին, մինչեւ Չաւէն Պատրիարք Եղիայեանի ձեռամբ 1921-ին արժանացած էր «Որբերու Փրկարար» Ոսկեայ Շքանշանի: Պոլիս ծնած էին անոր երեք դուստրերը՝ Սիրարփին, Շաքէն եւ Ատրինէն:

Սիրարփին, յետագային Եգիպտոսի մէջ ամուսնանալով կեսարացի մտաւորական Գառնիկ Սվազլեանի հետ, հիմը դրած էր մեր արեւմտահայ ընտանիքին: Հոն կը տիրէին փոխադարձ սէր ու յարգանք, բայց ամենակարեւորը՝ պոլսահայ բարքերն ու սովորոյթները, պոլսահայ համով-հոտով կերակուրները, պոլսահայ գունագեղ, պատկերաւոր խօսքը և գրոյցը: Դեռ ականջիս կը հնչէ մօրս երգած օրօրոցայինը: Բառ առ բառ կը յիշեմ արժանայիշատակ հօրս պատմածները: Ահա թէ ինչու սոյն ժողովածուի մէջ տեղ գտած բանահիւսական շատ ու շատ մանրապատում-ասութային նիւթեր իմ մէջս արդէն իսկ կային, ինչպէս համադրիչի մէջ՝ նախապէս համակարգուած եւ ծրագրաւորուած:

Այնպէս որ, երբ Թուրքիա հիւրընկալուեցայ ծագումով կեսարացի, պոլսահայ յայտնի ազգային գործիչ Նազար Ալթունի այրի ազնուաշուք Տիկին Վարդուհի Ալթունի, անոր դուստր Տիկին Տիգրանուհի Մօրի, ապա նաեւ Տէր եւ Տիկին Տիգրան-Շնորհիկ Ալթուններու հրաշալի ընտանիքներէն ներս, ես անբացատրելի հարազատութիւն զգացի: Ի մօտոյ ծանօթանալով անոնց հետ, ականջալուր եղայ անոնց խօսած-պատմածներուն, որոնք այնքա՛ն հարազատ էին ինծի եւ՝ այնքա՛ն նման ծնողքէս ու ազգականներէս լսածներուս:

Խորհեցայ թէ ատիկա մասնագիտական սքանչելի առիթ էր ինծի՝ ժողովրդագէտիս համար, բանահիւսական նիւթեր գրի առնելու շուրջ 60-հազարնոց հայ համայնքի ընկերային տարբեր խաւերու եւ սեռատարիքային տարբեր խումբերու ներկայացուցիչներէն, նաեւ դիտարկելու թէ ինչպիսին է Թուրքիոյ հայութեան հոգեւոր-մշակութային կեանքին պատկերը, ուրիշ խօսքով՝ շօշափելու

պոլսահայութեան բաբախող զարկերակը, ուսումնասիրելու անոր յոյզերը և մտորումները:

Այդ օրերուն՝ ես առիթ ունեցայ հանդիպիլու հայ համայնքի տարբեր ներկայացուցիչներու, նաեւ դիտարկելու կենցաղային և սովորութային շարք մը աւանդոյթներ (մկրտութիւն, ամուսնութիւն, յուղարկաւորութիւն): Այցելեցի Գարակէօզեան Սանուց Սիւրբեան Կազդուրման Կայան: Այդ օրը հանգիստի կոչուած յիսունի չափ տարեց տիկիններ, Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցիին մէջ որոշում առնելով, իրենց սուղ խնայողութիւններով հաւաքած 20 միլիոն թուրքականով գնած էին անհրաժեշտ պարագաները եւ խմբովին, նաւով հասած Գընալը կղզի: Անոնք զանազան երգեր երգելով եւ զուարճալի գրոյցներ պատմելով, զբաղած էին աւանդական մանքըն պատրաստելով, որպէսզի հոն հանգստացող 300 մանուկներուն ցերեկուան ճաշը հասցնեն: Նման բարեգործական, ազգասիրական ձեռնարկներ պոլսահայոց համար սովորական են: Եւ կամ՝ փոխան ծաղկեպսակի, հոգեհանգստեան ճաշկերոյթի նուիրատուութիւն կը կատարուի Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի ծերանոցին կամ մէկ այլ բարեսիրական հաստատութեան:

Ի դէպ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը հիմնադրուած է 1832-ին Պոլսոյ Ետիզուլէ թաղամասին մէջ, Յարութիւն Պէզճեան Ամիրային նախաձեռնութեամբը եւ նիւթական աջակցութեամբը: Ճարտարապետները եղած են Կարապետ Ամիրա Պալեան եւ Յովհաննէս Ամիրա Սէրվէրեան: Հիացմունքի արժանի այս բժշկական հաստատութիւնը արտերկրի միակ հայկական հիւանդանոցն է, որ ունի բազմաթիւ բաժանմունքներ (առաջին օգնութեան, բուժարան, վիրահատարան, մտաւոր հիւանդներու, ծերանոց, մշտական բնակիչներու), մասնաշէնքեր՝ բոլորն ալ նորագոյն թէքնիքով օժտուած: Այս սքանչելի հաստատութիւնը կը ղեկավարուի յատուկ ընտրութեամբ ընտրուած հոգաբարձուներու կողմէ, որոնց ատենապետն է իր գործին անմնացորդ նուիրուած, յայտնի ազգային Տիար Փիլօ Աթան, բժշկական անձնակազմի զլխաւորն է փորձառու վիրաբոյժ Տքթ. Արման Չաքըրօղլու, փոխ-բժշկապետը՝ Տքթ. Արմենակ Մեծատուրեան, Աւագ հիւանդապահուհին՝ Արշալոյս Չիֆթճիօղլու:

Հաստատութեան ընդհանուր քարտուղար գործունեայ եւ ժըպտերես Տիկին Սիլվա Թրիքայի ուղեկցութեամբ ես քանի մը անգամներ այցելեցի այդ սքանչելի հաստատութեան ծերանոցը, որ աւելի նման

է առողջարանի՝ իր մաքուր եւ բարեկարգ յարկաբաժիններով: «Յարկաբաժին» բառը կը գործածեն, քանի որ հոն ընդունուած է որ եթէ տարեց անձ մը կեանքի մայրամուտին իր տունը կամ ուրիշ սեփականութիւնը կը յանձնէ, փոխարէնը հոն կը ստանայ առանձին լուսատուր եւ օդասուն յարկաբաժին մը իր բոլոր յարմարութիւններով, ուր ենթական կը փոխադրուի իր տունին կահ-կարասիով, իր տունին պէս կը դասաւորէ պատկերները իր սիրելիներուն (որոնք կրնան այցի գալ, երբ ուզեն) եւ ցմահ օգտուիլ հիւանդանոցի խոհանոցէն, բուժապասարկումէն, խնամեալ հոգատարութենէն եւ հայաշունչ մթնոլորտէն: Չքաւոր մեծահասակներու համար եւս Ազգի Տան դռները բաց են:

Հոն եւս հանդիպեցայ տարիքոտ մամիկներու եւ պապիկներու, որոնք շրջապատելով զիս, արցունքոտ աչքերով յիշեցին իրենց անցեալը, սկսան երգել ու պատմել հին-հին երգեր ու զրոյցներ: Ս. Փրկիչի մնայուն բնակիչներուն մէջ եւս հանդիպեցայ պոլսահայ մտաւորականութեան աւագ սերունդի ներկայացուցիչներուն՝ օտար լեզուներու երբեմնի վարժուիի Սիրեմա Ալաճաճեանին (ծն. 1910, Ատափազար), խօսքաշէն լրագրող Անահիտ Ժամկոչեանին (ծն. 1913, Պուրսա), բանաստեղծ Արթուր Պերճին (ծն. 1915, Ստանպուլ), հայկական մանրանկարչութեան աւանդներուն հաւատարիմ վարպետ մանրանկարիչ Պերճ Երզեանին (ծն. 1921, Ատափազար), բազմաթիւ լրագրային արժէքաւոր յօդուածներու, հանգամանալից տեղագրութիւններու եւ Ս. Փրկիչ Հայոց Ազգային Հիւանդանոցի կոթողային «Յուշամատեան»ի ներհուն հեղինակ Վարուժան Քօստեանին (ծն. 1920, Պանտըրմա), նաեւ իր մարմնական անտանելի ցաւերը ժպտով յաղթահարող, կենսուրախ Սիլվա Տալտապանեանին (ծն. 1930, Սամսոն), որ կարի մեքենայի առաջ նստած հագուստներ կը կարէր՝ Հայաստանի երկրաշարժէն տուժած մանուկներուն նուէր դրկելու համար, եւ շատ ու շատ այլ ազնիւ ու բարեհոգի անձերու, ինչպէս նաեւ բարձր որակաւորում ունեցող հայ բժիշկներու ամբողջ փաղանգի մը...

Ստանպուլ եւ Գընալը կղզին ինծի հանդիպած հարիւրէ աւելի բանասացներու հաղորդած նիւթերուն հետ, որոշ տեղ յատկացուցած են նաեւ անցեալին իմ հարազատներէս լսած եւ գրի առած որոշ նմոյշներու՝ նպատակ ունենալով ամբողջական դարձնել պոլսահայոց բանահիւսական երկացանկը: Հոգ չէ թէ անոնք գրի առնուած են անցեալին, Երեւան, Աթէնք, Lou Անճելես կամ Սան Ֆրան-

սիսքօ: Քանի որ ժամանակի եւ տարածութեան տարբեր ցուցիչները եւս ուշագրաւ հետեւութիւններու նիւթ կու տան:

Օրինակ 1955-ին, երբ դեռ ուսանող էի, Երեւանի Նոր Կիլիկիա թաղամասի մէջ Եվէրէկցի հայրենադարձ Քեսիճեան Յարութիւնէն (ծն. 1877) իմ գրի առած եւ հիմա սոյն ժողովածուիս «Հեքիաթներ» բաժնին մէջ զետեղած «Պղտիկ աղբարը» հեքիաթը բանագիտական ուսումնասիրութեան ենթարկելով կը նկատենք թէ այն տարիներուն հեքիաթի լեզուն տակաւին մնացած էր իր ծննդավայրի (Եվէրէկ) բարբառին հարազատ, իսկ հեքիաթի բովանդակութիւնը ամբողջական էր եւ կատարեալ:

Սակայն նոյնը կարելի չէ ըսել աւելի ուշ՝ 1970-ին, դարձեալ Երեւանի մէջ մօրաքրոջս ամուսինէն, Չանագալէցի հայրենադարձ Չուլալեան Գէորգէն (ծն. 1907) իմ գրի առած նիւթերուն մասին, որոնց լեզուն արդէն զգալիօրէն արեւելահայերէնի ազդեցութիւնը կը կրէր, թէպէտ իր պատմած զրոյցները ծաւալուն են, գեղարուեստօրէն կատարեալ եւ ամբողջական:

Իսկ 1996-1997-ին Ստանպուլի մէջ իմ գրի առած նիւթերը աւելի փոքրածաւալ են, լեզուն համահարթուած արեւմտահայերէն: Նկատելի են տեղացի այլազգ ժողովուրդի բառերու եւ արտահայտութիւններու զգալի փոխառութիւններ (որոնց թարգմանութիւնը տուած ենք զուգահեռ), երեւոյթ մը, որ երկարատեւ համատեղ կեանքի արդիւնք է: Սակայն փառք ու պատիւ պոլսահայերուն որ այնուամենայնիւ պահպանած են աւանդական այս նշխարները:

Ինչպէս կը տեսնենք, ժողովրդական բանահիւսութիւնը իր ձեւով եւ բովանդակութեամբ ժամանակի եւ տարածութեան մէջ ապրող, գոյատեւող եւ փոխակերպուող յատկութիւն ունի, որ եւ բնական է, եւ բանական:

Ահա թէ ինչու հատորիս վերջաւորութեան զետեղուած «Ծանօթագրութիւններ» բաժնի աղիւսակներուն մէջ մէկ առ մէկ քննութեան առնուած է իւրաքանչիւր բանահիւսական նմոյշ՝ ըստ բաժիններու եւ ենթաբաժիններու հերթական եւ շարունակական համարակալումով, նշուած են տուեալ նիւթին ծագման, այսինքն՝ ստեղծման վայրը (նիւթին հայրենիքը), ապա նաեւ՝ նիւթին գրառման վայրը (ուր կը գոյատեւէ ան), գրառման տարեթիւը, բանասացին (նիւթը հաղորդողին) անուն-մականունը եւ ծննդեան տարեթիւը: Այսպիսով գաղափար տրուած է բանասացին ինքնութեան եւ բանահիւսական նի-

թին աշխարհագրական տարածուածութեան՝ անոր հին կամ նոր ստեղծագործութիւն ըլլալը փաստելով:

Այս տուեալները նաեւ գաղափար կու տան թէ նիւթը հաղորդող բանասացը սեռատարիքային որ խումբին կը պատկանի (կին է թէ այրմարդ, ծեր է թէ երիտասարդ), հետեւաբար ի նշքանով հակուած է բանահիւսական այս կամ այն տեսակը յիշելու, մտապահելու եւ յաջորդ սերունդներուն աւանդելու:

Այսպէս օրինակ՝ ծաւալուն առասպելներու եւ հեքիաթներու գերակշռութիւնը կը պատկանի աւագ սերունդի այրմարդոց, իսկ աւանդական կրօնաբարոյախօսական, կենցաղային, զաւեշտական, կենդանական զրոյցները, օրօրոցային, մանկական, ծիսական (հարսանեկան, տօնական) երգերը, ինչպէս նաեւ առած-ասացուածքները, անէծք-օրհնանքները, մաղթանք-աղօթքները եւ դարձուածները մեծ մասամբ տիկիները կը յիշեն:

Գընալը կղզին կատարած գրառումներուս ընթացքին իր բացառիկ յիշողութեամբ եւ պատմելածեւի սքանչելի կարողութեամբ առանձնապէս հիացմունքի էր արժանի Տիկին Տիգրանուհի Սօրը (ծն. 1943, Ստանպոլ): Ան զարմանալիօրէն մտապահած էր բանահիւսական բոլոր տեսակներէն բազմաթիւ ու բազմազան արժէքաւոր նիւթեր: Կենցաղային, տեղայնացուած ինքնատիպ զրոյցները եւ անցեալի հայ երաժիշտներու յօրինած թուրքերէն երգերը ի յայտ եկան Տիկին Սարիամ Սիրգայեանի (ծն. 1927, Թօմարզա) շնորհիւ: Իսկ անոր քրոջ՝ Տիկին Վարդուհի Ալթունի խօսակցականը համեմուած էր պոլսահայութեան յատուկ հիւթեր ու պատկերաւոր ժողովրդական արտայայտութիւններով: Հմայական հնաբոյր եւ անգգիւտ աղօթքները կը պարտինք տխուր մանկութիւն ունեցած Սիրենա Ալաճաճեանին (ծն. 1910, Ատափազար): Անմոռաց ու տպաւորիչ էին Տիկին Հերմինէ Տէր-Ողորմեանը (ծն. 1911, Եօզղատ), Երտոնջ ժանէթը (ծն. 1943, Ստանպոլ) եւ շատ ու շատ ուրիշ բանասացներ, որոնք սիրով իրենց լսածը եւ յիշածը մեզ յաղորդեցին, որպէսզի այդ ձեւով յաջորդ սերունդներուն աւանդուի:

Գընալը կղզին եղած օրերուս՝ առիթը ունեցայ հանդիպելու պոլսահայ համայնքի երտասարդութեան քանի մը պայծառ ներկայացուցիչներու, որոնցմէ էին՝ մտաւորական ծնողքի զաւակ, հայագիտական հակումներ ունեցող Վաղարշակ Սերոբեանը (ծն. 1970, Ստանպոլ), Երեւանի Պետական Համալսարանի բանասիրական

բաժնի ուսանող Սեւան Տէյրմէնճեանը (ծն. 1976, Ստանպոլ), բանաստեղծական շնորհքով օժտուած Պօղոս Եղիազարը (ծն. 1980, Ստանպոլ), որոնք եւս բաւականաչափ ինքնատիպ նիւթեր հաղորդեցին:

Շատ ծնողներ, որոնք գաղթած էին երկրի տարբեր գաւառներէ եւ տակաւին հայերէն անգամ չէին գիտեր, անոնց զաւակները արդէն եւ տակաւին հայերէն անգամ չէին հայկական եկեղեցի եւ դպրոց յաճախելու, ուստի դպրոցէն սորվածները ինծի արտասանեցին, ինչպէս Սօնա Արթանը (ծն. 1989, Ստանպոլ), Սարէ Նայաթը (ծն. 1990, Ստանպոլ): Այս նոր սերունդը գրեթէ ոչինչ աւանդական կը պահէ, բայց փոխարէնը կը հարստանայ հայ եւ այլազգ մշակութային արժէքներով:

Ասոնք ուշագրաւ եւ հետաքրքրական դիտարկումներ են, որոնք եթէ հանրագումարի բերենք եւ եթէ իւրաքանչիւր սերունդին հաղորդած նիւթերը քանակական վերլուծութեան ենթարկենք, լուծման ընդհանուր յայտարարը մեզի կը մօտեցնէ աւանդապահութեան խնդրին:

Աւանդապահութիւնը տուեալ ժողովուրդի կամ հանրութեան կենցաղին եւ մշակոյթին՝ լեզուին հին աւանդները պահելու, պահպանելու, հարստացնելու եւ յաջորդ սերունդներուն հաղորդակից ընելու կարողութիւնն է:

Ստանպոլի եւ մասամբ նաեւ Սամանտաղի (Մուսա Լեռ) Վազըֆ գիւղի մէջ եղած օրերուս ես զգացի թէ Թուրքիոյ հայ համայնքը, անկախ ամէն ինչէ, այնուամենայնիւ աւանդապահ է: Ան աւանդապահօրէն փարած է իր հազարամեայ Մայր եկեղեցիին ու Քրիստոնէական հաւատքին եւ կ'ուզէ պահել նաեւ իր մայրենի լեզուն:

Այդ կարողութեան պահպանութեան շնորհիւ է որ ես ոգեղէն ծաղկեփունջ մը հաւաքեցի ինծի հարազատ վայրերէն: Քանի որ ամէն բանասացի ծննդավայրին՝ հայրենի եզրին համը եւ բոյրը պիտի ըմբռնուին ընթերցողը:

Ուստի իմ խորին երախտագիտութիւնս կը յայտնեն Պոլսահայ համայնքի այն ներկայացուցիչներուն, որոնք իրենց յիշողութեան խորխորատներուն մէջ անթեղած պահեր, պահպաներ եւ ինծի են հաղորդեցր բանահիւսական սոյն ստեղծագործութիւնները, ի սպառ կորուստէ փրկելով Պոլսահայ հոգեւոր մշակոյթի նշխարները, որպէսզի քոնը քեզ նուիրեն, իմ Հայ ժողովուրդ:



ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՆԱՐԿ

1453-ին թուրքերու կողմէ Կոստանդնուպոլսի առումէն ետք, Ֆաթիհ Սուլթան Սուլիման Բ զայն կը դարձնէ Օսմանեան պետութեան նոր մայրաքաղաք՝ վերանուանելով Ստանպուլ: Ան ի հեծուկս յոյներու, երկրի ներքին զաւառներէն կը փոխադրէ հայ վարպետներու ընտանիքներ, որոնք ոչ միայն աւելի կը ստուարացնեն բարգաւաճող հայ համայնքը, այլեւ իրենց միտքին եւ բազկին շնորհքներովը գեղեցկութիւն եւ փայլ կը հաղորդեն նորակերտ մայրաքաղաքին:

Սուլթան Ֆաթիհի անմիջական հոգածութեան ներքոյ հայերը գործունէութեան հարազատ միջավայր կը գտնեն եւ իրենց ընձեռուած կրօնական ազատութեան շնորհիւ նոր մայրաքաղաքին մէջ 1461 թ. կը հիմնադրեն Թուրքիոյ Հայոց Պատրիարքութիւնը, որուն Սուլթանը կը շնորհէ եկեղեցական եւ համայնքային կարգ մը իրաւունքներ: Այդ ժամանակ Ստանպուլի մէջ կը հաշուուէր շուրջ հազար տուն հայ ընտանիք:

Յետագային պոլսահայերու թիւը աստիճանաբար կը բազմապատկուի Սեբաստիայէն, Կեսարիայէն, Թոքսութէն, Ակնէն, Մուշէն, Կիլիկիայէն եւ այլ զաւառներէն եկած եւ աշխատանք փնտռող երիտասարդներով:

Պոլսոյ հայ համայնքը միատարր չէր: Ամենաբազմամարդ խաւը կը բաղկանար արիեստաւորներէ, պանդուխտ մշակներէ եւ սեւագործ բանուորներէ: Արիեստաւորները համախմբուած էին ենաֆոլիւններու մէջ: Մեծ համբաւ ունէին հայ ոսկերիչները, մետաքսագործները, երկաթագործները, դերձակները եւ ժամագործները: Ունեւոր դասը կը կազմէին հօճաները եւ չէլէպիները, ամիրաները եւ սարաֆները (սեղանաւոր), ինչպէս նաեւ էֆէնտիները եւ առետորա-վարկատուական դասի ներկայացուցիչները, որոնք իրենց դրամագլուխին եւ գործարարութեան շնորհիւ ազդեցիկ դիրքի հասած էին, կապեր հաստատած արքունիքի հետ եւ գործօն դեր ունէին Թուրքիոյ տնտեսական եւ քաղաքական կեանքէն ներս: Երկրին թոյլ

զարգացած արտադրողներուն առկայութիւնը աւելի լայն կարելիութիւններ կ'ընձեռէր հայ մեծատուններուն: Վերջիններուս վստահուած էին արքունի պետական կարելոր պաշտօնները, զորս հայերը կը վարէին ամենայն նուիրուածութեամբ, ժառանգաբար որդւոց որդի: Օրինակ ոսկերչութիւնը եւ դրամահատութիւնը Տիւզեանները կը ղեկավարէին, վառօդապետութիւնը՝ Տատեանները, ճարտարապետութիւնը՝ Պալեանները, եւ այլն: Հայերը ունէին նաեւ Օսմանեան կայսրութեան կառավարութեան թղթատարական, հեռագրական, հանրօգուտ շինարարութեան, երկրագործութեան, արտաքին գործոց եւ այլ նախարարներ, իսկ յետագային՝ նաեւ Օսմանեան խորհրդարանի երեսփոխաններ: Ունեւորներու շարքը կը դասուէին նաեւ միջնորդ վաճառականները, որոնք կը կամրջէին թուրք-ելրոպական յառաջացող առևտուրը:

Պոլսոյ հայ համայնքը ունէր նաեւ անուանի մտաւորականներ՝ մակավարժներ, հոգեւորականներ, դերասաններ, գրողներ, բժիշկներ, նկարիչներ, երաժիշտներ, որոնք գործօն մասնակցութիւն կը բերէին ոչ միայն արքունիքին ու պոլսահայերուն, այլեւ ամբողջ արեւմտահայութեան ընկերային-քաղաքական կեանքին: Պետութեան կողմէ հայ համայնքի ղեկավար կը ճանչցուէր Հայոց Պատրիարքութիւնը:

Թուրքիոյ Հայոց Պատրիարքութիւնը իր գոյութեան 539 երկար ու ձիգ տարիներու ընթացքին ոչ միայն դարձած է յուսալի խարիսխ արեւմտահայութեան գոյատեւման, այլեւ մեծապէս նպաստած է անոր քաղաքակրթական իրերայաջորդ շրջաններու մշակութային եւ ընկերային յառաջընթացին: Այն մշտապէս եղած է հայ ընկերային հաստատութիւնները հովանաւորողը, համադրողը եւ անոնց ուղղութիւն տուողը:

Ինչպէս անցեալին, նոյնպէս եւ ներկայիս հայ համայնքին կրօնական, կրթական, բարեգործական, գրական եւ գեղարուեստական բոլոր կազմակերպութիւնները կը յենին Հայոց Պատրիարքութեան եւ անոր ենթակայ կազմակերպութիւններուն վրայ, որոնք իրենց կենսունակութիւնը եւ նպատակաւորողութիւնը կը ստանան Պատրիարքարանէն:

Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը իր ծագումով եւ իր յետագայ գործունէութեամբ կրօնական հաստատութիւն է, իրեն անմիջական ենթակայ եկեղեցիներով: Իր այս հանգամանքով, պատմութեան բոլոր շրջափուլերուն, Հայոց Պատրիարքութիւնը եղած է զօդող շաղախը Օսմանեան լայնարձակ կայսրութեան հեռաւոր ծայրերը սփռուած հայութեան: Կրօնական բազմաձիւղ իր գործունէութեամբը այս հաստատութիւնը Թուրքիոյ հայութիւնը առաջնորդած է եւ կ'առաջնորդէ քաղաքակրթութեան ճամբով զօրավիզ ըլլալով երկրի ընկերային-գաղափարական վերելքին:

Թուրքիոյ հայութիւնը, իբրեւ կազմակերպուած համայնք, երկրի օրէնքներու ծիրին մէջ, Պատրիարքի գլխաւորութեամբ, մինչեւ օրս պահած է կրօնական, կրթական եւ բարեսիրական հաստատութիւնները Ստանպուլի մէջ: Պատրիարքը պետն է Թուրքիոյ Հայոց Առաքելական Եկեղեցւոյ եւ կ'ընտրուի պատգամաւորական ժողովին կողմէ: Նոյն ձեւով կ'ընտրուի նաեւ կրօնական ժողովը:

1998-ի նոյեմբերին կրօնական ժողովի միաձայն ընտրութեամբ Թուրքիոյ Հայոց 84-րդ Պատրիարք ընտրուած է Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սուբաֆեան:

Պատրիարքութիւնը համալրուած է նաեւ ընտրեալ անդամներով, որոնք տարաբնոյթ աշխատանքներ կը ծաւալեն տարբեր յանձնախումբերով:

Հոգաբարձութիւններու խնամակալութիւնները, որոնք կ'ընտրուին չորս տարիով, կը կառավարեն եւ կը մատակարարեն ընդհանուր համայնքային նկարագիր եւ նշանակութիւն ունեցող հաստատութիւնները, ինչպիսիք են՝ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը, Գալֆայեան եւ Գարակէօզեան որբանոցները, Սկիւտարի Ս. Խաչ լիսէ Դպրեվանքը, Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցին եւ Կեդրոնական Վարժարանը: Հոգաբարձութիւնները իրենց կարգին ունին Տիկնանց եւ Երիտասարդաց օժանդակ յանձնախումբեր:

Թուրքիոյ հայ համայնքի ընկերային կեանքին եռանդուն եւ գործօն օղակները թաղային խորհուրդներն են, որոնք կ'ընտրուին հայ բնակչութեան կողմէ: Թաղային խորհուրդները տեղական համայնքներուն մատակարար եւ կառավարող մարմիններն են, որոնց պաշտօնն է պայծառ պահել թաղի եկեղեցին եւ դպրոցը:

Թուրքիոյ հայերը շատ բարեպաշտ են եւ եկեղեցատէր: Համայնքային կրօնական կեանքը եկեղեցիներու շուրջ կեդրոնացած է: Ստանպուլի եւ գաւառներու մէջ հայերը ունին 42 գործող եկեղեցի:

Ներկայիս Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան եկեղեցիները կը բաժնուին վեց վիճակներու.

- ա. Հին քաղաք - 16 եկեղեցի,
- բ. Արեւմտեան Վոսբօր - 11 եկեղեցի,
- գ. Արեւելեան Վոսբօր - 7 եկեղեցի,
- դ. Իշխանաց կղզիներ - 1 եկեղեցի,
- ե. Գաւառ - 6 եկեղեցի
- զ. Կրետէ կղզի (Յունաստան) - 1 եկեղեցի:

Թուրքիոյ կառավարութեան թոյլտուութեամբ, Պատրիարքութեան ջանքերով եւ համայնքի նիւթական միջոցներով վերջերս վերանորոգուեցան Կեսարիոյ Ս. Գր. Լուսաւորիչ եւ Վագըֆ գիւղի (Մուսա լեռ) Ս. Աստուածածին եկեղեցիները: Բարեկարգուեցաւ նաեւ Գընալը կղզիին Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցին:

Գրեթէ բոլոր եկեղեցիները ունին իրենց դպրաց դասերը, որոնք ունին Տնօրէն, խորհուրդներ եւ դպրապետ ընտրուած դպրաց դասի ընդհանուր ժողովին կողմէ:

Հիացմունքով արձանագրելու է, որ Թուրքիոյ մէջ ներկայիս գործող բոլոր եկեղեցիները ներքուստ մէկը միւսէն հոյակերտ են օժտուած բոլոր յարմարութիւններով. ամենուրեք կը տիրեն սուրբասուրբ մաքրութիւն եւ աստուածահաճոյ մթնոլորտ: Այդ եկեղեցիներուն մէջ, ամենօրեայ ժամերգութենէն եւ կիրակնօրեայ Ս. Պատարագէն զատ, խումբերամ հաւատացեալներու ներկայութեամբ, յաճախ կը կատարուին հայ քրիստոնէական մկրտութիւններ, ճոխ ու շքեղ պսակադրութիւններ, ննջեցեալներու հոգեհանգստեան արարողութիւններ:

«Պոլիս եւ իր դերը» քառահատոր աշխատութեան բազմարդիւն հեղինակ Սիրունին, անդրադառնալով Պոլսոյ եկեղեցիներուն կը նշէ. «Ամբողջ դարեր հայ եկեղեցին պատնէջ մըն է եղեր հայ ժողովուրդի գոյութեան համար, պահպաներ է իր հովանիին տակ անոր հոգեկան ժառանգութիւնը, յուսադրեր է զայն փորձութեանց ատեն: Բայց այդ բերդը վաղուց փուլ եկած կ'ըլլար, եթէ զայն չպաշտպանէր ինքը՝ հայ ժողովուրդը, կուրծք չտար անոր վրայ փորձուած բոլոր գրոհներուն և անխորտակելի չդարձնէր զայն»*:

Պոլսոյ առաջին կանոնաւոր հայ դպրոցը, ուրկէ յառաջ եկած են ուսեալ եկեղեցականներ, 1715 թ. Սկիւտարի բարձունքին Յովհաննէս Կոլտ Բաղիչեցի Պատրիարքը (1715-1741) հիմնած է: Այդ արժանաւոր հոգեւորականին անուան հետ կը կապուին նաեւ Մայր Մատենադարանի ստեղծումը եւ անոր շարունակութիւնը կազմող Ազգային Մատենադարանը, որոնք շատ կարելոր դեր կատարած են հայ մշակոյթի յետագայ զարգացման մէջ:

Այժմ Պոլսոյ մէջ կը գործեն 19 վարժարաններ, ընդ որում հինգ լիսէ (Ղալաթիոյ Կեդրոնականը, Թաքսիմի Էսայեանը, Սկիւտարի Ս. Խաչ դպրեվանքը, Սամաթիոյ Սահակեան-Նունեանը եւ Բանկալթիի Վիեննական Մխիթարեանը): Յիշարժան են Գումգաբուի Պէզճեան մայր վարժարանը, Պաքըրգիւղի Տատեան, Ֆերիգիւղի Մերամէթճեան, Գատըզիւղի

* Սիրունի 3.Ճ., Պոլիս եւ իր դերը, հ. 1, Պէյրուս, 1965, էջ 662:

Արամեան-Ունճեան, Թօփգաբուի Լեւոն Վարդուհեան, Օրթագիւղի Թարգմանչաց, Եշիլգիւղի Ս. Սահակ - Ս. Մեսրոպ, Սկիւտարի Ներսէսեան-Երմոնեան վարժարանները, ինչպէս նաեւ Սէմէրճեան ճեմարանը, Սամաթիոյ եւ Բանկալթիի Անարատ Յղութեան ու Պոմոնթիի Վենետիկեան Մխիթարեան վարժարանները, ի վերջոյ Գալֆայեան եւ Գարակէօզեան որբանոցները:

Ուսումնական այս հաստատութիւնները, Թուրքիոյ պետական կրթական տնօրինութեան ծրագրին համաձայն, աւանդական հայեցի դաստիարակութիւն կը շարունակեն ջանքել հայ նոր սերունդին:

Գրեթէ բոլոր հայաշատ թաղամասերը ունին իրենց երկրորդական կամ նախակրթական վարժարանները ծաղկոցներով: Դպրոցներուն մէջ, հայոց լեզուի եւ կրօնքի դասերն զատ, բարձր հիմներու վրայ է յատկապէս թրքերէն եւ այլ օտար լեզուներու ուսուցումը, քանի որ համալսարաններ ընդունուելու ժամանակ այդ լեզուներուն իմացութիւնը կը կարելորուի:

Գրեթէ բոլոր վարժարաններուն կից սիրայօժար հիմունքներով կը գործեն սանուց միութիւններ, որոնք զանազան գեղարուեստական ձեռնարկներով (բանախօսութիւններ, թատերական ներկայացումներ, մարզահանդէսներ, համերգներ, ցուցահանդէսներ) եւ հրատարակութիւններով կը ջանան վառ պահել համայնքին հայեցի մշակութային կեանքը:

Պոլսահայերը ունին նաեւ համայնքային կարգ մը կազմակերպութիւններ, որոնցմէ նշանակալից են Բանկալթիի «Թրքահայ Ուսուցչաց Զիմնարկը», Գարակէօզեան Սանուց միութեան Գընալը կղզիի «Կազդուրման Կայանը», ուր Իշխանաց կղզիներու Տեսուչ Մեսրոպ Արք. Սութաֆեանի բնութագրութեամբ «համայնքի նուազ բախտաւոր մանկիկները կու գան ամառուան ընթացքին մաքուր օդէն, ծովէն եւ բնութիւնէն օգտուելու, ֆիզիքապէս կազդուրուելու»:

Բացի այդ, նոր սերունդը մեծ եռանդով կապուած է Թաքսիմի մարզական եւ Շիշլիի մարմնակրթական միութիւններուն, որոնց նպատակն է առողջ մարմինի մէջ առողջ հոգի դաստիարակելը:

Հայ համայնքը սերունդէ սերունդ սրբութեամբ կը պահէ նաեւ հայկական 16 գերեզմանատուներ, որոնք համայնքին ջանքերով մշտապէս մաքուր են, բարեկարգ եւ ներկայանալի:

Պոլսահայ մամուլը ամենայն ուշադրութեամբ կ'արձագանգէ աշխարհի եւ երկրի իրադարձութիւններուն, ինչպէս եւ համայնքային մեծ ու պզտիկ հոգերուն: Բացի «ժամանակ» եւ «Նոր Մարմարա» հեղինակաւոր օրաթերթերէն. 1996-էն հայերէն եւ թրքերէն լոյս կը տեսնէ եւ մեծ ժողովրդականութիւն կը վայելէ «Ակօս» շաբաթաթերթը:

Հայերէն եւ թրքերէն լոյս կը տեսնէ եւ եկեղեցիներու մէջ ծրիաբար կը բաժնուի Պատրիարքութեան «Լրաբերը»: Տեղեկատուական այս հրատարակութեան մէջ հանգամանօրէն կ'արձարծուին Հայոց Պատրիարքութեան ազգային եւ միջազգային արժէք ներկայացնող աշխատանքները: Լոյս կը տեսնէ նաեւ կրօնաբարոյական, գրական եւ պատմաբանասիրական ընդգրկում ունեցող «Շողակաթ» հանդէսը:

Համաշխարհային բժշկագիտութեան նորանոր յայտնագործութիւններուին եւ Ս. Փրկիչ Ազգային Զիւանդանոցի տարբեր բաժանմունքներու մէջ ներդրուած նորագոյն թէքնիքի, ինչպէս նաեւ այդ հիւանդանոց-ծերանոցի առօրեային եւ մշտապէս կատարուող բարեգործութիւններուն մասին կ'աւետէ «Ս. Փրկիչ» պատկերազարդ շքեղ ամսագիրը:

Լոյս կը տեսնեն նաեւ Կեդրոնական Սանուց Միութեան «Հոպինա» եւ «Լուսատու», ինչպէս նաեւ Մխիթարեան Սանուց Միութեան «Նոր Սան», Ուսուցչաց Զիմնարկի «Ժպիտ» եւ Ս. Խաչ լիսէի աշակերտութեան գրական-մշակութային «Փունջ» հանդէսները:

Ներկայիս՝ պաշտօնական տուեալներով Ստանպուլի մէջ կը հաշուուի շուրջ 60 հազար հայ, գաւառներու մէջ՝ հազիւ 5 հազար: Անոնք մեծ մասամբ առելուորով եւ տոհմիկ արհեստներով կը զբաղին: Անցեալի պոլսահայ մտաւորականութեան կարկառուն ներկայացուցիչներուն յաջորդած են նոր սերունդի նուիրուած ուսուցիչներ, համբաւաւոր բժիշկներ, իրաւաբաններ, ճարտարապետներ եւ արուեստագետներ, որոնք օտար լեզուներով մասնագիտացած են Թուրքիոյ եւ կամ արտասահմանեան երկիրներու մէջ:

Ի պատիւ Թուրքիոյ հայ համայնքի պէտք է արձանագրել որ Հայոց Պատրիարքութեան գլխաւորութեամբ գործող բոլոր եկեղեցիները եւ մշակութային կազմակերպութիւնները իրենց ամենօրեայ եռանդուն ձեռնարկները կ'իրականացնեն շնորհիւ հայ համայնքի խնայասէր, բայց վեհանձն ներկայացուցիչներու սիրայօժար նուիրատուութիւններու եւ բարեգործութիւններու, որոնք այդ գեղեցիկ աւանդոյթը ժառանգելով իրենց արժանաւոր նախնիներէն, կը դառնան իրենց իսկ համայնքին կենսունակութեան եւ յարատեւութեան գրաւականը:



ԲԱՆԱՏՈՒՄ ԱՎԱՆ ՆԻԹԵՐՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տանրագումարի բերելով մեր գրառած բանահիստական տարաբնույթ նիւթերը, հարկ է նշել որ առաջին անգամ գիտականօրէն համակարգուած կը ներկայացուի պոլսահայ ժողովրդական բանահիստութեան ժառանգութիւնը իւր տարատեսակներով* :

Պոլսահայոց բանահիստութիւնը հայ ժողովուրդի բանահիստութեան բաղկացուցիչ մասը ըլլալով, դարերու ընթացքին զարգացած է հայ ժողովուրդի բանահիստական հասարակաց աւանդներով, սակայն ընդհանրութիւններու եւ նմանութիւններու հետ մէկտեղ այն ներառած է նաեւ խիստ բնորոշ իւրայատկութիւններ, որոնք պայմանաւորուած են անոնց ապրած անցեալ եւ ներկայ կեանքին պատմա-ընկերային հանգամանքներով:

Եւ ինչպէս պոլսահայ «Նոր Մարմարա» թերթի այժմուս խմբագրապետ, երախտաշատ գրող Բոպէր Յատտեճեանը իրաւացիօրէն կը նշէ իր «Յայկական առածներու ներշնչումով» գիրքին մէջ. «...Մեր պապերուն իմաստութենէն մեզի ժառանգ թողուած խրատականները, մեր պապերէն մեզի փոխանցուած առածներն ու գեղեցիկ մտածումները երբեմն կրնան հիննալ ու ժամանակավրէպ դառնալ, բայց իմաստութիւնը չի հիննար: Մեր պապերը կը շարունակեն տարիներու մշուշին մէջէն բաներ մը յուշել մեզի եւ լոյս մը սփռել մեր ճամբաներուն վրայ: Ոչինչ կը կորսնցնենք, եթէ երբեմն ականջ տանք անոնց եւ մտածենք անոնց մասին: Եթէ անոնց վրայ մենք ալ մեզմէ բաներ մը աւելցնենք, ոչ միայն ոչինչ կը կորսնցնենք, այլ նաեւ այդ կերպով ոգեկոչած կ'ըլլանք նաեւ մեր պապերուն յիշատակը: Մեր

* Պոլսահայ անուանի լեզուաբան, ակադեմիական Յրաչեայ Աճառեանի եւ իր քրոջ Արմենուի Աճառեանի գրի առած բանահիստական կարգ մը նիւթեր լոյս տեսած են «Ազգագրական հանդէս»ի մէջ (IX գիրք. 1902. Թիֆլիս. էջ 160-196):

իմաստուն, խելացի եւ կեանքի փորձառութիւններէն մեղրի կաթիլներ չի նած մեր պապերուն յիշատակը»* :

Մեր պապերուն «իմաստուն, խելացի եւ կեանքի փորձառութիւններէն» արժեւորուած բառ ու բանն է որ մեր համեստ ուժերով, բայց որդիական սիրով եւ նուիրումով ջանացի բաւական սեղմ ժամանակի ընթացքին գրի առնել, հրատարակել եւ գալիք սերունդներուն աւանդել:

Սոյն ժողովածուի մէջ տեղ գտած բանահիստական նիւթերը բազմազան են եւ բազմասեռ, որոնք կ'ընդգրկեն

- ԱՐՉԱԿ ԲԱՆԱՅԻՄՈՒԹԻՒՆ – 258 միաւոր
- ՉԱՓԱԾՈՅ ԲԱՆԱՅԻՄՈՒԹԻՒՆ – 131 միաւոր
- ԱՍՈՒԹԱՅԻՆ ԲԱՆԱՅԻՄՈՒԹԻՒՆ – 1108 միաւոր
- ԾԷՍԵՐ – 3 միաւոր
- ԵՐԳԵՐՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐ – 17 միաւոր
- ԸՆդամէնը՝ 1517 միաւոր

I. ԱՐՉԱԿ ԲԱՆԱՅԻՄՈՒԹԻՒՆ բաժնի մէջ ընդգրկուած են՝

1. ԱՌԱՄՊԵԼՆԵՐ ԵՒ ՅԵՔՒԱԹՆԵՐ (16 միաւոր)

Ստանապոլի ներկայիս հայ համայնքը թէպէտ պահպանած չէ առասպելներ եւ հրաշապատում հեքիաթներ, այդ բաժինը ամբողջացուցած ենք նոյն վայրերէն տարագրուած եւ հայրենադարձ անհատներէն Երեւանի մէջ մեր գրի առած նիւթերով:

Օրինակ ծագումով Չանագգալէցի Չուլալեան Գեորգէն (ծն. 1907) գրի առնուած «Արամ թագաւորի որդի Արա Գեղեցիկը» առասպելին մէջ ներկայացուած են հայ ժողովուրդի վաղնջական կեանքէն ներս տեղի ունեցած իրական դէպքեր եւ դէմքեր: Պատմական այդ իրադարձութիւնները դիցաբանական մտածողութեամբ բացատրուած են որպէս գերբնական ուժերու արգասիք: Նոյնը պէտք է ըսել «Տրովադայի առումը» յունական վիպերգին հայկական արծակ տարբերակին մասին, ուր դէպքերը կ'ընթանան բանասացին ծննդավայր Չանագգալի մօտակայքը:

Իսկ «Բարիք ըրէ ծովը նետէ», «Յովիւ աղջիկը», «Արիեստին ոյժը», «Աշխարի տեսած տղան», «Մարդուն խըսմէթը», «Երջանիկ մարդը» եւ այլ խոհափիլիսոփայական հեքիաթներու նիւթը երջանկութեան իմաստը որոնող, վաղանցիկ կեանքի խորհրդաւորութեան դէմ յանդիման կեցած մարդն է, իր հոգերով:

* Յատտեճեան Բ., Յուշատետր (26) Յայկական առածներու ներշնչումով, Իսթանպոլ. 1995. էջ 193:

Իրապատում հեքիաթներուն մէջ («Պզտիկ աղբարը», «Ամենէն անուշը եւ ամենէն կծուն», «Խմիչքին զօրութիւնը») կը գովերգուին աշխատասիրութիւնը եւ պարկեշտ վարքը:

Հեքիաթները առհասարակ ուսուցողական-դաստիարակչական բնոյթ ունին:

2. ԱԲԱՆԴԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ (11 միաւոր)

Թուրքիոյ հայոց տեղանուական գրոյցներն են, որոնք գողտրիկ ասանդութեան միջոցով կը մեկնաբանեն զանազան տեղանուններ («Յէյպէլի կղզիի Յոյսի վանքը», «Մեծ Կղզիի Ս. Գէորգ ուխտատեղին», «Պուրկազ Կղզիի Ս. Յովհաննէս եկեղեցին», «Մուրատատուր Ս. Կարապետը», «Հայր Աբրահամին որթատունկը», «Կիլիկիայի Կոռիկոս բերդը», «Խըտըր Պէկի սօսի ծառը»):

3. ԿՐՕՆԱ-ԲԱՐՈՅԱԽՕՍԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ (32 միաւոր)

Ասոնց նիւթը մեծաւ մասամբ Աստուածաշնչային է, քանի որ ըստ պոլսահայերու «Աստուածաշունչը բոլորին համար պէտք է բարոյական հիմ դառնայ»: Օրինակ «Աստուծոյ պատգամը», «Աստուծոյ դրած անունները», «Աստուծոյ տուած բախտը», «Աստուծոյ տուած պատիժը», «Աստուծոյ նախանշանութիւնը» եւ այլն:

Սակայն կրօնա-բարոյախօսական այս գրոյցները սոսկ Աստուածաշնչային դրուագներու պարզ վերարտադրութիւններ չեն, այլ իւրաքանչիւրը ունի իր ուրոյն զարգացումը, որ հասնելով իր գագաթնակետին, ժողովրդական ստեղծագործութեան կը հաղորդէ ոչ միայն բարոյախօսական երանգ, այլեւ հասարակական հնչեղութիւն: Օրինակ «Եթէ կու տաս, Աստուած քեզի աւելի շատ կու տայ», «Աստուած բաժնող», «Մուհամմետի պատգամը», «Մուհամմետը եւ հայ Յակոբը», «Միութիւնը զօրութիւն է», եւ այլն:

4. ԶԱԲԵՇՏԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ (53 միաւոր)

Ծիծաղը կ'ուղեկցի պոլսահայը իր ողջ կեանքի ընթացքին: Ան իր այդ կենսուրախ եւ կենսասէր փիլիսոփայութիւնը խտացուցած է ժողովրդական հետեւեալ խորհմաստ ասոյթին մէջ «Մէկ քահ-քահը խալիպ մը պրզուա կ'արժէ»:

Պոլսահայը ծիծաղի միջոցաւ նաեւ կը քննադատէ մարդկային արատները ծուլութիւնը («Ծոյլ հարսը», «Ծոյլ ատաղծագործը»), ստախօսութիւնը («Պարտքը չտուող կօշկակարը», «Դերձակը եւ յաճախորդը»),

հաշուենկատութիւնը («Հաշուենկատ սափրիչը»), ագահութիւնը («Դատաւորը եւ աւազակը»), զազրախօսութիւնը («Փիս բերանը»), գողութիւնը («Եկեղեցւոյ գողը», «Սենթ Անթուանը եւ գողը», «Նորոժ վարդապետը»), քինախնդրութիւնը («Քէն պահող մարդը»), հարստութեան տենչը («Տղան եւ բժիշկը», «Երիտասարդները եւ հարուստը»), եւ այլն:

Այս բաժինին մէջ զատ շարք կը կազմեն խենթերու նուիրուած զաւեշտական գրոյցները, որոնց մէջ մտապակասը պատրաստ է նոյնիսկ այժի մաշկի վրայի մազերը հաշուելու, միայն թէ բժիշկը զինք խենթանոցէն տուն դրկէ («Խենթի փեսայը»): Սակայն խենթանոց այցելած, խենթերը հաշուող, առողջ մարդուն կապուելիք խենթը կը զարմացնէ իր խելացի խօսքերով. «Դուն գնա դուրսիցները հաշուէ. անոնք մեզմէ շատ են»: Պատասխան մը, որ կ'ակնարկէ խելացիի համբաւ հանած մարդկութեան խենթութեան հասած տարօրինակութիւնները:

Զաւեշտական գրոյցներու մէջ մասնաւոր շարք կը կազմեն նաեւ արեւելեան յայտնի ժողովրդական կերպար Նասրէթտին Յօճայի անունով յօրինուածները, որոնցմէ կը տեղեկանանք թէ այդ հանրայայտ, ծիծաղ յարուցանող վիպական կերպարը ստոյգ ապրած է Թուրքիոյ մէջ եւ անոր գերեզմանը կը գտնուի Ազսարայի մէջ: Նասրէթտին Յօճայի զաւեշտական այլ եւ ուսանելի գրոյցներուն այսքան տարածուածութիւնը պոլսահայերու մէջ կը վկայէ հայ եւ թուրք ժողովուրդներու դարաւոր համակեցութեան մշակութային ազդեցութիւնները եւ փոխազդեցութիւնները:

5. ԱՌԱԿՆԵՐ ԵՒ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ (21 միաւոր)

Ձեւով սեղմ, բովանդակութեամբ այլաբանական երգիծական այս ստեղծագործութիւններուն մէջ պոլսահայերը կենդանական տիպարներու միջոցաւ գեղարուեստօրէն կը պատկերեն մարդոց յոռի եւ արգահատելի թերութիւնները ստախօսութիւնը («Գայլերը եւ հովիւը»), ագահութիւնը («Օձը եւ Մարդը», «Ձուկը եւ Մարդը»), խորամանկութիւնը («Առիւծը անտառի թագաւոր»), խաբեբայութիւնը («Սգաւոր քէքլիքը», «Փիրէ-ոջիլը»), մեծամտութիւնը («Ուղտը եւ Գանձը»), ակերախտութիւնը («Կրիան եւ Կարիճը», «Գորտը եւ Մուկը»): Կենդանական այս առակներուն մէջ միշտ չարն է որ կը պատժուի:

Սակայն կան նաեւ առակներ, ուր բարի եւ անմեղ կենդանիներու օրինակով կը գովերգուին հնարամտութիւնը («Շունին խելացի տէրը»), երախտագիտութիւնը («Երախտագէտ արջը», «Դլփիներուն շնորհակալութիւնը», «Չգայուն ճայերը») եւ այլ բարոյական արժանիքներ:

6. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՁՐՈՅՑՆԵՐ (54 միաւոր)

Այս կարգի ստեղծագործութիւնները իրական, տեղային հէնք ունին: Ասոնք պզտիկ ծաւալի մէջ գեղարուեստական հիւթեղ գոյներով կը ներկայացնեն թուրքիոյ տարբեր գաւառներու հայութեան իւրայատուկ կենցաղը, ինքնատիպ բարքերը, բարոյականութեան վերաբերեալ իրենց տարբեր չափանիշները:

Պոլիսը այն ժամանակ «Պզտիկ Փարիզ» ըլլալ կը յաւակնէր, եւ գաւառներէն հոս եկած, թուրքերէն չգիտցող, դեռեւս ինքզինքնին չգտած խեղճ ու կրակ գաւառացիները, շփուելով իրենց համար նոր միջավայրի մը հետ, յաճախ իրենք զիրենք շփոթուած, չհասկցուած եւ նոյնիսկ խաբուած կը զգային («Թուրքերէն չգիտցող գաւառացիները», «Գաւառացի Բերայի մէջ», «Կեսարացի եւ պոլսեցի»): Հոգեբանական այս բարդոյթները, գաւառացիներու իրավիճակներ ստեղծելով, նաեւ անոնց լուռ ողբերգութեան պատճառ կը դառնային:

Կենցաղային այս գրոյցներուն մէջ մտերմիկ հեզմանքով կը ցոլանան իւրաքանչիւր ազգագրական խումբին բնորոշ առանձնայատկութիւնները: Անմոռաց պատկերներով նկարագրուած են Կեսարացիներուն ճարպիկութիւնը («Կեսարացի հայրը եւ տղան», «Կեսարացի աղջիկը եւ Հրէայ փերեզակը», «Կեսարացի Նազարը»), Թոմարագիներուն պատրաստաբանութիւնը («Թոմարագիին պատասխանը», «Թոմարագիները եւ օդանաւը»), «Թոմարագի «Կոճակը» եւ մածուն ծախող թէյզէն»), Թէքիրտաղցիներուն խնայասիրութիւնը («Թէքիրտաղցի կեսուրը»), Եօզղատցիներուն նահապետականութիւնը («Եօզղատցի Փիրուզը», «Եօզղատցի նշանուածները»), «Փլած գացած Եօզղատցի աղջիկը»), Ատանացի հարսերուն չխօսկանութիւնը («Ատանացի հարսը»), Ակնցիներուն միամտութիւնը («Գաւառացի եւ Ակնցի պանդոկապետը»), Մուսալեռցիներուն ինքնապաշտպանական ոգին («Մուսալեռցի պապուկին էշուկները»), ինչպէս նաեւ այլ տեղավայրերու հայութեան ինքնատիպ վարք ու բարքին, կենցաղին եւ սովորոյթներուն բնորոշ յատկանիշները:

Ողբերգա-կատակերգային այս նիւթը իր յետագայ զարգացումը կ'ունենայ արտասահմանեան երկիրներ հասած գաւառացիներուն այլալուծ եւ շփոթուած վիճակը («Ֆրանսայէն վերադարձած գաւառացի», «Թոմարագիները Ամերիկայի մէջ»):

Ուշագրաւ են նաեւ այլեւայլ ժողովուրդներու վարք ու բարքը, նիստ ու կացը, ինչպէս նաեւ անոնց հանդէպ հայերուն ունեցած վերաբերմունքը պատկերող նորավիպատիպ գրոյցները: Օրինակ «Հրէային օգնող Հրէան», «Խելացի Հրէան», «Հրէայ հօր խրատը», «Սգաւոր Սաննիկը եւ

Յոյն դրացին», «Ճամբորդ Լազը», «Ալպանացի եւ ձիթաիւղին շիշը», «Իւկոսլաւ վարդապետը», «Պարսիկի պէս մի՛ նետեր», «Ալլազգ ոստիկանապետը», «Երեք ընկեր», «Ատափագարցի կինը եւ թուրք ոստիկանապետը» եւ այլ կենցաղային գրոյցներ, որոնց մէջ մշտապէս նկատելի են հայերուն բարի-դրացիական յարաբերութիւնները այլազգերուն հետ, ինչպէս նաեւ իր արժանապատուութիւնը բարձր պահող հայու անհողողոյ կամքի ուժը («Կեսարիոյ Տէր Հայրը եւ այլազգները», «Հայոց այբուբենին հմայքը»):

7. ՊԱՏՄԱԿԱՆ ՁՐՈՅՑՆԵՐ ԵՒ ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐ (71 միաւոր)

Մեր գրառած բանահիւսական նիւթերուն մէջ կարելոր բաժին կը կազմեն պատմական բովանդակութեամբ գրոյցները եւ յուշապատումները, որոնք ժողովածուի մէջ դասակարգուած են ժամանակագրական յաջորդականութեամբ, գեղարուեստօրէն վերարտադրելով հետեւեալ պատմական դէպքերն ու դէմքերը.

– Կ.Պոլսոյ անկումէն վերջ, Օսմանեան թուրքիոյ պետականութեան հիմնադրման արշալոյսին Ֆաթիհ Սուլթան Մեհմետ Բ-ի անմիջական նախածեռնութեամբ նոր մայրաքաղաք Ստանպուլի մէջ 1461-ին կը հիմնադրուի թուրքիոյ Հայոց Պատրիարքութիւնը՝ Յովակիմ Պատրիարքի գլխաւորութեամբ: Յետագային,

– Սուլթան Մահմուտ Բ-ի տիրակալութեան օրօք մայրաքաղաք Ստանպուլի ծաղկումին ու բարգաւաճումին մեծապէս կը նպաստեն Սուլթանի խորհրդական, ծագումով հայ Յարութիւն Պէզեան Ամիրան, փողերանոցի պետ Տիւզեան Ամիրա եղբայրները, իրերայաջորդ ճարտարապետներ Պալեան Ամիրաները, ինչպէս նաեւ տաղանդաւոր դերասաններ, երաժիշտներ ու շատ յայտնի այլ դէմքեր, որոնք անսահման նուիրումով եւ սատարած են երկրին քաղաքական, տնտեսական եւ մշակութային վերելքին:

– Սուլթան Ապտիւլ Համիտ Բ-ի գահակալութեան տարիներուն, քրիստոնեաներու, ի շարս անոնց նաեւ հայերու նկատմամբ եղած սեղմումները, որոնք խելամիտ եւ ձեռնհաս պատրիարքներու շնորհիւ (Մկրտիչ Խրիմեան, Յարութիւն Վեհապետեան, Խորէն Աշըգեան, Մատթէոս Իզմիրլեան, Ներսէս Վարժապետեան, Մաղաքիա Օրմանեան) կրցած են պահել հաւասարակշռութիւնը՝ առանց խորացնելու ստեղծուած պատմական կացութիւնը:

– Արեւմտահայութեան համար Ա աշխարհամարտի դաժան տարիներուն, Ջաւէն Պատրիարք Եղիայեանի կրկնակի գահակալութեան օրերուն, հազարաւոր որբացած մանուկներու եւ այրիացած կիներու պատսպա-

րունը Գալֆայեան եւ Գարակեօզեան որբանոցներու, ինչպէս նաեւ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի հովանու ներքոյ:

– Թուրքիոյ Հանրապետութեան հռչակունը եւ Սուսթաֆա Քեմալ Աթաթիւրքի յեղաշրջող բարենորոգութիւնները՝ կեանքի բոլոր ասպարէզներէն ներս: Այդ քաղաքագէտին բարեկամական վերաբերմունքը հայ անուանի լեզուագէտ Յակոբ Մարթայեանի եւ այլոց հանդէպ:

– Գարեգին Ա Տրապիզոնցի Խաչատուրեան, Շնորհք Գալուստեան եւ Գարեգին Բ Գազանճեան Պատրիարքներուն հայրապետական գործունէութիւնը ներկայացնող տպաւորիչ յուշեր:

– Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին այցը Թուրքիա եւ սրտառուչ հանդիպումները հայ համայնքին հետ:

– Շահան Սվաճեան եւ Մեսրոպ Սուրաֆեան Սրբազաններուն դերը հայ համայնքէն ներս:

– Մեսրոպ Սուրաֆեան Սրբազանին աստուածահաճոյ քարոզներուն ազդեցութիւնը հայ համայնքի մեծին եւ պզտիկին վրայ, ինչպէս նաեւ իր առաքելագործ ջանքերուն շնորհիւ Կեսարիոյ եւ Սաման Տաղի (Մուսա լեռ) Կազըֆ գիւղի վերակառուցուած եկեղեցիներուն վերաբացումի եւ օծումի արարողութիւնները:

Պատմական իրադարձութիւններով առլէցուն այս ժամանակաշրջանը իրերայաջորդ դէպքերու եւ դէմքերու շղթայ մը կը կազմէ, որ գեղարուեստօրէն պատկերուած է պատմական արժէք ներկայացնող ժողովրդական փաստալի գրոյցներով եւ ականատես վկաներու պատմած վաւերական յուշապատմումներով:

Պատմական յիշեալ ստեղծագործութիւններուն մէջ, անկախ քաղաքական վերիվայրումներէն, մշտապէս կը թեւածէ ժողովուրդներուն դարաւոր համակեցութիւնը, ինչպէս նաեւ ներկայիս Թուրքիոյ յառաջդիմութեան ու բարգաւաճումին նուիրուած հայ համայնքի աշխատասէր եւ խաղաղասէր ոգին:

Պոլսահայոց բանահիւսութիւնը հարուստ է նաեւ ՉԱՓԱԾՈՅ քնարական ստեղծագործութիւններով, որոնք գեղարուեստօրէն կը ցոլացնեն իրենց շրջապատող բնութենէն եւ ընկերային կեանքէն ստացած բազմազան տպաւորութիւններ, խոհեր եւ զգացումներ, խիճոյ ու սէր, վիշտ ու տառապանք: Երզը կ'ուղեկցի անոնց կեանքի ողջ ընթացքին:

Արդի Պոլսահայերէն ձայներիզի վրայ գրանցած ենք կարգ մը տարաբնոյթ երգեր, որոնցմէ 17-ը երաժշտագէտ Կարօ Չալիքեանի նօթագրութեամբ կը ներկայացուին սոյն հատորին մէջ ըստ բնագրային թիւերու:

Անցեալին շատ տարածուած այս երգերը այժմ գրեթէ մոռացութեան են մատնուած, սակայն հայ երաժիշտներ Թադէոս Էֆէնտիի, Քէմանի Սարգիսի, Ուտի Հրանդի եւ ուրիշներու յօրինած թուրքերէն երգերը տակաւին կը հնչեն Անգարայի ձայնասփիւռէն եւ հեռատեսիլէն:

1. ՕՐՕՐՈՑԱՅԻՆՆԵՐ (5 միաւոր)

Մանուկը օրօրելու, քնացնելու մայրական գողտրիկ երգեր են («Օրօր, իմ խուշիկ», «Քնացնեմ իմ աղաւնիս», եւ այլն):

2. ՄԱՆԿԱԽԱՂԱՅ ԵՐԳԵՐ (14 միաւոր)

Մեծերուն յօրինած, տարբեր տարիքի մանուկները զուարճացնելու, զբաղեցնելու երգեր են, երգային խաղեր, որոնք կ'արտասանուին մանուկներուն հասկնալի, պարզագոյն լեզուով («Էղրիկ-մեղրիկ», «Տան, տան», «Ծափիկ, ծափիկ», եւ այլն):

3. ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ (8 միաւոր)

Յօրինուած են մեծ մասամբ մանուկներուն հարազատ լեզուով՝ գաղափար տալու համար մանկական աշխարհի հետաքրքրութիւններու մասին, որոնցմով պայմանաւորուելու են անհատին յետագայ զարգացումը եւ ինքնաճանաչումը («Կլորիկ-թոմպուլիկ», «Աղջիկ մըն եմ գեղադէմ», «Երբ որ ես մեծնամ», «Հայ եմ ես», եւ այլն):

4. ՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ (4 միաւոր)

Մեծ մասամբ դպրոցականներու համար յօրինածներն են, որոնք պատանիներու մէջ կամային ու բարոյական բարձր յատկութիւններ կը սերմանեն («Ողջո՛յն, տաճար իմաստութեան», «Արմաշի դպրեվանքի օրհներգը», «Կամք, աշխատանք եւ կորով»):

5. ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ (23 միաւոր)

Միջնադարեան հայրեններու նմանութեամբ ստեղծուած ժողովրդական խաղիկներ են, որոնք կ'արտայայտեն հոգեկան նուրբ եւ քնքոյզ զգացումներ: Իսկ «Մեր տունն է ձեր տան դիմաց», «Վարդ քաղելէն կու գաս, եա՛ր», «Սիրտս կը թռի ջաղցի քարին պէս» սիրային գողտրիկ երգերը երբեմնի գեղջուկ ստեղծագործողներու մերօրեայ արձագանգները կը թուին ըլլալ:

6. ՊԱՆԴԻՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ (4 միաւոր)

Անցեալին թուրքիոյ գաւառներէն պանդխտած հայերուն համար Պոլիսը հանգրուան մըն էր, ուր անոնք կ'աշխատէին, դրամ կը վաստկէին, որ իրենց հարազատներուն դրկեն, իսկ անոնցմէ խապրիկ մը ստանալու ակնկալութեամբ հայ պանդուխտը կարօտ սրտով կ'երգէր «Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛», եւ կամ ինքզինքը կը յուսադրէր «Համբերէ՛, հոգի՛ս, համբերէ՛» երգելով:

7. ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ (53 միաւոր)

ա. Հարսանեկան երգեր (19 միաւոր). - Հարսը գովերգելով հանդերձաւորելու, անոր օժիտը հանդիսաւոր կերպով տանելու ծիսական արարողական երգերու հնարոյր մտոյշներ են «Քարւան էլաւ Հալպու քաղքէն», «Այսօր աղջիկ մը հարս կ'ըլլայ», «Հարսին հրաժեշտը», «Մօր խրատը», «Աղջիկն ալ կը տանին լալով, ողբալով», իսկ առաւել լաւատեսական «Երանի՛ քեզ, ա՛յ աղջիկ», «Տէր պապան պսակ կ'ընէ», «Կեսուրի դիմաւորելը», «Խնամականչը» և ազգագրական երանգ ունեցող այլ ծիսական երգեր:

բ. Տօնական երգեր (34 միաւոր). - Պոլսոյ հայութիւնը եկեղեցատէր է: Ան սրբութեամբ կը պահէ, կը պահպանէ ոչ միայն իր հնամենի եկեղեցիները, այլեւ հեթանոսական ակունքներ ունեցող քրիստոնէական եւ տէրուցական տօները, այդ տօներու ժամանակ նախնիներուն կատարած ժողովրդական զանազան երգերը («Ս. Ծնունդի երգ», «Խթումի երգ», «Կաղանդի երգ», «Ձատիկը եկաւ», Համբարձման եւ Վարդավառի վիճակահանութեան երգեր եւ մանիներ), որոնք յօրինուած են ոչ միայն հայերէն, այլեւ թուրքերէն:

8. ԿԵՆՑԱԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԲԵՇՏԱԿԱՆ ԵՐԳԵՐ (11 միաւոր)

Մեծ մասամբ խրախճանքներու ժամանակ երգուող, ծիծաղ յարուցանող երգեր են («Պսակուելէս առաջ հանգիստ կ'ապրէի», «Աղջկան կարմիր ֆիստան», «Մանտօլին չալելէն», ինչպէս նաեւ «Շարժի՛ր, շարժի՛ր թաշկինակը», «Սուտ է, սուտ է», «Հալա, հալա, հալա, Խինոյ ի» զաւեշտական խօսքերով պարերգերը, որոնք կոչուած են ներկաներու մէջ ցնծալի տրամադրութիւն յառաջ բերելու:

9. ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ (9 միաւոր)

Պոլսահայերը ոչ միայն Աստուածապաշտ են, այլեւ բնապաշտ: Անոնց համար հաւասարապէս ներշնչանքի աղբիւր են եւ Մարմարայի

կապուտակ ծովը («Ծովին վրայ»), եւ սաղարթախիտ անտառը («Անտառ գացի»), եւ երկնքի անհունին մէջ ազատօրէն ճախրող թռչունները («Հաշ-հատիկ արագիլ»), եւ թաւիշ մարգագետինները արածող կենդանիները («Սիրուն, անմեղ իմ գառնուկ»), եւ ծաղիկներով զարդարուն երկիրը («Հայրենիք»), եւ այդ յուռթի բնութեան պարզեւած պէս-պէս բարիքներն ու պտուղները («Որտեղ ինչով յայտնի է»):

III. ԱՍՈՒԹԱՅԻՆ ԲԱՆԱՅԻՄՈՒԹԻՒՆ

1. ԱՌԱԾ-ԱՍԱՑՈՒԹՅՆԵՐ (370 միաւոր)

Բանահիւսական այս տեսակին մէջ սեղմ ու պատկերաւոր կերպով կը ցոլանան պոլսահայոց ընկերային կեանքին պատմական, կենցաղային պայմանները, անոնց բնաւորութեան եւ խառնուածքին առանձնայատկութիւնները, բարոյական ըմբռումները, ազգային սովորոյթները, հաւատալիքներն ու կրօնքը, հոգեբանութիւնն ու աշխարհայեացքը: Օրինակ՝

«Երկաթը տաք-տաք կը ծեծեն»:

«Էլին բերանը վարտիքիս ուչխուրը չէ, քի կապեմ»:

«Թէֆլիքսիզ հիւրը մինտրսիզ կը նստի»:

«Մարդ կայ՝ մարդու քահանայ, մարդ կայ՝ մարդու սատանայ»:

2. ԽՐԱՏԱԿԱՆ ԱՍԱՑՈՒԹՅՆԵՐ (200 միաւոր)

Բարոյախօսական ասոյթներ են, որոնք ուսուցողական, դաստիարակիչ նպատակ ունին եւ մեծ մասամբ կեանքի փորձառութեամբ իմաստնացած աւագ սերունդի յօրինածներն են: Խրատները անփորձ երիտասարդներուն սպառնացող վերահաս վտանգը կանխող եւ նախազգուշացնող հանգամանք ունին՝ յորդորական հրամայականով արտայայտուած:

Մինչեւ օրս կը յիշեն պոլսեցի մեծ-հօրս Քերոբէ Աղա-Չրաքեանի ինծի տուած խրատները.

«Մի ուրախանար յաջողութենէ, մի՛ յուսահատիր ձախորդութենէ»:

«Մի վստահիր ուժիդ, դրամիդ, գեղեցկութեանդ. անցաւոր են»:

«Երջանիկ ըլլալէ աւելի նմանդ երջանկացուր»:

«Միակ բանը որ պիտի մնայ, եթէ ունիս, առաքինութիւնդ եւ բարիքներդ պիտի մնան կոթող»:

«Յիշէ՛ որ մերկ եկար աշխարհ եւ մերկ պիտի մեկնիս այս աշխարհէն», եւ շատ ուրիշներ:

3. ԱՆԵԾՔՆԵՐ (50 միաւոր)

Անէծքներով բանադրանքի կ'արժանանայ անբարոյ վարքի տէր մարդը: Պոլսահայը գրեթէ միշտ վատ մարդու դատաստանը կը թողու Աստուծուն.
«Աստուած հոգիդ առնէ»:
«Աստուծո՛ւն գտնաս», եւ այլն:

4. ՕՐՀՆԱՆՔՆԵՐ (100 միաւոր)

Պատկերաւոր եւ խորհմաստ հակիրճ ժողովրդական ստեղծագործութիւններ են, որոնք յագեցած են կենսասիրութեամբ եւ արժանաւոր մարդու հանդէպ ջերմ ու քնքոյշ վերաբերմունքով: Այս պզտիկ բանաձեւումներուն մէջ գնահատանքի չափանիշ կը դառնայ արեւը՝ որպէս կեանքի խորհրդանիշ, ինչպէս նաեւ բնաշխարհի հողը ու ջուրը, ծաղիկն ու տերեւը: Օրինակ՝

«Արեւդ վառ մնայ»:

«Քալած տեղդ վարդ թող բուսնի»:

«Չեռքերդ դալար մնան»:

«Չիթենիին վրայ ինչքան տերեւ կայ, այնքան տարի թող ապրիս», եւ այլն:

5. ԴԱՐՉՈՒԱԾՔՆԵՐ (270 միաւոր)

Պոլսահայոց առօրեայ խօսքը հեղեղուած է պատկերաւոր ու խորհմաստ դարձուածքներով ու թելաւոր խօսքերով: Հանգամանք մը, որ գունագեղ եւ անկրկնելի կը դարձնէ անոնց խօսքը.

«Բերանը քիրա (վարձ) կ'ուզէ» (քչախօս է):

«Տիւտիւքը չալել» (խօսքը առաջ տանիլ):

«Լեզուն բերնին մէջ կը դառնայ» (լեզուանի է):

«Կրակի գին» (սուղ):

«Օրօրոցը օրօրել» (երախտիք ունենայ), եւ այլն:

6. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ (42 միաւոր)

Այլաբանօրէն կը պատկերեն առարկան եւ իր յատկանիշները, կը նկարագրեն գաղտնագրուած ձեւով գաղափար տալով մարդու մարմնի մասերուն (սիրտ, ականջ, քիթ, բերան, աչք, լեզու), բնութեան երեւոյթներու (արեւ, լուսին, անձրեւ), բոյսերու (սոխ, կիտրոն, արեւածաղիկ), կենդանիներու (ծուկ, օձ, հնդկահալ), ինչպէս նաեւ մարդկային քաղաքակրթութեան նուաճումներու (եկեղեցի, գիրք, ժամացոյց, ջութակ, համադրիչ) եւ այլնի մասին:

7. ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ (5 միաւոր)

Միանման բառերու եւ հնչիւններու յաճախ անհիմաստ շարադասութիւն, զոր պէտք է արագ-արագ արտասանել: Մխալուիլը անշուշտ անխուսափելի է: Օրինակ՝

«Չուկը ուտեմ,

Մուկը նետեմ,

Մուկը նետեմ,

Չուկը ուտեմ»:

8. ՅԱՆԳԱԻՌ ԱՍՈՅԹՆԵՐ (23 միաւոր)

Յանգաւորուած, ներդաշնակ ու երաժշտական դարձած այս երկտողեան ասոյթները յաճախ կը գործածուին ժողովրդական առօրեայ խօսքին մէջ, սակայն յաճախ նաեւ որպէս երկխօսութիւն: Օրինակ՝

«— Իշտէ ասանկ բաներ...

— Մայտանոզը քեօֆթներ»:

«— Համմէ...

— Շաքար ծամէ...»:

«— Փա՛ռք քեզ, Տէ՛ր...»:

«— Պէքեարները կարգես, Տէ՛ր»:

9. ՀԱԻՍՏԱԼԻՔՆԵՐ (28 միաւոր)

Թեպէտ պոլսահայերը հաւատացեալ քրիստոնեաներ են, սակայն դեռ մինչեւ օրս առօրեայ կենցաղի մէջ կը պահպանեն կարգ մը սնահաւատական վերապրուկներ: Օրինակ՝

«Եթէ աչքդ խաղաց՝ հիւր պիտի գայ»:

«Եթէ ականջդ զնգայ՝ քեզ կը յիշեն»:

«Եթէ աղը թափուի՝ տունին մէջ կոփու կ'ըլլայ»:

«Եթէ շաքարը թափուի՝ տունին մէջ սեր-մուհապպէ կ'ըլլայ»:

10. ԱՂՕԹՔՆԵՐ (20 միաւոր)

Պոլսահայերը (նաեւ թրքախօսները) գրեթէ բոլորը գիտեն տիրուցական «Հայր մեր»ը, սակայն հմայական բնոյթի աղօթքները ոչ բոլորին

են յայտնի, այլ միայն «գերբնական զօրութեամբ օժտուած» անհատներու: Քանի որ անոնք արգիլուած (taboo) կը նկատուին, եւ կը հաւատան որ բարձրաձայն արտասանելու պարագային կը զրկուին «ի վերուստ իրենց տրուած շնորհքէն»: Հետեւաբար բաւական դժուար էր յայտնաբերել եւ գրի առնել «Չար աչքի», «Չար նազարի», «Օձը խայթածի», «Մանկան փորագաւի» եւ այլ հմայական աղօթքները:

Այս բաժինին մէջ առանձին շարք կը կազմեն Տէր Յիսուս Քրիստոսին, Մարիամ Աստուածածինին, Ս. Սարգիսին, Օհան Ոսկեբերանին եւ այլ սուրբերու ուղղուած հայերէն եւ քրքերէն աղօթքները:

Պոլսահայոց աղօթքները իրենց բնոյթով գողտրիկ աղերս-խընդրանքներ են, որոնք երկնաւորէն ոչ այնքան նիւթողէն բարեկեցութիւն կը հայցեն, որքան ոգեղէն արժանիքներ, որոնք ոչ միայն անձնական են, այլեւ անանձնական:

Ամենասուրբ Երրորդութիւն,

Տո՛ւր հիւանդաց բժշկութիւն

Եւ մեր մեղացս թողութիւն,

Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն,

Ազգիս Հայոց սէր, միութիւն:

IV. ԾԵՍԵՐ (3 միաւոր) բաժինի մէջ մկրտութեան, ամուսնութեան եւ յուղարկաւորութեան ազգագրական բնոյթի երբեմնի սովորութային արարողակարգերը, ըստ հնարաւորին մանրամասնօրէն նկարագրուած են համապատասխան երգային մէջբերումներով: Իսկ ժամանակակից ծիսակատարութիւնները թայտ առաւել արդիական են դարձած, սակայն մշտապէս հաւատարիմ են Քրիստոնէական Հաւատքին եւ 1700-ամեայ Հայ Եկեղեցիին:

Այսպէսով, սփիւռքահայութեան ներկայիս մշակութային տարրալուծումի պարագաներուն տակ, մեր անձնական նախածեռնութեամբը գրի առնուած եւ ի սպառ կորուստէ փրկուած խնդրոյ առարկայ ժողովրդագիտական նշխարները իրենց պատմա-ճանաչողական արժէքով կ'ըլլան արդի պոլսահայոց աւանդապահութեան առարկայական վկայութիւնը:



Գունգաբուի Ս. Աստուածածին Հայոց Մայր եկեղեցին
(1828-ին ճարտարապետ Գր. Պալեան)



Իշխանաց կղզիներէն առաջինը՝ Գրնալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Յայոց Եկեղեցւոյ (1857) ներքին երեսոյթը:



Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոց

I ԱՐՁԱԿ ԲԱՆԱՀԻՄՈՒԹԻՒՆ



ԱՌՊԱՏՊԵԼՆԵՐ ԵՒ ՀԵՔԻԱԹՆԵՐ

I (I). ԱՐԱՄ ԹԱԳԱՒՈՐԻ ՈՐԴԻ ԱՐՎ ԳԵՂԵՅԻԿԵ

Արամ Զանազգալէի հայերը կը պատմէին որ Արամ թագաւորին աչքերը կուրացեր էին եւ բոլորը տխրեր էին, քանի որ ոչ մի դեղ չէին կարող ճարել, որ բացուին թագաւորին աչքերը: Բոլոր գիտունները, հեքիմները ինչ որ գիտէին, գործադրեցին, բայց անօգուտ: Արամ թագաւորը յուսահատ պատկած էր անկողինին մէջը: Մունետիկներ հանեցին ամբողջ երկրին մէջ, որ եթէ ուէ մէկը կարողանայ թագաւորին աչքերը բանալ, ան մեծ պարգևի պիտի արժանանայ:

Ծատ-շատերը եկան, ամէն ոք դեղ մը առաջարկեց՝ ինչ որ գիտեր, բայց դարձեալ անօգուտ:

Օր մը ալետր մարդ մը եկաւ, մօտեցաւ թագաւորին եւ ըսաւ.

— Թագաւորն ապրած կեանայ, ես գիտեմ քու աչքերուդ դեղը:

Թագաւորը հարցուց.

— Ո՞ւր է այդ դեղը:

Ալետրը ըսաւ.

— Այդ դեղը կը գտնուի Ծամիրամ թագուհիին մօտ:

Թագաւորը որ լսեց Ծամիրամի անունը՝ ըսաւ.

— Ծամիրամը ինձի չի՛ տար այդ դեղը:

Արա Գեղեցիկը որ լսեց այդ՝ ըսաւ հօրը.

— Հա՛յր, թո՛ղ տուր, ես երթամ, բերեմ քու աչքերուդ դեղը Ծամիրամին մօտէն: Ես անպայման կը բերեմ. պատուովս խօսք կու տամ:

Արամ թագաւորը յուսահատ կը պատասխանէ.

— Ծամիրամը կախարդ է: Ան քեզ ետ չ'ուղարկեր: Աչքերուս լոյսը կորսնցնելու ետքը կեանքիս յոյսն ալ չեմ ուզեր կորսնցնել:

Արա Գեղեցիկը դարձեալ կը խնդրէ հօրը, որ թոյլ տայ իրեն երթալ, բերել:

Վերջապէս Արամ թագաւորը կ'օրհնէ իր տղան: Արամ ձի կը նստի ու ճամբայ կ'իյնայ դէպի Վան:

Արան, Հայաստանի սահմանէն բաւական հեռանալէն յետոյ, ճանապարհին կը հանդիպի ժայռի մը վրայ կառուցուած բերդի մը, ձայն կու տայ, որ արդեօք մարդ կա՞յ այնտեղ ապրող, որպէսզի քիչ մը հանգչի:

Բերդի պատուհանէն աղջիկ մը վախճալով ձայն կու տայ Արային.

— Ի՞նչ կը փնտռես աս տեղերը, ա՛յ երիտասարդ, շուտ գնա այստեղէն, եթէ կեանքդ թանկ է քեզի համար. հիմա ուր որ է կու գայ եօթգլխանի դեղը եւ քեզի մէկ հարուածով կը սպաննէ, ափսո՛ւ ես:

Արան աւելի կը հետաքրքրուի եւ կ'ուզէ հասկնալ թէ ինչ դէպ մասին կը խօսի աղջիկը: Արան կը խնդրէ աղջկան, որ ինքը շատ ծարաւ է, գոնէ քիչ մը ջուր տայ իրեն, որ խմէ:

Աղջիկը կ'երթայ, ջուր կը բերէ, կու տայ Արային, որ խմէ: Արան մօտիկէն կը տեսնայ հուրի-փերի, լուսեղէն աղջիկ մը: Արան շատ կը խնդրէ որ ան պատմէ իրեն թէ ով է այդ եօթը գլխանի դեղը եւ ինչու ինքը այստեղ միմակ կ'ապրի:

Աղջիկը վախճալով որ հիմա ուր որ է դեղը կու գայ՝ Արային կը պատմէ.

— Այստեղ ես միմակ չեմ, այդ դեղը իմ տէրն ու տիրակալն է, ես թագաւորի աղջիկ եմ եւ իմ անունը Զուարթ է: Այս անօրէն դեղը եկաւ, ինձ փախցուց. բերաւ այս բերդին մէջ բանտարկեց, հիմա իմ ծնողքս չեն գիտեր թէ ես ուր եմ:

Աղջիկը տեսնալով Արայի գեղեցկութիւնը կը խնդրէ. կը պառակտի որ շուտով մեկնի այստեղէն. «Իմ կեանքս ոչինչ է, բայց մեղք է քեզի պէս երիտասարդին, որ զոհ երթայ անօրէն դէպին: Հիմա արդէն ճիշտ անոր գալուն ժամանակն է, ան արդէն մարդու հոտ առած կ'ըլլայ»:

Արան կ'ըսէ.

— Աւելի լաւ: Ես անոր տեսնալ կ'ուզեմ, կեանքիս մէջ չեմ տեսած թէ եօթը գլխանի դեղը ի՞նչ ձեւ կ'ըլլայ:

Աղջիկը ինչքան որ կը խնդրէ՝ օգուտ չի տար: Մէկ ալ յանկարծ մեծ փոթորիկ մը կը սկսի: Զուարթը դող կ'ելլայ, կ'ըսէ.

— Ահա անոր գալու ճշմանն է: Ամէն օր այսպէս փոթորիկ կը սկսի անոր գալու ժամանակը, բայց այսօր աւելի սաստիկ է. երեւի իմացած է որ օտար մարդ կայ մօտս:

Արամ կ'ըսէ.

— Դուն մի' վախճար, թող ներս գայ, իրեն հետ ե'ս կը խօսիմ:

Դերը որ ներս կը մտնայ, կատողած կը սկսի հոտոտալ ու պօռալ աղջկան վրայ, կ'ըսէ.

— Ո՞վ է եկեր այստեղ, ես օտար մարդու հոտ կ'առնեմ:

Այդ միջոցին Արամ դուրս կու գայ անոր դիմաց, կ'ըսէ.

— Ես եմ եկեր քեզ հետ չափուելու:

Դերը այնպիսի կատողած ձեռով Արային վրայ կը յարձակի որ իսկապէս Արամ կը սոսկայ, բայց ինքզինքը չի կորսնցնէր: Անմիջապէս պատեանէն կը հանէ սուրը եւ մէկ հատ կը զարնէ, դեւին եօթ գլուխն ալ վար կը գլորին, բայց դերը կ'ըսէ.

— Դեռ կենդանի եմ, եթէ տղամարդ ես՝ հարուած մը ես տուր, որ շուտ մեռնիմ:

Բայց Արամ գիտէր որ եթէ դեւին մէկ հարուածով չտապալէս ու երկրորդ հարուած մը տաս, ան նորէն կը կենդանանայ, ատոր համար Արամ կ'ըսէ.

— Ո՛չ, ես մօրմէս մէկ անգամ ծնած եմ, հարուածս ալ մէկ պիտի ըլլայ, — ու դերը իսկապէս կը սատկի:

Զուարթը ուրախութենէ կը փաթթուի Արայի վիզին, կը համբուրէ, կ'ըսէ.

— Ես քու կինդ պիտի ըլլամ:

Արամ կ'ըսէ.

— Ո՛չ, ես մեծ եղբայր ունիմ, քանի ան դեռ չէ ամուսնացած, ինծի չի վայելը անկէ առաջ անցնիլ, ուրեմն դուն իմ մեծ եղբօրս հարսնացուն պիտի ըլլաս:

Զուարթը լալով կ'ըսէ.

— Ի՞նչպէս թէ եղբօրդ կինը, ես քո՛ւ կինդ ըլլալ կ'ուզեմ:

Բայց Արամ անոր կը հանդարտեցնէ՝ այդ արարքը ամօթ սեպելով: Վերջապէս կը համաձայնին: Արամ այդ գիշեր այնտեղ կը մնայ եւ առաւօտեան կը պատրաստուի ճամբան շարունակելու: Զուարթը ճամբորդական պայուսակին մէջ պաշար կը լեցնէ եւ Արային վիզը փաթթուելով՝ կ'ըսէ.

— Դուն իմ ազատարարս եղար, ես կ'ուզէի քո՛ւ կինդ դառնալ, բայց քանի որ դուն այդպէս ուզեցիր՝ թող այդպէս ըլլայ:

Արամ Զուարթին կ'ըսէ.

— Դուն քեզի լաւ նայէ մինչեւ իմ վերադարձս, ես կարենոր գործով պիտի երթամ, ետքը մենք միասին պիտի երթանք Հայաստան:

Վերջապէս հրաժեշտ կու տան իրար եւ Արամ կը մեկնի: Բաւական երթալէն վերջը կը հանդիպի մէկ ուրիշ բերդի մը: Արամ ձայն կու տայ.

— Է, հէ՛յ, ո՞վ կայ այդտեղ:

Մէկ ալ բերդին մէկ պատուհանէն հուռի-փերի, լուսեղէն աղջիկ մը կը պատասխանէ.

— Ի՞նչ կը փնտռես, ա՛յ սիրուն երիտասարդ, այս վտանգաւոր տեղերը: Չե՞ս մեղքնար քու կեանքիդ, որ մի՛նակդ համարձակեր ես գալ եօթը գլխանի դեւին սահմանները: Եթէ քու կեանքդ թանկ է քեզի համար, հեռացի՛ր այս տեղէն, քանի դեռ ուշ չէ, ուր որ է հիմա կու գայ այդ ահեղի դեր ու քեզ պատառ-պատառ կ'ընէ:

Արամ, որ մտիկ կ'ընէր այդ աղջկան խօսքերը, կը հիանայ անոր խօսակցութեան եւ ձայնին քնքշութենէն եւ կը խնդրէ որ դուրը բանայ՝ քիչ մը ջուր խմէ, հանգստանայ: Աղջիկը թէեւ վախով, բայց կը բանայ դուրը, տեսնալով Արայի գեղեցկութիւնը կը սկսի լալ: Արամ կը հարցնէ.

— Ինչո՞ւ համար կու լաս:

Աղջիկը կ'ըսէ.

— Հիմա այդ անիծեալ դերը հոտդ առած է, շուտով կու գայ այստեղ, ես ինծի չեմ մեղքնար, բայց քեզի պէս գեղեցիկ երիտասարդին մեղք է որ զոհ դառնայ չար դեւին:

Արամ կ'ըսէ.

— Մի՛ անհանգստանար, ինծի քիչ մը ջուր տուր քու ձեռքովդ, որ ես խմեմ, յետոյ այդ դեւին հաշիւը կը տեսնանք:

Աղջիկը կը զարմանայ այդ երիտասարդին անվախութեանը, կ'երթայ ջուրը կը բերէ: Արամ խմելու ժամանակ աղջկան աչքերուն նայելով՝ ուժեղ կը սիրահարի, աղջիկն ալ՝ Արային:

Մէջ մըն ալ ծառերը կը սկսին շարժիլ ու մեծ փոթորիկ մը կը պայթի:

Աղջիկը կ'ըսէ.

— Ահա արդէն դերը կու գայ, շուտ աստեղէն փախի՛ր, գնա՛:

Արամ կ'ըսէ.

— Դուն մի՛ վախճար, եթէ գալիք ունի, տեսնալիք ալ կ'ունենայ: Դուն դուրը բաց ձգէ, թող ներս գայ:

Դերը կատողած ներս կը մտնայ, կ'ըսէ.

— Այս ի՞նչ է, մարդու հոտ կու գայ քիթիս, ո՞վ կայ այստեղ:

— Ես եմ այստեղ, — կ'ըսէ Արամ ու դեհն դէմը կ'ելլայ:

Դեռ կ'ուզէ Արային վրայ յարձակիլ, բայց ան առիթ չի տար անոր: Անմիջապէս թուրով, որ արդէն պատրաստ էր, մէկ հատ կը զարնէ: Դեհն եօթը գլուխն ալ թաւալար գետին կը տապալին, ինքն ալ միասին: Ինչպէս սուաջին դեռ, աս ալ նոյնպէս կը խնդրէ որ հարուած մը ես տայ. «Ես դեռ կենդանի եմ», կ'ըսէ, բայց Արամ միեւնոյն պատասխանը կու տայ. ինչ որ սուաջինին:

Աս դեռն ալ կը սաստի, անոր լէշը բերդէն վար կը նետեն:

Աղջիկը ուրախութենէն կը փաթթոտի Արայի վիզին, կ'ըսէ.

— Ես քու կինդ ըլլալ կ'ուզեմ:

Արամ ալ կ'ըսէ.

— Այո՛, դուն իմ կինս պիտի ըլլաս:

— Եւ Արամ կը հարցնէ թէ որո՞ւն աղջիկն է, անունը ի՞նչ է եւ ինչո՞ւ է այստեղ բանտարկուած:

Աղջիկը Արային կը պատմէ իրեն ով ըլլաւը.

— Իմ անունս Նուարդ է: Ես Պոսո թագաւորին մէկ հատիկ աղջիկն եմ: Ինծի Գեղանի Նուարդ կ'ըսէին: Ծամիրամը լսելով այդ՝ նախանձեցաւ եւ որպէսզի վրէժ առնէ, ինծի փախցունել տուաւ հօրս արքայական տունէն՝ այս սարսափելի դեռ միջոցաւ: Հիմա հայրս երէ ողջ է, չեմ գիտեր, եղբայրներս չեն գիտեր իմ տեղս, թէ ուր եմ ես ով էր ինձ անտանգողը: Դուն լսած ես իմ հօրս՝ Պոսո թագաւորին թուրին պատմութիւնը:

Արամ կ'ըսէ.

— Ո՛չ, չեմ լսած:

— Ուրեմն լսէ՛ պատմեմ, — կ'ըսէ Նուարդը եւ կը սկսի պատմել.

Իմ հայրս ուներ թուր մը, բայց ոչ սովորական: Ծատ կոխներու մէջ յաղթած էր այդ թուրով: Ծատ թագաւորներ գիտէին այդ թուրի զօրութիւնը եւ ոչ մէկ թագաւոր չէր համարձակեր հօրս թուրին դէմ գալ: Հայրս այդ կը պահէր գաղտնի տեղ մը, երբ որ պէտք ըլլար. այն ժամանակ դուրս կը հանէր ադ տեղէն: Տարիներ յետոյ, երբ հայրս արդէն ծերացեր էր եւ ձեռքերը կը դողային, ուզեց այդ թուրը մէջտեղէն վերցնել՝ նկատի առնելով որ երեք եղբայրներս բոլորն ալ պիտի ուզեն այդ թուրը ունենալ եւ նախանձ պիտի մտնար իրենց մէջ: Հայրս կը կանչէ մեծ եղբայրս եւ կ'ըսէ.

— Գիտե՛մ, իմ մեռնելէս ետքը երեք զաւակներուս մէջ կոխ պիտի ծագի՝ այս թուրին տիրանալու համար, ասոր համար ես որոշեր եմ իմ թուրս մէջտեղէն վերցնել: Հիմա այս թուրը քեզի պիտի յանձնեմ, կ'երթաս ծովուն մէջտեղը կը նետես ու ետ կու գաս, որ քեզ օրհնեմ ու քեզ յանձնեմ իմ զահր:

— Սիրով կը կատարեմ քու ցանկութիւնդ, հա՛յր, — կ'ըսէ մեծ եղբայրս, կ'առնէ թուրը ու կ'երթայ:

Երբ որ կը հասնի ծով, կը հանէ թուրը պատեանէն, որ անգամ մը փորձէ անոր յատկութիւնը: Թուրը կը հանէ, ծովու եզերքի ժայռին կը զարնէ, եւ պանիրի պէս կը կտրէ ժայռէն բեկոր մը: Մեծ եղբայրս շատ կը մեղքնայ, որ այդ տեսակ եզակի թուր մը պիտի ոչնչանայ, թուրը կը պահէ ժայռի մը մէջ: Կու գայ հօրս քով եւ կ'ըսէ որ արդէն թուրը նետեր է ծովուն մէջտեղը:

Հայրս կը հարցնէ.

— Ի՞նչ պատահեց, երբ որ թուրը նետեցիր ծովուն մէջ:

— Ոչ մէկ բան չպատահեց, — կ'ըսէ եղբայրս:

Հայրս կ'ըսէ.

— Ուրեմն դուն սուտ կ'ըսես, թուրը չե՛ս նետած ծովը: Գնա եւ քեր, ուր որ պահած ես:

Մեծ եղբայրս կը խոստովանի որ մեղքնալով թուրը չէ նետած ծովը:

Հայրս կը կանչէ միջնակ եղբայրս: Առանց իրարմէ լուր ունենալու, ան ալ կը փորձէ թուրը, կը մեղքնայ ու չի նետեր ծովը: Հայրս դարձեալ կը հասկնայ ու ետ բերել կու տայ այդ հրաշք թուրը:

Հայրս կը կանչէ փոքր եղբայրս, նոյնպէս կը պատուիրէ որ թուրը ծովը նետէ ու գայ իր մօտ: Այդ օրը Ուրբաթ էր: Եղբայրս կ'առնէ թուրը, կ'երթայ: Ծովը հանդարտ է եղեր այդ միջոցին, բայց երբ որ թուրը ծովը կը նետէ, իսկոյն ծովը կը կատղի, ալիքները կը բարձրանան ու փոքր եղբայրս կը զարմանայ այդ կատարուածի համար: Կու գայ հօրս մօտ, կը պատմէ թէ ինչպէս թուրը նետելէն ետքը ծովը ալէկոծուեցաւ եւ ահագին ալիքներ բարձրացան: Հայրս կը հասկնայ որ եղբայրս իսկապէս իր խոստումը կատարեր է. շատ զոհ կը մնայ ու կ'օրհնէ փոքր եղբայրս: Հիմա չգիտեմ թէ հայրս ո՞ղջ է թէ ոչ: Ծատ կարօտցած եմ հարսագատներուս. — կ'ըսէ Նուարդը ու կ'արտասուի:

Արան անոր կը հանգստացնէ եւ խօսք կու տայ որ ինքը վերադարձին միասին կ'երթան իրենց երկիրը. յետոյ իրեն կը տանի Հայաստան՝ որպէս իր հարսնացուն:

Նուարդը յուզմունքէն կը կարմրի եւ անոնք իրար կը համբուրեն:

Նուարդը իր կարգին կը հարցնէ Արային, թէ ի՞նչ ազգէ է, որո՞ւն գաւակն է, ո՞ր կ'երթայ: Արան կ'ըսէ.

— Իմ պատմութիւնս շատ երկար չէ, ես հայ ազգէն եմ, Արան թագաւորին կրտսեր տղան եմ: Հօրս աչքերը կուրցան, ոչ մի դէպ չօգնեց: Ալեւոր մարդ մը եկաւ, հօրս ըսաւ թէ անոր աչքերուն դէղը կը գտնուի միմիայն Օամիրամ թագուհիին մօտ: Ես հիմա կ'երթամ այդ դէղը բերելու, որպէսզի հօրս աչքերը բացուին:

Նուարդը երբ կը լսէ որ Արան կ'երթայ Օամիրամի մօտ, կ'ըսէ.

— Ուրեմն դուն այլեւս չես վերադառնար: Օամիրամը կախարդ է, քեզ կը ճանկէ, — ու կը սկսի արտասուիլ:

Արան կ'ըսէ որ ինքը երդում տուած է հօրը, որ ետ պիտի դառնայ: Արան հրաժեշտ կու տայ Նուարդին եւ ճամբայ կ'ելլայ: Ճանապարհի եզրին գետակի մը քով վար կ'իջնայ ձիւն, որ ձիուն շուր խմցնէ ու ինքն ալ քիչ մը հանգստանայ: Այնտեղ ծառի բունին կոթնած ծերուկ մը կը տեսնայ: Արան կ'ըսէ.

— Բարե՛ւ, հայրիկ, — բայց ծերուկը բարեւին չի պատասխաներ: Նորէն կը բարեւէ, նորէն պատասխան չի տար: Այս անգամ Արան սաստիկ կը բարկանայ, կը բռնէ ծերուկին երկու թելերէն եւ ուժեղ մը կը ցնցէ: Ծերուկը տեսնալով Արայի մարդկային ու քաջ վերաբերմունքը, կը նստեցնէ իր քովը եւ կը հարցնէ թէ ո՞ր կ'երթայ եւ ի՞նչ նպատակով:

Արան կը պատմէ որ ինքը Արամ թագաւորի տղան է եւ կ'երթայ Օամիրամի մօտէն հօր աչքերուն դէղը վերցնելու:

— Օամիրամի մօ՞տ, — կը հարցնէ ծերուկը, — դուն ի՞նչպէս կը մտնաս անոր երկիրը. օձը իր պորտով, ծիտը իր թելով չէ կրցած մտնալ Օամիրամի երկիրը, դուն ի՞նչպէս պիտի մտնաս այնտեղ:

Արան կ'ըսէ.

— Ես խօսք եմ տուած հօրս որ անպայման Օամիրամի մօտէն պիտի բերեմ այդ դէղը: Ցուցուր ինձի՝ ո՞ր ճամբով երթամ, հասնեմ:

Ծերուկը կ'ըսէ.

— Դուն քաջ եւ ազնուական երիտասարդ մըն ես. ինձ «հա՛յր» կոչեցիր, թէպէտ իմ երկու եղբայրներս սպանեցիր: Մենք երեք եղբայր-

ներ էինք: Անոնք եօթը գլխանի դեւի կերպարանք էին ատեր Օամիրամ թագուհիին հրամանով: Ան կախարդ է, ինչ ձեւ ուզէ կը դարձնէ իր պահակները: Իմ երկու եղբայրներուս ան դեւ էր դարձուցած, որպէսզի իր երկրի սահմանը լաւ պահեն: Դուն անոնց սպաննեցիր, բայց ես քեզի կը ներեմ, որովհետեւ դուն քաջ ու ազնիւ վարուեցար ինձ հետ, երբ ես քու բարեւոյ չառի, չձգեցիր չգացիր: Ես ալ կախարդ եմ, Օամիրամի ծանախ եմ, բայց ես քեզի պիտի օգնեմ, որ դուն դիրտութեամբ մտնաս Օամիրամի երկիրը եւ պալատը, ատնես հօրդ աչքերուն դէղը: Հիմա էլիր այս ծառին վրայ, երեք տերեւ քաղէ՛ ու իջի՛ր վար:

Արան կ'ելլէ ծառը, ինչպէս որ ծերուկը ըսաւ, զգուշութեամբ երեք տերեւ կը քաղէ եւ վար կ'իջնայ:

Ծերուկը կ'ըսէ.

— Հիմա ուշադիր մտիկ ըրէ տալիք խրատներուս: Երբ որ հասնիս Օամիրամի մայրաքաղաքը, այս երեք տերեւներէն մէկը դիր շրթունքներուդ եւ մտիր քաղաք, քեզ ոչ ոք պիտի տեսնայ, դուն անտեսանելի պիտի դառնաս: Իսկ երբ որ մտնաս Օամիրամին պալատը, այդ տերեւը նետէ ու երկրորդը դիր շրթունքներուդ: Գիշերը պալատ կը մտնաս որ Օամիրամը քնացած ըլլայ: Հօրդ աչքերուն դէղը անոր գլխուն մօտը՝ զգրոցին մէջը կը գտնուի, կ'ատնես: Օամիրամին երեսը չնայիս, ան քեզ կը կախարդէ: Դուրս գալու ժամանակդ երրորդ տերեւը հանէ եւ դիր շրթունքներուդ ու դուրս եկուր պալատէն ու պարիսպի դռներէն՝ քեզ ոչ ոք չպիտի նկատէ: Բայց ուշադիր եղիր, ոչ մէկ նշան չձգես անոր քովը: Եթէ Օամիրամը գիտնայ որ մէկը գաղտնի մտած է իր սենեակը՝ թէ՛ դուն կը վտանգուիս եւ թէ՛ ես: Ուրեմն գնայ եւ կատարէ իմ ըսածներս: Ես քեզ կը սպասեմ այս նոյն տեղը:

Արան շնորհակալութիւն կը յայտնէ ծերուկին եւ հրաժեշտ տալով՝ կը մեկնի Օամիրամի մօտ: Ինչպէս որ ծերուկը պատուիրած էր, տերեւը շրթունքներուն մէջտեղը կը դնէ, կը դառնայ անտեսանելի եւ կը մտնայ քաղաքի դռնէն ներս: Արան կը տեսնայ բոլորը, բայց անոնք չեն կրնար զինքը տեսնալ: Գիշերով կը մտնայ Օամիրամին պալատը: Երկրորդ տերեւը կը փոխէ եւ ոչ ոք իրեն չի նկատեր: Կ'երթայ, կը մտնայ Օամիրամին անջաստենեակը, անոր գլխուն քովէն կ'ատնէ իր հօր աչքերուն դէղը, ինչքան ջանք կ'ընէ որ չնայի Օամիրամին պատկած կողմը, բայց անօգուտ: Կը տեսնայ Օամիրամը, որ պատկած է անկողինին մէջ: Արային սիրտը չի դիմանար, Օամիրամին գեղեցկութիւնը տեսնալով՝ կը

մոռնայ ամէն ինչ՝ ե՛ր Նուարդը ե՛ր ծերուկին խորհուրդները, կը մօտենայ Օսմիրամին եւ կը համբուրէ անոր շրթունքները, կը հանէ իր մատանին, կը ձգէ Օսմիրամի բարձին վրայ ու պալատէն դուրս կու գայ, կը հեծնի իր ձին ու քաղաքէն ալ դուրս կու գայ, կը հասնի ծերուկին քովը: Ծերուկը երբ կը տեսնայ Արան, կ'ըսէ.

— Ի՞նչ ըրիր դուն, ինչո՞ւ համբուրեցիր եւ նշան ձգեցիր անոր բարձին վրայ: Օուտ հեռացի՛ր, գնա՛ քու երկիրդ, ուր որ է ան պիտի գայ իր բանակով:

Արան կը հասկնայ իր սխալը, բայց արդէն ուշ էր: Կը հասնի Նուարդին մօտ, կ'առնէ զանի, կը հասնի Զուարթին մօտ, զանի ալ կ'առնէ ու կու գայ Հայաստան: Հօրը աչքերուն դեղը կը քսէ, հօր աչքերը կը բացուին եւ բոլորը կ'ուրախանան: Եօթը օր, եօթը գիշեր մեծ հարսնիք կ'ընեն, Զուարթը կ'ամուսնացնեն մեծ եղբօրը հետ, Նուարդը՝ Արային հետ:

Դառնանք Օսմիրամին: Օսմիրամը առտուն կ'արթննայ, կը զգայ որ մէկը եկած ու հպած է իր շրթունքներուն:

Կը բարկանայ նածիշտներուն եւ պահակներուն վրայ, կ'ըսէ.

— Ո՞վ է եկեր այս գիշեր իմ ննջարանս:

Բոլորը իրարու երես կը նային զարմացած:

Օսմիրամը կը հասկնայ որ ոչ ոք այստեղ մեղք ունի: Ան յանկարծ կը նկատէ մատանին, կը կարդայ վրան. «Ռոդի Արամ թագաւորի՝ Արա»:

— Ափսո՛ւ, — կ'ըսէ, — ի՛նչ թոչուն էր, որ ձեռքէս փախցուցի:

Չդիմանալով այդ անպատուութեան, Օսմիրամը կը հրամայէ բռնորդին զինուորագրուիլ եւ առաջնորդելով բանակը՝ կու գայ դէպի Հայաստան՝ վրէժ լուծելու:

Հայաստանը խաղաղ էր ու հանգիստ: Բայց օր մը առտուն արթննալով կը տեսնան որ Օսմիրամի զինուորներէ պաշարուած են: Արան ամէն ինչ կը հասկնայ, բայց եղածը եղած էր: Օսմիրամը իր բանակէն պատուիրակ կը դրկէ Արամ թագաւորին, թէ իր տղան Արան գաղտագողի մտած է իր երկիրը, իր պալատը եւ իր ննջասենեակը ու իրեն՝ անպատուած: Այդ հանգամանքը կը հարթուի երկու դրացի երկիրներու մէջ, եթէ Արան գայ ու իր հետ ամուսնանայ: Արան չէր պատմած ո՛չ իր հօրը եւ ո՛չ ալ մայր թագուհիին, որ ինքը նշան թողած է Օսմիրամի մօտ: Նուարդը եւս անտեղեակ էր այդ մասին: Երբ որ կը լսեն Արայի այդ անխոհեմ արարքը, մայր թագուհին կը կշտամբէ Արային անխոհեմ

արարքը, մանաւանդ որ Նուարդին խօսք տուած էր կնութեան համար:

Արան չէր գիտեր ընելիքը՝ երթա՞ր Օսմիրամի մօտ, թէ՞ մնար Նուարդին մօտ՝ մերժելով Օսմիրամին առաջարկը: Նուարդը, որ շատ ազնիւ եւ համեստափայլ կին դարձած էր, կը խնդրէ Արայէն որ կատարէ Օսմիրամին կամքը եւ իրեն թողու Հայոց երկիրը, որպէսզի տեղի չունենայ անիրաւ պատերազմը: Արան շատ կ'ազդուի այդ խօսքերէն եւ կ'որոշէ մերժել Օսմիրամին առաջարկը: Կը սկսի պատերազմը: Օսմիրամը նախօրօք կը պատուիրէ իր զինուորներուն՝ Արան չսպաննել, այլ ողջ-ողջ բռնել եւ իր մօտ բերել:

Կռուի ամենաեռուն պահուն Արան կը սպաննուի: Երեկոյեան դէմ Օսմիրամին զինուորները ետ կը քշուին դէպի Ախլաթ քաղաքը: Օսմիրամը այստեղէն նոր զինուորներ կը հաւաքէ եւ նորէն կը յարձակի: Բայց արդէն ուշ երեկոյ էր եւ ինքը առաւօտեան կը շրջի, կը փնտռէ՝ մտածելով որ գոնէ վիրաւորուած գտնայ Արան: Դեռ երկու կողմերէն մեռնողներն ու վիրաւորները չէին վերցուցած եւ յանկարծ կը կանգնի Արայի դիակին առաջ: Օսմիրամը Արային անշնչացած մարմինը վերցնել եւ բերել կու տայ պալատ: Օսմիրամը շատ կու լայ, կ'ողբայ եւ կը հրամայէ բարձր տեղ մը դնել Արայի մարմինը, որպէսզի յարալէզները գան, անոր վերքերը լիզեն ու ողջնցունեն:

Օսմիրամը հրաման կ'ընէ՝ գաղտնի թաղել զայն եւ յետոյ այնպէս կը ձեռացնէ, իբր Արան չէ մեռած, իր մօտն է: Եւ անոր նման մարդու մը ցոյց կու տայ, որպէսզի Նուարդէն վրէժ լուծէ:





2 (2). ՏՐՈՎԱԳԴԱՅԻ ԱՌՈՒՄԸ

Նագոյն քաղաքակրթութեան պատմութեանը դեռ քիչ բան յայտնի է Տրովադայի բուն տեղւոյն մասին, թէ՛ն Հոմերոսը «Իլիականի» մէջ որոշ չափով կը տեղեկացներ, բայց անոր իսկական տեղը չէր յայտնաբերուած, մինչեւ որ գերմանացի հնագետ մը՝ Եկաւ եւ պեղումներ կատարեց: Ան թուրք կառավարութեանէն յատուկ հրաման կ'առնէ եւ կ'որոշէ Հիսարլըք (թուրքերէն կը նշանակէ «պարսպաստ») կոչուած տեղւոյն վրայ պեղումներ կատարել:

Հիսարլըքը կը գտնուի մեր Չանագգալէէն մօտ քառասունհինգ քիլոմէթր հեռաւորութեամբ՝ դէպի Եկեական ծովը, բլուրի մը վրայ՝ ծովէն քիչ մը դէպի ներս: Անոր ստորոտն է, որ գտնուած է Պրիամոսի քաղաքը, Տրովադայի հարթավայրը եւ այնտեղ ալ պեղումներ կատարեց եւ շատ հին իրեր ու ոսկեղէն՝ գտեր: Այդ պեղումներուն ժամանակ ճշգրիտ կերպով հասկցուեր է որ Տրովադան կործանուեր է մեր օրերէն 1190 տարի առաջ:

Հիսարլըքէն մօտաւորապէս վաթսուն քիլոմէթր հեռաւորութեամբ, Էզինէ գաւառէն քսան քիլոմէթր դէպի ծով կան ըլլճաններ՝ հանքային ջուրերու բուժարան եւ հանգստարաններ, Եգեական ծովուն դիմաց, որ շատ գեղեցիկ վայր մըն է:

Այժմ եւ պիտի պատմեմ թէ ինչպէս սկսաւ Տրովադայի պատերազմը եւ ինչ ձեւով կը պատմէին մեր Չանագգալէցիները Պարսիսի եւ Հեղինէի փախուստին, տասը տարի տեւած պատերազմին, Աքիլլէսի եւ Հեկտորի մենամարտին, Ոդիսեւսի խաբուսիկ ձիուն եւ վերջապէս Տրովադայի եւ անոր կործանման մասին: Բայց ամենակարեւորը որ կայ, մեր Չանագգալէցիները այն համոզմունքը ունէին որ իբր թէ Հեկտորը, որ մասնակցեցաւ այդ պատերազմին, ան ինքը հայոց Զարմայր թագաւորն էր, որ իր զինակիցներով եկած էր Հայաստանէն՝ Աքա-

յացիներուն օգնելու, Պրիամոս թագաւորին խնդրանքով: Անոնք զինակիցներ եղած են եւ հայերուն հետ կը դաշնակցեին պատերազմի ժամանակ:

Ուրեմն օր մը արքայացիներու իշխան արքայազն Պարսիսը Յունաստանի թագաւորին հրաւերովը կ'երթայ Յունաստան որպէս թագաւորին եւ Հեղինէ թագուհիին հիւրը: Այնտեղ Պարսիսը արքայավայել կը պատուեն եւ կը հիւրասիրեն:

Հեղինէ թագուհին շատ գեղեցիկ եւ հրապուրիչ կ'ըլլայ, նոյնպէս եւ Պարսիսը: Պարսիսը ըստ արժանւոյն չի գնահատեր այդ հիւրընկալութիւնը եւ ապերախտ գտնուելով կը հրապուրուի Հեղինէ թագուհիի գեղեցկութեամբը: Հեղինէ թագուհին նոյնպէս կը հրապուրուի Պարսիսով եւ երկուքը կը համաձայնին միասին փախչիլ Յունաստանէն: Անոնք կը ժամադրուին եւ զիջերուան կէսին առագաստանաւով մը դուրս կու գան դէպի Տրովադա: Եկեական ծովուն վրայ սաստիկ ալեկոծութեան կը հանդիպին եւ շատ դժուարութիւններ քաշելէն ետքը, յօգնած ու հիւծած կը հասնին Իթաքէ կղզին: Այնտեղէն կ'անցնին Պրիամոսի ամրոցը:

Յոյներուն թագաւորը իմանալուն պէս այս լուրը, սաստիկ կը զայրանայ այդ ապերախտութեան համար եւ հրաման կու տայ անմիջապէս ռազմական ճաւեր պատրաստել եւ երթալ վրէժ լուծել Աքայացիներէն: Ծովախորշը գտնուող Աքայացիներու ռազմաճակատը կը բախուին յունական ճաւերուն հետ: Աքայացիներուն ճաւերը կը խորտակին եւ յոյները կ'իջնան ճաւերէն, կը պաշարեն Տրովադան:

Ամէն օր յոյները իրենց ճաւերէն կ'իջնային եւ կը յարձակէին, իսկ Աքայացիները Տրովադայի անտիկ դարպասներէն դուրս կու գային՝ կոռուելու եւ յետոյ՝ ել:եկոյնեան կոիւր վերջանալէն ետքը, դարձեալ ամրոցէն ներս կը մտնային, դռները կը կղպէին: Կ'ըսէին թէ Տրովադայի ամրոցին պարիսպներուն (Հիսարլըք) պատերը այնքան հաստատուն եղած են, որ ոչ մէկ ձեւով յոյները չեն յաջողած խորտակել այդ պատերը: Ըստ քաջ հերոսներ կը մեռնին այդ կոռուին մէջ, որը տարիներ կը տեւէ, բայց յոյները ոչ մէկ արդիւնքի կը հասնին: Հեղինէն դարձեալ կը մնայ Տրովադայի պարիսպներուն մէջ, Պարսիսի քովը:

Յոյներուն թագաւորը շատ կ'ափսոսայ որ ինքը ժամանակին Աքիլլէսը նեղացուցած է եւ ան չէր մասնակցեր այդ կոռուին, իսկ թագաւորն ալ անպատուութիւն կը համարէր. Աքիլլէսին խնդրելը:

Օրին մէկը դարձեալ պարիսպին դարպասները կը բացուին եւ

կը սկսին կռուիլ: Ահա այդ օրը հայոց Ջարմայր թագաւորը կը մասնակցի կռուին ու դէմ դիմաց կու գայ Աքիլլէսի ամենամօտիկ ընկերօրը՝ հերոս Պատրոկլէսին: Ջարմայրը երկար մեծամարտելէն վերջը կը սպաննէ Պատրոկլէսը: Պատրոկլէսին մարմինը կը տանին Աքիլլէսին մօտ, որպէսզի անոր մէջ վրէժ արթնցնեն եւ ան գայ մասնակցի կռուին:

Աքիլլէսը երբ կը տեսնայ իր ամենասիրելի ընկերօր ահաւաստմանը, կը հարցնէ թէ ո՞վ սպաննեց: Կ'ըսեն՝ Ջարմայրը: Աքիլլէսը սաստիկ կը գայրանայ եւ կ'ըսէ՝ շուտ գէնք ու զրահս տուէք: Կը հագնի, կ'երթայ կռուելու եւ վրէժ լուծելու իր ընկերը սպաննողէն:

Կատողած Աքիլլէսը հրապարակ կու գայ եւ կը հանդիպի Ջարմայրին: Անոնք քանի մը անգամ կը փորձեն խցել իրարու, վերջապէս Ջարմայրը իր երկանի կառքը կը մօտեցնէ Աքիլլէսի երկանիին ու նիզակը կը նետէ ճիշտ անոր կուրծքին: Նիզակը Աքիլլէսին առանց վնաս հասցնելու վար կ'իյնայ: Ջարմայրը այդ տեսնալով կը սուսկայ: Աքիլլէսը իր կարգին կը մօտեցնէ իր երկանիւր եւ նիզակը կը մտցնէ Ջարմայրի կուրծքին, ան վար կ'իյնայ կառքի վրայէն: Աքիլլէսն ալ վար կ'իջնայ իր կառքէն, Ջարմայրը կը կապէ իր կառքին ետեւը ու երեք անգամ կը դարձնէ պարիսպին շուրջը, այդ ձեւով իր վրէժը կը լուծէ: Անոր դիակն ալ կ'առնէ իր հետը կը տանի, որ չմնայ կռուի հրապարակին վրայ:

Այս անպատուութիւնը լսելով՝ Պրիամոս թագաւորը շատ կը վրդովուի եւ որոշ ժամանակի համար զինադադար կը պահանջէ, ինքն ալ անձամբ կ'երթայ Աքիլլէսին մօտ, Ջարմայրի դիակը կը խնդրէ: Աքիլլէսը տեսնալով որ ծերունի թագաւորը մինչեւ իր ոտքը եկած կը խնդրէ, կը մեղմանայ եւ կը յանձնէ Ջարմայրին դիակը, ան կը բերեն, արժանավայել կը թաղեն: Հետեւեալ առաւօտ դարձեալ կոհուր կը սկսի: Քանի մը տարի եւս կը տեւէ այդ կոհուր, դարձեալ շատ քաջեր կը սպաննուին: Յանկարծ թունաւոր նետ մը կու գայ կը մխրճուի Աքիլլէսի աջ ոտքին վարի մասը: Այն մասը, որ մայրը բռնած եւ անմահական ջուրը մտցուցած էր եւ միայն այդ տեղն էր խցելի մնացած: Այնպէս որ, Աքիլլէսն ալ կը մեռնի:

Պատերազմը կը տեւէ տասը տարի եւ յոյները չեն կրնար գրաւել Տրովադայի ամրոցը: Յոյները ստիպուած կը դիմեն խորամանկ միջոցի: Ծովեզերքին խորը անոնք գաղտնի կերպով կը պատրաստեն Ոդիսեւսի ձին՝ տասը մեթր բարձրութեամբ, ոտքերուն տակը անիւներով, եւ մէջը կը պահեն որոշ մարդիկ եւ իբր թէ Աքայացիներուն չեն կրցած յաղթել,

բայց պատերազմը վերջացած համարելով, որպէս Աքայացիներուն փառքի յիշատակ, կը նուիրեն Ոդիսեւսի ձին, իրենք կը նստին նաւերը ու կը հեռանան ծովին խորը:

Յունական նաւերը քաշուելէն ետքը, Աքայացիները կը բանան պարիսպին դռները, կը տեսնան որ ոչ մէկ թշնամի կայ: Կը մօտենան ծովեզերքին, կը տեսնան Ոդիսեւսի փայտէ մեծ ձին, կը կարդան վրայի գրութիւնը. «Որպէս փառքի յիշատակ»: Աքայացիները շատ կ'որախանան եւ շատ մը զինուորներով անիւներու վրայ շինուած փայտէ ձին կը տանին, կը մտցնեն Տրովադայի ամրոցէն ներս եւ հրապարակի վրայ կը տեղաւորեն: Այդ օրը Աքայացիները կերուխումով եւ իրենց յաղթանակով զինովցած՝ զիշերը հանգիստ քուն կը մտնան, պահակներուն յոյսին ձգելով ամրոցը:

Բայց ձիուն մէջի մարդիկը չէին քնացած, անոնք կը սպասէին յարմար առիթի: Արդէն կէս գիշերը անցած էր, անոնք ձիուն գաղտնի դուռը կը բանան, չուանէ սանդուխքը կ'իջեցունեն ու բոլորը վար կ'իջնան ձիէն, ամրոցին դարպասը կը բանան: Արդէն պայմանաւորուած էին, որ ծովին խորը գացած յոյները ետ եկած պիտի ըլլային. բոլորը միասին կը յարձակին ամրոցին քնացած մարդոց վրայ, կը ջարդեն, կը կոտրեն ամէն ինչ, Աքայացիներու թագաւորը եւ անոր որդի Պարիսը կը սպաննեն: Յոյներուն թագաւորը Հեղինէն չսպաննէր, այլ կը ներէ, բայց Աքայացիներուն երկիրը հիմնայատակ կը կործանեն եւ շատ քիչերը կ'ազատին այդ կոտորածէն:

Մեր Չանագալեցիները կը պատմէին, թէ Տրովադայի կործանելէն ետքը ուրիշ թագաւորութիւններ եկած, քաղաքներ են կառուցած, բայց դարձեալ կործանուած են. քանի որ երկրաշարժներ են եղած, որովհետեւ, ինչպէս արդէն ըսի, այդ տեղերը հրաբխային էին եւ շատ տաք, բուծիչ ջուրեր կային:





3 (3). ՀՈՎԻՒՒՄ ԱՂՋԻԿԸ



ամանակով ագարակներու տէր աղա մը եւ կին մը կ'ապրէին գիւղի մը մէջ: Կինը մարդուն աղուոր աղջիկ մը պարգեւելէն վերջ կը մեռնի: Աղան շատ աստուածավախ կ'ըլլայ եւ երկրորդ անգամ չ'ամուսնանար: Մարդը ուխտ կ'ընէ երթալ հաճի ըլլալ, գալ, ետքը իր աղջիկը ամուսնացնել: Կը մտածէ՝ իր ագարակին ոչխարները պահողներ կան, բայց իր աղջիկը որո՞ւ խնամքին պիտի յանձնէ: Իրենց գիւղին միտարը յարգուած, ճանչցուած մարդ մը կ'ըլլայ: Աս հարուստ աղան կ'որոշէ անոր խնամքին ձգել իր աղջիկը, մինչեւ իր վերադառնալը: Աս հարուստ աղան կանչել կու տայ միտարը, կը բացատրէ իր միտքը: Միտարը սիրով կը համաձայնի եւ կը խոստանայ ամէն ինչով հոգ տանիլ իր աղջկան՝ մինչեւ աղային խերով-բարով վերադառնալը: Աղան կը մեկնի: Այդ ժամանակներն ալ Մեքքա կամ Երուսաղէմ գացողները հաճի ըլլալու համար շատ դժուարութիւններու կը հանդիպէին, թէ՛ ճանապարհի փոխադրամիջոցներու, եւ թէ՛ աւազակներու յարձակումներու եւ մանաւանդ յետամնաց ժողովուրդին անմաքրասէր վիճակէն յառաջ եկած համաճարակներէն եւ այդ իսկ պատճառով շատ քիչերը ողջ-առողջ ետ կը դառնային ուխտավայրէն: Թղթակցութիւն չկար, ամիսներ, նոյնիսկ տարի կը տեւէր ետդարձը, մանաւանդ որ աղան ալ տարիքը առած մարդ էր:

Միտարը որոշ ժամանակ ամէն օր կը հանդիպէր աղային աղջկան, կը հարցներ ինչ բանի պետքութիւն ունի: Աղջիկը միշտ զուսպ ու չատրայով կ'ընդունէր միտարը: Այսպէս ամիսներ անցնելէն յետոյ օր մը միտարը աղջիկը կը տեսնայ առանց չատրայի եւ կը զմայի անոր գեղեցկութեամբ ու աստանան կը մտնայ մէջը: Հաշուի առնելով որ շատ ամիսներ են անցած, աղան ալ ծեր է՝ ալ ետ չի գար, միտարը կը մտածէ աղջկան խաբել, որ իբր թէ հայրը մեռած է ճանապարհին: Աղջիկը շատ կուլայ:

Օրին մէկը միտարը նորէն կու գայ աղջկան մօտ եւ կը փորձէ աղջկան մոլորեցունել: Աղջիկը սկիզբը կը դիմադրէ, յետոյ կը տեսնայ որ ճար չկայ՝ կը համաձայնի, որ միասին բաղնիք երթան, մաքրուին:

Կ'երթան բաղնիք, միտարը առանձին սենեակ մը վարձած կ'ըլլայ: Աղջիկը կ'ըսէ.

— Առաջ ես քեզ լողցունեմ, յետոյ՝ դուն ինձի:

Միտարը ոչ մէկ բան կասկածելով, երանութեան մէջ ապրելով՝ աղջկան ամէն ուզածին կը համակերպի: Աղջիկը ոչ լրիւ հանուած, միտարն ալ փեշտիմալը առջեւը կապած՝ կը մտնայ ջուրին տակը: Աղջիկը աղուոր մը միտարին գլուխը կ'օճառէ, իր փեշէն ալ կտոր մը կը պատռէ, ծորակին մէջը կը թխմէ այնպէս, որ ջուրը կը կտրուի, միտարին ալ քանի մը անգամ կ'լոր-կ'լոր կը պտտցնէ եւ հատ մըն ալ կը հրէ, դուռն ալ ուծեղ կը գոցէ, կը փախի բաղնիքէն դուրս, կը վազէ: Կ'երթայ տուն, հագուստները կը փոխէ, տուն-տեղը կը ձգէ, կը փախի գիւղէն դուրս: Կը վազէ, կը վազէ, կը յոգնի: Ալ գիշեր կ'ըլլայ: Խեղճ աղջիկը զազաններէն վախճալով՝ կ'ելլայ ծառի մը վրայ կը նստի, կը սպասէ որ լոյսը բացուի եւ իր ճանապարհը շարունակէ, բայց ո՞ր՝ ինքն ալ չի գիտեր:

Հիմա մենք դառնանք միտարին: Ան աչքերը օճառոտ, գլուխը պտտած, մարմար քարին վրայ ինկած, ծորակը խափանուած, ջուր չկայ, կերպով մը գետիմիմ ջուրերովը աչքերը կը լուայ, ուշքի կու գայ, կը հասկնայ թէ իր գլխուն ինչ խաղ բերած է աղային աղջիկը:

Միտարը բաղնիքէն դուրս կու գայ, կ'երթայ աղջկան տունը, բայց ոչ մէկը կը գտնէ այնտեղ: Կը հասկնայ որ աղջիկը փախած է եւ իր արարքը մէջտեղ չելլալու համար մեծ աղմուկ կը բարձրացնէ գիւղին մէջը, թէ՛ աղային աղջիկը տունէն փախեր է անձանօթ մարդու մը հետ: Ամէն մարդ կը հաւատայ այդ սուտ լուրին:

Ատեն մը ետքը աղան՝ հաճի աղա դարձած ետ կու գայ: Ան երբ կ'իմանայ աղջկան անպատուաբէր արարքը, շատ կը վրդովուի, իսկ միտարը միշտ կու գայ կ'երթայ աղային մօտ, իբր հաւատարիմ ու պարտանձանայ մարդ, եւ օրինակներ կը բերէ ու կը մխիթարէ հայրը:

Հիմա մենք դառնանք աղայի աղջկան ճակատագրին: Աղջիկը ծառին վրայ առանց քնանալու կը սպասէր որ լոյսը բացուեր, որպէսզի շարունակէր իր ճանապարհը: Արդէն ատտու կ'ըլլայ: Այդ սպասումին մէջ յանկարծ շուներու հաշոցի ձայներ կը լսէ: Աղջիկը վախէն ատի կը կծկտի ծառին վրայ: Ծուները աղջկան հոտը առնելով ատի ուծեղ

կը սկսին հաշել եւ կը յարձակին ծառին վրայ: Մէջ մըն ալ քանի մը ձիաորներ կը մօտենան ծառին՝ հասկնալու համար թէ շուները արդեօք ո՞րս մը գտած են: Կը տեսնան աղջիկ մը ծառին վրայ թառած, որ ձայն չի հաներ: Զիաորներուն մէկը, որ արտաքինով միւսներէն աւելի վայելուչ էր, յառաջ կու գայ եւ կը հարցնէ.

— Ո՞վ ես դուն, ի՞նչ ես, թէ՞ ճին:

Աղջիկը վախվխելով կը պատասխանէ որ ինքը ո՛չ ինչ է, ո՛չ ալ ճին, այլ իրեն պէս մարդու զտակ է:

Զիաորը դարձեալ կը հարցնէ.

— Ինչո՞ւ ես նստեր այդ ծառին վրայ, իջի՛ր վար:

Աղջիկը վար կ'իջնայ եւ ձիաորը, որ թագաւորի տղան էր՝ որսորդութեան ելած իր ընկերներուն հետ, երբ կը տեսնայ աղջկան գեղեցկութիւնը եւ համեստութիւնը, կը հասկնայ որ արտակարգ բան մը պատահած է այս աղջկան հետ: Թագաւորի տղան հարց ու փորձ կ'ընէ, բայց աղջիկը վախէն ճիշդը չ'ըսեր:

— Ես որք եմ, — կ'ըսէ, — այս տեղերէն չեմ, ծնողք չունիմ, գլուխս առած կ'երթայի՝ տեղ մը աշխատանք գտնալու, եւ կը սպասէի որ լոյսը բացուէր, ճամբաս շարունակէի:

Թագաւորի տղան թեւ կը կասկածի, բայց շատ կը հաւնի այդ աղջիկը. կ'ըսէ.

— Քանի որ դուն ոչ մէկը չունիս, եկուր ինձ մօտ, քեզ իմ պալատս տանիմ. կ'երեւայ թէ դուն հասարակ աղջիկ չես:

Աղջիկը կը համաձայնի եւ միասին կ'երթան պալատ: Թագաւորի տղան աղջկան շքեղ հագուստներ հագցնել կու տայ, աղջիկը կը դառնայ գեղեցկուհիներուն գեղեցկուհին: Թագաւորի տղան աչքը աղջկան վրայէն այն կողմ չի դարձուներ, այնքան ուժեղ կը սիրահարի, կ'ամուսնանայ անոր հետ:

Կ'անցնի երկու տարի, կ'ունենան երկու զտակ: Թագաւորը այլեւս չի հարցներ իր կնոջ անցեալի մասին, բայց կը զգայ որ ան մեծ վիշտ մը ունի:

Օր մը, երբ անոնք նստած էին, թագաւորին տղան կը նկատէ որ իր կինը միտքերու մէջ խորասուզած է. յանկարծ կինը ախ կը քաշէ:

Ամուսինը կ'անհանգստանայ, կ'ըսէ.

— Դուն մեծ վիշտ մը ունիս, ես գիտեմ, եւ պետք է ինձի ըսես ճշմարտութիւնը:

Վերջապէս տեսնալով որ ալ պահելու պէտք չկայ, կինը կ'ըսէ.

— Ես ամէն ինչը քեզ ճիշդ չեմ ըսած, իրականին մէջ ես հարուստ ազարակատերի մը աղջիկն եմ եւ ամէն ինչը երեսի վրայ ձգած փախած եմ, որովհետեւ հայրս ինձ միմակ ձգեց եւ գնաց ուխտավայր, չվերադարձաւ, ճանապարհին մեռաւ, իսկ ես յուսահատած՝ առանց ծնողքի, ձգեցի տուն, տեղ, ոչխարներ, ազարակ եւ ճամբայ ինկայ, քեզ հանդիպեցայ, իսկ հիմա շատ կարօտցած եմ իմ ծննդավայրիս:

Ու կը սկսի արտասուել:

Ամուսինը կ'ըսէ.

— Այդ այնքան ալ դժուար չէ: Ես քեզ իմ շքախմբով կը դրկեմ, գնա՛, տե՛ս ծննդավայրդ, տեր կեցիր քու հօրդ ժառանգութեան եւ խնամակալ դիր անոնց վրայ ու վերադարձիր:

Միւս անտու աղջիկը ճանապարհ կ'իջնայ՝ իր երկու փոքր երեխաները, դայեակը եւ թիկնապահ մըն ալ առնելով:

Այդ թիկնապահը թագաւորի տղայի շքախմբին մէջը եղած էր որսորդութեան ժամանակ, երբ աղջկան հանդիպեցան ծառին վրայ: Բաւական ճանապարհ երթալէն վերջը, որ արդէն գիշեր չեղած կրնային մտնել աղջկան ծննդավայր գիւղը, թիկնապահը հրաման կու տայ որ վրաններ լարեն՝ գիշերը այնտեղ անցընելու համար: Եւ հրաման կու տայ որ բոլորը ազատ են այդ գիշեր, կրնան հանգիստ քնանալ:

Կէսգիշերէն ետքը, երբ բոլորը խոր քունի մէջ էին, թիկնապահը կը մտնայ կնոջ վրանէն ներս ու մատը շրթունքին դնելով կ'ըսէ.

— Սուս մնա՛ եւ յանձնուէ:

Կինը կ'ընդդիմանայ եւ չի յանձնուիր: Այս անգամ թիկնապահը կը հանէ սուրը պատե՛նէն, երեխաներէն մէկը երկու կտոր կ'ընէ, կը լինուէ մէկ կողմ: Կինը կը սոսկայ, բայց դարձեալ ջանք կ'ընէ որ փախչի: Թիկնապահը չի ձգեր: Միւս երեխան ալ երկու կտոր կ'ընէ, կ'ըսէ.

— Եթէ ձայն հանես՝ քեզ ալ կը սպաննես:

Կինը կը տեսնայ որ ճար չկայ, կը դիմէ խորամանկութեան, կ'ըսէ.

— Թող քու ըսածը ըլլայ, միայն թէ երթամ սա գետին մէջը լոգնամ. ետքը գամ:

Թիկնապահը կ'արտօնէ: Կինը շապիկով կ'երթայ, կը մտնայ գետը, ալ դուրս չի գար: Թիկնապահը կը սպասէ, կը սպասէ, բայց անօգուտ: Կը մտածէ որ գետը երեւի խորունկ էր եւ խեղդուեցաւ:

Կինը բաւական լողալէն ետքը դուրս կու գայ ջուրէն. կ'երթայ

ուղիղ իր հօր ազարակը: Առանց հագուստի՝ միայն շապիկով, երբ հովիւր կը տեսնայ, կը ճանճնայ իր սիրող աղջիկը:

Աղջիկը կ'ըսէ.

— Շուտ քու հագուստդ եւ փափախդ հանէ, ինձի տուր, ա՛ն աս քիսայով ոսկին եւ գնա քու երկիրդ, ետ չգաս, մինչեւ քեզ չկանչենք:

Հովիւր կու տայ իր հագուստը եւ փափախը, կ'առնէ քիսայով ոսկին ու կ'երթայ:

Աղային աղջիկը կը հագնի հովիւին հագուստը. գանգուր մագերը փափախին մէջը կ'առնէ, եափնճին վրան կը նետէ, ձեռքն ալ մահակը կ'առնէ, կը դառնայ իր հօր տան հովիւր: Հայրը, որ ծերացեր էր, չի հասկնար այդ փոփոխութիւնը, իսկ մխտարը միշտ կու գար-կ'երթար իրենց տունը:

Հիմա գանք դէպի վրանը:

Թիկնապահը երբ կը տեսնայ որ այդ կինը խաբէց իրեն կամ խեղդուեցաւ գետին մէջը, կու գայ իր վրանը, հանգիստ մը կը քնանայ:

Ատտուան մօտ դայեակը կ'արթնանայ, կու գայ տիրուհիին եւ երեխաներուն մօտ, կը տեսնայ երեխաները կտոր-կտոր եւ տիրուհին ալ չկայ: Կը սկսի պօտալ, կանչել:

Բոլորը կու գան տեղւոյն վրայ, թիկնապահն ալ կու գայ՝ զարմացած տեսքով կ'ըսէ.

— Այդ կինը արդէն, երբ առաջին անգամ իրեն տեսանք ծառին վրայ էլած էր, վայրի բնագոյներ ունէր, որ իր զաւակներն ալ սպաննէց:

Շատերը կը հաւատան թիկնապահի խօսքին: Բայց դայեակը չի հաւատար, քանի որ ան լաւ գիտէր իր տիրուհիին անուշ բնատրութիւնը, եւ կը մտածէ թէ իր զաւակները սիրող մայր մը չէր կրնար այդ տեսակ բան մը ընել, այնինչ թիկնապահը այդ գիշեր բոլորը ազատ արձակեց, արդեօք ի՞նչ բանի համար:

Վերջապէս շքախումբը ետ կը դառնայ, եւ թիկնապահը իր ուզածին պէս կը պատմէ եղելութիւնը, բայց թագաւորի տղան կը կասկածի:

Քանի մը օր ետքը թագաւորի տղան դարձեալ որսորդութեան պատրաստութիւն ընել կու տայ եւ կը հրամայէ երթալ իր կնոջ յիշատակներուն ուղղութեամբ: Թիկնապահը, իբր ցաւակցելով, կը ջանայ համոզել թագաւորի տղան որ հարկ չկայ երթալու այդ կողմերը եւ թարմացնելու հին վերքը, բայց ան լսել անգամ չ'ուզեր:

Վերջապէս կը հասնին կնոջ գյուղի ազարակին մօտերը: Հովիւ կինը, որ կը յուսար թէ ամուսինը անպատճառ պիտի գար իր հետքերով, երբ կը տեսնայ ամուսինը՝ իր շքախմբով ու թիկնապահն ալ հետը միասին. գտնուկները կը քշէ դէպի անոնց կողմը: Թագաւորին տղան կը հարցնէ հովիւին թէ այդ որո՞ւն ոչխարներն են:

Հովիւր կը պատասխանէ որ գիղի աղայինն են, որ շատ հարուստ է, ան աղջիկ մը ունէր, երբ հայրը ուխտի գնաց ու ետ եկաւ, աղջիկը տունը չգտաւ, հիմա ան անյայտ կորած է: Թագաւորին տղան կ'ուզէ հանդիպիլ աղջկան հօրը հետ: Հովիւր անոնց կ'առաջնորդէ գիղին հարուստ աղային տունը, որովհետեւ կը մտածէ որ երեկոյեան գիղին մըխտարն ալ ներկայ կ'ըլլայ՝ հիւրերը պատուելու համար:

Կը մտնան աղային տունը: Աղան անոնց մեծ սեղանով մը կը պատուէ: Ընթրիքէն ետքը ժամանցի համար ամէն մէկը պատմութիւն մը կը պատմէ: Աղջկան հայրը կը պատմէ իր գլխէն անցած դարձածը, թէ ինչպէս անյայտ կորսուեցաւ իր աղջիկը: Մխտարը եւս հնարովի բան մը կը պատմէ աղջկան կորսուելուն մասին, իսկ թագաւորի տղան ու թիկնապահը արդէն կը հասկնան որ այդ իրենց գտած աղջկան պատմութիւնն է:

Հովիւր, որ սենեակին մէկ անկիւնը նստած կ'ըլլայ, կ'ըսէ.

— Ես ալ պատմութիւն մը գիտեմ, հիմա ձեզի կը պատմեմ:

Աղջիկը կը սկսի պատմել: Նախ՝ իր հօր ուխտի երթալը, որ աղջկան խնամքը հայրը յանձնեց մխտարին, թէ ինչպէս մխտարը հետապնդեց աղջիկը, ան ալ բաղնիքի մէջ օճառոտեց անոր աչքերը եւ ձգեց փախաւ, գիղէն դուրս ծառի մը վրայ էլաւ: Հայրը, մխտարը, թագաւորի տղան ու թիկնապահը կը լսեն ու կը զարմանան. թէ ինչքան իրենց կեանքին նման է: Հովիւր կը շարունակէ իր պատմութիւնը, թէ ինչպէս որսորդական շուները հաջեցին այդ աղջկան վրայ, ետքը եկաւ թագաւորի տղան, հարցուց աղջիկին՝ ի՞նչ է, թէ՞ ճիշդ: Աղջիկը պատասխանեց որ իր նման մարդու զաւակ է: Յետոյ աղջիկը տարին թագաւորին պալատը եւ իրենց հարսը ըրին: Աղջիկը ունեցաւ երկու զաւակ: Ուզեց երթալ, տեսնալ իր հայրը: Ամուսինը շքախումբով, թիկնապահով ու դայեակով եւ իր զաւակներուն հետ ճամբու դրաւ, բայց ճանապարհին թիկնապահը հրամայեց յանձնուիլ, բայց ան հրաժարեցաւ: Թիկնապահը սպաննեց անոր երկու զաւակները: Աղջիկը խաբէց թիկնապահը, գնաց գետը՝ լոգնալու. բայց փախաւ, գնաց իրենց գիղին մօտը հանդի-

պեցաւ իրենց ազարակի հովիւին: Աղջիկը հովիւէն խնդրեց հագուստները, փափախը եւ անոր դրամ տալով դրկեց իր գիւղը: Հովիւ դարձած աղջիկը արածեց ոչխարները: Օր մըն ալ թագաւորի տղան իր շքախումբով ու թիկնապահով եկաւ հանդիպեցաւ հովիւ աղջկան: Ան ալ այդ հիւրերը բերաւ իր աղային տունը:

Այդ ըսելուն պէս հովիւը գլուխէն կը հանէ փափախը, իր գանգուր մագերը կը թափին, կ'ըսէ.

— Հիմա ինձի ճանչցա՞ք արդէն, — ու կը փաթթուի նախ իր հօրը, յետոյ իր ամուսինին, որոնք արդէն հասկցեր էին ամբողջ պատմութեան իմաստը:

Մխտարը եւ թիկնապահը պապանձած կը մնան:

Թագաւորին տղան հրաման կու տայ ձերբակալել մխտարը եւ թիկնապահը: Շաբաթ օրը գիւղի հրապարակին վրայ մխտարը կախաղան հանել կու տայ, իսկ թիկնապահին ձեռքերը շղթայած կը տանի մայրաքաղաքի հրապարակի վրայ, ժողովուրդի աչքին առջեւ կախել կու տայ:



4 (4). ԲՂԲԻՔ ԸՐԷ՝ ԾՈՎԵ ՆԵՏԷ



ՈՐԱՅ չ'ըլլար, թագաւոր մը կ'ըլլայ, կ'ունենայ մէկ արու զաւակ: Ան արդէն քսան տարեկան դարձած էր, երբ հայրը մօտը կը կանչէ, կ'ըսէ.

— Կը տեսնաս, ես արդէն ծերացած եմ, հազիւ քանի մը տարուան կեանք ունիմ, ինձմէ վերջ դուն պիտի տիրանաս գահին, բայց մինչեւ այդ օրը գայ, դուն պիտի կատարես իմ ըսածս: Մենք թագաւորներս կ'ապրինք ու ժողովուրդը կը կառավարենք մեր շատ սահմանափակ գիտելիքներով: Մենք չենք գիտեր թէ մեր երկրէն անդին ուրիշ ժողովուրդներու մէջ ինչ խելացի մարդիկ կան: Դուն վաղուրնէ պէտք է մեկնիս օտար քաղաքներ, որ ինձի պէս անգրագէտ չմնաս: Դուն պէտք է շփուիս, մարդոց հետ ընկերանաս, արհեստ մը սորվիս, ըլլաս բարի ու ազնիւ եւ, ամենակարեւորը, ոչ ոք պէտք է գիտնայ որ դուն թագաւորի որդի ես: Գնա, ապրէ քու վաստակովդ: Աստուած քեզ հետ:

Թագաւորը կ'օրհնէ իր որդին:

Տղան առտուն ճամբայ կ'ելլայ. ճամբորդական տոպրակը կը շալկէ կ'երթայ: Քանի մը ժամ երթալէն ետքը կը հասնի ծովուն եզերքը: Յանկարծ փոթորիկ մը կ'ելլայ ու ծովը կ'ալիէկոծի, ալիք մը աւազի վրայ դուրս կը գետնէ կարմիր գոյնով շատ գեղեցիկ ձկնիկ մը, որ կը տապալակի աւազին վրայ: Արքայորդին կը մօտենայ, ձկնիկը ափին մէջ կ'առնէ ու յանկարծ ձկնիկը լեզու կ'ելլայ, կը սկսի խօսիլ.

— Բարի՛ երիտասարդ, բարիք ըրէ՛ ինձի ծովը գետնէ, երթամ ծընողքիս, ընկերներուս քովը: Քու բարիքդ անպայման կը հատուցուի:

Արքայորդին երբ կը լսէ ձկնիկին մարդկային լեզուով խօսիլը, կ'ըսէ.

— Գնա՛, աղուո՛ր ձկնիկ, խաղա՛ քու ընկերներուդ հետ եւ մի՛ տըխրիր, — կ'ըսէ ու կամացուկ մը ծովը կը գետնէ զանի:

Արքայորդին կը շարունակէ քալել ծովու եզերքէն եւ կը մտածէ այդ տարօրինակ ձկնիկին մասին: Այդ միջոցին ծովուն եզերքը կը տեսնայ նստած ծերուկ մը, որ հաց կ'ուտէ. բարեւ կու տայ, բարեւ կ'առնէ. ծերուկը կ'ըսէ.

— Երիտասարդ, յոգնած կ'ըլլաս, եկուր միասին հաց ուտենք:

Արքայորդին կը մօտենայ ծերուկին, կը նստի անոր քովը, կը հանէ իր պաշարը եւ կը սկսի միասին ուտել: Կը խօսին ասկէ-անկէ, արքայորդին կը պատմէ իր ճամբորդութեան նպատակը:

Ծերուկը կ'ըսէ.

— Ծատ լաւ միտք է աշխարհը պտտիլը, ուրիշ ժողովուրդներէ բան սորվիլը, մանաւանդ արհեստ գիտնալը: Ես ոսկերիչ եմ, եկուր քեզ սորվեցնեմ իմ արհեստս, բայց մէկ պայմանով: Ուր որ երթանք, ինչ որ գտնանք՝ միասին պիտի կիսենք:

Արքայորդին շատ կ'ուրախանայ որ այդպիսի խելօք ու արհեստատր մարդու մը հանդիպեցաւ, բայց անոր չի յայտներ որ ինքը արքայորդի է:

Հացերնին կ'ուտեն, ճանապարհ կ'իյնան դեպի ուրիշ երկիրներ: Քաղաքի մը մէջ իրենց աշխատանոցը կը բանան, կը սկսին աշխատիլ եւ դրամ շահիլ: Արքայորդին արդէն բաւական սորված էր ոսկերիչի արհեստը:

Օրին մէկը արքայորդին գեղեցիկ կնոջ մը կը սիրահարի: Կը խնդրէ վարպետին որ ան երթայ եւ անոր ծնողքէն աղջկան ձեռքը խնդրէ: Վարպետը կ'ըսէ.

— Այդ անկարելի' է: Այդ կինը երկու անգամ ամուսնացած է եւ առաջին մէկ գիշերը երկու փեսաներն ալ մեռած են: Հիմա անոր հետ ոչ ոք չի համարձակիր ամուսնանալ:

Արքայորդին կը զարմանայ թէ իր վարպետը որկէ՞ գիտէ այդ կնոջ կեանքին պատմութիւնը, բայց կը պնդէ որ վարպետը կատարէ իր խնդրանքը: Վարպետը կ'ըսէ.

— Լա՛ւ, ես կ'երթամ եւ քեզի համար կնութեան կ'ուզեմ զինք, միայն մէկ պայմանով, որ ամուսնութեան գիշերը ես ալ պիտի պառկիմ ձեր սենեակին մէջ:

Արքայորդին զարմացած կ'ըսէ.

— Այդ ի՞նչպէս կ'ըլլայ:

Վարպետը կ'ըսէ.

— Չէ՞ որ մենք այդպէս համաձայնած ենք. ինչ որ գտնանք՝ պիտի կիսենք իրարու հետ:

Արքայորդին կը համաձայնի: Վարպետը կ'երթայ այդ կնոջ ծնողաց մօտ եւ կը խնդրէ իրենց աղջկան ձեռքը՝ իր ընկերոջ համար: Ծնողքը չեն մերժեր: Արքայորդին կ'ամուսնանայ: Առաջին գիշերը, ըստ պայմանաւորութեան, վարպետը շուտ մը կ'երթայ հարսու փեսայի սենեակը, կը մտնայ իր անկողնին մէջ, սուտքուն կը մտնայ՝ ձեւացնելով թէ կը քնանայ: Ան իր հետը առած կ'ըլլայ սուր կացին մը, որ փորձանքի պարագային գործածէ:

Կէսգիշերին, երբ հարսու փեսան յոգնած քնացած էին, ծերուկ վարպետը արթուն կը հսկէր իրենց: Մէյ մըն ալ կը տեսնայ որ թունաւոր օձ մը ֆշշալով դուրս եկաւ հարսին բերանէն եւ մօտեցաւ արքայորդին՝ խայթելու: Ծերուկ վարպետը այդ որ կը տեսնայ, անմիջապէս տոպրակի մը մէջ կը մտցնէ օձը եւ առանց հետք մը ձգելու կը տանի դուրս, կացինով կը սպաննէ օձը, կու գայ, կը պառկի իր տեղը:

Առտուն հարսու փեսան շատ լաւ տրամադրութեամբ կ'արթնանան: Արքայորդին կ'ուզէ հարսին հետ իր հայրական տունը երթալ: Ծերուկ վարպետին կ'ուզէ հրաժեշտ տալ, բայց ան կ'ըսէ.

— Երթանք ծովուն եզերքը:

Ասոնք երեքով կ'երթան ծովուն եզերքը: Ծերուկը կ'ըսէ.

— Մենք դեռ հաշիւներ ունինք. հիմա պիտի մեր մէջ կիսենք հարսը:

Արքայորդին կը զարմանայ թէ այդ ինչ տարօրինակ պահանջկոտութիւն է. կը խոստանայ ծերուկին տալ իր հարստութիւնը, միայն թէ ձեռք չտայ հարսին, բայց օգուտ չ'ըներ: Ծերուկը կսփոնջ ձեռքը առած կ'ըսէ.

— Ահա սապէս պիտի կիսենք հարսը:

Այդ միջոցին հարսի բերանէն երկու հատ օձի ձագեր դուրս կու գան: Ծերուկը անմիջապէս կը սպաննէ անոնց, ինչպէս որ անոնց մայրը սպաննած էր գիշերը:

Հարսու փեսան կը զարմանան այս բոլորը տեսնալով: Ծերուկը կ'ըսէ հարսին.

— Երեք տարի առաջ երիտասարդ մը առաջարկութիւն ըրած է քեզի եւ դուն զինք մերժած ես, — հարսը կը յիշէ այդ դէպքը, — ան քեզ կախարդած է ճատը պառաւի մը միջոցով եւ մէջդ օձ մտցուցած: Ես

մասնատր այս գիշեր ձեզ մօտ պատկեցայ եւ սպաննեցի այդ մեծ օձը, որ ասոնց մայրն էր: Հիմա դուն այլեւս մաքրուած ես կախարդանքէն: Իսկ դուն, իմ սիրելի բարեկամս, ժամանակն է որ բաժնուի՞նք: Ես կ'երթամ իմ գործիս, իսկ դուն՝ քու թագաւորական գահը:


Արքայազնը շատ կը զարմանայ թէ ուրկէ պէտք է գիտնայ այս ծերուկ վարպետը իր թագաւորի որդի ըլլալը: Վարպետը կ'ըսէ.

— Ես ան ձկնիկն եմ, որուն դուն բարիք ըրիր, ծովը նետեցիր: Միշտ յիշէ քու կեանքիդ մէջը սա խօսքերը. «Բարիք ըրէ, ծովը նետէ, եթէ մարդը չիմանայ, ձուկը կ'իմանայ»:

Եւ ծերուկը կը կերպարանափոխուի, կը դառնայ այն կարմիր, սիրուն ձկնիկը ու ծովը կը նետուի:



5 (5). ԱՐՎԵՍՏԻՆ ՈՒԺԸ

 ին ժամանակ թագաւորները սովորութիւն ունէին ծայտուած պտտելու իրենց երկրին մէջ՝ հասկնալու համար թէ իրենց ժողովուրդը ինչպէս կ'ապրի:

Երիտասարդ թագաւոր մը իր կառավարիչին հետ ծայտուած կ'երթայ գիւղական վայրեր՝ գիւղացիներուն վիճակը հասկնալու: Ըամբին՝ բլուրի լանջին, կը տեսնան ծեր գիւղացի մը ուր արտը կը հերկէ: Բարեկուտան, կը մօտենան. ծերուկը արօրը կը ձգէ եւ ադ մարդոց տուած հարցերուն կը սկսի պատասխանել: Երկար կը զրուցեն, թագաւորը կ'ըսէ.

— Արդեօք կարելի՞ է ձեր տունը հիր ըլլալ այս գիշեր:

Ծերուկը կ'ըսէ.

— Հիրը Աստուծոնն է, — ու ճամբայ կ'իյնան: Երեքը մէկտեղ կը հասնին բլուրի մը: Թագաւորը կ'ըսէ.

— Հօրեղբա՛յր, եկուր այս բլուրէն վեր ելլալու ժամանակ դուն գիս կոնակդ առ, որ յոգնութիւն չգգամ, իսկ բլուրէն վար իջնալու ժամանակ՝ ես քեզ կոնակս կ'առնեմ:

Գիւղացին կը զարմանայ, կ'ըսէ.

— Տղա՛ս, ես այս տարիքիս քեզ ի՞նչպէս կոնակս առնեմ եւ բլուրը բարձրանամ:

Թագաւորը կ'ըսէ.

— Ես կատակ ըրի, — բայց գիւղացին սրտին կը դնէ:

Կը հասնին գիւղացիին խրճիթը, հիրերը կը նստին գորգով ծածկուած սետիրին վրայ: Ծերուկը կ'երթայ ներս, իր մէկ հատիկ աղջկան կ'ըսէ. «Ծատ զարմանալի հիրեր եկած եմ, անոնցմէ երիտասարդը նոյնիսկ պահանջեց որ բլուրը բարձրանալու ժամանակ ես զինք կոնակս առնեմ, իսկ իջնալու ժամանակ՝ ինքը»:

Աղջիկը, որ խելացի մէկն էր, կը լսէ հօրը. կ'ըսէ.

— Հայրի՛կ, դուն չես հասկցեր այդ երիտասարդ հիրը. ան ըսել

ուզեր է որ բլուրէն վեր ելլելու ժամանակ դուն որպէս մեծահասակ մարդ բան մը պատմես, որ ինքը յոգնութիւն չզգայ, իսկ բլուրէն վար իջնալու ժամանակ ալ՝ ինքը կարճ բան մը կը պատմէ:

Հօր եւ աղջկան խօսակցութիւնը կը լսեն հիւրերը եւ թագաւորը կը զարմանայ թէ գիւղացի աղջիկ մը ի՞նչպէս կրնայ այդքան սուր միտք ունենալ եւ հասկնալ թէ ինք ի՞նչ ըսել կ'ուզէր: Թագաւորը այդ մտքերով տարուած էր, մէյ մըն ալ երեւցաւ աղջիկը, ափսէի մը մէջ երեք թաս թան դրած, ամէն մէկ թասին մէջն ալ՝ քանի մը հատ սաման նետած: Կը բերէ, կը հրամայէ հիւրերուն եւ իր հօրը: Թագաւորը տեսնալով թանին մէջի սամանները՝ կը զարմանայ ու ինքը իրեն կը մտածէ թէ այս աղջիկը իրենց ինչի՞ տեղ դրած է: Եւ կատակելով, ու միեւնոյն ժամանակ հիանալով աղջկան գեղեցկութեամբ, կը հարցնէ.

— Աս սամանները ինչու՞ համար են:

Աղջիկը քիչ մը կարմրելով կը պատասխանէ.

— Դուք ճանապարհէն եկած եք, յոգնած ու քրտնած կ'ըլլաք, նաեւ ծարաւ. պիտի ուզէք պաղ թանը մէկ անգամէն խմել, որը վնաս է քրտնած մարդուն: Ես այս քանի մը հատ սամանը թանին մէջ նետեցի, որ խմելու ժամանակ մէկ անգամէն չխմէք, այլ քանի սամանը մօտենայ ձեր բերանին՝ փշելով կամաց-կամաց խմեցէք:

Թագաւորը շատ կը հաւնի այդ խելօք միտքը, նաեւ աղջկան վայելուչ խօսուածքը:

Աղջիկը կ'երթայ ընթրիք պատրաստելու, բայց կը մտածէ որ ընթրիքը ըլլայ հանելուկային ու տրամաբանական: Կը խաշէ տասներկու հատ հաւկիթ, ամաններուն մէջ կը լեցնէ կաթ, մածուն, սեր, մեղր եւ երկու հատ ալ կլոր ու մեծ գիւղական հաց: Եւ քանի որ էրիկմարդոց հետ կիները սեղան չէին նստիր, թէփսին կու տայ հօրը ձեռքը, որ ան տանի հրամայէ: Հայրը թէփսին տանելու ատեն կը տեսնայ որ տասներկու հատ հաւկիթ կայ մէջը, կը մտածէ. «Երեք հոգի ենք, ամէն մէկուս երեք հատ հաւկիթը բաւական է»: Երեք հաւկիթը կ'առնէ գրպանը կը դնէ: Կը նայի երկու հատ կլոր հաց կայ, կը մտածէ. «Մէկ հացը աւելորդ է»: Մէկ հատ հացն ալ կ'առնէ, կը տանի կը պահէ: Մնացածը կը տանի օտաւ եւ հիւրերուն առաջը կը դնէ:

Թագաւորը ուշադիր կը դիտէ աղջկան պատրաստած ընթրիքը եւ խօսքը ծերուկին ուղղելով կ'ըսէ.

— Հօրեղբա՛յր, այս ի՞նչպէս կ'ըլլայ: Ձեր գիւղին արեւը կ'երեւայ

կլոր է, բայց ձեր լուսինը երբէք չի՞ կլորնար: Իսկ ձեր տարին ալ կարծես, ինը ամիս է, երեք ամիսը պակաս՞ է:

Ծերուկը նորէն կը շփոթի, բան չի հասկնար այդ խօսքերէն: Աղջիկը որ դուրսէն կը լսէր այս խօսակցութիւնը, ընթրիքէն վերջը հօրը կը հարցնէ.

— Ինչու՞ երեք հատ հաւկիթը եւ մէկ հացը ափսէին մէջէն հաներ էիր:

Թագաւորը կը լսէ եւ շատ կը հաւնի այդ աղջկան խելօք ու կ'ըսէ իր ուղեկից կառավարիչին.

— Հիմա մենք յայտնի չենք ըներ մերին ով ըլլալը, բայց երբ պալատ երթանք, խնամախօս կը դրկենք եւ ես կ'ամուսնանամ այս աղջկան հետ:

Կառավարիչը, որ թագաւորէն մեծ էր, ինք ալ հաւանութիւն կու տայ այդ միտքին:

Առտուն հիւրերը կանուխ կ'արթնան, ծերուկին հետ կը նախաճաշեն, հայրը կ'երթայ իր արտը, իսկ թագաւորը եւ կառավարիչը ուղղակի կու գան պալատ:

Երկու օր յետոյ պալատական խնամախօսները մեծ նուէրներով կու գան աղջկան ձեռքը խնդրելու:

Ծերուկ հայրը կառավարիչը պալատական հագուստով տեսնալով կը զարմանայ: Կառավարիչը ծերուկին կը յայտնէ.

— Ինձի հետ եղող այդ երիտասարդը ինքը թագաւորն էր: Ան քու աղջիկդ շատ հաւնած է եւ կ'ուզէ հետը ամուսնանալ, այնպէս որ աղջիկդ թագուհի պիտի ըլլայ:

Ծերուկի լեզուն շփոթութենէն կը կապուի, կ'ըսէ.

— Ադ իմ խելքիս բանը չէ, աղջկաս պէտք է հարցնենք, — ու ներս կը կանչէ աղջիկը:

Աղջիկը ներս կու գայ, կը տեսնայ կառավարիչը եւ ամէն բան կը հասկնայ: Կառավարիչը յարգանքով բարեւելէ վերջ, իր թագաւորին կամքը կը յայտնէ:

Աղջիկը կ'ըսէ.

— Ես շնորհակալ եմ թագաւորին: Ես սիրով կը համաձայնիմ թագուհի դառնալ, բայց մէկ պայմանով՝ եթէ իմ ամուսինս ըլլալիք անձը արհեստ մը գիտնայ:

Կառավարիչը զարմացած կ'ըսէ.

— Թագաւորի ինչո՞ւն պէտք է արհեստը:

Աղջիկը կ'ըսէ.

— Իմ կարծիքովս ամէն մարդ արհեստ մը պէտք է գիտնայ. թէ-պէտ ինքը թագաւոր ըլլայ: Գացէք իրեն ըսէք:

Կառավարիչը եւ իր ուղեկիցները կ'երթան թագաւորին կ'ըսեն աղջկան պայմանը: Թագաւորը չի զարմանար: Եւ կը սկսի վարպետի մը հետ ձեռագործ սորվիլ: Կարճ ժամանակուան մէջ թագաւորը ձեռագործել կը սորվի եւ հաստ մըն ալ իր ստորագրութիւնը դնելով կը դրկէ աղջկան:

Աղջիկը, որպէս համաձայնութեան նշան, իր գործած գորգերէն մէկը կը դրկէ: Հետեւեալ օրը խնամախօսները կու գան եւ մեծ շուքով գիւղացի աղջիկը կը տանին պալատ, հօրը հետ միասին:


Գիւղացի աղջիկը կը դառնայ թագուհի: Կ'անցնին օրեր ու տարիներ խաղաղ ու երջանիկ: Թագաւորը իր ազատ ժամերուն կը զբաղի իր սիրած արհեստով եւ գաղտնի նաշխեր կը ձեռագործէ, որոնց իմաստը միայն ինքը եւ իր կինը՝ թագուհին կը հասկնային:

Կ'անցնին տարիներ: Օր մը թագաւորը իր շքախումբով որսի կ'երթայ: Որսի ժամանակ թագաւորը փախչող վարագի մը ետեւէն հասնելու համար կը հեռանայ իր խումբէն: Անտառին մէջ պահուած աւազակները կը գերեվարեն թագաւորը՝ առանց գիտնալու որ ան թագաւոր է: Աւազակները կը տանին զայն եւ կը բանտարկեն գոց տեղ մը: Թագաւորը ի'նչ կ'ընէ, չի կրնար աւազակներուն մօտէն ազատիլ: Կը խնդրէ անոնցմէ գոնէ իրեն բերել կտոր մը, գունաւոր թելեր եւ ասեղ, որ ինքը զբաղի: Անոնք կը բերեն ուզածները: Թագաւորը կը սկսի կտորի վրայ ձեռագործել իրենց գաղտնի նաշխերը եւ երբ կը վերջացնէ, կու տայ աւազակներու մեծին, կ'ըսէ.

— Աս ձեռագործը տարէք թագաւորին պալատը եւ նուիրեցէք թագուհիին, ան ձեզի շատ ոսկի պիտի տայ:

Աւազակները մարդու մը հետ կը դրկեն այդ ձեռագործը, ուր մանրամասն գրուած էր թէ ինք ու՞ր կը գտնուէր եւ ինչ պայմաններու մէջ:

Թագուհին երբ ձեռքը կ'առնէ այդ ձեռագործը, կը կարդայ միայն իրեն եւ թագաւորին յայտնի գաղտնանաշխերը, կը հասկնայ թէ ամուսինը ուր կը գտնուի: Թագուհին զօրք կը ժողվէ եւ կ'երթայ, կը գտնայ այդ տեղը, ուր աւազակները բանտարկած էին թագաւորը, կ'ազատէ զինք եւ կը բերէ պալատ:



6 (6). ԽԻԿԱՐ ԻՍՍՍՆԻՄԵ



ամանակին թագաւոր մը իր վեզիրին հետ ծպտուած կը շըրջի ժողովուրդին մէջ: Կը տեսնան արտին մէջ հողագործ մը, որ ցորեն կը ցանէ: Ծպտուած թագաւորը վեզիրին հետ կը մօտենայ իրեն, կը բարեւէ եւ կը հարցնէ.

— Աս ցորենը որ կը ցանես, արդէն կերած ես:

Հողագործը կը պատասխանէ.

— Կէսէն աւելին կերած եմ:

Վեզիրը, որ կը լսէր անոնց հարց ու պատասխանը, բան մը չի հասկնար:

Թագաւորը նորէն կը հարցնէ.

— Ի՞նչպէս կ'ապրիս:

Հողագործը կ'ըսէ.

— Վեցը տասներկուք ըրի, նորէն երեսուն երկուքը չկրցայ գոհացնել:

Վեզիրը կը լսէ, բայց նորէն բան մը չի հասկնար անոնց խօսքերէն:

Թագաւորը հողագործին կ'ըսէ.

— Եթէ դազ մը դրկեմ, կրնա՞ս փետտել:

— Ես անոր վարպետն եմ, — կ'ըսէ հողագործը:

Թագաւորն ու վեզիրը հողագործէն հրաժեշտ կ'առնեն, կ'ելլան կ'երթան:

Յաջորդ օրը թագաւորը կը կանչէ իր վեզիրը, կը հարցնէ.

— Երէկ այդ հողագործին հետ ինչ խօսեցանք, կրնա՞ս ինծի բացատրել:

Վեզիրը ձայն չի հաներ:

— Գնա մտածէ, եկուր ինծի ըսէ, — կ'ըսէ թագաւորը:

Վեզիրը կ'երթայ կը մտածէ, կը մտածէ, բան մը չի կրնար հասկնալ: Վերջապէս ճարը հատած կ'երթայ կը գտնայ այդ հողագործը, կ'ըսէ.

— Ինձի կրնա՞ս ըսել երէկուան ձեր հանելուկային գրոյցին առաջին հարց ու պատասխանին իմաստը:

Հողագործը կը հասկնայ որ այդ մարդը մասնատր եկած է իր միտքը իմանալու, կ'ըսէ.

— Քսան ոսկի տուր՝ ըսեմ:

Վեզիրը կը հանէ քսան ոսկի կու տայ:

Հողագործը կ'ըսէ.

— Նախ ըսեմ որ երէկուան ծպտուած մարդը մեր երկրի թագաւորն էր: Ան շատ խելացի մէկն է, բայց դուն՝ ոչ: Եւ քանի որ քսան ոսկի կը վճարես, ես քեզի կ'ըսեմ: Թագաւորը ինձի հարցուց թէ ադ ցորենը որ կը ցանես՝ արդէն կերա՞ծ եմ: Ան կ'ուզէր ըսել թէ ես պիտի օգտուի՞մ այդ ցորենէն, թէ՞ պարտք պիտի տամ: Անոր համար ես ալ ըսի, որ կեսէն ատէլին կերած եմ արդէն, այսինքն՝ պարտք եմ արդէն:

Վեզիրը կը լսէ, կ'երթայ թագաւորին կ'ըսէ առաջին հարց ու պատասխանին իմաստը:

Թագաւորը կը զգայ որ վեզիրը գնաց հողագործէն հասկցաւ, եկաւ իրեն պատասխանեց, կ'ըսէ.

— Աղէկ, հիմա ինձի ըսէ նայիմ՝ երկրորդ հարց ու պատասխանին իմաստը ի՞նչ էր:

Վեզիրը նորէն կը պատասխանէ:

— Գնա մտածէ, եկուր ինձի ըսէ:

Վեզիրը նորէն կ'երթայ հողագործին քովը, կը հարցնէ երկրորդ հարց ու պատասխանին իմաստը:

Հողագործը կ'ըսէ.

— Քսան ոսկի տուր՝ ըսեմ:

Վեզիրը կը հանէ, քսան ոսկի նորէն կու տայ:

Հողագործը կ'ըսէ.

— Թագաւորը ինձի հարցուց. «Ի՞նչպէս կ'ապրիս»: Ես ալ ըսի. «Վեցը տասներկու ըրի, նորէն երեսուներկուքը չկրցայ գոհացնել»: Այսինքն՝ ես թագաւորին ուզեցի հասկցնել որ վեց ամիս արտիս մէջը աշխատելէս զատ, նաեւ վեց ամիս ալ տունիս մէջը ջուլհակութիւն կ'ընեմ, նորէն ալ երեսուներկու ակուան, այսինքն՝ բերանը չեմ կրնար կշտացնել:

Վեզիրը այս հարցին պատասխանն ալ կը լսէ, կ'երթայ թագաւորին կ'ըսէ: Թագաւորը նորէն կը զգայ որ վեզիրը գնաց հողագործին հարցուց, բայց ձայն չի հաներ, կ'ըսէ.

— Հիմա ինձի ըսէ երրորդ հարց ու պատասխանին իմաստը:

Վեզիրը նորէն բերանը ջուր առած կը կենայ:

Թագաւորը կ'ըսէ.

— Գնա մտածէ, եկուր ինձի ըսէ:

Վեզիրը կ'ելլայ նորէն կ'երթայ հողագործին քովը, կը խնդրէ որ երրորդ հարց ու պատասխանին իմաստն ալ ըսէ:

Հողագործը կ'ըսէ.

— Ատ հարց ու պատասխանին իմաստը հասկնալու համար դուն ինձի քառասուն ոսկի պետք է տաս:

Վեզիրը շուտ մը կը հանէ, կու տայ քառասուն ոսկին, քանի որ թագաւորը պատասխանի կը սպասէր:

Հողագործը կ'առնէ քառասուն ոսկին, կ'ըսէ.

— Գնա՛ թագաւորին ըսէ որ իր ըսած դազը դո՛ւն էիր, որ բան մը չհասկցար մեր հարց ու պատասխաններէն եւ եկար իմ քովս այդ բոլորը հասկնալու: Այնպէս որ ադ դազը դո՛ւն էիր, որ քեզ փետտեցի եւ այդքան ոսկիներդ առի:

Վեզիրը զլխիկոր կ'ելլայ կ'երթայ թագաւորին քովը, բայց կ'ամչնայ բերանը բանալու: Թագաւորը կը բարկանայ, կ'ըսէ.

— Է՛, վերջապէս պիտի խօսի՞ս: Ըսէ տեսնանք ի՞նչ հասկցար երրորդ հարց ու պատասխանէն:

Վեզիրը կմկմալով կ'ըսէ.

— Թագաւորն ապրած կենայ, այդ դազը ե՛ս էի, որ ոչ մէկ բան հասկցայ եւ փետտուեցայ, այսինքն՝ սնանկացայ:

Թագաւորը իր տգէտ, անհասկցող վեզիրին աղուոր դաս մը տալէն ետքը կը հանէ իր պաշտօնէն:

Ատեն մը վերջ, այդ նոյն թագաւորին պալատը կու գայ օտար երկրէ սուրհանդակ մը: Ան կու գայ, թագաւորի գահին շուրջը կտր շրջան մը կը գծէ, ձեռքերը ծալած կը սպասէ թագաւորի հրամանին:

Թագաւորը եւ իր խորհրդականները բան մը չեն հասկնար, գարմացած իրարու երես կը նային: Վերջապէս թագաւորին միտքը կու գայ ան խելացի հողագործը: Կը հրամայէ իր ծառաներուն.

— Գացէ՛ք, գտէ՛ք ադ խելացի հողագործը եւ բերէ՛ք պալատ:

Թագաւորին ծառաները կ'երթան կը փնտռեն, կը փնտռեն, կը տեսնան որ մարդ մը նստած է դազկահին առջեւը, կտաւ կը գործէ: Դազկահին ծայրի չուանը կապուած է օրօրոցին, որ դազկահը աշխատցուցած ժամանակը օրօրոցն ալ կը շարժի, մէջի պզտիկն ալ կը քնանայ, միւս կողմէն ալ չուանին ծայրը տանիք հանած, միացուցած է խրտուիլակի մը, որ անընդհատ շարժելով ճնճողուկները կը քշէ, որ չորնալու

համար փոռած կորկոտը չուտեն: Թագաւորի ծառաները կը տեսնան. կը հիանան այդ մարդուն խելքով. կ'ըսեն՝ երեւի աս մարդն է թագաւորին ուզածը: Կ'ըսեն անոր.

— Թագաւորը քեզ պալատ կը կանչէ: Քանի որ օտար երկրէն սուրհանդակ մը եկած է, թագաւորին գահին շուրջը շրջանակ մը գծած է, բայց ասոր իմաստը ոչ ոք հասկցաւ:

Հողագործ մարդը անմիջապէս կը հասկնայ օտար սուրհանդակին գծած շրջանակին իմաստը. խորճիճին մէջը բաներ մը կը լեցնէ, թագաւորին մարդոցը հետ ճամբայ կ'իյնայ:

Կը հասնին թագաւորին պալատը: Ներս կը մտնայ, թագաւորը կը ճանչնայ խելացի հողագործը, ան ալ կը ճանչնայ ան օրուան ծայտուած թագաւորը:

Մարդը կը մօտենայ շրջանակին, խորճիճէն կը հանէ երկու հատ վէգ, կը նետէ շրջանակին մէջը:

Սուրհանդակը գրպանէն ափ մը կորեկ կը հանէ, կը թափէ շրջանակին մէջը:

Մարդը կը հասկնայ անոր միտքը, խորճիճէն կը հանէ վառեակ մը, կը ձգէ որ կորեկները ուտէ:

Սուրհանդակը այդ որ կը տեսնայ, կը ձգէ, թագաւորին պալատէն դուրս կ'ելլայ կ'երթայ:

Թագաւորը եւ անոր խորհրդակալները զարմացած կը հարցնեն թէ ի՞նչ կը ճշանակէր այդ բոլորը:

Մարդը կը բացատրէ.

— Սուրհանդակը շրջանակ գծելով կ'ուզէր ըսել որ ձեր երկիրը պիտի պաշարենք: Ես վէգերը նետեցի, ուզեցի ըսել որ մանուկի մը պէս թող երթայ խաղայ: Ան ափ մը կորեկ նետեց մէջտեղը: Ուզեց հասկցնել որ իրենք շատ զինուոր ունին: Ես ալ վառեակը հանեցի, որ կերաս կորեկի բոլոր հատիկները: Ուզեցի ըսել որ մեր մէկ զինուորը կը սպաննէ ձեր հարիրը: Ան զիս հասկցաւ, պատասխան չգտաւ, ձգեց գնաց, որ երթայ պատմէ իր թագաւորին:


Թագաւորը շատ գոհ կը մնայ, կը հարցնէ հողագործին.

— Ի՞նչ է քու անունդ:

— Իմ անունս Խիկար է:

Թագաւորը կ'ըսէ.

— Ասկէ վերջը թող քեզ կոչեն Խիկար Իմաստուն եւ կը մնաս իմ պալատիս մէջ, կը դառնաս իմ վէգիր-խորհրդակալս:



7 (7). ԹՈՒՆԴ ԶԱՅՎԵՆ ԻՐ ԿՈՒԺԻՆ ԿՆ ՎՆՍՍԷ



որոսին եւ Պողոսին խանութները Պոլսոյ գոց շուկային խոլ անկիւնին մէջն էն՝ իրարու դեմդիմաց: Թորոսը դերձակութիւն կ'ընէր, Պողոսն ալ՝ կօշկակարութիւն: Ասոնք երկուքն ալ իրարու հետ շատ սիրով ընկերներ էին, երեւի անոր համար որ երկուքն ալ կուզ ունէին: Ատտուն երկուքն ալ միեւնոյն ժամուն կը բանային իրենց խանութները, սրճարանէն սուրճ կ'ապսպրէին, միասին կը խմէին, ետքը կը սկսէին աշխատիլ: Իրիկունն ալ միասին կը գոցէին իրենց խանութները: Երբեմն խանութները գոցելէն ետքը իրարու տուն կ'երթային, քանի մը գաւաթ անմահական ջուր, այսինքն օղի կոնծելու: Առհասարակ Չանագալեցիներու, Պոլսեցիներու եւ ուրիշ շատ թրքահայերու մօտ հինէն մնացած սովորութիւն մը կայ: Իրիկունը խանութները գոցուելէն ետքը Էրիկմարդիկ իրարու հետ կը համաձայնէին, մեյխանէ կ'երթային կոնծելու, ընկեր, բարեկամ, ծանօթի հետ հանդիպելու, միեւնոյն ատեն անծանօթի մը հետ ընկերակցելով, անոր հետ ծանօթանալով, իրենց համար յաճախորդ կը շահէին: Ոմանք ալ խանութը գոցելէն ետքը, քանի որ այն ժամանակ ելեկտրականութիւն չկար եւ արեւը մայր մտնելուն պէս խանութները կը գոցուէին, անմիջապէս տուն կու գային ու, նախքան ընթրիքը քիչ մը մէզելէնմիշ կ'ըլլային: Տան տիկինը, քանի մը տեսակ աղանդեր պնակներու մէջ զետեղած, թէփսին կը բերէր ամուսինին քովը, որը կէճելիքը հագած, նստած կ'ըլլար սէտիրիքին վրայ, պատուհանին առջեւ, որ ծանօթ մը, բարեկամ մը անցնելուն պէս տեսնայ ու ներս կանչէ, որ ան ալ միանայ իրեն, թէ ոչ՝ միմակ խմելը համ չէր ունենար: Ատոր համար ալ, որպէսզի տան տիկինը ամուսինին հաճոյք պատճառէ, յաճախ ինք ալ քանի մը գաւաթ կը խմէր անոր հետ. անշուշտ մեր գաւաթները պըզտիկ էին եւ հագի քսան կրամ կը լեցուէին. դեռ քիչ մըն ալ պակաս տեղ կը ձգէին, որ վրան ջուր լեցունէին եւ օղին ճերմկնար, կաթի գոյն ըլլար, քանի որ օղին քաշելու ժամանակ անոր մէջը կ'աւելցունէին անիսոն եւ յունական մաստիքա-ճամօն: Եր-

բեմն ալ մօտիկ դրացիները ճաշը կ'առնէին, կու գային՝ միասին ուտել-խամելու եւ հաճելի ժամանակ անցընելու: Միասին քարթ կը խաղային, պատմութիւններ կը պատմէին, քանի որ այդ ժամանակ ո՛չ բատիօ կար, ո՛չ հեռատեսիլ, ո՛չ ալ շարժանկար, եւ մարդիկ չէին կրնար կանուխէն քնանալ, ասոր համար ալ միջոցներ կը ստեղծէին ժամանակը հաճելի անցունելու համար:

Ընդ այդ ձեւին տակ ալ իրիկուն մը խանութին գոցելէն ետքը Թորոսը Պօղոսը կը տանի իր տունը՝ միասին օդի խմելու: Բաւական խմելէն ետքը, երբ արդէն գլուխին աղոտոր մը տաքցած էր, կ'որոշէն ատտուն, լուսաբացէն առաջ՝ ժամը ճիշդ երեքին, միասին բաղնիք երթալ: Թորոսը պիտի գար, Պօղոսին պիտի հանդիպէր ու միասին պիտի բաղնիք երթային: Թորոսը մէջ ալ բաղնիքներ կային, որ ցերեկները կիներուն համար էին, արեւնամուտէն մինչեւ արեւածագ ալ՝ էրիկմարդոց համար:

Թորոսը գիշերը կանուխ կը քնանայ, ժամը երեքին կու գայ Պօղոսի տունին պատուհանը կը զարնէ, ձայն կու տայ որ ան ալ դուրս գայ, միասին երթան բաղնիք: Պօղոսը կ'արթննայ ու կ'ըսէ Թորոսին որ ան կամաց-կամաց երթայ, ինքը դեռ չէ հագած, կը պատրաստուի, իր ետեւէն կը հասնի: Թորոսը «լաւ» կ'ըսէ, կամաց-կամաց կ'երթայ դէպի բաղնիք:

Թորոսը ձայն տալէն յետոյ Պօղոսը փոխանակ հագուելու, քունը կը տանի, կը պառկի, նորէն կը քնանայ: Թորոսը կը հասնի բաղնիք, կը նայի՝ դեռ ոչ ոք կայ, բացի բաղնեպանէն: Կը հանուի, կը մտնայ լոգնալու, թէն քիչ մը վախ կու գայ մէջը, քանի որ հին ժամանակ մարդիկ կը վախճային բաղնիքին մէջ միմակ մնալէն, կը կարծէին թէ պարսպ բաղնիքին մէջ փերիներ կ'ըլլան:

Մէյ մըն ալ յանկարծ Թորոսի ականջին բաղնիքի գմբէթածեւ առաստաղէն երգ ու պարի ձայներ կու գան: Թորոսը լոգնալը կը ձգէ ու վախճալով ականջ կը դնէ ձայնին: Կը նայի, բաղնիքին մէջը իրմէ զատ ուրիշ մարդ չկայ: Լամբի լոյսն ալ հագի շուրջը կը լուսաւորէ: Վախը կը մտնայ Թորոսին սիրտը: Ան միտքին մէջը կ'ըսէ՝ «Կայ չկայ, ասոնք փերիներ են, ինձի միմակ գտան եւ հոգիս հետ կ'ուզեն խաղալ»: Թորոսը ականջ կու տայ եւ կը համոզուի որ ձայները գմբէթին վրայէն կու գան: Խումբ մը փերիներ պար բռնելով գմբէթին վրայ կը սկսին պարել ու երգել:

«— Հինգշաբթի է, Հինգշաբթի,

Այսօր օրը՝ Չորեքշաբթի»:

Եւ շարունակ կը կրկնեն նոյն ձեւով: Թորոսը կը հասկնայ որ աղ

փերիները կ'ուզեն իրեն մոլորեցունել: Քանի որ այդ օրը ոչ թէ Չորեքշաբթի էր, այլ Հինգշաբթի, բայց եթէ ինքը հակատակի, անոնք կրնան իրեն չարիք ընել: Թորոսը խելացի կը գտնուի եւ անոնց չի հակատակիր, այլ բաղնիքին օճառը եւ թասը մէկ կողմ կը նետէ, ձեռքերը վեր կը բարձրացնէ ու կը սկսի փերիներուն հետ համակերպած պարել ու երգել:

«— Հինգշաբթի է, Հինգշաբթի,

Այսօր օրը՝ Չորեքշաբթի»:

Փերիներուն մեծը կը տեսնայ որ այս մարդը իրենց չհակատակեցաւ, կը հրամայէ իր ենթակայ փերիներուն երթալ այդ մարդուն կոնակին կուզը վերցնել եւ դնել գմբէթին վրայ: Փերիները այդպէս ալ կ'ընեն: Թորոսը այդ գործողութիւնը անշուշտ չի տեսնար, բայց կը զգայ որ կոնակէն բան մը անհետացաւ:

Օրը ամառ էր, ժամն ալ արդէն ատտունն հինգին մօտ: Լոյսը սկսած էր բացուիլ եւ փերիները կ'անհետանան, ու քանի մը մարդիկ ալ կու գային լոգնալու, բայց Պօղոսը չկար ու չկար:

Թորոսը կը տեսնայ որ քանի մը հոգի մտան բաղնիք լոգնալու, հոգի կ'առնէ, մանաւանդ կոնակին կուզն ալ չկայ արդէն: Կը հագնի, դրամը կը վճարէ, բաղնիքէն դուրս կ'ելլայ, կ'երթայ ուղիղ Պօղոսին տունը: Մէյ մըն ալ ի՞նչ տեսնայ: Պօղոսը դեռ քնացած է անկողնին մէջը: Կ'արթնցնէ, կը հարցնէ չգալուն պատճառը: Ան ալ կ'ըսէ որ քիչ մը քնանալ ուզեր է, բայց քունը տարեր է, երեւի գիշերուան խմած օդին վրան ազդած էր: Կ'ըսէ ու կը տեսնայ որ Թորոսին կոնակին կուզը չկայ: Զարմացած կը հարցնէ՝ իր աչքի՞ն կ'երեւայ թէ՞ երեւուան օդին ազդեցութիւնն է:

Թորոսը ամէն ինչը կը պատմէ, թէ ինչպէս բաղնիքին մէջը մարդ չկար, ինքը փերիներուն հանդիպեցաւ ու անոնց հետ համաձայնած երգեց ու պարեց, մէյ մըն ալ զգաց որ կոնակին կուզը չկայ:

— Անշուշտ փերիները հանեցին, — կ'ըսէ, — եթէ դուն ալ եկած ըլլայիր, քու կուզը ալ հիմա անհետացած պիտի ըլլար, բայց երեւի թէ երկուքս միասին ըլլայինք, այդ բանը չէր ըլլար, քանի որ փերիները մեկ մարդէն աւելի մարդ եթէ ըլլայ, չեն երեւար, — կ'ըսէ Թորոս:

— Ուրեմն այս գիշեր ալ ես երթամ կուզս անշուշտացնեմ, — կ'ըսէ Պօղոսը:

Պօղոսը այդ գիշեր գրեթէ չի քնանար, որ յանկարծ նորէն քունը չտանի: Կ'ուզէ ժամ առաջ ազատիլ այդ անիծեալ կուզէն: Եւ ինչպէս որ Թորոսը բացատրած էր, որ նոյն ձեւով ալ ինքը կ'երթայ կանուխէն, որ իրմէ զատ ուրիշ մէկը չըլլայ բաղնիքին մէջը:

Պօղոսը կը հանուի, կը մտնայ ներս: Իրապէս ոչ ոք չ'ըլլար հոն:

Կը սկսի լուսացուիլ, բայց միշտ սկանջները սրած կը սպասէ փերիներուն երգ ու պարին, անշուշտ վախը աչքը սունելով, միայն թէ կոնակի կուզէն ազատի: Վերջապէս այդ միեւնոյն ժամուն փերիները նորէն կու գան, կը սկսին պարել ու երգել գմբէթին վրայ, բայց այս անգամ օրը կը փոխեն եւ կ'երգեն.

«— *Երկուշաբթի է, Երկուշաբթի,
Այսօր օրը՝ Հինգշաբթի»:*

Մինչդեռ այդ օրը Ծաբաթ կ'ըլլայ: Պօղոսը մտիկ կ'ընէ, բայց կը նայի որ սխալ կ'ըսեն, կ'ուզէ ճշդել: Անոնք քանի կ'ըսեն՝

«— *Երկուշաբթի է, Երկուշաբթի,
Այսօր օրը՝ Հինգշաբթի»,-*

Պօղոսը անոնց սխալը ճշդելով կը սկսի հակառակը պնդել ու երգել.

«— *Այսօր Ուրբաթ է, Ուրբաթ,
Ատտուն պիտի ըլլայ Ծաբաթ»:*

Փերիներուն մեծը սաստիկ կը բարկանայ ու կը հրամայէ.

— Տարէ՛ք, սա գմբէթին կուզը դրէք աս մարդուն կոնակը:

Փերիները Պօղոսին կոնակը կը հանեն Թորոսին կուզն ալ եւ կ'ըլլայ կրկնակի կուզ: Խեղճը կ'ելլայ բաղնիքէն, կ'երթայ իր տունը՝ անիծելով իր օրը:

Պօղոսը սաստիկ նեղուած իր գլխուն եկած փորձանքէն՝ ադ օրը տունէն դուրս չ'ելլեր եւ խանութը բանալու չ'երթար: Թորոսը կ'անհանգստանայ Պօղոսին չերեւալուն համար եւ այդ օրը կանուխէն կը գոցէ իր խանութը, կ'երթայ Պօղոսին տունը: Մէջ մըն ալ ի՞նչ տեսնայ. Պօղոսը անկիւն մը կծկտած նստած է: Թորոսը կը հարցնէ.

— Ի՞նչ եղաւ քեզի, ի՞նչու չեկար խանութդ բանալու, չգացի՞ր բաղնիք, հիւսնո՞ւ ես, ի՞նչ է:

Պօղոսը բարկացած, որ Թորոսին կուզն ալ դրին իր վրան, ոտքի կ'ելլայ, կ'ըսէ.

— Տե՛ս, քու կուզդ ալ դրին կոնակս այդ անպիտանները:

— Չերգեցի՞ր իրենց հետ:

— Երգեցի՞, բայց տեսայ որ սխալ կ'երգեն, ուզեցի շտկել իրենց սխալը, ըսի՛ այսօր օրը Ծաբաթ է, իսկ անոնք Երկուշաբթի կ'ըսէին:

Թորոսը կ'ըսէ.

— Է՛, ես ի՞նչ յանցանք ունիմ: Ես քեզի չպատմեցի՞ որ ես անոնց հետ համաձայնեցայ, չհակառակեցայ, թէ եւ գիտէի որ սխալ կ'երգէին, իսկ դուն ինչո՞ւ ուզեցիր շտկել իրենց սխալը. չէ՞ որ ճիշդ խօսքը միշտ չէ որ կ'անցնի: Դուն չգիտե՞ս ան առածին իմաստը, որ կ'ըսէ. «Թունդ քացախը իր կուծին կը վնասէ»:



8 (8). ՊՉՏԻՎ ԱՂԲԱՐԸ



արդուն մէկը երեք հատ տղայ կ'ունենայ: Մեծ տղային հինգ ժամ հեռու գեղ մը կը դրկէ, որ փարա վաստկի: Տղան կ'երթայ գեղը հարուստ մարդու մը ըստ կու գայ, կ'ըսէ.

— Աղա՛, ինձի չըրախ կ'առնե՞ս մը:

Ան ալ կ'ըսէ.

— Հա՛, քեզ չըրախ կ'առնեմ, լաքին ով որ սրդողի նէ, անոր կոնակէն մէկ չարուխցու փենչա մը պըտի հանուի: Մէջտեղերնիս շարթ պըտը դնենք: Ասոնք իրարու շարթի կու գան: Էրթէսի օրը առտուն աղան կ'ըսէ.

— Էսօր օչխարները արածելու տար, ես կէսօրին քեզի կերակուր կը պերեմ:

Տղան օչխարները լեռը կը տանի արածելու: Մինչեւ կէսօր տղան կը սպասէ կերակուրի, շատ կ'անօթենայ: Ետքը աղան կը բերէ չըխըն մը՝ մէջը կտոր մը հաց, կտոր մը պանիր, լաքին հետն ալ շուն մը կը բերէ:

Աղան ատ չըխընը տղային կը նետէ, կ'ըսէ.

— Ա՛ն, կե՛ր, զըխընվամը չէղիր:

Նետածին պէս շունը կը խլէ, կ'ուտէ հաց պանիրը:

Տղան կը բարկանայ:

Աղան կ'ըսէ.

— Նեղացա՞ր:

Տղան կ'ըսէ.

— Հէլպէ՛թ նեղացայ:

— Է՛հ, — կ'ըսէ աղան, — ան առեմը Էկուր քու կոնակէդ չարուխի փենչացու մը առնեմ:

Տղան կը մեղցունէ:

Երկրորդ տղան կը սպասէ աղբօրը: Ան ամիսներով ետ չի գար:

Ան ալ կ'ելլայ կ'երթայ գեղը՝ դրամ վաստկելու: Նորէն աս մարդուն րաստ կու գայ: Տղան կ'ըսէ.

— Աղա՛, ինծի չըրախ կ'առնե՞ս մը:

— Հա՛, — կ'ըսէ աղան, — քեզ չըրախ կ'առնեմ, լաքին ով որ սրդողի մէ, անոր կոնակէն մէկ չարուխի փեմչացու մը պըտը հանենք, մէջտեղերնիս շարթ պըտը դնենք:

Ասոնք ալ իրար դարարի կու գան: Էրթեսի օրը առտուն աղան կ'ըսէ.

— Էսօր օչխարները արածելու տար, ես կէսօրին քեզի կերակուր կը պերեմ:

Տղան օչխարները լեղը կը տանի արածելու: Մինչեւ կէսօր տղան կը սպասէ կերակուրի, շատ կ'անօթեմայ: Ետքը աղան կը բերէ չըխընին մէջ կտոր մը հաց, կտոր մը պանիր, լաքին հետն ալ շուն մը կը բերէ: Աղան աս չըխընը տղային կը նետէ, կ'ըսէ.

— Ա՛ն, կե՛ր, զըխըմլամըջ էղիր:

Նետածին պէս շունը կը խլէ, կ'ուտէ: Տղան կը բարկանայ:

Աղան կ'ըսէ.

— Տղա՛յ, չէ մէ նեղացա՞ր:

— Հէլպէթ տէ նեղացայ - կ'ըսէ տղան:

— Է՛հ, ան ատենը եկուր քու կոնակէն չարուխի փեմչացու մը առնեմ, — կ'ըսէ, աս տղան ալ կը մեղցունէ:

Երրորդ աղբարը երբ կը լսէ որ ասինչ գեղին ասինչ մարդը իր երկու աղբարները մեղցուցած է, օճը առնելու կ'երթայ: Աս մարդը կը գտնայ կ'ըսէ.

— Աղա՛, ես քեզի չըրախ պըտը ըլլամ:

Մարդը կ'ըսէ.

— Աղէ՛կ, լաքին մէջտեղերնիս շարթ մը ընենք, քի ով տարըմըջ ըլլայ մէ՛ կոնակէն չարուխու մը պըտը առնենք:

Տղան դարարի կու գայ: Էրթեսի օրը առտուն աղան կ'ըսէ.

— Էսօր օչխարները արծելու տար, ես կէսօրին քեզի կերակուր կը պերեմ:

Տղան մինչեւ կէսօր կը սպասէ, հաց բերող չ'ըլլար, օչխարին մէկը կը գեմէ, քեպաս կէմէ կ'ուտէ: Կէս ժամ ետքը աղան հացը կը բերէ, հետը շունը մէկտեղ: Հացը նետածին պէս շունը կը խլէ, կ'ուտէ: Տղան բան մը չ'ըսեր: Մարդը կը նայի տղուն՝ կըսէ.

— Չէ մէ տարըմըջ էղար:

Տղան կ'ըսէ.

— Չէ՛. ես զաթը կուշտ եմ: Հացը ուշացաւ մէ. ես ալ օչխարին մէկը գեմեցի. քեպաս ըրի կերայ:

Մարդը աս տեղը կը նեղուի: Տղան կ'ըսէ.

— Աղա՛, չէ մէ տարըմըջ էղար:

— Չէ՛. օղո՛ւմ, — կ'ըսէ աղան: Լաքին կը հասկնայ քի աս տղան իրեն գլօխին պէլա էկած է:

Էրթեսի օրը կ'ըսէ տղուն.

— Այսօր կովերը արծելու տար:

Նորէն կէսօրին կերակուրէն ետէջ կովին մէկը կը գեմէ, քեպաս կ'էմէ կ'ուտէ: Աղէն հացը կը բերէ, նորէն կը նետէ տղուն: Նորէն շունը կ'ուտէ:

Տղան կ'ըսէ.

— Ես զաթը կուշտ եմ, աղա՛:

— Ի՞նչ կերար, - կ'ըսէ աղան:

— Հացը ուշացաւ, ես ալ անըթցայ, կովը գեմեցի կերայ:

Մարդը ի՞նչ թող ըմէ, շատ կը նեղուի, ամմա ինչ ֆայտա: Պէլան գլօխը փաթթուած է: Տղան կ'ըսէ.

— Աղա՛, մի՛ նեղանար, վաղը ես օչխարները ընտենքի պըտը արծեմ, քի անոնց խաղալէն պըտը պերեմ:

Էրթեսի օրը իրիկուան դէմ, օչխարները տուն բերելու ատեն ամէն մէկուն առջեւի սաղ օտքերը կը կտրէ, գեղ կը բերէ, կը վազէ աղային տունը, կ'ըսէ.

— Աղա՛, տե՛ս օչխարները խաղալէն կու գան:

Աղան կը նայի քի օչխարները իրա խաղալէն կու գան, լաքին օտքերուն ամէն մէկը կտրուած է: Տղային կ'ըսէ.

— Աս ի՞նչ ըրեր ես:

Տղան կ'ըսէ.

- Աղա՛, եօխաս տարըմըջ էղար:

Աղան կ'ըսէ.

— Չէ՛, — ամմա շատ կը սրդողի:

Իրիկունը տունը կերակուր կերած ատեննին պուլուզը «շեռ ունիմ» կ'ըսէ: Աղան կը բարկանայ: Չրախին կ'ըսէ.

— Տղա՛յ, պուլուզը տար, չաթլամըջ էրա՛, բե՛ր:

Տղան պուլուզը դուրսը կը տանի: Ան աստած-չաստած՝ խոշոր քար մը կ'առնէ, պուլուզին գլօխին ձգածին պէս, պուլուզը կը մեռնի: Տղան

կու գայ, կը նստի, կերակուրը կ'ուտէ: Աղան կը տեսնայ քի պուլուզը չեկա, կ'ըսէ.

— Տղա՛յ, ու՞ր մնաց պուլուզը:

— Աղա՛, — կ'ըսէ, — ես քարը առի, չաթլամը՞ ըրի:

Մարդը շատ տարըմը՞ կ'ըլլայ, տիշիւմի՞ կ'ըլլայ քի աս տղային ձեռքէն խըլասի: Իրիկունը կնկանը կ'ըսէ.

— Վաղը Կիրակի է, քիչ մը կերակուր հազըրլամը՞ էրա, ջուրին գլօխը էրթանք, քէֆ մը ընենք:

Էրթէսի օրը կանուխուսան, տղան ալ հետերնին, կ'երթան ջուրի մը գլօխը: Հո՞՞ն կ'ուտեն կը խմեն, իրկուն կ'ըլլայ: Մարդը կնկանը կ'ըսէ.

— Կնի՛կ, տղուն եաթախը հաւուզին քովը փոէ քի գիշերը տղան պըտը հաւուզը ձգենք:

Նասըլ քի կէսգիշերին տղան, կնիկը քնացած ատենը, իր եաթախը կը բերէ կնիկին տեղը կը դնէ, կնիկին եաթախը կը տանի իրեն տեղը՝ կը մտնայ, կը պառկի:

Կէս գիշերին մարդը կնկանը կ'ըսէ.

— Կնի՛կ, տղան բոնէ ջուրը ձգենք:

Լաքին կնկան տեղը տղան պառկած է, տղան բոնածը կիպի, կընկանը կը ձգէ հաւուզը: Առտուն մարդը կը տեսնայ քի տղան մէջտեղը կայ, կնիկը չի կայ, տղուն կ'ըսէ.

— Ո՞ւր է կնիկը:

— Աղա՛, — կ'ըսէ տղան, — գիշերը դուն ըսիր քի բոնէ ջուրը ձգէ: Ես ալ բոնեցի ձգեցի:

Մարդը կը բարկանայ:

Տղան կ'ըսէ.

— Աղա՛, եօխաս տարըմը՞՞ էղար մը:

— Հա՛, — կ'ըսէ:

— Էօյլէ իսէ էկուր կոնակէդ չարուխի փենչացու մը հանեն, — կ'ըսէ տղան, աղան կը մեղցնէ, երկու աղբարներուն ինթիքամը կ'առնէ:



9 (9). ԱՃԵԱՐՉ ՏԵՍԱԾ ՏՂԱԸ

Ա ըլլայ չ'ըլար, աղքատ կին մը կ'ըլլայ: Ատ կինը կ'ուսնենայ տղայ մը: Օրին մէկը աս աղքատ կինը կ'երթայ կը նստի թագաւորի դուռին առջեւը դրուած քարին վրայ: Ատ քարին վրայ նստողը կը նշանակէ որ ինք եկած է թագաւորին աղջիկը ուզելու: Թագաւորին ծառաները կու գան կը վնասեն, կինը չ'ելլար քարին վրայէն:

Ծառաները կու գան թագաւորին կը յայտնեն:

Թագաւորը կ'ըսէ.

— Ատ աղքատ կինը նե՛րս կանչեցէք, թող գայ քովս:

Կինը կը բերեն ներս: Թագաւորը կ'ըսէ.

— Տղադ բե՛ր քովս:

Կինը կ'երթայ, տղան կը դրկէ թագաւորին քովը:

Տղան կու գայ կը ներկայանայ թագաւորին. ոտքերը չամուռնի մէջը, միսիր մը ձեռքը, մէկ կողմէն կ'ուտէ, մէկ կողմէն կը խօսի թագաւորին հետ:

Թագաւորը կ'ըսէ.

— Քեզի կու տամ ձի մը եւ ահագին ոսկի, կ'երթաս Չամաշըրճի Ծամերը կը տեսնաս, կը հասկնաս գլխուն ի՞նչ եկած է, կու գաս ինծի կը պատմես:

Տղան ճամբայ կ'ելլայ: Կ'երթայ կ'երթայ, կը գտնայ Չամաշըրճի Ծամերին, կ'ըսէ.

— Կ'ուզեմ գիտնալ գլխուդ եկածը:

Չամաշըրճի Ծամերը կ'ըսէ.

— Ֆլան երկիրը կ'երթաս, Քէօն Ապտալին գլուխը ի՛նչ եկած է կ'իմանաս. կու գաս, ինծի կը պատմես, ան ատենը ես քեզի կը պատմեմ իմ գլխուս եկածը:

Տղան կ'երթայ, կը գտնայ Քէօն Ապտալը, կ'ըսէ.

— Կ'ուզեմ գիտնալ գլխուդ եկածը:

Քէօն Ապտալը կըսէ.

— Կ'երթաս ֆլան երկիրը, ֆլան մարդուն, անկէ կ'իմանաս ի՞նչ է իր գլխէն անցած, կու գաս ինծի կը պատմես, ան ատենը ես քեզի կը պատմեմ իմ գլխու եկածը:

Տղան կ'երթայ, կը գտնայ ատ մարդը:

Ատ մարդը կ'ըսէ.

— Ես զինուոր գացի: Հոն շա՛տ երկար մնացի: Վերջապէս քսան տարիներ ետքը եկայ տուն: Գիշեր էր, չուզեցի կնոջս քունը խանգարել, ելայ տանիքը քնանալու: Տանիքէն տեսայ երիտասարդ մը կնոջս հետ պտկած քնացած է: Ես ալ տանիքէն վար իջայ, երկուքին ալ վիզը կտրեցի: Մէյ մըն ալ արիւններուն մէջէն ձայն մը լսեցի. «Մայր ու որդի էինք, ի՞նչպէս մեզ մորթեցիր»: Ան ժամանակ ես գլուխս զարկի քարերուն, պատերուն, ջախջախումս ինքզինքս հիւանդանոցը գտայ: Հագի վերքերս կ'աղէկնան, ոտքի կ'ելլամ, աշխատանքի կ'երթամ, գերեզմանատուն կ'երթամ, նորէն կը լսեմ ատ ձայնը. «Մայր ու որդի էինք, ի՞նչպէս մեզ մորթեցիր»: Նորէն գլուխս քարերուն, պատերուն կը զարնեմ, նորէն արիւնլուայ զիս հիւանդանոց կը բերեն: Աս ձեռով՝ վաստակածս բարձիս տակէն կուտեմ: Այնպէս որ մարդ պէտք է կարելոր որոշում մը հանելէ առաջ աղէ՛կ մը մտածէ:

Տղան կը լսէ, տխուր տրտում ճամբայ կ'ելլայ: Կու գայ Քէօն Ապտալին քովը: Կը պատմէ մարդուն պատմածը, Քէօն Ապտալը կը լսէ, կը սկսի իր գլխուն եկածը պատմել.

— Ես յայտնի աւագակ մըն էի, անցնող դարձող կարաւանները կը սօթտէի: Օր մը կարաւան մը եկաւ, ես սկսայ եղած չեղածը թալմել: Ետքը, երբ արդէն ոչ մէկ բան չէր մնացած, տեսայ որ կարաւանապետին վիզէն պզտիկ շիշէ մը կայ կախումս, հարցուցի.

— Աս ի՞նչ է:

Կարաւանապետը ըսաւ.

— Աս աչքի դեղ է: Եթէ աչքիդ կաթեցունես, կը սկսիս ատի աղէկ տեսնալ:

Ես ուրախացայ, ատ շիշէն ալ քաշեցի ատի կարաւանապետի վիզէն, բացի, աչքերուս կաթեցուցի: Նոյն վայրկեանին աչքերս կուրցան:

Ատ իմ պատիժս էր: Ատկէ ետքը ես իմ գողցած ոսկիներս կը դնեմ ափիս մէջ, կը կայնիմ փողոցը, կ'ըսեմ անցնող դարձողին. «Աստուած սիրողը թող աս ոսկին իմ ձեռքէս առնէ՛. երեսիս շամատ մը զարնէ՛»: Օրս աս տեսակ կ'անցընեմ: Իրիկունն ալ կ'երթամ ժայռի մը քարանձախն մէջը կը քնանամ: Աս է իմ հիմակուան կեանքս: Այնպէս որ մարդ ուրիշին չարութիւն պէտք չէ ընէ, քանի որ Աստուծմէն պատիժը կը գտնա՛յ:

Տղան Քէօն Ապտալին պատմածն ալ կը լսէ, տխուր տրտում ճամբայ կ'ելլայ: Կ'երթայ կ'երթայ, կը հասնի Չամաշըրճի Ծամերին քովը: Կը պատմէ լսածները:

Չամաշըրճի Ծամերն ալ կը սկսի պատմել իր գլխուն եկածը.

— Ես լուացք կ'ընէի, աղուոր դրամ կը վաստկէի, կ'ապրէի: Օր մը պարտէզը պտտած ատենս երեք հատ հոտի-փերի աղջիկներ տեսայ: Անոնք երեք քոյր էին: Ամենափոքրին սիրահարեցայ եւ առաջարկեցի կինս դառնալ: Քոյրերը համաձայնեցան, բայց երեք պայման դրին: Առաջինը՝ օդին չպիտի խառնուէի: Երկրորդը՝ իրենց սուփրային չպիտի խառնուէի: Երրորդ պայմանը՝ իրենց հագածին չպիտի խառնուէի: Ես ատ երեք պայմանները ընդունեցի եւ պզտիկ քոյրին հետ ամուսնացայ: Մենք շատ ուրախ էինք եւ երջանիկ: Կարծես թէ դրախտի մէջ կ'ապրէինք: Աստուած մեզի տուաւ երկու զաւակ, մենք այլեւս ոչ մէկ հոգ ունէինք:

Օր մը պարտէզը կը պտտէինք, քոյրերուն հագուստներն այնքան երկար էին որ գետինը հողին քսուելով աղտոտուեցան:

Ես ըսի.

— Ինչո՞ւ ադքա՛ն երկար հագած էք, փէշերը գետինը կը քսուին:

— Ծամե՛ր, մէկ պայմանը կորսնցուցիր, — ըսին քոյրերը:

Անցաւ ժամանակ մը: Օր մը ճաշի սեղանին հացը այնքան մանր էին կտրած որ ես ըսի.

— Ինչո՞ւ հացը ադքան մանր կտրած էք:

— Ծամե՛ր, երկրորդ պայմանն ալ կորսնցուցիր, — ըսին քոյրերը:

Անցաւ ժամանակ մը եւս: Օր մը տեսայ երկինքը ամպոտ է, ըսի.

— Այսօր երկինքը ամպոտ է, անձրեւ պիտի գայ:

Ադ ըսելուս պէս՝ ես ինքզինքս գտայ իմ նախկին լուացքի տաշտակին առջեւ: Կինս, մեր երկու զաւակներուն հետ, անհետացաւ: Ատ օրուրնէ ես շապիկ մը անգամ չեմ կրնար լուալ: Կը մտածեմ՝ ինչո՞ւ իմ


տուած խոստումներս չպահեցի, ինչո՞ւ երեք պայմանն ալ կորսնցուցի:

Տղան կը լսէ Չամաշըրճի Ծամերին պատմածն ալ:

Ատքան բան լսեր էր, ատքան բան տեսեր, ատքան երկիրներ պտտեր, շատ բան տեսեր էր ու լսեր, որ իսկական թագաւորին արժանի փեսայ էր դարձեր: Տղան այլեւս առաջուանը չէր:

Թագաւորը կը տեսնայ որ սա տղան առաջուան միսիր կրծող տղան չէ, այլ աշխարհ տեսնելով շա՛տ բան սորված է: Թագաւորը իր աղջիկը կու տայ անոր կնութեան: Տղուն պատաւ մայրն ալ կը բերեն պալատ, որ իրենց հետ ապրի:

Անոնք կը հասնին իրենց մուրատին, դուք ալ հասնիք ձեր մուրատին:



ԻՕ (ԻՕ). ՄԱՐԴՈՒՄԵ ԽԵՍՄԵԹԸ



արդուն մէկը միշտ կը բողոքէ, կ'ըսէ.

— Գործս առաջ չ'երթար, տեսնաս ինչէ՞ն է:

Իրեն խորհուրդ կու տան.

— Գնա Խըսմէթ Պապիկին քովը, ան քեզի կ'ըսէ ինչէն է:

Մարդը ճամբայ կ'ելլայ: Ծամբուն գայլ մը դէմը կ'ելլայ: Գայլը

կ'ըսէ.

— Ո՞ւր կ'երթաս:

— Խըսմէթ Պապիկին կ'երթամ:

— Ամա՛ն, ի՞նչ կ'ըլլայ, ինձի համար ալ հարցուր:

— Կ'ըսեմ, — կ'ըսէ մարդը, — ճամբան կը շարունակէ:

Կ'երթայ կ'երթայ, քաղաքի մը քովէն կ'անցնի: Կը տեսնայ մարդիկ հաւաքուեր են: Կը հարցնէ.

— Ինչո՞ւ էք հաւաքուած:

— Մենք մզկիթ մը շինել կ'ուզենք, ամմա ինչքան որ կը շինենք, նորէն ան կը փլի: Երանի Խըսմէթ Պապիկին հարցնես ի՞նչն է պատճառը:

Մարդը ճամբան կը շարունակէ: Ծամբան կը հանդիպի երկու եղբայրներու, որոնք արտի մէջ կ'աշխատէին: Անոնք մարդուն կը հարցնեն.

— Ո՞ւր կ'երթաս:

— Խըսմէթ Պապիկին քովը կ'երթամ:

— Ամա՛ն, ի՞նչ կ'ըլլայ, — կ'ըսեն եղբայրները, — Խըսմէթ Պապիկին հարցուր՝ ինչո՞ւ մենք կը տանջուի՞նք, բայց մեր արտը բերք չի տար:

Մարդը ճամբան կը շարունակէ: Կ'երթայ կ'երթայ, ջուրին գլուխը ձերուկ պապիկ մը նստած կ'ըլլայ: Մարդը միտքէն կ'ըսէ՝ երեւի ա՛ս է Խըսմէթ Պապիկը: Մարդը իր բոլոր հոգերը կ'ըսէ Պապիկին:

Պապիկը ամեն մէկուն իր պատասխանը կու տայ: Մարդը ետ կ'երթայ, իր եկած ճամբով:

Առաջ կը հանդիպի երկու եղբայրներուն, կ'ըսէ.

— Խըսմէ՞ք Պապիկը ըսաւ. «Ձեր արտը հերկեցէք, հողին մէջը պտուկ մը ոսկի կայ, ան կը խանգարէ որ արտը բերք տայ»:

Եղբայրները կ'ուրախանան, կ'ըսեն մարդուն.

— Էկու՛ր մեզի հետ՝ փորեմք արտին հողը, ոսկին հանենք, իրարու հետ վայելենք:

Մարդը կ'ըսէ.

— Չէ՛, ես ժամանակ չունիմ, պիտի երթամ, մզկիթը շինող մարդիկը պիտի տեսնամ:

Մարդը կ'երթայ, կը հանդիպի ատ երկրի հաւաքուած մարդկանց: Կ'երթայ ատ երկրի թագաւորին քովը, կ'ըսէ.

— Խըսմէ՞ք Պապիկը ըսաւ. «Ձեր շինած մզկիթը միշտ պիտի փլի, որովհետեւ նախ դուն քու ինքնութիւնդ պիտի պարզես: Ապա պիտի ամուսնացնես քու աղջիկդ: Միայն ատ ժամանակ մզկիթը չի քանդուիր»:

Թագաւորը կ'ուրախանայ, կ'ըսէ.

— Է՛, ան ատենը եկուր իմ աղջիկս քեզի տամ՝ ամուսնացիր հետը:

Մարդը կ'ըսէ.

— Չէ՛, ես ժամանակ չունիմ, պիտի երթամ դեռ գայլը պիտի տեսնամ, անոր ալ ըսեմ Խըսմէ՞ք Պապիկին ըսածը:


Մարդը կը շարունակէ, կ'երթայ իր ճամբան: Կ'երթայ կ'երթայ, կը հանդիպի գայլին:

Գայլը կը հարցնէ.

— Է՛, ի՞նչ ըսաւ Խըսմէ՞ք Պապիկը:

— Խըսմէ՞ք Պապիկը ըսաւ, որ գայլը եթէ ախմախ մարդ մը դէմը ելլայ, անոր խելքը թող ուտէ:

— Է՛, — կ'ըսէ գայլը, — քեզմէ աղէկ ախմախ մարդ չի կայ, — կը յարձակի մարդուն վրայ եւ կը բզկտէ գայն:



II (II). ՂՍՏՈՒՎՍ ՎՈՒ ՏՄՅ



Ուլայ չ'ըլլար, երեք աղբար: Ասոնք կ'երթան օտար աշխարհ՝ դրամ վաստկելու: Օր մը ասոնք երբ նստած կը խօսին, քովերգին կու գայ կը նստի ծպտուած թագաւորը, ականջ կը դնէ ասոնց ըսածներուն:

Տղոցմէ մէկը կ'ըսէ.

— Եթէ թագաւորը իր աղջիկը ինծի տար, շա՛տ աղէկ կ'ըլլար:

Միջնակ աղբարը կ'ըսէ.

— Եթէ թագաւորին խազինան մտնայի, ուզածիս չափ ոսկի առնէի, շա՛տ աղէկ կ'ըլլար:

Պզտիկ տղան կ'ըսէ.

— Ինծի ալ Աստուած թող տայ:

Թագաւորը անտեղէն կ'ելլայ կ'երթայ իր պալատը: Կը կանչէ ատ երեք տղաքը: Առաջին տղուն կը հարցնէ.

— Դուն հոն նստած ատենդ ի՞նչ ըսիր:

Տղան կ'ըսէ.

— Ես ըսի՛ եթէ թագաւորը իր աղջիկը ինծի տայ, շա՛տ աղէկ կ'ըլլայ:

Թագաւորը կը հարցնէ միւսին: Ան ալ կ'ըսէ.

— Ես ըսի՛ եթէ թագաւորի խազինան մտնայի ուզածիս չափ ոսկի

առնէի, շա՛տ աղէկ կ'ըլլար:

Թագաւորը պզտիկ տղուն ալ կը հարցնէ: Ան կ'ըսէ.

— Ես ալ ըսի՛ ինծի ալ Աստուած թող տայ:

Թագաւորը կը լսէ երեք տղոց ըսածները: Մէկուն կու տայ իր աղջիկը:

Միւսին կ'ըսէ.

— Գնա՛, մտի՛ր իմ խազինան, ինչքա՛ն ոսկի կուգես՝ ա՛ն:

Պզտիկ տղուն երեսին շամստ մը կը զարնէ:

Տղաքը երեքը մէկ ճամբայ կ'ելլան՝ մէկը թագաւորին աղջիկը առած, միւսը՝ թագաւորին ոսկիները շալկած, երրորդն ալ՝ պարսպ ձեռքերը շարժելն:

Թագաւորը կը հրամայէ իր ծառաներուն.

— Գացէ՛ք, պարապ գացող տղուն գլուխը կտրեցէ՛ք:
Ծամբան երթալու ատեն, ոսկիները շալկած տղան կը յոգնի, պարապ գացողին կ'ըսէ.

— Ա՛ն աւ ծանրութիւնը, քիչ մը դուն շալկէ. եւ յոգնեցայ:
Պարապ գացող տղան կը շալկէ անոր ոսկիները:
Թագաւորին ծառաները կու գան, կը տեսնան պարապ գացող տղան,
անոր գլուխը կը կտրեն: Ոսկիները կը մնան պզտիկ տղուն քովը:
Կը մնան երկու տղայ:
Ծատ կ'երթան քիչ կ'երթան, կը հանդիպին գետի մը: Թագաւորին
աղջիկը առնող տղան կ'ըսէ պզտիկ աղբօրը.

— Բո՛նէ՛ աւ աղջկան ձեռքը, եւ երթամ մայիմ ճամբայ կա՞յ: Տղան
կ'երթայ, կ'իյնայ գետը, կը խեղդուի:

Ոսկիները եւ աղջիկը կը մնան պզտիկ տղուն:
Տղան կ'երթայ հեռու տեղ մը, մեծ խան մը կը բանայ, եկող գացող-
ներուն պէլէշ կը կերցնէ, կը խմցնէ, կը պառկեցնէ, ճամբու կը դնէ:
Օր մը թագաւորը ծպտուած կու գայ ատ խանը: Կու գայ, կ'ուտէ կը
խմէ, կը պառկի, կը հարցնէ.

— Որքան դրամ պիտի տամ:

Տղան կ'ըսէ.

— Եւ դրամ չեմ առներ. իմ խանս պէլէշ է:

— Ի՛նչո՞ւ համար պէլէշ է, — կ'ըսէ թագաւորը:

Տղան կ'ըսէ.

— Ի՛նձի Աստուած կու տայ, — ու կը սկսի պատմել. — մենք երեք
աղբար էինք: Թագաւորը կանչեց մեզի: Մէկուս տուաւ իր ուզած աղջիկը,
միւսիս տուաւ իր խազիմային ոսկիները, ինձի ալ ասպտակ մը տուաւ, քանի
որ ըսի՝ «Աստուած կու տայ ինձի»: Ծամբայ ինկանք: Ան ոսկիները շալկողը
յոգնեցաւ ինձի տուաւ, որ բռնեմ: Ատ միջոցին թագաւորին հրամանին հա-
մաձայն՝ իր ծառաները եկան պարապ գացողին գլուխը կտրեցին: Ոսկինե-
րը մնացին իմ ձեռքս: Քիչ մըն ալ գացիք: Թագաւորին աղջիկը առնողը
ըսաւ. «Երթամ ճամբայ գտնամ, բռնէ ասոր ձեռքը»: Ան գնաց, գետը ինկաւ
խեղդուեցաւ, աղջիկը մնաց ինձի: Եւ ալ ոսկիները եւ աղջիկը առի, եկայ
աստեղը, աւ խանը բացի եկող գացողին պէլէշ կը կերցնեմ կը խմցնեմ,
կը պառկեցնեմ, ճամբու կը դնեմ:

Թագաւորը կը մտածէ, կ'ըսէ.

— Ուրեմն Աստուած տուեր է աս տղուն:

Թագաւորը կը բերէ տաւուլ զուռնան, եօթ օր, եօթ գիշեր իր աղջի-
կին հարսնիքը կ'ընէ ատ տղուն հետ:



12 (12). ՕՍԿ ԿՐՐԵ



ազաւորին մէկը օր մը ծովեզերքը պտոյտի կ'ելլայ, կը մայի
որ մարդ մը օլթան ծովը նետեր է, ձուկ պիտի բռնէ:
Թագաւորը մարդուն կը հարցնէ.

— Ի՞նչ կ'ընես:

Մարդը կ'ըսէ.

— Ձուկ պիտի բռնեմ:

Թագաւորը մարդուն կ'ըսէ.

— Ի՞նչ որ բռնես, անոր ծանրութիւնովը քեզի ոսկի պիտի տամ:

Մարդը օլթան վեր կը վերցնէ, կը մայի որ մարդու գլխու աչքին
պզտիկ ոսկորն է բռնածը:

Թագաւորը կ'ըսէ.

— Ի՞նչ ընենք. բախտդ ա՛ւ էր: Աո աւ ոսկորը, հիմա պալատ պի-
տի երթանք, պիտի կշռենք, անոր ծանրութիւնովը ոսկի պիտի տամ քե-
զի:

Մարդուն հետ պալատ կ'երթան: Կը մտնան խազիներ:

Թագաւորը կը հրամայէ իր ծառաներուն.

— Աս ոսկորին չափովը ոսկի կշռեցէ՛ք, տուէ՛ք աս մարդուն:

Ծառաները կը կշռեն, ոսկիները կը լեցունեն կշռանքին մէջը՝
կշիռը չի շարժիր: Պտիկ ոսկորը քիչ էր, ամմա կշիռը տեղէն չի շար-
ժիր:

Ետքը գիտուն մը կը բերեն, թագաւորը կը հարցնէ.

— Աս ի՞նչ բան է:

Գիտունը կ'ըսէ.

— Թագաւորը ասպրած կենայ, ասիկա ծակաչք մարդուն ոսկորն
է. անոր ինչքա՛ն ալ ոսկի տաս՝ աչքը չի՛ կշտանար:



13 (13). ԱՄԵՆԻՆ ԱՆՈՒԹԸ ԵՒ ԱՄԵՆԻՆ ԿՕՈՒՆ



ագաւոր մը իր ծառային կ'ըսէ.

— Գնա՛, ամենէն անուշ բանը բեր:

Ծառան կ'երթայ կովի լեզու մը կը բերէ:

Թագաւորը կ'ըսէ.

— Ա՞ս է ամենէն անուշ բանը:

Ծառան կ'ըսէ.

— Այո՛, թագաւորն ապրա՛ծ կենայ:

Թագաւորը զարմացած կ'ըսէ ծառային.

— Հիմա գնա՛, ամենէն կծու բանը բեր:

Ծառան կ'երթայ անրէն լեզու կը բերէ:

Թագաւորը կը զարմանայ, կ'ըսէ.

— Նորէ՞ն լեզու:

Ծառան կ'ըսէ.

— Այո՛, թագաւորն ապրա՛ծ կենայ: Ամենէն անուշ եւ ամենէն կծու խօսքերը մարդու լեզուն է որ կրնայ ըսել:



14 (14). ԽՍԻՉՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ



ագաւոր մը հրաման կ'ընէ եւ խմիչքը կ'արգիլէ: Քանի մը օր ետքն ալ ծպտուած կը պտտի քաղաքին մէջ, կը տեսնայ՝ բոլորը խմիչք կը խմեն, կը հրամայէ.

— Կտրէ՛լ բոլորին գլուխները:

Վէզիրը կը մտածէ. «Եթէ կատարեմ թագաւորին հրամանը՝ գուցէ երկրին մէջը մարդ չմնայ»: Կ'ելլայ կերթայ թագաւորին քովը, կ'ըսէ.

— Թագաւորն ապրած կենայ, եթէ քու հրամանդ կատարենք, երեւի քու երկրիդ մէջը ողջ մարդ չի մնար:

— Ինչու՞, — կ'ըսէ թագաւորը:

— Որովհետեւ, — կ'ըսէ վէզիրը, — խմիչքին զօրութիւնը ուրի՛շ բան է:

— Ի՞նչպիսի բան է, — կ'ըսէ թագաւորը:

— Կ'ուզե՞ս քեզի ցուցնես, — կ'ըսէ վէզիրը:

Յաջորդ օրը պալատ կը կանչէ կոյր մը, անդամալոյծ մը եւ աղքատ մը: Աղուոր սեղան մըն ալ կը շտկէ, վրան ամէն տեսակ ուտելիք եւ խմիչք կը դնէ: Թագաւորին ալ գաղտնի տեղ մը կը պահէ, որ տեսնայ եւ լսէ:

Կոյրը, անդամալոյծը եւ աղքատը կը սկսին ուտել խմել: Երբ գլուխնին կը տաքնայ, կոյրը կ'ըսէ.

— Ալ ըռէնկ, մոռ ըռէնկ, աս չխմողը՝ ֆրէնկ օղլու, ֆրէնկ:

Անդամալոյծը կոյրին կ'ըսէ.

— Կոյր աչքիդ մէջը ք...նես, ի՞նչպէս ալ տեսար՝ ալ գոյնը, մոռ գոյնը: Ոտքի ելլամ նէ՛ քեզի կը փարտես:

Միւս կողմէն աղքատը կ'ըսէ.

— Փարատէ՛, ինչքան կրնաս փարատէ՛, կտորը չձգե՛ս. ամբողջ հարստութիւնս քեզի կու տամ:

— Թագաւորն ապրած կենայ, — կ'ըսէ վէզիրը, — հիմա տեսա՞ր խմիչքին զօրութիւնը՝ ամէն մարդ իր երեւակայած աշխարհը կ'իյնայ:



15 (15). «ՍՍՂԵՊՈՒԼԵ ԿԸ ՕՂԽԵՍ»

Օր մը, երբ մոտջը ինկած էր, խմած մարդ մը մէլխանէէն դուրս կ'ելլայ, օրօրուելով, պատերուն զարնուելով կը սկսի պօռալ.
— Ստանպուլը կը ծախե՛մ...

Սուլթանը վէզիրին հետ ծպտուած կը պտտէր, կը լսեն եւ կը հետեւին ադ մարդուն, մինչեւ տունը մտնալը:

Սուլթանը վէզիրին կ'ըսէ.

— Վաղը առ մարդը պալատ կը բերես:

Յաջորդ օրը վէզիրը կ'երթայ առ մարդուն տունը, անոր կ'ըսէ.

— Սուլթանը քեզ պալատ կը կանչէ:

Մարդը, որուն գինովութիւնը արդէն անցած էր, կը հասկնայ որ երեկուան իր անշնորհք վարքին համար է որ Սուլթանը զինք կը կանչէ, գրպանին մէջ մէկ շիշ օղի կը դնէ, կ'ելլայ վէզիրին հետ կ'երթայ Սուլթանին պալատը:

Սուլթանը մարդը կը տեսնայ, կը ճանչնայ զանի, կը հարցնէ.

— Դո՞ւն ես Ստանպուլը ծախողը...

Մարդը գրպանէն կը հանէ օղիին շիշը, կը դնէ Սուլթանին առջեւը, կ'ըսէ.

— Ո՛չ, Սուլթա՛նս, ես չէի. ծախողն ալ ա՛ս է, առնողն ալ ա՛ս է:

Ասոր մարիֆէթը ա՛տ է, ես մեղք չունիմ:



16 (16). ԵՐԶՂՆԻԿ ՄԱՐԴԸ

Օր մը թագաւորը իր վէզիրին կ'ըսէ.
— Գնա՛, իմ երկիրը պտտէ, երջանիկ մարդ փնտռէ, որ տէրտ չունենայ: Անոր շապիկը ա՛ն, բե՛ր ես հագնիմ, որ ե՛ս ալ երջանիկ ըլլամ:

Վէզիրը կ'ելլայ կ'երթայ, տունէ տուն, քաղաքէ քաղաք կը փնտռէ, երջանիկ մարդ չի գտնար: Ամէն մէկն ալ տէրտ մը կ'ունենայ:

Մէյ մըն ալ դաշտի մը մէջ կը տեսնայ հողագործ մարդ մը արօրով հողը կը հերկէ: Ամառուան տաքին անոր քրտինքները կաթիլ կաթիլ ճակատէն վար կը վազեն: Վէզիրը կը հարցնէ հողագործին.

— Դուն երջանի՞կ ես:

Մարդն ալ կ'ըսէ.

— Փա՛րք Աստուծոյ, երջանիկ եմ, քանի որ ողջ եմ, առողջ եմ, կ'աշխատիմ, ընտանիք ունիմ, զաւակներ ունիմ...

Վէզիրը կ'ուրախանայ որ վերջապէս երջանիկ մարդ մը գտաւ եւ անոր շապիկը պիտի տանի թագաւորին, կը հարցնէ հողագործին.

— Գիտե՞ս որ թագաւորը ինծի յանձնարարած է երջանիկ մարդու մը շապիկը տանիլ իրեն, որ ինքը հագնի՝ ինք ալ երջանիկ ըլլայ:

Հողագործը կ'ըսէ.

— Է՛, դուն չե՞ս տեսնար որ ես վրաս շապիկ չունիմ:



ՄԻԱՆՊԱԿԱՆ ՁՐՈՅՑՆԵՐ

I (17). ԳԸՆՎԼԵ ԿՂՁԻՆ

Յոյները Կիլիկիա խուժելով՝ գերի տարած էին Լեոն Ա իշխանն ու իր երկու մտերիմները՝ Ռուբէնն ու Թորոսը։ Լեոնն ու Ռուբէն վախճանած էին Պոլսոյ իշխանաց կղզիներէն մէկուն, մեծ հաւանականութեամբ, Փրոթի (այժմ՝ Գընալը) կղզիին վրայ՝ օտարութեան մէջ։

Թորոս կրցած էր խոյս տալ յոյներու ձեռքէն եւ ետ դառնալ Կիլիկիա՝ վերահաստատելու համար իր հայրենի իշխանութիւնը։

XIX դարու պոլսահայ պատմավիպագիր Ծերենց գեղեցկօրէն կը նկարագրէ թէ ինչպէս Թորոս ուրախութեամբ, բազում խնդրութեամբ ու անհամբերութեամբ կը ճամբորդէ Պոլսէն դեպի Կիլիկիոյ Սեւ լեռները։



2 (18). ՊՈՒՐԿԱԶ ԿՂՁԻՆ Ս. ՅՈՎՀԱԼՆԻՍ ԵԿԵՂԵՍԻՆ

Իշխանաց կղզիներէն մէկը Պուրկազ կը կոչուի։ Հոն Ս. Յովհաննէս յունական եկեղեցին կայ, որուն յոյները Այա Նիկոլա կ'ըսեն։

Կը պատմեն թէ Հոռմի Օգոստոս կայսեր եւ Հրէաստանի Հերովդէս թագաւորին ապրած օրերուն Ջաքարիա անունով քահանայ մը կար, որուն կնոջ անունը Եղիսաբէթ էր։ Անոնք երկուքն ալ բարեպաշտ էին, բայց զաւակ չունէին, քանի որ արդէն ծեր էին։

Օր մը Աստուծոյ հրեշտակը կը ներկայանայ Ջաքարիային եւ կը յայտնէ որ իրենք զաւակ մը պիտի ունենան եւ անունը Յովհաննէս պիտի դնեն։ Ան Տիրոջ առաջնորդը պիտի ըլլայ։

Ջաքարիա չի հաւատար եւ կը պապանձի, մինչեւ որ իր կինը՝ Եղիսաբէթ կը ծնի Յովհաննէսը։

Ան ալ Աստուծոյ սիրելին կը դառնայ, Յորդանան գետին մէջ կը մկրտէ Քրիստոսը եւ Յովհաննէս Մկրտիչ անունը կ'առնէ։

Ահա առ Ս. Յովհաննէսին նուիրուած է Պուրկազի եկեղեցին։






3 (19). ՄԵՐ ԿՂՁԻՒ Ա. ԳԵՌՈԳ ՈՒՔՏԱՍՏԵՂԻՆ

Մեծ կղզիի Ա. Գեորգ վանքին (գոր յոյները Այս Եօրկի կ'անուանեն) ծառերով զարդարուած ճամբայէն ժողովորդը ոտաբոսիկ կ'ելլէ դէպի վեր՝ մէկ կողմէն ալ ճերմակ ժապաւեններ կապելով ծառերուն վրայ, որպէս ուխտ:

Կը պատմեն թէ օրին մէկը ժողովորդը կ'ուզէ շինել այս ճամբան, բայց ցերեկը կը շինեն եղեր, գիշերը Ա. Գեորգը կու գայ կ'արե եղեր: Չ'ուզեր եղեր որ ճամբան շինուի, այլ ժողովորդը դժուարութիւնով գայ դէպի իր ուխտատեղին: Հոս նաեւ խելեր եւ այլ հիւանդութիւններ բուժող լուսադիւր՝ այագմա մըն ալ կայ վանքին տակը:

Անոր համար է որ աւ զառ ի վեր, երկար ճամբան ձիու կառքերով հիմա կ'ելլենք, իսկ ժողովորդը, հաւատքով զօրացած, կը շարունակէ քալելով ելլել եւ ծառերու ճիւղերուն ճերմակ ժապաւեններ կապկպել, որպէս աղաչանք Աստուծոյ:



4 (20). ՀԵՅՊԻԼԻ ԿՂՁԻՒՆ ՅՈՅՍԻ ՎԱՆՔԸ

Մախ՝ ինչո՞ւ այս կղզին Հէյպէլի կը կոչուի: Կ'ըսեն որ աւ կղզին շատ նման է հէյպէլի, այսինքն՝ խորճիճի:

Այս կղզիին վրան իններորդ դարուն շինուած վանք մը կայ՝ Մարիամ Աստուածածինին նուիրուած, որը մարդոնց ցաւերը կը մեղմացնէ եւ միշտ յոյս կու տայ մարդ արարածին: Ահա թէ ինչու «Յոյսի վանք» կը կոչուի այս եկեղեցին:

Վանքին ներսը, ամէն տեղ սրբապատկերներ կան՝ մեծ մասամբ Մարիամ Աստուածածինին եւ իր որդի Յիսուսին նուիրուած:

Հոս 1844-ին հիմնադրուած է Դպրեվանքը, որ տուած է շատ արժէքաւոր հոգեւորականներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա կս իր շքախումբով այցելած է այս վանքը:

Անցեալին հոս եղած է հարուստ մատենադարան, որ աւելի հին է քան վանքը: Այդ մատենադարանը հիմնադրուած է Ս.Ֆօքիոսի կողմէ:

1840-ականներուն, երբ միսիոներները ներթափանցեցին Թուրքիա, հոս աստուածաբանական օճախ մը ստեղծեցին, որ ուներ ե՛ւ ճեմարան, ե՛ւ համալսարան, իսկ հիմա այս ճեմարանին հատ ու կտոր շրջանաւարտները ուսումնին շարունակելու համար կը դրկուին այլ համալսարաններ:

Այս վանքը կապուած է Տիեզերական Պատրիարքութեան:

1900-ականներէն այլազգի եւ կրօնական ուրիշ ուղղութիւններու ներկայացուցիչներ կու գան հոս՝ ուսում առնելու եւ կը դառնան աշխարհիկ ու կրօնական սպասարներ՝ մնալով Յոյսի վանքի հոգեւոր խորհրդի անդամ:



5(21). ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԸ

Ա իզանդական իշխանութեան ժամանակ թագաւորը Հայաստանէն պարտադիր զինուորներ կը պահանջէր, եւ հայերը կու տային: Պատերազմի մը ժամանակ քառասուն հոգի հայեր իրենց խումբով այնպիսի քաջութիւն մը ցոյց կու տան որ յոյն զինուորները ամբողջ բանակով չէին կրցած ընել: Պատերազմը վերջանալէն ետքը թագաւորը զմայլուած հայ կտրիճներու սխրագործութիւններէն՝ կ'ուզէ զանոնք իբր թէ պատուել: Ան կը հրամայէ խոշոր կերուխում մը սարքել եւ քառասուն սենեակ պատրաստել՝ կտրիճները զատ-զատ պառկեցնելու համար: Քառասուն հատ ալ գեղեցիկ յոյն աղջիկներ կու տայ, որ հայ կտրիճներուն հետ գիշերեն:


Այդ աղջիկներուն նախօրօք ապսպրուած կ'ըլլայ տղոց սերը առնելէն վերջը, անոնց քնացած ատենը դաշոյնով սպաննել: Թագաւորին նպատակն էր հայ կտրիճներէն սերունդ ունենայ, իսկ զիրենք ոչնչացնել:

Քառասուն աղջիկներէն երեսունինը կը սպաննեն իրենց զոյգը, իսկ մէկ աղջիկ մը, որ շատ գեղեցիկ էր, այդ գիշեր կը սիրահարի Զօրավար Սարգիսին եւ չ'ուզէր անոր մահը, այլ կը պատմէ անոր թէ թագաւորին հրամանովը ի'նչ վախճան կը սպասէ իրեն եւ իր ընկերներուն, որոնք երեւի արդէն չկան:

Զօրավար Սարգիսը եւ աղջիկը կ'որոշեն իրարու հետ փախիլ: Աղջիկը կամացուկ մը կ'ելլայ, ձին կը թամբէ: Սարգիսը աղջիկը իր գիրկը առած՝ ձին կը հեծնի եւ արագօրէն կը քշէ՝ ձիուն սմբակներուն տակը ճզմելով ճամբան հանդիպած պահակները: Ան պարիսպին վրայէն կը թռի եւ իրեն սիրող աղջկան հետ կը փախի:

Ատկէ վերջը Զօրավար Սարգիսը սուրբերուն կարգը կը դասուի եւ կը պաշտուի որպէս սուրբ:

Մինչեւ հիմա շատ չամուսնացած աղջիկներ այդ սուրբին նուիրուած երեք օրերուն ծով կը բռնեն՝ այն յոյսով որ իրենց երագին մէջ Սուրբ Սարգիսը պիտի գայ, իրենց ջուր պիտի տայ եւ իրենց մուրատը պիտի կատարուի:



6(22). ՍՈՒՐԱՏՏԱՏՈՒՐ Ս.ԿԱՐԱՎԱԾԵՏԸ



երին Թօմարզան Ս. Կարապետ վանք ունի: Մ'եր գիւղն ալ Յարութիւն անունով տղայ մը կար: Առաջին ընդհանուր պատերազմէն առաջ անկիւս բժիշկ կ'ուզէր ըլլալ: Աս Յարութիւնը մէկ այլազգ ընկեր մը կ'ունենայ: Ան ալ փեհլիվան կ'ուզէ ըլլալ:

Աս երկուքը միասին վարդավատին օրը Ս. Կարապետ վանքը ուխտի կ'երթան՝ իրենց մուրատը առնելու համար:

Կ'երթան, ամմա եկեղեցիին դուռը գոց կ'ըլլայ: Ասոնք դուրսը հողին վրայ կը նստին, կը սպասեն: Փեհլիվան ըլլալ ուզողին քունը կը տանի, կը քնանայ: Աս Յարութիւնը չի քնանար: Ան միշտ կ'աղօթէ Ս. Կարապետին որ իր մուրատը տայ: Մ'էյ մըն ալ եկեղեցիին դուռը կը բացուի, ծեր, մօրուքով մէկը կու գայ, կ'ըսէ.

— Ծունկի'դ վրայ տաճար մտիր:

Աս Յարութիւնը ծունկերուն վրայ կը յառաջանայ, մինչեւ խորանին առջեւը կ'երթայ:


Մօրուքով ծեր մարդը կ'ըսէ.

— Տղա՛ս, դուն բժիշկ ըլլալ կ'ուզես. քու կամքդ ընդունելի եղաւ: Քու ընկերդ քնալալուն համար իր մուրատը կորսնցուց: Ան հագիւ չօպան կ'ըլլայ, — կ'ըսէ ու կ'անհետի:

Ասիկա իրական եղած բան է:

Ետքը Յարութիւնը բժիշկ կը դառնայ: Մ'եծ անուն կը հանէ որպէս Հէքիմ Արթին: Ան շատ գիրքեր կը գրէ, ուր կը բացատրէ թէ ո՞ր խտող ի'նչ հիւանդութեան դեղ է:

Առաջին ընդհանուր պատերազմին ան կը նահատակուի: Ողորմի իրեն. լոյսերուն մէջը թող պառկի Հէքիմ Արթինը:



7 (23). ՀՐԱԾՎԱԳՈՐԾ Ս. ԿԱՐԱՊԵՏՈ



օմարգա էրիկ կնիկ մը կային: Ասոնք գայիֆ մանչ մը ունե-
ին: Աս մանչը եօթը տարիէ ի վեր սրթմա կը բռնուէր: Անոր
համար ալ վրայ չէր գար. գայիֆ մնացած էր: Ծնողքը ինչ
հօծայի կը տանին՝ ֆայտա չ'ունենար:

Օրին մէկը՝ Վարդավառին ուխտաւորներուն հետ Ս. Կարապետ
վանքը կ'երթան, մանչն ալ հետերնին կը տանին: Հոնտեղի աղբիւրին
մէջը կը լոգցնեն մանչը: Մանչը կ'աղէկնայ:

Ալ ծնողքին ուրախութիւնը այնքան մեծ կ'ըլլայ որ մեծ նուէրներ
կը տանին Ս. Կարապետ վանք:



8 (24). Ս. ԿԱՐԱՊԵՏԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ



եր Թօմարգա կոյր ծեր կին մը կար: Օրին մէկը մարդ մը
ձիով քաղաք կ'երթայ: Աս կոյր կինը կ'ըսէ.

— Ա՛խ, ի՞նչ կ'ըլլայ, դուն Ս. Կարապետ վանքին առջեւէն
պիտի անցնիս, ինծի Ս. Կարապետի վանքէն ափ մը հող բեր:


Մարդն ալ կ'երթայ քաղաք, իր առուտուրը կ'ընէ, ետ դառնալու
ժամանակ ալ ափ մը հող կ'առնէ Ս. Կարապետի վանքին առջեւէն, կու
գայ մեր գիւղ Թօմարգան, կ'ըսէ կոյր կնոջը.

— Ա՛ն, մայրի՛կ, քեզի Ս. Կարապետ վանքէն հող բերեր եմ:

Կինը կ'առնէ հողը, աչքերուն կը քսէ, աչքերը կը բացուին:

— Ա՛խ, — կ'ըսէ կինը, — Ս. Կարապե՛տ, քեզի դուրպա՛ն ըլլամ,
հողդ որ այսքան զօրաւոր է, ուրեմն դուն ինչքա՛ն զօրաւոր ես:





9 (25). ՀԱՅՐ ԱՔՐԱԲԱՄԻՆ ՈՐԹԱՏՈՒՄԵՆ

Օր մը Հայր Աբրահամին հրեշտակ մը հիւր կու գայ: Ան իր տունին մէջը ուտելիք չ'ունենար, գոմէն հորթուկ մը կը հաճէ, կը մորթէ եւ կը հիւրասիրէ հրեշտակը:

Իրիկունը հորթուկին մայրը լեռնէն կու գայ, կը տեսնայ իր հորթուկը չկայ: Կը սկսի աղի-աղի լալ: Հրեշտակը աստ տեսնալով շատ կ'ազդուի, Հայր Աբրահամին կ'ըսէ.

— Բե՛ր մեր կերած հորթուկին կաշին եւ ոսկորները:

Հայր Աբրահամը կը բերէ: Հրեշտակը կ'օրհնէ հորթուկին կաշին ու ոսկորները, եւ հորթուկը կ'ողջննայ: Մ'նացորդները կը թաղեն այգիին մէջը:

Տարի մը վերջ, ճիշդ աստ նոյն տեղը որթատունկ մը կը բուսնի:



10 (26). ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿՈՌԻԿՈՍ ԲԵՐԴԸ՝

Միջերկրական ծովը Կիլիկիոյ արեւմտեան շատ հանդարտ է, այնքան մաքուր որ յատակին բամպակի պէս փափուկ, դեղին աւազը յստակ կ'երեսայ: Ծովին խորը, մօտ մէկ քիլօմէթր հեռու, կղզիին ժայռերուն վրայ շինուած է Կոռիկոսի ծովային հսկայ բերդը, իր ճերմակ աշտարակներով: Բերդի մուտքի ճակատին կայ արձանագրութիւնը Կիլիկիոյ Հեթում Ա թագաւորին, որուն եւ կը պատկանի այս բերդի շինութեան պատիւը, 1251-ին:

Իբր օրին մէկը Սուլթանը ֆալճի մը կը տեսնայ: Եւ կ'ըսէ.

— Իմ բախտս նայէ:

Ֆալճին Սուլթանին բախտը կը նայի, կ'ըսէ.

— Դուն աղուորիկ աղջիկ մը պիտի ունենաս, անոր շա՛տ պիտի սիրես, բայց օձը անոր պիտի խայթէ եւ պիտի մեռնէ:

Սուլթանը շա՛տ կը տխրի եւ կը հրամայէ ցամաքէն հեռու, ծովուն մէջը բերդ մը շինել:

Երբ աղջիկը կը ծնի, Սուլթանը զինք կը տանի, կը տեղաւորէ աղբերդին մէջը, որպէսզի իր աղջկան ոչ մէկ վտանգ պատահի: Աղջիկը հոն կը մեծնայ: Տարիները կ'անցնին:


Օրին մէկը Սուլթանը կ'ըսէ իր ծառային.

— Սէփէթ մը խաղող քաղէ, տա՛ր, աղջիկս թող ուտէ:

Ծառան կ'երթայ խաւ Պախչայէն խաղող կը քաղէ, կը լեցնէ սէփէթին մէջը, նաակով կը տանի, կը հասցնէ աղջկան օտան:

Դուն մի՛ ըսեր, սէփէթին տակը օձ մը ոլորած, պահուած կ'ըլլայ: Երբ աղջիկը ձեռքը կ'երկարէ որ խաղողը ուտէ, օձը գլուխը կը բարձրացնէ, կը խայթէ աղջիկը: Աղջիկը տեղն ու տեղը կ'իյնայ, կը մեռնի:

Անոր համար հայկական Կոռիկոս բերդին անունը նաեւ Գըզ Գալէսի կ'ըսեն, այսինքն՝ Աղջկան Բերդ:



II (27). ԽԵՏԸՐ ՊԵՎԻ ՍՕՍԻ ՕՂՈԸ

Մը պատմուի թէ Մուսա լերան խըտր Պեկ գիղի լայնակոճղ եւ հսկայ ծառը Մովսէս մարգարէին գաւազանէն ծաղկած, ուռճացած եւ այսօրուան վիճակին հասած է: Քանի որ ըստ աւանդութեան՝ Մովսէս մարգարէն երբ իր ժողովուրդը Եգիպտոսէն դուրս հանեց, եկաւ Մուսա լերան վրայ հանգչեցաւ, ատտեղէն ալ Մուսա լեռ անունը, այսինքն՝ Մովսէսի լեռ:

Այդ լերան վրայ կատարուած են աստուածային շարք մը հրաշքներ՝ ինչպէս որ եղած չեղած երեք հատ հացը Աստուծոյ օգնականութեամբ բազմացեր է եւ ամբողջ ժողովուրդը կշտացուցեր է եւ կամ մարդոց ծարաւը յագեցնելու համար Աստուած Մովսէս մարգարէին խորհուրդ է տուեր՝ իր ձեռքին գաւազանը զարնել գետնին, եւ սկսեր է հոսիլ Գարաշայ գետը:

Ահա այդ ժամանակ է որ Մովսէս մարգարէին գաւազանը ծաղկեր ու դարձեր է խըտր Պեկի սաղարթախիտ, վիթխարի սօսի ծառը, որու փչակին մէջ կը պատմուի թէ առաջ ձիանոց եղած է:

Հիմա Մուսա լերան խըտր Պեկ գիղին հնադարեան հսկայ ծառի փչակին մէջ ալ անոր շրջակայքը թէյարան-սրճարան է:



ԿՐՈՆԱ - ԲԱՐՈՅԱԽՕՍԱԿԱՆ
ՉՐՈՅՅՆԵՐ

I (28). ԼՍՏՈՒԲՈՅ ՊՍԳՂՍԵ

Մստուած ըսեր է.
Եթէ մէկը աշխատասէր է՝ գնահատէ զայն:
Եթէ մէկը աշխատասէր եւ խելացի է՝ պաշտէ զայն:
Եթէ մէկը ծոյլ է՝ սաստէ զայն:
Եթէ մէկը ծոյլ է եւ չար՝ պատժէ զայն:






2 (29). ԵՒՎՅԻՆ ՄԵՂՐԸ

Առաջ ընդունուած է եղեր, որ կին արարածը ոչ մէկ գործի պիտանի է, բացի տնական գեղ շրջանակներէն: Ատ կու գար Եայէն, երբ ան օձէն խաբուեցաւ եւ արգիլուած պտուղը կիսեց Ադամին հետ եւ կերան: Աստուած երկուքն ալ պատժեց՝ արտաքսելով դրախտէն ու ըսաւ.

— Դուն Եա՛, քանի որ օձին մտիկ ըրիր, խաբուեցար եւ խաբեցիր քու կողակիցդ, ասկէ ետքը դուն որպէս պատիժ տանջուիս եւ ցաւերով զաւակ ծնիս ու պահես, իսկ Ադամն ալ ճակատին քրտինքովը հաց ճարէ:

Այնպէս որ երկամարդիկ դուրսը պիտի հոգան ընտանիքին ամէն հոգը, իսկ կիները՝ ներսը, տունին գործերը պիտի ընեն: Անոր համար ալ հին կիները կ'ըսէին.

- Երկուշաբթի՛, շաբթի՛, շաբթի՛,
- Երեքշաբթի՛ հաց կը թխիմ,
- Չորեքշաբթի՛ կարկտուք կ'ընիմ,
- Հինգշաբթի՛ չամաշոր կ'ընիմ,
- Ուրբաթ՝ տուն կը մաքրիմ,
- Ծաբաթ օրը կ'երթամ բաղնիք,
- Կիրակի ալ՝ եկեղեցի:



3 (30). ԱՍՏՈՒՄՈՒՄ ԲՎԺՆՈՂ

Աստուած աշխարհը ստեղծելէն վերջը կը կանչէ բոլոր ազգերէն մէկ-մէկ հոգի: Ատտուն կանուխ կ'երթայ հայր:

Աստուած կ'ըսէ.

— Քեզի կու տամ աշխատանքը:

Վերջը հրէան կ'երթայ:

Աստուած կ'ըսէ.

— Քեզի կու տամ խելքը:

Ետքը յոյնը կ'երթայ:

Աստուած կ'ըսէ.

— Քեզի կու տամ արուեստը:


Օրը ցերեկ կ'ըլլայ: Աստուած կը յոգնի արդէն: Մէյ մըն ալ այլազգը կու գայ:

Աստուած կ'ըսէ.

— Ինչո՞ւ ուշացար: Ես արդէն բաժնեցի ունեցածս: Դուն ալ գնա քու ունեցածովդ զբաղէ...

Անոր համար անոնք միշտ ա՛տ բանին վրայ կը մտածեն...





4 (31). ՎՍՏՈՒԹՈՅ ԴՐՎՕ ՎՆՈՒՆՆԵՐԸ

Արսեն թե երբ Ադամ բոլոր կենդանիներուն անուններ կը դնէր, էշն ալ իր կարգով կու գայ, կ'անցնի Ադամի մօտէն: Եւ Ադամ անոր անունը կը դնէ էշ: Էշը կարգէն դուրս գալէն վերջը կը մոռնայ իր անունը եւ նորէն կարգի մէջ կը մտնայ, կը հասնի Ադամին մօտ:

Ադամ կը տեսնայ որ էշը նորէն եկաւ, կը հարցնէ.


— Ինչո՞ւ նորէն եկար:

Էշը ամչնալով կ'ըսէ.

— Մոռցայ իմ անունս:

Ադամը կը բռնէ էշուն երկու ականջներէն եւ ուժեղ մը կը քաշէ, կ'ըսէ.

— Աւանա՛կ, քու անունդ է՛շ է, հասկցա՞ր, — եւ այդ օրէն էշուն ականջները կ'երկարին եւ անունին վրայ ուրիշ անուն մըն ալ կ'աւելնայ՝ արանակ:



5 (32). ՎՍՏՈՒԹՈՅ ՏՈՒՎՕ ԲՎԵՍԸ

Ամանակով մարդ ու կնիկ մը կ'ապրին: Ասոնք շատ աղքատ կեանք կ'ունենան: Մարդը, որուն անունը Ալի էր, միշտ իր աղօթքներուն մէջ կը խնդրէր Աստուծմէ որ իրեն բախտի դուր մը բանայ եւ ազատէ ատ չքաւորութենէն:

Օրին մէկը Ալին նորէն իր աղօթքը կ'ընէ, կը պառկի, գիշերը երազին մէջ կը յայտնուի հրեշտակ մը, որ կ'ըսէ.

— Ալի՛, քու աղօթքներդ հասան Աստուծոյ եւ քու բախտդ այսպէս որոշուած է: Քու բախտդ հեռու տեղ կը գտնուի: Դուն պիտի երթաս մինչեւ Պաղտատ, հոն պիտի հարցնես ու գտնաս հաճի Օսմանին սրճարանը: Հոն կայ խաղողի ասմայի ծառ մը: Պիտի երթաս առտու կանուխ: Մարդիկ աստած կ'ըլլան հոն, ոչ մէկուն բարեւ պիտի տաս, պիտի շուլլուիս ատ ասմային վրայ, ողկոյց մը խաղող պիտի քաղես եւ պիտի ուտես: Հոն ալ պիտի գտնաս քու բախտդ:

Ալին կ'արթննայ քունէն, կիճն ալ կ'արթնցնէ ու կը պատմէ իր տեսած երազը: Ալին ու կինը կը մտածեն թէ Պաղտատը ո՛ր, իրենք ո՛ր, ինչպէ՞ս պիտի երթայ, երբ ո՛չ դրամ ունի եւ ո՛չ ալ էշ: Ինչ որ է՝ երազ է կ'ըսեն, վազ կանցնին, բայց Ալին նորէն կը շարունակէ աղօթել ու բախտ խնդրել: Երկրորդ գիշերը նորէն հրեշտակը կու գայ եւ նոյն բանը կ'ըսէ: Ասոնք նորէն չեն հաւատար: Երրորդ անգամ հրեշտակը նորէն կու գայ եւ Ալին նոյն բանը կ'ըսէ:

Ալին կ'արթննայ ու կ'ըսէ կնկան.

— Ալ ճար չկայ, անպայման պիտի երթամ Պաղտատ:

Պարտքով դրամ կը ճարէ ու ճամբայ կ'ելլայ: Բաւական դժուարութիւններով կը հասնի Պաղտատ: Կը գտնայ հաճի Օսմանին սրճարանը եւ առտու կանուխ կ'երթայ, ինչպէս որ պատուիրած էր հրեշտակը.


առանց մարդու հետ խօսելու, կը շուլլուի ասմային վրայ, որ ողկոյզ մը խաղող քաղէ եւ ուտէ:

Մարդիկ որ կը տեսնան օտարական մը ասմային վրայ շուլլուած անքաղաքավար ձեռով խաղող պիտի ուտէ, կը սկսին անոր հարցնել թէ ո՞վ է ինքը, ուրկէ՞ եկաւ, ինչո՞ւ սրճարանի տիրոջմէն հրաման չառաւ, որ ան քաղէր ողկոյզ մը խաղող եւ իրեն տար: Ալիւն երբ կը լսէ այդ բոլորը՝ սաստիկ կ'ամչնայ եւ ստիպուած կը պատմէ թէ ինչու եկած է Պաղտատ այդքան հեռու տեղերէն, որ իր բախտը գտնայ ողկոյզ մը խաղող ուտելով:

Հողն անտածներէն մէկը ալ չի համբերեր, կ'ըսէ.

— Այ՛ մարդ, դուն ի՞նչ խելքի տէր ես, որ այդքան հեռու տեղերէն եկեր ես ողկոյզ մը խաղող ուտելու համար: Իմ երագիս մէջ քանի անգամ է հրեշտակը կու գայ եւ կ'ըսէ. «Գնա՛ թուրքիա, Սարը Եօլ գիւղը, գտի՛ր Ալի անունով մարդուն տունը, գնէ՛ անոր բնակարանը, փորէ՛ անոր մանուսը եւ հոն պիտի գտնաս երկու պտուկ լեցուն ոսկի», բայց ես չե՛մ հաւատար ու ո՛չ ալ կ'երթամ, իսկ դուն մէկ ողկոյզ խաղողին համար մինչեւ հո՞ւ հասած ես:

Ալիւն կը լսէ որ այդ մարդուն ըսածը իր գիւղն է եւ այդ ըսած անունը իր անունն է: Կը ձգէ վազելով ետ կ'երթայ, կը հասնի իր տունը, կը փորէ մատանին գետինը, կը հանէ երկու պտուկ ոսկին եւ իր կնոջը հետ հանգիստ կ'ապրի:



6 (33). ՂՍՏՈՒԲՈՅ ՏՈՒԿՕ ՊՍՏԻԺԸ

Օրին մէկը երկու ամուսիններ, իրենց տղուն հետ Պուլէն կը մեկնին գաւառ՝ քիչ մը դրամ շահելու: Անոնք կը վարձեն գիւղի մօլլային տունին քովի տունը: Մարդը պախալի խանութ մը կը բանայ եւ տղուն հետ ամէն օր կ'երթայ աշխատանքի: Կինը կը մնայ տունը:

Դրացի մօլլան աչք կը տնկէ առ կնոջ վրայ եւ կամաց-կամաց, յարաբերութիւն կը սկսի մշակել անոր հետ եւ հայր ու տղայ տունը չեղած ժամանակ կ'այցելէ այդ կնոջ:

Այս յարաբերութիւնը կը տեւէ երկար ժամանակ եւ ոչ ոք չի նկատեր. ո՛չ դրացիները, ո՛չ ալ ամուսինը: Բայց տղան որ արդէն չափահաս դարձած էր, օր մը պատճառով մը խանութէն տուն եկած պահուն յանկարծ կը տեսնայ որ մօլլան իրենց տունին ետեւի դռունէն փախուստ տուաւ: Կասկածը կը մտնայ տղուն մէջը, բայց բան մը յայտնի չ'ըներ ու կը սկսի հետեւիլ, վերջապէս կը համոզուի որ իսկապէս մայրը մօլլային հետ էր:

Տղան երկար մտմտալէն վերջը՝ օր մը կը յայտնէ հօրը այդ գաղտնիքը:

Տղուն պատմելէն վերջը հայրը շատ հանգիստ կը պատասխանէ.

— Հոգ մի՛ ըներ, տղա՛ս, Աստուած անոր պատիժը կու տայ:

Տղան կը տեսնայ որ հայրը անտեղացի չէ եւ Աստուծոյ ձգած է մօլլային պատիժը, կ'որոշէ ինքը անձամբ ճարը տեսնալ եւ վերջ տալ այդ ամօթալի յարաբերութեան:

Միալիմանները օրէնք ունին, որ օրը հինգ անգամ մօլլան կ'ելլայ մինարէին վրան, երկու ձեռքը ականջներուն ետեւը դրած՝ զիլ ձայնով աղօթքի կը կանչէ հաւատացեալները: Առաջին կանչը առտուան արեւածագին է, որ կը կոչուի էգան, կէսօրուան ժամը տասներկուքինը՝

էօյլէն, իրիկուան արեամուտիւնը՝ իքիւնի, իսկ գիշերը պատկելէն առաջ՝ եաթը: Որեւէ մէկը, եթէ իսկական միալիւման է, այս չորս աղօթքն ալ պէտք է կատարէ, թէպէտ իր տանը մէջ կամ ուր որ գտնուի այդ ժամուն, ձգած ամէն ինչ: Նամագը պէտք է ընեն լուացուելէն յետոյ:

Տղան կ'որոշէ գիշերը եաթընի ժամանակ իրագործել իր մտադրութիւնը: Ան նախօրօք կը պատրաստէ շիշ մը օղի. գրպանը կը դնէ ու կը սպասէ որ մօլլան միճարէ ելլայ, գիշերուան եաթըն կարդալու համար: Մէյ մըն ալ կը տեսնայ՝ մօլլան արդէն միճարէէն վեր կ'ելլայ, ինք ալ կամացուկ մը ետեւէն կ'ելլայ ու մօլլան ոգետրուած եաթըն կարդալու ժամանակ, յանկարծ օղին քիթին-բերնին կու տայ, մօլլային ոտքերէն ալ կը բռնէ միճարէէն վար կը նետէ եւ մարդ չտեսած շուտ մը վար կ'իջնայ: Արդէն այդ ժամուն մութ կ'ըլլայ, շուտ տուն կ'երթայ, անկողին կը մտնայ ու կը քնանայ:

Աստուն հայրը կանուխ կ'երթայ խանութը բանալու, մէյ մըն ալ կը տեսնայ գիւղացիները իրարու մէջ կը խօսին, կը պատմեն թէ երէկ գիշեր մօլլան օղի խմեր է, գինովցեր է եւ միճարէ ելեր է: Ան աղօթքի կանչելու ժամանակ, գլուխը դարձեր է եւ միճարէէն վար է գլտորուեր: Ծատ ալ աղէկ եղեր է, քանի որ մարգարէի կողմէն արգիլուած ոգելից օղին է խմեր ու մեզի աղօթքի է կանչեր, ահա Աստուած ալ իր պատիժը տուեր է:

Հայրը այս բոլորը կ'իմանայ, շատ կ'ուրախանայ ու կը սպասէ որ տղան գայ, անոր ալ յայտնէ եւ ան ալ ուրախանայ թէ Աստուած ինչպէս անոր պատիժը տուաւ:

Տղան այդ օրը մասնատր ուշ կու գայ խանութ, կարծես ոչինչ չէ եղած եւ ինքն ալ ոչ մէկ բանէ լուր ունի: Հայրը տղան տեսնալուն պէս կամացուկ մը այդ ուրախ լուրը կը յայտնէ. կ'ըսէ.

— Ես քեզի չըսի՞ տղա՛ս, որ Աստուած անոր պատիժը կու տայ:

Տղան ալ կը մօտենայ հօրը, ականջին կ'ըսէ.

— Եթէ ես անոր քիթին բերնին օղի չթափէի եւ ոտքերէն բռնած վար չնետէի, նայինք Աստուած ի՞նչ կ'ընէր:



7 (34). ԱՍՏՈՒԲՈՆ ԵԱԹԱԵՆԱՍՏՈՒԹԻՒՆԸ



ին մը երեք տղայ գաւակ կ'ունենայ, ամուսինը կը մեռնի: Օրին մէկը մեծ տղան զինուոր կ'երթայ, կը զոհուի: Միւս տղան կը հիւանդանայ, կը մեռնի: Երրորդ տղան կը մնայ,

կ'ըլլայ տասներկու տարեկան:

Կինը աստուածավախ կ'ըլլայ: Միշտ եկեղեցի կ'երթայ եւ կը խնդրէ Աստուծմէ որ գոնէ ատ տղան պահէ: Բայց ատ տղան ալ արկածէ կը մեռնի:

Ատ բարեպաշտ կինը Աստուծոյ դէմ կը քէննայ. երկու շաբաթ չ'երթար եկեղեցի:

Օրին մէկը աչքին կ'երեսայ ճերմակ, երկար մօրուքով մարդ մը, որ կ'ըսէ իրեն.

— Վշտացա՞ր Աստուծմէն:

Կինը կ'ըսէ.


— Անշո՛ւշտ, երեք սիրելի տղա՛քս տարաւ ինձմէ, ո՞ր է Աստուած:

— Գիտե՞ս թէ Աստուած ինչու տարաւ քու տղաքը: Հիմա բացատրեմ: Տղոցմէն մէկը գող, միւսը առագակ, երրորդն ալ գինեմոլ պիտի դառնային: Աստուած քեզ խղճաց, որ չտեսնաս այդ բոլորը: Աստուած քեզ մեղքցաւ եւ խնայեց:

Կինը ինքզինքին կու գայ, ոտքի կ'ելլայ.

— Մեղա՛յ Աստուած, — կ'ըսէ: Կը սկսի նորէն եկեղեցի յաճախել եւ ապաշխարել:

Յամենայն դէպս Տիրոջը հետ քալելը շատ ճիշդ բան մըն է: Աստուած մարդս միշտ խաղաղութեան մէջ կը պահէ:



8 (35). ՉԱՐԱՎԻՍՕՍԵԼԸ ՄԵՂՐ Ի

Մարդ մը ոճրագործ կ'ըլլայ՝ իննսունհինը մարդ սպաննելով: Զինք բանտ կը նետեն: Ծատ տարիներ ետքը, երբ արդէն կը ծերանայ, կ'ազատի բանտէն, բայց խիղճը իր մէջը կ'արթննայ, կ'ըսէ.

— Աստուած, ի՞նչպէս ընեմ որ մեղքերուս թողութիւն տրուի: Օրին մէկը երազին մէջը իրեն կ'ըսեն.

— Ցանէ՛, հնձէ՛, ինչ որ պտուղ ստանաս, բաժնէ՛ անցորդներուն: Ծերունին կը հարցնէ.

- Բայց ի՞նչպէս գիտնամ որ մեղքերուս թողութիւն տրուած է: Զայնը կը պատասխանէ.

— Այրած որթատունկ մը տնկէ, երբ որ կանանչնայ, այն ատեն մեղքերուս թողութիւն տրուած կ'ըլլայ:

Է՛, այրած որթատունկը կը կանանչնա՞յ:

Ինչ որ է: Ծերունին կը սկսի հողը փորել, պտղատու ծառեր տնկել: Կ'անցնի ժամանակ մը, ծառերուն պտուղները կը հասնին, ծերունին կը ժողվէ, կը բաժնէ անցնող դարձողին: Կ'երթայ, կը նայի որթատունկը կանանչցա՞ւ: Կը տեսնայ՝ դեռ չէ կանանչցած:

Յաջորդ տարին նորէն կը ցանէ, նորէն կը քաղէ, նորէն կը բաժնէ անցորդներուն, բայց որթատունկը չի կանանչնար:

Երրորդ տարին նորէն կը ցանէ, նորէն կը քաղէ, պտուղները կը հաւաքէ, ամբողջ օրը կը սպասէ, գիշեր կ'ըլլայ՝ մէկը չանցնիր:

Ծերունին յոյսը կտրած կը պառկի: Կէս գիշերին, մէյ մըն ալ ձիու ոտքի ձայն մը կը լսէ: Ծերունին ուրախութեամբ կ'արթննայ, դուրս կը վազէ, կը տեսնայ, որ ձիաւոր մը կու գայ: Ծերունին կ'ըսէ.

— Բարեկա՛մ, կեցի՛ր... քեզի պտուղ պիտի տամ, — բայց մարդը առանց կենալու ձին կը քշէ:

Ծերունին շատ կը նեղուի, կ'ըսէ.

— Այ զգուեցայ սպասելէն, իննսունհինը թող ըլլայ՝ հարիր, - մարդը ձիէն վար կ'աննէ, ներս կը քաշէ, գլուխը կը կտրէ: Վերջն ալ իր գլուխը ձեռքերուն մէջ առած կը սկսի լալ, որ նորէն մարդասպանութիւն կատարեց...

Մէյ մըն ալ երկու ձիաւորներ կու գան, կ'ըսեն.

— Հայրի՛կ, հոսկէ անցնող ձիաւոր մը տեսա՞ր, ո՞ր կողմը գնաց. եթէ տեսար՝ խնդրեմ ըսէ՛, մի՛ պահէր:


— Ի՞նչ պիտի ընէք, — կը հարցնէ ծերունին:

— Մեր գիւղը խերով գործ մը պիտի ընէինք, այսինքն՝ ուրիշ գիւղէ աղջիկ մը հարս պիտի բերէինք, ատ մարդը չարախօսեց եւ ատ գործը խանգարեց:

Ձիաւորները կ'երթան: Մէկէն ծերունիի աչքին կը զարնէ որթատունկը. կը տեսնայ որ կանանչցեր է: Ուրեմն իր մեղքերուն թողութիւն է տրուեր:

Այսինքն՝ անմեղ աղջկան մը մասին չարախօսելը ոճրագործութեան հաւասար մեղք է: Ատոր համար է որ կ'ըսեն՝ անմեղ աղջկան մը անունին դպնալը կամ եկեղեցի մը քանդելը նոյնն է: Մեղքին մեծը պըզտիկը չկայ. մեղքը մեղք է:





9 (36). ԿԵՎԵՐԻ ԳԻՐՔԸ

Լրգրումէն մարդ մը իր գաւակը կը դրկէ Մեքքա, որպէսզի հոն հօճա ըլլայ: Ատ Մեքքան ալ մեր Երուսաղէմին պէս սուրբ տեղ մըն է:

Տարիներ կ'անցնին, տղան կը վերադառնայ՝ ձեռքը առաջնութեան վկայականով:

Հայրը հարց ու փորձ կ'ընէ, կը տեսնայ որ տղան շատ լաւ սորվեր է, կ'ըսէ.

— Վաղը Ուրբաթ է, միասին երթանք ճամի, հօճան ալ թող քեզի հարց ու փորձ ընէ:

Տղան մեծ համարձակութեամբ կը պատրաստուի: Հայր ու տղայ կ'երթան ճամի: Հօճան նամազը կ'ընէ, վերջը քարոզը կու տայ, մեր եկեղեցիին Կիրակի օրուան պէս:

Տղան մատը կը վերցնէ, կ'ըսէ.

— Հօճա՛, սքանչելի՛ քարոզ մը տուիք, օրհնութիւն եղաւ մեզի, մինակ թէ Մուհամմէտ էֆէնտիին ձեր ըսած խօսքը ոչ թէ վեցերորդ գլխուն տասնմէկերորդ համարին, այլ տասնմէկերորդ գլխուն վեցերորդ համարին մէջ ըսած է:

Հօճան մէյ մը կը խորհի, կը տեսնայ որ տղան ճիշդ է, բայց պատիւին չի կերցուներ, կ'ըսէ.

— Է՛յ, միւսխման ժողովորդ, որքան որ այս տղուն ըսածը շիտակ է, մեր կրօնքին մէջ աս տեսակներուն կեաւոր կ'ըսեն:

Ժողովորդը տղուն վրայ կը յարձակի, «մեր մէջը կեաւոր մը կայ» ըսելով: Հայրը հագի տղան կը փախցնէ, տուն կը բերէ՝ լալով, ողբալով կ'ըսէ.

— Ես քեզի այսքա՛ն ծախք ըրի, յուսալով որ ինձի պատիւ բերող գաւակ մը պիտի ըլլաս, այնինչ վրայէն ալ կեաւոր գաւակ եղար, անունըս ալ հանեցիր: Դուն աս բանը չպիտի՛ ընէիր: Երկու զոյգ եզ ունիմ, անոնք ալ ծախեմ, քեզի նորէն դրկեմ Մեքքա:

Տղան կ'ըսէ.

— Հայրի՛կ, տե՛ս, ես առաջնութեան վկայականով եկայ, ես ճիշդ խօսք մը ըսի:

Ինչքան տղան հօրը կը խօսի՝ չի կրնար համոզել: Տղան ճամբայ կ'իյնայ, ետ կ'երթայ Մեքքա իրենց մեջիտը, ներս կը մտնայ: Ուսուցիչները կը զարմանան, կ'ըսեն.

— Տղա՛ս, ինչո՞ւ նորէն եկար:

Տղան պատահարը կը պատմէ:

— Օ՛, — կ'ըսէ մեծատրը, — մենք քեզի հաստ գիրք մը կարդացուցինք՝ գիրքի ուսում տուինք, քիչ մըն ալ կեցիր՝ կեանքի գիրքին դասը առ: Միջոց մը ետքը տղան ետ կը դառնայ: Հայրը կը դիմատրէ տղան, կ'ըսէ.

— Տղա՛ս, քեզ նորէն պիտի տանիմ հօճային քովը, եթէ նոյնիսկ ըսէ՛ Մուհամմէտ հայհոյեց, չըլլա՛յ որ ձայն հանես: Այն օրուրնէ ի վեր տունէն դուրս չեմ կրնար ելլալ, գլուխս կախ կը պտտիմ: Անունս էլաւ կեաւորի հայր:

Աս խօսքերը ըսելով՝ հայրը տղան նորէն ճամի կը տանի՝ հօճային քովը:

Նորէն հօճան նամազէն վերջը քարոզ կու տայ, կը վերջացնէ:

Տղան մատը կը վերցնէ: Հայրն ալ բոլոր ազգականները հետը տարած է, որ իր երեսը ճերմակ հանէ:

Հայրը կը տեսնայ տղուն մատ վերցնելը, կ'ըսէ.

— Վա՛ր առ մատդ, չըլլա՛յ որ խօսիս:


— Դուն մի՛ խառնուիր, — կ'ըսէ տղան և հօճային կը դիմէ. — Հօճա՛ էֆէնտի, ես սիրտս մաքուր կատարեալ տղայ մըն եմ, երէկ գիշեր երագ մը տեսայ: Դաշտին մէջը ժողովորդը հաւաքուած էր, Մուհամմէտ էֆէնտիին ալ քարոզ տուաւ: Քարոզէն վերջը դէպի երկինք ելլել սկսաւ: Մէյ մըն ալ գլուխը ծոեց, այդքան ժողովորդին մէջէն ձեզ տեսաւ, դէպի վար սահեցաւ, ձեռքը երկնցուց, ձեր ձեռքէն բռնեց: Դուք ալ անոր փէշերուն փաթթուեցաք, միասին երկինք համբարձաք, ամպերուն մէջը կորսուեցաք: Հօճա՛ էֆէնտի, կը խնդրեմ ձեզմէ, ձեր մօրուքէն թել մը շնորհէք ինձի, որպէսզի մասունքի պէս մինչեւ կեանքիս վերջը պահեմ:

Հօճան մեծ գոհունակութեամբ թել մը կը քաշէ իր մօրուքէն, կու տայ տղուն: Տղան ամենայն լրջութեամբ թելը կ'առնէ, կը համբուրէ, ճակատը կը տանի՝ աղօթելով թաշկինակին մէջը կը դնէ, գրպանը կը դնէ:


Աս իմանալով ժողովորդը. «Հօճա՛ էֆէնտի, թե՛լ մըն ալ ինձի, թե՛լ մըն ալ ինձի» ըսելով հօճային մօրուքը կը փրցնէ: Հօճան կը մնայ առանց մօրուքի:

Տղան կ'ըսէ.

— Տեսա՞ր, հայրի՛կ, հաստ գիրքը կարդալով մասնագիտութիւնս ըրի, իսկ կեանքի գիրքը կարդալով հօճային յաղթեցի:



10 (37). ՀՈԳԻՈՎ ԱԴՔԱՅԵ

 արուստ մարդու մը արտերը ատ տարի շատ առատ բերք կու տան: Ան ուրախ-ուրախ կը լեցնէ իր ամբարները: Կը տեսնայ որ ամբարները լեցուեցան, բայց դեռ բերք մնացած է: Կը մտածէ. «Ի՞նչ ընեմ, ամբարներս լեցուն եմ, ալ տեղ չկայ, պէտք է քանդեմ ամբարներս, աւելի մեծը շինեմ, որ տեղաւորուի ամբողջ բերքը»:


Բայց Աստուած կը տեսնայ եւ կ'ըսէ.

— Աս գիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի, ատ քու շինած ճոր ամբարը եւ առատ բերքը որո՞ւն պիտի մնայ:

Ան որ միայն իր անձին համար գանձ կը դիզէ՝ հոգիով աղքատ է:



11 (38). ԵԹԷ ԿՈՒՄ ՏԱՍ՝ ՎՍՏՈՒՎՈ ՔԵՉԻ ՎԲԵԼԻՆ ԿՈՒՄ ՏԱՅ

 ամանակին երկու աղբար կ'ըլլան: Մէկուն անունը Հալիլ, միւսը՝ Իպրահիմ: Իպրահիմը ամուսնացած կ'ըլլայ եւ շատ ջօճուխներ կ'ունենայ, Հալիլը ամուսնացած չ'ըլլար: Աս երկու աղբարները կը մշակեն իրենց արտերը: Երբ հնձելու ժամանակը կու գայ, անոնք կը քաղեն բերքը, կը տանին կը լեցնեն իրենց ամբարները:

Գիշերը պառկած տեղը Հալիլը կը մտածէ. «Իմ աղբարս ամուսնացած է, չորս զաւակներ ունի, շատ տէրտ ունի, դրամի ալ պէտք կ'ունենայ. ելլամ իմ ցորենէն առնեմ, տանիմ անոր ցորենին վրայ աւելցնեմ»: Կ'ելլայ, կ'առնէ մէկ թէնէքէ ցորեն, կը տանի ամուսնացած աղբորը ցորենին վրայ կը լեցնէ:


Իպրահիմն ալ գիշերը պառկած տեղը կը մտածէ. «Խեղճ աղբարս պէքար է, պէտք է ամուսնանայ, տուն տեղ ըլլայ: Ան ինձմէ աւելի դրամի պէտք ունի, տանիմ թէնէքէ մը ցորեն իր ցորենին վրայ լեցնեմ»: Կ'ելլայ մէկ թէնէքէ ցորեն կը շալկէ, կը տանի աղբորը ցորենին վրայ կ'աւելցնէ: Աս ձեռով տակ քանի մը օր կը շարունակուի:

Օր մըն ալ երկու աղբար շալկաւորուած իրարու դէմ դիմաց կ'ելլան: Անոնք իրարու երես կը նային, իրար կը հասկնան, իրարու կը փաթթուին:


Աստուած վերէն կը տեսնայ Հալիլի եւ Իպրահիմի սիրտերուն բարութիւնը, ասոնց երկուքին ցորենները կը շատցնէ:

Հալիլը եւ Իպրահիմը ծունկի կու գան, կը սկսին աղօթել, Աստուծոյ փառք տալ:

Անոր համար թուրքերը կ'ըսեն. «Ալլահ սանա Հալիլ-Իպրահիմին պերէքթիսի վերսին»: Այսինքն՝ «Աստուած քեզի Հալիլ-Իպրահիմին պերէքթը տայ»: Մենք հայերս ալ կ'ըսենք. «Հայր Աբրահամի պերէքթը»: Նոյն բանն է. քանի որ իմաստը ան է որ եթէ կու տաս՝ Աստուած քեզի աւելի շատ կու տայ:



12 (39). ԱՍՏՈՒԲԱՍ ԿՈՒՄ ՏԱՅ, ԱՍՏՈՒԲԱՍ ԱԼ Կ'ԱՌՆԷ

 Գաբրիել հրեշտակը իր ընկերներուն հետ երկինքը կը պտտէր: Վերէն կը տեսնայ, որ աշակերտները դպրոցին բակը ուրախ-ուրախ կը խաղան: Գաբրիել հրեշտակը իր ընկերներուն կ'ըսէ.

— Կը տեսնա՞ք աս դեղին մագերով մանչուկը, աս պիտի մեռնի:

Միւս հրեշտակները կ'ըսեն.

— Ամա՛ն, մե՛ղք է:

Գաբրիել հրեշտակը կ'ըսէ.

— Աստուծոյ խօսքն է՝ պիտի կատարուի:


Ըհիշո՛ւ ալ անոր ըսելը եւ ըլլալը մէկ կ'ըլլայ: Դպրոցին պատի վրայէն աղիւս մը կ'իջնայ ճիշդ ատ մանչուկին գլխուն եւ ան տեղնուտեղը կը մեռնի:

Գաբրիել հրեշտակը կ'ըսէ իր ընկերներուն.

— Տեսա՞ք որ ես ձեզի ըսի՝ չհաւատացիք. անոր էճելը եկած էր, մահանայի կը մայէր: Աստուած ինչպէս անոր հոգի տուած էր, այնպէս ալ առաւ:



13 (40). ՕՐԸ ՉՕՆԱԾ, ԻՆՉԵ՛Ր ԿԵ ՕՆԻՆ

 ամանակին թագաւոր մը կ'ըլլայ: Աս թագաւորը պալատին շրջակայքը պտտելու ատեն կը տեսնայ շատ գեղեցիկ կին մը: Ատ կինը գետը լոգցեր, արդէն դուրս ելած էր եւ իր հագուստները կը հագներ: Թագաւորը երբ կը տեսնայ անոր կիսահագուած, ձիւնի պէս ճերմակ մարմինը, սատանան կը մտնայ մէջը:

Թագաւորը անմիջապէս իր համհարզը կը դրկէ անոր ետեւէն, որ հասկնայ թէ ով է այդ աղջիկը:

Թագաւորին լուր կը բերեն որ այդ կինը ամուսնացած է եւ ամուսինն ալ խանութ ունի շուկային մէջը, երկաթի գործեր կ'ընէ՝ կղպանք, բանալի, գամ եւ ուրիշ բաներ կը շինէ եւ կը ծախէ:

Թագաւորը անմիջապէս մարդ կը դրկէ այդ երկաթագործին խանութը եւ բերել կու տայ ամուսինը, որ ձեռով մը անոր մէջտեղէն վերցնէ, ինքը անոր կնոջը տիրանայ: Թագաւորը կ'ըսէ.

— Իմ պալատիս հարիւր հատ դուռերուն բոլոր կղպանքները պէտք է նորոգես մինչեւ առտու, եթէ պատրաստ չըլլայ՝ գլուխդ կտրել պիտի տամ: Գնա՛ եւ անցի՛ր գործի:

Մարդը կը զարմանայ թէ ինչն է պատճառը որ թագաւորը իրեն այդպէս նեղը կը դնէ: Խեղճ մարդը կը սկսի շինել, բայց ո՞րպէ կրնայ հարիւր հատ կղպանք շինել մինչեւ միւս առտու:

Մինչեւ իրիկուն կը չարչարուի, վերջապէս մութը կ'իջնայ, մարդը խանութը կը գոցէ, տուն կ'երթայ յոգնած եւ յուզուած: Կնոջը կը պատմէ իր անյոյս վիճակը, որ մինչեւ առտու է իր կեանքը: Կինը կ'ըսէ.

— Հի՛չ մի մտածեր, Աստուած մեծ է, մինչեւ վաղը արեւ ծագելը ինչե՛ր կը ծագին:

Կինը գիշերը մարդուն աղուոր մը կը կերցնէ, կը խմցնէ եւ կը պառկեցնէ անկողինին մէջը:

Ատոտուն դեռ արեւը չծագած՝ մէյ մըն ալ՝ թըխկ-թըխկ դուռը կը գարնէն: Մարդ ու կին քունէն կ'արթնան: Ամուսինը պատուհանէն կը նայի, կը տեսնայ թագաւորին ծառաները կայնած են իր դուռին առջեւը: Կինը սաստիկ յուզուած կը բանայ դուռը, կ'ըսէ.

— Աս ի՞նչ է, դեռ արեւը չծագած թագաւորին ինչո՞ւն պէտք են կղպանքները:

Թագաւորին ծառաները կ'ըսեն.

— Ի՞նչ կղպանք, ի՞նչ բան: Մենք եկեր ենք ըսելու որ թագաւորը գիշերը յանկարծամահ եղաւ, վնասեալ թող շուտ տունէն դուրս գայ, երթայ խանութը բանայ, չորս հատ գամ եւ մուրճ մը առնէ ու գայ պալատ, որ դագաղը գամէ:

Այնպէս որ օրը չծնած, ինչե՛ր կը ծնին...



14 (41). ԳԱՔՐԻԷԼ ՆՐԵՃՏԱԿԸ ԵՒ ԻՐ ԿԻՆԸ



աքրիէլ հրեշտակը օր մը կը ներկայանայ Աստուծոյ, կ'ըսէ.

— Ո՛վ Տէր, երբ քու հրահանգովդ կ'երթամ ծերունիի մը հոգին առնելու՝ ծերունին չ'ուզեր: Երբ կ'երթամ երիտասարդի մը հոգին առնելու՝ ծնողքը չեն ուզեր: Ի՞նչ ընեն:

Աստուած կ'ըսէ.

— Քեզ դրկեմ վար, աշխարհքին համը տեսնաս, ան ատենը կը հասկնաս:

Գաքրիէլ հրեշտակը աշխարհք կը մտնայ, կ'ամուսնանայ, տղայ մը կ'ունենայ, բայց կնիկը շատ չար կ'ըլլայ: Ան իր էրիկը շատ կը տանջէ:

Գաքրիէլ հրեշտակն ալ կը զգուի ադ կնոջմէն, Աստուծոյ կ'աղօթէ որ զինք նորէն երկինք բարձրացնէ:

Օր մըն ալ երկինքէն լուր կու գայ. «Օրդ լրացած է, երկինք պիտի գաս»:

Գաքրիէլ հրեշտակը կը կանչէ իր տղան, կ'ըսէ.

— Նայէ՛ տղա՛ս, իմ օրս եկաւ, ես պիտի երթամ: Ես հարուստ մարդ չեմ, քեզի արհեստ մը պիտի տամ: Կ'երթաս հիւանդին քովը. եթէ ես ոտքին կողմը կայնած ըլլամ՝ հիւանդը շուտ կ'աղէկնայ, եթէ գլխուն կողմը կայնած ըլլամ՝ հիւանդը պիտի մեռնի ուրեմն. ճար չկայ, — կ'ըսէ ու երկինք կը համբառնայ:

Տղան հօրը ըսած ձեռով կը սկսի հիւանդներուն այցելել. երբ կը տեսնայ Գաքրիէլ հրեշտակը հիւանդի ոտքին կողմն է կայնած, կ'ըսէ հիւանդին տէրերուն. «Ձեր հիւանդը շուտով կ'աղէկնայ»: Երբ կը տեսնայ գլխուն կողմն է, կ'ըսէ. «Հիւանդը մեռնելիք է»: Այսպիսով ապրուստը կը հանէ եւ մեծ համբաւի տէր կ'ըլլայ:

Օր մըն ալ թագաւորին աղջիկը կը հիւանդանայ: Նագիր-վեգիր-

Աերը թագաւորին խորհուրդ կու տան որ ադ համբաւաւոր բժիշկը կանչէ: Թագաւորը կը հրամայէ բժիշկը կանչել: Բժիշկը կու գայ պալատ: Թագաւորը բժիշկին կ'ըսէ.

— Դուն անուանի բժիշկ մըն ես. եթէ աղջիկս աղէկցնես, զինք քեզի կնութեան պիտի տամ, եթէ մեռնի՝ գլուխդ կտրել պիտի տամ:

Բժիշկը կ'երթայ, կը մտնայ աղջկան սենեակը, կը տեսնայ Գարրիէլ հրեշտակը հիւանդի գլխուն կողմը կայնած է: Կը մտածէ. «Ուրեմն հիւանդը մեռնելիք է»: Նանէ կ'եփէ, հիւանդին կը խմցնէ. կը տեսնայ իր հայրը նորէն աղջկան գլխուն կողմը կայնած է:

Կ'ըսէ ծառաներուն.

— Վերցուցէ՛ք հիւանդին մահճակալը եւ ոտքը գլուխին կո'ղմը դարձուցէ՛ք:

Ծառաները հլու-հնազանդ կ'ընեն բժիշկին ըսածը: Տղան կը տեսնայ, նորէն հայրը հիւանդին գլխուն կողմը կայնած է: Կը մտածէ՝ ի՞նչ ընէ: Կը մօտենայ հօրը, ականջին կ'ըսէ.

— Շո'ւտ փախի'ր աստեղէն, թէ չէ հիմա կնիկդ պիտի գայ:

Գարրիէլ հրեշտակը ատ լսածին պէս կը յիշէ կնկանը ձեռքէն իր քաշածները, լեղապատառ կը ձգէ, կը փախի:

Թագաւորին աղջիկը կ'աղէկնայ, կ'ամուսնանայ բժիշկ տղային հետ:



15 (42). ԵՐԿՈՒՄ ԴՐԱՍԻ ՀՂՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔԻՆ ՍԵՉ



ամանակով երկու դրացի կ'ըլլան, մէկը՝ բարի, միամիտ, իսկ միւսը՝ խաբէբայ ու սրիկայ: Բարի մարդուն կինը շատ կոուարար եւ դաժան կ'ըլլայ. օր ու արեւ չի տար մարդուն: Օրին մէկն ալ ադ բարի մարդը կը մեռնի, հոգին երկինք կ'ելլէ: Հոն՝ բոլորին պէս անոր հոգիին համար վճիռ կը կայացուի թէ ուր արժանի է՝ դրա՞խտ, թէ՞ դժոխք:

Բարի մարդուն հոգիին կը հարցնեն թէ ի՞նչպէս ապրած է իր անցեալ կեանքը: Հոգին կը պատմէ որ իր չար բախտէն չար կնոջ մը ձեռք ինկած էր, որ իրեն շա՛տ տանջած է, մինչեւ որ մեռցուցած է: Եւ կը խնդրէ որ իրեն խնայեն ու ձգեն գոնէ այս հանդերձեալ կեանքը խաղաղ, հանգիստ ապրի:

Կը լսեն ատ մարդուն ըսածները. արդէն իրենք ալ առաջընէ գիտէին անոր նկարագիրը, կը տեսնան որ ճիշդ կ'ըսէ, դրախտ կը դրկեն:

Կ'անցնի ժամանակ, օր մըն ալ կը մեռնի խաբէբայ եւ կոուարար դրացին: Անոր հոգին ալ երկինք կ'ելլէ, որ վիճակը որոշեն: Երբ անոր դրախտին քովէն կ'անցունեն, յանկարծ կը տեսնայ իր դրացին դրախտի դուռին քովը կը պտտի, կը հարցնէ անոր.

— Աստեղ ի՞նչ կ'ընես:

Բարի դրացին կ'ըսէ.

— Աստեղ դրախտն է, քիչ մը ան կողմը դժոխքն է:

— Հապա դուն ի՞նչպէս ինկար հոս, - կ'ըսէ խաբէբայ դրացին:

Ան ալ կը պատասխանէ.

— Անցեալ կեանքին մէջ ես շա՛տ տանջուած էի իմ չար կնոջ ձեռքէն, անոր համար ինձի մեղքսն՝ դրախտ դրկեցին:

Խաբէբայի հոգին ճամբան կը մտածէ. «Ուրեմն ան մէկ հատ կնոջ հետ ամուսնացած է ըսելով իրեն դրախտ դրկած են, ես երկու անգամ

ամուսնացած եմ եւ ւաւելի շատ չարչարուած եմ իմ երկու կիներու ձեռքէն, կ'ըսես»:

Վերջապէս կը հասնին այն ատեանը, ուր յանցանքները կը քննուին: Աս խաբերայ մարդուն կը հարցնեն թէ ի՞նչպէս անցուցած է իր անցեալ կեանքը:

Խաբերայ մարդը կը սկսի.

— Իմ առաջին կինս շա՛տ գէշ էր. ան ինծի շա՛տ տանջած է, անոր համար ուրիշի մը հետ ամուսնացայ, ան ալ ւաւելի գէշ էլաւ, վերջապէս տանջուելով մեռած եմ: Կը խնդրեմ ինծի խղճալ, որպէսզի հոս հանգիստ կեանքով ապրիմ:

Խաբերան չ'ըսեր թէ ինչպէս առաջին կինը ձգած էր՝ երկու պզտիկ զաւակներով, եւ ուրիշի մը հետ ամուսնացած եւ ամէն օր գինովցած տուն գալով՝ կինը ծեծած, տանջած էր: Բայց ամենուն պէս՝ անոր նկարագիրն ալ կար արդէն իրենց մօտ եւ ատոր համեմատ ալ զինք կը դատապարտեն եւ կ'որոշեն.

— Աս խաբերայ, սրիկայ մարդուն հոգին ղրկեցէ՛ք դժոխք՝ երկու հարիւր աստիճան ջերմութեան մէջ:



16 (43). Ո՛Վ Է ԴՐԱԽՏԻՆ ԱՐԺԱՆԻ



րեք մարդ մէկ օրուան մէջ կը մեռնին եւ միասին կը ներկայանան Աստուծոյ դատաստանին:

Աստուած առաջին մարդուն կը հարցնէ.

— Շիտակ ըսէ տեսնամ, ի՞նչ բարի գործ ըրիր քու կեանքիդ մէջ: Մարդը կ'ըսէ.

— Տէ՛ր իմ, չարիք չըրի ես ոչ մէկու, քանի որ ես շահեցայ, ես ալ կերայ:

Աստուած կ'ըսէ.

— Ուրեմն անտարբեր գտնուեցար ուրիշներուն հանդէպ, — եւ կը հրամայէ իր սպասաւորներուն.

— Շուտ զինք տարէք դժոխք, թող հոն ապրի:

Աստուած երկրորդ մարդուն եւս նոյն հարցը կու տայ:

Ան ալ կ'ըսէ.

— Տէ՛ր իմ, կեանքիս մէջ ես աշխատեցայ, շատ հարստութեան տիրացայ, բայց անոր պէս միմակս չկերայ, այլ հացիս ւաւելցածը տուի ուրիշներուն:

Աստուած կ'ըսէ.

— Ուրեմն դուն քու անձեղ չէիր զրկեր, այլ միայն որպէս ողորմութիւն կու տայիր: Դու՛ն ալ անցիր անոր հետ դժոխք:

Կարգը կու գայ երրորդ մարդուն: Աստուած անոր ալ նոյն հարցը կու տայ:

Ան ալ կը պատասխանէ.

— Ո՛վ Տէր, ես աղքատ ու տնանկ էի, հազիւ պատառ մը հաց կ'անցնէր ձեռքս, բայց նախ կը կերակրէի ուրիշները, եթէ մնար՝ ես կ'ուտէի:

Աստուած կ'ըսէ.

— Անցի՛ր դրախտին դուռը: Քանի որ դուն իմ խօսքս բռնեցիր, քեզմէ առաջ ուրիշներուն խորհեցար, ուրեմն դուն ես դրախտին արժանի:



17 (44). ԱՂՔԱՏ ԵՒ ՀԱՐՈՒԲՍ ԳԱԶԱՐՈՍՆԵՐԸ



ամանակին մէկ քաղաքի մէջ, մէկ փողոցի վրայ կ'ապրէին հարուստ Ղազարոսը եւ աղքատ Ղազարոսը: Հարուստ Ղազարոսին տունը գեղեցիկ էր եւ ամէն բարիքով լեցուն, բայց ան շատ կծծի էր եւ ոչ մէկ աղքատի կ'օգնէր, իսկ աղքատ Ղազարոսը, որ միեւնոյն թաղին մէջը կ'ապրէր, ո'չ ուտելու հաց ունէր եւ ո'չ ալ վառելու փայտ, բայց հարուստ Ղազարոսը անոր ոչ մէկ բան կու տար: Աղքատ Ղազարոսն ալ կ'երթար, անոր աղբամանին մէջը նետուած միսին ոսկորները կը հանէր, կ'ուտէր: Հարուստ Ղազարոսը կը տեսնար անոր վիճակը, բայց ոչ միայն չէր օգնէր, այլ կը վռնուէր ալ:

Օր մը յանկարծ երկու Ղազարոսներն ալ կը մեռնին: Հարուստին հոգին կը տանին դժոխք, իսկ աղքատինը՝ դրախտ: Աղքատ Ղազարոսը շատ հանգիստ կեանք մը կ'ունենայ դրախտին մէջ, իսկ հարուստ Ղազարոսը կրակներուն մէջ կ'այրի:

Օր մը դրախտի մարդիկը կը տանին տեսնալու թէ դժոխքին մէջ եղող մեղաւորները ի՞նչպէս կը տառապին: Հարուստ Ղազարոսը կը տեսնայ, կը ճանչնայ իրեն ծանօթ աղքատ Ղազարոսին եւ կը խնդրէ, կը պաղատի որ ինքը ծարաւ կը մեռնի, գոնէ ան իր մատին ծայրովը ջուր տայ իր բերանը: Աղքատ Ղազարոսը կ'ըսէ.

— Մեր մէջտեղը մեծ անդունդ մը կայ եւ ես չեմ կրնար ան կողմը անցնիլ:

Ան ատենը հարուստ Ղազարոսը իրեն կը խնդրէ.

— Ուրեմն գոնէ իմացոր իմ եղբօրս ընտանիքին որ մէտք չգործեն ինձի պէս, որպէսզի չիչնան աս անիծեալ դժոխքը:

Աղքատ Ղազարոսը անոր կը պատասխանէ.

— Այն աշխարհին մէջ ամէն մարդ գիտէ որ մէտք գործողը դժոխք կ'իյնայ...



18 (45). ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋԵԱԼԸ ԵՒ ԽՈՐԱՄԱՆԿ ՄԱՐԴԸ



րիստոնէական կրօնքին համաձայն՝ մարդուն հոգին մեռնելէն ետքը դեռ կ'ապրի: Անոր համար կ'ըսեն՝ անջեցեալը չէ մեռած, այլ կը անջէ եւ պիտի գայ յարութեան օրը: Բայց մինչ այդ՝ բարի հոգի ունեցողը պիտի դրախտ երթայ, իսկ չարը՝ դժոխք:

Սաղայելը դժոխքի դրան պահապանն է, իսկ Պետրոս առաքեալը՝ դրախտի դրան:

Մարդուն մէկը իր ողջ եղած ատենը շատ խորամանկ կ'ըլլայ: Օր մը կը մեռնի եւ անոր հոգին կը տանին երկինք՝ որոշելու համար թէ դրա՞խտ պէտք է երթայ, թէ՞ դժոխք: Այս մարդուն հոգին կը զգայ որ իր խորամանկ ըլլալուն համար զինք դժոխք պիտի դրկեն, ձեռով մը կը գտնայ դրախտին դուռը եւ կ'ուզէ ներս մտնալ: Պետրոս առաքեալը իր ձեռքէն կը բռնէ, կը պահանջէ դրախտ մտնալու արտօնագիրը, եւ կ'ըսէ.

— Դուն մեղաւոր ես, պէտք է դժոխք երթաս:

Խորամանկ մարդը կը տեսնայ որ ճար չկայ, խորամանկութեան կը դիմէ եւ կ'ըսէ Պետրոս առաքեալին.

— Իսկ դուն մեղաւոր չե՞ս որ երեք անգամ ուրացար Յիսուս Քրիստոսը եւ դաւաճանեցիր իրեն եւ երբ Տէրը քեզ յիշեցուց այդ մասին, դուն ամչցար ու լացիր...

Այս խօսքերը որ Պետրոս առաքեալը կը լսէ, կը մտածէ որ մարդը իրաւացի է եւ կը վախճնայ որ լսող կ'ըլլայ, կ'ըսէ.

— Շուտ ան՛րս մտիր ու ձայնդ ալ կտրէ՛...





19 (46). ՓՍՓՍԵ ԵՒ ՓՍՍՍԱԲԱՍԵ



ափա մը եւ փաստաբան մը կը մեռնին: Երկուքն ալ Աստուծոյ դատաստանին կ'ելլան: Աստուած զանոնք զատ-զատ կը դատէ եւ ամէն մէկուն իր արժանի տեղը կը դրկէ:

Անշուշտ փափան դրախտին մէջն է, ուրախ զուարթ օրերը կ'անցնեն:

Օր մըն ալ փափան նոյն տեղերը պտտելէն ալ կը զգոյի, կ'ըսէ. «Քիչ մը աս տեղերէն հեռանամ, նայիմ ինչե՛ր կան»: Դրախտը կը սկսի շրջիլ: Փողոցներէն մէկէն անցած ատենը սքանչելի պալատ մը կը տեսնայ: Փափան կը մտածէ. «Արդեօք աստեղը ո՞ր փափան կը բնակի: Երթամ տեսնամ մէյ մը»:

Կ'երթայ, դուռը կը զարնէ. մէյ մըն ալ դուռը կը բանայ իրեն հետ մեռնող փաստաբանը: Փափան կը մտածէ ինքնիրենը. «Երեւի աս փաստաբանն ալ դրախտի արժանի է եղեր, բայց հազիւ դոճապանութիւն են տուեր իրեն»: Եւ կը հարցնէ.

— Կրնա՞մ տեսնալ տունին տէրը, զինք կ'ուզեմ ճանչնալ:

Փաստաբանը կ'ըսէ.

— Աս տունին տէրը ես եմ:

Փափան կը շուարի, ըմբոստացած կ'ելլայ կ'երթայ Աստուծոյ առջեւ, կ'ըսէ.

— Տէ՛ր իմ, վեց տարեկանէս ապաշխարեցի, մինչեւ ութսուն տարեկանս քեզի հաատարիմ ծառայ եղայ: Եւ հիմա երբ փողոցը կը շրջէի, տեսայ որ ամենէն աղուոր տունը փաստաբանին տուած ես: Միթէ ըլլալի՞ք բան է:

Աստուած կը պատասխանէ.

— Ո՛վ փափա, աս դրախտը քեզի պէս հարիւրաւորներ եկան, բայց ասիկա առաջին փաստաբանն էր որ դրախտ հասաւ:



20 (47). ՃԱԿԱՍՏԱԳՐԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՄԵ



նիկին մէկը միշտ ինչ որ ըլլայ կ'ըսէ եղեր.

— Ֆէլէք, աչքդ քե՛օ՛ն ըլլայ...

Օրին մէկը Ֆէլէքը, այսինքն՝ Ճակատագիրը կու գայ աղ կնիկին կ'ըսէ.

— Եկուր հետս, միասին պիտի երթանք մայրանոց, ուր մայրերը զառակ կը ծնին:

Անոնք երկուքը միասին կ'երթան: Երբ տեղ կը հասնին, Ֆէլէքը իր ակնոցը կը հանէ, ատ կնոջ աչքին կ'անցընէ:

Կինը կը սկսի տեսնալ թէ ինչպէս մայր մը զառակ ունեցաւ, բայց ան ջուրով լեցուն լէհէնի մը մէջն է ...

Կը տեսնայ ուրիշ կին մը, որ տղայ մը ծնաւ, բայց կոկորդը չուան մը կայ կապուած...

Իսկ երրորդ կնոջ ծնած զառակի կուրծքին վրայ դաշոյն մը կայ...

Կինը աս ամենը կը տեսնայ ու կը զարմանայ: Ֆէլէքը կը հարցնէ իրեն.

— Հը՛, ի՞նչ հասկցար, ըսէ՛ ինձի:

Կինը կ'ըսէ.

— Առաջինը ջուրին մէջը պիտի խեղդուի, երկրորդը չուանով պիտի կախուի, երրորդն ալ դանակը սիրտը պիտի մտնայ ու մեռնի:

— Հա՛, — կ'ըսէ Ֆէլէքը, — հիմա հասկցա՞ր իմ գօրութիւնս: Ասկէ վերջը ա՛լ մէյ մըն ալ իմ հասցէիս անէծք չկարդա՛ս, — կ'ըսէ ու կնիկին աչքէն կը հանէ ակնոցը, իր աչքին կ'անցընէ եւ կ'անյայտանայ:





21 (48). ՍԱՏԱԼԱՅԻ ՊՈՉԻՆ ԾԱՅՐԸ



որ մը մայր սատանան իր փոքրիկ սատանայիկը գրկած աննկատ նստած էր ագարակի մը ցանկապատին վրայ եւ կը դիտէր շրջապատը: Քիչ մը անդին ծեր կին մը կոպը կը կթէր կաւտ ամանի մը մէջ:

Յանկարծ կոպը կից մը կու տայ ծեր կնոջը եւ ան վար կը գլորի, կաւտ ամանը կը կտորի, կաթն ալ կը թափի: Ծեր կինը տեղէն չի կրնար ելլալ, կը սկսի անիծել.

— Ա՛ջքդ քէտնայ, չա՛ր սատանայ, ի՞նչ կ'ուզէիր ինձմէ...

Մօրը գիրկը նստած սատանայիկը կ'ըսէ.

— Ի՞նչ անիրաւ եմ մարդիկ, մենք հոս հանգիստ նստած ենք, ինչո՞ւ մեզ կ'անիծէ աս ծեր կինը:

Մայր սատանան կ'ըսէ.

— Ձագու՛կս, ճիշդ է, մենք հանգիստ նստած ենք, բայց իմ պոչիս ծայրը անտեղ է:



22 (49). ՕԳՈՍԻԱԿԵՈՍ ԿԱՅՐԸ



օգոսիանոս կայսրը շատ յաղթանակներ տարած էր, շատ երկիրներ գրաւած, ինք ալ բաւական խելացի, փիլիսոփայ մարդ մըն էր, բայց երբ Աստուծոյ մասին խօսք ըլլար, կ'ըսէր.

— Ինձի փաստ մը բերէք, որ ես հաւատամ, հրաշք մը տեսնամ, որ հաւատամ:

Օր մը Օգոստիանոսը քաղաքէ քաղաք գացած ատեն, ծովեզերքէն կ'անցնի, կը տեսնայ ծերունի մը աւազը փորած, մէջը ծակ մը շինած, ձեռքն ալ պզտիկ թաս մը առած՝ ծովուն ջուրը կ'առնէ, փոսին մէջը կը լեցնէ:

Օգոստիանոս կայսրը կը կենայ, ժամերով կը նայի ադ ծերունիին ըրածին: Չի հասկնար: Կը մօտենայ ծերունիին, կը հարցնէ.

— Ի՞նչ կ'ընես, կ'ուզեմ հասկնալ:

Ծերունին կ'ըսէ.

— Չե՞ս տեսնար, կ'ուզեմ աս ծովուն ջուրը աս փոսին մէջը պարպել:

Օգոստիանոսը կ'ըսէ.

— Ադ պտղտիկ թասով աս հսկայ ծովուն ջուրը ի՞նչպէս պիտի հոն պարպես:

Ծերունը կ'ըսէ.

— Հապա դուն աս երկիրն ու երկինքը ստեղծող ամենակարող Աստուծոյ գոյութեան մասին քու բռունցքիդ չափ ուղեղովդ ի՞նչպէս պիտի կրնաս որոշում տալ:

Օգոստիանոսը պահ մը կը խորհի, կը ծոխ, որ ծերունիին հետ խօսի, կը տեսնայ որ ծերունին անհետացած է:

Ատ վայրկեանին Օգոստիանոս կայսրը կ'ըսէ.

— Այո՛, Աստուած կայ եւ անոր գոյութիւնը ինձի պէս փիլիսոփայի մը խելքէն վեր է, քանի որ հաւատքը հոգիով է:



23 (50). ՄԷՎ ԽՕՍՐԸ ՊԻՔՅԻՒ Ի

Մարդ ու կին երկու գաւակ կ'ունենան: Աս մարդը ամէն օր գործէն վերջը ուղղակի մէյնանէ կ'երթայ խմելու: Ամէն օր աս ձեռով վաստկածը կը մսխէ: Զաւալը կինն ալ երկու գաւակներուն հետ անօթի ծարաւ կը սպասէ որ մարդը տուն պիտի գայ, հաց պիտի բերէ, բայց ի գուր:

Օրին մէկը կինը կը խնդրէ մարդուն.

— Ի՞նչ կ'ըլլայ, վաղը գործէն վերջը հաց բեր, գաւակներդ անօթի են:

Մարդը կնոջ ըսածը բանի տեղ չի դներ: Միւս օրը նորէն գործէն կ'ելլայ, շիտակ մէյնանէ կ'երթայ: Մէյնանէին տերը իր կնոջ հետ նստած կ'ըլլայ: Աս մարդը ան կինը որ կը տեսնայ, միտքը կ'իյնայ իր կնոջ ըսածը՝ կ'ելլայ, մէյնանէէն դուրս կ'երթայ:

Մէյնանէին տերը կ'ըսէ մարդուն.

— Հէ՛յ, ո՞ր կ'երթաս, տակաւին գինիդ չխմեցիր:

Մարդն ալ կ'ըսէ.

— Բան մը մոռցայ, տուն պիտի տանէի:

Մէյնանէին տիրոջ կնիկը կ'ըսէ.

— Ամա՛ն, ճանը՛մ, ի՞նչ ետեւէն կ'իյնաս. կ'երթայ՝ թող երթայ: Ինտոր ալ ըլլայ նէ, ընկոյզին մէջինը մերինն է, կեղելը ընտանիքին կը մնայ:

Աս խօսքը մարդը կը լսէ եւ ինքզինքին կու գայ: Միւս օրերը մարդը ա՛լ մէյնանէ չ'երթար, շիտակ տուն կու գայ, ձեռքը ուտելիքներով:

Կինը կը զարմանայ իր մարդուն կերպարանափոխութեան վրայ: Ասոնք ատեն մը երջանիկ կ'ապրին:

Օր մըն ալ աս մարդը իր ընտանիքը պտոյտի կը տանի: Ծամբան ադ մէյնանէին տերը եւ կինը կը տեսնան:

Մէյնանէին տերը կ'ըսէ.

— Ինչո՞ւ խմելու չես ի գար. առաջ ամէն օր կու գայիր:

Մարդն ալ կ'ըսէ.

— Քիչ մըն ալ ընկոյզին մէջինը մենք ուտենք, կեղելը ձեզի մնայ:

Մէյնանէին տիրոջ կնիկը կ'ըսէ.

— Ուրեմն լսեր է իմ ըսածս:

Դուն տես ան մէկ խօսքէն մարդը թերպիէ եղեր է: Անոր համար կ'ըսեն՝ մէկ խօսքը պիպի է:





24 (51). ՍՈՒՔԱՍՄԻՏԻՆ ՊԱՏՁԱՍԵ



ըսեն որ Մուհամմեդի օրօք դեռ ոգելից ըմպելին արգիլուած չէր եւ անոր ապական սիրօի («տոհիծի կաթ») կ'ըսէին:

Օր մը Մուհամմեդ փողոցէն անցնելու ատեն տունէ մը ուրախութեան ձայներ կը լսէ, կը հարցնէ.

— Ի՞նչ առիթով է այդ ուրախութիւնը:

Մարդիկ կ'ըսեն.

— Երիտասարդներ են, կը խմեն, կ'ուրախանան...

Քանի մը ժամ ետքը Մուհամմեդ այդ նոյն փողոցէն ետ կու գայ, կը լսէ որ այդ նոյն տունէն ողբի ձայներ կու գան: Մուհամմեդ կը հարցնէ.

— Ի՞նչ է պատճառը:

Մարդիկ կը պատասխանեն.

— Խմեցին, գինովցան եւ գիրար սպաննեցին:

Այդ ժամանակ Մուհամմեդ հաշիւ կ'ընէ. «Ոգելից ըմպելին կը գինովցնէ մարդը, ուրեմն անոր մէջը շէյթան կայ»: Եւ Ղուրանին մէջ կը գրէ. «Ոգելից ըմպելին արգիլուած է, քանի որ ան մարդոց չար բնագոյնները մէջտեղ կը հանէ»:



25 (52). ՍՈՒՔԱՍՄԻՏԵ ԵՒ ՀԱՅ ՅԱԿՈՒԲԸ



րգրումցի թուրքերը Մ'եքքէ հաճի կ'երթան: Թուրքի մը երագին Մուհամմեդ կու գայ, կ'ըսէ. «Ամէնքդ հաճի եկաք,

ամա սիչ մէկերնուդ հաճիութիւնը չընդունուեցաւ, քանի որ Էրգրումցի հայ Յակոբ մը կայ, ան ձեր Պայրամին թուրք խեղճ որբուկի մը ոտքէն մինչեւ գլուխը հագցուցեր էր: Այնպես որ միայն անոր ըրած բարիքը ընդունելի եղաւ: Մնացածներուդ ուխտը ընդունուած չէ»:

Էրգրումցի մեր թուրք դրացիները աս կը պատմէին:





26 (53). ԱՅՍՕՐ ԱԼ ԶԻԱԼ ԵՐԻՆԸ

Մոլիսի գոց շուկան խանութպան մը կ'ըլլայ: Ան շատ շահաւէտ առեստորի գործ մը կ'ունենայ: Աս խանութպանը ամէն օր կու գայ, խանութը կը բանայ, էփէի առուտոր կ'ընէ, իրիկունն ալ խանութը գոցելու առեւնը կ'ըսէ.

— Է՛, այսօր ալ զիան ըրինք:

Դիմացի խանութպանը ամէն օր աս մարդուն առուտոր ընելը կը տեսնայ, իրիկունն ալ անոր ըսածը կը լսէ, շատ կը զարմանայ քի աս մարդը աղէկ առեստոր ունի, հապա ինչո՞ւ «Այսօր ալ զիան ըրինք» կ'ըսէ:

Օր մըն ալ կը բռնէ իր դրացի խանութպանը, կը հարցնէ.

— Բարեկա՛մս, ես քու ըրած առուտորդ միշտ կը տեսնամ, շահածդ ալ զիտես, ամմա ինչո՞ւ ամէն իրիկուն խանութդ գոցելու առեւն «Այսօր ալ զիան ըրինք» կ'ըսես, ատ չե՛մ հասկնար:

— Է՛, բարեկա՛մս, — կ'ըսէ խանութպանը, — ճիշդ է, գործս աղէկ է, շահս ալ գէշ չէ, ամմա զիանը շա՛տ է, քանի որ ամէն օր մեր կեանքէն օր մը կը պակսի, մեր կեանքէն օր մըն ալ զիան կ'ընենք:

!Այնպէս որ մարդ ըսածդ՝ Աստուծոյ տուած կեանքին յարգը պէտք է գիտնայ:



27 (54). Ո՛Վ Ի ՍԱՐԳԸ

Մարդուն մէկը իր գործատորը կը դրկէ բաղնիք, կ'ըսէ.
— Գնա՛, նայէ՛, մարդ կայ՞ թէ՞ չկայ:
Գործատորը կ'երթայ, կը նայի, ետ կու գայ, կ'ըսէ.


— Վարպե՛տ, մէկ հատ մարդ մը կայ բաղնիքը:

Վարպետը աճապարանքով բաղնիք կ'երթայ, կը տեսնայ որ մարդիկ լեցուն են, տեղ չկայ որ լոգնայ: Կը զոջայ, ետ կու գայ խանութ, կ'ըսէ.

— Տղա՛յ, ես քեզի չըսի՞ նայէ մարդ կա՞ն, թէ՞ չկայ, որ երթամ լոգնամ: Դուն ալ եկար, ըսիր մէկ մարդ կայ՝ զիս դրկեցիր: Դուն մի ըսեր բաղնիքը լեցուն մարդ կար, ինձի տեղ չկար:

Գործատորը կ'ըսէ.

— Վարպե՛տ, բաղնիք գացի, դուրին առջելը խոշոր քար մը կար, եկողը վրայէն ցատկեց անցաւ: Միայն մէկ մարդ ծոեցաւ քարը գետնէն վերցուց: Ես մարդ ըլլալով՝ ատ մարդը միայն տեսայ:





28 (55). ՄԱՐԴ ՉԵՂԱՐ



այր մը իր զակին ընթացքէն գոհ չ'ըլլար, անոր դժգոհ կ'ըսէ.


— Դուն մարդ չպիտի' ըլլաս, եթէ ասանկ շարունակես:

Զաւակը շատ կ'ազդուի հօրը այդ խօսքէն, կը սկսի աշխատի'լ, աշխատի'լ եւ բարձր դիրքի կը հասնի, մինչեւ իսկ վարչապետ կ'ըլլայ: Մարդ կը դրկէ, բերել կու տայ իր հայրը, կ'ըսէ.

— Տեսա՞ր հայրի'կ, վարչապե՛տ եղայ:

Հայրը, որ արդէն ծերացած էր, գաւազանին վրայ կքած՝ կ'ըսէ.

— Վարչապետ եղար, բայց մարդ չեղար, որ զիս աս տարիքիս ոտքդ բերել տուիր:



29 (56). Ո՛Վ Ի ԿԱՐՈՒՄՍԵ



ըլլայ չ'ըլլար, երկու դրացի: Մէկը հարուստ, միւսը աղքատ: Աս հարուստ դրացիին կինը օր մը կը կանչէ աղքատ դրացիին կինը, կը սկսի գովել իր ունեցած զարդերը եւ իր մէկ հատիկ տղան: Տղան ալ ըսես նէ, տիւանին վրայ երկնցած, ոտքերը սեղանին վրայ տնկած, դրումի կուտ կ'ուտէ, կեղեւները գետինը կը թքնէ:

Աղքատ դրացիին կինը աս բոլորը լուռ կը դիտէ, կ'ըսէ.


— Կուգե՞ս իմ հարստութիւնս տեսնալ, եկուր մերին տունը, քեզի ցուցնեմ:

Անոնք միասին կ'երթան: Կը տեսնան որ աղքատ կնոջ երկու զաւակները մէյ մէկ գիրք ձեռքերնին առած նստած կը կարդան:

Անոնց մայրը կ'ըսէ.

— Ահա ասո՛նք են իմ հարստութիւնս:





30 (57). ՄԻՈՒԹԻՒՄԵ ԶՕՐՈՒԹԻՒՄԵ Ի

Մահամերձ մարդ մը կը կանչէ իր երեք զաւակները եւ կ'ըսէ.
— Ինձի ցախաւել մը բերէք:
Տղաքը կը զարմանան, կ'ըսեն.

- Հայրի՛կ, ցախաւելը ի՞նչ պիտի ընես:
- Բերէ՛ք, կ'ըսեն ձեզի:

Տղաքը ցախաւել մը կը գտնան, կը բերեն:

Հայրը կ'ըսէ.

- Հիմա ամէն մէկդ փորձեցէք, տեսնանք պիտի կրնա՞ք կոտրել

աս ցախաւելը:

Տղաքը կը փորձեն, ոչ մէկը կրնայ կոտրել:

Հայրը ձեռքը կ'առնէ ցախաւելը, կը քակէ վրայի կապը եւ ամէն մէկ ճիւղը առնելով՝ մէկիկ-մէկիկ կը կոտրէ: Կ'ըսէ.

- Հիմա տեսա՞ք, զաւակներս թէ ի՞նչպէս ցախաւելը կոտրեցի:

Այդպէս ալ եթէ դուք իրարմէ բաժան-բաժան ըլլաք՝ ձեզ դիրաւ կը յաղթեն, բայց եթէ իրարու հետ սէր եւ միութիւն ունենաք՝ ձեզ ոչ ոք կրնայ յաղթել:



31 (58). ԱՆՍԱՔ ԵՆԶԵՄԵԱԼԸ

Օրին մէկը փողոցէն անջեցեալ մը կը տանէին: Ժողովուրդը հաւաքուած՝ լուռ կը դիտէր: Ծերունի մը իրեն-իրեն բարձրաձայն կ'ըսէ.

- Տեսնաս աս անջեցեալը մեռա՞ւ, չէ՞նէ տահա պիտի ապրի...

Երիտասարդ մը կը լսէ, կ'ըսէ.

- Պապի՛կ, մեռնողը կը մեռնի եւ վե՛րջ. ալ ան ի՞նչպէս կ'ապրի:

— Է՛հ, զաւա՛կս, — կ'ըսէ ծերունին, — եթէ անջեցեալը իր կեանքին մէջը ո՛չ մէկ լաւ գործ, ո՛չ մէկ լաւ յուշ ձգած է, ուրեմն ան մեռա՛ւ ու գնա՛ց: Բայց եթէ անջեցեալը իրմէ վերջը ձգած է լա՛ւ զաւակներ, լա՛ւ գործեր եւ լա՛ւ յուշեր ձգած է, ան չի մեռնիր, անոր յիշատակը անմա՛հ կը մնայ:





32 (59). ԻՆՉ ԻԻ, ԻՆՉ ԵՂԱՅ, ՏԱՅԱ ԻՆՉ ՊԻՏՆ ԸԼԼԱՍ

Մարդուն մէկը ճամբան քալած ատենը չոր գանկ մը կը տեսնայ, ոտքով կը խաղայ գանկին հետ: Կը մայի որ գանկին ճակատին գրուած է. «Ի՛նչ էի, ի՛նչ դարձայ, տահա ի՛նչ պիտի ըլլամ»:

— Հասկցա՛յ, — կ'ըսէ մարդը, — բան մը չէիր՝ ծնունդ առիր, մեծցար՝ մարդ դարձար, ետքը մեռար՝ չոր գլուխ դարձար, ամմա տահա ի՞նչ պիտի ըլլաս, ատ չհասկցայ:

Կ'առնէ գանկը, կը բերէ տուն, փայտանոցը կը պահէ: Փայտանոցին մէջն ալ իր ոսկիները կը պահէ եղեր ու միշտ կը մտնայ, ժամերով կը հաշուէ եղեր:

Ատ մարդուն կնիկը կը կասկածի, կ'ըսէ. «Սա մարդը ի՞նչ կ'ընէ ժամերով փայտանոցին մէջը»: Կ'երթայ կը տեսնայ գանկը, կ'ըսէ.

— Հա՛, կ'երեւի ժամանակին աս իր սիրունիկն եղած է, որ ժամերով փայտանոցը կը մտնայ, դուրս չ'ելլար:

Կինը գանկը կ'առնէ, կը տանի, կը նետէ թունտիորը, կ'այրէ, ճաշն ալ վրան կը դնէ, կ'եփէ:

Մարդը տուն կու գայ, ճաշը կ'ուտեն:

Մարդը կ'ըսէ.

— Կնի՛կ, ասօրուան ճաշը շատ ռամով եղած էր:

— Հա՛, գիտե՞ս ինչով եփեցի որ համով եղաւ. քու սիրունիկդ գլուխովը եփեցի: Դուն ինձի ապո՞ւշ կարծեցիր:

Մարդը կ'ըսէ.

— Հա՛, հիմա՛՛ հասկցայ ինչու՛ գանկի ճակտին գրուած էր. «Ի՛նչ էի, ի՛նչ դարձայ, տահա ի՛նչ պիտի ըլլամ»: Ես ալ ըսի՛՛ ատ առնեմ, տուն բերեմ պահեմ, որ բան մը չըլլայ, ամմա տահա ըլլալի՛ք կայ եղեր, տահա գլխուն գալի՛ք կայ եղեր...



ԶԱՒԵՇՏԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

I (60). ՍՈԼԼԱՆ ԵՖ ՍԱՏԱՆԱՆ



Որ մը մօլլան կ'անցնի եկեղեցիի մօտէն, կը տեսնայ դուռը բաց է, ներսն ալ մարդ չկայ: Մօլլային խելքին կը փչէ ներս մտնալ ու տեսնալ թէ կեա՛վորներուն աղօթատեղին ինչ կայ: Կը մտնայ, կը տեսնայ սրբապատկերներուն առջեւ մոմ կը վառի, իսկ սատանային պատկերին առջեւ ոչ մէկ մոմ կայ:

Մօլլան զարմացած կը մտածէ. «Աս ի՞նչ անիրաւ եմ կեա՛վորները: Աս պատկերին առջեւ ինչո՞ւ մոմ չեն վառած»: Կ'առնէ մոմ մը կը վառէ սատանային առջեւը եւ դուրս կ'ելլէ եկեղեցիէն:

Գիշերը մօլլայի երագին մէջ կը յայտնուի սատանան եւ կ'ըսէ. «Մօլլա՛, դուն լաւ մարդ ես, կեա՛վորները կ'արհամարհեն եւ իմ պատկերիս առջեւ երբեք մոմ չեն վառեր, իսկ դուն եկար վառեցիր, ասոր համար ալ ես կ'ուզեմ իմ երախտագիտութիւնս քեզի յայտնել, եկո՛ւր իմ ետեւ»:

Սատանան մօլլան ջրհորի մը մօտ կը տանի եւ կ'ըսէ.

— Հիմա ես քու մէջքդ չբռնեմ մը պիտի կապեմ եւ քեզ պիտի իջեցնեմ այս ջրհորին մէջ: Հոն տուփի մը մէջ գանձ կայ: Կ'առնես, ինձի լուր կու տաս որ ես քեզ վեր քաշեմ:

Ու մօլլայի մէջքէն կը կապէ, կ'իջեցնէ ջրհորը:

Մօլլան բաւական կ'իջնայ, մէյ մըն ալ կը զգայ, որ ջրհորին մէջ մէկը իր ոտքերէն վար կը քաշէ: Մօլլան կը պօտայ սատանային.

— Մէկը իմ ոտքերս բռնած վար կը քաշէ:

Սատանան կ'ըսէ.

— Միգէ՛ անոր վրայ, ան քեզ կը ձգէ:

Եւ մօլլան կը միգէ:

Մէջ մըն ալ թացութենէն մօլլան յանկարծ կ'արթննայ: Կը տեսնայ արդէն առտու է: Կը հասկնայ եղածը, բայց կը մտածէ թէ ինչ պիտի ըսէ իր կնոջը եւ ինչ պատճառ պիտի բռնէ: Եթէ պատմէ երազը, քանի մը մեղք ունենալը մէջտեղ պիտի ելլայ. կեամբուրներուն աղօթատեղին մտած է, սատանայի պատկերին առջեւը մոմ վառած է, անկողիին մէջ թորջած է: Մանաւանդ կը վախնայ որ կինը ուրիշներուն ալ կը պատմէ՝ խափ-խափտառակ կ'ըլլայ եւ մօլլայութենէն կը զրկուի:

Արդէն լուսցած է, բայց մօլլան իր թաց անկողիինէն չէ ելած:

Մօլլային կինը կու գայ, կ'ըսէ.

— Ա՛յ մարդ, ինչո՞ւ անկողիինէն չես ելլար, արդէն ուշ է: Արդեօք հիւս՞նդ ես:

Մօլլան կ'ըսէ.

— Ո՛չ, հիւանդ չեմ:

— Հասա ի՞նչ ունիս:

Մօլլան կը մտածէ ի՞նչ ըսէ: Կ'ըսէ.

— Նստէ՛ որ պատմեմ թէ ի՞նչ գէշ երազ տեսած եմ: Կեչիի ծառ մը կար, առ ծառին վրայ մէկ հատ եւս կեչիի ծառ կար, անոր վրայ շինուած էր միմարէն եւ ինծի ալ վրան հաներ էին, որ «Ալլահուաքպար» կարդայի: Քանի հովը կը փչէր՝ կեչիի ծառերը կը շարժէին, վրայի միմարէն ալ ասդին ասդին կը շարժէր, ես ալ վախէս փաթթուեր էի միմարէին, որ վար չիչնայի: Կնիկ, դուն ըլլայիր իմ տեղս, ի՞նչ կ'ընէիր:

Կինը, որ ուշի ուշով կը լսէր մօլլային պատմածները, կ'ըսէ.

— Վա՛խ մարդս, այդ ի՞նչ գէշ երազ տեսած ես: Ես քու տեղդ ըլլայի նէ՛ վախէս տեղս կ'ընէի:

Մօլլան ալ արդէն առ խօսքին կը սպասէր, կ'ըսէ.

— Ծիշո՞ այդպէս ես ալ վախէս տեղս ըրի, — եւ կը ցուցնէ անկողի-նը, որ թափ-թաց եղած էր:

Եւ մօլլան առ խորամանկութիւնով գլուխը կ'ազատէ:



2 (ՃԻ). ՀԱՍԱՆԸ ԵՒ ԻՐ ԻՃԸ

Ատենին՝ Հասան անունով մարդ մը եւ իր կինը կ'ապրէին խաղաղ կեանքով: Երկուքն ալ արդէն տարիքոտ էին, բայց շատ միամիտ եւ հաւատացեալ: Կը հաւատային որ աշխարհի վրայ մարդու կերպարանքով շէյթաններ կան:

Հասանը տղայ գաւակ չէր ունեցած եւ առ իրեն համար շատ մեծ ցար մըն էր, քանի որ օգնական չունէր:

Ամէն օր շատ կանուխ կ'արթննար եւ իր էշուն վրայ նստած կ'երթար իր այգին: Արեւնամուտին գործը կը վերջացներ, անորէն էշուն հետ կու գար գիւղ: Հասանին կինն ալ կը մնար տունը, ճաշ կը պատրաստէր, կովը կը կթէր, հաւերուն կուտ կու տար, հաւկիթները կը ժողվէր, բուրդ կը մանէր, գուլպաներ կը հիւսէր, որ փազարի օրը էրիկը տանի փազար ծախէ:

Առտու մը կինը կանուխէն կը պատրաստէ կաթը, մածունը, հաւկիթները եւ գուլպաները, որ Հասանը տանի փազար ծախէ:

Հասանը առ ամէն ծախուելիքները խորճիներուն մէջ կը տեղատրէ, կը դնէ էշուն վրայ, ճամբայ կ'ելլայ, էշուն սանձը բռնած: Ինքը առջեւէն, իր հաւատարիմ էշն ալ ետեւէն: Ծամբան Հասանը կը մտածէ. «Աս ապրանքները կը ծախեմ՝ ա՛ս կ'առնեմ, ա՛ն կ'առնեմ, ինծի մէկ հատ եմէնի կ'առնեմ»: Սապէս մտածելով երթալու ատենը ճամբան երկու խորամանկ աւազակներ կը նկատեն գիւղացին իր բեռնաւորուած էշով, կ'որոշեն գիւղացիին էշը թոցնել:

Աւազակներէն մէկը կամացուկ մը կը մօտենայ, էշուն սանձը կը հանէ, իր գլուխը կ'անցնէ եւ կը սկսի գիւղացիի ետեւէն քալել, ինչպէս որ էշը կը քալէր: Միւս աւազակը կ'առնէ էշը եւ կը փախի: Հասանը բան մը չի գգար եւ կը շարունակէ քալել, սանձը ձեռքը բռնած: Մէջ մըն ալ աւազակը գլուխը կը դարձնէ որ տեսնայ ընկերը ո՛ր կողմ գացած է: Հասանը կը տեսնայ էշը չի քալէր, ետ կը դառնայ՝ էշը համոզելու որ քիչ մնաց ճամբան, հիմա պիտի հասնին: Մէջ մըն ալ կը տեսնայ մարդ

մը սանձը վիզը, կայնած է իր դիմացը: Հասանը զարմացած կը հարցնէ.

— Ո՞վ ես դուն:

Աւագակը, որ առաջուրնէ պատրաստած էր ըսելիքը, խեղճ ձեռով մը կ'ըսէ.

— Ես քու հարազատ էշդ եմ, հիմա յանկարծ մարդ դարձայ:

Հասանը կը հարցնէ.

— Եթէ մարդ էիր, ի՞նչպէս էշ դարձած էիր:

Աւագակը խեղճ ու կրակ ձեռով մը կը պատմէ որ ինքը միշտ գինովցած տուն կու գար, իր մայրը կը տանջէր, կը հայհոյէր, կը ծեծէր: Օր մը նորէն մայրը շատ ծեծեր է եւ մայրը սրտանց անիծեր է իրեն, ըսեր է. «Երանի է՛շ դառնաս», եւ ինք ալ էշ դարձեր է: Ետքը փազար տարած է եւ ծախած:

— Ահա քանի տարի է, — կը շարունակէ աւագակը, — հնազանդ քեզի կը ծառայեմ:

Հասանը շատ ազդուած առ լսածներէն՝ կ'ըսէ.

— Հապա ի՞նչպէս է որ նորէն մարդ դարձար:

Աւագակը կ'ըսէ.

— Երեւի մայրս զղջացեր է եւ կարօտցեր է ինձի եւ ետ առեր է իր անէծքը, որ ես հիմա նորէն մարդ դարձայ, — ու շատ կը խնդրէ որ իրեն ազատ արձակէ, որ իր մօրը քով երթայ:

Հասանը շատ կը մեղքնայ, անոր վիզէն սանձը կը հանէ, ազատ կ'արձակէ եւ կը խրատէ որ ուրիշ անգամ այլեւս չխմէ եւ իր մայրը չծեծէ:

Հասանը ձեռնուրնայն ետ կը դառնայ, «Ալլահ, Ալլահ» ըսելով եւ գովաբանելով Աստուծոյ հրաշքները: Ան տուն կը հասնի, կնոջը կը պատմէ պատահածը: Կինն ալ շատ կ'ազդուի: Այդ օրը երկուքն ալ ճաշ չեն ուտեր՝ ախ ու վախ կ'ընեն: Միտքերնին կը բերեն թէ ինչքա՛ն ծանր բեռներ կը դնէին խեղճ մարդուն կոնակը՝ անոր էշ կարծելով, ցուրտին բուքին խոնաւ տեղը կը պսակեցնէին, խոտ կը կերցնէին...

Եւ այսպէս երկու օր անցնելէն վերջը մարդ ու կնիկ կը մտածեն որ առանց էշի իտարէ չեն կրնար ընել, կ'որոշեն իսկական էշ մը գնել: Հասանը փազար կ'երթայ, կը նայի, մէյ մըն ալ ի՛նչ տեսնայ՝ իրենց էշը հոն է: Հասանը կը մօտենայ իր էշին եւ ուշադիր կը գննէ, կը տեսնայ որ ճիշդ ու ճիշդ ա՛ն է: Կը ծոփ անոր ականջին կամացուկ մը կը փսփսայ.

— Երեւի նորէն խմած տուն գացիր, մայրդ ծեծեցիր եւ ան նորէն քեզ անիծեց: Բայց մի՛ կարծեր որ աս անգամ պիտի խաբուիմ եւ քեզ գնեմ:



3 (62). ԱՆԽԵԼՔ ՍԱՐԳԻՎ



Ուլայ չ'ըլար, կին մը կ'ըլլայ: Անոր երիտասարդ մանչը քանի մը տարի առաջ մեռած կ'ըլլայ:

Օր մը աս կինը աղբիւր կ'երթայ՝ ջուր բերելու: Ատ միջոցին երիտասարդ մը կու գայ՝ ջուր խմելու:

Կինը կ'ըսէ.

— Ա՛խ տղա՛ս, դուն անդիի աշխարհքէ՞ն եկար:

Տղան կը նայի որ աս կնոջ խելքը պակաս է, կ'ըսէ.

— Այո՛, ես անդիի աշխարհքէն եկայ եւ ետ պիտի երթամ:

— Ամա՛ն, իմ գառակս տեսա՞ր հոն:

— Այո՛, տեսայ, — կ'ըսէ երիտասարդը:

— Ամա՛ն, ի՛նչ կ'ըլլայ, — կ'ըսէ կինը, — քանի մը բաներ եփեմ,

տար տուր իրեն, որ ուտէ:

Տղան կը տեսնայ կնկան վիզը շարուած ոսկիները, կ'ըսէ.

— Դուն աս ոսկիների հանէ, ինձի տուր, ես կը տանիմ տղայիդ կու տամ, ան ատոնք կ'արէ, կ'ուտէ:

Կինը կ'ըսէ.

— Ծա՛տ աղէկ կ'ըլլայ, — վիզէն ոսկիները կը հանէ, կու տայ տղուն:

Տղան կ'առնէ ոսկիները, կ'երթայ:

Կինը տուն կու գայ, ամուսինին կ'ըսէ.

— Մա՛րդ, գիտե՞ս այսօր զով տեսայ: Աղբիւրին քովը մեր մանչուն քովէն մէկը եկած էր, ես ալ ոսկիներս վիզէս հանեցի, տուի իրեն, որ անդիի աշխարհքը՝ մեր մանչուն տանի քի ան արէ, ուտէ:

Մարդը կ'ըսէ.

— Ծօ՛, անխե՛լք կնիկ, անիկա տալավերանի է եղեր, ինչո՞ւ

խաբուեցար: Ան քու ոսկիներդ աներ փախեր է: Շո՛ւտ, ձիս պատրաստե,
ես երթամ զհինք գտնամ:

Կինը կը պատրաստէ ձին: Մարդը կնոջը կը հարցնէ.

— Ո՞ր կողմը գնաց:

— Աղբիւրին կողմը, — կ'ըսէ կինը:

Ան ատենն ալ օթօ-մօթօ չկար, մարդիկ ձիով կ'երթային: Ճամ-
բան երթալու ատենը մարդը տղայ մը կը տեսնայ, կը հարցնէ.

— Ան չէ ամմա, անդիի աշխարհքէն եկողը դո՞ւն ես:

Տղան ալ կ'ըսէ.

— Ո՛չ, ես չեմ, ասկէ քիչ մը առաջ ուրիշ տղայ մը անցաւ, երեւի
ան է, բայց անիկա անտառ մտաւ: Զիդ հո՛ւ ձօգէ, շո՛ւտ գնա, գտիր:

Մարդը ձին կը ձօգէ, վազելով անտառ կը մտնայ: Տղան ալ ձին
կը հեծնի կ'երթայ:

Մարդը անտառէն դուրս կ'ելլայ, կը տեսնայ որ ո՛չ ձին կայ, ո՛չ
ալ տղան: Մարդը տուն կու գայ:

Կինը կ'ըսէ.

— Մա՛րդ, գտա՞ր տղան:

— Ո՛չ, չգտայ:

— Զի՞ն ուր է:

— Զին ալ անդիի աշխարհքը դրկեցի, մեր տղուն պէտք կ'ըլլայ:



4 (63). ՊԱՍԻՆԱՅԻՆ ՀՈՒՄՈՒՐ

Մռայ Թուրքիոյ հայերէն ոմանք Պոլիս չէին կրնար իրենց
ապրելամիջոցը հայթայթել եւ այդ պատճառով շատերը կը
փոխադրուէին խոյ գաւառներ, ուր դիւրին էր ապրիլը. իրենց
արհեստով կ'աշխատէին, քիչ մը դրամ կը ժողվէին: Անոնք կա՛մ կօշկա-
կարութիւն կ'ընէին, կա՛մ հնակարկատութիւն, կա՛մ սափրիչութիւն, կա՛մ
կլայեկութիւն եւ երբեմն ալ, եթէ արհեստ չգիտնային, պախալի խանութ
կամ սրճարան մը կը բանային եւ գիւղացիներուն հետ կը յարմարէին,
ինչքան ալ որ գիւղացիները Մաւաքացիներուն պէս խորամանկ չէին,
այլ միամիտ:

Յիսուն տարեկան հայ ամուրի մարդ մը Պոլսէն Թուրքիոյ խորերը
գտնուող գիւղ մը կ'երթայ եւ հոն սրճարան մը կը բանայ:

Այս մարդը լեզուանի եւ ճարպիկ մէկը կ'ըլլայ: Նախ՝ իր հայ ըլ-
լալը յայտնի չ'ըներ. իր անունը Յովսէփ կ'ըլլայ, բայց գիւղացիներուն
կը կլլեցնէ որ իր անունը Եուսուֆ է:

Մահմետական օրէնքին մէջ էրիկմարդիկ կնիկներուն հետ միա-
սին այցելութեան չէին երթար, եթէ անգամ հազուագիտ դէպք մը պա-
տահէր: Կինը կ'երթար կիներու սենեակը, հարեմլըխը, իսկ էրիկմար-
դիկ՝ սելամլըխը: Կիները երբեք շփում չէին ունենար էրիկմարդոց հետ:
Էրիկմարդոց մատուցողները էրիկմարդիկ էին, կնիկներունը՝ կիներ:
Ընթրիքը ուտելէն վերջը բոլոր էրիկմարդիկ կ'երթային սրճարան՝
իրար հետ զրուցելու, ժամանակ անցունելու եւ ուշ ատեն տուն կու գա-
յին՝ պառկելու: Իսկ կիները իրարու մօտ կ'երթային մինչեւ իրենց ամու-
սիներուն գալը: Հոն ազատ համարձակ կը նստէին, եթէ մէկը նոր հա-
գուստ մը կարած ըլլար, այդ կը նայէին: Գիւղացիներուն մէջ աւելի
խիստ կը պահպանուէր Մուհամմէտին այս օրէնքը:

Եուսուֆը իր գործը կարգի դրած էր: Ամէն իրիկուն գիւղացիները

կու գային իր սրճարանը, թէյ կը խմէին, սուրճ կամ նարկիլէ կ'ապրսւսրէին, իրարու հետ կը զրուցէին, հեքիաթներ-մասալներ կը պատմէին մինչեւ ուշ գիշեր: Բայց զիրենք սրճարանին մէջը երկար պահողը Եուսուֆն էր: Այնպիսի սուտ բաներ, չեղած չլսուած պատմութիւններ կը յօրինէր որ յաճախորդները հետաքրքրուին, աւելի շատ նստին. շուտ չցրուին, որպէսզի կրկին ու կրկին սուրճ, թէյ կամ նարկիլէ ապսպրեն:

Եուսուֆը գիտէր իր գործը: Կը նայէր որ արդէն գիւղացիները խօսելիք ու պատմելիք բան այլեւս չունին ու պիտի ցրուին. ինք բան մը կը սկսէր պատմել, անոնց ոտքը կը կապէր: Ան երբեմն այնպիսի պոչով սուտեր կը յօրինէր որ արմանք-զարմանքի մէջ կը ձգէր իր յաճախորդները: Բայց գիշեր մը այնպիսի պոչով սուտ մը գլտորեց որ բոլոր գիւղացիները զարմացան ու չկրցան կլլել:

Այդ գիշեր գիւղացիները նստած էին սրճարանին մէջ: Անոնցմէ մէկը քանի մը հատ մեծ պամփաներ բերած էր իր հետ որպէս հուման եւ կը ցուցներ գիւղացիի մը: Այդ պահուն Եուսուֆը տեսնալով այդ պամփաները մեծ սուտ մը կը յղանայ մտքին մէջ ու կ'ըսէ անոնց.

— Ասոնք ի՞նչ պամփաներ են որ, Ամասիայի մէջ այնպիսի՝ պամփա կ'աճեցնեն որ քաղելու համար քառասուն ոտք սանդուխքով կ'ելլեն անոր տունկը:

Եուսուֆը մինչեւ այդ օրը շատ սուտեր կլլեցուցած էր գիւղացիներուն, բայց քանի որ իրենք ալ հողի մարդիկ էին, առընչութիւն ունէր իրենց գործին հետ, եւ մեծ հետաքրքրութեամբ կը լսէին:

Այդ գիշեր բոլոր գիւղացիները սրճարանէն այդ չլսուած պամփային մասին խօսելէն ելան:

Եուսուֆը այդ պոչով սուտը գլտորած էր, որպէսզի յաճախորդները երկար նստէին, բայց հիմա կը վախճար որ օր մը դուրսէն օտարական մը կու գայ առ խուլ, յետամնաց վայրը, եւ գիւղացիները անոր կը հարցնեն իր պատմած պամփային մասին եւ իր բոլոր սուտերը մէջտեղ կ'ելլան, քանի որ գիւղացիները դիրափառու են, բայց մէյ մը եթէ գիտնան որ զիրենք խաբէր են, այն առեւն շատ կարծօր գլուխ կը դառնան: Ա՛յ Եուսուֆը պէտք է ձգէ փախի առ տեղէն:

Կ'անցնի երկու օր, երբ պամփայի մասին խօսակցութիւնը դեռ թարմ էր գիւղացիներուն գլխուն մէջը, եւ յանկարծ գիւղ կը մտնայ հրէայ փերեզակ մը: Գիւղացիներէն մէկը կը հանդիպի անոր, ասեղ, դերձան, ուլունք կը գնէ ու կը հարցնէ թէ ինքը ուրկէ է: Հրէան կ'ըսէ.

— Ես իմ գործով ամէն գիւղ ու քաղաք կը շրջիմ:

Գիւղացին կը մտածէ՝ սա մարդը սրճարան տանիմ ու բոլոր գիւղացիներուն եւ Եուսուֆին մօտ հարցնենք պամփայի մասին, ու կ'ըսէ հրէային.

— Է՛կո՛ւր մեր Եուսուֆին սրճարանը երթանք, մէյ մը տեսնուիս: Ան ալ սա տեղացի չէ, դուրսէն եկած է, գոհ կը մնայ քեզ տեսնալով, — կ'ըսէ, ու հրէան ալ նկատի առնելով որ սրճարանին մէջ գիւղացիներուն բան-ման կը ծախէ, կ'ելլան կու գան Եուսուֆին սրճարանը:

Եուսուֆը օտարականը տեսնալուն պէս դող կ'ելլայ: Կը մտածէ որ հիմա գիւղացիները պամփայի մասին խօսք եթէ բանան՝ իր սուտը մէջտեղ պիտի ելլայ:

Եուսուֆը առիթ մը կը գտնայ ու հրէային կամացուկ կը հասկցնէ որ ինքը այդպիսի սուտ մը կլլեցուցած է գիւղացիներուն, բայց կը կարծէ թէ դեռ չեն մարսած, եւ եթէ յանկարծ այդ մասին խօսք ըլլայ, շատ կը խնդրէ որ իրեն ջորին երեսը չհանէ:

Հրէան կ'ըսէ.

— Դուն հոգ մի՛ ըներ: Ես բան մը կը յարմարցնեմ:

Եւ Եուսուֆը քիչ մը սիրտ առած կ'երթայ սուրճ, թէյ պատրաստելու, նոր եկող յաճախորդներուն համար:

Արդէն սրճարանը գիւղացիներով լեցուն է: Ասկէ-անկէ հարցեր տալէ ետքը կարգը կու գայ պամփային: Ան մարդը որ հրէան սրճարան բերած էր, կը հարցնէ իրեն.

— Բարեկա՛մ, դուն ըսիր որ ամէն գիւղ ու քաղաք եղած էս, արդեօք Ամասիա ալ եղա՞ծ էս, կամ լսած ունի՞ս այդ քաղաքին պամփային մասին: Մի՛ք Եուսուֆը մեզի պատմեց թէ քառասուն ոտք սանդուխով կ'ելլեն եղեր պամփաները քաղելու, հապա ուրեմն այդ թուփին պամփան ի՞նչ մեծութիւն կ'ունենայ, կ'աղաչենք պատմէ մեզի:

Հրէան կ'ըսէ.

— Ինչպէս ըսի, ես գործիս բերումով եղած եմ շատ գիւղեր ու քաղաքներ, բայց դժբախտաբար դեռ առիթը չեմ ունեցած այցելելու Ամասիա քաղաքը, որ աչքովս տեսնայի այդ տեղի պամփայի թուփին մեծութիւնը եւ անոր պամփային ձեւը:

Բոլոր գիւղացիները բերաննին բաց մտիկ կ'ընեն, իսկ Եուսուֆին սիրտը ահ մը կը մտնայ, որ ուր որ է իր սուտը մէջտեղ պիտի հանէ հրէան: Հրէան կը շարունակէ.

— Թէեւ Ամասիա չեմ եղած, բայց անոր մօտիկը գտնուող հանքային ջուրերու բաղնիքին մէջ եղած եմ, ոտքերուս յօդացաւին համար: Լոգանքէն ետքը սրբիչով փաթթուած եկայ, նստեցայ ինծի յատկացուած տեղը, քէպապ մը ապսարեցի, կերայ, չայ մըն ալ վրայէն խմեցի ու կոնակիս վրայ պառկեցայ, որ քիչ մը քնանամ: Մէյ մըն ալ տեսայ, գլխուս վրայ ծառէն կախուած կլոր դեղին սեխեր: Սիրտս քաշեց շիտակը: Կանչեցի սպասաւորը, խնդրեցի որ այդ սեխերէն մէկը կտրէ, բերէ՛, ուտեմ: Սպասաւորը շատ քաղաքավարի ինծի ըսաւ. «Ներողամիտ կ'ըլլաք, էֆէնտի՛, դուք կը սխալիք, անոնք սեխեր չեն, այլ Ամասիայի պամիայի հունտեր են»:

Այս որ կը լսեն գիւղացիները, ամէնքը մէկ բերան դարձած իրարու կ'ըսեն.

— Եթէ Ամասիայի պամիան սեխի չափ հունտեր ունի, ուրեմն անոր թուփը ինչքա՛ն մեծ ու բարձր կրնայ ըլլալ, — եւ կը հաշտուին այդ մտքին հետ:

Իսկ Եուսուֆը, որ կը լսէ իր պոչով սուտին գեղեցիկ եզրափակումը, ուրախութենէն վեր կը թռի եւ ամէնուն իր հաշտին սուրճ եւ թէյ կը հիւրասիրէ, իսկ հրէան իր տունը ճաշի կը հրաւիրէ:



5 (64). ԵՐԿՈՒՄ ՈՍԿԻՆ



արդուն մէկը միշտ ասկէ անկէ պարտք կ'ըներ՝ խոտանալով վերադարձնել, բայց խոստումը չէր կատարեր: Օրին մէկը՝ աս մարդը ուրիշ մարդէ մըն ալ երկու ոսկի պարտք կ'առնէ եւ չի տար: Պարտատէրը ամէն օր կու գայ իր երկու ոսկին ուզելու: Ան ալ կ'ըսէ.

— Չունի՛մ:

Վերջապէս պարտատէրը այնքան կ'երթայ կու գայ որ աս մարդը կը մտածէ սուտ մեռել ըլլալ: Իր կնոջը եւ աղջկանը կ'ըսէ.

— Երբ որ պարտատէրը գայ, ես պիտի սուտ մեռել ըլլամ, անշարժ պիտի պառկիմ, վրաս ճերմակ չարշաֆով մը կը գոցեք, կը տանիք կը թաղեք: Երբ յուղարկաւորները ցրուին, կու գաք ինծի հողին տակէն կը հանեք:

Քանի մը օր ետքը պարտատէրը նորէն կու գայ իր երկու ոսկին ուզելու: Կը տեսնայ մարդը մեռեր է, վրան ալ ճերմակ չարշաֆ մը փոեր են: Քիչ մը կը սպասէ, կը տեսնայ որ ատ մարդը կ'առնեն կը տանին գերեզմանատուն եւ կը թաղեն: Բոլոր յուղարկաւորները կը ցրուին: Բայց պարտատիրոջ հաւատալը չի գար, միտքէն կ'ըսէ. «Երեւի հոստեղը խաղ մը կայ. ես փոսի մը մէջ մտնամ պահուրտիմ, տեսնամ վերջը ի՞նչ պիտի ըլլայ»:

Մութը կոխելուն պէս՝ սուտ մեռնող մարդուն կինը եւ աղջիկը, պայմանին համաձայն, կը սկսին հողը փորել: Ընդհանրապէս ատ պահուն քանի մը աւազակներ կու գան գերեզմանատուն, որ բաժնեն իրենց գողցած դրամները: Մայր ու աղջիկ վախէն ուրիշ փոսերու մէջ կը պահուրտին: Աւազակները կու գան, իրենց գողցած արծաթէ դրամները կը լեցունեն ատ գերեզմանաքարին վրայ, որ իրարու մէջ բաժնեն, բայց կը տեսնան որ իրենց ղեկավարը չկայ, ուրեմն ոստիկանները սպաններ են: Կը

մտածեն նոր ղեկավար ընտրել, որ դրամները հալալ բաժնէ, բայց որո՞ւն պիտի ղեկավար ընտրեն: Աւազակներէն մէկը կ'ըսէ.

— Տեսէ՞ք, հոս նոր թաղուած մեռել մը կայ. եկէ՛ք հանենք, ծառէն կապենք, մեզմէ ով որ քաջ է, թող աս մեռելը սուրով երկու մասի բաժնէ՝ ա՛ն ալ մեր ղեկավարը կ'ըլլայ:

Աւազակները կը սկսին փորել հողը, աս նոր թաղուած մեռելը կը հանեն, ծառէն կը կապեն, մէջերնէն ամենէն քաջը սուրը ձեռքը կը մօտենայ որ կիսէ, աս մարդը որ մինչ այդ լուռ էր եւ աչքերը՝ գոց, աչքերը կը բանայ, ձեռքերը վեր կը վերցնէ, կը պօտայ.

— Հէ՛յ մեռելնե՛ր, արթնցէ՛ք, մեզ սպաննելու եկած են:

Մօտիկ փոսերուն մէջէն աս մարդուն կիսն ու աղջիկը գլուխնին կը հանեն, պարտատէրն ալ իր փոսին մէջէն կ'ելլայ, գերեզմանային ձայնով կը սկսի պօտալ: Աս աղմուկ աղաղակին մէջ՝ աւազակները կը կարծեն թէ իրապէս մեռելները արթնցան, դրամները հոն կը ձգեն, լեղապատառ կը փախին կ'երթան:

Ասոնք չորսով կը բաժնեն աւազակներուն դրամները, բայց պարտատէրը իր երկու ոսկին ալ կ'ուզէ:

Ան ալ կ'ըսէ.

— Աղքա՛ն դրամ քեզի տուինք, չբաւե՞ց:

Պարտատէրը կը շարունակէ իր երկու ոսկին ուզել.

«Պիտի տաս – չեմ տար» ըսելով կը սկսին կոռուիլ:

Աս միջոցին աւազակները իրենցմէ մէկը կը ղրկեն, որ տեսնայ իրենց ձգած դրամները ի՞նչ եղան: Ան ալ կու գայ, գլուխը ծառերու ճիւղերուն արայէն ներս կը խորթ, կը լսէ, որ աս մարդիկը կը կոռուին, կիսն ու աղջիկն ալ մէջտեղնին կ'ուզեն իրարու հաշտեցնել:

Երկու ոսկին չտուող մարդը կը տեսնայ աւազակին գլուխը, անոր գլխուն գտակը կը հանէ, կու տայ պարտատիրոջ, կ'ըսէ.

— Ա՛ն աս գտակը քու երկու ոսկիիդ փոխարէն:

Աւազակը լեղապատառ կ'երթայ, կը պատմէ իր ընկերներուն թէ այնքան շատ մեռելներ էին արթնցած որ այդքան ոսկիները չէին բաւեր. տահա մէկուն ալ երկու ոսկիին փոխարէնը իր գտակը գլուխէն առին, տուին իրեն:

Իր աս քաջագործութեան համար աս աւազակը իրենց ղեկավար կ'ընեն:



6 (65). ԾՈՅԼ ԱՏԱԴՁԱԳՈՐԾԵ

Արդուն մէկը, որ նոր ամուսնացած էր, կ'երթայ ատաղձագործի մը քով, օրօրոց մը կ'ապսպրէ իր նոր ծնելիք երեխային համար, եւ կանխավճարն ալ կու տայ: Կ'անցնի ամիս մը, մարդը կ'երթայ կը պահանջէ օրօրոցը: Ատաղձագործը կ'ըսէ.

— Ա՛յ մարդ, դեռ երեխան չէ ծնած, ինչո՞ւ կ'անապարես:

Մարդը կ'ելլայ իր տունը կ'երթայ: Կ'անցնի ժամանակ մը, երեխային ծնելու ատենը կը մօտենայ, մարդը նորէն կ'երթայ, կը պահանջէ ապսպրած օրօրոցը: Ատաղձագործը որ ծոյլին մէկն էր, կ'ըսէ.

— Գնա՛, թող երեխան բարով-խերով ծնի, մինչեւ այդ ժամանակը օրօրոցը պատրաստ կ'ըլլայ:

Նորէն մարդը ճամբու կը դնէ:

Օրին մէկը կը ծնի աղջիկ գաւակ մը: Մարդը նորէն կ'երթայ օրօրոցը պահանջելու: Կը տեսնայ խանութը գոց է: Քանի մը օր վերջը նորէն կ'երթայ, ատաղձագործը կ'ըսէ.

— Գիտե՞ս, երկու շաբաթ հիւանդ պառկած էի, հիմա պիտի սկսիմ շինել:

Քանի մը օրէն մարդը նորէն կու գայ, կը տեսնայ ատաղձագործը խանութի դուռին առջեւը նստած՝ թալու կը խաղայ: Այս անգամ ալ խաբելու առիթ չ'ունենար, մարդուն կ'ըսէ.

— Ա՛յ մարդ, ալ դուն մի՛ յոգնիր, երբ վերջացնես, քեզ լուր կու տամ: Կ'անցնին շաբաթներ, ամիսներ, երեխան օրէն կախուած օրօրոցի մը մէջ կերպով մը կը մեծնայ: Յանախորդը ա՛լ չ'երթար օրօրոցը պահանջելու:

Կ'անցնին տարիներ, աս մարդուն աղջիկը կ'ամուսնանայ եւ գաւակ կ'ունենայ: Յանկարծ նորէն օրօրոցի հարց կը ծագի: Մարդը կ'ըսէ. «Երթամ, տեսնամ այդ ատաղձագործը ի՞նչ ըրաւ օրօրոցը»: Կ'երթայ

կը տեսնայ ատաղձագործը խանութին առջեւը նստած նորէն թալու
կը խաղայ: Մարդը կը հարցնէ.

— Ի՞նչ եղաւ աղջկաս համար պատրաստելիք օրօրոց, հիմա
արդէն թոռնիկիս համար օրօրոց մը պետք է:

Ատաղձագործը, որ նոյնիսկ ձեռքը չէր առած ու միտքէն ալ
հանած էր այդ օրօրոցին խնդիրը, տեղէն անգամ չի շարժիր, կ'ըսէ.

— Գիտես, արդէն ձանձրացուցիր, գնա՛, հոն սեղանի վրայէն ա՛ն
տուած կանխավճարո՛:

Մարդը կ'երթայ, կը տեսնայ որ իր տուած դրամը ինչպէս որ
տուեր էր, անանկ ալ փոշիներուն մէջ մնացեր էր:



7 (66). ԴԵՐՁՎԿԸ ԵՒ ՅԱՎԱԽՈՐԴԸ

Միամիտ մարդ մը շուկայէն երեք մէթր ամառնային կերպաս
կ'առնէ, կը տանի անձամօթ դերձակի մը, որ իր համար
պլուզ եւ տաքատ կարել տայ:

Դերձակը չափը կ'առնէ, գինը եւ պատրաստ ըլլալու օրը կ'որո-
շեն: Յաճախորդը երթալէն առաջ կը խնդրէ վարպետէն որ կերպասը
ջորին մէջ շատ պահէ, որ լաւ մը քաշէ, ետքը չնեղնայ:

Դերձակը կ'ըսէ.

— Գլխու՛ս վրայ:

Յաճախորդը կը ձգէ կ'երթայ:

Դերձակը առաւ փախաւին մէկը կ'ըլլայ, կ'ուզէ ատ կերպասը
որիշին ծախել եւ դրամ շահիլ: Ատանկ ալ կ'ընէ:

Որոշուած օրը յաճախորդը կու գայ կը հարցնէ.

— Հագուստս պատրա՞ստ է:

Դերձակը, իբր թէ շատ յուզուած, կ'ըսէ.

— Ըսածիդ պէս կերպասը ջորին մէջ շատ պահեցի եւ ամբողջ
կտորը ջորը քաշեց, տակը բան չմնաց:

Յաճախորդը թէեւ միամիտ էր, բայց կը զարմանայ, կ'ըսէ.

— Ատ ի՞նչպէս եղաւ:

— Մի՛ զարմանար, — կ'ըսէ դերձակը, — շատ անգամ այդպէս
կ'ըլլայ: Դուն ատ կերպասը ո՞ր խանութէն գնեցիր նէ, գնա՛ ատ ծախ-
դին հարցուր թէ եթէ ամբողջ թօփը ջորը դրուի, ինչքան կը քաշուի:
Գնայ հարցուր եւ եկուր, ինծի ըսէ:

Մարդը կ'երթայ ծախողին կը հարցնէ: Ան ալ կ'ըսէ.

— Երեւի երեք մէթր կը քաշէ:

Մարդը կու գայ դերձակին քով, դերձակը կը հարցնէ.

— Հը՞, ի՞նչ ըսաւ ծախողը:

Յաճախորդը զարմացած կ'ըսէ.

— Ծախողը ըսաւ թօփին մէջ երեք մէթր մը կը քաշուի:

— Ա՛հա, տեսա՞ր, — կ'ըսէ դերձակը, — ճիշդ ատ քաշուելիք մասն
ալ քեզի հանդիպեր է:



8 (67). ՊԱՐՏՔԸ ՉՏՈՒՈՂ ԿՕԾԿԱԿԱՐԸ

Առաջ կօշկակարները իրենց միջոց վաճառականներն կ'առնեին: Ան ալ ամեն օր տեսրակին մէջ կը գրէր հաշիւը որպէս ապտիկ, եւ ամէն Ծարաթ օր կօշկակարէն իր դրամը կ'առնէր: Կօշկակար մը վաճառականի մը քով հաշիւ բացած էր: Անկէ առած էր գործին համար պէտք եղած ամէն բան եւ բաւական շատ պարտք ունենալէն ետքը, օր մըն ալ կը հրաժարէր իր պարտքը վճարելէ:

Վաճառականին գործատրը կու գայ կը պահանջէ որ կօշկակարը իր պարտքը վճարէ, բայց օգուտ չ'ըներ. ան կ'ուզէ կլլել ատ դրամը:

Քանի մը օր ետքը վաճառականը զայրացած ինք կու գայ կօշկակարին խանութը, բայց կօշկակարը հոն չ'ըլլար: Աշկերտը նստած կ'աշխատէր՝ ծառի ետտանի կոճղին վրայ մուրճով կաշին ծեծելով:

Վաճառականը բարկացած կը հարցնէ աշկերտին.

— Ծօ ու՞ր է վարպետդ:

Ան ալ կ'ըսէ.

— Տեղ գացած է եւ պիտի ուշանայ:

Վաճառականը կ'ըսէ.

— Ինչո՞ւ պարտքը չի վճարեր:

Աշկերտը քիթին տակէն խնդալով կ'ըսէ.

— Կը տեսնա՞ս աս ծառին քիթիկը. եթէ ասիկա օր մը ծիլ տայ, դուն ալ ան ատեն դրամդ վարպետէս կ'առնես:

Վաճառականը սաստիկ կը զայրանայ, հայհոյելով կը ձգէ խանութէն կ'երթայ:

Կէս ժամ ետքը վարպետը կու գայ: Աշկերտը կը պատմէ.

— Վաճառականը անձամբ եկաւ եւ հարցուց թէ ինչո՞ւ վարպետդ իր պարտքը չի վճարեր: Ես ալ ըսի՝ աս ծառին քիթիկը եթէ ծիլ տայ, ան ատենը վարպետս ատ դրամը կու տայ:

Վարպետը բարկացած կ'ըսէ.

— Ծօ տխմա՛ր, մենք ամէն վայրկեան ջուր կը թափենք կոր ատ քիթիկին վրայ, հապա եթէ ծիլեր տայ, ատ դրամը պիտի վճարե՞նք:

— Մի՛ զարմանար, աս երեք ոսկին անցեալ անգամուան սափրելուդ համար է, իսկ անցեալ անգամուան իմ տուած տասը ոսկին աս անգամուան համար էր:

Ու կը ձգէ դուրս կ'ելլայ սափրիչին խանութէն:



9 (68). ՀԱԾՈՒԲԵԼԿԱՏ ՍԱՓՐԻՉԸ

Մարդ մը հին հագուստներով, անխնամ տեսքով առաջին անգամ սափրիչի մը խանութը կը մտնայ: Սափրիչը կը տեսնայ որ աղքատի տեսքով մարդ մըն է, կը նստեցնէ աթոռին, աղտոտ լաթ մը կը կապէ անոր վիզէն եւ հին ածելիով մը կը սկսի կոշտ կերպով ածիլել:

Վերջացնելէն ետքը յաճախորդը կը հանէ երեք ոսկիի տեղ տասը ոսկի կու տայ: Սափրիչը կ'ուզէ եօթը ոսկին ետ տալ, բայց մարդը կ'ըսէ.

— Ո՛չ, այդ բոլորը քեզի:

Աշկերտը յաճախորդին վրան խոզանակելու չէր ալ մօտեցած՝ վախճալով որ խոզանակը կ'աղտոտի. յաճախորդը անոր ալ մէկ ոսկի կու տայ եւ խանութէն դուրս կ'ելլայ՝ ամչցնելով սափրիչը եւ անոր աշկերտը:

Քանի մը օր ետքը այդ նոյն յաճախորդը նորէն կու գայ: Աս անգամ ատելի մաքուր հագած: Սափրիչը անոր տեսնալուն պէս իրար կ'անցնի, կը նստեցնէ բազկաթոռին, ամենէն մաքուր լաթը կը կապէ վիզին, սուր ածելին ձեռքը կ'առնէ, կատակներ ընելով կը սկսի ածիլել: Վերջացնելէն ետքը «Անուշնէ՛ր ըլլայ», կ'ըսէ: Աշկերտն ալ միւս կողմէն յաճախորդին վրան կը խոզանակէ: Յաճախորդը կը հանէ երեք ոսկի կու տայ՝ զարմացնելով սափրիչը:

Յաճախորդը կ'ըսէ.

— Մի՛ զարմանար, աս երեք ոսկին անցեալ անգամուան սափրելուդ համար է, իսկ անցեալ անգամուան իմ տուած տասը ոսկին աս անգամուան համար էր:

Ու կը ձգէ դուրս կ'ելլայ սափրիչին խանութէն:



10 (69). ՎԱՐՊԵՏ ԺԱՄԱԳՈՐԾԸ



ուիս հօրս խանութին քովը հայ ժամագործ մը կար: Օրին մէկը այլազգ մը գրպանի ժամացոյց մը կը բերէ, կ'ըսէ.

— Վարպե՛տ, ատեն մը աս ժամացոյցը աղէկ կ'աշխատէր, բայց հիմա ի՞նչ եղած է չեմ գիտեր, չ'աշխատիր, կայնած է:

Վարպետը խոշորացոյցը աչքին կը դնէ, կը նայի, կը տեսնայ որ պտուտակին մէջտեղը բան մը մտած է, անոր համար ալ ժամացոյցը կայնած է: Վարպետը կը հասկնայ որ դիրին բան մըն է ըլլալիքը, բայց յաճախորդին կ'ըսէ.

— Վաղը կու գաս, տասը դրուշ աշխատողչէք կու տաս:

Յաճախորդին երթալէն վերջը վարպետը կը կանչէ հայրս, որ ան ալ տեսնայ: Վարպետը պզտիկ փեմսով մը հոն մտած ոջիլը դուրս կը հանէ: Հանելուն պէս ժամացոյցը կը սկսի աշխատիլ, իսկ յաճախորդէն աշխատողչէքը կ'անցնէ:



11 (70). ԽՈՐԱՍՄԱԿ ԸՆԿԵՐՆԵՐԸ



րկու կատակատէր բայց խորամանկ ընկերներ կ'որոշեն աշխատանքի դադարին ձուագեղ եփել եւ ուտել:

Անոնցմէ մէկը ձուագեղը կ'եփէ, կը բերէ սեղանին վրայ կը դնէ, որ նստին ուտեն, բայց կ'ուզէ անանկ բան մը ընել, որ ընկերը գանեցունէ եւ ինքը նստի միմակը ուտէ այդ ձուագեղը.

— Գիտե՞ս հաւր ինչպէս հաւկիթ կը շինէ:

Ընկերը կ'ըսէ.

— Ո՛չ, չեմ գիտեր:

— Սպասէ՛, քեզի պատմեմ: Հաւր քիչ մը կը պտտի աղբամանին քովերը, քիչ մը երեխայի կեղտ կը գտնայ կ'ուտէ. հաւկիթին դեղնուցը կ'ըլլայ, քիչ մը ան կողմ կ'երթայ, խլիճ կը տեսնայ, կը կլլէ. ճերմկուցը կը շինուի, քիչ մը քար աւազ կ'ուտէ. կը շինուի կեղելը: Այնպէս որ աս տեսակ աղտոտ բան մըն է հաւկիթ ըսուածը, որ մենք ալ պիտի ուտենք:

Ընկերը, որ պակաս խորամանկ չէր, մտիկ կ'ընէ եւ իբր թէ շատ գանած է, կ'ըսէ.

— Վա՛յ, ես չէի գիտեր թէ հաւկիթը այդքա՛ն աղտոտ բան մըն է: «Թու՛» կ'ընէ, կը թքնէ ձուագեղին մէջը:

Առաջին ընկերը ատ տեսնալով՝ կը գանի, ա՛լ չ'ուտեր ձուագեղը, իսկ միւսը կը նստի առօք-փառօք կը ճաշակէ:





12 (71). ԽՈՒՔԸ՝ ՀԻՖՎՆ-ՂՏԵՍ

Խույ մարդուն մէկը կ'ուզէ երթալ իր հիւանդ ընկերոջը տեսութեան, բայց կը մտածէ՝ ինքը չպիտի կարենայ անոր ըսածները լսել, քանի որ ան հիւանդ է եւ պօտալով խօսիլ չպիտի կարենայ:

Անոր համար ինքնիրեն կը մտածէ եւ միտքին մէջը կը պատրաստէ հիւանդին տալիք իր հարցումները. «Երթամ, հարցնեմ ինչպէ՞ս ես. ան ալ ինչքան ալ որ գէշ ըլլայ՝ «Փառք Աստուծոյ, աղէկ պիտի ըլլամ» կ'ըսէ երեւի: Քիչ մը կը կենամ, կը հարցնեմ թէ ի՞նչ դեղեր կ'առնէս. անշուշտ ան ալ քանի դեղերու անուններ պիտի ըսէ, ես ալ կ'ըսեմ՝ այդ դեղերը շարունակէ, շատ ազդեցիկ են: Քիչ մըն ետք ալ կը հարցնեմ՝ ո՞ր տօքթօրը եկաւ իրեն նայելու. ան ալ տօքթօրի անուն մը կու տայ կ'երեւի, ես ալ կ'ըսեմ՝ անոր ոտքը շատ թեթեւ է, քեզ շուտ մը անկողիներէն կը հանէ: Ասանկով ընկերոջս հիւանդոտեսի գացած կ'ըլլամ»:

Սապէս կը մտածէ խուլը եւ կ'երթայ հիւանդին տունը: Կը տեսնայ, խեղճ մարդը անկողինը պատկած է: Խուլը իր միտքին մէջ պատրաստած առաջին հարցումը կ'ընէ.

— Ինչպէ՞ս ես հիմա:

Հիւանդը հազիւ լսելի ձայնով մը կ'ըսէ.

— Արդէն անդիի աշխարհքը երթալու վրայ եմ:

Խուլ ընկերը չի հասկնար, կ'ըսէ.

— Աստուա՛ծ տայ, Աստուա՛ծ տայ, — ետքը իր միտքին մէջ պատրաստած յաջորդ հարցումը կ'ընէ.

— Ի՞նչ դեղեր կ'առնես:

Հիւանդ ընկերը, որ անոր ըսածին վրայ արդէն ազդուած էր, բարկացած կ'ըսէ.

— Զեհիր-զեմպերէկ կ'առնեմ:

Խուլը չի հասկնար, կ'ըսէ.

— Աղէ՛կ, աղէ՛կ, ատիկա քեզի կ'օգնէ:

Քիչ մը վերջը խուլը բան մը ըսած ըլլալու համար կը հարցնէ.

— Ո՞ր տօքթօրը քեզի եկաւ նայելու:

Հիւանդը, որ արդէն նեղուած էր ատ ընկերոջ հարցումներէն, կ'ըսէ.

— Հոգէտո հրեշտա՛կը կու գայ այցելութեան:

Խուլը նորէն չի լսեր եւ չի հասկնար, կ'ըսէ.

— Ծա՛տ աղէկ է, անոր ոտքը շատ թեթեւ է, քեզ շուտ մը անկողիներէն կը հանէ:

Հիւանդը ալ չի դիմանար, ջղային ձայնով մը կը սկսի պօտալ...





13 (72). ՈՍԿԻՒ ԹՕԹԵ

Երկու դրացիներ կ'ըլլան. մէկը շատ հարուստ, անգաւակ էրիկ կնիկ մը, միւսն ալ շատ աղքատ ընտանիք մը: Աս շատ հարուստ էրիկ կնիկը ամէն օր տունին մէջը մինակնին կը նստին, իրարու երես կը նային, կը ձանձրանան: Աղքատ դրացիին տունէն ալ միշտ ուրախութեան, խնդրօքի ձայներ կը լսուին:

Օրին մէկը աս հարուստ դրացիին կնիկը աղքատ դրացիին կնկան կը հարցնէ.

— Ան չէ ամմա, ատ ի՞նչ կ'ընէք քի միշտ ուրախ խնդրօքի ձայներ կը լսուին ձերին տունէն:

— Է՛, դուն չե՞ս գիտեր որ մենք աղուո՛ր ոսկի թօփ մը ունինք. ան մեզ կ'ուրախացնէ...

Աս հարուստ դրացիին կնիկը ճեմէն կ'երթայ իր էրիկին կ'ըսէ.

— Ես հասկցայ անոնց ուրախութեան գաղտնիքը, դուն մի ըսեր, անոնք ոսկիէ թօփ մը ունին եղեր իրենց ուրախացնող: Դուն ալ գնա մեր ունեցած ոսկիներովը աղուոր թօփ մը շինել տուր, եկուր տէ խաղանք:

Աս հարուստ մարդը կ'երթայ չարշի, դոպումնի մը քովը, ոսկիները կու տայ, որ ոսկիէ թօփ մը շինէ: Ան ալ ոսկիէ մեծկակ թօփ մը կը շինէ, կու տայ մարդուն: Հարուստ մարդն ալ ուրախ-ուրախ տուն կու գայ, կ'ըսէ կնկան.

— Կնի՛կ, եկուր թօփ խաղանք:

Առածին պէս ծանր ոսկիէ թօփը կը նետէ կնկան: Թօփը կ'երթայ շիտակ կնկան գլխուն կը զարնուի: Կնիկը տեղն ու տեղը կ'իյնայ, կը մեռնի: Մարդը կը զարմանայ: Կ'երթայ աղքատ դրացիին կը հարցնէ.

— Ան չէ ամմա, դուք կնկանս ըսեր էք, ոսկիէ թօփ մը ունիք ձեզ ուրախացնող: Ես ալ գացի ոսկիէ թօփ մը շինել տուի, եկայ, կնկանս նետեցի որ խաղանք, թօփը գնաց անոր գլխուն, կնիկս մեռաւ: Ատ ի՞նչ տոր կ'ըլլայ, չեմ հասկնար:

Աղքատ դրացին կ'ըսէ.

— Հէ՛յ վա՛խ, մեր ոսկիէ թօփը մեր նոր ծնած գաւակն է: Ան է մեզ ուրախացնողը:



14 (73). ԿՆԿԱԿՆ ԽԵԼԸ

Երկու ընտանիք Պուլիս դրացի կ'ըլլան, ամմա պարտեզնին մէկ կ'ըլլայ. մէջտեղը թախթափերտէ կ'ըլլայ, ան ալ կոտորած:

Մէկ դրացիին հաւը ատ թախթափերտէն կ'անցնի, դրացիին ցանած կանանչեղէնը կը սկսի ուտել:

Դրացին կ'ըսէ.

— Տիկի՛ն, ատ թախթափերտէն շինել տուր, որ քու հաւերդ աս կողմը չգան:

Դրացին անտեղացի չ'ըլլար: Գիտես ես, կիները էրիկմարդոց մէն խելացի կ'ըլլան: Դրացիին կնիկը էրիկին կ'ըսէ.

— Դուն ձայնդ մի՛ հաներ, նայէ ես ի՞նչոք պիտի շինել տամ ատ թախթափերտէն:

Կնիկը կ'երթայ շուկայէն ճինգ վեց հատ հաւկիթ կ'առնէ, կու գայ հաւկիթները կը դնէ խոտերուն մէջը, կը սկսի պօտալ.

— Ամա՛ն, աս ի՞նչ աղուոր հաւկիթներ ածեր են մեր դրացիին հաւերը:

Դրացին կը տեսնայ որ իր հաւերը ինչտեղը հաւկիթ կ'ածեն կոր, ճեմէն թախթափերտէն շինել կու տայ:

Անանկ քի կնկան խորամանկութիւնը էրիկմարդէն տահա շատ է:





15 (74). ԳԻՏՄՈՂԸ՝ ԳԻՏԻ



ին մը ոսպի արտը կ'աշխատէր: Անցորդ մարդ մը աւ կնկան վրայ աչք կը տնկէ: Կը տեսնայ որ կինը արտի մէջը մինակ է, անմիջապէս վրան կը յարձակի, գէշութիւն կ'ընէ:

Կինը կը սկսի պօտալ կանչել:

Գիւղացիները հեռուէն կը լսեն կնոջ ձայնը, կու գան օգնութեան:

Ատ գէշութիւնը ընող մարդը կը տեսնայ որ գիւղացիները օգնութեան կու գան, ափ մը ոսպ ձեռքը կ'առնէ, կը սկսի վազել:

Գիւղացիները կը բռնեն մարդը, կ'ըսեն.

— Ի՞նչ ըրիր որ կինը սկսաւ պօտալ:

Մարդը կ'ըսէ.


— Ա՛՛ի մը ոսպին համար կը պօտայ:

Գիւղացիներն ալ կնկան կ'ըսեն.

— Դու՛ն չե՞ս ամչնար, ափ մը ոսպին համար կը պօտաս:

Կինն ալ կ'ըսէ.

— Գիտցողը գիտէ, չգիտցողն ալ ա՛՛ի մը ոսպ կը կարծէ:



16 (75). ԽԵԼԿՄԻ ԴՍՏԱԲՈՐԸ



րին մէկը գիւղացիի մը հաւը կը գողնան: Ան կը կասկածի իր դրացիին եւ դատարան կը դիմէ:

Դրացիին դատարան կը կանչեն: Դատաւորը անոր կ'ըսէ.

— Քեզ կը կասկածին, որ գողցած ես դրացիիդ հաւը:

Գիւղացին կը հրաժարի, կ'ըսէ.

— Իրա՛ւ կ'ըսեմ, ես չե՛մ գողցած:

Դատաւորը կ'ըսէ.

— Կրնա՞ս երեք կէտի վրայ երդնուլ:


— Այո՛, անշու՛շտ, — կ'ըսէ գիւղացին:

— Ուրեմն պիտի ըսես. «Եթէ ես իմ դրացիիս հաւը գողցած եմ, թող Աստուած զիս պատժէ եւ ամառը մնամ առանց այրանի, ձմեռը մնամ առանց եօրղանի, ծերութեանս մնամ առանց կնիկի»:

Գիւղացին կը մտածէ. «Հայտէ ըսենք՝ ամառը մնամ առանց այրանի. է՛, ջուր կը խմեմ, ձմեռն ալ մնամ առանց եօրղանի. է՛, ապաս վրաս կ'առնեմ, բայց ծերութեանս առանց կնիկի ի՞նչպէս կրնամ մնալ. ինծի ո՞վ կը նայի: Չէ՛, աւելի աղէկ է՝ խոստովանիմ»: Կ'ըսէ.

— Դատաւո՛ր, ես չե՛մ կրնար երդնուլ, քանի որ եթէ ամառը առանց այրանի, ձմեռը առանց եօրղանի կրնամ մնալ, ծերութեանս առանց կնիկի չե՛մ կրնար մնալ: Աւելի աղէկ է ես քեզի ըսեմ ճշմարտութիւնը. դրացիին հաւը ե՛ս գողցած էի:





17 (76). ՂԱՏՎԻՈՐԸ ԵՒ ՎԻՎՉՎԿԸ



ատաւորը աւագակին վերջին անգամ կ'ըսէ.

— Գիտե՞ս թէ ուր պիտի երթաս, եթէ սուտ խօսելու ըլլաս:
Աւագակը կ'ըսէ.

— Դժոխք:

Դատաւորը կ'ըսէ.

— Իսկ եթէ ճշմարտութիւնը խոստովանելու ըլլա՞ս:

Աւագակը կ'ըսէ.

— Նորէն երթալիք տեղս դժոխքն է:



18 (77). ԵՎԵՂԵՍԿԻՆՅ ԳՈՂԸ



իւղի մը մէջ գող մը կայ եղեր, որ ամէն Ծաբաթ եկեղեցի
գալով՝ կը կողոպտէ, յետոյ ալ Յիսուսը գրկած Աստուա-
ծածնի Ակարին առջեւ ծունկի գալով մեղայի կու գայ եղեր.

— Ներէ՛ ինձի, ո՛վ Աստուածամայր, գիտեմ, որ մեղաւոր եմ, բայց
ի՞նչ ընեմ, աղքատ եմ, — կ'ըսէ եղեր ու կողոպտուած իրերը առնելով՝
եկեղեցիէն դուրս կ'ելլէ եղեր:

Օր մը ժամկոչին չարաճնի տղան կը տեսնայ այս երեւոյթը եւ
ծածկաբար կու գայ, կը տեղաւորուի խորանին ետեւը: Գողը կու գայ,
եկեղեցոյ իրերը կը գողնայ ու դարձեալ Աստուածածնի Ակարին առջեւ
ծունկի գալով կ'աղօթէ.

— Ո՛վ Մարիամ Աստուածածի՛ն, ներէ՛ ինձի՝ մեղաւորիս, պար-
տական եմ, ի՞նչ ընեմ, գործ չկայ, մանուկներս հաց կը սպասեն:

— Ո՛չ, չե՛մ ներեր, — կը պօռայ ժամկոչին տղան խորանին ետե-
ւէն իր բարակ ձայնովը:

Գողը դող կ'ելլայ, կը լռէ, բայց իր ուժերը ժողվելով, կ'ըսէ.

— Դուն սու՛ս, քի՛ն, ես մամայիդ հետ կը խօսիմ կոր:





19 (78). ՍԵՆՔ ԱՆԹՈՒՎՆԵ ԵՒ ԳՈՂԵ




ողին մէկը գողութեան երթալէ առաջ կը մտնայ եկեղեցի, Սենք Անթուանին արձանին կ'ըսէ.

— Ես այսօր գողութեան պիտի երթամ. եթէ դուն ինձի օգնես՝ քեզի արծաթէ հագուստ պիտի բերես, եթէ չօգնես, պիտի գամ քեզ պիտի սպաննես:

Եկեղեցիին ժամկոչը կը լսէ ատ մարդուն ըսածները. անոր երթալէն ետքը Սենք Անթուանին արձանը կամացուկ մը կը վերցնէ, կը տանի կը պահէ եւ անոր տեղը Սենք Անթուանի պզտիկ արձան մը կը դնէ:

Գողը այդ օրը գողութիւն չի կրնար ընել, կացիւն ձեռքը առած կու գայ, եկեղեցի կը մտնայ, կը տեսնայ մեծ Սենք Անթուանը չկայ, պզտիկին կ'ըսէ.

— Ծօ պապադո՞ւր է...



20 (79). ՓԻՍ ԲԵՐՎՆԵ



Էր հօրը մէկը աղջիկ մը կ'ամուսնացնէ: Քանի մը օր ետքը անորահարսը կու գայ Տէր հօրը կը գանգատի թէ իր ամուսինը փիս բերան է եւ միշտ կը հայհոյէ:

Տէր հայրը կ'ըսէ.

— Դուն անիկա քովս բեր, ես զինք թերպիէ կ'ընեմ. տասնհինգ օր բերանին քար դնեմ նէ՛ ան ատենը կը սորվի...

Հարսը ամուսինը կը տանի: Տէր հայրը անոր բերանին մեծկակ քար մը կը դնէ, որ ոչ միայն չկրնայ հայհոյել, այլեւ չկրնայ բերանն իսկ բանալ:


Տէր հայրը ուր երթայ նէ, ատ մարդն ալ իր հետը կը տանի, որ ինչ ալ տեսնայ, բերանը չկրնայ բանալ:

Օր մըն ալ սաղանախ անձրեւ մը կու գայ. աս տէր հայրը ատ մարդուն հետ անձրեւին տակը կը մնայ: Սաստիկ թրջուած ու պաղած դուտ մը կը զարնեն, որ զիրենք ներս առնեն, բայց տնեցիները դուրը չեն բանար:

Տէր հօրը համբերութիւնը կը հատնի, մարդուն կ'ըսէ.

— Եկո՛ւր ես քու բերանիդ քարը հանեմ, դուն քու փիս բերանդ բաց. աս մարդոցը ա՛տ կը վայլէ:





21 (80). ԵՆՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ



Են նոր օծուած ու քառասունքէն նոր ելած վարդապետ մը, իր առաջին քարոզը պատրաստելու ժամանակ, նոթեր կ'առնէ թուղթի մը վրայ եւ այդ թուղթը Ս. Գիրքին մէջ կը դնէ:

Երիտասարդ լուսարարը տեսնալով այս՝ գաղտնաբար այդ թուղթը կ'առնէ եւ կ'ոչնչացնէ:

Քարոզի օրը կու գայ, եւ վարդապետը քանի մը բառով սկսելէ յետոյ կ'ըսէ.

— Յիսուսը կ'ըսէ որ..., — եւ կը սկսի փնտռել թուղթը, չգտնալով զայն, շարունակ կ'ըսէ.

— Մեր Տէր Յիսուսը կ'ըսէ որ...

Խեղճը էջերը կը դարձնէ, հո՛ւ կը նայի, հո՛ն կը նայի, թուղթը չկայ. կորսուեր է: Կը սկսի կմկմալ: Կը հասկնայ որ թուղթը լուսարարը առած է, բարկութեամբ կ'ըսէ.

— Տէր Յիսուսը կ'ըսէ որ... այս թուղթը առնողին եւ հոստելէն կորսնցնողին մայրիկը...



22 (81). ՊԱՐԵԼ ՈՒԶՈՂ ՄԱՅՐԱՊԵՏԸ



Մարմիք մը կ'ըլլայ: Ահագին բազմութիւնը քէֆ կ'ընէ: Մարապետ մըն ալ հոն կ'ըլլայ:

Միօզիքը անանկ աղէկ կը չալէ, ներկաներն ալ անա՛նկ հաւտով կը պարեն որ մայրապետն ալ կամացուկ մը ոտքի կ'ելլայ, ձեռքերը վեր կը վերցնէ, ոտք կ'առնէ, կը սկսի պարել եւ ըսել.

— Յիսուսը՛մ, կիւնահ եազմա՛ (Յիսու՛սս, մեղք մի՛ սեպեր):

Ետքը կը սկսի աւելի եռանդով պարել եւ ըսել.

— Յիսուսը՛մ, կիւնահ եազմա՛... իստեր՝ եա՛գ, իստեր՝ եազմա՛ (Յիսու՛սս, մեղք մի՛ սեպեր... կ'ուզես սեպէ՛, կ'ուզես մի՛ սեպեր):





23 (82). ԻՐԱՐԱՄԷ ՎԼՏԵՂԵՎԿ

Մարդ մը գիշերը գործէն տուն կու գայ, կնիկին կ'ըսէ.
— Աս տաբատս երկար է, քիչ մը պէտք է կարճցնել:
Կնիկն ալ կ'ըսէ.

— Հիմա չեմ կրնար, ժամանակ չունիմ:

Մեծ աղջիկն ալ կ'ըսէ.

— Քունս կը տանի, հիմա պիտի քնանամ:

Պզտիկ աղջիկն ալ կ'ըսէ.

— Վաղը ես կ'ընեմ:

Գիշերը ամենքը կը քնանան: Կնիկին քունը չի տանիր, պատկած տեղը կը մտածէ. «Մե'ղք է էրիկս: Ան ըսաւ՝ տաբատս կարճցնել պէտք է, ես ականջ չկախեցի, ելլամ կարճցնեմ»:

Կնիկը կ'ելլայ, կը կտրէ տաբատը, կը կարճցնէ, կը կարէ, կ'երթայ կը քնանայ:

Ետքը մեծ աղջիկը կ'արթննայ, կը մտածէ. «Ես բաւական քնացայ, քունս առի, ելլամ հօրս տաբատը ուզածին չափ կարճցնեմ»:

Տաբատը ձեռքը կ'առնէ, կը կտրէ, կը կարէ, կ'երթայ նորէն կը քնանայ:

Պզտիկ աղջիկը առտուն կանուխ կ'արթննայ, կը մտածէ. «Գիշերը հայրս ուզեց իր տաբատը կարճցնել, ո'չ մայրս, ո'չ ալ քույրս ականջ կախեցին, եկուր ե'ս ընեմ, հայրիկս թող ուրախանայ»:

Կ'առնէ հօրը տաբատը, աղէկ մը կը կտրէ, կը կարճցնէ, կը կարէ:

Հայրը քունէն կ'ելլայ, տաբատը վրան կը քաշէ: Կը նայի որ տաբատը վարտիք եղած է:



24 (83). ՎՍԷՆ ՍՎՐԳ ԻՐ ԿՎՐՎՊԵՏԵՆ ԿՈՒ ԼԱՅ

Մարդ մը առտուն կանուխ գործի կ'երթայ: Ծամբան կը տեսնայ պատշար մը, որ քարերը իրար վրայ դնելով պատ կը շարէ: Մարդը պատշարին բարեւ կու տայ եւ գործին յաջողութիւն կը մաղթէ: Պատշարը կ'ըսէ.

— Թէ որ փլի՛ նորէն կը շարեմ...

Մարդը կը զարմանայ թէ ատ իր բարեւին պատասխանը չէր:

Իրիկունը գործէն տուն կ'երթայ, իր աղջկան կը պատմէ առտուան

դէպքը: Աղջիկը կ'ըսէ.

— Թէ հարուստ թէ աղքատ. թող տայիր՝ էրթայի...

Մարդը նորէն կը զարմանայ:

Կ'երթայ կնկան կը պատմէ առտուան դէպքը:

Կնիկը կ'ըսէ.

— Թէ ածան թէ սուղ. թող բերէիր՝ ուտէիք...

Մարդը նորէն կը զարմանայ:

Ան մինչեւ հիմա ալ զարմացած է...





25 (84). ԾՈՅԼ ԿՂԲՍԸ



իղացի մը տղան կ'ամուսնացնէ, տունը հարս կը բերէ: Աս
հարսը շատ ծոյլ կ'ըլլայ: Տունը ոչ մէկ գործ կ'ընէ:

Կեսուրը եւ պարոնտատը իրարու մէջ կը հասկցուին, առտուն
անկողիներն մէջ կը խօսին: Կեսուրը կ'ըսէ.

— Ելլամ տէ՛ տունը ալ եմ:

Մարդն ալ կ'ըսէ.

— Կնի՛կ, դուն շա՛տ յոգնած ես, ձգէ՛ որ ես ալ եմ:

Մինչ այդ հարսը իր պառկած տեղէն կ'ելլայ: Մարդը կամացուկ
մը կնոջը կը փսփսայ.

— Տեսա՞ր, լսեց ճէ, ի՛նչպէս տեղէն ելաւ, որ գործ ընէ:

— Եա՞, — կ'ըսէ հարսը, — հոգս հատեր է, երթամ շոնեմ, ետ պիտի
պառկիմ:



26 (85). ԻՐԻԿՍԱՐԳՈՒՄԸ ՍԻՐԸ



արդուն մէկը իր կնիկը շա՛տ կը սիրէ եղեր, միշտ Աստուծոյ
աղօթք կ'ընէ եղեր.

— Ամա՛ն Աստուա՛ծս, կնիկիս ակոսան ցաւելուն՝ ի՛մ ակոսս
թող ցաւի, կնիկիս ստամոքսը ցաւելուն՝ ի՛մ ստամոքսս թող ցաւի,
կնիկիս ոտքերը ցաւելուն՝ ի՛մ ոտքերս թող ցաւին, կնիկս որբեայրի
մնալուն՝ ե՛ս որբեայրի մնամ:

Է՛, ո՞ր մնաց անոր սիրելը:





27 (86). ԶԻՆ ՊԱՅՈՂ ՄԱՐԴԸ



արդուն մեկը թատրոն գացեր է: Գօմէտի մը կը խաղան եղեր: Ամէն մարդ կը սկսի խնդալէն ճաթիլ: Աս մարդը բնա չի խնդար: Բովը նստած ընկերները կ'ըսեն.

— Մենք խնդալէն մարեցանք, դուն ինչո՞ւ չես խնդար: Մարդը կ'ըսէ.

— Ես առ դերասանին հետ քէն եմ. հիմա տուն երթամ, տունը աղէ՛կ մը պիտի խնդամ:



28 (87). ԶՕՐԱՆՔԸ ԵՒՐՈՊԱ ՏԱՆՈՂ ՓԵՍԱԿ



արդուն մեկը կ'ըսէ.

— Զորանչս Եւրոպա պիտի տանիմ:

— Դուն զորանչդ չէիր սիրեր, ի՞նչո՞ւ է որ զորանչդ Եւրոպա պիտի տանիս, — կ'ըսէ ընկերը:

— Զորանչս միշտ կ'ըսէ. «Մէյ մը Եւրոպան տեսնամ՝ ետքը մեռնիմ»: Ատոր համար է որ Եւրոպա պիտի տանիմ...





29 (88). ՏՂԱՆ ԵՒ ԲԺԻԾԿԱԸ



ղուն մէկը կը մօտենայ բժիշկին, կ'ըսէ.

— Օնորհակալ եմ ձեր բժշկութենէն:

Բժիշկը կ'ըսէ.

— Բայց դուն իմ հիւանդս չես:

Տղան կ'ըսէ.

— Հօրեղբա՛յրս էր. ան մեռաւ, ինձի մէրաս մնաց:



30 (89). ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԵՒ ԿԱՐՈՒՄՏԸ



րկու երիտասարդ աղուոր պարտեզի մը մէջ քեօք մը կը տեսնան:


Մէկը միտին կ'ըսէ.

— Տե՛ս ի՛նչ աղուոր քեօք է:

Տէրը կը լսէ, դուրս կ'ելլայ, կ'ըսէ.

— Ես աս քեօքը ձեզի կու տամ, միայն թէ դուք ձեր երիտասարդութիւնը ինձի տուէք:






31 (90). ԱՃԱԿԵՐՏԵ ԵՖ ՎԱՐԺՈՒԿԻՆ



շակերտ մը դասարանին մէջը ձեռքը ականջին դրած կը նստի: Վարժուհին կ'ըսէ.

— Տղա՛ս, ինչո՞ւ ականջդ բռնած կը նստիս:

— Օրիորդ, դուք կ'ըսէք որ ձեր ըսածները մեր մէկ ականջէն կը մտնան, միւսէն կ'ելլան. անոր համար բռնած եմ, որ ձեր ըսածները ականջէս դուրս չելլան:



32 (91). ԽԵՆԹ ՏԱՐԻՔ



դան տասը տարեկան ըլլայ նէ, կ'ըսէ՝ հայրս ո՛րքան բան գիտէ:


Քսան տարեկան ըլլայ նէ, կ'ըսէ՝ հայրս ամէն բանիս կը խառնուի:

Երեսուն տարեկան ըլլայ նէ, կ'ըսէ՝ ես հօրմէս շատ բան գիտեմ:

Քառասուն տարեկան ըլլայ նէ, կ'ըսէ՝ երանի՛ հայրս ըլլար, իրմէ խեղք առնէի:

Այնպէս որ տղաքը խենթ տարիք ունին:





33 (92). ԽԵՆԹԸ ԽՄԱՉՈՒՆ ԿԸ ՎԱԽՆԱԿ

Խ

ենթ մը միճարեիճ գլուխը կ'ելլայ, կ'ըսէ.

— Ես աստեղէն վար պիտի ճետուիմ:

Տակը ժողվուած մարդիկ կ'ըսեն.

— Ամա՛ն, մ'ըներ մ'ըլլար, վա՛ր իջիր:

Խենթը խօսք մտիկ չ'ըներ:

Հոնտեղէն գիճով մը կ'անցնի, կ'ըսէ.

— Ի՞նչ է աս բազմութիւնը:

Մարդիկ կ'ըսեն.

— Խենթը ելեր է միճարեիճ գլուխը, ինքզինքը վար պիտի ճետէ:

Խմածը գրպանէն զմելին կը հանէ, կ'ըսէ.

— Շո՛ւտ վար իջիր, չէ՛նէ՛ հիմա միճարէն քեօքէն կը կտրեն:



34 (93). ԽԵՆԹԻՆ ՓՒՕՍՏԻՔԻՆ

Մ

շխարհի ամենէն համբաւատր այծը Էճկիրիի այծն է, որուն մազը թիֆթիք կ'ըլլայ:

Օրի՛ն մէկը խենթանոցին մէջը խենթ մը բժիշկին կ'ըսէ.

— Բժի՛շկ, ես արդէն աղէկցայ, խնդրեմ զիս տուն դրկէ:

Բժիշկը կ'ըսէ.

— Համաձայն եմ, պայմանով որ աս այծի փէտտէքիին վրայ քանի հատ մազ կայ, հաշուես եւ ինծի ըսես:


Խենթը ուրախութիւնով կ'առնէ բժիշկին ձեռքէն այծի փէտտէքին եւ կը սկսի հաշուել.

— Մէ՛կ, երկո՛ւ, երե՛ք...

Բժիշկը կը նայի անոր վրայ, կ'ըսէ.

— Չէ՛, դուն տահա տուն երթալիք չես:





35 (94). ԽԵՆԹԻՆ ՄԵՎԸ

Խենթին մեկը միշտ տօքթօրին կ'ըսէ.
 — Տօքթօ՛ր, գիտե՞ս քի ոտքերուս վրայէն մրջիւններ կը վազեն:
 Տօքթօրը կ'ըսէ.
 — Արիւնը շրջան չ'ըներ, անկէ է:
 Աս խենթը տօքթօրին ըսածը բանի տեղ չի դներ, կը սկսի ոտքերուն միջատ սպաննելու փոշի ցանել:
 Տօքթօրը կը տեսնայ, կ'ըսէ.
 — Ի՞նչ կ'ընես:
 Խենթը կ'ըսէ.
 — Ի՞նչ պիտի ընես. մրջիւնները մեռցնելու ճարը ա՛ս է:



36 (95). ԽԵՆԹԵՐՈՒՄԸ ԼՈՂԱԼԸ

Խենթանցին մէջ տօքթօրը կ'ըսէ.
 — Հա՛յտէ, մտէ՛ք առազանը՝ լողացէ՛ք:
 Ամմա առազանին մէջն ալ ջուր չկայ: Ամէնքն ալ առազանին մէջը կը մտնան, իբր թէ կը լողան: Միայն մեկը չի մտնար:
 Տօքթօրը կը տեսնայ առ մեկը չէ մտած, կ'ըսէ.
 — Աֆէրի՛մ, դուն առազանը չմտար, արդէն խելօք ես:
 Աս խենթն ալ կ'ըսէ.
 — Ես լողալ չե՛մ գիտեր, ասորի փամար ջուրը չմտայ:





37 (96). ԽԵՆԹԸ ԵՒ ԲԺԻԾԿԸ

Խենթին մէկը խենթանոցի պատին վրայ ծակ մը կը բանայ եւ միշտ առ ծակէն կը նայի:
Բժիշկը կու գայ կը տեսնայ որ աս խենթը ծակէն միշտ կը նայի: Կ'ըսէ.

— Հոն ի՞նչ կայ որ միշտ կը նայիս, մէյ մը ես ալ նայիմ, — կ'ըսէ ու կը մօտենայ ծակին:

Խենթը. կ'ըսէ.

— Ես ուրջ տարի է կը նայիմ՝ բան մը չեմ տեսնար, դուն մէկ անգամէն պիտի տեսնա՞ս:



38 (97). ԽԵՆԹԻՆ ԽՐԱՍԸ

Խենթանոցին մէջը խենթին մէկը երազ կը տեսնայ: Երազին մէջ ոտքին տակը գամ մտած կ'ըլլայ:
Առտուն կ'ելլայ, կը պատմէ ընկերոջը, կ'ըսէ.

— Երազիս մէջը ոտքս գամ մտեր էր:

Միւս խենթն ալ կ'ըսէ.

— Ես քեզի միշտ կ'ըսեմ՝ գիշերը կօշկոկ պառկէ, որ ոտքդ գամ չմտնայ:





39 (98). Ո՛Վ ՄԵՌՄՈՒԿ

Մ. Փրկիչ հիւանդանոցին անխելքներէն մէկը կը մեռնի: Չորս հոգի կը բռնեն վար կը տանին: Մէկը ձեռքէն կը ձգէ, վախճած կ'ըսէ.

— Ե՛ս չէի մեղցնողը:


Միսն ալ կ'ըսէ.

— Ե՛ս չէի:

Մէկալն ալ կ'ըսէ.

— Ե՛ս չէի:

Չեն կրնար մտածել որ ան արդէն մեռած էր:



40 (99). ԵՐԿՈՒ ԽԵՆԹ

Ե. րկու խենթ հիւանդանոցի խոհանոցը սիւզկէշը կը փնտռեն, չեն գտնար:
Մէկ խենթը միւսին կ'ըսէ.

— Հա՛, յիշեցի, ամէն կողմը ծակ-ծակ էր՝ նետեցի:





41 (100). ԽԵՆԹԻՆ ԽԵԼԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Օր մը մարդուն մէկը կ'երթայ խենթանոց, իր խենթ աղջկան այցելութեան: Կը տեսնայ աղջկան կօշիկները պատռած են, կ'ըսէ.

— Աղջի՛կս, աս կօշիկներդ երկու շաբաթ առաջ բերի, ինչո՞ւ ասքան շուտ պատռեցիր:

Աղջիկը կը դառնայ հօրը կ'ըսէ.

— Հայրի՛կ, դուն ինձի այցելութեան եկար ուրախացնելու՞, թե՞ սիրտս կոտորելու:

Մարդը կ'ըսէ.

— Խենթի խօսքին պատասխան կու տաս, ամմա ասոր ի՞նչ պատասխան տաս:




42 (101). Ո՞Վ Ի ԽԵՆԹԸ

Մարդուն մէկը խենթանոց կ'երթայ խենթերուն այցելութեան: Կ'ուզէ գիտնալ թէ հոն քանի հատ խենթ կայ, եւ կը սկսի մէկիկ-մէկիկ համրել:

Հեռուէն խենթին մէկը կը նշմարէ, կ'ըսէ.

— Դուն դուրսինները համրէ. դուք մեզմէ շա՛տ էք...





43 (102). ԵԿՍՐԻՔՏԻՆ ՀՕՃԱՆ ԵՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Կրտեն թէ Նասրէթտին հօճան թուրք է եւ անոր գերեզմանը Աքշէհիր քաղաքն է, իսկ անոր գերեզմանին շուրջը թէ եւ ցանկապատ չկայ, բայց դուռ մը կայ, վրան ալ մեծ կղպանք մը՝ ի նշան անոր ծածուկ իմաստութեան:

Ամառ օր մը Նասրէթտին հօճային ընկերները իրարու մէջ կ'որոշեն որ հօճային ունեցած մէկ հատիկ ոչխարը մորթել տան ու քէֆ մը ընեն:

Անոնք կ'երթան Նասրէթտին հօճային կ'ըսեն.

— Հօճա՛, գիտե՞ս, վաղը աշխարհին վերջն է եղեր:

— Ո՞վ ըսաւ:

— Գիտնականները ըսեր են:

— Է՛, ուրեմն ի՞նչ պիտի ընենք:

— Ի՞նչ պիտի ընենք, եկուր սա ոչխարդ մորթենք, ուտենք:

— Է՛, աղէ՛կ, եթէ վաղը աշխարհին վերջն է՝ մորթենք, ուտենք,

— կ'ըսէ հօճան:

Բոլորը կը ժողվուին: Ոչխարը կ'առնեն, կ'երթան քաղաքէն դուրս, գետի մը եզերքը կը տեղաւորուին, ոչխարը կը մորթեն, կրակը կը վառեն, միսերը մեծ թէնճիրէի մը մէջ կը լեցունեն, կը դնեն կրակին վրայ, որ խաշի:

Ընկերները հօճային կ'ըսեն.

— Օրը տաք է, մենք երթանք գետը մտնանք, քիչ մը զովանանք, դուն խաշլաման եփէ, կու գանք, միասին կ'ուտենք:

Հօճան կ'ըսէ.

— Շա՛տ աղէկ:

Անոնք հագուստնին կը հանեն, կը մտնան գետը:

Հօճան անոնց հագուստները կ'առնէ, կը մտցնէ օճախին տակը, ամէնն ալ կը վառէ:

Ժամ մը վերջը բոլորը միասին ջուրէն կ'ելլան, կու գան որ հագուստնին հագնին եւ խաշլաման ախորժակով ուտեն, կը տեսնան որ հագուստները չկան:

— Հօճա՛, ո՞ր են մեր հագուստները, — կը հարցնեն:

Հօճան կ'ըսէ.

— Աման ճանը՛մ, հագուստը ի՞նչ պիտի ընէք, վաղը աշխարհին վերջն է եղեր, չէ՞: Դուք իմին ոչխարս մորթել տուիք, բայց դո՛ւք տուժեցիք:



44 (103). ԵԿՍՐԻՔՏԻՆ ՀՕՃԱՆ՝ ԲԺԻԾԿ



րին մէկը հօճային կինը բաղնիք կ'երթայ, կը նստի ծորակի մը քով, որ լողանայ: Բաղնեպանը կու գայ հօճայի կնկան քով եւ կոպտօրէն կ'ըսէ.

— Աս ծորակին քովէն ելիր գնա՛, ուրիշ տե՛ղ լողցիր. հոս բժիշկին կինը պիտի լողնայ:

Խեղճ կինը ստիպուած կ'ելլայ կ'երթայ, բայց ոչ մէկ ազատ ծորակ կը գտնայ: Շատ կը նեղուի եւ առանց լողնալու բաղնիքէն դուրս կ'ելլայ: Կ'երթայ տուն, գլխուն ցաւէն ճակատը կը կապէ, կը սպասէ հօճային տուն գալուն, որ անոր վրայ թափէ իր բարկութիւնը:

Իրիկունը նամագէն վերջը հօճան կու գայ տուն, կը տեսնայ որ կինը քիթը ծռած է, կը հարցնէ.

— Ի՞նչ ունիս, ա՛յ կնիկ:

— Ի՞նչ պիտի ըլլայ, դուն հի՛շ պատիւ չունիս եղեր, միայն բժիշկին եւ անոր կնիկին պատիւ կ'ընեն:

Ու կինը կը պատմէ թէ ինչպէս իրեն արհամարհեցին, բաղնիքի ծորակին առջեւէն վնասեցին, եւ կ'աւելցնէ.

— Ուրեմն բժիշկին կինը պատիւ ունի, բայց հօճայինը չունի: Եթէ հօճայութիւնը չձգես եւ բժշկութիւն չսորվիս, ես քեզի հետ չեմ ապրիր, — կ'ըսէ ու զայրացած կ'երթայ իր սենեակը, դուռն ալ կը գոցէ:

Խեղճ հօճան կը մտածէ. «Ալլա՛հ, Ալլա՛հ, ես ի՞նչպէս բժշկութիւն կրնամ սորվիլ», բայց միւս կողմէն ալ կը մտածէ որ եթէ չսորվի, կինն ալ իրեն պիտի ձգէ: Ստիպուած կը համաձայնի երթալ բժշկութիւն սորվիլ:

Ան ժամանակուան բժիշկներն ալ անշուշտ առանց տիպիլօմայի բժիշկ կը կոչուէին, բայց իրականութեան մէջ հեքիմ էին: Հօճան կ'երթայ բժիշկ-հեքիմի մը քով եւ կը խնդրէ որ զինք աշկերտ առնէ քովը եւ բժշկութեան արհեստը սորվեցնէ: Բժիշկը կ'ընդունի հօճան, կը խոստանայ շուտով սորվեցնել բժշկութեան գործը եւ որպէս բժիշկի օգնական.

հիւանդի երթալու ժամանակ հոճան միշտ հետը կը տանի եւ մէկ առ մէկ կը բացատրէ հոճային թէ այդ հիւանդը ինչէն հիւանդացած է:

Հօճան միշտ ուշի ուշով մտիկ կ'ընէ, բայց բան մը զինք շատ կը զարմացնէ, եւ օր մը հիւանդի մը տունէն դուրս գալէն ետք վարպետին կը հարցնէ.

— Այս բոլորը աղէկ, բայց դուն երբ հիւանդին կը նայիս եւ կ'ըսես. «Աս հիւանդին ա՛ս բանը կերցուցեր էք, ստամոքսին դպեր է. աղիքները խանգարուեր են կամ երիկամներուն վնաս տուեր է», ի՞նչպէս կը գիտնաս առ բոլորը կամ հիւանդին ի՞նչ կերած ըլլալը. որ կ'ըսես ստամոքսին դպեր է:

Վարպետ հեքիմը կ'ըսէ.

— Ահա, առ մէկն ալ քեզի սորվեցնեմ, որ միշտ յիշես թէ ի՛նչ հմուտ վարպետ մը ունէիր: Երբ ինձի հիւանդին քովը կը կանչեն, ես նախօրօք փողոցի աղբամանին մէջը կը նայիմ թէ ի՛նչ թափօփուկներ կան, ինչի՛ ոսկորներ, կեղեւներ թափուած են եւ ասոր համեմատ կը հասկնամ թէ այդ օրը կամ մէկ օր առաջ աս կամ ան բանը կերած են. ես ալ կը յայտնեմ հիւանդին տիրոջը եւ միշտ ալ ճիշդ կ'ելլայ ու համբաւս կ'աւելնայ:

Հօճան կը հիանայ իր վարպետին խելքովը եւ ուրախ կ'ըլլայ որ բան մը եւս սորվեցաւ:

Օր մը մարդ մը վագելով կու գայ հեքիմ—բժիշկը կանչելու հիւանդի մը քով, որուն փորը սկսեր էր սաստիկ գալարիլ: Այդ պահուն հեքիմը դէռ հագած չ'ըլլար, հոճային կ'ըսէ.

— Դուն դեղ—մեղը առ, ելիր գնա՛, ես հիմա ետեւէդ կու գամ:

Հօճան կ'երթայ, ներս կը մտնայ հիւանդին սենեակը, կը շօշափէ փորը եւ տնեցիներուն կ'ըսէ.

— Դուք աս մարդուն էշու միս կերցուցեր էք, ստամոքսը արուեր է, վիճակը շա՛տ ծանր է:

Հիւանդին հարազատները իրարու երես կը նային թէ աստիկա ի՞նչպէս կ'ըլլայ, էշուն միսը կ'ուտուի՞:

Այդ պահուն վարպետ հեքիմը ներս կը մտնայ, կը լսէ իր աշակերտին խօսքերը, կը բարկանայ անոր վրայ, կ'ըսէ.

— Ա՛յ անխելք, հիչ էշուն միսը կ'ուտուի՞, որ մարդոցը կ'ըսես՝ էշու միս կերցուցեր էք:

Հօճան կարծես սխալ բան մը ըրած չըլլայ, կ'ըսէ.

— Վարպե՛տ, ինչպէս որ դուն սորվեցուցիր, երբ որ հիւանդին տունէն ներս մտայ, դրան ետեւը՝ աղբանոցին քովը, միայն էշու համետը եւ փալանը կար, իսկ էշը չկար, ես ենթադրեցի թէ երէկ եւ այսօր էշը կերած են:



45 (104). ԵՎՍՐԲՅԻՆ ՀՕՒՎՅԻՆ ՎՐԴԱՐ ՀՎԾԻԲԸ



արուստ մարդուն մէկը որոշում կ'առնէ երթալ Մ'եքքէ ուխտի՝ մարգարէին գերեզմանը եւ հաճի ըլլալ: Ան ոչ մէկ հարազատ կ'ունենայ, որուն իր հարիւր ոչխարները յանձնէ: Թանկարձ միտքը կու գայ հօճան որպէս վստահելի մարդ. կ'երթայ անոր կ'ըսէ.

— Հօճա՛, ես Մ'եքքէ պիտի երթամ, դուն որպէս վստահելի մարդ, կ'ուզեմ քեզի ձգել իմ ունեցած հարիւր ոչխարս: Մի՛նչէս գալս անոնց կաթը կթէ, թող քուկդ ըլլայ, բուրդը խուզէ, թող քուկդ ըլլայ, գառնուկ ծնի, ան ալ քեզի հալալ ըլլայ: Եթէ որջ վերադառնամ, ինձի կը յանձնես իմ հարիւր ոչխարներս, իսկ եթէ չվերադառնամ, բոլորը թող քեզի հալալ ըլլան:

Անշուշտ այն ժամանակները թուղթ, գիր չկար եւ իրարու կը հաւատային: Կ'անցնի վեց ամիս եւ մարդը տակաւին ետ չի գար ու անկէ ոչ մէկ լուր:

Հօճան կը խորհի. «Օ՛ր մարդ է, ով գիտէ մեռած կ'ըլլայ եւ այլեւս ետ չի գար»: Ու կը սկսի ոչխարները մէկիկ—մէկիկ ծախել: Միայն հատ մը կը ձգէ, որ պայրամին մորթէ:

Կ'անցնի մէկ ամիս եւս, Մ'եքքէ գացած, հաճի դարձած աղան կու գայ:

Հօճան իր ըսելիքը կը պատրաստէ:

Միւս օրուան համար ոչխարի կաթէն թաս մը մածուն կը մերէ եւ այդ մնացած մէկ հատ ոչխարը կ'առնէ կ'երթայ հաճի աղային տունը: Կը նստին, կը խօսին ճամբորդութեան մասին ու երբ խօսքը կու գայ ոչխարներուն, հօճան տխուր տրտում հաշի կու տայ.


— Օրին մէկը ամպը պօռաց, կայծակ փոթորիկ եղաւ՝ քառսուն հատ ոչխարին լեղին պատռեցաւ... օրին մէկն ալ ուժեղ սէլաւ եկաւ՝ քառսուն հատը առաւ տարաւ... տասնհինը հատը ծնելու ատեն մեռան... ահա աւ մէկը մնաց... ասոր մածունն ալ ա՛ս է...

Հաճի աղան, որ ուշադիր մտիկ կ'ընէր, տեղէն զայրացած կ'ելլայ, մածունին թասը կ'առնէ ու հօճայի երեսին կը զարնէ: Հօճան երեսը մածունոտած կը ձգէ կը փախի կ'երթայ: Գիւղացիները կը տեսնան հօճային երեսը, կը հարցնեն.

— Ա՛յ հօճա, երեսդ ինչէ՞ն է այդպէս ճերմկցած:

Ան ալ կը պատասխանէ.

— Հաճի աղային հետ արդար հաշիւ մը տեսայ, անոր համար երեսս ճերմակ եղաւ:



46 (105). ԵԿԱՐԻԹՅԻՆ ՀՕՃԱԿ ԵՒ ԴԱՏԱԷՈՐԸ

Ե ասրէթօին հօճան օր մը անմեղ մարդու մը օգտին վկայութիւն տալու համար դատարան կը կանչուի: Դատաւորը հօճային կը հարցնէ.

— Դուն տեսա՞ր թէ առաջ ո՛վ որուն զարկաւ:

Հօճան անկեղծօրէն կը խոստովանի, կ'ըսէ.

— Ես չտեսայ, բայց լսեմ եմ որ այս մարդը անմեղ է:

Դատաւորը երեւի կ'ուզէր մեղաւորի օգտին դատը լուծել, արհամարհանքով կ'ըսէ.

— Միայն լսելը դատարանի մէջ վկայութեան համար փաստ չէ, պէտք է տեսած ըլլայիր: Գնա՛ տեղդ նստէ:

Հօճան արժանապատուութիւնը նուաստացած կը զգայ, բայց ընկերքը որոշելով կ'երթայ, յետոյքը դատաւորին դարձուցած, հատ մը կը ձգէ...

Դատաւորը կը բարկանայ, կ'ըսէ.

— Անամօ՞թ, չե՞ս ամչնար, դատարանին մէջը ատ տեսակ բան

կ'ընես:

Հօճան պաղարհունով մը կը հարցնէ.

— Դատաւոր էֆէնտի, ի՞նչ եղաւ որ նեղուեցար:

Դատաւորը կ'ըսէ.


— Հապա չլսեցի՞ր հանած ձայնդ:

— Հա՛, — կ'ըսէ հօճան, — բայց դուն բան մը տեսա՞ր:

— Ի՞նչ պիտի տեսնամ, խոյ չեմ ես՝ լսեցի:

Հօճան կը պատասխանէ.

— Դատարանին մէջը միայն լսելը փաստ չէ՛, պէտք է նաեւ տեսա՞ծ ըլլաս:



47 (106). ԵԿՍՐԻԹՏԻՆ ՀՕՃԱՅԻՆ ԿԱԹՍԱԿ

Օր մը Նասրէթտին հօճան դրացիէն պղինձէ կաթսան փոխ կ'ուզէ: Դրացին սիրով կու տայ: Կ'անցնի տասնհինգ օր մը, հօճան կաթսան չի վերադարձներ:

Դրացին կու գայ կ'ըսէ.

— Հօճա՛ւ Էֆէնտի, կաթսա կու տա՞ս:

Հօճան պաղարհինով մը կ'ըսէ.

— Բու կաթսադ յի է. քանի մը օրէն պզտիկ մը պիտի ունենայ:

Դրացին կը համակերպի, կ'երթայ:

Քանի մը օր վերջը հօճան պզտիկ կաթսայ մը կը գնէ եւ միւս կաթսային մէջը դրած դրացիին կը վերադարձնէ, կ'ըսէ.

— Ահա քու կաթսադ, ծնածն ալ հետը միասին:

Դրացին գոհ կը մնայ:

Քանի մը օրէն հօճան նորէն դրացիին կաթսան կ'ուզէ: Դրացին ուրախ-ուրախ կը հանէ խոշոր կաթսայ մը կու տայ, յուսալով թէ աւանգամ խոշոր զաւակ մը կը ծնի:


Բայց հօճան այս անգամ կաթսան չի վերադարձներ: Քանի մը օր ետքը դրացին կու գայ իր կաթսան կ'ուզէ, հօճան կ'ըսէ.

— Կաթսադ մեռա՛ւ:

Դրացին ալ զարմացած կը հարցնէ.

— Հօճա՛ւ, ի՞նչ կ'ըսես, կաթսան կը մեռնի՞:

— Է՛է... ծնելուն կը հաւատաս, մեռնելուն չե՞ս հաւատար...



48 (107). ԵԿՍՐԻԹՏԻՆ ՀՕՃԱԿ ԵՖ ԻՐ ԿԻՆԸ

Օր մը Նասրէթտին հօճան մեծատրի մը տուն պիտի էրթայ եղեր, ընկոյզ կը ժողվէ, որ անոր նուէր տանի: Նասրէթտին հօճային կնիկը կ'ըսէ.


— Ան ընկոյզը ի՞նչ պիտի ընէ, թու՛գ առ տար:

Նասրէթտին հօճան թուզ կ'առնէ կը տանի մեծատրին: Մեծատրն ալ ջղայնացած կ'ըլլայ, անոր տարած թուզերը գլխուն կը զարնէ: Հօճան կ'ըսէ.

— Քառասուն տարին մէկ՝ մարդ իր կնկան խօսքը պէտք է լսէ:

Կ'երեակայնէ գլխուս վիճակը ի՞նչ պիտի ըլլար, եթէ ընկոյզ բերած ըլլայի աւ մարդուն:





49 (108). ԵԿՄԱՐԻԹՅԻՆ ՀՕՃԱԿ ԵՖ ԻՐ ԻԾԸ

Օր մը Նասրէթտին հօճային դրացին կու գայ եւ կը խնդրէ անոր էշը, որ մինչեւ ջաղաց տանի իր ցորենը, աղայ ու ետ ըերէ: Հօճան, որ միտք չունէր տալու, կ'ըսէ.

— Էշը տունը չէ:

Ատ միջոցին հօճային էշը կը սկսի ախտոէն գոալ: Դրացին կ'ըսէ.

— Հօճա՛, ամօթ չէ՞, ահագին մօրուքովդ սուտ կը խօսիս:

Հօճան ալ առանց ինքզինքը արելու կը պատասխանէ.

— Հիմա էշի՞ն պիտի հաւատաս, չէ՞նէ ինձի:



50 (109). ԵԿՄԱՐԻԹՅԻՆ ՀՕՃԱՅԻՆ ԻԾԸ

Նասրէթտին հօճային էշը կը մեռնի, ան կը սկսի լալ: Մարդիկ կ'ըսեն.

— Նասրէթտի՛ն հօճա, ամօ՛թ է, կնիկդ մեռաւ նէ՛ ասքան ջլացիր, աս էշին համար ինչո՞ւ ասքան շատ կու լաւ:

— Կնիկս մեռաւ նէ, ամէնքդ ալ ըսիք՝ Նասրէթտի՛ն հօճա, մերաք մի՛ ըներ, քեզի ուրիշ կնիկ մը կը գտնանք: Ամմա հիմա մէկդ չէք ըսեր կոր՝ Նասրէթտին հօճա, մերաք մի՛ ըներ, քեզի ուրիշ էշ մը կ'առնենք:





51 (II). ԵԿՍԻՄԻՆԻՆ ԿՕՄԻՆԵ ԲՎՐՈԶԸ

Օրին մէկը Նաարէթտին հօճան մզկիթը քարոզ կու տայ, կը տեսնայ որ ոչ մէկը իրեն մտիկ կ'ընէ, ամէն մարդ կը քնանայ:

Նաարէթտին հօճան կը սկսի խօսիլ.


— Լիճին եզերքը չորս ոտքով բադ մը կար...

Ամէնքն ալ աչքերնին կը բանան, կ'արթնան, կ'ըսեն.

— Չորս ոտքով բադ կ'ըլլա՞ն:

Նաարէթտին հօճան կ'ըսէ.

— Ատանկ պիտի ըսէի քի արթննայիք:



52 (III). ԵԿՍԻՄԻՆԻՆ ԿՕՄԻՆԵ ՊԱՏԳՎԱԾ

Օր մը Նաարէթտին հօճան քարոզ կը կարդայ, ամմա կը տեսնայ մէկ հատ մարդ չկայ: Ան ինքզինքը հիչ չ'արեր, կը շարունակէ արարողութիւնը:

Քարոզին վերջը «Խաղաղութիւն ամենեցուն» ըսելու փոխարէն կ'ըսէ.

— Խաղաղութիւն տիրէկլերէ, էվտէ եաթան ինէկլերէ (Խաղաղութիւն սիւներուն, տունը քնացող կովերուն):





53 (II2). ԵԿՍՐԻԹՏԻՆ ՀՕՃԱՅԻՆ ՄՂԲԻ ՊՕԵՃՈՒԽՆԸ

Եսարէթտին հօճան երեք կնիկ կ'ունենայ: Կ'ուզէ որ երեք կնիկներն ալ զինք սիրեն, իրարու հետ ալ հաշտ ու խաղաղ ապրին, իրարու չնախանձին: Կը մտածէ՝ ի՞նչ ընէ: Կ'երթայ մէկ կնիկին քովը, գրպանէն ծածուկ կը հանէ մաւի պօճճուխ մը, կ'ըսէ.

— Նայէ՛, իմ մաւի պօճճուխս քեզի կու տամ, քանի որ քեզ ամենէ՛ն շատ կը սիրեմ, բայց մարդու չպիտի ըսես:

Կնիկը կ'ուրախանայ, կ'առնէ մաւի պօճճուխը, գաղտնի տեղ մը կը պահէ:

Յաջորդ օրը Նասրէթտին հօճան կ'երթայ իր միւս կնիկին քովը, կ'ըսէ.

— Նայէ՛, իմ մաւի պօճճուխս քեզի կու տամ, քանի որ քեզ ամենէ՛ն շատ կը սիրեմ, բայց մարդու չպիտի ըսես:

Աս կնիկն ալ կ'ուրախանայ, կ'առնէ մաւի պօճճուխը, գաղտնի տեղ մը կը պահէ:

Միւս օրը Նասրէթտին հօճան կ'երթայ իր երրորդ կնիկին քովը, կ'ըսէ.

— Նայէ՛, իմ մաւի պօճճուխս քեզի կու տամ, քանի որ քեզ ամենէ՛ն շատ կը սիրեմ, բայց մարդու չպիտի ըսես:

Աս կնիկն ալ կ'առնէ մաւի պօճճուխը, գաղտնի տեղ մը կը պահէ:

Երբ որ Նասրէթտին հօճան կը մեռնի, երեք կնիկներն ալ կը սկսին անոր վրան լալ ու ողբալ:

Առաջին կնիկը կ'ըսէ.

— Ա՛խ, ան ամենէն շատ զի՛ս կը սիրէր...

Միւս երկու կնիկները կ'ըսեն.

— Քեզի ո՞վ ըսաւ...

Առաջին կնիկը կ'ըսէ.

— Ի՛նքը ըսաւ, — ու կ'երթայ մաւի պօճճուխը կը բերէ: Երկրորդ կնիկը կ'ըսէ.

— Ա՛խ, ան ամենէն շատ զի՛ս կը սիրէր...

Միւս երկու կնիկները կ'ըսեն.

— Քեզի ո՞վ ըսաւ...

Երկրորդ կնիկը կ'ըսէ.

— Ի՛նքը ըսաւ, — ու կ'երթայ իր մաւի պօճճուխը կը բերէ:

Երրորդ կնիկը կ'ըսէ.

— Ա՛խ, ան ամենէն շատ զի՛ս կը սիրէր...

Միւս երկու կնիկները կ'ըսեն.

— Քեզի ո՞վ ըսաւ...

Երրորդ կնիկը կ'ըսէ.

— Ի՛նքը ըսաւ, — ու կ'երթայ իր մաւի պօճճուխը կը բերէ:

Երեք կնիկներն ալ կը սկսին իրարու հետ կոռուիլ եւ իրարու մազ փետտել:



ԱՌԱԿՆԵՐ ԵՒ ԿԵՆՏՐԱՆԱԿԱՆ ՁՐՈՅՑՆԵՐ

1 (II3). ՕՁԸ ԵՒ ՄԱՐԴԸ



իղացի մարդ մը իր այգիին հողը կը հերկէ: Անտեղէն Օձ մը կ'ելլայ, լեզու կ'առնէ, կ'ըսէ.

— Դուն ինձի ամէն օր գաւաթ մը կաթ դիր, ես կը խմեմ, ձեզի աղէկութիւն կ'ընեմ:

Մարդը լայն ամանի մը մէջ կաթ կը դնէ, հոն կը դնէ:

Օձը կու գայ, կը խմէ կաթը, ամանին մէջը ոսկի մը կը փսխէ, կ'երթայ:

Մարդը կու գայ կը տեսնայ ոսկին, կ'ուրախանայ:

Միւս օրը նորէն ատանկ կ'ընէ: Ամէն օր նոյնը կը կրկնէ:

Օրին մէկը մարդը քաղած ցորենը ծախելու համար քաղաք պիտի տանի եղեր, իր տղուն կ'ըսէ.

— Տղա՛ս, աս թասին մէջը կաթ պիտի լեցնես, հոն պիտի դնես, Օձը պիտի գայ, պիտի խմէ, պիտի փսխէ ոսկի մը, պիտի երթայ:

Տղան կ'ըսէ.

— Ծա՛տ լա:

Երկու օր ետեւ-ետեւ տղան կաթը կու տայ, ետքը կը ձանձրանայ, կ'ըսէ. «Ամա՛ն, ամէն օր ի՞նչ կաթ պիտի տանիս ասոր: Աւելի լա է աս Օձը մեռցնեմ, բոլոր ոսկիները մէկէն առնեմ»:

Երրորդ օրը նորէն Օձը կու գայ կաթ խմելու: Տղան կացինը կ'առնէ որ սպաննէ, Օձը անմիջապէս կը փախի: Տղան կացինով կը զարնէ: Կացինը Օձի պոչին կու գայ, Օձին պոչը կը կտրի, հոգին կ'այրի, կը դառնայ կը խայթէ տղան: Տղան տեղն ու տեղը կը մեռնի:

Երկու օր ետքը հայրը կու գայ քաղաքէն: Կու գայ, կը տեսնայ տղան մեռած:

Ատ ատեն Օձը կու գայ մարդուն կ'ըսէ.

— Մարդոց աղէկութիւն չի՛ վայլեր: Ես ձեզի աղէկութիւն ըրի, տղադ ուզեց զիս սպաննել: Ես ալ ստիպուած խայթեցի զինք: Ես պոչի ցաւ ունիմ, դուն ալ սրտի ցաւ ունիս:

2 (II4). ՁՈՒԿԸ ԵՒ ՄԱՐԴԸ



արդ մը ձկնորս կ'ըլլայ: Կինն ալ ասոր անոր լուացքը կ'ընէ: Ասոնք պզտիկ պարաքայէ տունի մը մէջ կ'ապրին:

Օր մը մարդը Ձուկ մը կը բռնէ: Ձուկը լեզու կ'ելլայ, կ'ըսէ.

— Դուն ինձի նորէն ծովը նետէ, ես քեզի շա՛տ աղէկութիւն պիտի ընեմ:

— Ամա՛ն, քու աղէկութիւնը ի՞նչ պիտի ըլլայ, — կ'ըսէ մարդը.

Ձուկը նորէն ծովը կը նետէ:

Միւս օրը մարդը նորէն ծով կ'երթայ: Նորէն ատ Ձուկը կու գայ,

կ'ըսէ.

— Ի՞նչ կը փափաքիս որ ընեմ:

Մարդն ալ կ'ըսէ.

— Մենք շա՛տ աղքատ ենք, տուն տեղ չունինք, կինս ասոր անոր լաթերը կը լուայ. եթէ տուն մը ունենանք, շա՛տ գոհ կ'ըլլամ:

Մարդը մէյ մըն ալ կը նայի որ խոշոր պալատ մը, իր կինն ալ հանըմի պէս մէջը նստած, սպասուհիներն ալ՝ դէմը կեցած:

Ասոնք հոն երջանիկ կ'ապրին:

Օր մը կինը մարդուն կ'ըսէ.

— Ես զգուեցա՛յ աս տունէն. ծովուն մէջտեղը տուն մը կ'ուզեմ, ան Ձուկն ալ մեզի երկրպագութիւն ընէ. թող մեր ծառա՛ն ըլլայ:

Մարդը նորէն ծով կ'երթայ: Ձուկը նորէն կու գայ: Մարդը կ'ըսէ.

— Տիկինս ծովուն մէջտեղը տուն մը կ'ուզէ, քեզի ալ իր առջեւ ծառայ:

Ձուկը կ'ըսէ.

— Նանքէօննե՛ր, ձեզի աղէկութիւն չի՛ վայլեր:

Մարդը մէյ մըն ալ կը նայի որ մարդ ու կին ատ իրենց հին պարաքային մէջն են:



3 (II5). ԳՍԼԵՐԸ ԵՒ ՀՈՎԻԲԸ



զտիկ հովիւ մը կ'ըլլայ: Աս հովիւը ամէն առտու գիւղին ոչ-խարները եւ այծերը կը ժողվէ, կը տանի դաշտ արածելու: Օր մը աս պզտիկ հովիւը միմակը դաշտին մէջը կը ձանձրանայ, կը մտածէ խաղ մը խաղալ: Կը սկսի պօտալ.

— Գա՛յլը եկաւ, գա՛յլը եկաւ, շո՛ւտ հասէք:

Գիւղացիները ասրսպիսիս կը վազեն, կու գան հովիւին օգնութեան: Բայց կը տեսնան ո՛չ գայլ կայ, ո՛չ ալ ուրիշ բան:

Պզտիկ հովիւը, իր արարքէն գոհ, կը սկսի քա՛հ-քա՛հ խնդալ եւ կ'ըսէ.

— Կատա՛կ մըն էր ասիկա:

Գիւղացիները ետ կ'երթան:

Ժամանակ մը ետքը իրապէս գայլերը կը յարձակին ոչխարներու հօտին վրայ եւ կը սկսին յօշոտել: Պզտիկ հովիւը նորէն կը սկսի պօտալ.

— Գայլե՛րը եկան, գայլե՛րը եկան, շո՛ւտ հասէք:

Բայց այս անգամ գիւղացիները կը խորհին թէ նորէն կատակ կ'ընէ եւ օգնութեան չեն հասնիր:

Անօթի գայլերը կ'ուտեն ոչ միայն ոչխարները, այլեւ՝ ստախօս հովիւը:

Այնպէս որ ստախօսութիւնը աղէկ բան չէ:



4 (II6). ԾՈՒԲԻՆ ԽԵԼԱՅԻ ՏԻՐԸ



արդուն մէկը շունը փողոց կը հանէ պտտցնելու: Կօշիկ ներկող տղայ մըն ալ հոն կ'ըլլայ: Աս շունը կ'երթայ, աս կօշիկ ներկողի սնտուկին վրայ ոտքը վեր կ'ընէ որ չիշ ընէ:

Ներկարար տղան շունին կը գարնէ:

Ծունին տէրը կը նեղուի, կ'ըսէ.

— Ինչո՞ւ շունիս կը գարնես:

Տղան կ'ըսէ.

— Չտեսա՞ր, ոտքը վեր ըրաւ, չիշ պիտի ընէր:

— Է՛, ըրա՞ւ:

— Ո՛չ, չըրաւ, բայց պիտի ընէր:

Ծունին տէրը կ'ըսէ.

— Ի՞նչ գիտես որ շունս չիշ պիտի ընէր, անիկա ոտքը վեր ըրաւ որ դուն ներկէիր:





5 (II7). ՉԻՆԿԵՆԵՆ ԵՒ ԻՐ ԱՐԶԸ

Քօթօկրաֆճի մարդ մը Կետիկ փաշայի եօխուշէն վեր կ'ելլայ, մէյ մըն ալ կը տեսնայ չինկէնէին մէկը արջ կը խաղցնէ: Թուրիսթին մէկն ալ ֆօթօկրաֆճիին կ'ըսէ.


— Մեզ աս արջին հետ նկարէ:

Արջին տերը չի ձգեր, կ'ըսէ.

— Փարան կու տաս՝ կը նկարուիս:

Թուրիսթն ալ չի տար: Աս չինկէնէն արջը կ'առնէ, երգելով կ'երթայ.

— Արա տա՛ պուլ, արա տա՛ պուլ (Փնտոէ՛ գտիր, փնտոէ՛ գտիր): Այնպէս որ մարդ առիթը չպիտի փախցնէ:



6 (II8). ԵՐԱՎԵՏԱԳԻՏ ԱՐԶԸ


Իմ մեծ հօրեղբայրս, որուն Դաւիթ աղբար կը կանչէինք, շատ հմուտ որսորդ էր: Անոր տունին պատերու վրայէն տե-սակ-տեսակ որսի հրացաններ, երկար չիպուխներ կախուած էին: Գետինը արջի մորթ մը փոռուած էր: Ան շատ անվախ մարդ էր եւ միշտ որսի կ'երթար ու մեզի իր որսորդական արկածները կը պատմէր:

Օր մը Դաւիթ աղբարը իր ընկերոջ հետ որսի կ'երթայ: Բաւական թափառելէ ետք, կը նստին տեղ մը կը հանգստանան, հաց կ'ուտեն, կը ծխեն: Մէյ մըն ալ մօտիկ տեղէն արջի մուտոց կը լսեն: Հրացանները կը պատրաստեն, ձայնին կը մօտենան: Մէյ մըն ալ ի՞նչ տեսնան: Սեւ արջ մը գետինը ինկած, մեծ փուշ մը անոր ոտքին մէջ մտած է եւ արջը չի կրնար հանել ու ցաւէն չի կրնար քալել: Կը տեսնան որ արջը կը տառապի եւ օգնութեան կարօտ է: Ասոնք կը մեղքնան, կ'երթան մօտը, փուշը կը հանեն: Վերջը ահագին մեծ կ'ըլլայ, կը կապեն, արջին ցաւը կը մեղմանայ:

Արջը ոտքի կ'ելլայ, ասոնց կը հասկցնէ որ իրեն հետեւին: Անոնք կը զարմանան թէ ո՞ր պիտի տանի: Արջը բաւական երթալէն վերջը կ'իջնայ ձորի մը մէջ, ուր ծառի խոռոչի մը մէջ վայրի մեղունները մեղր շինած էին եւ արջը միշտ եկեր, կերեր էր, հիմա ալ իրեն օգնողները կը հիրաւիբեր:

Դաւիթ աղբարը եւ իր ընկերը կը համոտեսեն եւ կը տեսնան որ հրաշալի մեղր է, կու գան գիւղ, մեծ կաթասներ կ'առնեն, կ'երթան մեղրը կը լեցնեն, կը բերեն իրենց տուները:





7 (119). ԳԼՓԻՆՆԵՐՈՒՄԸ ԾԵՆՐԻՎԿՎԼՈՒԹԻՒՄԸ

Օր մը երկու ձկնորսներ իրենց նաակով ձուկ բռնելու կ'ելլան: Անոնք երբ ջուրը նետուած ուղկանը կը քաշեն, կը տեսնան որ քառասունի չափ դլփիներ գիրենք շրջապատած են եւ գլուխն ջուրէն դուրս հանած ողբալի ձայներ կը հանեն:

— Ասոնք ի՞նչ կ'ուզեն, — զարմացած կը հարցնէ մէկ ձկնորսը միւսին:

— Ասոնց լեզուն չեմ հասկնար, — կ'ըսէ միւս ձկնորսը:

Երբ ուղկանը դուրս կը քաշեն ծովէն, անոնք կը հասկնան դլփիները, քանի որ ձագուկ դլփին մը ինկած էր ուղկանին մէջ: Ձկնորսները ուղկանէն կը հանեն զինք եւ նորէն ծովը կը նետեն:

Երբ ձկնորսները քարափ կը հասնին, զարմանքով կը տեսնան որ քառասունի չափ դլփիներ իրենց գլուխները ծովէն դուրս հանելով՝ նաակը շրջապատած են եւ ցատկոտելով գոհունակութեան ճիչեր կ'արձակեն:

Դուն մի ըսեր, անոնք ատ ձեռով բարի ձկնորսներուն իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն եղեր:



8 (120). ԶԳՎՅՈՒՄԸ ԽԱՅԵՐԸ

Ոլիս շատ ճայ կայ: Մարմարա ծովուն վրայ անոնք կը սուրան եւ կը ճչան: Ծայը ամենէն քէն պահող թռչունն է, ինչպէս փիղը՝ չորքոտանիներուն մէջ:

Օրին մէկը տունի մը տանիքը ճայը բոյն դրած կ'ըլլայ: Տունին բնակիչները նորոգութիւն ըրած ատեննին ճային բոյնը կը քանդեն եւ յաջորդ տարին ալ տունը ուրիշ մարդու մը վարձու կու տան:

Նոր բնակիչը առաջին անգամ տունը կը մտնայ, պատուհանը կը բանայ, որ տունը օդ առնէ: Դուն մի ըսեր, ճայը կը սպասէ եղեր, կը յարձակի, մարդուն դէմքը եւ ձեռքերը կը կտցահարէ:

Բայց ճայերը նաեւ շատ զգայուն են եւ երախտագէտ:

Օրին մէկը ոտքը վիրաւոր ճայ մը Մարիամ մօրաքոյրիս պատուհանին կը նստի: Մօրաքոյրս կը խնամէ անոր վերքը: Աս ճայը կը վարժուի անոր, ա՛լ անկէ չի բաժնուիր, միշտ կու գայ անոր պատուհանին բազրիքին վրայ կը նստի:





9 (121). ՍԳՍԲՈՐ ԲԷՐԼԻՔԸ



արդ մը որսի կ'ելլայ, կ'ըսէ.

— Ես այսօր քէքիք պիտի բռնեմ:

Անշուշտ չի կրնար քէքիք բռնել, ագռաւ մը կը զարնէ, տոպրակին մէջը կը դնէ, կը տանի սրճարան, հպարտանալով ընկերներուն կը ցուցնէ, կ'ըսէ.

— Բէքի՛ք մը բռնեցի:

Ընկերները կ'ըսեն.

— Ասանկ սեւ քէքիք չ'ըլլար:

Մարդն ալ կ'ըսէ.

— Երեւի ամուսինը մեռեր է, սուգ կը բռնէ:



10 (122). ՓԱՓՈՂԱՆԸ



արդ մը փափաղան մը առնելու համար խանութ կ'երթայ: Կը նայի որ փափաղանին մէկ ոտքը կապոյտ, միւս ոտքը կարմիր ծապաւէն կապուած է:

Մարդը կ'ըսէ.

— Աս ի՞նչ է:

Տէրը կ'ըսէ.

— Կապոյտ ծապաւէնը քաշես նէ՛ բարի լոյս կ'ըսէ, կարմիրը քաշես նէ՛ բարի իրիկուն:

Մարդը կը հարցնէ.

— Եթէ երկուքը մէկ քաշեմ, ի՞նչ կ'ըսէ:

— Ան ատենը փափաղանը վար կ'իյնայ:

Դուն մի ըսեր, ատ փափաղանը սուտն է եղեր:





II (I23). ԹՕԹՂ ՍՈՒՍԿԵ



արդ մը սոխակ մը կ'առնէ խանութէն: Տուն կը բերէ, կը տեսնայ որ սոխակին ոտքը թօփալ է: Ետ կը տանի կ'ըսէ.
— Աս սոխակը թօփալ է:

Տէրը կ'ըսէ.

— Դուն սոխակը երգելո՞ւ համար առիր թէ՞ պալէի:



I2 (I24). ՓԻՐԻ-ՈԶԻԼԸ



րին մէկը երկու ընկեր ճամբայ կ'երթան: Անոնցմէ մէկը կը տեսնայ քի միւսի օձիքին վրայէն ոջիլ մը կ'երթայ: Կ'ըսէ.
— Աս ի՞նչ է:

Ան ալ կ'ըսէ.

— Փիրէ է:


— Ինչո՞ւ ճերմակ է:

— Ծերացա՛ծ է:

— Ինչո՞ւ չի թոիր:

— Կ'երեւի թօփալ է:





13 (I25). ԱՌԻՔՕԸ՝ ՎՆՏԱՌԻ ԹՎԳՎԻՈՐ

Անտառի կենդանիներուն թագաւորը Առիծն է: Օրին մէկը Առիծը կը մտածէ անտառի կենդանիները ժողովի հրաւիրել եւ իր փորը կշտացնել:

Առիծը բոլոր կենդանիները կը կանչէ իր քով: Նախ էշուն կը հարցնէ.

— Ըսէ՛ տեսնամ, բերանս կը հոտի՞ կոր:

Էշը կը հոտուրտայ, կ'ըսէ.

— Այո՛, տէ՛ր իմ, կը հոտի կոր...

Առիծը բարկացած կ'ըսէ.

— Ուրեմն կը հոտի՛ կոր, հա՞: Ա՛ն քեզի:

Եւ մէկ հարուածով Էշը գետին կը տապալէ, կը սկսի յօշոտել եւ ուտել:

Յետոյ կը կանչէ Գայլը, կը հարցնէ.

— Դուն ըսէ՛ անայիմ, բերանս կը հոտի՞ կոր:

Գայլը, որ արդէն տեսած էր Էշուն վախճանը, կը մտածէ հակառակը ըսել: Կը մօտենայ Առիծին, կը հոտուրտայ, կ'ըսէ.

— Ո՛չ, տէ՛ր իմ, չի հոտի կոր:

— Ա՛խ, ուրեմն չի՛ հոտի՛ր կոր, — կ'ըսէ Առիծը եւ թաթի մէկ հարուածով Գայլն ալ գետին կը տապալէ, անոր ալ կը սկսի յօշոտել եւ ուտել:

Կարգը կու գայ Աղուէսին:

— Աղուէ՛ս, դուն ըսէ՛ անայի՛մ, — կ'ըսէ Առիծը:

Աղուէսը կոտորտելով կ'ըսէ.

— Տէ՛ր իմ, ես այսօր անվազիլ եմ, քիթս հոտ չ'առներ:

— Ա՛խ դուն, խորամանկ Աղուէս, այսօր ալ հոգիդ ազատեցիր,

— կ'ըսէ Առիծը եւ Աղուէսը ազատ կ'արձակէ:



14 (I26). ՈՒՂՏԸ ԵՒ ՃՎԵՃԸ

Ամբողջ ամառը Ուղտը հլու հնազանդ ծառայած կ'ըլլայ իր տիրոջը: Երբ ձմեռը կու գայ, տէրը զինք կը տանի կը մտցնէ ախոռը, որ անապատի տաքութեանը սովոր Ուղտը չպաղի:

Ատ միջոցին Ուղտին հետ ժամն մըն ալ անքս կը մտնայ եւ ամբողջ ձմեռը հոն կ'անցընէ:


Երբ գարունը կու գայ, ժամնը Ուղտին տղտղալէն կ'ըսէ.

— Ու՛ղտ աղբար, ես շա՛տ շնորհակալ եմ որ ամբողջ ձմեռը դուն զիս պահեցիր պահպանեցիր, պատուարեցիր, որ ես չմսիմ եւ չմեռնիմ: Ես շա՛տ շնորհակալ եմ քու ազնուութեա՛նդ, քու վեհանձնութեա՛նդ համար, որ դուն ինձի համար ատ զոհողութիւնը յանձն առիր:

Ուղտը կը լսէ եւ զարմացած, շրթունքը վար կախելով կ'ըսէ.

— Դուն ո՞վ ես, ես քեզ ո՛չ տեսած եմ, ո՛չ ալ քու գոյութիւնդ զգացած:





15 (I27). ԽՈՂԸ ԵՒ ԿՈՎԸ



ր մը Խոզը Կովուն կ'ըսէ.

— Ես աս մարդիկը չեմ հասկնար՝ իմին միսս կ'ուտեն, խորոված կ'ընեն, սալամ կը շինեն, բայց ինչո՞ւ քեզ անելի յար-

գի կը բռնեն:

Կովն ալ կ'ըսէ.

— Բայց մեր մէջը տարբերութիւն մը կայ:

Խոզը կ'ըսէ.

— Ո՞րն է ատ տարբերութիւնը:

Կովն ալ կ'ըսէ.

— Ատ տարբերութիւնը ա՛ն է որ ես ո՛ղջ ժամանակս մարդոց

օգտակար կ'ըլլամ, բայց դուն միայն մեռնելէդ ետքը:

Այնպէս որ մարդ իր ողջ ժամանակը բարիք պէտք է ընէ:



16 (I28). ԳՈՐՏԸ ԵՒ ՄՈՒԿԸ



ուկին հետ Գորտը ընկեր կ'ըլլայ: Միասին խօսած ատեն-
նին Գորտը Մուկին պոչը իր ոտքին կը կապէ եւ անմիջա-
պէս ջուրը կը մտնայ:

Չար սիրտը նայէ:

Մուկը ջուրին մէջը չի կրնար լողալ. փորը ջուր կը լեցուի, ջուրին
վրայ կը մնայ:

Չայլախ մը երկինքէն կը տեսնայ որ ջուրին վրայ որս մը կայ,
կ'իջնայ, կտուցով կը բռնէ Մուկը, Գորտն ալ միասին կ'առնէ, կը տանի,
երկուքն ալ կ'ուտէ:

Այնպէս որ չարութիւն ընողը չարութիւն կը գտնայ:





17 (129). ԿՐԻԱՆ ԵՒ ԿԱՐԻՃՆ

Լիճի ջուրի մէջէն Կրիայ մը կամաց-կամաց դուրս կ'ելլէ: Կարիճը առաջը կ'ելլայ եւ կը խնդրէ զինք միւս ափը անցընել: Կրիան կ'ըսէ.

— Նստէ՛ վրաս, քեզ անցընեմ, բայց չխայթես:

— Չէ՛, ի՛նչ կ'ըսես, դունը ինձի օգնես, ես քեզ խայթե՞մ:

Կարիճը փառատրապէս Կրիային կոնակը կը բազմի: Կրիան կը մտնայ ջուրը եւ կը սկսի լողալ:

Կարիճը կը տեսնայ Կրիային փափուկ գլուխը, չի դիմանար, կը խայթէ:

Կրիան կ'ըսէ.

— Հապա չպիտի խայթէի՞ր:

— Ներողամիտ կ'ըլլաս բարեկա՛մս, բնութքս է, — կ'ըսէ Կարիճը:

— Իմին ալ բնութքս ջուրին մէջը սուզուիլն է, — կ'ըսէ Կրիան եւ

կը խորասուզուի ջուրին մէջ:

Կարիճը կը խեղդուի:



18 (130). ԻԾԸ ԵՒ ՁԻՆ

Ըրջիկ առեւտրական մը Ձի մը եւ Էշ մը ունէր: Ասոնք պիտոյն մէջ իրար հետ քով քովի բարեկամացած էին: Տէրը երբ կը պատրաստուէր շուկայ երթալ, իր ամբողջ ծախու ապրանքը Էշուն կը բեռնէր, Էշը ծանր բեռին տակը հոգին դուրս ելլալով կը հետեւէր Ձիուն:

Օր մը Էշը հիւանդ կ'ըլլայ, բայց տէրը անոր հալէն չի հասկնար, ահագին ապրանքը խեղճ անասունին կը բեռնէ: Ծամբան Էշը տնքալէն հագիւ կը քալէ: Ան քրտինքներու մէջ, ոտքերը թուլցած՝ կը խնդրէ իր ցեղակից բարեկամ Ձիուն.

— Ի՛նչ կ'ըլլայ, քիչ մը ինձի օգնէ:

Ձիւն կ'ըսէ.

— Ես բեռ չեմ կրնար տանիլ: Ես միայն իմ տէրս կրնամ տանիլ:

Դուն Էշ ես, քու բեռդ դուն պիտի տանիս:

Էշը կ'ըսէ.

— Բայց ես այսօր հիւանդ եմ ու տկար, — եւ ուժասպառ կը փոռի

գետին, շունչը կը փչէ:

Տէրը առ տեսնալով Էշին վրայի բեռները կը հանէ, կը դնէ Ձիուն

վրայ, ինք ալ վրան կը մստի, կ'երթայ:

Ձիւն շատ կը զղջայ իր ըրածին համար, բայց այլեւս Էշը չկար:





19 (131). ԻՃԸ ԵՖ ՍՍՏԱՆԱԼ

Օր մը Սատանան կ'ուզէ Էշուն հոգիին հետ խաղալ, քիչ մըն ալ գոացնել: Կու գալ, Էշուն ականջին կ'ըսէ.
— Գիտե՞ս, բոլոր էգ էշերը մեներ են:

Էշը կը սկսի գոալ.


— Ահ', ահ', ահ':

Քիչ մը վերջը Սատանան կ'անցնի Էշուն միւս ականջին, կ'ըսէ.

— Տէրտ մի' ըներ, հատ մը քեզի համար պահած եմ:

Էշը հանգստանալով կը սկսի մեղմանալ.

— Է', է', է', — եւ կամաց-կամաց կը լռէ:




20 (132). ԻՃԵՐՈՒԲԵ ԲՈՂՈՔԱԳԻՐԸ

Էշերը ժողով կ'ընեն, կը խորհրդակցին իրարու հետ եւ կու գան այն հետեւութեան թէ իրենց ցեղը անարդարացիօրէն քիչ ստեղծուած է: Բողոքագիր մը կը գրեն եւ Արարիչին կը դրկեն:

Արարիչը իրենց կը պատասխանէ.

— Դուք շատ անտեղի բողոքագիր դրկած էք, քանի որ անասուններուն մէջ ամենէն շատն էք եւ պէտք է նկատի առնէք որ ձեր ցեղի անդամներն են նաեւ երկոտանի մարդոց մեծամասնութիւնը:





21 (133). ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱԾՎՐԺԻՆ
ԳՍՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

1988 -ի Դեկտեմբեր 7-ին, երբ երկրաշարժ եղաւ, Հայաստանի տուներ-մուններ փլան, շատ մարդիկ մեռան:

Հայաստանի կառավարական մարդիկ կը խորհին դատարան կանչել մեղաւորները: Առաջ կը կանչեն Աւագը, իրեն կը հարցնեն.

— Ատ խեղճերուն տուները ինչու՞ փլեցիր:

Աւագը կ'ըսէ.

— Ի՞նչ գիտնամ, ես մե՛ղք չունիմ. ատ Պրիքէթը կոտրեցաւ ինկաւ, ես ալ ետեւէն գացի:

Դատաւորը կ'ըսէ.

— Քեզի հինգ տարուան ճէգա. բանտ պիտի նստիս:

Ետքը Պրիքէթին կը հարցնեն.

— Դուն ինչո՞ւ ինկար:

Պրիքէթը կ'ըսէ.

— Ես մե՛ղք չունիմ. Երկիրը շարժեցաւ, ես ալ իմ տեղէս շարժեցայ

ինկայ:

Դատաւորը կ'ըսէ.

— Քեզի ալ տասը տարուան ճէգա. բանտ պիտի նստիս:

Կարգը կու գայ Չիմէնթոյին. իրեն կը հարցնեն.

— Դուն ինչո՞ւ ձգեցիր որ փլին:

Չիմէնթոն կ'ըսէ.

— Կը ներէ՛ք, ես հո՛ն չէի, հոն ըլլայի նէ՛ չէի ձգեր որ փլին:

ԿԵՆՏՐԱԳՅԻՆ ԶՐՈՅՑՆԵՐ

I (134). ԳՂԲԱՌԱՄԻ ՀՕՐ ԵՐԵՐ ԽՐԱՍՆԵՐԸ



աւատացի տղայ մը հօրը կ'ըսէ.

— Հա՛յր, ինծի քիչ մը փարա տուր. կ'ուզեմ Ստանպոլ երթալ, հոնտեղի կեանքը վայելել, թէ չէ աս գաւառական կեանքէն շատ ձանձրացայ:

Հայրը կը լսէ տղան եւ մտահոգութեան մէջ կ'իյնայ: Գիշերները քունը կը փախի, կը մտածէ՝ ի՛նչ ընէ որ տղան աս մեծ քաղաքին մէջը միս-միսակը չփնանայ, կեանքի յատակը չիյնայ: Ծատ կը մտածէ, վերջապէս հնարը կը գտնայ: Տղան իր քովը կը կանչէ, կ'ըսէ.

— Նայէ՛ տղա՛ս, ես քեզ պիտի ձգեմ որ Ստանպոլ երթաս, ձեռքդ ալ ծախսելու փարա պիտի տամ, բայց քեզի երեք խրատ ունիմ տալու, երդուէ՛, որ միտքդ պիտի պահես եւ պիտի կատարես:

Տղան ծունկի կու գայ հօրը առաջ, կ'ըսէ.

— Կը խոստանամ, հա՛յր, ինչ որ ըսես կատարել:

— Ուրեմն, — կ'ըսէ հայրը, — երբ որ Ստանպոլ երթաս, ճաշարան մտնաս, հինգ լիրայի բան ուտես, տասը լիրա պախշիշ կու տաս: Եթէ ընկերներ գտնաս, անոնք ուզեն քեզ գիշերային թաւերնա տանիլ, գիշերուան ժամը 12-էն վերջը կ'երթաս: Եթէ անոնք ուզեն քեզի հետ խումար խաղալ, դուն ամենալաւ խումարպագին՝ փիրին հետ կը խաղաս:

Տղան կը լսէ հօրը ըսածները: Կ'երդնու որ պիտի կատարէ այդ բոլոր խրատները: Կ'աննէ հօրը տուած քէսէով ոսկին, ճամբայ կ'ելլայ:

Կ'երթայ կ'երթայ, կը հասնի Ստանպոլ: Օթէլի մը մէջ սենեակ կը վարձէ, կ'իջնայ ճաշարան՝ բան մը ուտելու:

Հօրը ըսածին պէս՝ հինգ լիրայի ճաշ կ'ուտէ, բայց տասը լիրա կարսոնին պախշիշ կու տայ: Անտեղը նստած քանի մը տղայ կ'ըլլան, կը տեսնան որ աս շատ դրամ ունի, կամաց-կամաց կը մօտենան, հետը կ'ընկերանան, կ'ըսեն տղուն.

— Կ'երեւի գաւառէն եկած ես:

— Այո՛, — Կ'ըսէ տղան:

Կ'ուզե՞ս մենք քեզ քաղաքին ծանօթացնենք: Օրինակ, Ստան-պուլի թաւերնաները տեսա՞՞ծ ես:

— Ո՛չ, չեմ տեսած, — Կ'ըսէ տղան:

— Ան առենը աս իրիկուն, ժամը 6-էն ետքը եկուր երթանք:

Տղան կը յիշէ հօրը տուած խրատը, Կ'ըսէ.

— Չէ՛, ես իրիկուն ժամը 6-ին չեմ կրնար, գիշերուան ժամը 12-

էն վերջը կ'երթամ:

— Է՛, ատ ժամուն երթանք մէ, ի՞նչ կը հասկնանք, — Կ'ըսեն անոնք:

Տղան կը պնդէ.

— Չէ՛, ես ատ ժամուն կ'երթամ. ատ իմ սկզբունքս է:

Գիշերուան ժամը 12-ին ասոնք կ'երթան թաւերնա: Տղան ներս կը մտնայ, կը տեսնայ սեղանները, աթոռները իրար անցած, քանի մը գինովցած մարդիկ սեղաններուն վրայ գլուխնին դրած քնացած, մէկը անդին պատին տակը կը փսխէ, միւսը հագիւ ոտքի վրայ կայնած կը հայհոյէ...

Տղան կը տեսնայ ատ բոլորը, կը սրդողի, Կ'ըսէ.

— Ա՞ս է ձեր թաւերնան, — կը ձգէ, դուրս կ'ելլայ:

Ընկերները կ'ըսեն.

— Եթէ մեր թաւերնան չհաւնեցար, վաղը իրիկուն ժամը 10-ին եկուր բոզանոց երթանք:

Տղան կը յիշէ հօրը տուած խրատը, Կ'ըսէ.

— Չէ՛, ես իրիկունը ժամը 10-ին չեմ երթար, առտուան ժամը 5-ին

կ'երթամ:

— Ատ ժամուն երթանք մէ, ի՞նչ պիտի հասկնանք:

— Չէ՛, ես ատ ժամուն կ'երթամ. ատ իմ սկզբունքս է, — Կ'ըսէ տղան:

Միւս օրը առտուան ժամը 5-ին կ'երթան գէշանոց կը մտնան:

Տղան կը տեսնայ վարնոց կնիկները այլանդակ վիճակի մը մէջ՝ մաքրուած հագուստներով, խառնիճաղանճ մազերով, երեսուն վրայի մաքրածի ներկերը թափած...

Տղան կը նայի, Կ'ըսէ.

— Ա՞ս է ձեր ըսած բոզանոցը, — սրդողած կը ձգէ, դուրս կ'ելլայ:

Ընկերները կ'ըսեն.

— Եթէ աս ալ չհաւնեցար, վաղը եկուր միասին խումար խաղանք:

Տղան կը յիշէ իր հօրը տուած երրորդ խրատը, Կ'ըսէ.

— Ես միայն յայտնի խումարպագի՛ փիրին հետ կը խաղամ:

Ընկերները կ'ըսեն.

— Ինչո՞ւ, մեզ չե՞ս համիր:

— Ո՛չ, — Կ'ըսէ տղան, — ատ իմ սկզբունքս է:

Միւս օրը ընկերները տղուն կը ցուցնեն քուլիպէին առջեւը նըս-տած մարդ մը, Կ'ըսեն.

— Ատ մարդը յայտնի խումարպագ փիր է:

Տղան կը մօտենայ քուլիպէին, կը տեսնայ խեղճ ու կրակ մարդ մը նարինջի պարսպ սնտուկ մը առջեւը դրեր, նստեր է, վրան չոր հաց կ'ուտէ: Տղան կը հարցնէ մարդուն.

— Դո՞ւն ես ամենէն յայտնի խումարպագը:

— Այո՛, — Կ'ըսէ մարդը, երկու զառերը քուլիպէին ետեւը նետեմ, գնա՛ նայէ. վեց-երեք նետեցի:

Տղան կ'երթայ, կը տեսնայ մարդուն ըսածը ճիշդ է, բայց խումար-պագի վերջն ալ ատ է:

Տղան սրդողած կը հեռանայ, կը սկսի ինքնիրեն մտածել թէ ինչ-քա՛ն խելացի էր իր գաւառացի անգրագէտ հայրը, որ իրեն ճիշդ խրատ-ներ տուած էր, քանի որ Ստանպուլի ցոփ կեանքին վայելքն ալ բա՛ն մը չէ եղեր:





2 (135). ԿԵՍԱՐԱՄԻ ՀԱՅՐԵ ԵՒ ԻՐ ՏՂԱՆ

Տ դուն մէկը կու գայ իր հօրը քով, տասը ոսկի կ'ուզէ: Հայրը կը հարցնէ.
— Ի՞նչ պիտի ընես այդքան դրամը:

Տղան ալ կ'ըսէ.

— Օուկայ պիտի երթամ արօր-մարօր, լուծ-մուծ, հագուստ-մագուստ, կօշիկ-մօշիկ, ուտելիք-մուտելիք պիտի առնեմ:

Հայրը կ'ըսէ.

— Հասկցա՛յ, տղա՛ս, հիմակու հիմա ա՛ն սա հինգ ոսկին, գնալ արօրը առ, իսկ մարօրը մի՛ առներ, լուծը առ, բայց մուծը մի՛ առներ, հագուստը առ, բայց մագուստը պէտքը չէ, կօշիկը առ, մօշիկը թող տեղը մնայ, ուտելիք անշո՛ւշտ պէտք է տունին, բայց մուտելիքի հիչ պէտք չունիք:

Տղան կ'ըսէ.

— Հայրի՛կ, բայց սա դրամը չի բաւեր:

— Ո՛չ տղա՛ս, — կ'ըսէ հայրը, — պէտքցու բաներուն համար հինգ ոսկին բաւ է:

Տղան կը նայի որ հօրմէն չպիտի կրնայ փրցնել մնացած հինգ ոսկին, խորամանկութեան կը դիմէ: Հայրը ճերմակ էջ մը ունի եղեր, կ'երթայ ան սեւ կը ներկէ, որ հայրը չճանչնայ, եւ ընկերոջը միջոցով բերել կու տայ հօրը քով, կ'ըսէ.

— Հայրի՛կ, նայէ՛ ինչ առողջ եւ աղուոր էջ է, տասը ոսկի կ'արծէ, բայց հինգ ոսկիով պիտի տայ, քանի որ ընկերս դրամի պէտք ունի:

Հայրը կը նայի որ իրապէս աղուոր էջ է եւ հինգ ոսկիի շա՛տ ածամ է, կը գնէ իր սեփական էջը:

Տղան ալ իրեն ուզած տասը ոսկին կարգադրած կ'ըլլայ:



3 (136). ԿԵՍԱՐԱՄԻ ԱՂՋԻԿԸ ԵՒ ՀՐԻԱՅ ՓԵՐԵԶԱԿԸ

Մ լեայ փերեզակ մը փայլուն-մալլուն բաներ դարակի մը վրան դրած, վիզէն կախած ծախելով կը հասնի մինչեւ Կեսարիա: Փողոցէ փողոց կը պտտի, հոն բան մը չի կրնար ծախել, քանի որ Կեսարացիները ամէն խարեւ-խուրեւ բանի դրամ չեն տար: Օտտ քալելէն յոգնած հրէան կը սրդողի հոտտեղի մարդոցմէն, կը մտածէ. «Պօջ բան է, ասոնք ապրանք առնող չեն, ելլամ հոստեղէն երթամ»:

Մէջ մըն ալ ճամբան կը տեսնայ երկու հայ պզտիկ աղջիկներ թեք ոտք կը խաղան: Մէկ աղջկան թեք հրէան ոսկի պիլեզիկ մը կը տեսնայ, կը մտածէ ձեւով մը առ պիլեզիկը ձեռք անցընել: Հրէան կը մօտենայ առ աղջկան, կը ցուցնէ իրեն փայլուն ճրճըխ-պըճըխները, կ'ըսէ.

— Նայէ՛, եթէ կը հաւնիս, ասոնք ես քեզի կու տամ, դուն ալ քու թեկնդ ինծի տուր:

Պզտիկ աղջիկը կ'ըսէ.

— Ինչո՛ւ չէ, կու տամ, եթէ դուն առ բարձր քարին վրայ ելլաս եւ էշու պէս զոաս:

Հրէան կը մտածէ՝ չօճուխի խելք է, մարդ ալ չկայ որ իրեն տեսնայ: Կ'ելլայ առ բարձր քարին վրայ, կը սկսի զոալ՝ աի՛, աի՛: Ետքը վար կ'իջնայ, կ'ըսէ.

— Հայտէ՛ նայիմ, ա՛ն ասոնցմէ որը որ կը հաւնիս, ձեռքիդ պիլեզիկը տո՛ւր:

Պզտիկ աղջիկը քա՛հ-քա՛հ կը խնդայ, կ'ըսէ.

— Դուն քու էջ հալովդ թեկս պիլեզիկին ոսկի ըլլալը կը գիտնաս, եւ Կեսարացիի աղջիկ ըլլալովս կը կարծես որ չե՞մ գիտեր անոր ոսկի ըլլալը:



4 (137). ԿԵՍԱՐԻՈՅ ՃԻՆԵՐՈՒՄԸ ԿՂՐԱՍԵՒՐԸ

Ա եր Կեսարիայի մէջ ձմեռը շատ պաղ կ'ըլլար, բայց շատ հաճելի: Ես շատ կը սիրէի ձմեռը ձիւնի հետ խաղալ, եւ նոյնիսկ մաքուր ճերմակ ձիւնը տուն կը բերէիմք եւ պէքմէզի հետ խառնելով կուտէիք: Կեսարացի տանտիկիները աշունէն կը պատրաստուէին ձմեռուան: Մառանները կը լեցունէին ամէն տեսակ ուտելիքներով, որ պաղ օրերուն նեղութիւն չքաշէն: Արդէն Կեսարացիներուն տուները առանց պատուրմա-սուճուխի չէին ըլլար, որոնք բաւական մեծ դժուարութեամբ, երկա՛ր բարակ գործողութիւններով կը պատրաստէին եւ մառանին առաստաղէն կը կախէին, որ չորնան եւ ձմրան օրերուն համով հոտով ուտեն:

Լուսահոգի Ծաղիկ մայրս օր մը ինձմէ մեծ քրոջս ըսաւ.

— Արշակունի՛, քըզը՛մ (աղջի՛կս), իջի՛ր մառանը, քիչ մը բրինձ բեր, փիլաւ եփեմ:

Քոյրս որ կազմակերպուած եւ գործունեայ, հասած աղջիկ մըն էր, իսկոյն իջաւ վար, բայց մառան չմտած սարսափահար ետ եկաւ: Ան սկսաւ պատմել թէ ինչպէս ճիւղերը մառանին մէջը հարսնիք կ'ընեն եւ ինքը իր ականջներովը լսեց անոնց ծնծղաներուն ձայները:

Մայրս որ լուրջ կի՛ն էր եւ այդ տեսակ բաներուն շատ չէր հատար, սկսաւ խնդալ եւ մեզ՝ երեխաներուս ալ հետը առնելով մառան իջաւ: Մառանի դուռին առջեւը հասանք եւ սկսանք լուռ ականջ դնել: Իսկապէս Արշակունի քոյրս ճիշդ կ'ըսէր. ծնծղաներու ձայներ կու գային:

Մենք բոլորս լուռ կը սպասէինք թէ մեր մայրը ի՛նչ պիտի ընէ:

Ծաղիկ մայրս, որ ոչ միայն գիտակից, այլեւ անվախ կի՛ն մըն էր, քիչ մը մտածելէն վերջ յանկարծ մառանին դուռը կոնակի վրայ բացաւ: Եւ ի՛նչ տեսնենք: Պղնձէ մեծ կաթսային կափարիչը կիսաբաց մնացեր է եւ նոր յայտնուած մուկերը բարձրէն կախուած սուճուխներուն, պատուրմաներուն հասնելու համար, անընդհատ կը փորձեն բարձրանալ այդ պղնձէ կիսաբաց կափարիչին վրայ ելլել, ծնծղայի ձայներ հանելով...

— Հիմա տեսա՞ք. — ըսաւ մայրս մեզ համոզելով, — ուրեմն ոչ թէ ճիւղերը, այլ մուկերն են որ «հարսնիք» կ'ընէին...



5 (138). ԿԵՍԱՐԱՎՄԻ ԵԿԶԱՐԸ

Ա եր Նազարը օրին մէկը խօսքի մէջ իր ընկերոջը կ'ըսէ.

— Գիտե՞ս, ես մարդը աղբիւր կը տանիմ, ծարաւ ետ կը բերեմ:

— Հայտէ՛, — կ'ըսէ ընկերը, — եկուր երթանք աղբիւրը, տեսնանք զիս ի՞նչպէս ծարաւ ետ կը բերես:

Կ'երթան կը հասնին աղբիւրի մը քովը, ընկերը կ'ըսէ.

— Ես հիմա ջուր խմեմ, տեսնանք դուն ի՞նչպէս զիս ծարաւ ետ պիտի տանիս:

Նազարն ալ կ'ըսէ.

— Հոստեղը ջուր խմես նէ, ո՛չ մէկը կը տեսնայ: Եկուր երթանք շահիթ մը բերենք, որ տեսնայ:

— Է՛ հայտէ՛, երթանք մէկը շահիթ բերենք, — կ'ըսէ ընկերը եւ ետ կ'երթան:

— Ես քեզի չըսի՞ աղբիւրը կը տանիմ, ծարաւ ետ կը բերեմ, — խնդալով կ'ըսէ Նազարը:

Անանկ քի Նազարը հէ՛մ խելացի էր, հէ՛մ ճարպիկ էր:





6 (139). ԿԵՍԱՐԱՍԻ ԱՐԹԻՆ ԱՂԱՆ

Աեսարացի Արթին աղան պատերազմային խանութ մը բացած էր: Խանութը պատերազմային զատ սուճուխ ալ կար: Օր մը յաճախորդ մը խանութէն ներս կը մտնայ, կը տեսնայ որ Արթին աղան ուրիշ յաճախորդի մը գնումներուն հաշիւը կ'ընէ, աղիթէն օգուտ կը քաղէ, եւ կը սկսի ցուցադրուած պատերազման, սուճուխը համտեսել: Բաւական ուտելէն ետքը կը հարցնէ.

- Արթի՛ն աղա, ան չէ ամմա, քանի՞ է ասոր գինը:
- Պէշ լիրա (հինգ ոսկի), — կ'ըսէ Արթին աղան թուրքերէնով:
- Օխա՞ն՝, — կը հարցնէ համտեսող մարդը զարմացած:
- Չէ՛, քու կերածներդ, — կ'ըսէ Արթին աղան:



7 (140). ԿԵՍԱՐԱՍԻ ՊԱՍՏԵՐԱՍԱՆ

Պատերազման Կեսարացիներուն կեանքին անբաժան մասն է: Կեսարացիները շատ լաւ պատերազմ կը անեն: Նախ կ'երթան մտավաճառին, միսին աղէկ տեղը կ'ընտրեն, միսը տուն կը բերեն, կը մշակեն, կ'աղեն, պասխը կը դնեն, միսին ջուրերը դուրս կու գան, վերջը չէմէնի մէջ կը մտցնեն, կը չորցնեն: Այնպէս որ երկար բարակ պատմութիւն է: Բայց պատերազման շինելէն աւելի, այն բարակբարակ կտրելը վարպետութիւն կը նկատեն: Աս ալ ըսենք որ Կեսարացիները պատերազման կտրելու վարպետ են եւ իրենց այդ շնորհքով կը հպարտանան:

Օր մը Կեսարացիի մը պատերազման կը գողնան: Ան կը սկսի ախու վախ ընել եւ ըսել.

— Պատերազման գողցնելուս չեմ ցաւիր, կը ցաւիմ որ բարակբարակ կտրել պիտի չկրնամ...





8 (141). ԹՐՔԱԽՕՍ ԿԵՍԱՐԱՍԻՆ




Եսարացիները ընդհանրապես թրքախօս կ'ըլլան:
Օրին մէկը վարժապետ մը Կեսարիա կ'երթայ, Կեսարացի-
ները կը ժողվէ, կ'ըսէ.

— Դուք հա՛յ էք, ասկէ վերջը պետք է որ հայերէն սորվիք եւ
հայերէն խօսիք...

Ներկաները լուռ կը լսեն, իրարու երես կը նային: Մ'էջերնէն մէկը,
որ անլի համարձակ էր, մատը կը վերցնէ, կ'ըսէ.

— Պու հայերէն նէ՞ տիր՝ թագաւոր, ո՛ր, ո՛ր. թիրքնէ էօյլէ
սեօզլէր եօք (Ան հայերէնը ի՞նչ է՝ թագաւոր, ո՛ր, ո՛ր. թուրքերէնի մէջ
ատ տեսակ բառեր չկան):



9 (142). ԿԵՍԱՐԱՍԻՆ ԵՒ ՊՈԼՍԵՍԻՆ



Եսարացիին մէկը թրէնով Պոլիս կ'երթայ: Պոլսեցի մըն ալ
կու գայ անոր դիմացը կը նստի:

Կեսարացին կը հանէ չըխընը, կը բանայ, մէջէն պաստըր-
մա, սունուխը կը հանէ, կը սկսի ուտել, Պոլսեցիին ալ կը հրամցնէ, կ'ըսէ.

— Պուեուրընըզ (հրամմեցէ՛ք):

Պոլսեցին կ'ըսէ.

— Եօ՛ք, պէնիմ հեմարօյնմ վար (Ո՛չ, ես թուրք ունիմ):

— Աման, ճանը՛մ, — կ'ըսէ Կեսարացին, — կէ՛լ, պու կիւն պաս-
տըրմայը եիյէլիմ, եարըն տա օնը եիյէրիզ (Սիրելի՛ս, եկուր այսօր
պաստըրման ուտենք, վաղն ալ ա՛տ կ'ուտենք):






IO (I43). ԹՕՄԱՐԳԱՅԻ «ԿՈՃԱԿԸ» ԵՒ
ՄԱՍՈՒՄԵՆ ՕՍԿԵՈՂ ԹԵՅՉԵՆ



օմարգա մարդ մը կար, անունը «Կոճակ» էին դրած, քանի որ շատ պզտիկ էր:
Օր մը հայրիկս, «Կոճակը» եւ ուրիշ քանի մը հոգիներ պտույտի կ'երթան: Ծամբան այլազգ կիւն մը մածուն կը ծախէ:

- Ասոնք կ'ըսեն.
- Ի՞նչո՞ր հասկնանք քի աւ մածունը իւղո՞տ է թէ՞ չէ: «Կոճակը» կ'ըսէ.
- Ես հիմա կ'երթամ կը հասկնամ:
- «Կոճակը» կը մօտենայ մածուն ծախող կնիկին, կ'ըսէ.
- Թէ՛յզէ՛, մածունդ իւղո՞տ է թէ՞ իւղոտ չէ:
- Կիւնն ալ կ'ըսէ.
- Ու՛, իմ մածունս շա՛տ իւղոտ է:
- «Կոճակը» կ'ըսէ.
- Բայց մենք քրիստոնէայ ենք, Պահքի մէջ ենք, իւղոտ մածուն չենք կրնար ուտել:
- Կիւնն ալ կ'ըսէ.
- Հոգի՛դ սիրեմ, մերանը բռնելէն առաջ կաթին իւղը եօթը անգամ վրայէն քաշած եմ:
- «Կոճակը» կու գայ իր ընկերներուն քովը, կ'ըսէ.
- Տղա՛ք, էլէ՛ք երթա՛նք, մածունին մայրիկը ք... է:




II (I44). ՄԻ՛ ԽՆԴԱՐ ԴՐԱՄԻԻ՛Վ՝
ԿՈՒ ԳԱՅ ԳԼՈՒԽԻ՛Վ



րին մէկը Թօմարգայի մէջ պապաս իր ընկեր Կարապետին հետ ճամբայ կ'երթայ: Ծամբան մարդ մը կը տեսնան, անոր վերին շրթունքը ուղտի շրթունքին պէս պատուած կ'ըլլայ: Աս Կարապետը կը սկսի մարդուն վրայ խնդալ:

- Հայրս կ'ըսէ.
- Կարապե՛տ, ինչո՞ւ կը խնդաս:
- Կարապետն ալ կ'ըսէ.
- Չե՞ս տեսնար, մարդուն շրթունքը ուղտի շրթունքի կը նմանի: Կարապետին կնիկն ալ պատճառ ունի եղեր, ատ օրերուն կը ծննդաբերէ: Ամմա ի՞նչ կը բերէ. ճիշդ ատ մարդուն պէս՝ պատուած շրթունքով գաւակ մը կը բերէ: Տղուն ալ կոկորդին ծակը գոց կ'ըլլայ. կաթ չի կրնար ո՛չ ծծել, ո՛չ ալ կլլել: Տղան անօթութենէն կը մեռնի:
- Օրեր ետքը Կարապետը կը տեսնայ հայրս, կը պատմէ անցած դարձածը:
- Հայրս կ'ըսէ.
- Տեսա՞ր Կարապե՛տ, դուն ատ մարդուն վրայ խնդացիր՝ Աստուած գլխուդ բերաւ:
- Մի՛ խնդար դրացիիդ՝ կու գայ գլուխիդ:





12 (I45). ԹՕՄԱՐՉՈՎՄԻ ԽԱՉԵՐԸ



Թօմարգա Խաչեր անունով մարդ մը կար: Ան մարանկոզ էր: Օրին մէկը կին մը օխլավու մը շինել կու տայ Խաչերին: Խաչերը օխլավուն կը շինէ, ամա կինը յաջորդ օրը կու գայ, Խաչերին կ'ըսէ.

— Աս օխլաւուն քիչ մը կարճ եղած է:


Խաչերն ալ կ'ըսէ.

— Տո՛ւր քիչ մը երկնցնես, — կ'առնէ օխլաւուն թեին տակը, կը

սկսի քաշել:

Կնիկն ալ կ'ըսէ.

— Ամա՛ն, ամա՛ն, կ'օգտէ՛, ալ շա՛տ երկնցաւ:



13 (I46). ԹՕՄԱՐՉՈՎՄԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ



Պաչ Թօմարգայի մէջ ամէնը հայ էին: Թօմարգայի մէջ հայ-կական եկեղեցի կար, բայց մզկիթ չկար: Վերջը վերջը է-կան միմարեով մզկիթ շինեցին: Մօլլան սկսաւ պօտալ իրենց

«Ալլահուաքպար»-ը:

Թօմարգացիին հարցուցեր են.

— Ժամը քանի՞ն է:

Ան ալ ըսեր է.

— Բուսած քարին վրայ մարդը կա գոռայ...

Այսինքն՝ միմարեին վրայ մօլլան կը գոռայ, ուրեմն ցերեկուան

ժամը 12-ն է:





14 (I47). ԹՕՄԱՐՉԱՎՅԻՆԵՐԸ ԵՒ ՕՂԱՆԱԳԸ



օմարգայի երկինքէն առաջին անգամ թայարա մը կ'անցնի: Երկու Թօմարգացի էրկմարդեր թայարան առաջին անգամ կը տեսնան, կը զարմանան: Մէկը միսին կը հարցնէ.

— Աս ի՞նչ է, եսօ:

Միսն ալ կ'ըսէ.

— Կարծեմ ասի հազար տարուան ճանճ է. ասկէ աղէկ ինչ կ'ելլայ:



15 (I48). ԿԵՍԱՐԱՎՅԻ ՏԵՏԵՆ



նաջ մեր Կեսարիոյ մէջ աղջիկը առանց տեսնալու կ'ամուսնացնէին, ինք չէր գիտնար թէ որու հետ պիտի ամուսնանայ:

Հարսնիքը կ'ըլլայ, կը լմննայ, ամէն մարդ իր տունը կ'երթայ: Հարսը կը տեսնայ քի միայն մէկ ծեր մարդ մը նստած մնաց, կ'ըսէ.

— Տէտէ՛, սէն քիմի՞ն տէտէսի սըն (Պապի՛կ, դուն որո՞ւն պապիկն ես):

Ան ալ կ'ըսէ.

— Կէլէն կիտէն եօլճը տըր, տէտէ պուրտա երլի տըր (Եկող գացողը ճամբորդ է, պապիկը աստեղացի է):


Հարսը դուրս գերս կ'երթայ կու գայ, կը տեսնայ ատ նոյն ծեր մարդը դէտ նստած է, նորէն կը հարցնէ.

— Տէտէ՛, սէն քիմի՞ն տէտէսի սըն (Պապի՛կ, դուն որո՞ւն պապիկն ես):

Ծեր մարդը նորէն նոյնը կ'ըսէ.

— Կէլէն կիտէն եօլճը տըր, տէտէ պուրտա երլի տըր. պէն սէնին քօճա՛նըմ (Եկող գացողը ճամբորդ է, պապիկը աստեղացի է. ես քու ամուսի՛նդ եմ):





16 (149). ՄՈՒԲԱԼԵՌՄԻ ՊԱՊՈՒԿԻՆ ԻՃՈՒԿՆԵՐԸ



ամանակին մեր Մուսալեոցի պապուկներէն մէկը երկու էշուկով Մուսա լեռ կը բարձրանայ փայտ կտրելու: Պապուկը փայտը կը կտրէ, կը բեռնէ իր երկու էշուկներուն: Ատ երկու էշուկներն ալ կը կապէ իրարու, որ մէկը միւսին քաշելով շուտ տուն հասնի:

Մէյ մըն ալ էշուկին մէկուն ոտքը կը սահի, լեռնէն վար կը գլտորի: Չէ քի միւս էշուկն ալ կապուած էր անոր, միւս էշուկն ալ անոր ետեւէն կ'երթայ: Պապուկը եարտըմ կը կանչէ.

— Եա՛ Յիսո՛ւս, եա՛ Մուսա, եա՛ Խըտըր (Ա՛յ Յիսուս, ա՛յ Մովսես, ա՛յ Ա. Սարգիս):

Պապուկը կը տեսնայ ատ կանչած սուրբերէն հի՛չ մէկն ալ իրեն եարտըմ չեն ըներ, կ'ըսէ.

— Ամա՛ն, չպիտի գաք մէ, մի՛ եկէք. էշերուն տակը կը մնաք, ետքը դուք ալ կը մեռնիք:



17 (150). ԵՕՉՂԱՏՄԻ ՆՃՂՆՈՒԲՈՒՆԵՐԸ



ենք Եօզղատցի տարիքոտ դրացի մը ունէինք, անունը Նուրիցա էր: Ան կը նստէր, իր կեանքէն դէպքեր կը պատմէր: Օր մը սկսաւ պատմել.

«Ես Եօզղատ նշանուած էի: Օր մը նշանածս եկաւ: Մեր տունն ալ մէկը չկար, վախցայ, խոհանոցն ալ մեծ քիւփեր կ'ըլլա՞ն եա, մամաս մէջը բուրդ դրած էր, որ լուար: Մտայ ատ քիւփին մէջը:

Մամաս տուն կու գայ, կը սկսի ինծի փնտոել: Նշանածիս կը հարցունէ.

— Ո՞ր է Նուրիցան:

Նշանածս կ'ըսէ.

— Չիտե՛մ, էկայ, զիս տեսնալուն պէս փախաւ չեմ կրնար գտնալ զինք:

Մամաս ալ կը սկսի փնտոել: Սօն փօստա ես քիւփին մէջէն ձայն տուի.

— Մայրի՛կ, պէն պուրտա՛ ըմ (Մայրի՛կ, ես հո՛ւս եմ):

Մամաս ըսաւ.

— Ինչո՞ւ հոն մտեր ես:

— Դուն չըսի՞ր նշանածդ գայ մէ, վարտիքիդ ուշխուրը սղխը կապէ: Ես ալ վախէս քիւփին մէջը պահուղտեցայ:





18 (151). ԵՕԶՂԱՏՄԻՒՆ ԽՈՐՀՈՒԲՂԸ

Եօզդատցին ուրիշին խորհուրդ տուեր է. «Բերքս առատ է ըսելով մի՛ ուրախմար. մտանը մտնայ՝ ան ատենը տե՛ս: Կինս հաւատարիմ է ըսելով մի՛ ուրախմար. չունեւորութիւնդ տեսնայ՝ ան ատենը տե՛ս»:

Տղաս ճանտան է ըսելով մի՛ ուրախմար. օտար կնկան ծոցը մտնայ՝ ան ատենը տե՛ս»:



19 (152). ԱՏԱԼԱՄԻ ՀԱՐՍԸ

Առաջ մեր գաւառներուն մէջ հարսերը չխօսկան կ'ըլլային եւ իրենց մեծերը շատ կը յարգէին: Օր մը Ատանացի հարս մը իր կեւրայրին հետ ճամբայ կ'երթայ: Յանկարծ ցաւերը կը բռնեն: Կ'երթայ ծառի մը ետեւը. կը ծնի իր գաւակը, բայց այնքան կը քաշուի իր կեւրայրէն որ կու գայ կը շարունակէ անոր հետ քալել, բայց կամաց ձայնով կ'երգէ ու կու լայ.

*Պէպէիմ տալտա քօյտըմ,
Պէպէիմ ԱԷ՛ՂՂի, ԱԷ՛ՂՂի,
Եագտը պէնի քիւ էյլէտի,
Պէպէիմ ԱԷ՛ՂՂի, ԱԷ՛ՂՂի:
Ջաւակս ճիւղին դրի,
Ջաւակս ԱԷ՛ՂՂի, ԱԷ՛ՂՂի,
Մոխրացուց, վառեց ան գիս,
Ջաւակս ԱԷ՛ՂՂի, ԱԷ՛ՂՂի:*

Խեղճ հարսը հէ՛մ կու լայ, հէ՛մ կ'երթայ: Քանի որ առաջ ամօթ ըսուած բան մը կար:





20 (153). ԻՎԻՐԻԿՄԻ ՓԻՐՈՒԳԸ

Առաջ մեր գաւառներուն մէջ հարսերը հարսնութիւն կ'ընէին, կեսրայրին հետ չէին խօսեր:

Էվերէկ Փիրուզ անունով աղջիկ մը կ'ըլլայ: Ան հարս կ'երթայ: Սովորութեան համաձայն՝ կեսարին հետ չի խօսիր. հարսնութիւն կ'ընէ: Ասոնց տունին պէտքարանն ալ իրենց պարտեզին մէջը կ'ըլլայ:


Օր մը հարս Փիրուզը կը գեղուի, պէտքարան կ'ուզէ երթայ: Կեսրայրն ալ պէտքարանին դուռը գերսէն կոպած կ'ըլլայ: Հարս Փիրուզը կու գայ, կը տեսնայ որ դուռը գոց է, ի՞նչու որ անքա պիտի մտնայ, չի ալ կրնար խօսիլ. հարսնութիւն պիտի ընէ, կը սկսի եղունգներովը դուռը ճանկոտել:

Կեսարն ալ գերսէն կը կարծէ թէ շուն մըն է, կ'ըսէ.

— Ծանկոտէ՛, ճանկոտէ՛, էջէ՛կ օղլու, էջէ՛կ:

Ան ատեն հարս Փիրուզը ճարը հատած կ'ըսէ.

— Հայրի՛կ, ե՛ս եմ...



21 (154). ԹԵՐԻՐՏԱՂՄԻ ՍԿԵՍՈՒԲԸ

Նարուստ ընտանիքի աղջիկ մը Թէքիրտաղցի ընտանիքի մը հարս կ'երթայ: Սկեսուրը հարսին թերպիէ կ'ընէ: Հարսը կը տեսնա, որ սկեսուրը առտուն անկողինէն չ'ելլար, ի՞նչ պիտի ընէ, ուզած-չուզած կը հնազանդի:

Օր մը հարսին մայրը ցերեկուան ժամը 12-ին խնամիին տունը այցելութեան կ'երթայ, կը տեսնայ կեսուրը տահա անկողինը պատկած է: Ապշած կը հարցնէ.

— Ի՞նչ է, հիւս՞նդ ես:

— Չէ՛, — կ'ըսէ սկեսուրը, — անկողինէն ուշ կ'ելլամ քի մէկ ժամ պակաս ուտենք. մեր սովորութիւնը ատ է:





22 (155). ԳԱԲԱՌԱՄԻ ԿՆԿԱՆ ՀԱՅԼԻՆ



աւատացի մարդ մը գործով Պոլիս պիտի երթայ եղեր: Կնկանը կ'ըսէ.

— Քեզի համար ի՞նչ բերեմ քաղաքէն:

Կնիկն ալ կ'ըսէ.

— Սանր մը բեր:


Մարդը Պոլիս կ'երթայ, կը մոռնայ թէ կինը ինչ ուզած էր, հայլի մը կ'առնէ, կու գայ գիւղ, կու տայ կնկան:

Կինը կ'առնէ հայլին, կը նայի մէջը, կը սկսի լալ.

— Ամա՛ն, — կ'ըսէ, — մարդս Պոլիս գնաց, իմ վրաս ուրիշ կին մը բռնէր է, ան ալ աղուո՛ր:

Կինը իր մօրը եւս կը պատմէ: Մայրը կ'առնէ հայլին, կը նայի, կ'ըսէ.

— Ամա՛ն, ասոր ո՞ր տեղն է աղուոր, խօրթլախ կը նմանի: Մարդը ասոր ո՞ր տեղը հաւնէր է:



23 (156). ԳԱԲԱՌԱՄԻ ԿԱՐԱՊԵՏ ԱՂԱՎՐԸ



ր մը գաւառացի Կարապետ աղբարը կ'ուզէ դրացիի հաւնոցին հնդկահաւերէն մէկը գողնալ, անշուշտ մարդոց ոտքը կտրելէն վերջը, որ յայտնի չըլլայ:

Արդէն մութը կոխած կ'ըլլայ, երբ Կարապետ աղբարը հաւնոցին դուռը կը բանայ եւ ձեռքը հնդկահաւի մը կ'երկարէ: Հագիւ թէ դպած է հնդկահաւին, հնդկահաւը կը սկսի իր սովորութեան համաձայն Ֆշշալ, իսկ Կարապետ աղբարը կը զարմանայ, կ'ըսէ.

— Ծանր՛մ, ես սո՛ւս ըսելուս՝ դո՞ւն սո՛ւս կ'ըսես, — վախէն գողութիւնը կէս կը ձգէ, կը փախի կ'երթայ:





24 (157). ՖՐԱՆՍԱՅԻՆ ՎԵՐԱԳՂԱՐՁԱԾ
ԳՎԲԱՌԱՅԻՆ



աւառացի մարդուն մէկը տարիներով իր ժողոված դրամները կու տայ իր տղուն ձեռքը, կ'ըսէ.

— Ա՛ն, գնա՛ Ֆրանսա, ուսո՛ւմ առ, լեզո՛ւ սորվէ տէ՛ ետ դարձիր:

Տղան կ'առնէ հօրը տուած դրամները, կ'երթայ Ֆրանսա:

Կ'երթայ Ֆրանսա, կը տեսնայ անտեղի ճոխ կեանքը, ինք ալ կ'իյնայ զեղխ կեանքի մէջ: Պապային տուած դրամներուն տակէն կը մըտնայ, վրայէն կ'ելլայ: Երբ դրամները կը լմնան, տղան ետ կու գայ իրենց գիւղը:

Հայրը տղուն ուրախ-ուրախ կը հարցնէ.

— Է՛, ֆրանսերէնը աղէկ մը սորվեցա՞ր:

Տղան կ'ըսէ.

— Այո՛, փափա (հայրիկ):

Հայրը կը հարցնէ.

— Է՛, ըսէ նայիմ քիւրեքին (բահ) ի՞նչ կ'ըսեն ...


Տղան կ'ըսէ.

— Քիւրեքսիո՛ն...

— Է՛, խազմայի՞ն (բրիչ) ի՞նչ կ'ըսեն:

— Խազմասիո՛ն, — կը պատասխանէ տղան:

— Է՛, առանկ ֆրանսերէնը առանց դրամ ծախսելու մեր գիւղին մէջն ալ կը սորվէիր, — կ'ըսէ յուսախաբ հայրը:



25 (158). ԻՐԹՎՄ ՍՏՂԵՊՈՒՄ



աւառացի աղքատ մարդ մը կը տեսնայ որ ով Ստանպուլ կ'երթայ, հարստացած ետ կու գայ, ինք ալ հաւէսի կու գայ, կ'ըսէ.

— Էրթամ Ստանպուլ,

Բերեմ փարա պօլ...

Աս միտքերով ուրախ-ուրախ ճամբայ կ'ելլայ: Բայց Ստանպուլ չհասած տեղատարաւ անձրեւ մը կը սկսի: Մարդը կը նայի շուրջը. ոչ մէկ տուն կը տեսնայ: Միայն տանիքը փլած ատերակ տունի մը չորս պատերուն տակը կը կծկտի կը մնայ:

Օրեր շարունակ անձրեւը չի դադիր, մարդն ալ անօթի ծարաւ, թրջուած մուկի մը պէս առ տեղը կը մնայ:

Վերջապէս յուսահատած ետ կը դառնայ, կ'երթայ իր գիւղը: Գիւղացիները կը հարցնեն.

— Է՛, գացի՞ր Ստանպուլ,

Բերի՞ր փարայ պօլ...

Մարդը տխուր տրտում կը պատասխանէ.

— Կիրթիմ, ամմա հէր կիւն եաղմուր, հէր կիւն չամուռ (Գացի, բայց ամէն օր անձրեւ էր, ամէն օր՝ ցեխ):





26 (159). ԳԱԲԱՌԱՍԻՆ ԵՒ ԱԿԵՄԻ
ՊԱՆԴՈՎԱՊԵՏԸ



աառացի մարդուն մէկը Պոլիս կ'երթայ: Գիշեր կ'ըլլայ, մութը կը կոխէ: Մարդը պանդոկ մը կը մտնայ, սենեակ մը կ'ուզէ:

— Պարապ սենեակ չկայ, — կ'ըսեն:

Մարդը շատ կը խնդրէ: Վերջապէս կ'ըսեն.


— Մէկ հատ սենեակ մը կայ, ամմա մէջը պէտքարան չկայ:

Մարդը նաչար կը համաձայնի: Կը մտնայ առ սենեակը, կը պառկի, կը քնանայ:

Կէս գիշերին մարդուն աղիքները կը դառնան. ու՞ր պիտի ընէ: Բութի գուպայ մը կ'ունենայ, մէջը կը ք...է, գուպան ալ կ'ոլորէ, պատուհանէն վար կ'ուզէ նետել: Թերսի պէս, գուպան կ'երթայ սենեակին ձեղունը կը փակի: Առտուն մարդը կ'ելլայ, իր ճամբան կ'երթայ:

Սպասատրները կու գան, կը տեսնան ք... ձեղունը փակած: Պանդոկին տիրոջը կը կանչեն: Ան ալ Ակնցի կ'ըլլայ: Կու գայ, կը նայի ձեղունին, կը զարմանայ, իրենց բարբառով կ'ըսէ.

— Թաւանը ի՞նչպէս ելանի, ի՞նչպէս պզանի, ի՞նչպէս քաքանի... (Ձեղունը ի՞նչպէս ելեր է, ի՞նչպէս միզեր է, ի՞նչպէս ք...եր է...):



27 (160). ԱՏԱԾԱԶՈՐՄԻ ԿԻՆԸ ԵՒ ԹՈՒԲՔ
ԿԱՅԱՐԱՆԱԿԵՏԸ



տափազարցի կին մը իր երեք զաւակներով հայրենի գաւառէն Պոլիս կու գայ: Ան ժամանակ ալ կառախումբը երեք աստիճան ունէր. առաջին, երկրորդ եւ երրորդ կարգի տոմսակներ կը ծախուէին: Աս կինը երրորդ կարգի տոմսակներ կ'առնէ, բայց առանց օրէնքը գիտնալու՝ կ'երթայ իր զաւակներուն հետ առաջին կարգ կը նստի:

Կառախումբին պաշտօնեան կու գայ, կը նայի ասոնց տոմսակները, նկատողութիւն կ'ընէ որ առաջին կարգ նստած են, այնինչ պէտք է երրորդ կարգ երթային:

Ատափազարցիներն ալ հայախօս են, թորքերէն չեն գիտեր, այնպէս որ թորք պաշտօնեային ըսածները ասոնք չեն հասկնար եւ զարմացած իրարու երես կը նային:

Երբ Պոլիս կը հասնին, պաշտօնեան ասոնց կը բռնէ, շիտակ կայարանապետին քովը կը տանի: Կը պատմէ եղելութիւնը: Կայարանապետը ասոնց կ'ըսէ.

— Օ փարա ա՛գ տըր (Այդ դրամը քիչ է):

Մայրը չի հասկնար կայարանապետին ըսածը, կը հարցնէ իր ամենամեծ՝ տասը տարեկան աղջկան.

— Ի՞նչ ըսաւ մարդը:


Աղջնակն ալ հասկցած—չհասկցած կ'ըսէ.

— Օքերա մը երգէ, կ'ըսէ մարդը: Ես օքերա չե՛մ գիտեր, բայց «Մայր Արաքսի ափերով»ը գիտեմ:

Մայրը կ'ըսէ.

— Է՛, երգէ տէ՛ թող լսեն:

Աղջիկը կը սկսի երգել: Կայարանապետը եւ պաշտօնեան զարմացած եւ զմայլուած կը լսեն եւ բարի ժպիտով մը ասոնք ազատ կ'արձակեն:



28 (161). ԹՈՒՐԹԵՐԻՆ ԶԳԻՏՄՈՂ ԳՂԲՂՈՎՄԻՆ



ուրքիոյ զանազան գաւառներէն հայերը եկած լեցուած էին Պոլսոյ Սամաթիա թաղամասը: Ատ թաղն ալ տօքթօր Գէորգեանը կար:

Օր մը գաւառացիին մէկը փորի ցաւով ատ տօքթօրին քովը կ'երթայ:

Տօքթօրը անոր կը հարցնէ.

— Նէի՞ն վար (Ի՞նչ ունիս):

Թուրքերէն փորհարութեանը «ամէլ» կ'ըսեն, բայց անիկա՝ «ամէլէ» կ'ըսէ, որ գործատր կը նշանակէ:

Տօքթօրը կ'ըսէ.

— Ես քու աշխատանքդ չհարցուցի, ըսի՝ ո՞րտեղդ կը ցախ:

Ատ ժամանակ ալ տօքթօրին քովը աշխատող նըրսը՝ տիկին Ովսաննան թէյ կը բերէ որ տօքթօրը խմէ:

Աս գաւառացին թէյը կը տեսնայ, կ'ըսէ.

— Ծանը՛մ, ինձի ինչո՞ւ չես հասկնար, իշտէ իմ փորս ալ աս խմելիք չայիդ պէս կ'երթա՛յ կոր:

Տօքթօրը կ'ըսէ.

— Ամա՛ն, Ովսաննա՛, գանեցա՛յ, ա՛ն ետ տար սա թէյը:



29 (162). ԳՂԲՂՈՎՄԻՆ ԲԵՐՎՅԻ ՄԻՉ



արդուն մէկը գիտէն կու գայ Պոլիս: Միտքէն կ'ըսէ. «Էրթամ ամենէն շիք թաղամասը՝ Բերա, սրճարան մը նստիմ, պա՛ղ բան մը խմեմ»:

Կ'երթայ կը նստի, կարսօնին կը հարցունէ.

— Հոս ամենէն սուղ բանը ի՞նչ է:

Կարսօնը կ'ըսէ.

— Պիլիարտն է՝ 100 ոսկի կարծէ:

Մարդը կ'ըսէ.

— Է՛, ան ատենը պիլիա՛րտ մը բեր, խմեմ:

Կարսօնը կը հասկնայ որ մարդը գաւառէն նոր եկած է, կ'երթայ ֆիչիին մէջը կը միգէ, կը բերէ:

Մարդը կը խմէ, քիթը բերանը կը ծոէ, ամմա կը մտածէ քի աս սուղնո՞ց բան մըն է, ուրեմն աղուոր բան մըն է, կ'ըսէ.

— Հա՛տ մը ես բե՛ր:


Կարսօնը հատ մը ես կը բերէ: Մարդը նորէն կը խմէ, կ'ըսէ.

— Առաջինը երկրորդ ֆիչիին պէս չէր, ինչո՞ւ համար:

Կարսօնը կ'ըսէ.

— Որովհետեւ մէկը այրմարդու էր, միւսը՝ կնիկի:





30 (163). ԱՏԱԾԱԳՆԱԿԻ ՅՎԱՌԱ ՎՂԱԼ

Ատափազարի մէջ երեք չորս հատ հայկական եկեղեցի կար: Ամենէն մեծը հարուստներուն Ս. Կարապետ եկեղեցին էր: Ատ եկեղեցին նորոգելու համար թաղային խորհուրդին ատենապետը կ'ուզէ դիմել Ատափազարի հարուստներէն մեկուն՝ Յակոբ աղային: Ժամկոչը Յակոբ աղային կը դրկէ տունը, որպէսզի զինք եկեղեցի հրաւիրէ:

Սովորական բարե-Աստծու բարիէն վերջը ատենապետը Յակոբ աղային կ'ըսէ.

— Յակոբ աղա, աս եկեղեցին թամիր ընելու համար ի՞նչ խելք կու տաս:

Յակոբ աղան իբր թէ խելք պիտի տայ, կ'ըսէ.

— Սա՛նկ պէտք է ընել, նա՛նկ պէտք է ընել...

Ատենապետը կ'ըսէ.


— Յակոբ աղա, ատ ըսածներդ աղէկ են, ամմա մենք փարա՛ չունինք: Յակոբ աղա, դուն հէ՛մ խելք ունիս, հէ՛մ փարա...

Յակոբ աղան խորովմիշ կ'ըլլայ քի փարային հետ խելք ալ ունի եղեր, կը հանէ նորոգութեան համար ինչքան փարա պէտք է, կու տայ, ֆէսը գլուխը կը դնէ, եկեղեցիէն դուրս կ'ելլայ:

Ծամբան գացած ատենը դէմը կ'ելլայ Համբարձում աղան: Յակոբ աղան կ'ըսէ.

— Բարով խերով խելացի չըլլայանք. մանի-մանի ժամուն օտան կը կանչին, խե՛ղք կ'ուզին...

Ինք ալ գիտէր որ զինք խելքին համար չէին հրաւիրած, դիմացէն եկող Համբարձում աղան ալ գիտէր որ իր խելքին համար չէ որ կանչած էին, բայց կերպով մը խորովմիշ կ'ըլլայ:



31 (164). ԿԵՏԻԿՈՒԹՅԱՆ ՄԵՍՈՒՄՆԵՐ

Կետիկաշայի եկեղեցին թաղային խորհուրդը ժամկոչի մը պէտք կ'ունենայ: Ազդ կու տան որ ժամկոչի պաշտօնին թեկնածու եղող մէկը դիմէ:

Թաղէն մէկը կը դիմէ: Անոր կը հարցնեն.

— Գրել, կարդալ գիտե՞ս:

— Ո՛չ:

— Ուրեմն նամակներ եթէ գան, չպիտի կրնաս բաժնել, — կ'ըսեն, մարդը ճամբու կը դնեն:

Մարդը յուսահատ կ'երթայ, կը սկսի առետուր ընել: Խանութ կը բանայ, մեծահարուստ կը դառնայ:

Օր մը տօնահանդես մը կ'ըլլայ, որպէս մեծահարուստ աս մարդն ալ կը հրաւիրեն: Խօսակը, որ ամէն մէկ նշանատր անձը կը ներկայացներ, կ'ըսէ.

— Մեր այս ազգայինը մեծ յաջողութիւն ունի. թէպէտ գրել, կարդալ չի գիտեր, բայց միթապէս շա՛տ կ'օգնէ մեր թաղային խորհուրդի ձեռնարկներուն:

Մեծահարուստը նստած տեղէն կ'ըսէ.

— Եթէ գրել, կարդալ գիտնայի՛ ժամկո՛չ պիտի ըլլայի...






32 (165). ՓԼՈՎ ԳՎՄԱԾ ԳՎԲԱՌԱՄԻ ԱՂԶԻԿԸ

1930 — ականներուն Թուրքիոյ գաւառներէն շատ հայեր էկան Պոլիս:

Օր մը գաւառէն էկած աղջիկ մը Պոլսոյ փլածը պտոյտի կը տանին:

Աղջիկը կը տեսնայ ամէնքը մայրոյ՛վ են, զարմացած կ'ըսէ.

— Ամա՛ն, մե՛ղք ունի, էլլա՛նք էրթա՛նք աստեղէն. Աստուած հացերնիս պիտի կտրէ՛:



33 (166). ԳՎԲԱՌԱՄԻ ՍՈՒՐԲԻԿԸ

Մարիամ քոյրիկին հարսնիքին գացած էինք: Անոր քրոջ աղջիկը՝ Սուրբիկ նշանուած էր Արծրունիին հետ: Մանչը քովը կը նստի, աղջիկը բառ մը չի խօսիր նշանածին հետ: Նշանածն ալ խենթ կ'ըլլայ աղջկան վրայ:

Աղջկան մօրաքոյրը աղջիկին թելը տղուն թելը կ'անցունէ, կ'ըսէ.

— Մենք քիչ մը օդ առնելու էրթանք...

Աղջիկը, ըսես նէ, ամօթէն կաս-կարմիր կտրած, իր թելը կը հանէ մանչուն թելին տակէն:

Տղան կ'ըսէ.

— Սրբուհի՛, ինչո՞ւ անանկ կ'ընես. քու հոգիդ ինծի համար է, իմ

հոգիս ալ քեզի համար է:

Սրբուհին ալ քիթը կախած կ'ըսէ.

— Մեր գեղը ասանկ բաներ չկա՛ր:





34 (I67). ԳԱԲԱՌԱՄԻ ՄԱՅՐԵ ԵՒ ԱՅԼԱԳԳ ՏՂԱՆ


Օրին մեկը գաւառէն Պոլիս եկած մայր ու աղջիկ մը Մարմարայի ծովեզերքը կու գան: Աղջիկը լողալու համար ծով կը մտնայ: Ան ալ շատ աղոտորիկ բան մը կ'ըլլայ:

Այլագգ մանչ մը կը տեսնայ աս աղջիկը, կը մօտենայ, կ'ըսէ.

— Օլթա օլսամ տա, սէնի եաքալանամ (Կարթ ըլլայի, քեզ բռնէի):

Մայրը կը լսէ մանչուն ըսած խօսքը, կ'ըսէ.

— Օլթա օլուփ քըզըմ եաքալայանաղնա, սիւլիք օլ տա կէ քըչըմա եափըշ (Կարթ ըլլալուդ աղջիկս բռնելուդ՝ տգրուկ եղիր, եկուր յետոյքիս փակիր):



35 (I68). ԿԵՍԱՐԱՄԻ ՄԱՅՐ ՈՒ ԱՂՋԻԿԸ

Աեսարացիները իրենց գաւառին մէջը թրքախօս եղած են, բայց աս վերջին տասնամեակներուն Պոլիս հաստատուելով՝ նոր սերունդը առիթ ունի հայկական դպրոցներ, եկեղեցիներ յաճախելու եւ արդէն կամաց-կամաց հայախօս կը դառնայ:

Օրին մեկը Կեսարացի մայր մը իր աղջկան կ'ըսէ.

— Գըզը՛մ (աղջի՛կս), քեզի քսանհինգ հազար ոսկի տամ, գնա՛

երիք առ:


Աղջիկը յուզուած կ'ըսէ.

— Մամա՛, ես անանկ դրամով էրիկ չեմ ուզեր. ես պըռիւլը էրիկ

կ'ուզեմ:

— Քա՛, դուն էրիկմա՞րդ հասկցար, թուրքերէն սալորին էրի՛ք կ'ըսեն, չէ՞:





36 (169). ԳԱԲԱՌԱՅԻ ՏՂԱՆ ԵՒ ՄԱՆՆԻԿ ԶԱՆԵՍԸ



Էնճ տղուն մէկը գաւառէն կու գայ խամպուտ Մաննիկ հանրմին տունը, վարձակալ կ'ըլլայ. հետը կը պառկի, կ'ելլէ: Աս խամպուտ Մաննիկն ալ անոր համար խանութ կը վար-

ձէ, դերձակի արդուկ, կարի մաքինա կ'առնէ, խանութը կը շտկէ:

Տղան կը սկսի աշխատիլ, ամմա ալ տուն չի գար:

Խամպուտ Մաննիկը կու գայ խանութ, կ'ըսէ.

— Յակոբ, ինձի ասա՞նկ պիտի ընէիր:

Տղան ալ կ'ըսէ.

— Բու մէկ ծոցդ մտնալս հարի՛ւր ոսկի արժէր, հաշուէ մէյ մը.

եթէ պարտք եմ նէ՛ տա՛մ:

Խամպուտ Մաննիկը քեօն փիւշման կ'ելլայ իր տունը կ'երթայ:



37 (170). ԳԱԲԱՌԱՅԻ ՅԱԿՈԲԻՆ ՈՂԲԸ



ակորքի կնկան անունը Մաննիկ կ'ըլլայ: Օրին մէկը աս Մաննիկը կը մեռնի: Յակորքը կ'երթայ գերեզմանին գլուխը կ'ըսէ.

*Յակոր կելտի մէզարընըն պաշընա,
Քա՛լք տա՛ պիր պա՛ք կէօզլերիմին եաշընա,
Մաննիկ եաթմըշ մէզարընըն ալթընտա,
Քուշլար սըչմըշ մէզարընըն թաշընա:*

*Յակոր կելտի մէզարընըն պաշընա,
Քա՛լք տա՛ պիր պա՛ք կէօզլերիմին եաշընա,
Աննիկ, Մաքրիկ, Սուրբիկ տուտու, հէփիսի
Աճի—աճի աղլըյօրլար սէնին իչին:*

*Յակորը եկաւ գերեզմանիդ գլուխը,
Ելի՛ր եւ տե՛ս իմ աչքերուս արցունքը,
Մաննիկը կը քնանայ գերեզմանին տակը,
Թոչունները կ'աղտոտեն գերեզմանին քարը:*

*Յակորը եկաւ գերեզմանիդ գլուխը,
Ելի՛ր եւ տե՛ս իմ աչքերուս արցունքը,
Աննիկ, Մաքրիկ, Սուրբիկ տուտուները
Քեզ համար աղի արցունք կը թափեն:*





38 (171). ԹՕՍԱՐԶՍԿԻՆԵՐԸ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԷՉ



Թմարգացի միւսի Յարութիւնը եւ իր ընկերը Ամերիկա կ'երթան: Հոն գործատուն մը կը մտնան աշխատելու: Անոնք ալ արդէն լեզու չեն գիտեր եա:

Ծէֆը սեղանին վրայ դրուած ժամացոյցին վրայ ցոյց կու տայ թէ միւսն է՛րբ պիտի աշխատին:


Ետքը ուրիշ գործատոր մըն ալ կու գայ, շէֆը իր թելի պզտիկ ժամացոյցին վրայ ցոյց կու տայ, կ'ըսէ անոր.

— Աս ժամէն միւսն էս ժամը պիտի աշխատիս:

Միւսի Յարութիւնը կ'ըսէ իր ընկերին.

— Տեսա՞ր մը եա, մեզի խոշոր ժամացոյցը ցուցուց, ուրեմն մեզ շա՛տ պիտի աշխատցնէ, զինք ալ՝ քի՛չ:

— Աս մեզ կը խաբէ կոր, — կ'ըսեն, երկուքն ալ գործատուներն կը փախին:



39 (172). ԻՎԻՐԻԿՅԻ ԲԱԲԵԼ ԱՂԱՆ



Վերեկցի Կարապետ աղան իննիսունվեց տարեկան հասակին մէջ կը մեռնի:

Թաղելու ժամանակ իր տարեկից ընկերներէն մէկը՝ իննիսունհինգ տարեկան Բաբել աղան խօսք կ'առնէ, կ'ըսէ.

— Կարապե՛տ աղա, դուն ծաղիկ հասակիդ մէջ գացիր: Մենք ալ պիտի գանք ետեւէդ, ամմա քիչ մը ո՛ւշ կու գանք:





40 (173). ՀՐԻՍԻՆ ՕԳԵՈՂ ՀՐԻՎՆ



րեայ մը կը մեռնի: Դատաստանէն վերջը անոր հոգին դրախտ կը դրկեն: Միջոց մը ետքը աս հրէան կ'երթայ դրախտի դոնապան հրեշտակին կ'ըսէ.

— Ի՞նչ կ'ըլլայ, սիրտս շատ անդուեցաւ, ձգէ ինձի քիչ մը դուրս երթամ, պտտիմ:

Դոնապան հրեշտակը կ'ըսէ.

— Դրախտէն լաւ տե՞ղ մը պիտի երթաս: Հոս եկողը մէյ մըն ալ աշխարհք չի կրնար երթալ:

— Ուրեմն, — կ'ըսէ հրէան, — արտօնէ ամպի մը վրան նստիմ, առանց աշխարհք իջնալու երթամ երկինքը շրջիմ:

Հրեշտակը կ'ըսէ.

— Ժամուան մը համար հրաման կու տամ, գնայ ետ եկուր:

Հրէան կը հեծնի ամպի մը վրայ, կ'երթայ. ժամը չլմնցած ետ կու գայ:

Քանի մը օր ետքը հրէան նորէն կ'երթայ դոնապան հրեշտակէն հրաման կ'ուզէ: Հրեշտակը կը նայի որ ժամէն շուտ կու գայ կոր, կ'ըսէ.

— Ատենը մէյ մը առանց հրամանի կրնաս երթալ եւ ետ գալ:

Այսպէս օրեր, ամիսներ կ'անցնին:

Օր մը աշխարհքէն երկինք հեռագիր մը կը քաշեն, կ'ըսեն. «Ով Աստուած, այս ի՞նչ փորձանք էր որ մեր գլխուն բերիր: Կարծես թէ ջրհեղեղի տակ ենք. փողոցները ջուր կոխեց, գետերը բարձրացան, ցանած հունտերնիս գլուխ չտուած փտեցան, մեր քաղաքը մինչեւ հիմա ասանկ անձրեւ չէր տեսած. մեր մեղքը ի՞նչ էր»:

Աստուած անմիջապէս հրեշտակները կը ժողվէ, կ'ըսէ.

— Ո՞վ ըսաւ ձեզի որ այս քաղաքին վրայ այսքան անձրեւ տեղայ:

Հրեշտակները ամպերուն կը հեռաձայնեն.

— Ձեզմէ ո՞ր մեկերնիդ այս քաղաքին վրայ ամէն օր գնաց: Ամպերէն մէկը կ'ըսէ.

— Երկինքէն մարդ մը ամէն օր վրաս կը հեծնի, կ'ըսէ. «Ինձի տար ատ քաղաքին վրայ»: Ես ալ կ'երթամ, քանի մը ժամ ատ քաղաքին վրայ կը պտտցնեմ, անձրեւ ալ կը տեղամ, կը վերադառնամ:


Դոնապան հրեշտակը կը կանչէ ատ հրէան, կ'ըսէ.

— Այո՛, ես քեզի հրաման տուի որ երթաս քիչ մը պտտիս, ետ գաս, բայց ինչո՞ւ ամէն օր ատ նոյն քաղաքին վրայ գացիր:

Հրէան կ'ըսէ.


— Պէ քուզո՞ւմ, օրտա պէնիմ պիր ֆուքարա աքրապամ վար՝ չօլուք-չօճուք փերուշան: Պէնիմ աքրապամ շէմշիեճի տիր (Հոգի՛ս, հոն ես աղքատ ազգական մը ունիմ՝ չօլուխ-չօճուխը փերուշան: Իմ ազգականս հովանոց շինող է): Ամպը կը հեծնիմ, հոն կ'երթամ որ ազգականս քիչ մը գործ ունենայ, դրամ շահի:





43 (176). ՀՐԻՍ ՀՕՐ ԽՐԱՏԵ

Դրեայ հայր մը իր տղուն խրատ կու տայ, կ'ըսէ.
 — Մտիկ ըրէ հօրդ խօսքը, Մօշէ՛. ես քեզմէ անելի փորձառու եմ: Դուն պէտք է Էսթերին հետ ամուսնանաս:
 — Չէ՛, հայրի՛կ, չեմ ուզեր անոր հետ ամուսնանալ:
 — Կը սխալիս, ան հարո՛ւստ է եւ աղէկ պատահ մըն է:
 — Ի՞նչ ընեմ, ես Սառան կը սիրեմ, ինք ալ ինձի: Հետեւաբար իրարու հետ երջանիկ կ'ըլլանք:
 — Է՛հ, աղէ՛կ, եմթադրենք թէ քեզ երջանիկ ըրաւ, բայց դուն ատկէ ի՞նչ շահ կ'ունենաս:



44 (177). ՍԳԱԲՈՐ ՍՂԵՆԻԿԸ ԵՒ ՅՈՅՆ ԴՐԱՄԻՆ



ակորը մեռեր է, անոր կնիկը՝ Մաննիկ սկսեր է օր ու գիշեր ողբալ.

— Ա՛խ, Յակոբիկը՛մ, վա՛խ, Յակոբիկը՛մ,
 Ինկիլիզճէ տէ պիլիր իտի՛,
 Ֆրանսրզճէ տէ պիլիր իտի՛,
 Խանլարը տա վա՛ր ըտը,
 Համամլարը տա վա՛ր ըտը...
 — Ա՛խ, Յակոբի՛կս, վա՛խ, Յակոբի՛կս,
 Անգլերէ՛ն ալ գիտեր,
 Ֆրանսերէ՛ն ալ գիտեր,
 Իջեւաննէ՛ր ալ ունէր,
 Բաղնիքնէ՛ր ալ ունէր:

Մաննիկը միշտ ասանկ կ'ըսէ ու կ'ողբայ: Դիմացն ալ յոյն դրացի մը կայ եղեր, ալ կը զգոտի աս կնկան լացը լսելէն, պատուհանը կը բանայ, կ'ըսէ.

— Քայէ՛, մէ՞ պիլիր իտի,
 Պօրո՞ւ վար ըտը
 Քա՛, ի՞նչ գիտեր,
 Ք...՞ մը ունէր:

Մաննիկը կ'ըսէ.

— Ա՛խ, պիլմէ՛զ իտի, պիլմէ՛զ իտի,
 Եօ՛ք ըտը, եօ՛ք ըտը,
 Ամմա հաւեսի վար ըտը:
 — Ա՛խ, չէ՛ր գիտեր, չէ՛ր գիտեր,
 Բա՛ն մըն ալ չունէր,
 Բայց փափա՛ք ունէր:



45 (178). ԱՄՕԹԱԿԱՐ ԻՍՂՍԸ



Իղի մը մէջ Ուրբաթ օր մը իմամը, մինարէին վրայ ելած աղօթելով հաւատացեալները մզկիթ՝ նամագի կը կանչէ: Ժողովուրդը կը ժողվոյի ճամբին մէջ, իմամը առջեւը, գիւղացիները ետեւը: Մէկ ծունկի կու գան, մէկ կ'ելլան, ինչպէս որ միւսիլմաններուն կարգն է:

Իմամը ծունկի եկած ատենը հատ մը ուժեղ բաց կը ձգէ: Ատ շա՛տ մեծ մեղք էր ճամբին մէջը, ան ալ ով ով՝ իմամը:

Իմամը իր այդ արարքէն այնքա՛ն կ'ազդուի որ կը ձգէ, կը հեռանայ ատ գիւղէն:

Տասը տարի մը կ'անցնի այդ դէպքէն, օր մը ատ իմամը կ'ուզէ երթալ տեսնալ իր հայրենի գիւղը՝ մտածելով թէ ժողովուրդը արդէն մոռցած կ'ըլլայ այդ անիծեալ դէպքը: Կ'երթայ, կը մօտենայ գիւղին, կը տեսնայ ութ տասը տարեկան տղաքը վէգ կը խաղան ու վէճի կը բռնուին՝ թէ ով մեծ է, ով պզտիկ:

Անոնցմէ մէկը կ'ըսէ.

— Ես ձեր մէջէն ամենէ՛ն մեծն եմ, քանի որ ծներ եմ այն ժամանակ, երբ իմամը աղօթքի ժամանակ ճամբին մէջը բաց ձգած է...

Իմամը ատ որ կը լսէ, միտքէն կ'ըսէ. «Ուրեմն իմ այդ արարքը արդէն պատմութիւն դարձած է գիւղացիներուն մէջ»: Վախ ու դողով կը ձգէ կը հեռանայ, առանց գիւղ իսկ մտնալու:



46 (179). ԱԼՊԱՆԱՄԻՆ ԵՒ ԶԻԹԱԻԴԻՆ ԾԻԾԸ



Ալպանացիները ի բնէ շատ կծծի կ'ըլլան: Պոլսոյ մօտերը գիւղ մը կայ. հոն գրեթէ բոլորը Ալպանացիներ են: Ատ գիւղին անունը Առնատուտ քեօյ է, այսինքն՝ Ալպանական գիւղ:

Ալպանացիները աղէկ հեղվաճի կ'ըլլան եւ կամ աղէկ մածուն կը շինեն:

Շատ Ալպանացիներ առաջ Պոլիս կու գային՝ աշխատանք գտնալու եւ քիչ մը դրամ վաստկելէն ետքը ոմանք կ'երթային իրենց գիւղը, ոմանք ալ կը հաստատուէին Պոլիս:

Ամուրի Ալպանացի մը Պոլիս կու գայ, քիչ մը դրամ կը շինէ, ետքը նորէն կ'երթայ իր գիւղը, ծեր մօրը տունը:

Մայրը տղուն գալը տեսնալով կ'որսխաճան: Կը փաթթուին, կը համբուրուին, ետքն ալ քիչ մը հաց եւ ձիթախտի շիշը կը դնէ տղուն առջեւը, որ ուտէ, ինք ալ կ'երթայ դրացիին տունը:

Տղան անօթի կ'ըլլայ, չէ՞ որ ճամբէն եկած է, ձիթախտի շիշը առջեւը կը քաշէ, քիչ մը կը ծո՛ւ շիշին բերանը եւ հացը քսելով կը սկսի ուտել:

Այդ միջոցին մայրը ներս կը մտնայ, կը տեսնայ որ տղան ձիթախտի շիշին բերանին քսելով հացը կ'ուտէ, կը մարի, գետին կ'իյնայ:

Տղան ջուր կը հասցնէ, մօրը ուշքը տեղը կը բերէ եւ քիչ մը ետքը մօրը կը հարցնէ.

— Քեզի ի՞նչ եղաւ, որ յանկարծ մարեցար:

Մայրը կ'ըսէ.

— Հէ՛յ վախ, Ստանալով գացիր եկար, ամմա մա՛րդ չեղար. երբ տեսայ որ ձիթախտի շիշին բերանը ծո՛ւելով հացը քսեցիր կերար, վրաս մարելիք եկաւ:

— Հապա ի՞նչպէս պիտի ուտէի:

— Բու հայրդ շիշը դիմացը կը դնէր, հացը անոր վրայ կը քսէր, կ'ուտէր, որ ձիթախտը չպակսի:



47 (180). ԻԲԿՕՍԼՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԵ

Բասնեթ տարեկան էի, երբ Արծանթին գացի եւ հիւանդանոց ինկայ: Ս. Գիրքը քովս պատկած էի: Կիրակի առտու մըն էր: Վարդապետը ուզողին հաղորդութիւն կու տար: Քովս եկաւ, գիրքս ձեռքը առաւ, վրայի խաչը տեսաւ, ֆրանսերէնով հարցուց.

— Քէ՛լ նասիոն (Ի՞նչ ազգի էք):

Ըսի.

— Հայ եմ:

Վարդապետը հիացմունքով սկսաւ խօսիլ.

— Ահա ժողովուրդ մը, որ Ադամ-Եւայէն եկած է եւ առաջինը քրիստոնէութիւն ընդունած...

Յետոյ ալ Գր. Լուսաւորիչին խոր Վիրապ մտնալը, ելլալը ծայրէ ի ծայր պատմեց ու աղուոր քարոզ մը տուաւ:

— Դու՞ք ինչ ազգ էք, — ըսի ես:

— Իւկօւլաւ եմ, — ըսաւ:

— Իւկօւլաւին աչքերը կապոյտ կ'ըլլան, — ըսի ես:

— Ինձի նայէ, աղջիկս, — ըսաւ, — ասկէց վերջը միայն քո՛ւ ամուսինիդ աչքերուն մէջը կը նայիս, — իր դիրքին համապատասխան խրատական մը տուաւ ու հեռացաւ:



48 (181). ՃԱՍԲՈՐԴ ԼԱԶՐԵ

Լագին մէկը օդանաւ կը նստի՝ Տրապիզոն երթալու համար: Ան կ'երթայ կը նստի առաջին կարգը, ուրիշին տեղը: Աթոռին տերը կու գայ, կ'ըսէ.

— Քու տեղդ ետե՛ւն է:

Լագը կ'ըսէ.

— Ո՛չ, — ինչտ կ'ընէ, տեղէն չ'ելլար:

Մարդուն մէկը կը տեսնայ անոնց, կ'ըսէ.

— Ես գի՞նք կը հանեմ ատ տեղէն, — կ'երթայ, ականջին կ'ըսէ.

— Բարեկա՛մս, աս աթոռը Տրապիզոն չ'երթար:

Լագը հե՛մէն կը թոի, կ'ելլայ տեղէն, կ'երթայ ետեւը կը նստի:





49 (182). ՊԱՐՍԻԿԻ ՊԻՍ ՄԻ՝ ՆԵՏԵՐ



արսիկ մը կու գայ Պոլիս, կը սկսի Պարսկաստանը գովել.
— Մենք մեր Պարսկաստանին մէջ ա՛ս ունինք, ա՛ն ունինք:
Նոյնիսկ այնքա՛ն բարձր շէնք մը կը շինուի կոր, որ ես չե-
կածէն վարպետը տանիքին վրայէն մուրճը ձեռքէն վար ձգեց, չեմ
գիտեր թէ մինչեւ հիմա գետին հասա՞ծ է, թե՞ ոչ...

Պոլսեցին ալ կ'ըսէ.

— Ո՛ր, մեր Լանկան⁴ ալ անա՛նկ խըշարներ կը հասնին, որ
Պոլիսէն կ'ելլան, մինչե՛ւ ձեր Ծահին պալատին դուռը կը հասնին...:

Ատոր համար պոչով սուտեր խօսող մարդուն կ'ըսեն՝ պարսիկի
պէս մի՛ նետեր:



50 (183). ԿԵՍԱՐԻՈՅ ՏԻՐ ՀԱՅՐԸ ԵՒ ԱՅԼԱԳԳՆԵՐԸ

1930 —ականներուն Թուրքիոյ հայերը տարբեր գաւառներէ եկած
ժողովուած էին Կեսարիոյ մէջ, որ տեսակ մը Անատոլիոյ
կեդրոնը դարձած էր: Հայերը Կեսարիա կու գային,
կ'աշխատէին, քիչ մը դրամ կը շինէին, որ գան Պոլիս հաստատուին:

Մեծ Պահքի շրջանն էր: Կեսարիոյ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ
ան ատենուան Տէր Հայրը իր սեւ սքեմով շուկային մէջը սրճարանի մը
առջեւէն կ'անցնի, ուր այլազգները նստած խըյմայով պուղաչա կ'ու-
տէին, թէյ կը խմէին եւ նարկիլէ կը քաշէին:

Այլազգները կը տեսնան մօտեցող սեւաւորը եւ կ'ուզեն անոր
ծաղրել:

Քիչ անդին գետինը սեւ շուն մը պատկած կ'ըլլայ: Այլազգներէն
մէկը կ'ըսէ.

— Փափա՛գ էֆէնտի, ասիկա՞ ալ ձեզմէ է:

Քանի որ այլազգները քրիստոնէայ կրօնաւորները անարգելու
համար անոնք «Գարապաշ» կը կանչէին, այսինքն՝ սեւ գլուխ, սեւ վե-
ղար: Գարապաշը նաեւ սեւ գլուխ ունեցող շուներուն տրուող անունն է:

Տէր Հայրը՝ բաւական լուրջ եւ խոֆեմ մարդ, կը տեսնայ քիչ անդին
պուղաչա կը ծախեն: Կը մօտենայ ծախողին կ'ըսէ.

— Ինձի դըյմայով պուղաչա՛ մը տուր:

Տէր Հայրը պուղաչան կ'առնէ, անոնց նստած սեղանին առջեւը
կը նետէ: Սեւ գլուխով շունը կը ցատկէ պուղաչային վրայ եւ կը լափէ:
Տէր Հայրը կ'ըսէ.

— Չէ՛, աղա՛, աս մեզմէ չէ՛, որովհետեւ մենք Մեծ Պահքի մէջ
ենք, միսով ուտելիք չենք ուտեր, բայց դուք կ'ուտէք:





51 (184). ԱՅԼԱԳԳ ԳՐԻԳՈՐԸ



ան եղեր երեք ընկերներ, որոնցմէ մէկն ալ՝ այլազգ: Արեւմտահայոց լաւ աւանդութիւնը կը պարտադրէ որ արժանավայել կերպով նշուի անուանակոչութեան տօնը:

Կու գայ Ս. Սարգիսի օրը եւ ընկերներէն մէկը՝ Սարգիսը լաւ խնճոք մը կ'ընէ իր տունին մէջը, Ս. Գեորգիին ալ Գեորգը կ'ընէ:

Այլազգ ընկերն ալ կ'ամչնայ քիչ մը, կը մտածէ. «Անոնք կը պատուեն զիս, իսկ ես պատիւ չեմ կրնար տալ, քանի որ սուրբի մը անունը չունիմ»: Ան իր ընկերներուն կ'ըսէ.

— Ինձի ալ հայկական անուն մը տուէք, որ ես ալ իմ անուանս օրը ձեզ պատիւ տամ:

— Ծա՛տ լաւ. — կ'ըսեն ընկերները, — քու անունդ ալ Գրիգոր թող ըլլայ:

— Դուք ինձի ըսէք սակայն, թէ ե՛րբ է Ս. Գրիգորի օրը:

— Դուն անհո՛գ եղիր, քեզի կ'ըսենք:

Խօսակցութենէն հինգ օր յետոյ այլազգ Գրիգորին ընկերները կ'ըսեն որ վաղը իր անուան օրն է: Գրիգորը պատրաստութիւններ կը տեսնայ եւ փառատոր ճաշկերոյթ մը կու տայ: Կ'անցնի քանի մը օր: Ընկերները դարձեալ կ'ըսեն թէ միւս օրը Ս. Գրիգոր է, պատրաստուէ՛:

Գրիգորը կը տատամսի. չէ՞ որ տարին մէկ կ'ըլլայ սուրբի մը օրը: Սակայն վստահելով իր ընկերներուն, դարձեալ մեծ խրախճանք մը կու տայ:

Քանի մը օրեր յետոյ Գրիգորին ընկերները կ'ըսեն.

— Գրիգո՛ր, պատրաստուէ, միւս Ծաբաթ քու անունդ է:

— Չհասկցանք, եղբա՛յր. — կ'ըսէ այլազգ Գրիգորը վրդովուած.

— դուք տարին մէկ անգամ կ'ընէք, իսկ ես երկու ամսուան մէջ արդէն երրորդ անգամն է որ կ'ընեմ:

— Է՛, — կ'ըսեն ընկերները. — Գրիգորը մե՛ծ սուրբ է. մո՛ւտն ի վիրապը կայ, ե՛լն ի վիրապէն կայ, յետոյ իր գի՛ւտ նշխարացը կայ. զաւակներո՛ւն, թոռնիկներո՛ւն յիշատակի օրերը կան...



52 (185). ԵՐԵՐ ԸՆԿԵՐ



ր մը յոյն, հայ եւ այլազգ մը իրար հետ կ'ընկերանան եւ իրարու հետ ուխտագնացութեան կ'երթան:

Ծամբան յոյնը իր եկեղեցին կը տեսնայ, կ'ըսէ.

— Ես աղօթել կ'ուզեմ:

— Հրամմէ՛, գնա՛, աղօթէ, — կ'ըսեն ընկերները:

Յոյնը կ'աղօթէ, կու գայ: Ընկերները անոր կը հարցնեն.

— Ի՞նչ աղօթեցիր:

— Աղօթեցի որ աշխարհի բոլոր այլազգները մեռնին:

Անոնք բան մը չեն ըսեր, նորէն ճամբանին կը շարունակեն: Այլազգը իր մզկիթը կը տեսնայ, կ'ըսէ.

— Ես աղօթել կ'ուզեմ:

— Հրամմէ՛, գնա՛, աղօթէ, — կ'ըսեն ընկերները:

Ան կ'երթայ կ'աղօթէ՛, կու գայ: Ընկերները անոր կը հարցնեն.

— Ի՞նչ աղօթեցիր:

— Աղօթեցի որ աշխարհի բոլոր յոյները մեռնին:

Անոնք բան մը չեն ըսեր, նորէն ճամբանին կը շարունակեն: Հայը եկեղեցի մը կը տեսնայ, կ'ըսէ.

— Ես աղօթել կ'ուզեմ:

— Հրամմէ՛, գնա՛, աղօթէ, — կ'ըսեն ընկերները:

Ան ալ կ'երթայ կ'աղօթէ, կու գայ: Ընկերները անոր ալ կը հարցնեն.

— Դո՞ւն ինչ աղօթեցիր:

Հայն ալ կը պատասխանէ.

— Աղօթեցի որ Աստուած ձեր երկուքին աղօթքը ընդունելի ընէ:



53 (186). ԱՅԼԱԳԳ ՈՍՏԻԿԱԿԱՆՊԵՏՈՒԹՅԱՆ



ստիկանապետը օր մը Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիին տէրը կը կանչէ: Թաղականները կը հաւաքուին կ'երթան, կը ներկայանան:

Ոստիկանապետը բոլոր թաղականներուն անունները մէկի-մէկի կը հարցնէ, դժգոհ կ'ըսէ.

— Ես ձեզ չկանչեցի, ես եկեղեցիին տէ'րը՝ Գրիգոր Լուսավորիչը կանչեցի:



54 (187). ՀԱՅՈՄ ԱՅԲՈՒԲԵՆԻՆ ՀՍԱՅՐՈ



ոլսահայ մը շոգենաով շուրջերկրեայ ճամբորդութեան կ'երթայ դէպի Հեռաւոր Արեւելք՝ Չինաստանի, Մաքրոնիայի, Աւստրալիոյ կողմերը...

Շոգենաւին մէջը բնականաբար ամէն ազգէ մարդիկ կ'ըլլան: Ասոնք կ'որոշեն որ ամէն մէկը իր լեզուով բանախօսութիւն մը ընէ, միւսներն ալ լսեն:

Հրէան կ'ելլայ իր լեզուով բան մը կը խօսի: Հնդիկը կ'ելլայ բան մը կը խօսի: Կարգը կու գայ հայուն: Ան ալ մեծ կրթութիւն մը չունի եղեր, ի՞նչ պիտի խօսի, կը սկսի այբուբենը ծայրէն մինչեւ եւ, օ, ֆէ—ն ըսել, բայց այնպիսի՝ յատուկ շեշտ մը տալով կ'արտասանէ, իբր կը բանախօսէ, եւ բոլոր ներկաները կը սկսին ծափահարել, կը մօտենան, կը շնորհաւորեն ու կ'ըսեն.

— Ատ ի՞նչ աղուոր խօսեցաք. շա՛տ գեղեցիկ է ձեր լեզուն:



I (188). ՖԱԹԻԿ ՄԵՆՄԷՏ Բ ՍՈՒՖԼՈՎԵՏՆԵՐ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԻՒՆԵՐ

ՄԿ ը պատմեն թէ Ֆաթիկ Մենմէտ Բ առաջուրնէ կը ճանչընար Պրուսայի Յովակիմ Եպիսկոպոսը՝ Ֆաթիկ Մենմէտ արշաւանքի երթալէ առաջ կը հանդիպի անոր, կ'ըսէ.

— Փափագ էՖէնտի, աղօթէ որ արշաւանքիս ժամանակ Բիւզանդացիներուն յաղթեմ եւ Կոստանդնուպոլիսը գրաւեմ: Ան աստենը Պոլսոյ մէջ քեզի կալուածք եւ տնօրհնութիւն պիտի տամ:

1453-ին Պոլիսը գրաւելէն վերջ Ֆաթիկ Սուլթանը նորէն կ'երթայ Պրուսա եւ նորէն Յովակիմ Եպիսկոպոսին հիւրը կ'ըլլայ, կ'ըսէ.

— Փափագ էՖէնտի, ես իմ խոստումս չեմ մոռցած: Ես քեզի Պոլսոյ Սամաթիոյ թաղին մէջը կալուածք պիտի տամ, որ հայերն ալ յոյններուն պէս Պատրիարքարան ունենան, դուն ալ իրենց Պատրիարքը ըլլաս:

1461-ին Պրուսայի Հայոց Յովակիմ Եպիսկոպոսը կը փոխադրուի նոր մայրաքաղաք՝ Ստանպուլ: Սուլթանը անոր կը նուիրէ Բիւզանդիոնի ամենագեղեցիկ եկեղեցիներէն մեկը, որը Ս. Գեորգ վերանուանելով, հիմը կը դրուի Հայոց Առաքելական Եկեղեցոյ Պատրիարքական նոր Աթոռին:

Թուրքերը Սամաթիոյ մեր ատ եկեղեցին Սուլու Մանասթըր (Ջուրով մենաստան) կ'ըսեն, Ս. Կարապետ մատրան տակը գտնուող Այագ-մային (Սուրբ աղբիւրին) համար: Երեքշաբթի օրերը հոն դուռը կը բացան եւ ժամերգութիւն կ'ըլլայ:



2 (189). ՌՈՒՄԵԼԻ ՀԻՍԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԳԵՐԵԶՍԱԿԱՆՈՒՄԵՆ

ՄԿ ը պատմեն որ Ֆաթիկ Սուլթան Մենմէտ Բ, երբ 1453-ին գրաւեց Կոստանդնուպոլիսը, մեծաթիւ գործարարներ բերել տուաւ՝ Ռումելի Հիսարի պարիսպները շինել տալու համար: Անատոլուէն ալ շատ հայեր բերել տուաւ, որ աշխատին:

Յոգնած եւ հիւծուած գործարարները երբ կը մեռնէին, հոն կը թաղուէին: Հայերը ուզած են առանձին եկեղեցի եւ գերեզմանատուն մը ունենալ եւ խնդրած են Սուլթանին, որ եզի կաշիի չափ հող մը տայ իրենց: Սուլթանը համաձայնած է:

Հայ գործարարները եզան կաշին կտրտած են՝ բարակ, շա՛տ բարակ սրբիմ դարձուցած եւ խնդրած են այդ թելի երկայնքովը իրենց հող տալ: Սուլթանին խօշին գացած է եւ հայերուն տրամադրած է այդ հողատարածքը:

Այնպէս որ Ռումելի Հիսարիի Ս. Սանդուխտ հայկական եկեղեցին եւ անոր ենթակայ հայկական գերեզմանատունը այդ ձեւով ստեղծուած են:





3 (190). ՍՈՒԼԹՂՆ ՄԱԿՍՈՒՄՆ Բ՛ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՄՆ
ՊԵՉՋԵՎՆ ՂՍԻՐՎՆՑՑ



սմանեան կայսրութեան ժամանակ կառավարութեան մէջ շատ հայ ամիրաներ ունեցած ենք:

Յարութիւն Ամիրա Պեզճեան եղած է Սուլթանի խորհրդականը եւ արքունի փողերանոցին պետը: Անոր պալատական անունը Գազազ Արթին էր: Քանի որ մինչեւ իր այդ պաշտօնին անցնիլը անիկա մետաքսի գործ ըրած էր, ասոր համար իրեն Գազազ Արթին կ'ըսէին:

Օր մը Գազազ Արթինը մետաքսի գործով Սուլթանին պալատը կը կանչեն՝ բամբակ գգելու: Սուլթանը կը տեսնայ անոր ճարպիկ շարժումները, կը մօտենայ եւ կը սկսի հետը խօսիլ: Անոր հարցումներ կ'ընէ եւ շատ խելացի պատասխաններ կ'առնէ: Սուլթանը Գազազ Արթինը քովը աշխատանքի կ'առնէ: Անոր խելքին ու սրամտութեանը համար Ամիրայի կոչում կու տայ եւ իր ամենապիւր խորհրդականը կ'ընէ:

Օր մը Յարութիւն Պեզճեան Ամիրան կը տեսնայ Սուլթանը մտածմունքի մէջ ինկած, նստած է, այնքան որ նոյնիսկ իր ներս մտնալը չի տեսնար եւ առանց գլուխը վեր առնելու կ'ըսէ.

— Գաւաթ մը ջուր տուր ինձի:

Ամիրան գաւաթ մը ջուր կը լեցնէ, կը մօտեցնէ Սուլթանին, կ'ըսէ.

— Օէֆթէլի'մ, պուրուրունը'զ (Տէ'ր իմ, հրամայեցէ՛ք):

Սուլթանը, գլուխը կախ, չի տեսնար: Մէյ մըն ալ գլուխը կը վերցնէ, կը տեսնայ Գազազ Արթինն է, կ'ըսէ.

— Վա՛յ, ներողութի՛ւն, ես կարծեցի թէ աղախինն էր:

— Հո՛գ չէ, Օէֆթէլի'մ, մենք իրարու պետք է ծառայենք, անո՛ւշ ըլլայ, — կ'ըսէ. գաւաթով ջուրը կը հրամցնէ Սուլթանին: Ինքն ալ ձեռքը կտրծքին վրայ, կը սպասէ մինչեւ Սուլթանը ջուրը խմէ:

Գազազ Արթինը գաւաթը կ'առնէ, կ'ըսէ.

— Օէֆթէլի'մ, այսօր դուն շա՛տ խոր մտածմունքի մէջ ես, ըսէ՛ ինձի քու տէրտոյ:

— Մի՛ հարցներ, Գազա՛զ Արթին, վաթանը վտանգի տակ է: Պատճառը Մոսկօֆն է: Ռուսերուն նաւատորմը Պողազիչի՞ հասած է. պատերազմէն վերջը վնասուց հատուցում կը պահանջէ՞¹⁰: Մենք այդքան ոսկի չունինք մեր քաասային մէջ, որ տանք, ազատինք:

Գազազ Արթինը կը պատասխանէ.

— Հոգ մի՛ ըներ, Սուլթա՛նս:

Սուլթանը կ'ըսէ.

— Հոգ չընեմ, հապա ի՞նչ ընեմ:

— Դուն քու թագաւորութիւնդ երեք օրուան համար ինձի տուր, ես գիտեմ իմ ընելիքս:

Սուլթանը զարմացած կ'ըսէ.

— Տուի՛: Տեսնամ ի՞նչ պիտի ընես, — վիզէն կախուած պանակէն կը հանէ, Գազազ Արթինին վիզը կ'անցումէ:

Գազազ Արթինը երեք օրուան մէջ կ'երթայ մարդոց տուները, ինչքան պախըր թէնճիրէ-թավա կայ կը ժողվէ, հալեցնել կու տայ, պղինձէ մետաղադրամ կտրել կու տայ: Կ'երթայ շուկայ, ձեռքի վրայ ինչքան ոսկեդրամ կայ կը ժողվէ, կը փոխարինէ պղինձէ դրամներով: Ժողվուած ոսկիներն ալ կը հալեցնէ, կը պատրաստէ հուտուտը, վակոններով ոսկին կը տանի ռուսի նաւատորմիդին քափթանին կու տայ որպէս վնասուց հատուցում: Ռուսական նաւերը ետ կը քաշուին, կ'երթան դէպի Սեւ ծով:

Ետքը Գազազ Արթինը կ'ելլայ կ'երթայ Սուլթանին քովը, վիզէն կը հանէ անոր տուած պանակէն, կ'ըսէ.

— Սուլթա՛նս, ե՛տ առ քու թագաւորութիւնդ:

Սուլթանը կ'ըսէ.

— Սեօլլէ (ըսէ՛), Արթի՛նս, աս քու ըրած աղէկութեանդ դիմաց ի՞նչ կ'ուզես որ քեզի տամ:

Ան ալ կ'ըսէ.

— Սուլթա՛նս, քեզմէ հողակտոր մը պիտի ուզեմ, վրան շինել պիտի տամ հիւանդանոց մը: Մեռնելէս ետքը ինձի պախարակելու փոխարէն ողորմի կու տամ:

— Ծա՛տ խելացի ես, Գազազ Արթին, — կ'ըսէ Սուլթանը եւ կը համբուրէ անոր ճակատը:

— Խելքը ինձմէն չէ, Սուլթա՛նս, Աստուծմէ՛ն է, — կ'ըսէ Գազազ Արթին:

Աս ձեռով հիմը կը դրուի Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցին: Ետքը Սուլթանը կը կանչէ իր մարդիկը, կ'ըսէ.

— Հո՛ս եկէք նայիմ: Ես տխուր էի, հի՛չ մէկերնիդ չհարցուց քի մեր Սուլթանը ի՞նչ տէրտ ունի: Միայն Գազազ Արթինը ինձի օգնեց:

Անկէ վերջը պալատականները նախանձութենէն թշնամացան Պէզնեան Արթին Ամիրային հետ:



4 (191). ԳԱԶԱԶ ԱՐԹԻՆ ԱՄԻՐԱՆ ԵՒ ՀԱՅՈՍ ՍԱՅՐ ԵՎԵՂԵՅԻՆ՝



ոտու մը Սուլթանը Գազազ Արթինը կը փնտոէ, բայց չի գտնար: Յանկարծ ուշացած Գազազ Արթինը պալատ կը մտնայ:

Սուլթանը կը հարցնէ.

— Ո՞ր էիր:

— Հիւանդ էի, — կ'ըսէ Գազազ Արթին, — գիտե՞ս, Սուլթա՛նս, ամէն առտու ես եկեղեցի կ'երթամ, կ'աղոթեմ: Մեր եկեղեցին ալ առանց տանիք մնացած է, ասորը համար հովը գլխուս զարկաւ, պաղ առի:

Սուլթանը կը զգայ որ Մայր եկեղեցույ վերակառուցման խնդիրը կայ, քանի որ հին եկեղեցին հրդեհի ժամանակ այրած էր եւ այն վերանորոգել պէտք էր:

— Կ'արտօնեմ որ սկսիք Մայր եկեղեցույ վերանորոգման շինարարութիւնը, — կ'ըսէ Սուլթանը:





5 (192). ՅԱՐՈՒԹԻՒՄ ՊԻՋՆԵԱՆ ԱՍԻՐԱՆ ԵՒ ԹՎՂԻՆ ՏՂԱՔԸ



Գումգաբուի Դուրսի թաղը մինչև 1832 ո՛չ եկեղեցի ուներ եւ ո՛չ ալ դպրոց:

Գումգաբուի Դուրսի թաղէն ամէն առտու Ջաքարիա անուն բարձրահասակ ձկնորս մը իր նաւակով Յարութիւն Ամիրա Պէզճեանը Ենիգաբուի իր բնակարանէն Արքունի փողերանոցը կը տանէր:

Օր մը, երբ Ջաքարիա դարձեալ Ամիրան դէպի Արքունի փողերանոցը կը տանէր, տեսաւ որ ծովեզերքի հայ տղաքը գէշ խօսքերով իրարու հետ կը կռուին եւ նոյնիսկ իրար ծովը կը նետեն: Նաւավար Ջաքարիա կը պօռայ տղոց վրայ, կ'ըսէ.

— Չէ՞ք ամչնար տղաք, իրարու հետ կը կռուիք:

Նաւակին մէջ նստած Ամիրան Ջաքարիային կը հարցնէ թէ եղածը ինչ է:

— Ի՞նչ պիտի ըլլայ, Ամիրա՛ս, դպրատուն չի կայ որ հայ աղքատ տղաքը դպրոց երթան. ասանկ փողոցները կը թափառին: Տեղացիները քանի անգամ դիմած են Պատրիարքարան, բայց օգուտ մը չէ ունեցած:

Ամիրան շուտով ցամաք կ'ելլէ եւ կը տեսակցի տեղացիներուն հետ, որոնք եւս կը նկատեն դպրատունի մը պակասը:

Կրթասեր Ամիրան այս դէպքէն զգացուելով, անմիջապէս կը ձեռնարկէ վարժարանի մը հիմնարկութեանը:

Յաջորդ օրն իսկ Ամիրան Գումգաբուի Դուրսի թաղը կու գայ եւ յարմար կը գտնայ ան ժամանակուան Իլանքըրքան Օտալարը (այժմ՝ Մէքթէպ Սօգազ) կոչուած փողոցի մեծ պարտէզով, երկու փայտաշէն մեծ տուները, որոնք կը գնէ, նորոգել կու տայ եւ թաղին կը նուիրէ: Մէկը մանչերուն, միւսն ալ աղջիկներուն: Այդ գոյգ դպրոցները իրենց

ճակատին ոսկէ գիրերով կը կրեն բարեշնորհ Ամիրայի հանգուցեալ ծնողքին՝ Պօղոս հօր եւ Վարվառա մօր արժանայիշատակ անունները:

1832-ի Փետրուար ամսուան առաջին Կիրակին կը կատարուի այդ գոյգ դպրոցներուն՝ Պօղոսեան եւ Վարվառեան վարժարաններուն բացման հանդիսութիւնը: Նախ կը կատարուի կրօնական արարողութիւնը: Թաղը եկեղեցի մը չունենալուն՝ օրուան Ս. Պատարագը կը մատուցանէ Ստեփաննոս Պատրիարք Աղանին՝ Գումգաբուի Ս. Աստուածածին աթոռանիստ մայր եկեղեցոյ մէջ: Ներկայ կը գտնուին Գերագոյն ժողովին անդամները՝ գլխաւորութեամբ Յարութիւն Ամիրա Պէզճեանի:

Ս. Պատարագէն վերջ թաղեցի ձկնորսները Պատրիարքարանի դահլիճին մէջ ճաշկերոյթ մը կը սարքեն ի պատիւ Պատրիարքին եւ Յարութիւն Ամիրային: Այդ ճաշին կը մասնակցին բոլոր հրաւիրեալները: Հիւրերուն կը հրամցուին իրենց իսկ ձեռքով որսացուած արքայաձուկերը՝ պարպունիաները:

Ապա բոլոր հրաւիրեալները կառքով կը փոխադրուին վարժարան, ուր կ'ընթերցուի Կայսերական հրովարտակը:

Գումգաբուի Դուրսի թաղին Պօղոսեան եւ Վարվառեան գոյգ վարժարանները Յարութիւն Ամիրա Պէզճեանի բազում բարեգործութիւններէն են:

Յարութիւն Պէզճեան, այլ անունով՝ Գազազ Արթին Ամիրա, որպէս Գերագոյն ժողովի ատենապետ մտերիմ բարեկամը կ'ըլլայ Ստեփաննոս Բ Պատրիարքին: Եւ այդ երկու մեծանուն դէմքերուն միասնական աշխատութեան շնորհիւ շինուած կամ նորոգուած են հետեւեալ վարժարանները՝ Էյուպի Պէզճեան, Գումգաբուի Դուրսի Պօղոսեան եւ Վարվառեան, Գումգաբուի Մայր եւ Կետիկ փաշայի վարժարանները: Նոր վարժարան մը կը բացուի Պալաթ—Ֆէներ բարձունքին վրայի Գանլը Բիլիսէ թաղին մէջ եւ կը կոչուի Սուրբ Առաքելոց: Սակայն, դժբախտաբար Պէզճեան մայր վարժարանէն զատ բոլորն ալ այժմ գոցուած են:





6 (193). ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԻՋՃԵՎՆ ՂՍԻՐՎՆ ԵՒ
ՏՕԼՍՂ ՊՎՔՉԻՒՆ¹² ՂԲՂՉՎՆԵ

Օր մը Սուլթանը կը հրամայէ Պալեան ճարտարապետ ամիրաներուն.

— Տօլմա Պահչէի մէջը աղուոր աւագան մը շինեցէք, ես հիմա որսի պիտի երթամ, մինչեւ գալս վերջացած ըլլայ:

Ծարտարապետ Պալեանները՝ մեծ ու փոքր, կը սկսին շուտ-շուտ աւագանը շինել:

Գազազ Արթինը կու գայ, կը տեսնայ աւագանը, չի հաւնիր, կ'ըսէ.

— Բանդեցէ՛ք աւագանը, նորը շինեցէք. աւելի աղուորը:

— Ամա՛ն Գազազ Արթին, ոտքդ պագնենք, Սուլթանը հրամայած է որ մինչեւ գիշեր պիտի վերջացուցած ըլլանք, — կ'ըսեն Պալեանները:

— Ո՛չ, — կ'ըսէ Գազազ Արթինը, — աս աղուոր չէ, քանդեցէ՛ք:

Իրիկունը Սուլթանը որսէն կու գայ, կը տեսնայ որ աւագանը ոչ միայն շինուած չէ, այլեւ քանդուած է, կ'ըսէ.

— Շուտ Պալեան ամիրաներուն գլուխները բերէք, քանի որ իրենք պէտք է որ շինած ըլլային աւագանը:

Գազազ Արթինը կու գայ, կ'ըսէ.

— Սուլթա՛նս, ե՛ս ըսի որ քանդեն, որպէսզի աւելի աղուորը շինեն:

— Է՛հ, եթէ դուն ըսեր ես, ուրեմն ճի՛շդ ըսեր ես, — կ'ըսէ Սուլթանը համակերպած:

Այնպէս որ Գազազ Արթինին խօսքը խօսք էր, եւ Սուլթանը կը յարգէր անոր կարծիքը:



7 (194). ԳՂՉՂՉ ՂՐԹԻՆ ՂՍԻՐՎՆ ԵՒ
ՍՈՒԼԹՎՆԻՆ ԿՂՏՈՒՆ

Օր մը Սուլթանը Գազազ Արթինը ճաշկերոյթի կը հրաւիրէ: Բոլոր պալատականները կ'ուտեն կը խմեն: Սուրճի ժամանակ կատու մը թէփսին բռնած, վրան սուրճի գաւաթները, ներս կու գայ:

Ներկաները կը զարմանան:

Սուլթանը Գազազ Արթինին կ'ըսէ.

— Տեսա՞ր թերպիէն (դաստիարակութիւնը) կենդանին ի՛նչ կ'ընէ:

— Տեսա՛յ, Սուլթա՛նս, — կ'ըսէ Գազազ Արթին, — բայց դաստիարակութիւնը կենդանիի բնութիւն քովը նշանակութիւն չունի:

— Ինչպէ՛ս թէ դաստիարակութիւնը նշանակութիւն չունի, — կ'ըսէ Սուլթանը, — չտեսա՞ր որ կատուն կրթուեր է եւ գործ կ'ընէ:

Գազազ Արթին Ամիրան կ'ըսէ.

— Ես կը պնդեմ որ առաջինը բնութքն է, ետքը՝ դաստիարակութիւնը: Սուլթա՛նս, դուն ասանկ ճիշտ ճաշկերոյթ մը նորէն կազմակերպէ եւ քու ծանօթներդ նորէն հրաւիրէ, ես կ'ապացուցանեմ, թէ առաջինը բնութքն է:

Սուլթանը Ուրբաթ օրը նորէն մեծ ճաշկերոյթ մը կը սարքէ եւ Գազազ Արթին Ամիրան ալ կը հրաւիրէ:

Գազազ Արթինը նախապէս մէկ հատ մուկ կը բռնէ, իր թապաքերային մէջը կը դնէ: Ատ թապաքերան ալ իր քուռաքին մէջը կը խոթէ: Պալատականներուն հետ ինք ալ ճաշկերոյթի կ'երթայ:

Նորէն կ'ուտեն կը խմեն: Ծաշէն վերջը կատուն նորէն թէփսին բռնած, վրան ալ սուրճի գաւաթները ներս կու գայ:

Գազազ Արթինը թապաքերան կը հանէ. կը բանայ, մէջէն մուկը

դուրս կը ցատկէ: Կատուն մուկը տեսնալուն պէս թէփսիս վար կը ձգէ. մուկին ետեւէն կը վազէ:

Գազազ Արթինը կ'ըսէ.

— Տեսա՞ր, Սուլթա՛նս, որ կենդանիին բնութքն է առաջինը, յետոյ՝ դաստիարակութիւնը:

Անանկ որ Գազազ Արթին Ամիրա Պէզճեանը շա՛տ խորունկ մտածող, իմաստուն հայ մըն էր:



8 (195). ՅԱՐՈՒԹԻՒՄ ՊԻՋՃԵՎՆ ՎՍԻՐՎՆ, ՍՈՒԼԹՎՆ ՄԱՍՆՈՒՄԵ ԵՒ ՏԻՋԵՎՆՆԵՐԸ¹³

Սուլթան Մահմուտի փողերանոցը վստահուած էր Տիւզեան գերդաստանին: Անոնք սերունդէ սերունդ խղճի մտօք կը վարէին այդ գործը:

Աս ըսած ժամանակս Արքունի փողերանոցը վստահուած էր Կարապետ, Յակոբ եւ Պօղոս Տիւզեաններուն:

Օրին մէկը Սուլթան Մահմուտը դժգոհ կը մնայ անոնց աշխատանքէն. երեք եղբայրներն ալ կ'աքսորէ Կեսարիոյ Ս. Կարապետ վանքը: Անոնց փոխարէն Գազազ Արթինը փողերանոցի պետ կը նշանակէ: Վերջինս չ'ուզեր իր հայրենակիցներուն դժբախտութեան վրայ իր փառքը ստեղծել. նախ կը հրաժարի, բայց երեւելի հայեր անոր խորհուրդ կու տան որ ընդունի այդ պաշտօնը, որպէսզի այդ միջոցաւ գուցէ կարենայ Տիւզեան եղբայրները աքսորէն ազատել տալ:

Յարութիւն Ամիրա Պէզճեան կ'ընդունի այդ պաշտօնը: Իսկ Տիւզեան եղբայրները երեք տարի աքսոր կը մնան:

Օրին մէկը Պէզճեան Ամիրան Սուլթան Մահմուտին կը ներկայանայ եւ կեսարական պատուըրմա կը հիւրասիրէ: Սուլթանը ախորժակով կ'ուտէ եւ շա՛տ գոհ կը մնայ:

Պէզճեան Ամիրան առիթէն օգտուելով կ'ըսէ.

— Սուլթա՛նս, գիտե՞ս որ աս համով պատուըրման Կեսարիայէն յատուկ ձեզի՛ համար ձեր Տիւզեան ծառաները դրկած են:

Սուլթանը կ'ըսէ.

— Իրա՞ւ ուրեմն ներեցի՛ իրենց. կը հրամայեմ. թող աքսորէն ե՛տ գան: Պէզճեան Ամիրան քիթին տակէն խնդալով կամացուկ մը կ'ըսէ.

— Գիտէի որ պատուըրմայով խափանի մէջ մուկ կը բռնուի. բայց մարդոց աքսորէն ազատուիլը չէի գիտեր:



9 (106). ՊԻՉՃԵՎԵ ՂՍԻՐՎԵ ԵՒ
ՍՈՒԼԹՎԵՆԻ ՃԱԾԿԵՐՈՅԹԸ

Յարութիւն Պէզճեան Ամիրան Սուլթան Մահմուտի աջ բազուկն էր: Ամէն առտու եթէ Ամիրան անոր չերթար, բարեբարիլոյս մը չտար նէ, Սուլթանը կը հարցնէ եղեր.

— Գազա՛գ Արթին, ո՞ր մնացիր:

Օր մըն ալ Գազագ Արթինը ուշացած կու գայ: Սուլթանը կը նայի Ամիրային վրան գլուխը, կը տեսնայ անոր հագուստին վրայ խոտեր փակած են.

— Աս ի՞նչ է վիճակդ, — կը հարցնէ Սուլթանը:

Ամիրան կ'ըսէ.

— Սուլթա՛նս, ես քեզի կու գայի կոր, նաւամատոյցը հարիւրապետ մը ըսաւ՝ աս զինուորական խոտ է. ամէն մէկդ օգնեցէք նաւէն դուրս հանենք: Ես ալ օգնեցի:

Սուլթանը կ'ըսէ.

— Է՛, չըսի՞ր քի դուն Սուլթանին խորհրդականն ես: Ատ տեսակ բան պէտք չէ՛ ըլլար:

Կը հրամայէ ծառաներուն որ երթան ու յիշեալ հարիւրապետը բերեն:

Սուլթանին ծառաները կ'երթան, կը գտնան կը բերեն ատ հարիւրապետը:

Սուլթանը կ'ըսէ.

— Դուն չե՞ս գիտեր քի աս իմ խորհրդական Ամիրան է:

— Ո՛չ, տէ՛ր իմ, չէի գիտեր, — մեղայի կու գայ հարիւրապետը:

Սուլթանը կը դառնայ Ամիրային կ'ըսէ.

— Արթի՛ն, ասոր աղէկ պատիժ մը տալ պէտք է, դո՛ւն տոր:

Ամիրան քիչ մը մտածելէն ետքը կ'ըսէ.

— Աս հարիւրապետ է, ես իրեն հազարապետ պիտի ընեմ:

Սուլթանը զարմացած կ'ըսէ.

— Ես պատիժ կ'ուզեմ տալ, դուն կը բարձրացունե՞ս իր պաշ-

տօնը:

Ամիրան կ'ըսէ.

— Ես այդպէս յարմար գտայ:

Ժամանակ մը ետքը Սուլթանը իր սարային մէջը ճաշկերոյթ մը կու տայ: Ան հազարապետն ալ հրաւիրուած կ'ըլլայ: Ատ հազարապետը կամացուկ մը կու գայ, Պէզճեան Ամիրային ականջին կը փսփսայ.

— Քու ճաշիդ մէջը թոյն դրին, գիտցած ըլլաս:

Ծաշկերոյթի ժամանակ ամէնը կ'ուտեն կը խմեն, Պէզճեան

Ամիրան չ'ուտեր:

Սուլթանը Ամիրային կը հարցնէ.

— Ինչու՞ չես ուտեր:

Ամիրան կ'ըսէ.

— Չե՛մ ուզեր՝ չե՛մ ուտեր:

— Ուտե՛ս պիտի:

— Չպիտի՛ ուտեմ, Սուլթա՛նս, — կ'ըսէ Ամիրան:

Վերջապէս Սուլթանը կը հասկնայ որ լուրջ պատճառ մը կայ, որ

Ամիրան չ'ուտեր: Ծաշարանի աշճին կը կանչէ, կ'ըսէ.

— Ինճի նայէ, աս Արթին Ամիրային կերակուրէն քիչ մը կե՛ր:

Աշճին կ'ըսէ.

— Չե՛մ ուտեր:

Սուլթանը կը հասկնայ, կ'ըսէ.

— Հա՛, ուրեմն դուք Արթինը մեռցնելու համար կերակուրին մէջը

թոյն լեցուցեր էք:

Սուլթանը կը հրամայէ ատ աշճիին վիզը կտրել:

Սուլթանին նազիր-վէզիրները կը տեսնան քի Սուլթանը շատ կը սիրէ կոր Արթինը, կը թշնամանան անոր հետ: Կ'երթան Սուլթանին կ'ըսեն.

— Դուն չես գիտեր, Արթինը քու հարեմիդ մէջը քու սիրած աղջիկներուդ հետ գիշերները ինչե՛ր կ'ընէ...

Սուլթանին միտքը կը պղտորի, կ'ուզէ ստուգել:

Արթին Ամիրան ալ չէր ամուսնացած, կ'ապրէր իր քրոջ հետ, Ենիգաբուի իրենց տունը: Ինչպէս ամէն գիշեր, ատ գիշերն ալ Արթին

Ամիրան սենեակին մէկ քեօշէն նստած՝ լամբային լոյսովը գիրք կը կարդար: Մէյ մըն ալ քորջը կ'ըսէ.

— Քուզու՛մ (սիրելի՛ս), գաւաթ մը ջուր կը բերե՞ս ինձի:

Քոյրը սանդուխներէն վար կ'իջնայ, գաւաթ մը ջուր կը լեցունէ վեր տանելու համար, երբ յանկարծ կը տեսնայ որ Սուլթանը իրենց տունի դուռին առջեւը կեցած է: Սուլթանը կը հարցնէ.

— Աս ի՞նչ ջուր է:

Ամիրային քոյրը կը պատասխանէ.

— Արթինը ուզեց:

— Տո՛ւր, ես տանիմ, — կ'ըսէ Սուլթանը, գաւաթը կ'առնէ աղջկան ձեռքէն, սանդուխներէն վեր կ'ելլայ:

Ամիրան նստած տեղը մէկէն կը տեսնայ Սուլթանը իր դիմաց, էնկիպէնկի կու գայ, վախէն կ'իյնայ գետին, շունչը կը փչէ¹⁴:

Սուլթան Մահմուտը անոր վրայ կ'իյնայ լալէն, ողբալէն.

— Վա՛խ, Արթինըմ, ա՛խ Արթինըմ. պէն սէպէպ օլտում սէնին էօլիմիւնէ (Վա՛խ, Արթինս, ա՛խ, Արթինս. ես քու մահուանդ պատճառ դարձայ), — կ'ըսէ, կու լայ, բայց անօգուտ:



ԻՕ (197). ՅԱՐՈՒԹԻՒՄ ՊԷՉՃԵՎՆ ՂՍԻՐՂՆ ԵՒ ՍՈՒԼԹԱՆԸ

Յարութիւն Պէզնեան Ամիրան շատ մեծ բարեգործութիւններ ըրած է, որոնք մէկ առ մէկ յիշելը հիմա դժուար է: Ան իր կեանքին վերջը Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը շինել տուած է: Բայց հիւանդանոցը շինուած աստեղը ինքը կը հիւանդանայ, կարծեմ լեարդի բորբոքում կ'ունենայ, անկողին կ'իյնայ եւ չի կրնար անձնապէս հետեւիլ շինարարական աշխատանքներուն: Ատոր համար իր օգնականը ամէն օր կու գայ տեղեկութիւն տալու, քանի որ Ամիրան անհամբեր կը սպասէր շէնքին վերջանալուն:

Երբ շուրջինները կը տեսնան որ Ամիրային առողջական վիճակը երթալէն կը ծանրանայ, իսկ հիւանդանոցին վրայ դեռ աշխատանք կայ ըլլալիք, կ'որոշեն ըսել որ հիւանդանոցը շինուած է: Կու գան իրեն կ'ըսեն.

— Ահաւասիկ հիւանդանոցին դուռն ալ դրուեցաւ. բանալին ալ ա՛ս է:

Խեղճը որքա՛ն կ'ուրախանայ: Քանի որ ամբողջ ակնկալածը այդ հիւանդանոցն էր, առ ալ եղաւ: Եւ ան հանգիստ աչքերը կը գոցէ...

Երբ Պէզնեան Ամիրային մահուան լուրը Սուլթանին կը հասնի, թէ ազգային յուղարկատրութիւն պիտի ըլլայ եւ Ամիրային դագաղը շոգեմակոյկով պիտի տարուի Մայր եկեղեցիին գաւիթը, թաղելու, Սուլթանը կը հրամայէ իր պալատին առջեւէն անցընել եւ ինք ալ կու գայ ծովեզերք՝ անոր վերջին հրաժեշտը տալու, կ'ըսէ.

— Պէնիմ սաղ քօլըմ կիտիյօ՛ր (Իմ աջ բազուկս կ'երթայ):

Ան Սուլթանը, որ ի՛նչ պատերազմներու մասնակցած էր, ի՛նչ մահեր տեսած էր, բայց երբէք ցաւ ու տխրութիւն տեսնուած չէր իր դէմքին վրայ, այլ միայն յաղթանակներ էր վայելած, - թաշկինակը կը հանէ եւ պզտիկ տղու մը պէս արցունքները կը սրբէ...

Այնքան որ սիրուած ու յարգուած էր Յարութիւն Պէզնեան Ամիրան ոչ միայն հայերու. այլեւ Թուրքիոյ կառավարութեան կողմէ:



II (198). ՍՈՒՆԹՆԱԿԱՆ ՍՎԱՍՏԻՔԻ ԲԵՒ ՊԱՂԵՎԱԿԱՆ ՎՍԻՐՎԱԿԱՆՆԵՐԸ¹⁵

Երբ Տօլմա Պահչէն կը շինուի, Սուլթանը կը հրամայէ. — Հոստեղէն ո՛չ մէկ գողութիւն պիտի ըլլայ: Պալեանները կը սկսին եռանդով շինել այդ հոյակապ պալատը, որ շատերուն նախանձը կը շարժէ:

Վեզիրներէն մէկը լուր կու տայ Սուլթանին, կ'ըսէ.

— Քու հաւանած եւ իբր վստահելի Պալեանները հսկայ սիւներ շինել տուած են եւ պահած են, որպէսզի եկեղեցի շինեն:

Սուլթանը չի հաւատար, կ'ըսէ.

— Ատ մարդիկ ատ տեսակ բան չե՞ն ըներ:

— Չե՞ս հաւատար, եկուր տես, — կ'ըսէ եւ Սուլթանը կը տանի ցուցնելու:

Սուլթանը կ'երթայ, կը տեսնայ քանի մը սիւներ, վրանին ալ լաթով գոցուած: Կը կանչէ Պալեանները, կ'ըսէ.

— Ես ձեզի ի՞նչ ըսի. աստեղէն ո՛չ մէկ գողութիւն պիտի ըլլայ:

Ատ սիւներով եկեղեցի՞ պիտի շինէք եղեր:

Կարապետ Ամիրա Պալեանը¹⁶ կ'ըսէ.

— Սուլթա՛նս, մեր կրօնքը գողութեան ապրանք չ'ընդունիր, մանաւանդ եկեղեցի մը շինելու համար: Ես ձեզի անակնկալ մը պիտի ընէի: Աս հրաշալի պալատէն դուք երբ որսի երթալու համար դուրս գայիք, հասարակ ճամբէ մը չերթայիք, այնինչ ես ձեզի աղուոր կամուրջ մը պիտի շինէի այս սիւներով, որպէսզի ձեր ջրախումբով անոր վրայէն անցնէիք:

Երբ Տօլմա Պահչէի պալատին շինարարութիւնը կը վերջանայ, Սուլթանը շա՛տ կը հաւանի եւ որպէս խրախուսանք Պալեաններուն կ'ըսէ.

— Ինչ որ անելցած է, տարեք, եկեղեցի մը շինեցէք, միայն թէ գմբէթը դուրսէն չերեւայ:

Անոր համար Պեշիքթաշի եկեղեցին Կարապետ Ամիրա Պալեանը անանկ մը շինած է, որ գմբէթը ներսէն է, դուրսէն չ'երեւար:

Պալեան եղբայրները ուրիշ շատ շինութիւններու հետ նաեւ իրենց մօր անունով Մաքրուհեան վարժարանին շէնքը շինած են:



II (199). ՍԱՐԳԻՍ ՊԱՂԵՎԱԿԱՆ ՎՍԻՐՎԱԿԱՆ ԵՒ ՍՈՒՆԹՆԱԿԱՆ

Սարգիս Պալեանը, որ նոյնպէս արքունի ճարտարապետներու շարքին կը պատկանէր, տեսնելով որ Պոսֆորի ճիշդ մէջտեղը ժայռակտոր մը կայ կու գայ Սուլթանին եւ կ'ըսէ.

— Շէֆքէթլի՛մ (Տէ՛րս), այդ ժայռաբեկորը տո՛ւր նուաստիս, քանզի ես կ'ուզեմ կղզի մը կառուցել հոն:

Սուլթանը կը խնդայ, այդ առաջարկը անհրազորօճելի կը նկատէ: Սակայն վերջապէս այդ ժայռաբեկորը Սարգիս Պալեանին կը յանձնէ:

Վերջինս կ'աշխատի, կը տքնի եւ կարճ ժամանակ յետոյ կը վերջացնէ արհեստական կղզիին շինարարութիւնը, որ Արնավուք գիղիին մատուցը կը գտնուէր:

Սուլթանը գայն տեսնելով՝ կը հիանայ եւ հրովարտակով մը կըղզիին կը յանձնէ Սարգիս Պալեանին, որուն անունով ալ կը կոչուի այդ կղզին Սարգիս Պէյ Պալեանի կղզի:

Սարգիս Պալեանը բնակութիւն կը հաստատէ հոն, կը ստեղծագործէ, գիտական փորձեր կ'ընէ եւ նոյնիսկ իր վերջին շունչը կու տայ իր կղզիին մէջ:

Քսաներորդ դարուն սակայն, կղզին կը տրամադրուի «Կալաթասարայ» մարզական ակումբին եւ գայն հիմա կը կոչեն «Կալաթասարայ ատաւը» (Կալաթասարայի կղզի):





13 (200). ՍՈՒՆԹՈՒՆ ՀՂՍԻՏԵԸ¹⁸ ԵՒ ՊՍՏՎՐԱԳԻՉ
ԵՊԻՍԿՈՊՈՍԵ



ույթան Ապտուլ Համիտի շրջանին իր լրտեսներեն մեկը կու գայ կ'ըսէ.

— Սուլթա՛ն, գիտե՞ս որ հայերը իրենց եկեղեցիին մէջ պատարագ ընելու ատեն չեն յիշատակեր մեր մարգարէներուն անունները, իսկ մենք մեր ճամբին մէջը մեր «Քուրանէն» առաջ ինչ կրօնքներ որ եղած են, ժամանակագրական կարգով կը յիշատակենք...

Սուլթան Համիտը կը լսէ, կը խոժոռի եւ կը հրամայէ.

— Գացէ՛ք, ստուգեցէ՛ք, եկէ՛ք ինձի լուր տուէ՛ք:

Լրտեսները կ'երթան սուլթանին հրամանը կատարելու:


Այդ միջոցին հայերը կը տեղեկանան եւ իրենց պատարագիչ եպիսկոպոսին կ'ըսեն.

— Ասանկ խօսակցութիւն մը կայ, նկատի՛ առ...

Պատարագիչ եպիսկոպոսը կը մտածէ, ելքը կը գտնայ: Քարոզ տալու ժամանակ ան կ'ըսէ.

— Յիսուս եւ իր աշակերտները երբ Գալիլէայի լիճը *հասան*, տեսան որ ձկնորսները ուռկան կը *հիսէին*, — բայց «հասան» եւ «հիսէին» բառերը այնպիսի յատուկ շեշտով մը կ'արտասանէ, որ ներկայ եղող լրտեսները լսեն: Եւ անոնք գոհունակութեամբ կ'երթան սուլթանին կ'ըսեն.

— Սուլթա՛ն, հայերու եկեղեցիին մէջն ալ յիշեցին մեր մարգարէները՝ Հասանը եւ Հիսէինը:



14 (201). ՍՈՒՆԹՈՒՆ ՀՂՍԻՏԵ ԵՒ ՕՐՄԱՆԵՎ
ՊՍՏՐԻԱՐՔԸ¹⁹



րին մեկը Ապտուլ Համիտի խորհրդականները իրեն կ'ըսեն.

— Սուլթա՛ն, գիտե՞ս որ հայոց Պատրիարք Մաղաքիա Օրմանեանը առանց աղօթելու ճաշի չի նստիր: Ան ճաշէն առաջ անպայման խաչ կը հանէ:

— Իրա՞ւ կ'ըսէք: Անանկ է նէ, օր մը անիկա ճաշի հրաւիրենք, տեսնանք ճաշէն առաջ իմ դէմս պիտի համարձակի՞ խաչ հանել:

Ապտուլ Համիտը կը հրամայէ մեծ ճաշկերոյթ մը սարքել եւ հրաւիրել հայոց Պատրիարքը:


Մաղաքիա Օրմանեան իր պատկառագրու տեսքով Սուլթանին կը ներկայանայ: Կը տեսնայ պատրաստուած ճոխ սեղանը: Բոլորը սեղանին շուրջ կը նստին: Դեռ ուտել չսկսած Օրմանեան Պատրիարքը աջ ձեռքը վեր կը վերցնէ, իբր թէ ձեռքով կը ցուցնէ սեղանին վրայ դրուած տեսակ-տեսակ ճաշերը, բայց անկատօրէն խաչակնքելով կ'ըսէ.

— Առաջ ա՛ս պիտի ուտենք, ետքը ա՛ն պիտի ուտենք, ետքը ա՛ն, վերջն ալ՝ ա՛ն: Ուրեմն Ամէ՛նը, — կ'ըսէ ու կը սկսի ուտել:

Ծաշկերոյթը կը լմնայ: Օրմանեան Պատրիարքը շնորհակալութիւն կ'ըսէ ընդունելութեան համար, հրաժեշտ կ'առնէ, կ'երթայ:

Սուլթան Համիտը իր խորհրդականներուն ուրախ-ուրախ կ'ըսէ.
— Տեսա՞ք որ հայոց Պատրիարքը վախցաւ եւ խաչ չկրցաւ հանել: Խորհրդականները կ'ըսեն.

— Կը սխալիք, Սուլթա՛ն, հայոց Պատրիարքը երբ ճաշէն առաջ ձեռքով կը ցուցունէր սեղանին դրուած ուտելիքները, ան իր ձեռքի շարժումներով արդէն իսկ խաչակնքեց Ձեր սեղանը, բայց այնպէս խաչակնքեց, որ դուք չնկատեցիք:



15 (202). ԱՐՄԱԶԻ ԴՊՐԵՎԱԾՔ



Ուլսոյ Պատրիարք Խորեն Աշըգեանի հովանաւորութեամբ եւ Մաղաքիա Օրմանեանի վերատեսչութեամբ 1889-ին Արմաշի Զարխափան Ս. Աստուածածին վանքի կամարներուն տակ իբրեւ Պոլսոյ Պատրիարքութեան հոգեւոր ճեմարան կը հիմնուի Արմաշի դպրեվանքը: Հոն կ'ընդունուին 17-22 տարեկան պատանիներ, որոնք ուսման եօթնամեայ շրջանը աւարտելէ ետք ոչ միայն հոգեւորականներ, այլեւ ուսուցիչներ կ'ըլլան:

Արմաշի դպրեվանքին մէջ լոյս կը տեսնար Պոլսոյ «Մասիս» կրօնական հանդէսը:

1896-էն հոն նաեւ որբերու մասնաւոր դասարան կը ստեղծուի: Ա. աշխարհամարտէն առաջ աշակերտներուն թիւը երեք հարիւրի կը հասնէր: Կրօնական դասերէն զատ՝ հոն կ'աւանդուէր իմաստասիրութիւն, բնական գիտութիւններ, հայագիտութիւն, հայերէն, ֆրանսերէն, թուրքերէն:

Արմաշի դպրեվանքը ուներ նաեւ հարուստ մատենադարան մը, որուն գրչագիրքերուն թիւը հինգ հարիւրի կը հասնէր: Ամենահին ձեռագիրը 1351 կը թուագրուէր: Կային նաեւ ձեռագիրներ, որոնց կողերուն կարուած էին մետրոպեան երկաթագրով պահպանակներ: Այդ ձեռագիրներուն մեծ մասը Արմաշ, Պոլիս, Սեբաստիա, Կեսարիա, Ամասիա, Եկեղեաց գաւառը, Կարին, Էջմիածին, Հոռմ, Ղրիմ, Լեհաստան, Երուսաղէմ եւ հայաբնակ այլ վայրեր գրուած էր: Հոն կը պահուէին նաեւ Թովմա Մեծօփեցիին, Յովհան Ոսկեբերանին անտիպ գործերը, Սիմեոն Երեւանցիին Քարոզգիրքը, բժշկարաններ, բառարաններ, խազագրուած ձեռագիրներ, Միքայել Զամչեանի նամականին, Կիլիկիոյ Հայկական թագաւորութեան անտիպ մէկ դատաստանագիրքը եւ շատ ուրիշ ձեռագիրներ: Մանրանկարչական ձեռագիրներու մէջ Գրիգոր

Մագիստրոսի, Ներսէս Ընդհալիի, Գրիգոր Տաթեւացիի եւ շատ ուրիշներու դիմանկարները կային:

Արմաշի դպրեվանքին շրջանաւարտները ընկերային-մշակութային կեանքէն ներս աշխույժ դեր կատարած են:

Արմաշի դպրեվանքը ունեցած է իր օրհներգը, որուն խօսքերը յատենին վարդապետ Եղիշէ Դուրեանը գրած է, իսկ Համբարձում Լիմոնճեանին երաժշտութիւնը եւ վերծանած եւ նօթագրած են: Ահա այն.

*Ի փառս էին ճշմարտութեան
Կառուցեալ յարկս այս վըսէմ,
Յաստեղագարդն ի յօթեան
Տայ անցանել մեզ ի ճեմ:*

*Աստ գիտութեան եւ հաւատոց
Հսկեն ոգիք իբր յօրրան,
Միոյն ի լոյս, միսոյն ի բոց
Սրբեալ զհոգիս մեր համայն:*

*Ի կատարումն փրկութեան
Տեսեալ չքնաղս այս պարտէզ,
Ըզհայրենեաց ոչ անագան
Դրախտին ըզվայր ցուցցէ մեզ:*

*Աստ հաւատոց եւ գիտութեան
Փթթին ծաղկունք գեղազանք,
Բուրումն յերկրէ եւ երփնուղփեան
Յօդին շքեղ ի դրասանգ:*

*Լոյս եւ հուր,
Երփն եւ բոյր,
Քնար եւ փող,
Քիրտն եւ ցօղ:*

*Շողեցէք ի յարկ ուխտիս,
Սփռեցէք ճաճանչ եւ գեղ,
Հնչեցէք յանդուլ գեղգեղ,
Յօղեցէք յաւերժ յաստիս:*



16 (203). ՍՈՒՔԸ ԿՍԻՏԵ ԵՒ ԿՅ ԳՊՐՈՍՆԵՐԸ



ույթան Համիտի շրջանին հայկական դպրոցի մը մէջ բնութեան դասի պահուն ուսուցիչը շուրին բաղադրութիւնը կը բացատրէ եւ գրատախտակին վրայ անոր բանաձեւը կը գրէ՝ H_2O :

Սույթանին լրտեսներէն մէկը, որ գոց պատուհանին տակը կը լրտեսէր, չի կրնար լսել ուսուցիչին ըսածները, այլ միայն գրատախտակին վրայ գրուածը կը տեսնայ, կ'երթայ Սույթանին կ'ըսէ.

— Սույթա՛ն, գիտե՞ս որ հայկական դպրոցի ուսուցիչը գրատախտակին վրայ գրած էր H_2O այսինքն Սույթան Համիտ Երկրորդը՝ գերօ է:

Սույթանը կ'ըսէ.

— Անանկ է նէ, կը հրամայեմ հայկական բոլո՛ր դպրոցները գոցել²⁰:



17 (204). ԽՐԻՍՅԱԼ ԿՅՐԻԿԻՒՄ ԺՈՂՈՎԸ



ատիկի պահքի օրերուն հայ ժողովուրդը քառասուն օր պահք, ծոմ կը պահէ եւ միս չ'ուտէր:

Պահքի այդ օրերուն Խրիմեան Հայրիկը կը հիւանդանայ: Չէ՞ որ ծեր է, կ'որոշեն քիչ մը միսով չօրպա եփել, որ հիւանդ Խրիմեան Հայրիկը ուտէ, կազդուրուի:

Միաբանութեան մէջ աղմուկ մը կը փրթի. «Գիտե՞ք, Հայրիկը Պահքին օրը մի՛ս կ'ուտէ...»:

Աս ըսի ըսաւր մինչեւ Խրիմեան Հայրիկին ականջը կը հասնի:

Խրիմեան Հայրիկը միաբանութեան ընդհանուր ժողով կը հրաւիրէ: Ամէն մարդ կու գայ, իր տեղը կը գրաւէ: Էն վերջը Խրիմեան Հայրիկը ներս կը մտնայ, իր աթոռին կը բազմի, աչքը չորս կողմը պտտցնելէն ետք կը պօռայ.

— Ժողովը բացուեցա՛ւ...: Դուք կը զանգատի՞ք եղէր, որ Հայրիկը Պահքի օրով միս կ'ուտէ: Հապա դո՞ւք, որ ամէ՛ն օր իմ միսս կ'ուտէք..., — կ'ըսէ եւ կաւելցնէ, — ժողովը գոցուեցաւ:





18 (205). ՀԱՅՐ ԴԵՒՈՆԴ ՎԼԻՃՎԵԸ²²
ԵՒ ՎԱՃԱՌՎԿՎԵԸ

Այս պատմությունը ինձի Տօթթ. Պարգեւ Պալըմեանը պատմած է, ես ալ հիմա ձեզի պիտի պատմեմ:
Կիլիկիոյ Սիս քաղաքի շրջակայ գիւղերէն վաճառական մը կու գայ վեճետիկ եւ կ'ուզէ Հայր Ալիշանին հետ տեսնուիլ: Ալիշանը, այդ այցելութենէն գոհ, վաճառականին կը հարցնէ.

— Ձեր գիւղին հանդիպակաց բլուրին մօտ գտնուող ձորին վրայ կամուրջ մը կայ, դեռ կանգու՞ն է:

— Վարդապետ, — կ'ըսէ վաճառականը զարմացած, — քառասուն-յիսուն տարիէ ի վեր հոն կ'ապրիմ, բայց ոչ մէկ կամուրջի հանդիպած եմ: Կը սխալիք երեւի:

— Չէ՛, չէ՛, — կ'ըսէ Ալիշան, — հոն անպայման կամուրջ մը ըլլալու է, երբ որ երթաք, ստուգեցէք:

«Ցնդա՞ծ է, ի՞նչ է, — կը խորհի վաճառականը, — յիսուն տարուան մարդուս իմ գիւղս կը սորվեցնէ»:

Վաճառականը երբ Կիլիկիոյ իր գիւղը կը վերադառնայ, կը տեսնա, որ թուփերուն մէջ քանդուած կամուրջի մը հիմերը կան, եւ Հայր Ալիշանին խօսքերը կը յիշէ:

Տարիներ վերջ՝ վաճառականին ճամբան վերստին վեճետիկէն կ'անցնի: Կու գայ Հայոց վանք, և Հայր Ալիշանի քովը կ'ելլէ, ծունկի գալով կ'ըսէ.

— Ձգէ՛, ձգէ՛ որ քու ոտքերդ համբուրեմ. դուն մե՛ծ մարդ ես...

— Ի՞նչ եղաւ, — կ'ըսէ Ալիշան զարմացած:

— Չե՞ս յիշեր զիս, ո՛վ մեծ Վարդապետ, գացի, նայեցայ եւ քու ըսած կամուրջը տեսայ, թէ եւ միայն հիմերը կային, բայց դուն ճիշդ էիր, ժամանակին հոն կամուրջ մը եղեր է:



19 (206). ՄԵՐ ՎԱՂԱՍԵՌԻԿ ԲՎԵՂԱՍԵՂՈ
ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵՎԵԸ²³



Ետրոս Դուրեան երկաթագործ աղքատ ընտանիքի չորս զաւակներէն մէկն էր: Դժուար կեանքով ապրող, անսնունդ մնացած նրբագագ պատանին թրքուհիով մը հմայուած, անոր սիրահարած եւ թոքախտ եղած է:

Այդ կը վկայէ նաեւ անոր «Թրքուհին» բանաստեղծությունը, որ կը յիշէք անշուշտ.

— *Երեկոյ է, բոցավառ է հորիզոն,
Կառք մը կ'անցնի դազադի պէս յամրոյնթաց,
Գեղուհի մը ընկողմանած տրոփէ հոն,
Վերջալոյսի աղջի՞կ մ'է սա, ո՛վ Աստուած,
Եթէ նայի,
Կ'ըսես՝ հիմա կը մարի...:*

Սակայն Պետրոս Դուրեան իր կեանքին մէջ իր տաղանդին համեմատ գրեթէ գնահատուած չէ: Եւ ինչպէս մենք հայերս խօսք մը ունինք՝ «Գնա մեռիր, եկուր սիրեմ», այնպէս ալ շատ շքեղ յուղարկատրութիւն մը կատարուած է Սկիտարի Ս. Կարապետ եկեղեցոյ մէջ:

Սկիտարի Սանուց Միութիւնը Պետրոս Դուրեանի մահուան հարիւրամեակը կատարեց եւ Միութեան հրաւերովը ես, որպէս բանաստեղծ, այնքան զգայուն ելոյթ մը ունեցայ որ ներկաները մոռնալով որ գերեզմանատունը կը գտնուին, զիս ծափահարեցին: Մեր ներկայիս Գարեգին Գազանճեան Պատրիարքը, որ այն ատեն վարդապետ էր եւ ինձի առաջարկած էր որ խօսք առնեմ. ծափահարութիւնները հագիլ լռեցուց՝ զգացնելով որ գերեզմանատունը ծափահարութիւն չ'ըլլար: Պր. Վարուժան Բէօսէեան, որ այժմ ինձի պէս Ս. Փրկչիչին մէջ մնայուն բնակիչ է, այն ժամանակ դեռ երիտասարդ էր. լուսանկարած եւ անմահացուցած է այդ օրը:



20 (207). ԳԵՐՎՍԱԿՆՈՒՔԻ ՄԱՐԻ ՆՈՒԱՐՊԸ²⁴

Մարտիրոս Մնակեանի թատերախումբին մէջ շատ կարող հայ դերասանուհի մը ունեցած ենք, Մարի Նուարդ անուանով: Ան թուրք դերասանի մը հետ կենակցելով յղի կը մնայ եւ ատիկա շատ գէշ կ'ազդէ իրեն:

Օրին մէկը Մարի Նուարդ բեմին վրայ «Քամելիազարդ Տիկիներ» ներկայացուցած ատենը, թոյնին սրուակը կ'առնէ եւ իսկապէս կը խմէ՝ վերջ տալով իր ծաղիկ կեանքին: Վարագոյրը կ'իջնայ, բուն ծափահարութիւններու մէջ վարագոյրը նորէն կը բացուի: Ներկաները կը տեսնան որ Մարի Նուարդ բեմին վրայ ոչ եւս է...

Այդ պահուն Մարտիրոս Մնակեան կ'ըսէ.

— Մեռնողը Մարի Նուարդը չէ. մե'նք ենք մեռնողը, մեր նեղմիտ մտայնութեամբ:

Օտտեր անոր հողակոյտը փնտռած են, բայց դժբախտաբար չեն գտած: Եւ այն անյայտ մնացած է մինչեւ օրս. ինչպէս Յակոբ Պարոնեանինը²⁵ եւ ուրիշ շատ շատերունը, քանի որ Օրթագիւղի գերեզմանատունը շատ շիրիմներ անյայտ մնացած են: Զգայուն եւ վաղամեռիկ բանաստեղծուհի Հերանոյշ Արշակեանը²⁶ եւս անյայտ մնացած է եւ ինքը կանխաւ զգալով իր վախճանը՝ գրած է.

*Օր մը երբ որ գիս ալ թաղեն հոն՝ նոճիին քով,
Ո՞վ պիտի գայ վրաս գուրգուրանքով ու սիրով:*

Ես ալ գացի «գուրգուրանքով ու սիրով» փնտռել անոնց գերեզմանները, բայց չգտայ: Անշուշտ Յակոբ Պարոնեանը, Մարի Նուարդը եւ Հերանոյշ Արշակեանը յիշելս ալ՝ անոնց պայծառ յիշատակին արժանին հատուցել է:



21 (208). ՄԱՐՏԻՐՈՍ ՄՆԱԿԵԱՆ
ԳԵՐՎՍԱԿՆԱԳԵՏԸ²⁷

Մարտիրոս Մնակեան ձմրան գիշեր մը ներկայացում մը կու տայ: Օդն ալ այնքան պաղ կ'ըլլայ, որ ընդամենը մէկ հոգի ներկայ կը գտնուի: Դերասանները կ'ըսեն.

— Յետաձգենք խաղը. մէկ հոգիի մը համար արժէ՞ ներկայացում խաղալ:

Մարտիրոս Մնակեանը կ'ըսէ.

— Քանի որ ան մէկ հոգին ինձի մտիկ ընելու համար եկեր է, ես ատ մէկ հոգիին համար պիտի ներկայացնեմ:

Եւ ներկայացումը կը սկսին:

Ատանկ անշահախնդիր արուեստագէտ մըն էր Մ. Մնակեան: Բայց իր պէս խոշոր դերասանապետ մը ցաւալի է որ նիւթական նեղ պայմաններու մէջ անցուցած է իր կեանքը, համայնքին օգնութեանը կարօտ:






22 (209). ՅԱԿՈԲ ՎԱՐՂՈՎԵԱԼ ԴԵՐԱՍԱԼԱՊԵՏՆԵՑ²⁸



այ արուեստագետները մեծ յարգանքի արժանացած են թուրք սուլթաններու եւ իշխանատրոներու կողմէ, որոնց ծառայութեան ներքեւ կը գտնուէին: Այս վերջինները անշուշտ գիտէին անոնց հայ ըլլալը:

Յակոբ Վարդովեան, ինչպէս մեր հայ ուրիշ դերասաններ, շատ կարող դերասանապետ մըն էր: Ան Սուլթանի պալատին թատրոնը կը վարէր: Սուլթանը զինք շատ հաւանելուն՝ թուրք աղջիկ մը կը ներկայացնէ, կ'ամուսնացնէ, եւ ան կը թրքանայ, կ'ըլլայ Կիլիկ Եագուպ: Անոր գերեզմանը կարծեմ թրքական գերեզմանատուն մըն է, անյայտ մնացած. ո՛չ հայերը կը հետաքրքրուին, ո՛չ ալ այլազգները: Այնպէս որ Յակոբ Վարդովեանին համար կ'ըսեն՝ իքի տինտէն աւարա, այսինքն՝ երկու կրօնքներուն մէջտեղը մոլորած...



23 (210). ԹՎԱԴՈՍ ԻՖԵԼՏԻ ՀԱՅ ԵՐԱԺԻՏՏԵՑ²⁹



ամանակին Թուրքիոյ մէջ թրքական դասական երաժըշտութեան հայազգի վարպետ-չորհնողներ շատ կային: Անոնցմէ մէկն ալ Թադէոս Էֆէնտիսն էր: Ան աղքատ ընտանիքի մը զաւակ եղած է: Փոքր տարիքէն մեծ սէր է ունեցած դեպի երաժշտութիւնը: Դպրոցին մէջ ան իր կօշիկին եզերքի լաստիկները քակելով ուտի նմանող տախտակի մը վրայ գամելով սկսած է նուագել, մինչեւ որ պղինձագործութիւն ընելով դրամ խնայած է եւ գործածուած քանոն մը գնած է:

Յետագային ան Սուլթանի պալատը կ'երգէր եւ կը նուագէր. պալատականներն ալ կ'ուտէին կը խմէին, լսելով անոր աղոտը երգերը:

Իրիկուն մը Սուլթանին ծառան Թադէոս Էֆէնտիսն տունը կու գայ եւ զինք պալատ կը կանչէ: Թադէոս Էֆէնտիսի կինն ալ յդի կ'ըլլայ, կ'ըսէ իր ամուսինին.

— Սաքը՛ն, կեճ քալմա՛ երբէն կել (Ա՛խ, չուշանաս՝ կանու՛խ եկուր):

Թադէոս Էֆէնտիսն իր կինը տունը մինակ ձգելով՝ աչքը ետեւ կ'ելլայ պալատ կ'երթայ:

Ան մինչեւ ուշ գիշեր Սուլթանին պալատը կ'երգէ կը նուագէ:

Սուլթանը հիացած կը լսէ, կ'ըսէ.


— Շիշդ է, շա՛տ ուշ է, բայց նոր երգ մըն ալ երգէ:

Թադէոս Էֆէնտիսն կը յիշէ տունը մինակ մնացած իր յդի կնոջ յուսահատ խօսքերը՝ «Չուշանաս, կանու՛խ եկուր», աւելի կը մտահոգուի եւ յուզուած կը սկսի ատ խօսքերուն վրայ նոր երգ մը յօրինել, երգել ու նուագել.

*Պու աքշամ կիւն պաթարքէն կել,
Ամա՛ն, կեճ գալմա. երբէ՛ն կել.*

Սագրն, կէճ գա՛լմա, էրքէ՛ն կէլ,
 Թահամիլ գա՛լմատը արթըզ,
 Սագրն, կէճ գա՛լմա՝ էրքէ՛ն կէլ:
 Ծէֆա է՛թմէ պանա, մահը՛մ.
 Սօնրա թութար սէնի ահըմ,
 Ի՛նզմէ պէնի, շիվէլի՛ եարըմ,
 Ամա՛ն, կէճ գա՛լմա, էրքէ՛ն կէլ,
 Սաքը՛ն, կէճ գա՛լմա, էրքէ՛ն կէլ:

Այս իրիկուն մայրամուտին եկուր,
 Ա՛խ, չուշանաս, կանու՛խ եկուր,
 Չուշանաս, կանու՛խ եկուր:
 Համբերութիւն չմնաց այլեւս,
 Չուշանաս, կանու՛խ եկուր:
 Խեղճ եմ ես, զիս վի՛ տանջեր,
 Ետքը անէծքս քեզ կը բռնէ,
 Ընորհալի՛ եար, զիս մի՛ յուզեր,
 Ա՛խ, չուշանաս, կանու՛խ եկուր,
 Չուշանաս, կանու՛խ եկուր:



24 (2II). ՈՒՏԻ ՀՐԱՆՂԸ³⁰



տի Հրանդն ալ հայ աշուղ մըն էր: Ան շատ աղէկ կ'երգեր
 և մէկ կողմէն ալ ուտ կը չալէր:

Ուտի Հրանդն ալ թուրքերէն երգեր կը յօրհներ ու կ'երգէր:
 Հայերը և այլազգները զինք շատ կը սիրէին, և անոր համերգներուն
 սրահը միշտ լեփ-լեցուն կ'ըլլար:

Օր մը՝ համերգի մը ընթացքին, ներկաները կը պօտան.

— Պի՛ս, պի՛ս, թաքսի՛ս, թաքսի՛ս³¹:

Ուտի Հրանդը, թէև կոյր էր, բայց շատ անմիջական և կատակա-
 սեր մարդ էր: Ան անուշ ժպիտով մը բեմէն կը պօտայ.

— Հիմա ձեզի թաքսիմներով պիտի խեղդեմ:

Եւ կը սկսի իրարու ետեւէ թաքսիմներ նուագել ու երգել: Ես ալ
 հիմա իր երգերէն հատ մը կ'երգեմ.


Հաստայըմ, եաշըյօրում
 Կէօրիւնմէզ հայալ իյլէ.
 Պէլքի պիր կիւն, պիր կիւն տիէ
 Պէքլերիմ իմիտ իյլէ:

Չիրիւյօր գավվալլը րուհում
 Աշքընըն հասրէթ իյլէ.
 Պէլքի պիր կիւն, պիր կիւն տիէ
 Պէքլերիմ իմիտ իյլէ:

Հիւանդ եմ, սակայն՝ կ'ապրիմ,
 Չտեսնուող երագովը.
 Ա՛խ, գուցէ օր մը, օր մ'ըսելով՝
 Կը սպասեմ քեզի յոյսով:

Կը փտտի իմ խեղճ հոգիս,
 Քու սիրուղ կարօտովը,
 Ա՛խ, գուցէ օր մը, օր մ'ըսելով՝
 Կը սպասեմ քեզի յոյսով:





25 (212). ԹԻՄԱՆԻ ՍԱՐԳԻՍԸ³²



Էմանի Սարգիսն ալ պոլսահայ երաժիշտ-երգահան մըն էր: Ան ջութակ կը նուագէր եւ իր ստեղծագործութիւնները կ'երգէր:

Քէմանի Սարգիսի երգերն ալ մինչեւ հիմա Ստանպուլի ձայնասփիւղէն եւ հեռատեսիլէն կը հաղորդեն, անոր անունը յիշելով:

Քէմանի Սարգիսի յօրինած երգերէն պատառիկ մը միտքս եկաւ.

*Քիմսէյէ էթմէմ շիքայէթ,
Աղլարըմ պէն հայիմէ.
Թիթրերիմ միւնրիմ կիպի,
Պաքտըքնա իսթիքպալիմէ:*

*Ոչ մէկուն չեմ ըներ գանգատ.
Կու լամ իմ վիճակիս համար.
Կը դողամ մեղաւորի մը նման,
Նայելով իմ ապագայիս:*



26 (213). ԻՐՍԱԿ ԹՕԹՕ³³ ԵՒ ՄԵՆՍԵՏ ԳԱՐԱՃԱԿ



ուրջիոյ թատրոնի զարգացումին մեծապէս նպաստած են Յակոբ Վարդուկեան եւ Մարտիրոս Մնակեան, եւ այսօր Ստանպուլի քաղաքապետարանին կարող դերասաններ Մ. Մնակեանի աշակերտները եղած են՝ Վասիլ Ռըզա, Մեհմէտ Գարանա: Վերջինս թրքական թատրոնի յայտնի հայ դերասանուհի Իրմա Թօթոյին ամուսինն է: Իսկ Իրմա Թօթօն ալ՝ բանաստեղծ Սիմոն Ֆէլէքեանի թոռնուհին: Ներկայիս Թուրքիոյ սիրուած երգիչ Ճէմ Գարանան Իրմա Թօթոյին եւ Մեհմէտ Գարանային զաւակն է:

Մայրը՝ դերասանուհի Իրմա Թօթօ երբ վախճանեցաւ, ննջեցեալին փափաքով յուղարկաւորութեան արարողութիւնը Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին կատարուեցաւ: Տղան՝ Ճէմ Գարանա ալ ներկայ էր: Իրմա Թօթօն Օիշլիի գերեզմանատունը թաղեցին: Ես ալ դամբանական կարդացի թուրքերէն, քանի որ շատ թուրքեր եկած էին՝ հայ անուանի դերասանուհիին իրենց յարգանքի տուրքը մատուցանելու:





27 (214). ԲԵՌԵԱԿԻՐ ՄԻՍՈՆԸ ԵՒ ԸՍԲԻԾ
ՓՈՆԱԿԻՆ

Մուլթանի օրօք հայ վաճառական մը Երոպայէն առաջին
անգամ երկաթէ քասա մը կը բերէ Պոլիս: Ան կ'ուզէ նաւէն
վար իջեցունել, ամմա շատ ծանր ըլլալուն՝ ճիշ մէկը չի կըր-
նար իջեցունել: Միայն Սիմոն անունով հայ համալ մը կ'ըսէ.

— Ես կ'իջեցունեմ, միայն թէ փալանիս վրայ դրէք:

Համալ Սիմոնը ատ քասան առօք-փառօք կ'իջեցնէ, կը տանի,
իր տեղը կը դնէ: Հայ վաճառականը շատ գոհ կը մնայ: Անոր պախշիջը
կու տայ, ճամբու կը դնէ:

Օր մը աս հայ վաճառականը կ'երթայ Սուլթանին քովը, կը
տեսնայ որ ան շատ տխուր է, կը հարցնէ.

— Սուլթա՛նս, ինչո՞ւ տխուր եք:

Սուլթանը կ'ըսէ.

— Յունաստանէն Փանանի անունով յոյն փեհիվան մը եկած է:
Իմ բոլոր զօրաւոր փեհիվաններս գետին տապալեց, վերջն ալ ըսա՛մ
«Տահա կա՞յ, թող գան»:

Աս հայ վաճառականը կ'ըսէ.

— Սուլթա՛նս, ես հայ համալ Սիմոն մը գիտեմ, ան շա՛տ զօրաւոր է:

Սուլթանը կը հրամայէ ատ հայ համալ Սիմոնը գտնալ, բերել:

Սիմոնը պալատ կը բերեն: Սուլթանը անոր աղուոր մը կը կեր-
ցունէ կը խմցունէ, պէսլեմիշ կ'ընէ:

Սիմոնը կ'ըսէ.

— Կ'ուզէք հիմա իմին դէմս առի՛ւծ բերէք:

Սիմոնը կը տանին յոյն Փանանիին դէմը: Աս Սիմոնը կը վերցնէ
Փանանին, օդը կը հանէ, կ'ըսէ.

— Ո՞ւր նետեմ:

Խաղին դատաւորը վախէն կ'ըսէ.


— Ամա՛ն, յանկարծ գետին չնետես. կամացուկ մը գետինը դիր.
ասանկ ալ, անանկ ալ յաղթանակը քուկի՛նդ է:

Ատկէ վերջը Պոլիս չօճուխները փողոցը կ'երգէին.

*Կէլտի կիլէշ զամանի,
Իշտէ մէյտան Փանանի,
Չօք խուրուլտուն, Փանանի՛.
Սիմոն սիքտի անանի:
Հասաւ պահն ըմբշամարտի,
Հրապարակի վրայ է Փանանին,
Ծատ գոռոզցար, Փանանի՛.
Սիմոն ք...եց մայրիկիդ:*

Ասի իրական եղած է: Առաջ, երբ ես Պոլիս թիւթին կը ծախէի,
ատ թիւթինի բարակ թուղթերուն վրայ Սիմոնը Փանանին օդը հանած
պատկերը կար:





28 (215). ՄԾԵՄԻ ՄԿՕՆ

Աւշխարհամարտէն առաջ Պոլիս շատ պանդուխտ հայեր կային, որոնք ծննդավայր, ընտանիք, ծնողք ձգած կու գային մայրաքաղաք, որպէսզի քիչ մը դրամ վաստակին՝ իրենց հարազատներուն դրկեն, որ անոնք ապրուիսն եւ քիչ-քիչ մարեն այն պարտքը, որ գիւղի պարտատէր աղայէն տոկոսով առած կ'ըլլային: Ատ պանդուխտ հայերուն մէջ կային Վանեցիներ, Մշեցիներ եւ ուրիշ գաւառներէ մարդիկ, որոնք հողագործ եղած էին եւ արհեստ չունէին, հետեւաբար ստիպուած կ'ըլլային ֆիզիքական ծանր գործեր կատարելու կամ նաւերէն բեռներ վար կ'առնէին, կա՛մ ճամբորդներուն ծանր բեռները շալկած բեռնակրութիւն կ'ընէին եւ կա՛մ հարուստ աղաներու տուններուն ու խանութներուն մէջ գիշերապահ կ'ըլլային:

Մկօ անունով պանդուխտ հայ մը, ծննդավայր, ծնողք, ընտանիք ձգած, Պոլիս կու գայ, գործ հայթայթելու: Պոլիս հասնելուն՝ դեռ ծովեզերքը իրենց հայրենակից Դրոյին կը հանդիպի, որ համետը կոնակին, նաւէն բեռներ վար կ'իջեցունէր: Ասոնք կարօտով զիրար կը համբուրեն: Դրօն հարց ու փորձ կ'ընէ իր հարազատներէն, որոնցմէ շատոնց նամակ առած չէր եւ մտմտոքի մէջ էր: Մէկ խօսքով, շատ կ'ուրախանան եւ կը մտածեն, որ Մկոյին գլուխը պահելու անկիւն մը եւ գործ մը գտնալ պէտք է:

Դրօն կ'ըսէ, որ ինք ընկերութեան մը մէջ բեռնակիր է եւ նաւերէն բեռներ կ'իջեցունէ ու զանոնք կը տեղատրէ: Կը խոստանայ Մկոյին համար ալ գործ գտնէ: Միասին այդ ընկերութեան կ'երթան եւ կը պայմանաւորուին վաղուրնէ սկսեալ աշխատիլ:

Գործէն վերջը երկուքը միասին կու գան Մկոյին մութ անբնայարկը, քիչ մը հաց կ'ուտեն եւ Մկոյի խշտեակին վրայ միասին կը պսակին:

Ատուուն երկու պանդուխտներ միասին գործատեղը կը ներկայանան եւ Մկօն ալ կը սկսի աշխատիլ, բայց այնքան առողջ չէ, որ Դրոյին պէս դժուար գործեր ընէ: Օր մըն ալ ծանր բեռներ վերցնելու ժամանակ Մկօն բեռը շալակը գետին կ'իյնայ: Դրօն անմիջապէս օգնութեան կը հասնի, ուրիշ ընկերոջ մը հետ իր «սենեակը» կը տանին: Դրօն հայ բժիշկ մը կը բերէ. անհկա դեղեր կը գրէ եւ խորհուրդ կու տայ որ Մկօն ծանր գործեր չընէ:

Վերջապէս Մկօն ոտքի կ'ելլայ, բայց հիւծած ու նիհարցած: Ինք ալ կը զգայ որ այդ ծանր գործը իրեն համար չէ, բայց գործ մը պէտք է ընէ, որ իր ապրուստը հանէ եւ քիչ մըն ալ խնայէ, որ գաւառ՝ հարազատներուն դրկէ:

Ան ժամանակներն ալ պանդուխտ հայերը երբ Պոլիս կու գային, եթէ նեղը մնային, Հայոց Պատրիարքարանի աջակցութեան կը դիմէին: Դրօն կը մտածէ երթալ խնդրել, գուցէ Մկոյին համար թեթեւ գործ մը գտնուի:

Երկուքը միասին կ'ելլան Պատրիարքարան կ'երթան, քարտուղարին կը դիմեն: Դրօն կը բացատրէ.

— Մշեցի հայրենակիցս Պոլիս նոր եկած է. ծանր գործ ընելով հիւանդացաւ եւ հիմա չի կրնար այլեւս այդ նոյն գործը ընել, մանաւանդ որ բժիշկն ալ արգիլած է: Մի՞նչեւ հիմա ես իրեն ամէն տեսակետով օգնական եղայ, բայց այլեւս օգնելու ի վիճակի չեմ: Կը խնդրեմ նկատի առնել իր վիճակը. կը տեսնաք, թէ ինչքա՛ն նիհարցած է խեղճը:

Դրօն այս բոլորը քարտուղարին պատմած ժամանակ՝ Մկօն ոչ մէկ բառ կ'արտասանէ: Իսկ քարտուղարը թուղթի մը վրայ կը գրէ Մկոյին անունը եւ մականունը ու կ'ըսէ.

— Պատասխան առնելու համար քանի մը օրէն անցէք:

Դրօն եւ Մկօն քանի մը օր ետքը կը ներկայանան: Քարտուղարը անոնց կը յայտնէ որ եկեղեցիին մէջ մոմավաճառ ծեր մարդ մը կար: Հիմա ծանր հիւանդ պատկած է, կը սպասուի որ շուտով պիտի մեռնի. այդ գործը Մկոյին պիտի տրուի: Այնպէս որ քանի մը օր յետոյ դարձեալ թող անցնին:

Դրօն եւ Մկօն քանի մը օրէն նորէն կու գան: Քարտուղարը կը յայտնէ թէ հիւանդը մեռած է, եւ ինչպէս որ խոստացուած էր, մոմավաճառի գործը մշեցի պանդուխտ Մկոյին պիտի յանձնուի. իր հիւանդ վիճակը նկատի առնելով: Մկօն եւ Դրօն այս լսելով շատ կ'ուրա-

խանան, որ վերջապէս հանգիստ գործ մը գտնուեցաւ, բայց անոնց ուրախութիւնը շատ կարճ կը տեւէ: Քարտուղարը Մկոյիմ կը հարցնէ թէ ինչ կրթութիւն ունի: Աստի հարցումին վրայ Մկոն գոյնը կը նետէ, կմկմալէն կ'ըսէ թէ ինք գաւառը դպրոցի երես տեսած չէ, նոյնիսկ ստորագրութիւն դնել չի գիտեր:

— Օ՛, — կ'ըսէ քարտուղարը, — աս չեղաւ. դուն գոնէ քիչ մը հաշի պէտք է գիտնաս, մոմերը պիտի ընդունիս, պէտք է ստորագրութիւն դնես: Ուրեմն չեղաւ: Այս գործը քեզի յարմար չէ:

Մշեցի Մկոն շատ կ'աղաչէ, բայց օգուտ չ'ընէր: Պատրիարքարանը գտնուող աղաներէն մէկը կը մեղքնայ պանդուխտ Մկոյիմ, կը հանէ գրպանէն քիչ մը դրամ կու տայ, մինչեւ որ ան գործ մը գտնէ:

Մկոն եւ Դրօն Պատրիարքարանէն դուրս գալէն ետքը Դրօն իր գործին կ'երթայ, իսկ Մկոն Սամաթիոյ փողոցները կը թափառի, որ իրեն համար գործ մը գտնէ, քանի որ որպէս ողորմութիւն տրուած դրամը կրնար շատ շուտ լնննալ: Մկոն կը քալէր եւ կ'անհիծէր իր սեւ օրը, որ քիչ մը գիր ու հաշի չէր սորված:

Միւս առտու Մկոն յուսահատ վիճակով փողոց կ'ելլայ: Փողոցին անկիւնը անշուք խանութ մը կը նկատէ, ուր հնամաշ հագուստներով մարդիկ ելումուտ կ'ընեն: Անոնք իրենց ձեռքը եղած կապոցները հոն կը ձգեն եւ խանութէն պարսպ ձեռքերով դուրս կ'ելլան: Մկոն կը հետաքրքրուի եւ այդ մարդոցմէ մէկուն կը հարցնէ թէ իրենք հոն ի՞նչ կը ծախեն: Մարդը կ'ըսէ թէ իրենք հոսկէ հոնկէ անպէտ, հինգսոթ հագուստները կը ժողվեն եւ կը բերեն, այդ հրէայ խանութպանին կը ծախեն: Ան ալ աստ հագուստները կը մաքրէ, կ'արդուկէ եւ կը ծախէ, իսկ անպէտները, որպէս հումք, թուղթի գործատուն կը դրկէ:

Մկոն կը մտածէ որ աստիկա հանգիստ գործ է, ինք ալ կրնայ այդ ձեւով աշխատիլ: Կ'երթայ պարկ մը կ'առնէ, հոսկէ հոնկէ հին հագուստները կը ժողվէ, կը տանի հրէայ խանութպանին կը ծախէ, իր օրականը կը հանէ եւ դէռ կամաց-կամաց ալ կը սկսի խնայել:

Մկոն սովորութիւն մը ունէր, որ իր ժողված հագուստներուն գրպանները կը ստուգէր, յետոյ հրէային կը տանէր: Երբեմն գրպանները մանր դրամներ կը գտնար:

Օր մըն ալ, երբ Մկոն նորէն իր բերած հին հագուստները կը ստուգէր, չաքէթի մը գրպանէն ծալուած թուղթ մը կը գտնայ: Ինք բան մը չի հասկնար ասկէ, կը հետաքրքրուի, կը հարցնէ, կ'իմանայ որ այդ

վիճակահանության տոմս՝ քրեւտիֆոնսի է: Իրեն կ'ըսեն որ քանի մը օրէն պիտի խաղայ եւ ցուցակը պիտի յայտարարուի: Կ'անցնին այդ քանի մը օրը, Մկոն կը տանի. ստուգել կու տայ եւ ի՞նչ, փրիմօ, այսինքն՝ առաջին կարգի շահուն՝ 2000 ոսկի: Մկոյի ուրախութիւնը ալ սահման չունենար: Իրեն խորհուրդ կու տան որ այդ դրամը պանքան դնէ. ոմանք ալ կ'ըսեն որ այդ դրամով մանուֆաքթուրայի խանութ մը կրնայ բանալ:

Մկոն, որ առուծախի մէջ արդէն բաւական հմտացած էր, անելի յարմար կը նկատէ մանուֆաքթուրայի գործը: Կեդրոնական փողոցի մը վրայ խանութ մը կը բանայ, ցուցատախտակին վրայ մեծ գիրերով գրել կու տայ իր անունը եւ մականունը՝ Տէրտէրեան Մկօ, հատ մըն ալ անձնական կնիք շինել կու տայ, որ ստորագրութեան փոխարէն կնիքը դնէ, իր բարեկամ մշեցի Դրօն ալ կը բերէ իր խանութը աղէկ գործի մը կը դնէ եւ բեռնակրութենէն կ'ազատէ, իրենց ընտանիքներն ալ գաւառէն բերել կու տայ Պոլիս, առօք-փառօք կ'ապրին:

Օր մը Մկոն իր խանութը նստած առտուան սուրճը կը վայելէր, երբ ներս կը մտնայ Պատրիարքարանին քարտուղարը գնում ընելու: Ան նախ Մկոն չի ճանչնար, որովհետեւ շատ փոխուած էր. իր արտաքինը, հագուստ կապուստը, գեղեցիկ եւ նորաձեւ խանութը: «Արդեօք երբեմնի խեղճ ու կրակ Մշեցի պանդուխտ Մկոյի՞նն էր, որ ստորագրութիւն դնել անգամ չէր գիտեր: Ըլլալիք բան չէ», — կը մտածէ քարտուղարը: Բայց Մկոն անմիջապէս կը ճանչնայ զինք իր հին ու մաշուած բանկոնովը: Մկոն քարտուղարին կը մօտենայ, կը բարեւէ եւ կ'ըսէ.

— Մի՛ գարմանար, ես եմ, գիր ու ստորագրութիւն չգիտցող Մշեցի Մկոն: Եթէ գիր ու հաշի գիտնայի, մինչեւ ծերանալս եկեղեցիին մէջը մոմ ծախող պիտի ըլլայի, իսկ հիմա կը տեսնաս, վաճառական եմ, ոչ թէ գիր, հաշի, ստորագրութիւն, այլ բա՛խտ ըսէ, բա՛խտ: Այս աշխարհիս մէջ մարդ պէտք է բախտաւոր աստղի տակ ծնած ըլլայ:





29 (216). ԶՍԻՆ ՊԱՏՐԻԱՐԹԸ³⁴ ԵՒ ՀԱՅ
ԹՈՒՆՈՒՄՊԱՄԻՆ



ոյիսը շատ գեղեցիկ քաղաք է: Պոսֆորի անդուցով Սեւ եւ Մարմարա ծովերուն ափին կը տարածուի ան, իր հնամենի պարիսպներով: Բաղաքը եօթը բլուրներու վրայ շինուած է: Քիչ մը անդին, ծովը, մեծ ու պզտիկ քանի մը կղզիներ կան, որոնք քաղաքին մաս կը կազմեն:

Ժամանակին Պոյիսը Վոսփորի անդուցով երկու աշխարհամասերու մէջ բաժնուած էր: Հին կամուրջը բացուող գոցուող էր: Հիմա առանց սիւներու հսկայ կամուրջ մը շինուած է, որ Եւրոպական մասը Ասիականին հետ կը միացնէ:

Մարմարա ծովը ցերեկը կապոյտ է, խաղաղ ու հանգիստ: Մեծ ու պզտիկ նաւեր կ'երթան կու գան: Գիշերն ալ ծովը շատ հիանալի տեսք ունի: Պոսֆորի շրջակայքը եւ բլուրներուն վրայ կը տարածուի քաղաքը, աղամանդի պէս փայլող ելէկտրական լոյսերով ողողում:

Գործի երթալու կամ երթելեկելու կը ծառայեն պզտիկ եւ մեծ փոխադրանաւերը, որոնք մարդիկը ծովով մէկ վայրէն միւսը կը փոխադրեն: Ծովային այդ կարճ ճամբորդութիւնն ալ իր հմայքը ունի:

Պոլսոյ հայերը առաջ մեծ մասամբ Սամաթիոյ, Գումգաբուի եւ Ետիգուլէի թաղամասերը կ'ապրէին: Առաջուան տուններն ալ փայտաշէն կ'ըլլային, եւ յաճախ հրդեհ կը բռնկէր: Հրշէջները, որոնց թուլումպահ կ'ըսէին, իրենց թուլումպայով, այսինքն ջրհան գործիքով օգնութեան կը վազէին: Անոնք մեծ մասամբ սիրող-կամաւորներ էին, խոնարհ խափ պատկանող մարդիկ: Իրենց ապրած միջավայրը, սովորութիւնները եւ կենցաղը բարձր դասակարգի պատկանող հայերէն կը տարբերուէին: Անոնցմէ շատ շատեր արհեստաւորներ էին, ձկնորսներ, իսկ մէկ մասն ալ՝ ծխախոտի մաքսանեւագութեամբ զբաղողներ, որոնք

միշտ ան ու դողի մէջ կ'ապրէին: Անոնք շիտակ եւ բարի մարդիկ էին, ազգասէր եւ պատուախնդիր. հայերէն կը խօսէին, բայց մէջը թուրքերէն ալ կը խառնէին: Իրիկունները իրենց գործը վերջացնելէն ետքը Երիկ-մարդիկ անմիջապէս տուն չէին երթար. սովորութիւն ունէին սրճարանները նստելու, սքամախլ կամ թալու խաղալու: Եւ կամ օդի խմելու համար թաւերնաներ կ'երթային եւ ճաշելու համար ուշ տուն կու գային:

Ատ Երիկմարդոց հագուստը քոսթիմի պէս էր, գոյնը՝ մութ կապոյտ, կերպարը՝ լաւ տեսակէն մահող: Բանկոնը վրայ վրայի եկած, կարճ, վեց կոճակով. մէջէն անպայման ժիլէթ կը հագնէին, որը վրայէ վրայ եկած կ'ըլլար եւ մէկ գրպանէն դէպի միւս գրպանը ոսկի հաստ շղթայով ոսկի ժամացոյց մը կախուած, տաբատը՝ քովէն վրայ դարձած եւ անոր վրայէն մէկ սանթիմ լայնքով մեքենայի կար անցած, վարի մասը շատ լայն եւ վրան դարձած: Փողպատ երբեք չէին գործածեր:

Ատ քոսթիմները շուտ չէին հիմնար, քանի որ միայն Կիրակի եւ տօն օրերուն կը հագնէին, իսկ եթէ պատահէր որ նորը կարուելու ըլլային, դարձեալ միեւնոյն գոյնը, միեւնոյն ձեւը պէտք է ըլլար, նաեւ միեւնոյն կերպար:

Սամաթիոյ, Գումգաբուի եւ Ետիգուլէի տուններուն հարիւրէ ութ-տունը փայտաշէն էին եւ այդ թաղերը մեծ մասամբ հայեր կ'ապրէին:

Ես կը յիշեմ, երբ պզտիկ էի, քանի՛-քանի անգամներ մեծ հրդեհներ պատահած են եւ ամբողջ թաղեր հրոյ ճարակ եղած: Այդ հրդեհները յաճախ մասնաւոր կ'ընէին չար մարդիկ, որ խառնիճաղանճութեան մէջ առիթէն օգտուէին, մարդոց ունեցումները թալնէին, կամ սիրուն աղջիկները փախցնէին:

Այդ ժամանակները ամէն ազգ իր ազգային թուլումպահները ուներ, բայց հայերը, մանաւանդ Սամաթիոյ թաղիները, կ'աշխատէին որպէս կամաւորներ եւ ատիկա պատուի գործ կը սեպէին, տուժածներուն օգնելով. անշուշտ ոչ միայն հայերուն, այլ նաեւ ուրիշ ազգերու ալ կը հասնէին: Ցերեկ ժամանակ կամ թէ կէս գիշերը յանկարծ եթէ հրդեհ ըլլար, այդ կամաւորները, խանութպան, ձուկ ծախող կամ տանիքի վրայ աշխատող, ամէն ինչ երեսի վրայ կը ձգէին եւ կը վազէին, կը ժողվուէին իրենց թուլումպային շուրջը, կը հագնէին հրդեհ մարելու իրենց հագուստները եւ մեծ աղմուկ աղաղակով կը վազէին հրդեհի վայրը, ինչքան ալ հեռու ըլլար ան: Վերջերս անոնք արդէն անիւներու վրայ դրուած ջրհանը մեծ աղմուկով կը տանէին հրդեհի վայրը: Ծամ-

բան եթէ փողոցի տղաքը իրենց ոտքին տակը իյնային եւ խանգարէին, կը սկսէին սարսափելի հայհոյանքներ ընել, քանի որ հայհոյանքները շատ տարածուած էին իրենց մէջ: Ատոր համար ալ Սամաթիոյ բնակիչները Պոլսոյ Հայոց Պատրիարքին կը գանգատկին, որ ճար մը գտնայ, որ տղաքը եւս չտրփին եւ այդ հայհոյանքներուն վերջ տրուի:

Յատենի Զաւէն Պատրիարքը Սամաթիոյ թուումպաճիներուն ամենէն մեծը կանչել կու տայ եւ կը խնդրէ որ այդ անվայել հայհոյանքներուն այլեւս վերջ տրուի. ատոնք ո՛չ հայ ազգին եւ ո՛չ ալ բարի գործ ընող կամաւոր թուումպաճիներուն պատիւ չեն բերեր:

Թուումպաճիներուն մեծը կը լսէ Պատրիարքը, կ'ըսէ.

— Այո՛, Պատրիա՛րք Հայր, դուք շատ ճիշդ կ'ըսէք: Ես կ'երթամ վեր այդ անամօթ թուումպաճիներէն ամէն մէկուն մայրիկը կը ք...մ:



30 (217). ԳՂԼՖԱՅԵՎՆ ՈՐԲՎՆՈՄԻՆ ԲՈՅՐԵՐԸՅ ԵՒ ՎՉԳՎՍԻՐ ՊՈԼՍԵՄԻՆ

Աւշխարհամարտէն ետքն էր. ամէն կողմ աղքատութիւն, ամէն կողմ թշուառութիւն, ամէն կողմ առանց ծնողքի մնացած հազարատր որբեր եւ որբուհիներ կային: Զանոնք ժողվել, պատսպարել եւ խնամել պէտք էր: Պոլսոյ Գալֆայեան եւ Գարակէօգեան որբանոցները ան ատենները շատ մեծ գործ ըրած են:

Առաջ Գալֆայեան Որբանոցը Սրբուհի մայրապետը կար, քոյր Մարիամը, քոյր Արուսեակը, քոյր Զարուհին կային: Հիմա միայն քոյր Հռիփսիմէն մնացած է:

Կը պատմեն թէ օր մը Գալֆայեան Որբանոցին քոյրերը կ'որոշեն տունէ տուն երթալ, հայ որբուհիներուն համար դրամ ժողվել:

Անոնք Պոլսոյ մէջ անուն հանած հարուստ հայու մը տունին դուռին առջեւը կ'երթան, հազիւ կ'ուզեն դուռը գարնել, ներսէն տանտիրոջ բարկացած ձայնը կը լսեն: Ան սպասուհիին վրայ կը պօտար.

— Ես քեզի չե՞մ ըսած որ լուցկիին մէ՛կ հատիկը անգամ պէտք է խնայել, ինչո՞ւ աւելորդ լուցկի մը վառեցիր...

Դուրսը կեցած քոյրերը կը լսեն ատ խօսքերը, իրարու կ'ըսեն.

— Երեւի աս հարուստը շատ կծծի է եւ մեզի դրամ չպիտի տայ: Քոյրերէն մէկը կ'ըսէ.

— Փորձելը մեղք չէ ճանը՛մ, եկէք մէյ մը փորձենք:

Եւ դուռը կը գարնեն:

Սպասուհին դուռը կը բանայ: Քոյրերը ներս կը մտնան եւ տանտիրոջ կը յայտնեն թէ իրենք հայ որբերուն խնամքին համար դրամ ժողվելու եկած են:

Տանտէրը կ'ըսէ.

— Ատ ի՛նչ լաւ բան խորհած էք, կը գնահատե՛մ ձեր ջանքերը:

Եւ առանց երկար մտածելու կը հանէ մեծկակ գումար մը կու տայ իրենց:

Քոյրերը կը զարմանան: Անոնցմէ մէկը ա՛լ չդիմանար, կ'ըսէ.

— Ներողամիտ կ'ըլլաք, պարո՛ւն, մենք դեռ ներս չմտած լսեցինք թէ ի՞նչպէս լուցկիի մէկ հատիկը խնայելու մասին կը խօսէիք, հիմա ի՞նչպէս եղաւ որ այդքա՛ն մեծ գումար մը տրամադրեցիք:

— Այո՛, շատ ճիշդ է, — կ'ըսէ հարուստ տանտէրը, — եթէ ես խնայողասէր չըլլայի, հիմա ո՛չ հարստութեան տէր կ'ըլլայի, ո՛չ ալ աս բարեգործութիւնը կրնայի ընել:

Քոյրերը կը հիանան այդ հարուստ եւ խելացի մարդուն մտածելակերպին, շնորհակալութիւն կը յայտնեն եւ հրաժեշտ կ'առնեն:

Անանկ որ, Պոլիս մարդիկ կան, որ կօշիկնին ներկել չեն տար. իրենք կը ներկեն, բայց ատ դրամը կը խնայեն, հայ եկեղեցիին եւ ազգին կը տրամադրեն:



ՅԻ (218). ԳՈՒՆՈՅ ԳՎԼՖԱՅԵՎՆ ՈՐԲՎՆՈՄԵ

Մենք Գալֆայեան Որբանոցը մեծցած ենք: Մեր ատենը մեզի այնքան աղէկ կը նայէին, ալ ըսելիք չկար: Հայերէն, կրօնք եւ ուրիշ բաներ կը սորվէինք, ֆրանսերէնի դասը օրիորդ Մարի Չրաքեանը կու տար: Եթէ կրամերը չսորվէինք, ականջնիս կը քաշէր, բայց նորէն կը բացատրէր որ սորվէինք: Որպէս տնօրինուհի ան շա՛տ խիստ էր, բայց մեր ամենուն հանդէպ շատ ալ բարի էր: Մեզ ամենքս կը սիրէր, մենք ալ զինք մեր մօրը պէս կը սիրէինք եւ՛ իր անուշիկ դէմքին, եւ՛ մանաւանդ իր անուշիկ բնատրութեանը համար:

Որբանոցը մեզ շատ աղէկ կը խնամէին. կը կերցնէին կը խմցնէին, կը հագցնէին, կը պտտցնէին: Հարուստ բարերարները մեզ փրենսեսի պէս հոգ կը տանէին: գլուխնուս ճերմակ ժապաւէններ, գլխարկներ, ոտքերնուս՝ լուստորին սեւ փայլուն կօշիկներ, փոնփոնը գուլպաներ: Ամէն գիշեր ամենուս հագուստները արդուկ կ'ըլլար եւ մեր անկողիններուն գլխուն վերը կը կախէինք:

Ի՛նչ համով ճաշեր կ'եփէին, մեզ կը կերցնէին. ալ չե՛մ կրնար բացատրել:

Ով որ ամուսնանար, որբանոցէն երթար, իր օժիտը, անջարանի կարասին անգամ հետը կու տային:

Որբանոցի տնօրինուհի օրիորդ Մարի Չրաքեանը ամէն գիշեր քունթրոլի կու գար, յետոյ իր սենեակը կ'երթար:

Հարուստ ընտանիքները ձմեռուընէ կը պատրաստուէին, որ ամառը հայ որբուհիները իրենց ամառանոցը հիւր պիտի ընդունին:

Մեզի սեղան շտկել, ճաշեր, խմորեղէններ եփել սորվեցուցին, սեղանի շուրջը լէյտիի պէս քաղաքավար ձեւերով նստիլ ելլալ, ուտել խմել, սպասքեղէնէն օգտուիլ սորվեցուցին: Հիմա Հիլթօն օթել երթամ նէ՛ չեմ ամչնար, քանի որ արիսթօքրաթ մեծցած եմ: Մեզի կրօնքի դաս կու տային, որ բարոյապէս բարձր ըլլայինք: Մեզի նկարչութիւն.

ձեռագործ կը սորվեցունէին, փիանոյի դաս կու տային: Գալֆայեան Տան մէջ մենք թիթեռնիկի պէս էինք: Կը սորվեցնէին ի՛նտոր գուլպայ հագնիլ, ի՛նտոր ժապաւէն կապել, ո՛ր կողմը կապել, որ գեղեցիկ ըլլայ: Մէկ խօսքով՝ ինչ որ պէտք է աղջկան մը, որ ընտանիքի կին եւ մայր դառնայ...

Հոն այս երգը կ'երգէինք, մինչեւ հիմա միտքս է.

*Գալֆայեան սան՝ բարեբաստիկ,
Մէկ սիրտ հոգի՝ մեծ ու պզտիկ,
Մաքուր վարքով, ազնիւ բարքով.
Մենք քոյրիկներ ենք քովէ քով:*

*Գալֆայեան Տան տոհմին համար
Պէտք է ըլլալ զաւակ տիպար.
Միշտ ժրաջան, յառաջադէմ՝
Նշանաբանն է մեր վսեմ:*

*Պատիւ անոնց, որ մեր վրայ
Զաւկի մը պէս կը գորգորան,
Պատիւ, պատիւ, պատիւ, յարգանք,
Աստուած անոնց տայ երկար կեանք:*

*Պատիւ անոնց, որ անձնուէր
Կրթութեան ջանք չե՛ն խնայեր,
Պատի՛ւ, պատի՛ւ անոնց յաւէտ.
Կ՛ոխտենք ըլլալ երախտագէտ:*

Եւ քանի որ մենք բարերարներու բարեգործութիւնովը մեծցանք, մեզմէ կարօտեալներուն օգնելով մեր երախտագիտութիւնը անոնց յայտնած կ'ըլլանք: Ահաւասիկ այսօր հանգստի կոչուած յիսունի չափ կիներ, մեր խնայողութիւնով ժողված գումարով պէտք եղածը զնեցինք, նաւ նստանք, շիտակ Գընալը կղզիի Կազորման Կայանը եկանք, որպէսզի պզտիկներուն մանրը շինենք եւ հիւրասիրենք: Աս տեսակ բաներ յաճախ կ'ընենք: Եւ մեզի պէս շատեր ալ կան:



32 (219). ՈՒԼՃԵՍՆ ԿՐԻԿ ԻՖԵՆՏԻՆՅՔՅ



նճեան Արիկ էֆէնտին շատ խելացի, շատ հարուստ հայ մըն էր, Պոլսոյ մէջ մեծ անուն ունէր: Թրքական կառավարութիւնը իրեն թագաւորական նշան տուած էր: Զինք շատ կը յարգէին եւ՛ հայերը, եւ՛ թուրքերը:

Օր մը հայ զինուոր մը կու գայ Ունճեան Արիկ էֆէնտին տունին շուրջընտրել կը դառնայ, կը տեսնայ աշնին, նամակ մը կու տայ իրեն, որ Արիկ էֆէնտին յանձնէ:

Արիկ էֆէնտին նամակը ձեռքը կ'առնէ, կը կարդայ որ Անդրանիկ Զօրավարէն³⁷ է եւ ան իր բանակին համար իրմէ դրամ կ'ուզէ:

Արիկ էֆէնտին կ'ըսէ.

— Զէ՛, ես եթէ Անդրանիկ Զօրավարին դրամ տամ, աստեղը ինչքան որ հայ կայ՝ բոլորը կը ջարդեն, մեզ ալ անոնց հետը:

Հայ զինուորը կ'ելլայ, կ'երթայ Անդրանիկին կը պատմէ որ Ունճեան Արիկ էֆէնտին տասը փարսանգամ չտուաւ: Ի՞նչ ընենք:

Անդրանիկը կ'ըսէ.

— Ի՞նչ պիտի ընենք, պիտի մեռնենք:

Բախտ կը գետնէ, թէ ով պիտի ընէ այդ գործը: Մէյ մըն ալ մէկը, ֆիշէնկները կուրծքը, ձեռքն ալ զէնք մը, կու գայ Արիկ էֆէնտին տունին քովերը կը սպասէ որ ան դուրս գայ, ինք սպաննէ:

Արիկ էֆէնտին ալ գրելէն, յոգնած կ'ըլլայ, կը խորհի քիչ մը պարտեզ ելլալ, օդ մը առնել: Տունին առջեւն ալ երկու կողմէն սանդուխ կայ եղեր, մէկ կողմէն կը կրակեն, Արիկ էֆէնտին սանդուխներէն վար կ'իյնայ:

Կարսոնները, որ ճաշի սեղան կը շտկէին, դուրս կը վազեն, կը տեսնան Արիկ էֆէնտին ինկած, մեռած: Արդէն ան իր քրոջը հետ կ'ապրէր: Այնպէս որ քոյրն ալ միմակ կը մնայ:

Աս բանը իրական պատահած է, Ա աշխարհամարտէն վերջը: Ան ատենը ես ալ նոր եկած էի Պոլիս:



33 (220). ԲԻՍՄԱԼ ԱԹԱԹԻԲԻՐՔԸՑՑ ԵՒ ՅԱԿՈՒՐ
ՄԱՐԹԱՅԵԱՆՔԸՑՑ

Յակոբ Մարթայեանը ծնած է Պոլիս, բայց Ա աշխարհա-
մարտէն վերջ Պուլկարիա ապրած է:
Տակալին 1914-էն, զինուորական սպայ եղած ժամանակէն,
Մուսթաֆա Քէմալը ճանչցած է Յակոբ Մարթայեանը, երբ ան կը
ծառայէր՝ թրքական բանակին մէջ, աչքի իյնալով բազմաթիւ լեզուներու
իր իմացութեամբ եւ ընդհանուր պատրաստութեամբ:

1923-ին, երբ Մուսթաֆա Քէմալ նոր հանրապետութեան ղեկա-
վարը դարձաւ, յիշեց իր վաղեմի բարեկամ Յ. Մարթայեանը եւ գնահա-
տելով անոր գիտելիքները՝ խնդրեց իրմէ որ Պուլկարիայէն գալ, Թուր-
քիա հաստատուի: Աթաթիւրքը անոր անունը «Տիլաչար» դրած է, այս-
ինքն՝ «լեզու բացող»:

Յ. Մարթայեան համալսարաններու մէջ թրքերէնի դասախօս
եղած է եւ թրքերէն լեզուին օրէնքները սորվեցուցած: Ան նաեւ թրքերէն
բառարաններու հեղինակ է:

Երբ Յ. Մարթայեան մեռաւ, «Միլլիլէթ» թերթը գրեց. «Կ'ամչնա՞ք
Յակոբ Մարթայեան անունը գործածելու, որ այդ մեծ վաստակ ունեցող
թրքագետին միայն Տիլաչար կ'ըսէք»:



34 (221). ԲԻՍՄԱԼ ԱԹԱԹԻԲԻՐՔԸ ԵՒ ԱՆԳՐԱՆԻԿ
ԶՕՐԱՎԱՐՔ

Պոլսահայ ծանօթ մտաւորական Յակոբ Մարթայեանը
Թուրքիոյ կառավարութեան մէջ Լեզուի ազգային տեսչու-
թեան անդամ էր:

Օր մը պաշտօնական ժողովի մը ընթացքին Քէմալ Աթաթիւրքը
ազգային բոլոր փոքրամասնութիւններուն ներկայացուցիչներէն կը
խնդրէ իրենց լեզուով երգ մը երգել:

Երբ կարգը Յակոբ Մարթայեանին կու գայ, Աթաթիւրքը կը
պահանջէ, որ հայերէն երգ մը երգէ Անդրանիկին նուիրուած:

Մարթայեան «Իբրեւ արծի սաւառնում ես»-ը կ'երգէ:

Ներկաները վախ ու դողով Քէմալին կը նային, թէ վերջը ի՞նչ
պիտի ըլլայ:

Քէմալ Աթաթիւրքը կը հարցնէ.

— Ինչո՞ւ կը զարմանաք: Անդրանիկն ալ զինուոր եղած է, ես ալ:
Ես յաղթեցի, իսկ ինքը յաղթուեցաւ: Երանի՛ իրեն, որ ժողովուրդը զինք
յարգանքով կը յիշէ: Եթէ ես յաղթուած ըլլայի, անունս իսկ պիտի
չիշէիք:





35 (222). ԽԱՉՈՒՄԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐԹԸ⁴⁰ ԵՒ
ԲԱՎԱՆԱՆ



երայի Ս. Յարութին մատրան Աշխար շինելու գործիքները
եկեղեցու մուտքը կը գտնուին: Այնպես որ ով եկեղեցի կը
մտնէ, հանգիստ կրնայ նաեւ Աշխար շինող եկեղեցա-
կանը տեսնայ:

Օր մը մատրան քահանան, անունը չեմ յիշեր, Աշխար կը շինէ
եղեր եւ փոխանակ մասնատր աղօթքներ արտասանելու կամ շարական
երգելու, թրքական ժողովրդական երգերէն մէկը երգելով կը կատարէ
եղեր այդ գործը.

— Հա պու տիյա՛ր, հա պու տիյա՛ր, հա պու տի, հա պու տի, հա
պու տիյար ...

Գարեգին Պատրիարք Խաչատուրեան՝ ան ժամանակուան
Պատրիարքն ալ մերթ ընդ մերթ, առանց նախապէս գոյշացնելու եկե-
ղեցիները եւ տէր հայրերը քննելու սովորութիւն մը ունի եղեր:

Օր մը կ'ըսէ. «Այսօր ալ այօյ մը Ս. Յարութին երկննամ»: Եւ երբ
կու գայ, կը հասնի Ս. Յարութին, զարմանքով կը տեսնայ թէ ինչպէս
Տէր Հայրը թրքական ժողովրդական երգ մը շարունակելով Աշխար կը շինէ.

— Հա պու տիյա՛ր, հա պու տիյա՛ր, հա պու տի, հա պու տի, հա
պու տիյար ...

— Տէր Հա՛յր, — կ'ըսէ Պատրիարքը զարմացած, — այս քու
երգածդ ո՞ր մէկ շարականն է, որ ես չեմ գիտեր, չեմ լսած եւ նոյնիսկ
Մաշտոցին մէջ ալ չեմ կարդացած...



36 (223). ԽԱՉՈՒՄԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐԹԸ ԵՎ
ՍՕԹՕՍԻՔԼԵԹՈՎ ԲԱՎԱՆԱՆ



արձեալ նոյն եկեղեցու նոյն քահանան օր մը Գումգաբուի
Մայր եկեղեցու մէջ հարսնիք մը ունի եղեր: Պոլսոյ մէջ
քահանաները քիչ, հարսնիքները շատ ըլլալուն՝ քահա-
նաները շատ անգամ հարսնիքներէն կ'ուշանան: Նոյնը եղեր է նաեւ
մեր սիրելի տէր հօրը: Կերպով մը մինչեւ Ղալաթիոյ կամուրջը հասնե-
լով, կը նայի որ ըլլալիքի պէս չէ: Եւ պատահաբար մօթօսիքլէթով երի-
տասարդ մը տեսնալով, ամչնալով, քաշուելով քովը կ'երթայ.

— Գուզու՛մ, — կ'ըսէ, — շատ անէլէ գործ մը ունիմ, Գումգաբու
պէտք է որ երթամ, զիս կը տանի՞ս:


— Ցատկէ՛ ետեւ, հայրի՛կ, — կ'ըսէ երիտասարդը, Տէր Հօրը
նաեւ մասնատր քապ մը տալով:

Այսպէս Տէր Հայրը երիտասարդի մէջքին փաթեւած շուտ մը
Գումգաբու կը հասնի եւ մօթօսիքլէթէն կ'իջնայ, գլխարկը կը հանէ եւ
երիտասարդին շնորհակալութիւն կը յայտնէ:

Ընդհանրապէս Պատրիարքարանի ամենավերջի յարկէն Գա-
րեգին Պատրիարքը զարմանքով լեցուն աչքերով ու միամտութեամբ
կը դիտէ եղեր Տէր Հօր էջքը մօթօսիքլէթէն եւ անոր շարժումները ու
զինքին հարց կու տայ.

— Սա մեր Տ... քահանան չէ՞, վա՛յ շունշանորդի, վա՛յ...






37 (224). ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԹԸ
ԵՒ ԹՐԹՈՒԿԻՆ

5 սեպտեմբեր 1956-ի իրարանցումի ժամանակ օրինազանց քիւրտերը արդէն մեր Հայոց Պատրիարքարանին մօտեցած էին: Մենք թրքական դրօշակը վեր բռնեցինք, հասկըցնելու համար թէ մենք «վաթան եօլտաշ» (հայրենակից) ենք: Մէյ մըն ալ թուրք կնիկ մը ձեռքերը բացած կեցաւ Պատրիարքարանի ցանկապատին դարպասին առջեւը եւ ըսաւ.

— Պէն թիւրք միւլիւման ըմ, պէնի՛ էօլտիրիւն, օնտան սօնրա էրմէնի Փաթրիքհանէսինէ կիրիւն (Ես թուրք միւլիւման եմ, զիս սպաննեցէ՛ք, անկէ վերջը Հայոց Պատրիարքարան մտէք):

Բորբոքումս ամբոխը յանկարծ լրջացաւ, եւ ա՛յ չհամարձակեցաւ ներս մտնալ: Ատ հերոս կնիկը ազատեց մեզ: Աֆէրի՛մ, թո՛ւրք կնիկ:

Խաչատուրեան Պատրիարքը, որ Ամերիկայէն եկած եւ Թուրքիոյ Հայոց Պատրիարքը դարձած էր, զմահատեց ատ ազնիւ թուրք կնոջ հերոսական արարքը եւ տասը հազար լիրայով պարգեւատրեց զինք:



38 (225). ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԹԸ
ԵՒ ԾՆՈՐԱՔ ՍՐԲԱՉՉԱԼԵՎՔԻ


Պարեգին Խաչատուրեան Տրապիզոնցի Պատրիարքը Արմաշի դպրեվանքի վերջին սաներէն եղած է: Ան Ամերիկայի արեւմտեան թեմին առաջնորդ եղած է, իսկ յետոյ ալ՝ Թուրքիոյ Պատրիարք:

1950-ականի ատ դժուար տարիներուն Պոլսոյ վալիւն՝ Ֆահրէթտին Բէրիւմ Եօքա Գարեգին Խաչատուրեան Պատրիարքին հետ շատ մտերիմ էր եւ անոր աջակցութեամբ ալ հիմը դրուեցաւ Պոլսոյ Ս. Խաչ Դպրեվանքին: Ատիկա շատ կանոնաւոր կրթարան մը դարձաւ մեր նոր սերունդին համար: Ամբողջ Անատօլիայի զաւտներէն եկած հայ չօճուխները Խաչատուրեան Պատրիարքի օրով հոնտեղը ուսում առին, մարդ եղան, ինչպէս մեր Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի յայտնի բժիշկներէն Միրիճան Միրօղլուն, Աւետիս Տէմիրը, Կարպիս Եագուպեանը, Հայկ Նշանը եւ ուրիշներ: Ամէնքն ալ այսօր յայտնի բժիշկներ, փաստաբաններ են:

1961-ի տօնական օր մը Խաչատուրեան Պատրիարքը Պէյօղլուի Ս. Երրորդութիւն եկեղեցին Թարգմանչաց օրուան առթիւ Ս. Պատարագ կը մատուցանէր, Ծնորհք Սրբազան Գալուստեանն ալ, քառասունեօթ տարիներէ վերջ, Լոնտոնէն հրաւիրուած էր եւ որպէս այցելու հիւր հոն ներկայ կը գտնուէր: Մէյ մըն ալ Խաչատուրեան Պատրիարքը պատարագ ըրած ատենը բեմին վրայ կ'օրօրուի, կը կծկտի, վար կ'իյնայ: Բոլորը խորան կը վազեն անոր օգնելու համար, իսկ Խաչատուրեան Պատրիարքը գետինը ինկած իր ատ վիճակին մէջը՝ Դպրեվանքի բացումին հրեն նուիրուած խաչը իր ճիւղէն կը հանէ Ծնորհք Սրբազանին ճիւղը կ'անցընէ, «Դպրեվանքը քեզի՛ կը յանձնեն», — կ'ըսէ եւ ատ ձեռով հոգին կ'աւանդէ:

Լուսահոգի Խաչատուրեան Պատրիարքի գրպանէն միայն վեց ոսկի ելած է, քանի որ ստացածը Ս. Խաչ Դպրեվանքին համար կը ծախսէր: Ընմալ Կիրսէլ, գորս Թուրքիոյ Հանրապետութեան Նախագահն էր, անոր թաղումին հսկայ ծաղկեպսակ մը դրկած է: Ատ կը խորհրդանշէր Թուրքիոյ Հանրապետութեան ժողովրդավար քաղաքականութիւնը աշխատասէր եւ խաղաղասէր հայ հայրենակիցներուն նկատմամբ:

Անկէ վերջ Ծնորհք Սրբազանը, որ հիւրաբար Պոլիս եկած էր, այլեւս ետ չ'երթար, եւ զինք կ'ընտրեն Թուրքիոյ Հայոց Պատրիարք:



39 (226). ԾՆՈՐԿՔ ՊԱՏՐԻԱՐԹԸ ԵՒ ԹՐԶՍԵՍՍՍՍ ԿԱՅԵՐՈՒՄԸ ԳԻՍՏՈՒՄԸ

Մերիճները Եօզղատէն եկած, Պոլիս հաստատուած են: Գաւառը, պայմաններուն բերումովը, մայրս չէ կրցած դպրոց երթալ: Իրենք վեց քոյր եւ մէկ եղբայր եղած են, բոլորն ալ չեն կրցած դպրոց երթալ... Եօզղատցի ետեսա միճշեւ վերջերս ալ վախէն հայերէն չէր խօսիր: Այնպէս որ, հայերէն չէին գիտեր, իրենց պէտ ուրիշներ ալ, որոնք հայերէն Պատարագը կամ քարոզը չէին հասկնար, կը մտածէին ճար մը գտնալ: Ամէնքը մէկ կը ժողվուին, կ'երթան Ծնորհք Պատրիարքին կը խնդրեն որ Սամաթիոյ Ս. Գեորգ եկեղեցիին վերանստունը գան եւ թրքերէնով աղօթեն: Մինչ այդ մեր եկեղեցիին մէջը թրքերէն աղօթք չէր ըլլար:

Ծնորհք Պատրիարքը, որ շատ հոգեւոր եւ գիտակից անհատականութիւն մըն էր, կ'ըսէ.


— Ես շա՛տ ուրախ եմ որ այսպիսի օգտակար դիմում մը ըրիք: Ես սիրով կը տրամադրեմ վերանստունը: Ես ալ կու գամ, ձեզ մտիկ կ'ընեմ:

Այնպէս որ Ծնորհք Պատրիարքը, տակաւին 1961-ին, գնահատած է մեր տիկիճներուն աղուոր մտայնացումը եւ անոնց կազմակերպիչ ոգին:

Այն ատեն Տէր Սարգիս եւ Տէր Թաթուլ քահանաները կային: Անոնք ալ կու գան մտիկ կ'ընեն: Ամէն անգամ տիկին Հերմիճէ Տէր Ողորմնեանը թրքերէնով Ս. Գիրքը կը կարդար, կը բացատրէր, ներկաները կը լսէին եւ կը հասկնային: Այս ձեւով է որ գաւառէն եկած հայութիւնը հայ եկեղեցիին եւ քրիստոնէական հաւատքին կապուեցաւ:

Այդ հաւաքոյթներէն վերջն ալ տիկիճները ձեռք ձեռքի, միասին

եկեղեցին կը մաքրէին: Ընկերներով կ'երթային Ս. Փրկիչ Ազգային Հիանդանոցը, միտով տերեւի տօլմա կը փաթթէին կը հիրասիրէին հիանդաներուն: Եւ ատկա սովորութիւն դարձաւ, մինչեւ հիմա ալ կը շարունակուի: Արդէն հիմակուրնէ որոշ է. Օգոստոս 21-ին, ինչպէս ամէն տարի, յիսունի չափ տիկիներ պիտի գան Գընալը կղզիի Կադորման Կայանը եւ իրենց խնայողութիւններով ժողովուած գումարով միսը եւ ալիւրը գնելով, հետերնին բերելով հարիրատր պգտիկներուն համար մանթը պիտի շինեն: Անոնց մեծ մասը հանգիստի կոչուած, էմէքի թոշակատրներ են, բայց մէջերնին նախկին հիանդապահուի ալ կայ, ինչպէս ներկայիս Ազգային Հիանդանոցին աւագ հիանդապահուի Արշալոյս Չիֆչիին մայրը՝ Մայրենի Չիֆչի եւ շատ ուրիշներ:



40 (227). ԾՆՈՐԿԸ ՊԱՏՐԻԱՐԸՆ ԵՒ ՃԱԶԱՐԱՆԻՆ



ը պատմեն թէ Ծնորհք Պատրիարքը Պուրկազ կղզիին Գալբազան գայան շատ կը սիրէր, որ տեղէն չշարժող ժայռ կը նշանակէ: Եւ միշտ հոն կ'երթար, ուր ճաշարան մըն ալ կար, իսկ ճաշարանին ետեւը՝ անտառը կը բարձրանար: Պատրիարք Հայրը հոն ծառ մը ունէր եւ միշտ հոն կը նստէր: Ծաշարանին տէրն ալ ոչխարի փոսթ մը կու տար, որ վրան նստէր: Ան երկա՛ր կը դիտէր Մարմարա ծովը: Ողորմածը բնութիւնը եւ մեզ շա՛տ կը սիրէր...


Օր մը նորէն Ծնորհք Պատրիարքը իր սիրած ծառին տակ նստած կ'ըլլայ, մէյ մըն ալ հրդեհ մը կը բռնկի. անտառը կրակ կ'առնէ, կը սկսի սաստիկ վառիլ: Ծաշարանապետը, որ սարսափով կը սպասէր թէ հիմա ուր որ է իր ճաշարանն ալ կրակը պիտի լափէ, բայց հրաշք մը կ'ըլլայ. կրակը կու գայ, կու գայ, կը մօտենայ մինչեւ Ծնորհք Պատրիարքին նստած ծառը եւ հոն կը մարի:

Ծաշարանապետը ուրախացած կ'ըսէ.

— Ծնորհք Պատրիարք, ես հիմա կը հաւատամ որ դուն սո՛ւրբ ես...

Եւ անկէ վերջը Ծնորհք Պատրիարքին պատկերը կը կախէ իր ճաշարանին պատէն: Կ'ըսեն թէ մինչեւ հիմա ալ ատ ճաշարանին պատէն կախուած է Ծնորհք Պատրիարքին պատկերը...





41 (228). ԾՆՈՐՎՔ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԵՒ ԻՐ
«ԹՈՋՈՒՄՆԵՐԸ»



ընալը կղզիին Ծնորիք Պատրիարքի ամարանոցի պարտեզին պատը եւ մեր Կազդուրման Կայանի խաղարանին պատը՝ մէկ էին: Ան իր պարտեզին ծառերը եւ ծաղիկները շատ կը սիրէր: Եկեղեցիէն դուրս միայն իր պարտեզին մէջը կը տեսնայինք զինքը: Ես ան ատենը վեց եօթը տարեկան հագի կ'ըլլայի եւ ինչպէս ամէն ամառ, այդ ամառ ալ ուրիշ տղոց հետ Կազդուրման Կայանը կ'անցընէի:

Օր մը դէղին գնդակս Պատրիարքին պարտեզը փախաւ, տեսայ որ ինք ալ պարտեզն է, ըսի.

— Սրբազա՛ն Հայր, գնդակս կը հաճի՞ս նետել:

Ան լաճիվերթ տաքատ մը հագած էր, վրան ալ աստղեր, մէջէն ճերմակ շապիկ մը: Զիս տեսաւ, ըսաւ.

— Կեցի՛ր, փայտ մը գտնամ, ծառին զարնեմ գնդակդ քեզի գայ.

— գնաց փայտ մը գտաւ, ծառին զարկաւ, գնդակս ծառին վրայէն ինձի եկաւ:

Ան միշտ պատշգամը կը նստէր: Մեր Կազդուրման Կայանին տնօրինութիւն՝ տիկին Ժազին Էրմէն միշտ իր որպիսութիւնը հարցնելու ատեն նաեւ կ'ըսէր.

— Պատրիա՛րք Հայր, արդեօք տղոց ձայնէն անհանգիստ չէ՞ք ըլլար:

Ան ալ կ'ըսէր.

— Ո՛չ, քա՛ւ լիցի, անոնք իմ թոչուններս են: Ես զանոնք շա՛տ կը սիրեմ:



42 (229). ԾՆՈՐՎՔ ՊԱՏՐԻԱՐՔԸ՝ ԴԱՍՏԻԱՐԱԿ




նորիք Պատրիարք Գընալը կղզիի իր ամարանոցը շատ կը սիրէր եւ հոն կը մնար: Իր պարտեզին մէջն ալ խնձորի, տանձի մատղաշ ծառեր ունէր, որոնք տակաւին նոր սկսած էին պտուղ տալ:

Օր մը ես ու իմ ընկերս մտանք ատ այգին, տեսանք խնձորի ծառին վրայ հագի 3-4 հատ խնձոր կայ: Մենք ալ դեռ ութ տաս տարեկան ենք, հաւեսի համար խնձոր մը փրցուցինք: Դուն մի՛ ըսէր, Ծնորիք Պատրիարքը տեսեր է եւ սապէս ըրեր է: Փայտի կտորի մը վրայ գրեր է. «Յիշեցէ՛ք Ադամ Եւան» եւ անհկա ծառին գամեր է:

Միւս օրը նորէն գացինք խնձոր գողնալու: Բայց երբ տեսանք ծառին վրայի գրութիւնը, ա՛լ մէյ մըն ալ չհամարձակեցանք ատ տեսակ անշնորհքութիւն ընել:





43 (230). ԾՆՈՐԱՔ ՊԱՏՐԻԱՐՔԸ՝ ԴԻԲԱԼԱԳԻՏ

Շնորհք Պատրիարք Գալուստեանը շատ խելացի, գիտուն մարդ էր: Երբ պետական մարդոց հետ պաշտօնական հանդիպում կամ թելեփոհոնէն կ'ելլար, հայերէն կը խօսէր: Իրեն կ'ըսէին.

— Դուն Թուրքիա կ'ապրիս, թրքերէն ինչո՞ւ չես խօսիր:

Ան ալ կ'ըսէր եղեր.

— Ես հայ ըլլալուս համար հայերէն պէտք է որ խօսիմ:

Օրին մէկը պետական պաշտօնեայ մը Շնորհք Պատրիարքին հարցուցեր է.

— Ի՞նչ կ'ըսէք հայերու տխուր անցեալին մասին:

Շնորհք Պատրիարքը ըստ է.

— Ինչո՞ւ ինձի կը հարցնէք. պատմութեան գիրքը բացէք, կարդացէ՛ք:



44 (231). ԾՆՈՐԱՔ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԿԵՍԱՐԻՈՅ ՄԻՉ


Շնորհք Պատրիարքը իր հովուական եւ հայրապետական այցելութիւնները չէր զլանար մեր գաւառաբնակ հայութեան եւ յաճախ կ'այցելէր Անատոլոյի զանազան հայաբնակ վայրերը, մանաւանդ իր նախնական ուսումը ստացած վայրը՝ Կապադոկեան Կեսարիա:

Այդ այցելութիւններէն մէկուն ընթացքին, Ս. Պատարագը մատուցանելէ վերջ, Շնորհք Պատրիարքին կը բերեն գաւառացի հայ երախաներ, որպէսզի մկրտէ: Եւ երբ մկրտութիւնը կը կատարուի, սովորութիւն է, մկրտիչ հոգեւորականը մկրտեալին նոր անուն մը կու տայ:

Շնորհք Պատրիարքը մին Սարգիս կը կոչէ, միւսը՝ Թորոս, ուրիշներ՝ Գրիգոր, Արշակ... Իսկ երբ կարգը վերջին երախային կը հասնի, Պատրիարքը որեւէ անուն չյիշելով, կ'ըսէ.

— Է՛հ տղա՛ս, դուն վերջինը մնացիր, քու անունդ ալ թող Մնացական ըլլայ:





45 (232). ԾՆՈՐԿՔ ՊԱՏՐԻԱՐԹԻՆ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ 25-ՎՍԵԱԿԵ

1986-ին Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան 525-ամեակն էր, նաեւ Ընորհք Պատրիարքին պատրիարքութեան 25-ամեակը: Ամէն կողմէն օտարազգի հրաւիրեալներ կային, դեսպաններ, բարձրաստիճան անձեր, հոգեւորականներ եկած էին, որոնց համար մեր Պատրիարքարանի մեծ սրահը քոքթէյլ մը կազմակերպուած էր: Մենք սեղանը շտկելուն օգնած էինք, բայց քանի որ հիրերը շատ էին, մենք ներսը չէինք: Միայն Տիանա Գամպարոսեանը, որպէս օտար լեզու գիտցող, ներկայ էր: Ան կը տեսնայ որ բարձրաստիճան հոգեւորական մը խնձոր մը բռնած կը շրջի: Տիանան կը հարցնէ.

— Դանա՞կ կը փնտռէք:

— Ո՛չ, — կ'ըսէ հոգեւորականը, — հիմա ձեզի բացատրեմ: Ես Գանատացի եմ: Երբ պզտիկ էի, Գանատա շատ հայեր գաղթեցին: Անոնք շա՛տ աղքատ էին: Հայերու եկեղեցին մեզի շատ մօտ էր: Երբ հարսնիք մը ըլլար, եկեղեցի կը վազէինք, որ մէկ-մէկ խնձոր առնէինք, որովհետեւ հարսնիքէն վերջը անոնք շաքար չէին կրնար բաժնել, խնձոր կը բաժնէին: Ան ատեն անոնց խնձորը կ'ուտէի, իսկ հիմա այս ջրեղ սեղանին խնձորը իբր յիշատակ Գանատա պիտի տանիմ:

Տիանան եկաւ ատ մեզի պատմեց. ամէնքս լսելով լացինք:



46 (233). ՍՎԱՃԵԱՆ ՍՐԱՍՉԱՆԸ⁴² ԵՒ ՄԵԾ ՀԱՅՐԱ



ահան Սրբազանը Պոլսոյ եկեղեցական դասուն երէց անդամներէն մէկն է: Վերջին յիսուն տարիները առանց անոր անկարելի է պատկերացնել:

Մեր երէց քահանաներուն գրեթէ բոլորն ալ Ծահան Սրբազանի կողմէ ձեռնադրուած են: Իմ մեծ-հայրս ալ Ղալաթիոյ եկեղեցւոյ քահանան էր՝ Տեր Նարեկ քհնյ. Գատէհնեան: Ան նաեւ Ծահան Սրբազանի կողմէ ձեռնադրուած առաջին քահանան էր՝ Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ 1968-ին: Կրնամ ըսել որ Ծահան Սրբազանը մասնաւոր մեծ-հօրս եւ իր կողմէն ձեռնադրուած քահանաներուն հանդէպ սեր մը ունէր:

1992-ին էր. երբ մեծ-հայրս ութսուն տարեկան էր եւ արդէն հանգստեան կոչուած: Այս պարագան շատ ծանր ազդեցութիւն ունեցած էր իր վրայ, եւ հոգեբանօրէն ընկճուած էր: Տունը միշտ կը նստէր եւ կու լար՝ յիշելով անցեալի լաւ օրերը:

Ս. Ստեփաննոս Սարկաւազին օրն էր: Մայրս փողոցը Ծահան Սրբազանին կը հանդիպի.

— Աստուա՛ծ օգնական, Սրբազա՛ն, — կ'ըսէ մայրս:

— Է՛, — կ'ըսէ Ծահան Սրբազանը, — Տէր Նարեկը ի՞նչպէս է:

— Լա՛ւ է, Սրբազա՛ն, — կ'ըսէ մայրս, — կ'ապրի, եթէ կ'ուզէր հիմա կրնանք տուն երթալ, զինք տեսնաք. հինգ վայրկեանէն հոն կ'ըլլանք:

— Հայտէ՛ր նայինք աղջի՛կս, երթանք, — կ'ըսէ Ծահան Սրբազանը:

Տուն կը հասնին: Մամաս դուռը կը բանայ, ներս կը մտնայ եւ մեծ-հօրս կ'ըսէ.

— Պապա՛, տե՛ս քեզ տեսնալու ով եկած է:


Մեծ-հայրս իրար կ'անցնի, թէ ով կրնայ ըլլալ. մէյ մըն ալ կը տեսնայ Ծահան Արբազանն է: Կը փաթթոյի իրեն կարօտով, եւ խոնարհ աչքերով: Կը նստին, միասին սուրճ մը կը խմեն, քիչ մը կը խօսին եւ կը բաժնուին:

Ծահան Արբազան թէպէտ մեծ ուսում առած չէ, սակայն ինչպէս ժողովուրդը կ'ըսէ, «Պապա մարդ է»: Ես զինք կ'ուզեմ նմանցնել 40-50-ականներու այն անուշ հոգեւորականներուն, որոնք իսկապէս ժողովուրդի պէս էին, ժողովուրդի մակարդակին էին: Այս պարագան փաստելու համար ըսեմ նաեւ որ իմ մեծ-հայրիկս եւ Ծահան Արբազանը Գընալը կղզիի ծովափը գտնուած մեր տունին մէջը, իրենց միջին տարիքներուն կը նստին միասին, նարտ կը խաղան եղեր:

Ծահան Արբազանը մանաւանդ դպիրներու եւ հին մարդոց, մասամբ ալ երիտասարդներու կողմէ կը ճանչցուի իբր շատ աղուոր ժողովրդական անեկոյտներ պատմող, համով հոտով գրուցող մը, որուն մոխրապէթէն չես կշտանար:

Օր մը, կը յիշեմ, դարձեալ Ղալաթիոյ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցոյ խորհրդարանի ճաշարահը ժողովուած էինք, Ծահան Արբազանն ալ նախագահ էր: Խօսքը խօսք բացաւ եւ ան բան մը սկսաւ պատմել: Այդ օրն ալ Վարդանանց օրն էր: Ուրեմն երբ Ծահան Արբազան Երուսաղէմ կ'ուսանի եղեր, արեղայ կամ սարկաւազ ժամանակը, ծերուկ Հայր Սուրբ մը ունին եղեր, ան ալ միշտ կ'ըսէ եղեր. «Ես Վարդանանց տօնին օրը պիտի մեռնիմ»: Բայց ամէն տարի Վարդանանց օրը կու գայ, կ'անցնի եւ ան կը շարունակէ ապրիլ եղեր:

Տարի մըն ալ Վարդանանց տօնին օրը կը տեսնան որ ատ ծերուկ Հայր Սուրբը չկայ: Կ'ըսեն. «Ատ Հայր սուրբը ո՞ր է»: Կը փնտռեն, չեն գտնար, կ'երթան իր խուցին դուռը կը զարնեն, կը տեսնան մարդը մեռած է, ճիշդ Վարդանանց տօնին օրը:

47 (234). ԳԱԶԱՆՔԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԸՆՔՆԵՐԸ⁴³

1990 -ն էր: Երջանկայիշատակ Ծնորհք Պատրիարքէն վերջ նոր ընտրութիւն եղած էր եւ Գարեգին Արբազանը Թուրքիոյ Հայոց Պատրիարք ընտրուած էր, բայց տակաւին գահակալական արարողութիւնը չէր եղած: Մինչ այդ ան ամէն Ծաբաթ եկեղեցի մը կ'այցելէր:

Յովհաննէս Աւետարանիչին օրը Գարեգին Պատրիարքը Նաուրզարի Ս. Յովհաննէս եկեղեցին եկած էր: Ատ այնպիսի եկեղեցիներէն է, որ լուսարար չունի: Ես ալ եկեղեցին շատ կը սիրէի, ամէն Ծաբաթ կ'երթայի լուսարարի պաշտօն կը կատարէի, նաեւ կ'երգէի:

Պատարագի ժամանակ ինծի մօտեցաւ Տ. Պսակ Հայրը, որ այնտեղի քահանան էր, ըսաւ.

— Սեւա՛ն, Պատրիարք Հայրը կ'ուզէ քեզի հետ խօսիլ:

Ես շատ յուզուեցայ, որովհետեւ տակաւին հազիւ տասնվեց տարեկան երախայ էի եւ յանկարծ նոր ընտրուած Պատրիարքը ինծի հետ կ'ուզէր խօսիլ:

Պատարագը վերջացաւ: Ես եկեղեցիին խորանը ժողվեցի, բայց փոքր ըլլալու Պատրիարք Հօր մօտ երթալէ կ'ամչնայի: Եկեղեցիին քովը, մկրտարանը միմակս կեցած էի: Տեսայ դարձեալ Տ. Պսակ Հայրը մօտեցաւ ըսաւ.

— Սեւա՛ն, ո՞ր ես, Պատրիարք Հայրը քեզ կը սպասէ:

Ես ըսի.

— Տէր Հայր, կ'ամչնամ:

Տէր Հայրը ձեռքէս բռնեց, տարաւ: Ներս մտայ, գացի Պատրիարք Հօր ձեռքը համբուրեցի, ըսի.

— Աստուա՛ծ օգնական, Արբազա՛ն Հայր:

— Հը՞, — ըսաւ, — կ'ուսանի՞ս տեղ մը:

— Այո՛, Սրբազա՛ն Հայր, Կեղորոնական Վարժարանի իններորդ դասարանը կ'ուսանիմ:

— Շատ լաւ, մեծնաս Աէ ի՞նչ պիտի ըլլաս:

Իմ ալ արդէն մէջս կար եկեղեցական ըլլալու ցանկութիւնը, բայց այդքան բարձր հոգեւորականի մը քով ամչցայ միտքս արտայայտել, ըսի:

— Տակաւին չեմ որոշած, Սրբազա՛ն Հայր:


— Եկուր քեզ վարդապետ ընենք...

— Կ'ըլլայ, — ըսի ամչնալով:

— Լա՛ւ, — ըսաւ, — քանի մը օրէն Պատրիարքարանին մէջը մասնաւոր դասընթացքներ պիտի սկսինք, դուն ալ կը մասնակցիս:

— Շատ լաւ, — ըսի, բաժնուեցայ:

Քանի մը օրէն սկսայ Պատրիարք Հօր եւ Մեսրոպ Սրբազանին կազմակերպած եկեղեցական ուսուցման դասերուն մասնակցիլ:



48 (235). ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐԹԻ ՅՈՒՇԵՐԷՆ



ըջանկայիշատակ Գարեգին Պատրիարքը մեզի կը պատմեր թէ երբ ինք Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը կ'աշակերտէր, հայ գրականութեան իրենց ուսուցիչը անուանի գրադատ Յակոբ Օշականն էր:

Օր մը Յակոբ Օշականը Անթիլիաս կը մեկնի, որ իր գիրքը հոն տպուի: Սակայն անոր ձեռագիրը շատ գէշ կ'ըլլայ եւ ոչ մէկը կրնայ կարդալ:

Յակոբ Օշական կ'ըսէ.

— Երուսաղէմի ճեմարանին մէջը Պետրոս անունով սարկաւազ մը կայ, միայն ան կրնայ իմ ձեռագիրս կարդալ, նոյնիսկ ինձմէ ալ աւելի լաւ:

Եւ մասնաւոր այդ նպատակով Պետրոս սարկաւազը (այսինքն՝ յետագայի մեր Գարեգին Պատրիարքը) Անթիլիաս կը դրկեն, որ եւ՛ ուսանի, եւ՛ Յակոբ Օշականին ձեռագիրները կարդայ:

1993-ին թէ 1994-ին էր, ճիշդը չեմ յիշեր, Սահակ աբեղային ձեռնադրութիւնը պիտի կատարուէր. Գարեգին Պատրիարքը զինք պիտի օծէր: Մենք ալ դպիրներով հոգ կ'ընէինք թէ արդեօք Պատրիարք Հայրը անունը ի՞նչ պիտի դնէ: Առիթով մը հարցուցինք Պատրիարքին.

— Սրբազա՛ն Հա՛յր, ի՞նչ անուն պիտի դնէք արդեօք:

Գարեգին Պատրիարքն ալ ժպտելով իր գլուխէն անցած պատմութիւն մը սկսաւ մեզի պատմել.

— Երբ Աւստրալիոյ մէջ հոգեւոր առաջնորդ էի, քահանայ մը պիտի ձեռնադրուէր: Կարգ մը դպիրներ ինձի հարց տուին. «Սրբազա՛ն Հայր, ի՞նչ անուն պիտի դնէք»: Ես ալ անոնց ըսի. «Ներսէս ինչ գայ Աէ, ա՛ն պիտի դնեմ»: Այսպէս միշտ կը հարցնէին, ես ալ միշտ նոյնը կ'ըսէի. «Ներսէս ինչ գայ Աէ, ա՛ն պիտի դնեմ»:

Ձեռնադրութեան ատենը եկաւ, եւ իր անունը Ներէս դրի: Բոլորը սկսան ինծի հարցնել. «Սրբազա՛ն Հայր, ինչո՞ւ առաջուրնէ չըսիք»: Եւ ալ անոնց պատասխանեցի. «Է՛, եւ ձեզի չըսի՞՞ անքսէս ի՞նչ գայ մէ, ա՛ն ալ պիտի դնեն, ահա եւ Ներսէ՛ս դրի»:



49 (236). ԳԱԶԱՆՃԵԱԼ ՊԱՏՐԻԱՐԹԸ ԵՒ ՃԱՖԱԳԸ



ուսոյ Հայոց Պատրիարքարանին դիմացը Ս. Աստուածածին Մայր եկեղեցին կը գտնուի: Հոն Միքայէլ Տօնիկեան անունով լուսարար մը ունինք, որուն Շաֆագ կ'ըսենք, այսինքն՝ Արեւածագ: Աս տղան եկեղեցական արարողութեանց հանդէպ շատ «բծախնդիր» է եւ կը սիրէ եկեղեցիին զանգակները երկա՛ր, երկա՛ր հնչեցնել:

Օր մը զանգակները նորէն երկար–երկար կը հնչեցնէ:

Գարեգին Պատրիարքն ալ Պատրիարքարանէն կը լսէ, կը զարմանայ: Մարդ կը դրկէ որ Միքայէլը իր քով գայ:

Միքայէլը հեւն ի հեւ կու գայ, Պատրիարք Հօրը կը հարցնէ.

— Հը՞, Պատրիա՛րք Հայր, ի՞նչ կայ:

Պատրիարք Հայրն ալ կ'ըսէ.

— Տէրսէ՛րդ մեռաւ, ի՞նչ է, որ այդքան երկա՛ր–երկա՛ր կը հնչեցնես կոր զանգակները...





50 (237). ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ⁴⁴
ՊՈԼՍՈՅ ՄԻՉ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա Մայիս 11 1996-ին Յոյն Օրթոտոքս եկեղեցւոյ Տիեզերական Տ. Տ. Պարթլոմէոս Պատրիարքին հրաւերովը ժամանեց Ստամպուլ:

Հէյալէլի կղզին գտնուող յունաց վանքը երթալու համար «Հայքի» զբօսանաւով Մարմարա ծովուն վրայ պզտիկ պտոյտ մը ըրինք:

Երբ Եասաը կոչուած կղզիի մօտէն կ'անցնէինք, ուր աւանդութեան մը համաձայն Մեծն Ներսէս Հայրապետը իր աքսորը անցուցեր է, Վեհափառը իր նստած տեղէն ելաւ, գնաց նստում ցուկը եւ սկսաւ Մեծն Ներսէս Հայրապետին նուիրուած շարականը երգել: Բոլորս հմայուած կ'ըմբռնէինք բնութեան եւ բարութեան այդ սքանչելի ներդաշնակութիւնը:



51 (238). ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ
ՊՈԼՍԱԿԱՅ ՏՂԱՔԸ

Այիսի 12 1996-ին Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը Պոլսոյ Պատրիարքական աթոռի հիմնադրման 535-ամեակի հանդիսութեանց նախագահեց: Այդ օրերը մեզի՝ պոլսահայերու համար տօ՛ն էին...

Ծիտակը ըսելով, մեր Գարեգին Ա Կաթողիկոսը շատ զգայուն եւ խոհուն անձնատրութիւն մըն է: Մայր տաճարին մէջ Ս. Պատարագի արարողութեան ժամանակ հայ եւ օտարագի շա՛տ հիւրեր ալ կային: Կաթողիկոսը մեր եկեղեցւոյ երգչախումբին երգածները լսեց, աչքերը արցունքոտեցան, ըսաւ.

— Աս ի՛նչ աղուոր երգեցողութիւն է...

Երգիչներուն մէջը մեր տղաքը՝ իմ ձագուկներս ալ կային: Իսկ երիտասարդ երիտասարդուհիները ձեռք ձեռքի շղթայ բռնած էին, այնքա՛ն որ բազմութիւն կար: Պատմելու՝ բան չէ...

Պատարագէն վերջը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա Մայր տաճարի քովի Պէզճեան սրահին մէջ հայ պզտիկներուն հետ հանդիպում մը ունեցաւ: Ան պզտիկներուն հարցուց.

— Ո՞վ կրնայ ըսել՝ աւագանի անունս ի՞նչ է:

Պզտիկները ասդիէն անդիէն կը պօտային.

— Նշա՛ն, Նշա՛ն...

— Ձեր մէջը Նշան անուն ունեցող ո՞վ կայ, — կը հարցնէ:

Տղայ մը մատ կը վերցնէ: Գարեգին Կաթողիկոսը իրեն կ'ըսէ.

— Նայէ՛, ես պզտիկ էի, ինձի Նշան կ'ըսէին. վերջը կաթողիկոս եղայ: Աշխատէ որ դուն ալ մեծնաս նէ, դուն ալ Ամենայն Հայոց Կաթողիկոս ըլլաս:

Անկէ վերջը Գարեգին Կաթողիկոսը հայ երիտասարդներուն հետ
հանդիպում ունեցաւ: Վեր ի վարոյ հինգ հարիւր երիտասարդ՝ աղջիկ
տղայ կ'ըլլային:

Կաթողիկոսը ըսաւ.

— Ով ի՞նչ հարցում ունի, թող թուղթի վրայ գրած ղրկէ:

Մէկ երիտասարդ մը գրեց. «Օտարագգիի հետ ամուսնանալը
օրինաւոր է»:

Ան ալ պատասխանեց.

— Ահաւասիկ այսքա՛ն հայ աղջիկ եւ այսքա՛ն հայ մանչ կայ հոս,
դեռ ի՞նչ կ'ուզէք, իրարու հետ ամուսնացէ՛ք:



52 (239). ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ
ՀՌՈՍԻ ՊԱՊԸ⁴⁵



րբ մեր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա Հայրա-
պետը Հռոմի պապին հրաւերովը Վատիկան այցելեց, Ս.
Պօղոսի, Պետրոսի հոյակապ տաճարները տեսնալով՝ իր
հիացմունքը արտայայտեց, Հռոմի պապը ըսաւ.

— Ո՛չ, ի՛նչ կ'ըսէք, իսկական տաճարը ձե՛րն է՝ Ս. Էջմիածինը,
քանի որ Յիսուս Քրիստոսը հո՛ն իջած է:





53 (240). ԾՆՈՐԱՔ ՊԱՏՐԻԱՐԲԻՆ 25 ՏԱՐՈՒՄԱՆ
ՎՂՕԹՔԸ ԵՒ ՍՈՒԹՎՖԵՎԸ ՍՐԲԱՉՉՎԵԼՆԵՎՆԵՎՆԵՎ

Մը խորհիմ թե մարդոց մեղքերուն համար է որ Աստուած զանոնք կը պատժէ: Բայց հիմա քանի որ Պոլսոյ հայ հաստացեալները աւելցած են՝ Տէրը անոնց աղօթքները լսելով է որ մեզի Մեսրոպ Սրբազանին պէս հովի մը դրկեց, շատ շիտակ մարդ մը մեր դիմացը հանեց:

Վախճանեալ Ընորհք Պատրիարքը, որ «Հաստամբը» ըսելով հոգին աւանդած է, օր մը իմ եղբորս՝ Խաչիկ Մերտինեանին ըսեր է.

— Մա՛նչս, դուն գիտե՞ս որ ես քսանըհինգ տարի աղօթեցի Տիրոջը, որ ժողովուրդիս գլուխը աղուոր հովի մը ըլլայ, եւ Տէրը Մեսրոպը դրկեց:

Տիրոջը օգնութեամբ հրաշքներ կը գործուին...

Զմեռը հիւանդ էի: Ոչ մէկ դեղ կ'օգներ: Մտածեցի՝ ի՛նչ ընեմ: Մեսրոպ Սրբազանի պատգամին քատեթը հանեցի, լսեցի... անա՛նկ բացուցայ, անա՛նկ աղէկցայ, ալ չես կրնար երեսակայել, կարծես Աստուած անոր բերանովը խօսքեր ըսաւ. լոյսը մութէն բաժնուեցաւ. երկիրը երկինքէն հեռացաւ ...

Ա. Գիրքին մէջ Տէրը ըսաւ. «Ես աշխարհին ճարտարապետն եմ», քանի որ իր խօսքովը ստեղծուեցանք աշխարհը եւ մենք: Մեսրոպ Սրբազանի բերանով Տիրոջ խօսքը ինձի նոր կեանքի բերաւ:

Ինձի համար վերը՝ Տէրը, վարը՝ Մեսրոպ Սրբազանը:



54 (241). ՍՈՒԹՎՖԵՎԸ ՍՐԲԱՉՉՎԵԼՆԵՎՆԵՎՆԵՎՆԵՎՆԵՎ ԳՎԼՈՒԲՍԵ

Պոլսոյ հայութիւնը ամէն ամառ Իշխանաց կղզիները կ'ելլայ. մենք ալ Գընալը կղզիի մեր տունը կու գանք:

Ասկէ տասնհինգ տարի առաջ, տահա իմ տղաքս ալ պըզտիկ էիմ, կղզիին փողոցները ուրիշ տղոց հետ կը խաղայիմ: Ծիշդ է, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կար, բայց գրեթէ մարդ չէր մտնար: Միայն քանի մը ծերուկ տուտուներ կային, անոնք եկեղեցի կ'երթային:

Մեսրոպ սրբազանի գալէն ետքը ամէն բան փոխուեցաւ: Ան ինք ալ տահա շատ երիտասարդ էր՝ բարալիկ, միհարիկ, բայց պօյով-պուտով տղայ մըն էր, ամմա դուն անոր խելքի՛ն մայէ...

Առաջին մէկ օրէն ան փողոցը խաղող տղաքը կը տեսնայ, կը մօտենայ, կը հարցնէ.

— Անուննիդ ի՞նչ է...

Մէկը Կարօ, միւսը Յակոբ կ'ըսէ...

Աս ճահիլ Հայր Սուրբն ալ կ'ըսէ.

— Ուրեմն դուք հայ էք: Ինչո՞ւ հայերէն չէք խօսիր:

Տղաքը ն'ամչնան: Հայր Սուրբը գլուխնին կը շոյէ, կ'ըսէ.

— Ինչո՞ւ փողոցը կը խաղաք:

— Հապա ո՞ր խաղանք, — կ'ըսեն տղաքը:

Ան ալ կ'ըսէ.

— Եկէ՛ք, եկեղեցիին բակը խաղեք:

Փողոցը խաղող առ հայ տղաքը կը ժողվէ, կը տանի եկեղեցիին բակը, ինք ալ կը սկսի անոնց հետ զնդակ խաղալ, պատմութիւններ պատմել, երգեր սորվեցնել: Անանկ որ ամէն անգամ տղաքը նոր բան մը սորված տուն կու գային: Ինք ժամերով կը մստէր, կը զբաղէր անոնց հետ: Ետքն ալ պիսքուի մը կամ ճուս մը կերած խմած, ուրախ—ուրախ տուն կու գային:

Ան տղոց հետ ծով կ'երթար, անոնց հետ ծով կը մտնար, անոնց հետ արեւուն տակը կը պատկէր, կարծես մեծ եղբայրնին ըլլար:

Օր մըն ալ իմին երկու տղաքս տուն եկան ըսին.


— Մամա՛, գիտե՞ս Կիրակի օրը Պատարագ պիտի ըլլայ, մենք ալ խորանին առջեւը պիտի երգենք:

Ալ կ'երեւակայես մերին ուրախութիւնը: Կիրակի օրը հագած սքուած էլանք եկեղեցի գացինք: Մէյ մըն ալ ի՛նչ տեսանք: Ամէնքն ալ իրենց չօճուխներուն երգելը տեսնալու համար եկեղեցի եկած էին:

Հի՛չ միտքէս չ'ելլար աս օրուան պատկերը: Պզտիկ-պզտիկ չօճուխները դարաց դասուն երգիչներուն պէս մէջտեղ ելած էին, իրենց վարժապետը՝ Մեսրոպ Մութաֆեան ալ անոնց հետ միասին, հէ՛մ կ'երգէր, հէ՛մ տէ կը պատարագէր:

Աս ձեռով ան մեզ հայկական եկեղեցիին եւ քրիստոնէական հաւատքին կապեց: Հիմա կը տեսնա՞ս ես եկեղեցիին մէջի, դուրսի աս բազմութիւնը. անոնց մեծ մասը ան ատենուան թերպիէ ըրած տղաքն են: Ամէն մէկը արդէն կնիկի, չօլուխ-չօճուխի տէր է. ընտանիքնին առած կու գան եկեղեցի, որ լսեն արդէն արքեպիսկոպոս դարձած Մեսրոպ Արքազանին աղուոր հայերէնով խրատական քարոզները, ետքըն ալ անոր ձեռքէն հաղորդութիւն կ'առնեն, կը հաղորդուին Աստուծոյ խօսքին եւ քրիստոնէական հաւատքին...

Հիմա ժամին բակը ամառները վարժուհիները դասեր կու տան. հայերէն, անգլերէն, հոգետր երգեր, երգ պար, կիթառ, ձեռագործ, մարզական խաղեր կը սորվեցնեն, եկեղեցին սիրել կու տան, երիտասարդութիւն մը կը հասցնեն: Արդէն Մեսրոպ Արքազանին մէկ ոտքն ալ կղզին է: Պատրիարքարանին գործերը լմնցնելէն ետքը ան Գընալը կղզի կու գայ, քանի որ ինք բոլոր կղզիներուն տեսուչն է եւ ամէն մէկուն ուրախութիւնը կամ ցաւը իրենն ալ է...



55 (242). ՍՈՒԹՈՒՅԵՍԸ ՍՐԲՍՉՍԵՆԻՆ ՄՍՏՈՒՄՍՈ Ս. ՊԱՏԱՐԱԳԸ



այրս, մայրս եւ ես Գուրուշէշմէի Երեւման Ս. Խաչ եկեղեցին ժամկոչութիւն կ'ընէինք, մէյ մըն ալ Մեսրոպ Արքազանը Պատարագ մատուցանելու եկաւ: Ես ալ խորանին քովը, ճերմակ շապիկ հագած, դպիր էի:

Մեսրոպ Արքազանը Պատարագի ընթացքին խորանին առջեւ ծուկի եկաւ եւ այնքան յուզումով կ'երգէր, որ ես անոր աչքերուն մէջ արցունք նշմարեցի: Ես այդ օրուան պատարագէն շա՛տ ազդուեցայ: Պատարագէն վերջը եկեղեցիին պարտեզին մէջ մեզի տրամադրուած սենեակը քաշուեցայ, սկսայ լալ: Պապաս եկաւ, տեսաւ, հարցուց.

— Ինչո՞ւ կու լաս:

Ես ալ ըսի.

— Այսօրուան Պատարագէն ազդուեցայ: Ես ալ Մեսրոպ Արքազանին պէս կրօնաւոր պիտի ըլլամ:

Պապաս ըսածս բանի տեղ չդրաւ, սենեակէն դուրս ելաւ: Ես ալ ելայ սեղանին ծածկոցը քաշեցի, վրաս առի, ազուաւով մըն ալ կուրծքիս ամրացուցի, մամայիս խըսիբէ կարի տուփը գլուխս անցուցի, սկսայ շարականներ երգել: Տունին մէջը միս-միսակս էի: Միս տղաքը դուրսը կը խաղային: Ընկերներս զիս կը կանչեէին.

— Պօղո՛ս, եկու՛ր խաղանք...

Ես ալ բարձրաձայն կ'ըսէի անոնց.

— Չէ՛, ես հոս գործ ունիմ, — բայց ոգեւորուած կ'երգէի, կու լայի, ինքզինքս կրօնաւոր կը երեւակայէի...

Այդ օրերուն երեք գիշեր իրարու վրայ երազ տեսայ, որ իբր ես տէր հայր եղած եմ: Անկէ վերջը հաստատ որոշեցի. անպայման սրբազան պիտի ըլլամ...

Ատեն մը ետքը այդ նոյն եկեղեցին Շնորհք Պատրիարքը եկաւ: Պատարագը Մեսրոպ Սրբազանը մատուցանեց: Այդ օրը ես, նորէն դպիրի շապիկ հագած, վարը, դասին մէջն էի: Արարողութիւնը կատարուեցաւ, Պատարագը մատուցուեցաւ, ասարտին Պատրիարք Հայրը եկեղեցիին քովի խորհրդարանը անցաւ: Ես դռան սեմը կեցած կը սպասէի, որ դուրս պիտի ելլայ, եւ շատ անհամբեր էի, բայց նաեւ ոգեւորուած: Ի վերջոյ Շնորհք Պատրիարքը դուռէն դուրս ելաւ: Ես երկու ձեռքերս բացի, անոր ճամբան կտրեցի, ըսի.

— Պատրիարք Հայր, դուն որ մեռնիս, ես քու տեղդ պիտի անցնիմ...

Ան իր բարի ժպիտովը ժպտեցաւ եւ հանեց խաչ մը տուաւ ինծի: Ծաբաթ մը վերջ թաղականներուն հետ նամակ մը եկաւ պապայիս անունովը, ուր Պատրիարքը կ'ըսէր. «Ինծի ղրկեցէք ձերին պզտիկ տղան, որպէսզի դառնայ ինչ որ ինքը կ'ուզէ»: Բայց մամաս ըսաւ.

— Մէկ հատ մանչ մը ունիմ, ան ալ կղերական ըլլայ նէ, հապա մեր մականունը ո՞վ պիտի շարունակէ:

Այդպէս ալ իմ երագս երագ մնաց:



56 (243). ՄՈՒԹԱՅԵԱՆ ՄՐԲԱՉՉԱՆԻՆ ՀԱՅԵՐԻՆ ԵՒ ԹՐԶԵՐԻՆ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ

Ես դեռ շատ պզտիկ էի, երբ մամաս զիս Ս. Գեորգ եկեղեցին տարաւ. ինծի շապիկ հագցուցին, սկսայ խումբին հետ երգել: 1983-ին, երբ Մեսրոպ Սրբազանը տակաւին արեղայ էր, մամաս լսե՛ր էր իր քարոզը, զմայլած եկաւ տուն պատմեց թէ ատ ի՛նչ աղուոր կրօնաւոր մը եկած է մեր եկեղեցին: Երբ ես Մեսրոպ Սրբազանը ճանչցայ, այլեւս ան վարդապետ էր... Հիմա ան կղզիներու հայութեան հոգեւոր հովիւն է: Հիմա շաբթուան մէջ երկու անգամ Մեսրոպ Սրբազանը եկեղեցիները թրքերէնով պատգամ կու տայ: Էրիկմարդիկ ալ իրենց գործէն կ'ելլան եւ դեռ տուն չմտած իրիկուան ժամերգութեան կ'երթան, մասնաւոր Մեսրոպ Սրբազանին թրքերէն խօսած պատգամները լսելու, քանի որ անոնց մեծ մասը գաւառներէն եկած են եւ հայերէն չեն գիտեր: Այնպէս որ, զանոնց հայ եկեղեցիին եւ քրիստոնէական հաւատքին կապելու միակ միջոցն է:

Այդ նոյն նպատակին կը ծառայէ նաեւ Պատրիարքարանի լոյս ընծայած «Լրաբեր»ի հայերէն եւ թուրքերէն տեղեկատուն կամ «Ակօս» թերթին թրքերէն բաժինը, որոնք մեր գաւառներէն եկած հայութեան հոգեւոր սնունդ կու տան:

Ես հիմա երկու ընտանիք ունիմ. մէկը իմ ընտանիքս է, միւրը եկեղեցիի ընտանիքս է:





57 (244). ՄՈՒԹԱՖԵԱՆ ՄՐԲԱԶԱԿՆԻՆ ԵՐԵ

Մերոպ Սրբազանը միշտ զբաղած է: Ե՛րբ նայիս, գործի վրայ է: Ամմա ամէն ինչն ալ անոր կը նայի: Դեսպանները, հիւպատոսները, պաշտօնական հիւրերը, թղթակիցները, պարզ մարդոց, ամէնուն ալ ան կ'ընդունի, երկար բարակ կը զրուցէ հետերնին: Սիրո՛վ կ'ընէ ատ ամէնը: Անանկ որ, օրուան ժամերը քիչ կու գան: Յաճախ գիշերներն ալ կը լուսցունէ: Ես որ Պատրիարքարանի ե՛ր շարժավարն եմ, ե՛ր գիշերապահը, սիրտէս կ'երթայ, երբ օրուան մէջ այդքա՛ն աշխատելէն ետքը գիշերուան ուշ ժամերուն անգամ իր սե- նեակին լոյսը բաց կը տեսնամ. ինք կ'աշխատի. օր կ'ըլլայ որ կը լուս- ցունէ...

Կը զարմանամ թէ ի՛նչպէս միւս առտու կանուխ նորէն ոտքի վրայ կ'ըլլայ, մարզիկի իր առոյգ քալուածքովը. գիտես քի ինք չէր գիշերը արթուն լուսցունողը:

Օր մը նորէն Սրբազանը ամբողջ գիշերը լուսցուցած էր, քանի որ ձեռքը հասցնելիք գործ մը ունէր: Միւս առտու, ժամը վեց ու կեսին ալ օղակայան պիտի ըլլայինք, որ արտասահման մեկներ: Մէյ մըն ալ, տասնհինգ վայրկեան մնացած, Սրբազանը Պատրիարքարանի սան- դոխներէն հեռի հեռի իջաւ, ըսաւ.

— Պե՛րճ, զիս շո՛ւտ մը օղակայան կրնա՞ս հասցնել:

Ստանպուլի «Աթաթիրք» օղակայանն ալ, ինչպէս գիտէք, Գումգարունէն ահագին հեռու է, սանկ-անակ մէկ ժամ մը կ'առնէ.

— Սրբազա՛ն, — ըսի, — հիմա ես իմ օթոյիս վրայ օղանալի թելեր կը դնեմ, քեզ շուտ մը տեղ կը հասցնեմ:

Տակաւին մութ էր: Ծովափնեայ ճամբան, որ քաղաքիս ամենէն բանուկ ճամբան է եւ միշտ օթօներու խճողում կ'ըլլայ, Աստուծո՛մէն, շատ շուտ ըլլալուն, դէռ պարսպ էր: Ես սկսայ քշել, ամմա ի՛նչպէս կը քշեմ.

օթօն թռչունի պէս կը թռի կոր. կարմիր լոյսերուն տակէն քշելով անցանք.

— Սրբազա՛ն, եթէ ինծի ճէզա գրեն նէ՛ դուք պիտի վճարէք, — ըսի կատակով, բայց վայրկեանը վայրկեանին հասցուցի:

Սրբազանը օղանաւ ելաւ...

Օր մըն ալ Մերոպ Սրբազանը նորէն Պատրիարքարանի սան- դոխներէն անապարանքով իջաւ, զիս գտաւ, ըսաւ.

— Պե՛րճ, Գընալը կղզի պիտի հասնիմ. ժողով կայ, բայց հինգ վայրկեան ունիմք, կրնա՞ս զիս շոգենաւ հասցնել:

Ժամբան ալ բաւական ժամանակ կ'առնէ, ամմա օթօներուն ձախէն աչէն մտնալով երեք չորս վայրկեանէն հասանք.

Սրբազանը հարցուց ինծի.

— Ատեն ունի՞մք. լրագիր մըն ալ առնեմ, որ շոգենալին վրայ կարդամ...

Ես ալ չդիմացայ, ըսի.

— Սրբազա՛ն, մոոցա՞ր քի շոգենալո՞ ճամբայ պիտի ելլայ: Գոնէ շոգենալին վրայ քիչ մը հանգչէ, մեղք չէ՞ս մի ես. ինքզինքդ չարաչար կը յոգնեցնես կոր. քիչ մըն ալ ինքզինք մտածէ...

Այնպէս որ մեր Սրբազանը բոլոր գործերուն կը հասնի: Աստուած ալ իրեն հասնի, իր ույժը անպակաս ընէ...





58 (245). ՄՈՒԹՎՅԵՎՆ ՄՐԲԱՉՉԱՆԵ՝
ԱՌԱՋԵԼՎՊՈՐՑ

Առաջ մեր Գընալը կղզիին Ս. Գր.Լուսաւորիչ եկեղեցիի խորանին Ս. Սեղանը փայտ էր, հիմա Մեսրոպ Սրբազանի ջանքերովը ճերմակ մարմար եղաւ, ճիշդ Ս. Էջմիածինի վանքին պէս: Հայաստանէն եկած խաչքարը գետեղուեցաւ եւ եկեղեցին ալ ճերմուեցաւ տիկին Թանհա Օրհնօղլուի ուխտով եւ ճիւղական ծախքով. նաեւ եկեղեցիին պարտէզը խաչի ձեւով մարմարեայ մկրտարան մը շինուեցաւ, որպէսզի զաւառէն եկած մեծահասակները, որոնք կ'ուզեն իրենց նախնիներուն պաշտած կրօնքը վերընդունիլ, աստ մկրտարանին մէջ Քրիստոսի պէս ամբողջ մարմինով կայնած մկրտուին...

Ասկէ տասնհինգ օր առաջ մեր Գընալը կղզիի եկեղեցիի դարաւանդին վրայ եկեղեցիի բարերարներուն նուիրուած շնորհակալութեան քոքթէյլ մը կար: Աղուոր երեկոյ մը անցուցինք, ետքը տուն եկանք: Գիշերը երազիս մէջը մեր եկեղեցիին խորանը եւ ծովը տեսայ. իբր քովի են, Մեսրոպ Սրբազանն ալ կը քարոզէ: Լեցուն ժողովուրդ՝ հիացած իր քարոզը մտիկ կ'ընէ: Քարոզած աստեղը Մեսրոպ Սրբազանը ձեռքերը կը շարժէ, իսկ ձեռքերուն վրայի բարակ-բարակ երակները իրարու կը միանան, կը սկսին փոսփորի պէս փայլիլ: Մեր Ներմինն ալ իբր թէ քովս է, ըսի.

— Ներմի՛ն, նայէ՛, Սրբազանին ձեռքերը ի՛նչպէս կը փայլին...

Վերջը Սրբազանը մեզի մօտեցաւ: Ես ըսի.

— Սրբազա՛ն, սքանչելի էր քարոզնիդ. գիտէ՞ք ձեռքերնիդ ի՛նչպէս կը փայլէին:

— Ինչպէ՞ս, — հարցուց ան:

— Ծովեզերքէն սկսած ձեր ձեռքերը երակ առ երակ արեւու պէս ճառագայթներ սկսան արձակել:

Սրբազանը ըսաւ.


— Ո՛չ, Տիգրանուհի՛, անտեղէն չսկսաւ: Անիկա գիտե՞ս ուրկէ սկսաւ: Ան սկսաւ այն օրէն, երբ ես ձեռնադրուեցայ:

Ու մատս առաւ իր ափին մէջը, շօշափել տուաւ: Ես զգացի, տեսայ որ ափին մէջը խաչի ձեւով փոս է եւ մէջն ալ աղամանդի պէս՝ փրորը՛լ-փրորը՛լ փայլուն խաչ...

Արթնցայ որ երազ էր, բայց շա՛տ տպաւորիչ:

Աստուած ալ իրեն ուղիղ վարդապետութեան արժանացնէ. դիրին գործ չէ, մանաւանդ ի՛ր ըրածը:





59 (246). ՄՈՒԹՎՖԵՎԸ ՄՐԲԱԶՉԱԼԵ ԵՒ
ԿԵՍԱՐԻՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Մ ը պատմեն թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչը Կապարովկիոյ Կեսարիա քաղաքը ուսում առած է, վերջն ալ անտեղ ձեռնադրուած իբր Հայոց առաջին Հայրապետ: Ատոր համար ալ մեր Կեսարացիները Կեսարիոյ մէջ ուզած են Ս. Գրիգոր Լուսաւորիչին արժանի եկեղեցի մը հիմնադրել:

Կեսարացի մեր մեծերը կը պատմէին թէ 1857-ին այդ եկեղեցին շինելու ժամանակ, մեծ դէր կատարած է ոչ միայն այն ատենուան յայտնի մեծահարուստ-բարերար Գեորգ աղա Մընտիկեանը, այլ նաեւ ան իրեն օգնական ունեցած է Կեսարացի պաստըրմանի հայ վաճառականները: Անոնցմէ շատեր, թէեւ հայերէն չէին գիտեր, բայց հոգիով հայ քրիստոնէայ ըլլալուն՝ ամէն ջանք գործադրած են: Արհեստաւոր, էսնաֆ դասակարգի մարդիկ ալ մեծ եռանդով աշխատած, մէջտեղ հանած են ատ հրաշալի եկեղեցին: Որոնք միութեամբ չեն կրցած օգտակար ըլլալ, իրենց ձեռքին աշխատանքովը նպաստած են. ազատ ժամերուն եկած աշխատած են. մէկը պատերը շարած է, միւսը դուռները, պատուհանները շինած, մէկալը տաճարին ոսկի զարդերն է ըրած: Կ'ըսէին թէ նոյնիսկ պզտիկ չօճուխները եւ տարիքոտ կիները աշխատած են, իրենց ձեռքերովը քար ու կիր շալկած: Եւ այդ եկեղեցին գաւառացիներուն ամենէն սիրած, ամենէն խոշոր եւ ամենէն շքեղ աղօթատեղին դարձած է:


Տարիներու ընթացքին եկեղեցին արդէն փլփլած էր եւ վերակառուցուելու պետք ունէր:

Հայոց Պատրիարքութիւնը Թուրքիոյ կառավարութենէն խնդրած էր, որ այդ եկեղեցիին վերակառուցումը արտօնէ: Թուրքիոյ կառավարութիւնը արտօնեց: Պատրիարքարանի կազմակերպած հանգանակու-

թեան բոլոր մասնակցեցանք: Մեր Մեսրոպ Սրբազանը քանի՛-քանի անգամներ գնաց աշխատանքները անձամբ հսկելու, մինչեւ ամէն ինչ վերջացաւ:

1996-ի աշնան Պոլիսէն, ուրիշ քաղաքներէն, տարբեր երկիրներէն հազարաւոր ուխտաւորներ եկած էին՝ Կեսարիոյ եկեղեցիին բացման արարողութեանը ներկա գտնուելու: Մենք ալ օթօպիսներով Պոլիսէն գացինք: Ծատ յուզիչ եւ անմոռաց օր մըն էր այդ օրը: Եկեղեցիին հանդիսաւոր բացումը շատ մեծ շուքով Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանը կատարեց: Ծիտակը ըսելով, ան շա՛տ յոգնեցաւ, շա՛տ սիրտ հատցուց, մինչեւ որ այդ սքանչելի եկեղեցիին վերաշինութեան գործը զլոյս բերաւ:





60 (247). ՄՈՒԹՎՅԵՎՆ ՍՐԲՍՉՎՆԵ
ԵՒ ՎԱԳՐՖԻ ԵԿԵՂԵՑԻՆ



ուրքիոյ հանրապետական շրջանին գաւառի եկեղեցիներէն մին առաջին անգամ ի հիմանէ վերանորոգուեցաւ: Ատիկա Սամանտաղի՝ պատմական Մուսա լեռան Վազրֆիլը գիւղին Ա. Աստուածածին եկեղեցին էր, որուն շինարարական աշխատանքներուն մինչէն ասարտին հասնիլը գերշ. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան քանի՛-քանի անգամներ հասաւ երկրի հարաւային ծայրամասի այդ անկիւնը, ուր երկու հարիւր հայեր կ'ապրին: Անոնք իրենց խաղաղ, ստեղծագործ կեանքով եւ չարքաշ աշխատանքով կը շարունակէն յարատեւել՝ յիշեցնելով թէ այդ վայրերուն հետ ի՛նչպիսի անքակտելի կապեր ունին հայերը:

Օգոստոս 9 1997-ին, շուրջ հինգ հարիւր ուխտատուներ, Պոլիսէն ինքնաշարժներով ճամբայ ելանք, անցնելով Անգարայէն, Գոնիայէն, Կիլիկեան դռներէն, Ատանայէն, հասանք Իսկէնտէրուն: Այնտեղ Գազանճեան Պատրիարք Հօր հրամցուեցաւ աւանդական աղ ու հացը, ապա տեղւոյն Ա. Քառասուն Մանկանց եկեղեցւոյ մէջ ան հաւատացեալներուն իր հայրական պատգամը եւ օրհնութիւնները ուղղեց:

Այնուհետեւ Պատրիարք Հայրը քաղաքավարական այց տուաւ Հաթայի կուսակալ Ութբու Աճունին: Այդ ջերմ հանդիպումին ներկայ էին նաեւ Պատրիարքական Փոխանորդ գերշ. Տ. Ծահան Արք. Սվաճեան, Պատրիարքական Փոխանորդ եւ պատկառելի Կրօնական ժողովի ատենապետ գերշ. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան, Պատրիարքական Աթոռի խորհրդակցական մարմնի անդամներէն՝ Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի հոգաբարձութեան ատենապետ Փիլօ Աթան եւ Վազրֆիլը գիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղական խորհուրդի ատենապետ Միհրան Գըսատուր:

Այնուհետեւ Պատրիարք Հայրը իր շքախումբով Վազրֆիլը գիւղի Անխակրթարանը առաջնորդուեցաւ, որուն պարտէզը արդէն զինք կը

սպասէին կուսակալը, Սամանտաղի գաւառապետը, քաղաքապետը, քաղաքին երեսփոխանը, ինչպէս նաեւ ոստիկան զօրաց հրամանատարը: Հանդիսութեան ընթացքին էլոյթ ունեցաւ կուսակալ Ութբու Աճուն, որ իր դրական տպաւորութիւնները արտայայտեց Վազրֆիլը գիւղացիներուն հանդէպ. շեշտելով անոնց երկրագործական յաջողութիւնները եւ մանաւանդ հայ կանանց ձեռագործներուն գեղեցկութիւնը: Աւելի վերջ, Պատրիարք Հայրը եւ կուսակալը միասնաբար բացին Աթաթիւրքի պրոնգաձոյլ կիսանդրին:

Այնուհետեւ հիւրերը եկեղեցի անցան, ուր պարտէզին մէջ գիւղացիներ եւ տարբեր վայրերէ ժամանած հիւրեր զիրենք կը սպասէին: Կարճ արարողութիւն մը տեղի ունեցաւ: Յուշապանակներ յանձնուեցան Հաթայի երեսփոխան Ֆաութ Չային, Սամանտաղի քաղաքապետ Տըթ. Միթհաս Ապաճըին եւ այլ պաշտօնական անձանց: Պատրիարք Հօր ձեռամբ յուշապանակներ ստացան նաեւ բարերար Պետրոս Ծիրիճօղլու, Թանիա Ծիրիճօղլու, Միհրան Ուլիկեան, ճարտարապետներ՝ Լեւոն Էրասլան եւ Ապտուլահ Սօյագ, եկեղեցւոյ թաղական խորհուրդի ատենապետ Միհրան Գըսատուր, Արժ. Տ. Միտոն Ա. Քհնյ. Այվազեան, ինչպէս նաեւ յանուն Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի հոգաբարձութեան Փիլօ Աթան:

Վազրֆիլը գիւղի Ս. Աստուածածին եկեղեցին Պատրիարք Հօր ձեռամբ օծուեցաւ եւ պաշտամունքի վերաբացուեցաւ: Ծահան Արք. Սվաճեան Ս. Միտոնով օծեց եկեղեցւոյ խորանը, իսկ Մեսրոպ Արք. Մութաֆեան՝ մկրտարանը, ապա արհամարհելով դժուարութիւն եւ վտանգ, եկեղեցւոյ գմբէթը ելաւ եւ զանգակատունն ալ օծեց:

Իսկ միւս օրը գերշ. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան անդրանիկ հանդիսարար Ս. Պատարագը մատուցեց: Ըստ տպաւորիչ էին նաեւ եկեղեցական արարողութիւնները, որոնց մասնակցեցաւ նաեւ դպրի եկեղեցիէն Ապպա Սերաֆիմ: Երգեցողութիւնները Արժ. Տ. Գրիգոր Ա. Քհնյ. Տամատեանի ղեկավարութեամբ կատարուեցան: Երգեհոնը Լիսի Գահվեճիօղլուն նուագեց:

Կարդացուեցան Վեհափառ Հայրապետ, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին օրհնութեան գիրերը, որոնցմէ առաջինը ուղղուած էր Մուսա տաղի Վազրֆիլը գիւղի թաղական խորհուրդին, իսկ երկրորդը՝ Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան կրօնական ժողովի ատենապետ, գերշ. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեանին, բարձր գնահատելով իր գործադրած անձնական ջանքերը՝ պատմական նշանակութիւն ունեցող Վազրֆ գիւղի այդ Ս. եկեղեցին կառուցելու գործին:



61 (248). ՀՎՍԾԵՆԻ ՀՎՅԵՐ

Համշէնի բնակիչներուն գրեթէ բոլորն ալ հաւատափոխ դարձած հայեր են: Անոնց անունները Ահմէտ, Մուհամմէտ, Հասան են, բայց կ'ըսեն թէ երբ համշէնցի կիները խմոր կը շաղունեն, քրիստոնէականներուն պէս խմորին վրայ ձեռքով խաչ կը քաշեն եւ իրենք ալ գրեթէ մեզի պէս հայերէն կը խօսին:

Օր մը կէս գիշերով հիւանդանոց գացած էինք. տալոջս ամուսինը ծանր հիւանդ էր: Բժիշկին քովը հիւանդ կար, ըսին որ սպասենք: Դուրսը նստած իրարու հետ կը խօսէինք, մեր քովն ալ գիւղացի թուրք կին մը նստած էր: Ան սկսաւ ինձի թրքերէն հարցունել.

— Սիգ մէ՞րտէն սիմիգ (Դուք ուրկէ՞ եք):

Ես ալ ըսի.

— Պիգ՝ Էրզրումտան, Եօզղատտան ըզ (Մենք Էրզրումէն, Եօզղատէն ենք):

Դուն մի ըսեր, ան ականջ դրեր է մեր հայերէն խօսելուն: Ըսաւ.

— Ապլա՛, սիգ տէ պիգիմ կիպի գօնուշուօրսունուօզ (Քոյրի՛կ, դուք ալ մեզի պէս կը խօսիք):

Ես ըսի.

— Գօնու՛շ, պաքալըմ (Խօսէ՛ տեսնեմ):

Ան սկսաւ խօսիլ.

— Մայրիկս հիւանդ է, հիւանդանոց բերեր ենք...

Ատ միջոցին անոր մայրը եւ քոյրը բժիշկին սենեակէն դուրս ելան:

Ես մօրը հայերէնով ըսի.

— Անցած ըլլայ:

Մայրը հայերէն պատասխանեց.

— Քիչ մը պաղեր են: Աղջիկս բժիշկին հետ զրուցեց, ան ըսա՛ հիւանդդ աղէկ է:

Դուն մի ըսեր, անոնք մահմետական դարձած Համշէնցի հայեր են...



62 (249). ՍՎԱԳԻ ՀՎՅԵՐԸ

Սուշ մենք Սվագ կ'ապրէինք: Հոն հայկական դպրոց չկար: Ատոր համար ալ մենք աղէկ հայերէն չիտենք:

Սվագի մէջ Թաւրա գիւղը կար. մենք հոն կ'ապրէինք: Առաջ հոն այլազգ հիշ չկար: Հայկական եկեղեցիներ շատ ունէինք՝ Ս. Նըշան, Ս. Վարվառ, Ս. Քառասուն Մանկունք: Հոն Անապատ կար, Ջերմիջուր կար. հիւանդները հոն կը լոգնային, կ'աղէկնային:

Չիւնքի մեր եկեղեցիքը քակուած էին, տարին մէկ անգամ Պատրիարքարանէն կրօնատր կու գար, անոր ծնածները կը մկրտէր: Ծաբաթը մէկ ալ մէկու մը տունը կը ժողվուէինք, քիչ մը բամբասանք կ'ընէինք, քիչ մը Աւետարան կը կարդայինք, կ'երգէինք, մեր տունները կ'երթայինք:

Հիմա եկած ենք, Պոլիս կ'ապրինք: Չիւնքի հոստեղը հէ՛մ հայութիւն կայ, հէ՛մ հայկական դպրոց կայ, հէ՛մ տէ հայկական եկեղեցի: Տղաս՝ Միքիման Միքոյլու Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը կոկորդի սօքթօր է: Թոռնիկներս հայկական դպրոց կ'երթան, եկեղեցին ալ դպիր են: Փա՛րք Աստուծոյ:





63 (250). ՉԱՓՈՒՆԱԿԱՆ ԿԱՅ ԶՐԻՍՏՈՆԵՎԱՆԵՐ



Իմիտ անունով տղայ մը, որ թուրք էր, իրենց տունը թուրք մը կը գտնայ: Ան թուրքին վրայի գիրերուն կը նայի, չի հասկընար թէ ինչ լեզուով գրուած է, կը տանի մէկու մը, կը հարցընէ.

— Հոս ի՞նչ կը գրէ:

Ան կը նայի, կ'ըսէ.

— Ասի հայերէն գիրեր են: Տա՛ր հայկական եկեղեցի, քահանան կը կարդայ:

Իմիտը թուրքը կ'առնէ կը տանի քահանային, կարդալ կու տայ: Քահանան կը կարդայ, կ'ըսէ.

— Աս քու հօրդ մկրտութեան վկայականն է:

Իմիտը կ'ըսէ.

— Անկարելի՛ է. մենք միալիման ենք:

— Ո՛չ, — կ'ըսէ քահանան, — աս թուրքը կը փաստէ որ ձերիմները ժամանակին հայ քրիստոնէայ եղած են:

Իմիտը կը մտածէ... Կը մտնայ հայկական եկեղեցի, կը մկրտուի, հայ քրիստոնէայ կ'ըլլայ, Յուսիկ անունով եւ մինչեւ հիմա ամէն Կիրակի եկեղեցի կը յաճախէ: Ան շատ շնորհքով, շատ քաղաքավար երիտասարդ մըն է: Արդէն հայերէն ալ սորված է:



64 (251). ՊՈՒՍԵՄԻ ՏԻԿԻՆ ԱՂԱՎԵՆԵՆ ԵՒ ԿԱՅՐ ՍՈՒՐԲԸ



Աս դէպքը իրաւէն եղած է: Օրին մէկը Հայր Սուրբ մը Ամերիկայի մէկ նահանգէն կու գայ Լօս Անճելէս: Մեզի ծանօթ Տիկին Աղանիսն ալ կ'երթայ եկեղեցի, անոր քարոզը լսելու: Աս Տիկին Աղանիսն կը լսէ Հայր Սուրբը, կը նայի անոր աչքերուն, կարծես կը սիրահարի: Կը զգայ որ Աստուծոյ առաջ մեղք ունի իր վարմունքը: Կ'ուզէ ազատիլ ատ Հայր Սուրբին մտապատկերէն: Բայց չի կրնար: Խեղճ կնոջ վրայ ջղային վիճակ մը կու գայ:

Տիկին Աղանիսն տղան Ամերիկեան համալսարանէն հոգեբան բժիշկ ելած էր. կը զգայ մօր տարօրինակ վիճակը, կ'առնէ, նամակ մը կը գրէ Հայր Սուրբին թէ՛ մենք շատ հաւանեցանք ձեր քարոզները, կ'ուզենք նորէն ձեզ տեսնալ եւ լսել:

Օրին մէկը ատ նոյն Հայր Սուրբը նորէն Լօս Անճելէս կու գայ: Տիկին Աղանիսն տղան մօրը կ'ըսէ.

— Մայրի՛կ, քու հաւանած Հայր Սուրբդ եկած է, էլի՛ր, եկեղեցի՛ գնա:

Մայրը չ'ուզէր երթալ. ինքզինքէն կը վախճայ...

Տղան կ'երթայ, ատ Հայր Սուրբը իրենց տուն կը հրաւիրէ: Սեղան կը նստին: Տիկին Աղանիսն նորէն կը նայի՛, կը նայի՛ անոր երեսին, անոր աչքերուն մէ՛ջը կը նայի...

Հայր Սուրբը կը հարցնէ.

— Տիկին՛, դուք ի՞նչպէս եկաք Ամերիկա, դուք ու՞րկէ եք:

Կինը կը սկսի պատմել.

— Ես Թօմարզացի եմ: Ծնողքս հարուստ էին: Առաջին ընդհանուր պատերազմին ես մեծ չէի, ինձմէ պզտիկ ալ եղբայր մը ունէի: Պատերազմի ատեն ատ պզտիկ եղբայրս կորսուեցաւ: Խեղճ մայրս օրը

երեք ժու՛մ կու լար, իր տղան կը յիշէր եւ կ'ըսէր. «Անուշի՛կ զաւա՛կս, եթէ գիտնայի թէ քեզ պիտի կորսնցնեն, այդքա՛ն երկար քեզ չեի խնամեր...»: Քանի որ Զաւէն եղբայրս թոնիրը ինկած էր, սաստիկ այրուած էր, եւ մայրս մեհիլեմներով, տնային դեղերով շա՛տ երկար զինք խնամած եւ հազիւ առողջացուցած էր...

Հայր Սուրբը իր սքեմին թեւերը վեր կը սոթտէ, կը ցուցնէ այրուածքի հետքերը եւ կ'ըսէ.

— Ատ տղան է՛ս եմ...

Այլ Տիկին Աղաւնիին ուրախութիւնը մէկ աշխարհ կ'ըլլայ: Կ'ըսէ.

— Ուրեմն պարապ տեղը չէր որ ա՛ս աչքերը քեզ տեսած օրես ի վեր զիս կը հետապնդէին:

Տասնեակ տարիներ զիրար կորսնցուցած քոյր եւ եղբայր կարօտով եւ ուրախութեան արցունքներով կը փաթթուին իրարու:



65 (252). ԵՐԿԻՆԵՐԵՆ ԻԶՂՍԾ ԼՈՅՍԸ



ր մը մեր Ս. Փրկիչի կապոյտ հագնող սպասարկող կազմէն թրքուհի մը ինծի ըսաւ.


— Ապլա՛, քեզի բան մը պիտի հարցնեմ. մենք Իզմիթ կը նստինք: Հոն լերան գագաթը ամէն գիշեր լոյս մը կ'իջնայ երկինքէն: Մենք գիւղացիներս ժողվուեցանք, որոշեցինք որ կ'երեւի թէ անտեղ գանձ մը կայ, եւ գացինք հօճային հարցնելու:

Հօճան ըսաւ որ անցեալին անտեղը քրիստոնեայ թաղ մը եղած է. քահանաները կը գիտնան: Մենք ալ գացինք քահանայ մը գտանք, անոր հարցուցինք: Քահանան ըսաւ. «Ատ անկարելի՛ բան է. հոն գանձ չկայ, որ լոյս ալ տայ»: Ապլա՛, հիմա քեզի կը հարցնեմ, դուն ի՞նչ խորհուրդ կու տաս:

Ես ալ իրեն ըսի.

— Դուք միայն ոսկիի եւ գանձի մասին կը խորհիք. չէ՞ք կարծեր թէ անցեալին շատ նահատակներ եղած են եւ անոնց վրայ երկինքէն լոյս կ'իջնայ: Ատ մասին ձերին մեծերը ձեզի բան չե՞ն ըսած:





66 (253). ՀԱՅՈՒ ԿՊԱՐՏՈՒԹԻՒՆ



րբ ես Ստանայույի համալսարանը կ'ուսանէի, մեր դասարանը միայն ես հայ քրիստոնէայ էի եւ ինքզինքս քիչ մը ընկերուած կը զգայի, թէ եւ բոլոր դասերուս մէջ յառաջադէմ էի:

Օր մը փրօֆէսէօրը իր դասախօսութեան ատեն ըսաւ.

— Գիտէ՞ք որ թրքերէն «էօրնէկ» բառը հայերէն «օրինակ» բառէն առնուած է, քանի որ հայերը թուրքերուն հետ դարեր շարունակ քով քովի ապրած են եւ ամէն տեսակետով իրարմէ շատ ազդուած են...

Ատկէ վերջը ես ինքզինքս հպարտ կը զգայի, որ հայ եմ:



67 (254). ՓՈՒԽԱԳԱՐՁ ՅԱՐԳԱՆՔ



այրս՝ Նազար Ալթուն⁴⁸ Սեւ ծովու ափը՝ Ռիզէ եղած ատենը կը բարեկամանայ կառավարական թուրք պաշտօնեայի մը հետ:

Օր մը ատ պաշտօնեան հօրս իր տունը ճաշի կը հրաւիրէ: Պարտէզներու մէջ, տեսակ-տեսակ ծաղիկներով ու ծառերով շրջապատուած, հավուզով խոշոր տուն մը կը մտնայ հայրս: Ասոնք միասին կ'ուտեն կը խմեն: Ընթացքով վերջը աս թուրք պաշտօնեան սիկառը ծխելով հօրս կը պատմէ. «Գիշեր մը, երբ Անդրանիկին չէթէները մեր գիւղը կը կոխեն, հայրս անոնց ձեռքը չիչնալու համար կը փախի. կ'երթայ քովի հայ դրացիին դուռը կը զարնէ, անոնց դուռը բանալ կու տայ եւ ինք ալ հոն կը պահուրտի: Անդրանիկին զինուորները կասկածելով որ հայրս քովի հայուն տունը մտած է, կու գան հայուն տունն ալ կը կոխեն: Հայ դրացին առանց ժամանակ կորսնցնելու հայրս կ'առնէ կը խորէ իր կնոջ անկողինը, որպէսզի եկողները չկասկածին: Եւ այդպիսով հայրս կ'ազատի: Այնպէս որ մենք հայերուն հետ բարի-դրացիական յարաբերութիւններու մէջ եղած ենք, ինչպէս որ ալ իրենք մեզի հետ: Քանի որ Աստուծոյ առաջ բոլորս ալ հաւասար մարդիկ ենք: Կարելորը փոխադարձ յարգանքն է եւ վստահութիւնը», — կ'ըսէ ատ թուրք պաշտօնեան:

Հայրս մեզի ասիկա կը պատմէր, եւ մենք ալ միշտ փոխադարձ յարգանքով ենք այլազգներուն հանդէպ:





68 (255). ՓԱՌԱԲԱՎԵՆՈՒԹԵՎԵ ԱՂՕԹՔԸ

Օր մը արժանայիշատակ հայրիկս՝ Նազար Ալթուն, օթոյով Անատոլու կ'երթայ եղեր: Հայրս, օթօն քիչ մը հանգչի ըսելով ճամբուն եզերքը կը քաշէ. օթոյին ետեւէն գորգ մը կը հանէ, վրան կը նստի: Մէյ մըն ալ ձորին մէջէն ձայն մը կը լսէ: Կը տեսնա, որ գիւղացիները ձեռքերնին ջուրի դոյլերով դէպի ցորենի ամբարները կը վազեն, կրակը մարելու:

Քիչ մը վերջը մարդ մը կու գայ հայրիկիս քովը, կ'ըսէ.

— Տղա՛ս, գորգ ունի՞ս, ջուր ալ ունի՞ս, որ պիտէս մը առնեմ ու նամագ ընեմ:

— Այո՛, — կ'ըսէ հայրիկս, եւ սիրով կու տայ անոր ուզածները:

Մարդը ջուրով կը լուացուի, նամագն ալ կ'ընէ:

Հայրիկս կը հարցնէ.

— Աս նամագը ո՞ր ժամին նամագն է, որ չես ըրած:

Մարդը կ'ըսէ.

— Տղա՛ս, ասիկա գոհաբանութեան աղօթք է: Ես զԱստուած փառաբանեցի եւ շնորհակալութիւն յայտնեցի որ զիս արթնցուց եւ ինքզինքիս եկայ: Այնքան հարստացած էի, որ կը կարծէի թէ բան մը ինձի չի կրնար յաղթել: Մինչդեռ հիմա որ հրդեհ եղաւ, իմ ամբարս էր որ այրեցաւ: Աստուած ինձի ուզեց սաստել, զիս արթնցուց, որ աշխարհային ո՛չ մէկ հարստութիւն մնայուն չէ: Եւ ես փառք տուի Աստուծոյ, որ կրկին իր մեծութեան արժէքը գտայ:

Այնպէս որ աս ազգը շատ աստուածավախ եւ աստուածապաշտ է: Արդէն կը լսէք. օրուան մէջ քանի՛-քանի անգամներ մզկիթներէն աղօթքի կը կանչեն:



69 (256). ԹՈՂ ԼՈՅՍ ԻԶՆԱՅ ԱՆՈՐ ԳԵՐԵԶՍԱՆԻՆ

Առաջ Թուրքիոյ մէջ հայերը իրենց ազնիւ եւ նուիրուած աշխատանքով յարգանքի արժանի էին: Հայերը թուրքերուն հետ շատ հաշտ ու խաղաղ կ'ապրէին, բայց Ա. աշխարհամարտի ժամանակ հայերը շատ կորուստներ ունեցան:

Թուրքիոյ շատ գաւառներու մէջ հայերը թրքախօս էին. սկսիմ մեր քաղաքէն՝ Աֆիոն—Գարահիսար, Ուշագ, Էսքիշէհիր, Ազշէհիր, Պուրսա, Կեսարիա, Եօզղատ, Չար, Կէմերէկ, Գոնիա, Ատանա, Պիլէնիկ, Քէօթահիա, Մարաշ, Այնթապ, Էլմալը եւ ուրիշ շատ տեղերու հայեր թրքախօս էին, բայց նաեւ շատ եկեղեցատէր:

Ես պզտիկ տղայ էի, կը յիշեմ, կ'երթայի եկեղեցի, կը տեսնայի՝ մեծ մարդիկ, կիներ ծունկի իջած կ'աղօթէին: Պատարագէն վերջն ալ թուրքերէն քարոզ կը տրուէր: Քարոզին մէջ հայ տերտէրը կ'ըսէր. «...Հայ քրիստոնեանէ՛ր, իրարու հետ սիրո՛ւ՛ եղէք, այլազգներուն հետ սիրո՛ւ՛ եղէք, հլու հնազանդ եղէք Օսմանեան կառավարութեան, ինչով կրնաք օգնեցէ՛ք անոր յարատեւութեանը, ոչ մէկ ջանք խնայեցէք կատարելու ձեր քաղաքացիական պարտքը...»:

Կը յիշեմ թուրք կիները սեւ չատրա կը հագնէին, իսկ հայ կիները՝ ճերմակ մահրամա, որ իրարմէ զանազանուէին: Անոնք ալ իրարու հետ շատ սիրով, համերաշխ էին:

Կը պատմեն, թէ մեր քաղաքը՝ Աֆիոն—Գարահիսար, մեծ հրդեհ կ'ըլլայ: Ատ ժամանակ ալ մայրս զիս կը ծնի, բայց վախէն ծանր կը հիանդանայ, իր կուրծքի կաթերը կը քաշուին եւ չի կրնար զիս կերակրել: Ատ ատեններն ալ արհեստական սնունդ չկար, որ ինձի տային: Մերիններն ալ մօրս հիւանդութեամբ զբաղած, զիս կը մոռնան, մտածելով որ զաւակ նորէն կ'ունենան, բայց՝ մայր չ'ըլլար: Հօրեղբօրս կիներ՝ Սանդուխտ, թրքական զինուորական հիւանդանոցը հիւանդապահուի

կ'աշխատէր: Ան աշխոյժ եւ ճարպիկ կին մըն էր. ասորը համար իրեն «օսմանցի Սանդուխտ» կ'ըսէին: Ան կը տեսնայ որ նորածինի, այսինքն՝ իմ մասին մտածող չկայ, կ'առնէ զիս, թրքական թաղամասերը կը տանի: Կը մտնայ տուն մը, կը տեսնայ թուրք կին մը կաթ կու տայ իր մանուկին: Կ'ըսէ.

— Աղջիկս, քու գաւակիդ եղբայր մը բերած եմ: Ասոր մայրը ծննդաբերութենէն վերջը հիւանդացաւ, կաթ չունի: Աստուծո՛յ սիրուն, ասոր ալ կաթ տուր՝ չմեռնի: Ես քու լաւութիւնը չե՛մ մոռնար:

— Սիրո՛վ, աննէ՛ (մայրիկ), — կ'ըսէ թրքուհին, — ինչքան պէտք է կը կերակրեմ. կաթս շա՛տ է:

Եւ ատ բարի թրքուհին զիս իր գիրկը կ'առնէ, կը սկսի կերակրել, մինչեւ որ ես քիչ մը կը մեծնամ:

Երբ ես բաւական մեծցայ, հասունցայ, հօրեղբօրս կինը՝ Սանդուխտ աւ բոլորը ինծի պատմեց: Այն ատեն ես զգացի որ իմ ապրած կեանքս պարտական եմ ատ թրքուհի ծծմեր-մօրս, որ, կ'երեւի, արդէն հանգուցեալ է: Ան թող Աստուծոյ դրախտին արժանանայ: Քանի որ ես անոր շնորհիւ է որ իննսուն տարի է արդէն կ'ապրիմ եւ հիմա ձեզի կը պատմեմ իմ կեանքս: Ծիշո՞ղ է, իմ կեանքս այնքան ալ ուրախ եղած չէ, բայց ես միշտ կ'աղօթեմ որ թող լոյս իջնայ անոր գերեզմանին...



70 (257). ԳԸՆՎԼԸ ԿՂՁԻՒՆ ՀԱՅԵՐԸ



իզանդական կայսրութեան մէջ տասներկու հայ կայսրեր եղած են, որոնցմէ մէկը Լեւոն Հայկազն էր:

Բիւզանդիոնի շրջանին Գընալը կղզին արտորավայր եղած է: Հոն մայրապետներ ալ եղած են:

380-ին Մարմարայի կղզիներէն մէկը, հաւանաբար Փլաթը (Եասսը), արտորուած է Մեծն Ներսէս Հայրապետը:

1800-ին Օսմանեան սուլթանը Գընալը կղզին հայերով բնակեցուցած է եւ անոնց հողեր տրամադրած, որ մշակեն ու ապրին:

Երբ հայերը կը բազմանան, հայկական դպրոց մը ունենալու պէտքը կը զգացուի: Մեծն Ներսէս Հայրապետի անուամբ դպրոց մը կը շինուի: Սամաթիայէն ալ Արիստակէս անունով վարժապետ մը կը հրատարակուի, որուն Պատուելի կ'ըսէին:

Յետագային՝ մեր սորված ժամանակ այդ դպրոցը 110 աշակերտ ուներ:

1857-ին Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայոց եկեղեցին շինուեցաւ եւ Արիստակէս վարժապետն ալ իբրեւ Տիոնիսիոս Քհնյ. Ծիզմեճեան ձեռնադրուեցաւ: Դպրաց դասն ալ «Ներսէսեան» կոչուեցաւ:

1894-ին Պոլսոյ մեծ երկրաշարժին եկեղեցիին պատերը ճաթեցան, ատելի ուշ ան վերանորոգուեցաւ:

Գընալը կղզիին ստորոտը՝ աղբիւրին դիմացը հիմակուան «Միւնէ» փանսիոնին տեղը «Օսհաս» հայկական օթելըն էր, նաեւ «Թաշճեան» օթելը:

Օտտ աղուոր հայկական թատրոն ունէինք, որուն «Աղամեան թէատրօսը» կ'ըսէին: Հոտ Պերպերեան եղբայրները կը խաղային: Հիրաբար կու գային Զարիֆեանը, Օսիսաթունին եւ Մնակեանին խումբը:

Կոմիտասը եւս Գընալը կղզիին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին

եկած է: Կղզիին հայերը խնդրած են իրմէ որ երգէ, բայց չէ երգած, այլ միայն երգչախումբը ղեկավարած է:

1930-ականներուն շատ հայեր գաւառներէն եկան Պոլիս եւ Սամաթիա, Գումգաբու, Եշիլգիւղ եւ այլ թաղամասեր բնակեցան:

Մեր ընտանիքը Տրապիզոնէն եկաւ եւ բնակութիւն հաստատեց Գընալը կղզի: Հոս ան ժամանակ շատ տուններ չկային, եղածն ալ հայերու տուններ էին՝ պարտէզներով շրջապատուած: Այնպէս որ «Էրմէնի ատա» (Հայկական կղզի) կ'ըսէին: Ծոգեմաւ նստելու ժամանակ «Էրմէնի ատաւընա պիր պիլէթ վեր» (Հայկական կղզիի տոմս մը տուր) կ'ըսէին տոմսավաճառին:

Վահան քահանայ Խոյեան, որ Գընալը կղզիին հոգեւոր հովիւը եղած է, ժողովուրդի, նոյնիսկ թուրքերուն կողմէ սիրուած էր. «Փափագ էֆէնտիէ կիտերիմ» կ'ըսէին, քանի որ ան սիրուած էր ամէնէն:

Գընալը կղզին հազիւ հինգ ընտանիք այլազգ կար:

1918-20-ին Ալեքսանդր Խատիսեանը իր շքախումբով Գընալը եկաւ: Ան Խորասանճեան անունով ազգական մը ունէր, անոր տունը մնաց: Կղզիին հայերը խալիներ փոռեցին իր ոտքերուն տակը, որ վրայէն քալէ: Տուներուն վերանտաններէն ծաղկեփունջեր կը նետէին: Հայկական դրօշակ պարգած էին: Բանաստեղծուհի Արմենուհի Թերզեանը տակալին պզտիկ աղջիկ մըն էր, ծաղկեփունջ նուիրեց իրեն: Այդ օրը, ի պատիւ մեծ հիւրին, դպրոցական տղաքս պարելով բուրգ շինեցինք: Ես ամենէն վերը ելայ, եռագոյնը պարզեցի: Մինաս Չերազը ես ներկայ էր:

Քէմալ Աթաթիւրքը ես Գընալը եկած է, Օճնիկ Թաշճեանին տունը պահուած է առաջին անգամ, երբ Սարայէն փախցուցած էին զինքը: Երկրորդ անգամուն՝ Աթաթիւրքը երբ նաւակով Սարգիս Թաշճեանին եկաւ, սարաֆ պաշիին տունը մնաց:

1918-ին ոռու ժեներալ Վրանկելը իր բանակով Գընալը կղզի եկած է:

Հրանդ եւ Զապէլ Ասատուր ամուսինները ես ամառները Գընալը կու գային:

Առաջ Գընալը կղզիին փողոցները հայկական անուններ ունէին. օրինակ՝ Սաքայեան փողոցը հիմա կը կոչուի՝ Սաքի պէլ, Աղասեան փողոցը՝ Ագասիա...

Հիմա Գընալը կղզին հայ եւ թուրք միասին սիրով կ'ապրին, բայց հայերը շատ են: Թուրք ջրկիրը երբ ձիակառքով ջուր կը բերէ, հայերէն կը պօտայ՝ «Թաշտելէն ջուր էկա՛ւ»:



71 (258). ՀԱՅԵՐԸ ԵՒ ԱՅԼԱԶԳՆԵՐԸ



ոլսոյ հայերուն մեծ մասը ամառուան ամիսներուն կը սիրեն ամառանոց երթալ Իշխանաց կղզիներ: Մենք ալ Գնալը կղզի կը բարձրանանք. մեր ամառանոցի աս տունը: Հոս օդը առողջարար է, ծովը՝ մաքուր եւ մօտիկ, երբ ուզենք ծով կը մտնանք: Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին մեր փողոցին անկիւնն է: Եկեղեցիին զանգերը լսելնուս պէս՝ երկու վայրկեանէն ժամերգութեան կը հասնինք: Բացի այդ, հոս ամէն մարդ իր շրջանակը ունի, իրարու քով կու գան, միասին հաճելի ժամանակ կ'անցունեն: Օրինակ՝ Ներմինը, Ագատուհին եւ ես շատ մտերիմ ենք իրարու հետ, կրնամ ըսել, քրոջ պէս ենք, մեզ կը միանայ նաեւ մեր քովի տունին Ալիսը: Ալիսին վրայի հարկը այլազգ Օիւքրի հանըմը կ'ապրի: Օիւքրի հանըմը շատ քաղաքավար, շատ բարեկիրթ եւ ազնի տիկին մըն է: Իրարու հետ շատ մօտ ենք: Ան յաճախ վար կու գայ, միասին մանթը կը շինենք եւ կամ սարմա կը փաթթենք եւ միասին ալ կը ճաշենք: Օր կ'ըլլայ՝ ինքը ինծի վեր կը կանչէ, անուշեղէն կամ խմորեղէն մը միասին կը շինենք: Գիտե՞ս, միշտ բարի ժպիտ մը կայ անոր դեմքին վրայ: Աս Օիւքրի հանըմը շատ կը սիրէ իր պատուհանին առջեւը նստիլ եւ դուրսը դիտել: Խեղճը միակը կ'ապրի, ի՞նչ պիտի ընէ՝ երեւի կը ձանձրանայ: Բայց ինքը այնքա՛ն նրբազգաց եւ այնքան նրբամիտ է, որ երբ մենք բացօթեայ վերանտան ճաշ սեղանը դնելու պատրաստութեան կը սկսինք, ինքը կամացուկ մը իր պատուհանին առջեւէն կ'ելլայ եւ ներս կը փախի, որ վերէն մեզի դիտած չըլլայ: Ծիշտը ըսելով մենք շատ կը յարգենք եւ կը գնահատենք աս մտածելակերպը: Եւ անոր պէս շա՛տ-շատերը կան աս երկրին մէջը: Օրինակ մամայիս Եշիլքէօյի տունին վերի եւ վարի յարկերուն դրացիները, բոլո՛րն ալ այլազգ են եւ լաւ մարդիկ են: Իրարու երթալ-գալ, իրարու հետ սուրճ խմել, իրար օգնել, նոյնիսկ եթէ անոնցմէ մէկը կա-

րետր գործ մը ունենայ եւ իրենց փոքրիկին նայող չըլլայ, կը բերեն մամայիս տունը, որ հոն խաղայ՝ մինչեւ ծնողքը տուն կու գայ: Իսկ նոյն յարկին վրայ, մամայիս քովի ծաղիկներով գոցուած վերանտային տէրը շատ քաղաքավար այլազգ երիտասարդ մըն է, կինը հոլանտացի է: Օր մը կնոջ հետ բարձր խօսիլը չենք լսած: Միշտը ըսելով շատ լաւ մարդիկ են:

Իսկ մամայիս շէնքին ամենէն վարի յարկը շէնքին պահակը՝ Հասանը, կ'ապրի իր ընտանիքով: Ան պահակութիւն կ'ընէ, կ'ալէ, կը սրբէ սանդուղները, կը հետեւի վերելակին, շէնքին շուրջի պարտէզին ծառերը, ծաղիկները կը ջրէ, կը խնամէ: Աս երկրին ընդունուած սովորութեան համաձայն, ամէն առտու Հասանը պլոքնոթը եւ մատիտը ձեռքը կու գայ, շէնքին բոլոր տնօրէններուն դուռներուն զանգերը կը զարնէ, «Մերհապա» (բարեւ) տալէն ետքը կը հարցնէ. «Արդեօք բանի մը պէտք ունի՞ք»:

Մ'էկը կ'ուզէ երկու հատ հաց, միւսը՝ օրուան լրագիրը եւ այլն: Հասանը իր հեծանիով շուտ մը կ'երթայ, մօտիկ խանութներէն գնումները կ'ընէ, կը բերէ, դրամին վրադիրքն ալ ամենայն բարեխղճութեամբ ետ կը վերադարձնէ:

Իրիկուան դէմ Հասանը նորէն կու գայ, նորէն կը հարցնէ. «Բանի մը պէտք ունի՞ք»:

Հասանին տիկինը՝ Էմիլնէ հանըմը, շատ անուշիկ, փարթամ կանուցուածքով, առողջ եւ ժպտուներես կին մըն է: Ան յաճախ կու գայ մեզի օգնելու: Էմիլնէ հանըմը շա՛տ մաքրասէր եւ արագաշարժ է, բայց ամենէն կարեւորը, որ ան շա՛տ վստահելի է եւ հաւատարիմ: Ասոնք մարդկային արժանիքներ են, որոնք շա՛տ գնահատելի են:


Ինչպէ՞ս կրնաս չհարգել աս տեսակ աղուո՛ր մարդոցը: Կ'ուզեմ ըսել որ ներկայիս Թուրքիոյ մէջ հայերը եւ այլազգները իրարու հետ համերաշխ կ'ապրին:



II

ՉԱՓԱԾՈՅ

ԲԱՆԱՀԻԻՍԱՌԻԹԻՒՆ





1

ՕՐՕՐՈՑԱՅԻՆՆԵՐ

1 (259).

ՕՐՕՐ, ԻՄ ԽՈՒԾԻԿ

Օրօ՛ր, օրօ՛ր, իմ խուշիկ,
Քնացիր մշի՛կ-մշի՛կ,
Լեռներ, ձորեր ձիւն եկեր:
Իմ ձագուկիս քունն եկեր:

Օրօ՛ր, օրօ՛ր, անման,
Մայր մը չէ բերեր նման,
Խոշոր անբնակ լուսընկան
Ծաթեր է օրրանիդ վրայ:

2 (260).

ՕՐՕՐ, ՕՐՕՐ, ԻՄ ՊԱԼԱՅԻՍ

Օրօ՛ր, օրօ՛ր, իմ պալայիս,
Օրրանը՝ արծաթ, գլուխը՝ ոսկի,
Օրօր ըսեմ ու նաննի,
Իմ անուշիկիս քունը կը տանի:

3 (261).

ՕՐՕՐ, ՕՐՕՐ, ԻՄ ՈՐԴԵԱԿ

Օրօր, օրօր, իմ որդեակ,
Իմ կեանքիս միակ հրեշտակ,
Օրօ՛ր ըսեմ՝ քնանաս,
Իմ կեանքիս միակ հրեշտակ:

4 (262).

ՔՆԱՑՆԵՄ ԻՄ ԱՂԱԻՆԻՍ

— Քնացնեմ իմ աղանիս,
Մեծցնեմ սիրով սրտիս,
Կարմիր վարդի պէս բացուիս,
Շուքիդ նստիմ, օրօրիմ:
— Ես քուն չունիմ, անո՛րջ մայրիկ,
Հերի՛ք աչքս կապես, հերի՛ք,
Մէկ պահիկէն կ'ընես պաշիկ,
Զիս արձակէ, մի՛ քնացնիր:
— Ատ քու լեզուդ կ'ուտեմ հիմա,
Քու կանգունովդ կտաւ չի կայ,
Համով մէմէն առ հափափայ,
Աչուկն ըլլայ քեզ պահապան:

5 (263).

ՆՆՋԻՐ, ՄԱՆԿԻԿ ԻՄ ՍԻՐԱՍՈՒՆ

Ննջիր, մանկիկ իմ սիրասուն
Օրօր եմ ասում,
Պայծառ լուսինն է մեղմ նայում
Քո օրօրոցում:
Կը պատմեմ քեզ շատ հեքիաթներ,
Ու երգեր սիրուն,
Իսկ դու ննջիր անուշ քնով
Քո օրօրոցում:



ՄԱՆԿԱԽԱՂԱՅ ԵՐԳԵՐ

1 (264).

ԷՂՐԻԿ-ՄԵՂՐԻԿ⁴⁹

Էղրի՛կ-մեղրի՛կ,
Կաթնապուրիկ,
Բերանն ի վար՝
Ղըտը՛, ղըտը՛, ղըտը՛:

2 (265).

ՏՂՈՒ ՏԱՆ, ՏԱՆ⁵⁰

Մանչ մը ունիմ փերչեմով,
Հարս կը բերեմ քողերով,
Պապան կ'ելլայ մոմերով,
Մաման կ'ելլայ խունկերով,
Հօրը՝ խասը, մօրը՝ խասը,
Մեր տունին միակ զարդը:

3 (266).

ԱՂԶԿԱՅ ՏԱՆ, ՏԱՆ

Աղջիկ ունիմ հարսնցու,
Կտրիճ կ'ուզեմ փեսացու,
Աղջիկ ունիմ օղերով,
Հարս պիտ ընեմ մոմերով,
Կանանչ կարմիր քողերով,
Եալտուր-եուլտուր զօլերով,
Որո՞ւն տամ, որուն չի տամ,

Ամիրային տղուն տամ,
Տաս արապա ճեհիզ տամ,
Ան չօգտէ՛նէ՛ տահա տամ,
Սրմա մազին սանտր տամ,
Կլոր գլխուն ֆէս ալ տամ,
Բարակ մէջքին գօտի տամ,
Պգտիկ ոտքին մաշիկ տամ,
Հօրը՝ խասը, մօրը՝ խասը,
Ուրիշի տունին աղուոր զարդը:

4 (267).

ՏԱ՛Ն, ՏԱ՛Ն

Տա՛ն էլեր, տա՛ն, տա՛ն էլեր
Կլորիկ-մլորիկ մարն էլեր,
Սեւ-չիւկէնէ հարն էլեր,
Տոռան տէտէն է էլեր,
Աղայ-պէլ տայտայն էլեր:
Հանըմ-թէյզէն է էլեր:
(Տարբերակ)

5 (268).

ՏԱՆ ՏԻՆԻ

Տան տինի, տան տինի տաստանա,
Տանաները մտան պօստան,
Քշի՛ր պոստանճի, տանան,
Թող չուտի լահանան:

6 (269).

ՓԸՍՏԻԿԸ ՏԱՆ

Փըստիկը տան, տաններ կ'ընէ,
Հոփիկը տան, տաններ կ'ընէ,
Փըստան, փըստան, փըս տան, տան,
Պըճըլիկը տան, տաններ կ'ընէ,
Հոփիկը տան, տաններ կ'ընէ:

7 (270).

ՀՈՓՓԱԼԱ ՊԷՊԷՔ

Հոփփալա, պէպէք, հոփփալա,
Տան, տան, կ'ընէ, հոփփալա,
Իմ պզտիկս հոփփալա,
Հոփփալա, հոփփալա՛, հոփփալա՛:

8 (271).

ԾԱՓԻԿ, ԾԱՓԻԿ⁵¹

Ծափի՛կ, ծափիկ ծիրանիկ,
Կարմիր խնձոր կը նմանի,
Ոսկէ սըրմա մագերը
Հովը թել-թել կը տանի:
Որ կը տանի, թող տանի,
Պապիկի պախչան թող տանի:

9 (272).

ՍԻՐՈՒՆ, ԱՆՄԵՂ ԱՂԱԻՆԻ

Սիրուն, անմեղ աղանի,
Ծերմակ վարդի կը նմանի,
Զիւնէն ճերմակ թաթիկներ,
Կ'ուզեն ոսկի մատանի:

10 (273).

ԱՆԶՐԵԻ ԿՈՒ ՉԱՅ

Անձրեւ կու գայ, ձիւն կու գայ,
Տէրտէր պապան տուն կու գայ,
Փիլաւ կ'եփէ եղ չի կայ,
Քէլ Մարտիրոսին տեղ չի կայ:

11 (274).

ԺԻՎ-ԺԻՎ, ՄԱՏՆՈՑԻԿ⁵²

Ժիւ, ճիւ, մատնոցիկ,
Կանանչ դարդան բոնեցիճք,

Եղով, մեղրով տապկեցիճք,
Սանամայրիճ կերցուցիճք.
Թոա՛ւ, տէրտէրի պախչան
Թոա՛ւ:

12 (275).

ԾՈՐ, ԾՈՐ⁵³

Ծոր, ճոր, պար, պար
Եկուր պապան հոփփա տար,
Չէ՛, չէ՛, չէ՛մ իտար,
Քիչիկ մըն ալ մեծնայ՝ անանկ տամ:

13 (276).

ԻՄ ՄԱՆՉՈՒԿԻՍ ԱՉՈՒԿԸ

Իմ մանչուկիս աչուկը
Կը նմանի ժամուն խաչուկը:
Իմ մանչուկիս բերանը
Կը նմանի ժամուն խորանը:
Իմ մանչուկիս քիթիկը
Կը նմանի ժամուն քիթիկը:
Իմ մանչուկիս կոնակը
Կը նմանի ժամուն դոնակը:
Իմ մանչուկիս ձեռքերը
Կը նմանին ժամուն գիրքերը:

14 (277).

ԵԱՂ ԿԸ ԾԱԽԵՄ⁵⁴

Եաղ կը ծախեմ,
Պալ կը ծախեմ,
Վարպետս մեռաւ,
Ես կը ծախեմ:
Եաղ կ'ուզե՞ս,
Պալ կ'ուզե՞ս,
- Կ'ուզե՛մ,
- Ա՛ն. կե՛ր:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1 (278).

ՄԷԿ, ԵՐԿՈՒ

ՄԷԿ, երկու՝ երկննաս,
Երեք, չորս՝ չորնաս,
Հինգ, վեց՝ վերնաս,
Եօթը, ութը՝ ո՞ւր կերթաս,
Ինը, տասը՝ ժամ կ'երթամ,
Տասնմեկին՝ տուն կու գամ,
Փիլիճներու եմ կու տամ:
Ես ալ կ'ուտեմ՝ կը պտուկիմ,
Առտուն կ'ելլամ՝ կը հագնիմ:

2 (279).

ՍԱՏԱՆԱՅ, ՊՈՒՏԱՆԱՅ⁵⁵

Սատանայ, պուտանայ,
Ոտքիդ տակը բան մը կայ,
Թէ որ գտնաս.
Կէսը՝ քեզի, կէսը՝ ինձի:

3 (280).

ԱՂՋԻԿ ՄԸՆ ԵՄ ԳԵՂԱԴԷՄ

Աղջիկ մըն եմ գեղադեմ,
Կարդալ, գրել չգիտեմ,
Գիտցածներս ձեզ քսեմ՝
Կ'ուտեմ, կը խմեմ, կը խաղամ,
Մշի՛կ-մշի՛կ կը քնանամ:

4 (281).

ԿԼՈՐԻԿ-ԹՕՄՊՈՒԼԻԿ

Կլորիկ-թօմպուլիկ,
Հասակս՝ մինիմիկ,
Աչուկներս՝ սետուլիկ,
Ո՞վ կայ ինձի պէս անուշիկ,
Չկա՛յ, չկա՛յ, չկա՛յ:

5 (282).

ԾԸՍՏԸԼԻԿ ԵՄ

Ծըստըլիկ եմ, պզտիկ եմ,
Ծամբայ չիտեմ, ո՞ւր երթամ.
Լոկ-մնջիկ
Մանկապարտեզ ես կ'երթամ:

6 (283).

ԵՐԲ ՈՐ ՄԵԾՆԱՄ

Երբ որ մեծնամ ես,
Ունենամ պեխեր,
Պիտի ըլլամ ես
Ջինուոր անվեհեր:

Հրացանն ուսիս,
Մէջքս սուր կապած՝
Պիտի դառնամ ես
Ջինուոր անկասկած:

7 (284).

ՀԱՅ ԵՄ ԵՍ

Հայ եմ ես՝ զարմէն Հայկազուն,
Կը խօսիմ Հայկին, Արամին լեզուն,
Չունիմ թագ, ոսկի, գահ եւ ադամանդ,
Սիրտս հարուստ է, պարկեշտ մանաւանդ:

8 (285).

ՀԱՅ ԵՄ ԵՍ

Հայ եմ ես,
Քաջ եմ ես,
Քաջ Վարդանին
Թոռն եմ ես:

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

1 (286).
ՈՂՋՈՅՆ ՏԱԺԱՐ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ⁵⁶

Ողջո՛յն, տաճար իմաստութեան,
Ո՛վ սիրելի մեր վարժարան,
Որ ուսուցիր մեզի սիրելի
Օրէնքը սուրբ աշխատութեան:

Աշխատողին չկայ զրկանք,
Իրն են ամեն փառք ու բերկրանք:
Օրհնեալ ըլլաս մեր վարժարան,
Ապրիս յաւէտ դու անսասան:

2 (287).
ՍԱՀԱԿԵԱՆ ՍԱՆ

Սահակեան սան բարեբաստիկ,
Մէկ սիրտ հոգի՝ մեծ ու պզտիկ,
Ազնի բարքով, բարի վարքով,
Քոյր եղբայր ենք մենք քովէ քով:

Պատիւ անոնց որ անձնուէր,
Կրթութեան ջանք չեն խնայեր,
Պատիւ-պատիւ անոնց յաւէտ,
Կ՛ոխտենք ըլլալ երախտագէտ:

Սահակեան սան, տոհմին համար,
Պէտք է ըլլալ զաւակ տիպար.

Միշտ ժրագան, յառաջադէմ՝
Նշանաբանն է մեր վսեմ:

3 (288).
ԿԵԱՆՔԸ ԼՈՅՍ Է ՈՒ ԲԱՐԻ

Կեանքը լոյս է ու բարի.
Երբ օր մը այն խաւարի,
Մի՛ կարծեր, որ այս կեանքի
Ջահն է որ պիտի մարի:

Կեանքդ լոյս է ու արեւ,
Դուն կ՛ապրիս անոր ներքեւ.
Օր կ՛ըլլայ որ սեւ ամպեր
Կ՛անցնին գլխուդ վրայէն:

4 (289).
ԿԱՄՔ, ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ԿՈՐՈՎ

Կամք, աշխատանք եւ կորով,
Երեք ձիրքեր են, որոնք
Մարդ հողի վրայ թէ ջրի,
Անպայման կը յաջողի:



ՄԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ

1 (290).

ՏԱԼՂԱ, ՏԱԼՂԱ ԿՂՆԷ ՊՈԼԻՍԱՅ ԾՈՎԸ

Տալղա, տալղա կ'ընէ Պոլիսայ ծովը,
Ի՛նչ անուշ կը փչէ սեւտային հովը,
Տէրը նասիպ ընէր՝ էրթայի քովը,
Առնէի մուրաստս՝ իյնայի ծովը:

2 (291).

ՀԱՆԱ, ՀԱՆԱ, ՀԱՆԱ

Հանա, հանա, հանա,
Ծամթել հանա ծովերուն,
Լողուորդ, Աստուծո՛յ սիրուն,
Զիմ Ծամթել հանա ծովերուն:

3 (292).

ՔԷԾՔԷ ԼԵՌԸ ՁԷԼԼԱՅԻ

Քէշքէ լեռը չէլլայի,
Քեզի տեսած չըլլայի,
Քեզի տեսայ՝ վառեցայ,
Հաց ու ջուրը էս մոռցայ:

4 (293).

ՕՎԱ ԻՅԱՄ, ԾԱՂԻԿ ՔԱՂԵՄ

Օվա իյամ, ծաղիկ քաղեմ,
Ծաղիկ քաղեմ, փունջ կապեմ,
Փունջը բերեմ, ձեռքդ դնեմ.
Գողտուկ սը ձեռքդ շոյեմ:

5 (294).

ԱՆՈՒՆԸ ՊԱՅԾԱՌ

Անունը Պայծառ,
Աչքընին վառ վառ,
Ինքընին կամար.
Պոյ պոսը չիմար:

6 (295).

ՄԵՇՔԸ ԲԱՐԱԿ

Մեշքը բարակ,
Ինքընին կամար,
Աչքընին նուշ նուշ,
Անունը Անուշ:

7 (296).

ԿՅԱՐՄԷՐ ՖԸՍՏԱՆ ՀԱԳՈՒԾ Ի՞՞

Կյարմէր ֆրստան հագուծ ի,
Հալա, հալա, հալա, Նիմոյ ի,
Չուց այ աղուիր վիլլուծ ի,
Հալա, հալա, հալա, Նիմոյ ի:

8 (297).

ԿԱՔՈՒՎՆԷՆ Կ՝ՈՒՐԹՈՒՆ ԱՅԼՈՒՐ

Կաքուվնէն կ'ուրթուն այլուր,
Հալա, հալա, հալա, Նիմոյ ի,
Դիղձը կու քաղին տալում,
Հալա, հալա, հալա, Նիմոյ ի:

9 (298).

ԱՇԿԷՅՆ ԱՆՈՒՆԻԴ ՇՈՒՇԱՆ

Աշկէյն անունիդ Շուշան,
Հալա, հալա, հալա, Նիմոյ ի,
Մատնիքս տամ քեզ նշան,
Հալա, հալա, հալա, Նիմոյ ի:

10 (299).

ՇՈՒՇԱՆԸ ԶՈՒՐԸ ԳՆԱՅ

Շուշանը ջուրը գնաց,
Հալա, հալա, հալա, նիճոյ ի,
Մատանիս մատը մնաց,
Հալա, հալա, հալա, նիճոյ ի:

11 (300).

ՏՂԱՅ ԱՆՈՒՆԴ ԽՈՐԷՆ

Տղայ անունդ խորէն,
Հալա, հալա, հալա, նիճոյ ի,
Ձայնդ կու գայ ախոռէն,
Հալա, հալա, հալա, նիճոյ ի:

12 (301).

ՆԻՆՈՅ, ԵԱԻՐԸՄ, ՆԻՆՈՅ Ի

Նիճոյ, եաւրքմ, նիճոյ ի,
Հալա, հալա, հալա, նիճոյ ի,
Աչընիճ ծիրիրուծ ի,
Հալա, հալա, հալա, նիճոյ ի:

13 (302).

ՀԻԼԻԼԷՆ ԶԱՌՔՆ ԱՌՈՒԾ Ի

Հիլիլէն ձառքն առուծ ի,
Հալա, հալա, հալա, նիճոյ ի,
Պըր նիշանուիմ ասուծ ի,
Հալա, հալա, հալա, նիճոյ ի:

14 (303).

ՆՈՒՇԻՆ ԾԱՌԸ ԾԱՂԿԵՐ Է

Նուշին ծառը ծաղկեր է,
Եարս տակը պատկեր է,
Նուշին ծառը նուշ կ'ըլլայ,
Համբոյր մը տաս՝ ի՞նչ կ'ըլլայ,
Թէ տալու ես՝ հիմա տուր,
Վաղը մնայ՝ ուշ կ'ըլլայ:

15 (304).

Ա՛Յ, ՆՈՒՊԱ՛Ր, ՆՈՒՊԱ՛Ր, ՆՈՒՊԱ՛Ր

Ա՛յ, նուպար, նուպար, նուպար,
Նուպար էլաւ սար կ'էրթայ,
Սասնոյ սարեր քար ու վար:

16 (305).

ՀԱ՛Մ ԽՈՐՈՏԻԿ, ՀԱ՛Մ ՍԻՐՈՒՆ

Հա՛մ խորոտիկ, հա՛մ սիրուն,
Հարիւր էրնակ քու տիրուն,
Պագ մը տուր ինձ քու խերուն:

17 (306).

ԼՈՒՍՆԱԿ ԷԼԱԻ՛ ԿԸ ԼՈՂԱՅ

Լուսնակ էլաւ՝ կը լողայ,
Անձրեւ կ'իգայ՝ կը ցողայ,
Ազապ աղջիկ կը դողայ,
Զուր կը խմայ, պուկ կը շողայ:

18 (307).

ԱԼ ԱՅԼՈՒՂՍ

Աղջիկ —
Այ այլուդս կորաւ ձեր դուռը,
Սրտէս դուրս չի գայ մըմուռը,
Բախտը ինձ ձգեց աս կուռը,
Սիրու՛ն տղայ, տուր այլուդս:

Տղայ —

Քո այլուդը ես չգտայ,
Երդում եմ՝ հոգիս վկայ,
Ով գտեր է, թող բերի տայ,
Սիրու՛ն աղջիկ, քո այլուդը:

Աղջիկ —

Այլուդս եարի բաշխած էր,
Այլ ապըրշումով նախշած էր,
Պատկերս վրան քաշած էր,
Սիրու՛ն տղայ, տուր այլուդս:

Տղայ —

Սեւու՛կ աղջիկ, ճերմակ հագիր,
Առ այլուդդ՝ վերքս կապիր,
Սիրուդ գերի, ինձ մի՛ տանջիր,
Էրուա՛ծ աղջիկ, առ այլուդդ:

19 (308).

ՄԵՐ ՏՈՒՆՆ Է ՁԵՐ ՏԱՆ ԴԻՄԱՑ

Մեր տունն է ձեր տան դիմաց,
Քեզ կ'ըսեմ կամաց-կամաց՝
Հին օրերուն դրացին,
Ես քեզ շատո՛ւնց սիրեցի:

Հարսն է պակաս իմ տունէս,
Սրտիս սիրածը դու՛ն ես,
Ես՝ աղքատ, դուն՝ աղքատիկ,
Տուն կ'ընենք քըշիկ-քըշիկ:

Էրթանք ծերուկ տէրտէրին,
Օրհնէ պսակը մերին,
Ես՝ աղքատ, դուն՝ աղքատիկ,
Տուն կ'ընենք քըշիկ-քըշիկ:

20 (309).

ԵԱՐ ՄԸ ՈՒՆԻՄ

Պատէն կախուած իմ ջութակս ինկաւ փշրուեց,
Վերջին անգամ այրած սրտիս արձագանգ տուեց.

Ա՛խ իմ անուշ եար, ինչո՞ւ հեռացար,
Ինչո՞ւ զիս թողիր, թողիր մոռացար:

Եար մը ունիմ չիմար պօլը, տեսքով աննման,
Սիրուններուն թագուհին է, սիրուն անսահման,
Ա՛խ իմ անուշ եար, ինչո՞ւ հեռացար,
Ինչո՞ւ զիս թողիր, թողիր մոռացար:

Երբ հեռացար դու ինձանից, հոգիս խաւարեց,
Կանաչագարդ պարտէզումս վարդը թառամեց,
Ա՛խ իմ անուշ եար, ինչո՞ւ հեռացար,
Ինչո՞ւ զիս թողիր, թողիր մոռացար:

Տաս եար ունիմ՝ տասն ալ աննման
Մէկը՝ Պոլիս, չորսը՝ Փարիզ, հինգն ալ՝ Երեւան,
Ա՛խ, տուէք թեւեր, թեւեր որ թռչիմ,
Հայրենիք երթամ, կարօտս առնիմ:

21 (310).

ՎԱՐԴ ՔԱՂԵԼԷՆ

Վարդ քաղելէն կու գաս, եա՛ր,
Ձեռքդ է մտեր փուշը չար,
Վարդի փուշէն չար էիր,
Հիմա լման մարդ եղար:

Ա՛խ իմ եա՛ր, սիրուն եա՛ր,
Արեւին տակ մի՛ կենար,
Թէ որ երեսդ սեւնայ,
Իմ սիրտը չի դիմանար:

Հեռու տեղ եր մի՛ երթար,
Կը կորիս՝ մեծ է աշխարհ,
Յետոյ ես քեզ գտնողին,
Աշխարհը տամ՝ ետ չի տար:

Թոմբրին ծովը նետեմ, եա՛ր,
Թասը էլել չի լեճար,
Հոգիս դրախտ ալ էրթայ,
Քեզմէ աղուորը չեմ գտնար:

Ա՛խ իմ եա՛ր, սիրուն եա՛ր,
Արեւին տակ մի՛ կենար,
Թէ որ երեսդ սեւնայ,
Իմ սիրտը չի դիմանար:

22 (311).

ՍԻՐՏՍ ԿԸ ԹՌԻԻ

Սիրտս կը թռի՝ ջաղցի քարին պէս,
Արինս կը փշրուի՝ ջաղցի ալիւրին պէս,
Երբ պիտի լուսնայ՝ գիշեր դարին պէս,
Տեսնէի նրան՝ խաչի լոյսին պէս:

Տեսնեմ կ'ըսէի՝ ձեռքիս վարդը ա՛ն,
Վարդը որ չառնէ՝ մազս քաշեմ տամ,
Մազս որ չառնէ՝ սիրտս պոկեմ տամ,
Ան ալ որ չառնէ՝ հոգիս հանեմ տամ:

23 (312).

ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏ

Ահա մօտեցան մահուան ժամերս,
Ալ չեմ դիմանար բոլոր ցաւերս,
Կը գատուիմ ձեզմէ, սիրուն ծաղիկներ,
Բայց դադրում չունիմ իմ սեւ աշուկներ:

Սուրբ գերեզմանիս երբ որ մօտենաս,
Չըլլայ որ երբէք սոսկում մը զգաս,
Քաղցր ժպիտով երբ անունս տաս,
Իմ մատղաշ մարմին անուանես՝ մատաղ:

Գերեզմանիս հողին վրայ
Թափէ՛ արցունք, իմ մայրի՛կ,
Թափէ՛ արցունք, ցանէ ծաղիկ
Երիտասարդ եմ, մայրի՛կ:

Ըլլայի, թոչուն մ'ըլլայի,
Թոչէի՛ քովդ գայի,
Չեմ դիմանար քու կարօտիդ
Ասոր ճարը գտնայի:



ՊԱՆԻԽՏՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ

1 (313).

ԿԱՆՉԷ՛, ԿՌՈ՛ՒՆԿ

Կանչէ՛, կոո՛ւնկ, կանչէ՛, քանի գարուն է,
Ղարիպներուն սիրտը գունտ-գունտ արուն է,
Կոունկ ճան, կոունկ ճան, գարուն է,
Ա՛խ, սիրտս արուն է:

Կանչէ՛, կոո՛ւնկ, կանչէ՛, գարին արօտ է,
Աշխարհն է արեգակ, սիրտս կարօտ է,
Կոունկ ճան, կոունկ ճան, արօտ է,
Ա՛խ, սիրտս կարօտ է:

Կանչէ՛, կոո՛ւնկ, կանչէ՛, քանի արուն է,
Աշնան կ'երթաս երկիր, եարիս բարեւ ըրէ,
Կոունկ ճան, կոունկ ճան, արուն է,
Ա՛խ, եարիս բարեւ ըրէ:

2 (314).

ՀԱՄԲԵՐԷ՛, ՀՈԳԻ՛Ս, ՀԱՄԲԵՐԷ՛

Օտարութիւն այսքան տարով,
Կու լամ կարօտով, կարօտով,
Մեր խնդիրը լուծուի շուտով,
Համբերէ՛, հոգի՛ս, համբերէ՛:

Հեռացեր եմ Հայրենիքէս,
Բաժանուեր եմ ընտանիքէս,

Հարկաւ օր մը պիտ' միանանք,
Համբերէ՛, հոգի՛ս, համբերէ՛:

3 (315).

ԵՐԵՒԱՆ ԵՐԹԱԼՈՒ ԵՄ

Երեւան երթալու եմ,
Քերական կարդալու եմ,
Ես ինչ ընեմ քերական,
Երբ եարս է ուսումնական:

4 (316).

ԵՐԵՒԱՆ ԵՐԹԱԼՈՒ ԵՄ

Երեւան երթալու եմ,
Քերական կարդալու եմ,
Ես ինչ ընեմ օտար աշխարհ
Ահա կ'երթամ Հայաստան:





ԾԻՍԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Ա. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

1 (317).

ՔԱՐԻԱՆ Մ'ԷԼԱԻ ՀԱԼՊՈՒ ՔԱՂՔԷՆ

Քարեան մ'էլաւ Հալպու քաղքէն,
 Ծամամօ ճան, հայ, հայ, տօ մամօ,
 Մըք քարուանին ջորի մը կէր, ջորի մը կէր,
 Ծամամօ ճան, հայ, հայ, տօ մամօ՛,
 Վըր ջորնիկան բեռնիկ մը կէր,
 Ծամամօ ճան, հայ, հայ, տօ մամօ,
 Մըք բեռնիկան խութօ մը կէր,
 Ծամամօ ճան, հայ, հայ, տօ մամօ,
 Մըք խութիկան ախշիկ ըմ կէր,
 Ծամամօ ճան, հայ, հայ, տօ մամօ,
 Ախշկան անուն Ծուշան խաթուն,
 Ծամամօ ճան, հայ, հայ, տօ մամօ,
 Բռնինք ուր թեւ, տանինք մըր տուն,
 Ծամամօ ճան, հայ, հայ, տօ մամօ,
 Դնինք ուրին՝ սեր ու մածուն,
 Ծամամօ ճան, հայ, հայ, տօ մամօ:

2 (318).

ԱԽՉԻԿՆ ԱԼ ԿԸ ՏԱՆԻՆ

Ախշիկն ալ կը տանին լալով, ողբալով,
 Մազերն ալ կը սանրեն արծաթէ սանրով,

Գլուխն ալ կը կապեն պիւպիւլի շալով,
 Մի՛ լար, աղուո՛ր աղջիկ, աչք-ունքդ կ'արուի,
 Քեզ պզտիկ կարգողին տնակն արուի:

3 (319).

ԱՅՍՕՐ ԱԽՉԻԿ ՄԸ ՀԱՐՍ Կ'ԸԼԼԱՅ

Այսօր ախշիկ մը հարս կ'ըլլայ,
 Ախշիկը դարիպ հարս կ'ըլլայ,
 Հարսնցուն շնորհատր ըլլայ,
 Լեզուն անուշ թող ըլլայ,
 Օտքը ուղուղը ըլլայ,
 Վարդուհենց տունը շէն մնայ:

4 (320).

ԶԱՌ ՄԱՆՈՒՇԱԿ ՊԱՂԻ ՄԷՋ

Զառ մանուշակ պաղի մէջ,
 Պահուրտեր է թաղի մէջ,
 Լուսաբացին կը ծաղկի,
 Հովի, շողի, շաղի մէջ:

5 (321).

ԵՐԱՆԻ ՔԵՋ, Ա՛Յ ԱԽՉԻԿ

Երանի քեզ, ա՛յ ախշիկ,
 Ոսկիդ ծալէ ծալ ախշիկ,
 Դուն մեր տանը հարսնցու,
 Ես քեզ համար՝ տալ, ախշի՛կ:

6 (322).

ՀԱՅՍ ՈՒ ՓԵՍԱՆ ԿԱՅԵԸՑՈՒՑԻՆ

Է՛ծերը պայիը էլան,
 Զօպան տղան հետը չկայ,
 Հայս ու փեսան կայնըցուցին,
 Կնքահայր հետը չկայ:

7 (323).

ՖԷՍԴ ՓԱՌԼԱՄԻՇ Կ'ԸԼԼԱՅ

Ֆէսդ փառլամիշ կ'ըլլայ,
Փիւսկիւղ եայրմիշ կ'ըլլայ,
Ջոքանչ-մեյդ կը տեսնայ,
Սիլտը պայքըմիշ կ'ըլլայ:

8 (324).

ԱԽՉԻԿՍ՝ ԱԽՉԻԿ ՉԼՄԱՆԻՐ

Ախչիկս՝ ախչիկ չլմանիր,
Դեղնած դդում կը լմանի,
Փեսացուս՝ վեյլէն կու գայ,
Աղա- փաշա կը լմանի:

9 (325).

ՍԷՅԿԷՆ ՆՈՒԷՐ ԷՆԵՆԻ

Սեյկէն նուէր էնենի,
Հաւս կերար, խնամի՛,
Օր ախչիկս չատնես նէ,
Օյիս կ'էնեմ խնամի՛:

10 (326).

ԷԼԻՆ ՏՂԱՆ ԵԱՅ Կ'ԸԼԼԱՅ

Թաց պաստեղը չոյ կ'ըլլայ,
Էլիս տղան եայ կ'ըլլայ,
Արապը դուպեթ կ'երթայ,
Աս չաղս չկայ կ'ըլլայ:

11 (327).

ԱՍՄԱՅԻՆ ԾԱՌԸ ԿՈՒՋ Է

Ասմայիս ծառը կուգ է,
Ախչի՛կ, ճէպիս ունկուգ է,

Էլիր սինիդ դիր, ախչի՛կ,
Միտէս հաց-պանիր կ'ուգէ:

12 (328).

ԽՆԱՄԻ՛, ԽՕԾ ԵՍ ԷԿԵՐ

Խնամի՛, խօշ ես էկեր,
Թեւիդ տակը պօշ ես էկեր,
Փեթած խորոզմ՝ ես բերեր,
Ան ալ ճամբան ես կերեր:

13 (329).

ՏԷՐ ՊԱՊԱՆ ՊՍԱԿ Կ'ԸՆԷ

Տէր պապան պսակ կ'ընէ,
Կնքահայրը խաչ կը բռնէ,
Քոյր հանըմը թիւ կը կապէ,
Ով որ կ'ուգէ հարսնիքի գայ,
Ժամը հինգին թող ելլայ գայ:

14 (330).

ԱՌԵԱԼ ԶԵՌՆ ԵՒԱՅԻ

Առեալ ձեռն Եւայի,
Շիմտի պուտունուգ պէլայի,
Պօլ-պօլ եյիս հելվայի:

Առեալ ձեռն Եւայի,
Հիմա գտաք փորձանքնիդ,
Առատ կ'ուտէք հելվայից:

15 (331).

ՆՇԱՆԱԾՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Փարչը ձեռքիս աղբուր գացի,
Ջուր բերելու աղբուր գացի,
Եկայ, տեսայ աղբուրի մօտ
Նշանածս էր կայնած:
Բէնկ տուի, բէնկ առի,
Թուքս բեյանս չոյցաւ,
Էս մնացի շուարած:

Անի ոյ ինծի տեսաւ
Աշխարհը իրեն էղաւ,
Քանի մը ատըմ ըրաւ,
Մօտս էկաւ ու ըսաւ:

«Էկօ՛՛ն, էկօ՛՛ն, մ'ամչնա՛ր,
Էկօյ աչուրնիդ տեսնամ,
Կարօտս առնեմ, տուն իյամ»:

Էյեսս նեյեց կարմրած
Քիթի տակէն ա խնդաց.
«Ծո՛, աղուո՛ր էս էղեր դուն,

Էկօյ, տանիմ քեզ մեյ տուն,
Ֆրնտուխ, չամիչ կեյցնեմ,
Գիյկս առնեմ ու պագնեմ»:

Օյ ատի չլսեցի՝
Հոնգուր հոնգուր պը լայի,
Զօտով ինծի գսպեցի,
Փարչս առի, տուն գացի:

Տուն հասայ, չհասայ,
Փարչս դրի մութֆախը,
Էս ա էլայ չայտախը,
Անի մեր դոնով կ'անցնէր,
Չայտախի դին կը նայէր:

Էկաւ, անցաւ մեր դոնով,
Վեր նեյեցաւ ժպտալով,
Էս ա իրեն ժպտացի,
Հաւատարիմ մնացի:

Էկան անցան օրերը,
Հասաւ հայսնիքի օրը,
Եօթը օր, եօթը գիշեր
Տառով գոռնան կը փչէր,
Կեր ու խումն ա ըսելիք չունէր:

16 (332).
ՀԱՐՍԻ ՄՕՐ ԽՐԱՏԸ

Ախշի՛կ, օյ դուն հայս իյաս.
Պապուդ տունը պը մոռնաս,
Մօրդ օյ շատ կարօտնաս,
Պագը պագը կ'եյվընաս:

Կեսուրիդ «մամօ» կ'ըսես,
Խօսքը՝ էյկու պը չընես,
Կեսարիդ խէյֆէն պ'էփես,
Ծիկարան ա պը վատես:

Տեյգըտոցդ պը յայգես,
Տալերուդ ա պը պատուես,
Օլուխ-չօճուխին հետ ա
Անուշ լեգուով պը գրուցես:

Տեյգորդ կնկան չվստահես,
Սըրըդ փորդ կը պահես,
Օյ լուն տեվէ չդայձնէ,
Քեզի ա չբամբասէ:

Աղօթըրանը չճեյմկած
Եաթախէն կը վեյ կելլաս,
Էրեսվընիդ կը վլաս,
Մագերդ ա կը սայես:

Գոկնոցը էոչիդ կապած,
Աւելը ձեռքդ բոնած,
Ավլուն կ'իշնաս ու կ'ալես,
Ծառ-ծաղկունքը կը ջրես,
Հաւ-ձագերուն կուտ կու տաս:

Էյկանդ ճամբու կը դնես,
Տունը կ'ալես, կը սյբես,
Թէմիզ, փակ կը նստես,
Կայ-կայկտուրդ կ'ընես:

Ըսածներս օյ լսես,
Անկրքիդ ա օղ ըմես,
Գացած տեղդ կը վայլես,
Ախշկայ պէս կը սիջվես:

17 (333).

ՀԱՐՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Թիւր էրեսիս,
Այցունքը աչքիս,
Էս մօրս պագի,
«Մնաս բարով» ըսի:

Խեղճ մերս լալէն,
Ինծի պինդ գրկէց,
Ճակատս պագաւ,
Անկրգիս ըսաւ:

«Խոնարհ իյար,
Խոնարհ ա մնայ,
Օյ մերիկդ
Պայգերես դույս գայ:

Էրթաս բարով, ախշի՛կս,
Իմ առչնէկ զաւակս,
Տէյտ ու ցաւ չտեսնաս,
Օտտ ապչես, շատ ա խնդաս»:

Էս պապուս շեմէն
Ծիվս դույս դի,
Աշխարհը մթնէց,
Սիյտս սխմվէց:

Այցունքը էլէր,
Ինծի կը խըղղէր
Ջուռնայի ձեւը
Աշխարհ կը բռնէր:

18 (334).

ԿԵՍՈՒՐԻ ԴԻՄԱԽՈՐԵԼԸ

Հայսնու՛կ, դու բարով էկար,
Ձեռքդ վայդերով էկար,
Խնդում էրեսով էկար,
Կաքաւի պէս ներս մտար:

Ոտքդ թո խէրով ըլլայ,
Ձեռքդ շնորհքով ըլլայ,
Արեղ թո շատ ըլլայ,
Սիյտդ ա ուրախ ըլլայ:

Էյկանդ ծաղկի պէս պահես,
Տունը-տեղը ծաղկեցնես,
Մենծերուն խօսքը լսես,
Գլխուս վրայ տեղ ունես:

19 (335).

ԽՆԱՄԱԿԱՆՁԸ

Խնամուս տուն բերի,
Եօթը պոյտին կանչեցի,
Մագին, հոյթը մոյթեցինք,
Տօլմա, եահնի էփեցինք:

Չամիչով փիլլա ըրի,
Սեւ սալորը տապկեցի,
Մեծ թապախի մէջ դրի,
Գատան միսով հրամցուցի:

Եօթ տարուայ գինին բէյի,
Մէկ-մէկ թասերը լեցուցի,
Կուշտ-կուշտ կերանք, խմեցինք,
Իրար թթու խօսք չըսինք:

Ոտքի էլան օյ էյթան,
Հետեյնին չէրէգ դրի,
Պօխչա ըրի, կապեցի,
Մինչեւ դուռը ճամբեցի.

— Խնամի՛, բարով էթաս,
Մէյ տան ճամբան չմոռնաս,
Էթալ-գալը օյ ըլլայ՝
Սիյտերը մօտիկ կ'ըլլան:
Խնամի՛, խնամի՛,
Ախչկաս քեզի տուի,
Ոտքդ պագնեմ, խնամի՛,
Խոյթ աշքերով մը՝ նայի,
Օյ սըյտիկը չկոյտի,
Հոգին ա չպղտոյուի.
Դուն ա ախչկայ տէյ էս,
Ախչկայ խաթրը գիտես.
Պազը մէյ դին կը դյկես,
Օյ կարօտս էս առնեմ,
Ահուզարը չքաշեմ:

Բ. ՏՕՆԱԿԱԼՆ ԵՐԳԵՐ

ա. ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԿԱՂԱՆԴԻ ԵՐԳԵՐ

1 (336).

Ս. ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳ

Ջընգըր-գընգըր ձիւն կի գայ,
Էլի, աշի վո՞վ կի գայ,
Էրկու ձիաւոր կի գայ,
Մէկը՝ Յիսուս Բրիստոս,
Աղբօր անուն՝ Կիրակոս:

2 (337).

ԽԹՈՒՄԻ ԵՐԳ⁵⁸

Էլայ գացի սարը,
Կովեր թօփուան,
Էւաւը կթուց,
Քրիստոս անցով
Խաչակնքուց՝
Մէյրէմ Անամը
Թանապուրը մակրդուց:

3 (338).

ԿԱՂԱՆԴԻ ԵՐԳ⁵⁹

Տոտիկ-տոտիկ՝ տաւցիր,
Էլիր գարունը խաղցիր,
Ոտաց տակը փուշ է,
Ոտաց վրայ նուշ է:

4 (339).

Ի՛նչ ԱՂՈՒՈՐ Է ԱՅՍ ԻՐԻԿՈՒՆ

Ի՛նչ աղուոր է այս իրիկուն,
Վառենք մոմեր գոյնգոյն,
Նոր Տարին է հիր եկեր,
Կանաչ ծառեր է բերեր:

Ուրախութիւն ամէն դին,
Թաղը բոլոր կը ժպտին,
Ըէնչող երգեր ու նուագ
Պարենք, երգենք շարունակ:

Ո՞ւր ես հայրի՛կ, ո՞ւր ես դուն,
Աճապարէ՛, տուն եկուր,
Տես պատրաստ է մեր սեղան,
Բարիքները կը տեղան:

Իայց դուն չի կաս, հայր բարի,
Ընորհք չունի նոր Տարին,
Առանց քեզի կաղանդէք
Չունինք, հայրի՛կ, լաւ գիտես:

Մէկ մ'ալ դուռը կը զարնեն,
Բոլոր սիրտեր թունդ կ'ելլեն,
— Հայտէ՛, տղա՛ք, խանդավառ,
Ամէնքս մէկ իջնանք վար:

— Բարի՛ եկար, հայրի՛կ ճան,
Միշտ անձնուէր, ժրաջան,
Արի մեր շէներ ու տուն,
Կաղանդդ ալ բերիք տուն:

Ընտանեկան սեղանին
Ծուրջբոլորը խմբովին,
Մեծ ու պզտիկ քովէ քով,
Տօնենք Կաղանդ հաճոյքով:

Համբոյր՝ անուշ մայրիկին,
Համբոյր՝ անուշ հայրիկին,
Համբոյր մըն ալ քոյր եղբայր,
Ամէնքս համբուրենք զիրար:

5 (340).

ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ ԿԸ ԲԵՐԷ՛

— Ջարօ՛ աղա, ինձի նայէ,
Էկող Ծաբաթ Կաղանդ ալ է,
Պէտք եղածը ըսեմ տէ քեզ,
Մէկիկ-մէկիկ դուն ալ գրէ:

— Ջարար չունի քի, աղա՛ս,
Կը բերէ Կաղանդ պապան
Ֆըստըխ, քիշմիշ՝ տօլմային,
Աղուոր հագուստ ու կօշիկ:

Սիրուն քուրա-պէպէքներ,
Փայլուն ուլունք մուճակներ,
Կաղանդ գիշեր միանանք,
Ուտենք, խմենք ու խնդանք:

բ. ՋԱՏԻԿԻ ԵՒ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԵՐԳԵՐ

6 (341).

ՋԱՏԻԿԸ ԵԿԱՒ ԾԱՏ ՈՒՐԱԽԱԼԻ

Ջատիկը եկաւ շատ ուրախալի,
Բերաւ հաւկիթներ կողովներով լի,
Կարկանդակներն ալ սիրուն եւ համով
Կը պատրաստէ մեր մայրիկը սիրով:

Նոր հագուստ կօշիկ բերէ մեզ Ջատիկ՝
Ուրախացնելով մեզմէ շատ փոքրիկ,
Եւ անոր համար Ջատիկը սիրենք,
Եւ մերին քնքոյշ բերանով կոչենք.
— Քրիստոս յարեալ ի մենելոց,
Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի:

7 (342).

ԲԱԼ ՆԻՍԸ ԵՐԿՆԻՑ ԻՋԱԻ

Բալնիսը երկնից իջաւ,
Մեր տունը արեւով լեցուաւ,
Մեր հացն է Հայր Աբրահամու հաց,
Մեր ջուրն է Աստուածամօր կաթ:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

8 (343).

ԾՈՎԸ ՔԵՉ ԳԻՆԻ

Ծովը քեզ գինի, նար քեզ գաւաթ ըլլայ,
Դուն լից, դուն խմէ, Աստուած քեզ կու տայ,
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

9 (344).

ԵՐԿՈՒ ԱՂԲԻՒՐ ՄՕՏ ՄՕՏԻ

Երկու աղբիւր մօտ մօտի՛
Ջուր խմեցի յագեցայ,
Քեզ ծնող մայրիկը
Ինձի ըլլայ կեսուր մայր:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

10 (345).

ԴԻՄԱՑԷՆ ԿՈՒ ԳԱՅ ՄԷԿ ԶԻԱԻՈՐ

Դիմացէն կու գայ մէկ ձիաւոր,
Պոյր-պուսը՝ փառաւոր,
Երկու օր է չէի տեսած,
Կը նմանի հայ թագաւոր:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

11 (346).

ՄԱՏՆԻ Մ՝ՈՒՆԻՄ՝ ՄԱԻԻ Է

Մատնի մ՛ունիմ՝ մաւի է,
Տակը վրան՝ խալի է,
Հիմակուայ ախշիկներուն
Խելքը միտքը խաղի է:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

12 (347).

ՏՈՊՐԱԿԻՆ ՄԷՉ ԱԼԻԻՐ ՌԻՆԻՄ

Տոպրակին մէջ ալիւր ունիմ,
Աստուծմէն յոյս ունիմ,
Ատ եարը իմս ըլլայ՝
Սուրբերուն մոմեր ունիմ:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

13 (348).

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ ԳԱԼԻՍ Է

Համբարձումը գալիս է,
Ծաղիկը ցնծալիս է,
Ա՛յ վիճակ երգող ախշիկ,
Զայնդ ծլուլալիս է:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

14 (349).

ԾԱՂԻԿ ԷՐ ՀՈՏՈՎ-ՄՈՏՈՎ

Ծաղիկ էր հոտով-մոտով,
Եկաւ անցաւ իմ մօտով,
Աչքս տեսաւ ու սիրեցի,
Ես կարօտով մնացի:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

15 (350).

ԾԻՐԱՆ ԵՄ ԾԱՌԻ ԾԷՐԻՆ

Ծիրան եմ ծառի ծէրին,
Կ՛երերամ հետ ճիւղ երին,
Եկան, քաղեցին տարան՝
Ծախեցին տխմարներին:

Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

16 (351).

ԿԱՆԱԶ-ԿԱՆԱԶ ԿԱՆՉԵՑԷՔ

Կանաչ-կանաչ կանչեցէք,
Կանաչ սիւմպիւլ քաղեցէք,
Ը՛երմակ ձիեր հեծնեցէք,
Սիրած եարիս հասցուցէք:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

17 (352).

ՎԱՐԴ ԵՄ ՔԱՂԵՐ ՄԱՂԵՐՈՎ

Վարդ եմ քաղեր մաղերով,
Վեր եմ դրեր շաղերով,
Ահա եկաւ իմ եարը՝
Այ ձին տակին խաղալով:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

18 (353).

ՍԱՐԷ Ի ՍԱՐ ԵՄ ԹՈՒԵՐ

Սարէ ի սար եմ թուեր,
Քառսուն ծաղիկ եմ քաղեր,
Քառսուն ծաղկի փունջ կապած՝
Եարիս նուէր եմ դրկեր:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

19 (354).

ԱՂԲԻԻՐ ԳԱՑԻ՝ ԶՈՒՐՆ ԱՆՈՒԾ

Աղբիր գացի՝ ջուրն անուշ,
Ծաղիկներուն հոտն անուշ,

Կարմիր վարդը սրտիս նման,
Մանուշակի հոտն անուշ:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

20 (355).

ԱԽՉԻ՛Կ, ԴՈՒ ՀՈՒՐ ԵՍ, ՄԱՔՈՒՐ ԵՍ

Ախչի՛կ, դու հուր ես, մաքուր ես,
Ես ծարաւ եմ, դու ջուր ես,
Էս Համբարձման գիշերով,
Քեզ ման կու գամ, դուն ո՞ւր ես:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

21 (356).

ԼՈՒՍԵԱԿԸ ԲԱԿ Է ԶԳԵՐ

Լուսնակը բակ է ձգեր,
Քեզ ամպի տակ է ձգեր,
Իմ կուրացած բախտըն ալ
Ինձի մինակ է ձգեր:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

22 (357).

ԱՄՊԵԼ Է, ԶԻՒՆ ԶԻ ԳԱԼԻՍ

Ամպել է, ձիւն չի գալիս,
Իմ բախտը ա՛յ չի տալիս,
Սիրտս կրակով լեցուած՝
Աչքերուս քուն չի գալիս:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

23 (358).

ԿԱՅՆԵԼ ԵՍ ԱՂԲԻԻՐԱԿԻՆ

Կայնել ես աղբիրակին,
Շող կու տաս արեգակին,
Քո շող երեսին մեռնիմ,
Կամար ունքերիդ աղեղնակին:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

24 (359).

ՋՈՒՐԸ ԻՐ ԾԱՄԲՈՎ Կ՛ԵՐԹԱՅ

Ջուրը իր ճամբով կ'երթայ,
Ցողածը վարդի թերթ ա,
Ինձ սիրող կտրիճ տղան
Հազարին մէջ մէկ հատ ա:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

25 (360).

ԿՈԿՈՆՍ ԹՈՌՄԱԾ ՄՆԱՅ

Կոկոնս թոռմած մնաց,
Սիրտս կրակով մնաց,
Ի՞նչ ընեմ իմ ապրիլը՝
Իմ աչքերը թաց մնաց:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

26 (361).

ԿԱՔԱԻ ԵՄ ՔԱՐԱՄԷՋԻՆ

Կաքաւ եմ քարամէջին,
Ման կու գամ ձորամէջին,
Աստուած իմ մուրազը տայ՝
Աս գալող շաբթու մէջին:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

27 (362).

ՄԱՆԻԻՄ ՄԱՐԷԼԻԻՄ

ԻՄ ՄԱՆԻՆ ԵՍ ՀԻԻՍԵՐ ԵՄ

Մանիիմ մարելիիմ,
Եիրեկտէն եարալը յըմ,
Աղանջար ալլար կէլմիշ,
Տահա պէն գարալը յըմ:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

Իմ մանին ես հիւսեր եմ,
Ես սիրտէս վիրատոր եմ,
Ծառերը կարմիր հագան,
Ես դեռ սեւերու մէջ եմ:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

28 (363).

ՄԱՆԻ ՊԻԼԻՐԻՄ ԷԼԼԻԻ⁶⁰

ՄԱՆԻ ԳԻՏԵՄ ՅԻՍՈՒՆ ՀԱՏ

Մանի պիլիրիմ էլլի,
Կէօրիքսէմ՝ եարիմ պէլլի.
Պէն եարիմի թանըրըմ.
Սաղ իզիւն չիֆթէ պէնկլի:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

Մանի գիտեմ յիսուն հատ,
Տեսնեմ՝ յայտնի է եարս.
Ես իմ եարը կը ճանչնամ
Աջ այտին կայ գոյգ խայ:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

29 (364).

ՄԱՆԻ ՊԻԼԻՐԻՄ ԱԼԹՄԸԾ

ՄԱՆԻ ԳԻՏԵՄ ՎԱԹՍՈՒՆ ՀԱՏ

Մանի պիլիրիմ ալթմըշ,
Ղաշընա դալէմ չալմըշ,
Ինսան օղլու՝ թաշ-թօփրագ,
Սէնի նուտա՞ն եարատմըշ:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

Մանի գիտեմ վաթսուն հատ,
Յօնքերը մատիտով քաշած,
Մարդ արարած՝ հող ու քար,
Քեզ լոյսէ՞ն են ստեղծած:
Հա՛րս, հա՛ն վիճակն ի բարի,
Համբարձումն ուզածդ կատարի:

գ. ՎԱՐԴԱՎԱՌԻ ԵՐԳԵՐ

30 (365).

ՎԱՐԴԱՎԱՌԸ ԳԱԼԻՍ Ա

Սօնա եար, Սօնա եար,
Սօնա սիրուն, Սօնա եար,
Վարդավառը գալիս ա,
Սօնա եար, Սօնա եար:

Ծաղիկը ցնծալիս ա,
Սօնա սիրուն, Սօնա եար,
Այ կիւլիւմ կանչող աղջիկ,
Զէնդ ծլվլալիս ա:

31 (366).

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՊԱՂՈՒՄԵՆ ԵՍ

Վարդավառի պաղումն ես,
Պարի միջին խաղում ես,
Կարաւի պէս սուրալով,
Տղաներին տաղում ես:

32 (367).

ԿԱՐՄԻՐ ԳԻՆԻՆ ԹԱՍՈՒՄԸ

Կարմիր գինին թասումը,
Ես եմ քո հաւասումը,
Երբ կը տաքնան ախշիկներ՝
Վարդավառի Պասումը:

33 (368).

ԱՅ ԱՍԻՆԱ, ԱՍԻՆԱ

Այ ասինա, ասինա,
Կարմիր գինին թասին ա,
Տղերքը ե՞րբ կը կոտորուին՝
Վարդավառի Պասումը:

34 (369).

ՀԷՅ ՄԷՆԹԻՎԱՐ,
ՄԷՆԹԻՎԱՐ

ՀԷՅ, ՎԱՐԴԱՎԱՌ,
ՎԱՐԴԱՎԱՌ՝

Հէյ, Մենթիվար, Մենթիվար,
Մենթիվարը վախտը վար,
Մենթիվարը սէվէնի՝
Թրախտտա պէշ թախթը վար:

Հէյ, Վարդավառ, Վարդավառ,
Վարդավառի պահը կայ,
Վարդավառը սիրողին՝
Դրախտը հինգ բազմոց կայ:



ԿԵՆՏՐԱԼ ԱՅԻՆ ՈՒ ԶԱԲԵՇՏԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1 (370).

ՍՈՒՏ Է՛

Սուտ է, սուտ է, սուտ է.
Ամէն բան սուտ է,
Աս աշխարհքին մէջը
Ամէն բան սուտ է:

Օղին կը խմենք,
Մէզէն ալ կ'ուտենք,
Աս աշխարհքին մէջը
Քէֆը կը վայելենք:

2 (361).

ՊՍԱԿՈՒԵԼԷՍ ԱՌԱՋ

Պսակուելէս առաջ հանգիստ կ'ապրէի,
Ծնողքիս տունին մէջ լաւ հաց կ'ուտէի,
Ազատ կը զգայի, լաւ կեանք ունէի,
Թրա լա լա, թրա լա լա:

Անցեալ տարի ալ կարծես խենթեցայ,
Ես իմ միակութենէս լաւ մը ձանձրացայ
Եւ ամուսնացայ,
Թրա լա լա, թրա լա լա:

Կերակոր կ'եփէ կինս. համը դուն առնե՛ս,
Ես ասանկ բան չեմ տեսած. հացը քարի՛ պէս,

Սուրճը դեղի՛ պէս, հաւը փայտի՛ պէս,
Թրա լա լա, թրա լա լա:

Հայտէ՛ կ'ըսես, տղանե՛ր, ինձի լսեցէք.
Երբ տարոսի խօսք ըլլայ՝ խօսքս յիշեցէ՛ք.
Շուտով հեռացէք, թէ ոչ դուք գիտէք,
Թրա լա լա, թրա լա լա:

3 (372).

ԷՆԿԻՆԱՐԻ ՏՕԼՄԱՆ

Էնկինարի տօլման
Ի՛նչ համով կ'ըլլայ,
Հարստութենէն լաւ է
Հարս-փեսայ ըլլալ:

4 (373).

ՄԱՆՏՕԼԻՆ ՉԱԼԵԼԷՆ

Մանտօլին չալելէն՝
Ելլամ ծառի ճիւղին,
Ատ ճիւղը թող կոտրի,
Իյնամ գիրկը եարիս:

5 (374).

ԱԽՉԻԿԻՆ՝ ԿԱՐՄԻՐ ՃԻՍՏԱՆ

Ախչիկին՝ կարմիր ֆիստան,
Մամային՝ պասմա,
Պապային՝ չուլէ շալվար՝
Ուշխուր չունենայ:

Ախչիկին՝ կարմիր գլխարկ,
Մամային՝ եազմա,
Պապային ալ չուլէ ֆէս մը՝
Փիւսկիլ չունենայ:

Ախշիկին՝ այագգապը,
Մամային՝ թաքունհա,
Պապային՝ թէրլիք մը՝
Տապան չունենայ:

Ախշիկին՝ ափարթըման,
Մամային՝ խրճիթ,
Պապային ալ կէճէգօնտու՝
Դուռ ալ չունենայ:

Ախշիկին՝ էլեկտրրիկ,
Մամային՝ լամբա,
Պապային ալ քէօռ խանտիլ մը՝
Տիթիլ չունենայ:

Ախշիկին՝ օթօմօպիլ,
Մամային՝ փայթօն,
Պապային ալ թօփալ էշ մը՝
Սէմէր չունենայ:

6 (375).

ԸԱՐԺԻՐ, ԸԱՐԺԻՐ, ԹԱԾԿԻՆԱԿԸ

Ըարժի՛ր, շարժի՛ր, շարժի՛ր, շարժի՛ր թաշկինակը,
Իրիկուն կ'ըլլայ կը դրկեմ քո սիրած եարը:

Վերի պախճեն տանձերը,
Հոփ, հոփ կ'ընեն մանչերը,
Երբ որ օրհորդ կը տեսնան,
Եան կը դնեն ֆէսերը:

Ըարժի՛ր, շարժի՛ր, շարժի՛ր, շարժի՛ր թաշկինակը,
Իրիկուն կ'ըլլայ կը դրկեմ քո սիրած եարը:

Ախշիկ կայներ կամրջին՝
Օսկի օդեր ականջին,
Գացէ՛ք, քսէ՛ք տուքանճին,
Ախշիկը տայ հայ քաջին:

7 (376).

ԳԻՆՈՎԻՆ ՎԵՐՋԸ

Բան փորոտան,
Մէրտիվէնտէն փալտըր-քիլտիւր
Վար ինկալ:
Առին տարին հիւանդանոց,
Անոր ճարը նայեցին,
Փորը ճղքեցին, փիլալ լեցուցին,
Թէքմէ մը տուին, դուռնէն դուրս ըրին:

8 (377).

ԼԷ, ԼԷ, ԼԷ, ԼԷ ԹԱՄՉԱՐԱ

ԼԷ, լԷ, լԷ, լԷ, թամզարա,
Երկու դրուշ, տաս փարա,
Տղան պագաւ ախշկան
Գաղտնիք էլաւ աշքեարա:

ԼԷ, լԷ, լԷ, լԷ, թամզարա,
Վարտիքիդ փաշան կ'երեւայ,
Վեր քաշէ որ չերեւայ,
Վերջը շատ ամօթ կ'ըլլայ:

9 (379).

ՀԷ՛Յ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՏԷՐՏՍ ԼՍԷՔ

Հէ՛յ ժողովուրդ, տէրտս լսէք,
Հախ չունիմ մէ՛ ինձի քէք,
Երսուն տարի կը դատիմ կոր,
Չտեսայ աղէկ մէկ օր:

Կիւն օլտու քի պօշ տըր քէսէմ,
[Օր եղաւ որ պարապ էր քսակս]
Պտրտեցայ՝ սէրսէմ-սէրսէմ,
Օր ալ եղաւ ջուրեքու պէս,
Դուրս կը պոռթկար փարաս ճէպէս:

Ծօ՛, Այվալըք⁶² պօլ փարա կայ,
Զգես, բերեմ ես ապագան,
Պատրաստ է միշտ մեր Նէճատին
Տիշմանները ճար-ճար ճարին:

**10 (379).
ՇԱԲԱԹՈՒԱՆ ՕՐԵՐԸ**

Երկուշաբթի՝ շաբթի, շաբթի,
Երեքշաբթի հաց կը թխիմ,
Չորեքշաբթի կար կը կարիմ,
Հինգշաբթի լուացք կ'ընիմ,
Ուրբաթ տունը կը մաքրիմ,
Ծաբաթ կ'երթամ ես բաղնիք,
Կիրակի օր ո՞վ կը բանի,
Որ ես բանիմ.
Ես ալ կ'երթամ եկեղեցի:

11 (380).

ՄՈՒՍԱԼԻՌՅՈՑ ԶՐԱՅՑԸ

Արի՛ ամօղլո՛ւ, արի՛,
Նստինք դօնուշմըշ ինիւք.
Մի՛ր ապագէն համուր
Բէն մը տիւշիւմիւշ ինիւք:
Էրկաքս ազուպ ինք,
Դրացնիրէն դազուպ ինք,
Աս մի՛ր կէօնքը չո՞ւց կէօնք ի,
Նա՛ սաղ ինք, նա՛ սատկուծ ինք:
Էրնէկ ան ուրիւրէն
Խըտըրպակ կի լուայրինք,
Տրգատ ֆըրթանօ
Պօղազօն կի լուայրինք,
Կասլաք կը նայրինք,
Սըմումնէն թըպըխ կը լարինք:

ՄՈՒՍԱԼԵՌՅԻՆԵՐՈՒՆ ԶՐՈՅՑԸ

Եկո՛ւր հօրեղբօր որդի՛, եկո՛ւր,
Նստինք գրուցենք՝
Մեր ապագայի համար
Բան մը մտածենք:
Երկուքս ալ ազատ ենք,
Դրացններուն ցաւ ենք,
Այս մեր կեանքը ի՞նչ կեանք է,
Ո՛չ ողջ ենք, ո՛չ մեռած ենք:
Երանի այն օրերուն
Խըտըրպէկ կը զբօսնէինք,
Ինչպէս փոթորիկ
Պօղազը կը պտտէինք,
Դափնիի տերեւ կը ժողվէինք,
Ծնճողուկներուն թակարդ կը լարէինք:

Արի՛ ամօղլո՛ւ, արի՛,
Նստինք դօնուշմըշ ինիւք.
Մի՛ր ապագէն համուր
Բէն մը տիւշիւմիւշ ինիւք:
Հիլը լուանք ու սանտրուանք,
Ամէնքիս պատվօ մը գըտնանք,
Նիշանուանք ու կարգուանք.
Պատվօն զլուացք կինի,
Կը հաւուրի, կը ծիփի,
Զմիտը լըհէյֆ կը մտնինք,
Կոնակնէս կը շուղընի,
Հար կը հիվընդնինք,
Պատու մի՛յ գըչուխընի:

Եկո՛ւր հօրեղբօր որդի՛, եկո՛ւր,
Նստինք գրուցենք՝
Մեր ապագայի համար
Բան մը մտածենք:
Հայելին նայինք, սանտրուինք
Ամէն մէկս կին մը գտնանք,
Նշանուինք եւ կարգուինք.
Կինը լուացք կ'ընէ,
Կը ժողվէ ու կ'եփէ,
Զմեռը վերմակի տակ կը մտնանք,
Կոնակնիս կը տաքցնէ,
Երբ հիւանդանանք՝
Կինը մեզ կ'ստողջացնէ:





ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ

1 (381).

ՈՐՏԵՂԸ ԻՆՉՈ՞Վ ՅԱՅՏՆԻ Է

- Գումգաբուին՝ ձուկը,
- Թօփգաբուին՝ թուփը:
- Ետիքուլէին՝ մառուլը:
- Ենիգաբուին՝ էրիքը:
- Ամասիային՝ խնձորը:
- Լանկային՝ խըլարը:
- Իզմիրին՝ թուզը:
- Նիտէին՝ լէպլէպին:
- Պուրսային՝ շէֆթային:
- Թօքաթին՝ արմուտը:
- Թաշտէլէնին՝ ջուրը:
- Գոնիային՝ քէստանէն:
- Ատանային՝ բամպակը:
- Այնթապին՝ ֆըստըխը:
- Ատափագարին՝ փաթաթէտը:
- Կեսարիային՝ պաստըրման:
- Ջօնկուլտաղին՝ ածուխը:
- Էրզրումին՝ մեղրը:
- Մայաթիային՝ ծիրանը:
- Տիգրանակերտին՝ խարփուզը,
- Իրկիսիին՝ քիշմիշը:

2 (382).

ՀԱՇՀԱՏԻԿ՝

- Հաշհատիկ,
- Յուսկէ՞ կու գաս:
- Սիւ սարուն:
- Ի՞նչ բերիս ը:
- Ղալըպ սապըն:
- Ո՞ւր տանիս ը:
- Ծօճօ մամուն.
- Լաչակ լուայ,
- Թալի գլխուն:

3 (383).

ՍԻՐՈՒՆ, ԱՆՄԵՂ ԻՄ ԳԱՌԵՈՒԿ

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
 Բուրդդ սպիտակ ու փափուկ,
 Դաշտ վազելով ու արօտ,
 Կը քաշես մօրդ կարօտ:

Աղուոր գառնուկս, իմ սիրուն,
 Եկուր ցատկէ քովս ի վեր,
 Ստուերին տակ ծառերուն,
 Ուր կը փչեն մեղմ հովեր:

Քեզի լեռնէն ու ձորէն,
 Քաղեմ տերեւ ու ծաղիկ,
 Արտէն բերեմ քեզ ցորեն,
 Տունէն՝ շաքար ու հատիկ:

Փափուկ խոտերը դաշտին,
 Քեզի բազմոց թող ըլլան,
 Լիճին ջուրերը հեշտին,
 Տոտիկներդ թող լուան:

Ծունկս քեզի անկողին,
 Կուրծքս՝ բարձ, թեւս՝ վերմակ,

Չդպչի պոչդ հողիմ,
Չաղտոտի բուրդդ ճերմակ:

4 (374).

ԱՆՏԱՌ ԳԱՑԻ

Անտառ գացի՝ թոչուն որսալու,
Ձեռքէս ինկաւ սոսիմ վրայ՝ անյոյս մնացի
Կ'ուզե՛մ, կ'ուզե՛մ, կ'ուզե՛մ,
Տո՛ւր, տո՛ւր, տո՛ւր,
Իմ սիրածս, իմ պաշտածս,
Ինձի տուր:

Ինչո՞ւ այդպէս սիրուն աղաւնիս.
Մէկ նայուածքով սիրտս կ'այրես, կը տանջես:
Կ'ուզե՛մ, կ'ուզե՛մ, կ'ուզե՛մ,
Տո՛ւր, տո՛ւր, տո՛ւր,
Իմ սիրածս, իմ պաշտածս,
Ինձի տուր:

5 (385).

ԱՆՁՐԵԻ, ԱՆՁՐԵԻ

Անձրեւ, անձրեւ, ցա՛ծ արի,
Բուսցու՛ր ցորեն ու գարի,
Բուսցու՛ր ծաղիկ, կանանչ խոտ,
Ալէ՛ փոշիմ, մաքրէ՛ օդ,
Անձրեւ, անձրեւ, ցա՛ծ արի,
Գալդ ամէնքնուս բարի:

6 (386).

ԾՈՎՈՒՆ ՎՐԱՅ

Աշխոյժ նաւաստիմ,
Անվեհեր ճակատ,

Ընդդէմ փոթորկիմ
Կ'երգէ անփոյթ ու զուարթ:

Լարիտ տմպալլա, լա, հա, հա, հա,
Լարիտ տմպալլա, լա, հա, հա, հա,
Լարիտ տմպալլա, լա, հա, հա, հա,
Լարիտ տմպալլա, լա, հա, հա, հա:

Կոհակ փրփրաղէզ,
Չեն սոսկում տար մեզ,
Քամիմ սաստկահար
Կը տանի մեզ դէպ պար:

Լարիտ տմպալլա, լա, հա, հա, հա,
Լարիտ տմպալլա, լա, հա, հա, հա,
Լարիտ տմպալլա, լա, հա, հա, հա,
Լարիտ տմպալլա, լա, հա, հա, հա:

7 (387).

ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենի՛ք, հայրենի՛ք,
Օդդ սիրուն, ջուրդ սիրուն, դուն սիրուն.
Պէս-պէս գոյնի ծաղիկներով զարդարուն,
Չեմ դադարի աշխատելու օրն ի բուն:

8 (388).

ԲԱՐԵԻ ԲԵՐԻ

Բարեւ բերի Արարատեան սարերէն,
Բարեւ բերի Երեւանի շէնքերէն,
Աղբիւրներէն, ջուրերէն
Բարեւ բերի:

Էջմիածնի խորանէն,
Խոր վիրապի խորերէն,

*Մասիսի ստորոտէն
Բարեւ բերի:*

*Հայաստանեայց ցորենէն,
Գիղացիին խմորէն,
Ուխտաւորէն, պանդուխտէն,
Բարեւ բերի Հայրենիքէն:*

*9 (389).
ԿԱՐՕՏ ՈՒՆԻՄ*

*Արարատին, Մասիսին,
Արաքսին ու Սեւանին,
Էջմիածնին, Խոր Վիրապին,
Կարօտ ունիմ Հայրենիքին:*

*Մեսրոպի տաւերին,
Կոմիտասի շարականին,
Սայաթ Նովու քամանչային,
Կարօտ ունիմ Հայրենիքին:*

*«Էնգելիին», «Օորորին»,
«Ջանգեգուրին», «Կովկասին»,
«Ծաղկեփունջին», «Բոչարիին»,
Կարօտ ունիմ Հայրենիքին:*


*Հայոց համեղ խաղողին,
Լաւաշներին ու գինիին
Գեղջկուհիին, թոնիին,
Կարօտ ունիմ Հայրենիքին:*

*Եղբայրներին, քոյրերին,
Դրացիին, բարեկամին,
Հայրենի ժողովուրդին,
Կարօտ ունիմ Հայրենիքին:*

III

ՄՍՈՒԹԱՅԻՆ

ԲԱՆԱՀԻՄՈՒԹԻՆ





ԱՌԱՇ ԱՍԱՅՈՒԱԾՔՆԵՐ

- 1 (390).
- Ազգի հայրին իր պատմութիւնն է:
- 2 (391).
- Ազգին գէշը չ'ըլլար, մարդուն գէշը կ'ըլլայ:
- 3 (392).
- Ածան հաւը կոկոռան կ'ըլլայ:
- 4 (393).
- Ածուն կ'ըլլայ, հելուն կ'ըլլայ, մակարդ ես նե՛ մածուն կ'ըլլայ:
- 5 (394).
- Աղան տուած նուէրէն յայտնի կ'ըլլայ:
- 6 (395).
- Աղէկ կին՝ չունի գին:
- 7 (396).
- Աղէկնալու հիւանդին բժիշկը իր ոտքովը կու գայ:
- 8 (397).
- Աղուէրը իր պոչը վկայ բերեր է:
- 9 (398).
- Աղուէրը երագին մէջ հաւ կը տեսնայ:
- 10 (399).
- Աղուէսին դունչը խաղողին չըհասաւ՝ խակ է ըսաւ:
- 11 (400).
- Աղջիկս, քեզի ըսեմ, հարս, դուն հասկցիր:
- 12 (401).
- Աղջիկ մը բամբասելը եկեղեցի մը քանդել է:
- 13 (402).
- Աղբատը ունի հաց ու պանիր, գիշերը քունը չի տանիր:
- 14 (403).
- Աղօթելու համար ալ սիրտ պէտք է:

- 15 (404).
- Աճել գործին սատանան կը խառնուի:
- 16 (405).
- Աճի պաթըրճանին ցուրտ չի դպնար:
- 17 (406).
- Ամանդ ինչ բրդես, դգալդ ան կու գայ:
- 18 (407).
- Ամէն բան չէ, որ ոսկի է:
- 19 (408).
- Ամէն ժպիտին պէխ չեն ուրեր:
- 20 (409).
- Ամէն լաշակ կապող կին չէ, ամէն գլխարկ դնող երիկմարդ չէ:
- 21 (410).
- Ամէն ծաղիկ հոտ չ'ունենար:
- 22 (411).
- Ամէն մարդ իր խելքին հացը կ'ուտէ:
- 23 (412).
- Ամէն մարդ իր Կարապետը կու լայ:
- 24 (413).
- Ամէն մէկ անէծքը մէկ ոճրագործութիւն է:
- 25 (414).*
- Ամէն մօրուք իր սանրովը կը սանրեն:
- 26 (415).
- Ամէնուն բերանը վարտիքիս ուշխուրը չէ քի՛ կապեմ:
- 27 (416).
- Ամէն սիրտի մէջ առիւծ մը կայ պատկաժ:
- 28 (417).
- Ամէն տուն տէրտ մը ունի:
- 29 (418).
- Ամէն տունի մէջ թէնճիթէ մը ճաշ կ'եփուի. չըգիտես մէջը միս է, չէ նէ վիշտ:
- 30 (419).
- Ամէնքին գիտէ իր խալըպին պես:
- 31 (420).
- Այս օրուան գարի հացը վաղուան փախալաւայէն աղէկ է:
- 32 (421).
- Աներես մարդը ինչէ՞ն կ'ամչնայ. չու ալ հագնի՛ կը շօրօրայ:

33 (422).

Անձրեւէն փախաւ՝ ծովը ինկաւ:

34 (423).

Անձրեւէն փախաւ, կարկուտի տակ ինկաւ:

35 (424).

Անուշ լեզուն օձը ծակէն կը հանէ:

36 (425).

Անցուկը մոռցուկ է:

37 (426).

Անօթի հաւը երազին մէջ կուտ կը տեսնայ:

38 (427).

Անօթի փորին՝ զրոզրոզ ոռին:

39 (428).

Աշխարհքը՝ արօտ, մարդը մէջը կարօտ:

40 (429).

Աշխարհքը լայն եղեր է, կօշիկս՝ նեղ, ի՞նչ հասկցայ:

41 (430).

Աշխարհքը՝ հանելուկ, մարդը մէջը մլուկ:

42 (431).

Աշխարհքը ոչինչ է, գաւակդ աշխարհքէն մեծ է:

43 (432).

Աշխարհքին մալը աշխարհքին կը մնայ:

44 (433).

Աչքէ հեռու՝ սիրտէ հեռու:

45 (434).

Ապրիլ կայ՝ երկաթ է, ապրիլ կայ՝ արծաթ:

46 (435).

Առաջին կինս չարուխս է, երկրորդ կինս սարուխս է:

47 (436).

Ատոուան արեւով չըտաքցայ, իրիկուան արեւովը պիտի տաք-
նամ:

48 (437).

Ասեղին ծակէն Հինտըստան կը տեսնայ:

49 (438).

Աս՝ հօրեղբայր, աս՝ քեռի. բոլորէն ալ դասս առի:

50 (439).

Աս մօրուքը ասանկ շատ պատարագ տեսած է:

51 (440).

Աստառը երեսին չբռնեց:

52 (441).

Աստուած եթէ իր արարածին այդքան խելք է պարգեւեր, ուրեմն
ի՞նքը ինչքա՞ն մեծ բօնփիւթքը է:

53 (442).

Աստուած եթէ ուզէ մէկը պատժել, առաջ խելքը կ'առնէ:

54 (443).

Աստուած մարդուն ուրիշի դուռին մուխթած չըձգէ:

55 (444).

Աստուած մարդուս մէկ հիւանդանոցի, մէկ ալ դատարանի դուռը
չըձգէ:

56 (445).

Աստուած՝ մեծ, հացը՝ պզտիկ:

57 (446).

Աստուած մէկ դուռը կը գոցէ, միւսը՝ կը բանայ:

58 (447).

Աստուած տուած բերանը անօթի չի ձգեր:

59 (448).

Աստուծոյ պահած գառնուկը գայլը չ'ուտեր:

60 (449).

Ատանա, Մերսին, շամառը՝ երեսին:

61 (450).

Արապը ուղտ հեծնի նէ, տէրտը դրացիին կ'իյնայ:

62 (451).

Արեւ ըլլայ՝ չի ծագիր:

63 (452).

Արիեստ ունեցողը մինչեւ ցերեկ անօթի կը մնայ, չունեցողը՝ մին-
չեւ գիշեր:

64 (453).

Արիեստը ոսկի պիլեզիկ է, ուր որ էրթաս՝ հետդ կու գայ:

65 (454).

Աւետարան չեղած տունը աղսրզ կերակորի կը նմանի:

66 (455).

Աւետարան չեղած տունը մուխապալէթ չ'ըլլար:

67 (456).

Աւետարանէն էջ մը պակսեցաւ:

- 68 (457).
Աւետարանին մէջը մելան քափեցաւ:
69 (458).
Ափ մը պիպէռ ունիմ, աշխարհքէն լոր ունիմ:
70 (459).
Բախտ չունիս նէ, ճախտ ալ չունիս:
71 (460).
Բաղնիք էրթան նէ՝ խումնային կը հաւնին, հարսնիք էրթան նէ՝
գումնային:
72 (461).
Բամբասանքը գորոտող ճիւնագունտի պէս կը մեծնայ:
73 (462).
Բան ընողին՝ բան շա՛տ, բան չընողին՝ պատի տակ շա՛տ:
74 (463).
Բանը՝ օրուան, տէրտը՝ տարուան:
75 (464).
Բերնէ բերան՝ կ'ըլլայ գերան:
76 (465).
Գայլը բուրդը կը փոխէ, բնոյթը չի փոխեր:
77 (466).
Գայլի գլխուն աւետարան կարդացին՝ «Ոչխարը փախաւ» ըսաւ:
78 (467).
Գացինք Թոխաթ, դարձանք սախաթ:
79 (468).
Գետը անցաւ, «Մուրբ Աստուածը» մոռցաւ:
80 (469).
Գինիէն դարձած քացախը աւելի սէրք կ'ըլլայ:
81 (470).
Գինին կ'ընտրեն համով, աղջիկը՝ նամով:
82 (471).
Գնայ՝ մեռիք, եկուր՝ սիրեն:
83 (472).
Գործը էշու կը նմանի. վրան հեծնաս՝ կը քալէ, վար իջնաս՝ կը
կենայ:
84 (473).
Գործիքը կ'աշխատի, ձեռքը կը գովուի:

- 85 (474).
Դանակի եարան կ'աղէկնայ, լեզուի եարան չ'աղէկնար:
86 (475).
Դանակին մէջը արիւն կայ:
87 (476).
Դգալով կը կերցնէ, կոթով աչքը կը հանէ:
88 (477).
Դդումը պառկելով կը մեծնայ:
89 (478).
Դեռ շատ ֆուռուն հաց պիտի ուտես, որ ինծի հասնիս:
90 (479).
Դուն կը սպասես. Գարբիէլ հրեշտակը չի՛ սպասեր:
91 (480).
Դուռ մը կը գոցուի, պատուհան մը կը բացուի:
92 (481).
Դուռս զարնող մը ըլլայ, հոգ չէ թէ չորս ոտքով շուն ըլլայ:
93 (482).
Դուրս գալիք արիւնը տամարին մէջ չի մնար:
94 (483).
Դուրսը՝ քահանայ, ներսը՝ սատանայ:
95 (484).
Դրամ ունեցողը պատիւ ալ ունի:
96 (485).
Դրամը ձեռքի կեղտ է:
97 (486).
Դրամը ձիթապտուղի կուտին կը նմանի. ամէն ստամոքս չի՛
կրնար մարսել:
98 (487).
Դրամը մութ տեղը լոյս կու տայ:
99 (488).
Եզրը տես՝ կտորը առ, մօրը տես՝ աղջիկը առ:
100 (489).
Եթէ բախտդ է՝ կու գայ Հնդկաստանէն, Եմէնէն, եթէ բախտդ չէ՝
ի՞նչ կու գայ ձեռքէդ:
101 (490).
Եկեղեցին ինչքան քանդուած ըլլայ՝ գեղեցկութիւնը կ'երեսայ:

102 (491).
Եղունգ ունի՞ս՝ գլուխդ քերտ:
103 (492).
Ես՝ աղա, դուն՝ աղա, անտեր ջաղացքը ո՞վ աղայ:
104 (493).
Ես տանձ կ'ըսեմ, ան գանձ կը հասկնայ:
105 (494).
Երես տուինք Ալիին, ելաւ ք...եց խալիին:
106 (495).
Երեսը թուքնես նէ՝ անձրեւ կու գայ կ'ըստ:
107 (496).
Երեսը տուինք, աստառ ալ ուզեց:
108 (497).
Երեսացող լեռը դըլաուզ չ'ուզեր:
109 (498).
Երկաթը տաք-տաք կը ծեծեն:
110 (499).
Երկու ոտքը մէկ փապուճի մէջ կը խոթ:
111 (500).
Ձաւակը խելացի է՝ ի՞նչ պիտի ընես աշխարհքին մալը. գաւակը
խենք է՝ ի՞նչ պիտի ընես աշխարհքին մալը:
112 (501).
Ձաւակը մէջքէն պիտի ըլլայ, վաստակը՝ քրտինքէն:
113 (502).
Ձաւակ չունեցողը մէկ հոգ ունի, ունեցողը՝ հազար ու մէկ:
114 (503).
Ձաւակի կսկիծը կրակէ շապիկ է:
115 (504).
Ձաւակին խակը համով է, հասածը՝ աճի:
116 (505).
Չիս սիրողին՝ գերին եմ, չսիրողին՝ սուլթանը:
117 (506).
Չուռնայով եղանակ չես հաներ, ինչ որ հանես՝ քու բախտիդ:
118 (507).
Էլին աղէկն է, տունին՝ թշնամին:
119 (508).
Էլին բերանը վարտիքս չէ՝ քի ուշխուրը կապեմ:

120 (509).
Էկուր տէ էշը ցեխէն հանէ:
121 (510).
Էշ ըլլալուս՝ գէշ կ'ըլլամ:
122 (511).
Էշ ըլլաս նէ, վրադ բեռ դնող շա՛տ կ'ըլլայ:
123 (512).
Էշ նստիլը մէկ այրփ, իջնալը՝ երկու:
124 (513).
Էշը էշուն քովը կապես նէ եա վարուցը կառնէ, եա՝ բարուցը:
125 (514).
Էշը ի՞նչ գիտէ՝ ինչ է նուշը, կ'երթայ կ'ուտէ փուշը:
126 (515).
Էշը ինքն է, խոտը ուրիշին առջելը կը դնէ:
127 (516).
Էշը ու՞ր, բեհանը ու՞ր:
128 (517).
Էշը փալանով կ'ուզէ:
129 (518).
Էշուն աշխատածը ձիուն համար է:
130 (519).
Էշուն հարցուցեր են՝ քու մարիֆէթըդ ի՞նչ է. ըսեր է՝ էշու պէս գռալ:
131 (520).
Էրիկ-կնիկ՝ գոյգ աղունիկ:
132 (521).
Ըլլալէն վերջը՝ Կարապետ:
133 (522).
Ըլլալիք գաւակը իր կեղտէն յայտնի կ'ըլլայ:
134 (523).
Ըլլալիք է նէ՝ կ'ըլլայ, չ'ըլլալիք է նէ՝ հարսը ձիէն վար կ'իջնայ:
135 (524).
Ընտանիքը ամենամեծ շահոյթն է:
136 (525).
Ընտիր գինի, ընտիր մատեան, քանի հիննան՝ կը համովնան:
137 (526).
Ըսելէն, ըսելէն բերանս մազ բուսաւ:
138 (527).
Ըրաւ՝ գտաւ:

139 (528).
Թացը չորին հետ այրեցաւ:
140 (529).
Թեմպէլին Կիրակին շատ կ'ըլլայ:
141 (530).
Թէնճիրէն գլտորուեցաւ, խափախը գտաւ:
142 (531).
Թէնճիրէն երեք քարի վրայ կը նստի:
143 (532).
Թէրզին եսխա շունենար, տեմիրճին ալ՝ քօխա:
(533).
Թէրեզեով հացը բերեքէք չ'ունենար:
145 (534).
Թէրլիֆսիզ հիւրը մինտերսիզ կը նստի:
146 (535).
Իյնայ՝ զաւակին տերը, ելլայ՝ զաւակին տերը:
147 (536).
Ինձի շիլ ըսողը գոնէ պատէմ ա՞չք ունենայ:
148 (537).
Ինչ էի, ինչ էդայ, տահա ալ ինչ պիտի ըլլամ:
149 (538).
Ի՞նչ ընեն աշխարհքին լայնութիւնը, երբ կօշիկս նեղ է:
150 (539).
Ի՞նչ կու տայիր Նազարին՝ տար տուր Տէր Պապային:
151 (540).
Ինչ որ ցանես, ան կը հնձես:
152 (541).
Ինչէ՛ր կերաւ աս ակռան՝ ո՛չ ոսկի դարձաւ, ո՛չ արծաթ:
153 (542).
Ինքզինքը խենթի տեղ է դրեր՝ վանքին հաւերը կ'ուտէ:
154 (543).
Ինքը՝ կը ք...քնէ, ինքը կը հոտոտէ:
155 (544).
Ինքը չգացած՝ անունը իրմէն առաջ կ'երթայ:
156 (545).
Ինքը՝ քուն, բախտը՝ արթուն:
157 (546).
Իդի պէս ցորին երեսը կ'ելլայ:

158 (547).
Լամբր իրեն տակը լոյս չի տար:
159 (548).
Լաւ է մատնոցի չափ մայր մը ունենալ, քան սարի չափ հայր մը:
160 (549).
Լաւ տանտիկինին ձեռքը քիչ մը գող պիտի ըլլայ:
161 (550).
Լեզուն առանց ոսկոր է, ամմա մարդուն մէջքը կը կտորէ:
162 (551).
Լէպ չըսած՝ լէպլէպին կը հասկընայ:
163 (552).
Լեզուն դանակ չէ, բայց կը կտորէ եւ կը վիրաւորէ:
164 (553).
Լեռին ետեւը ըլլայ, հողին տակը չըլլայ:
165 (554).
Լոյսը բացուի՝ բարին հետը:
166 (555).
Լուն երեսէն վար իյնայ նէ՛ հազար փարչա կ'ըլլայ:
167 (556).
Լուն տէվէ կը շինէ:
168 (557).
Խելացի գառնուկը երկու մայր կը ծծէ:
169 (558).
Խելացին մինչեւ մտածէ՝ խենթը տղան կը պսակէ:
170 (559).
Խելքը տարիքին մէջը չէ, խելքը գլխուն մէջն է:
171 (560).
Խենթը ըսաւ, խելացին՝ հաւատաց:
172 (561).
Խենթը կը նայի մարդու երեսը, խելօքը՝ անոր ներսը:
173 (562).
Խենթը հորը քար մը նետեց, հազար խելօք չըկրցան հանել:
174 (563).
Խենթին հարսնիք տարեր են՝ հոս մեր տունէն աղէկ է ըսեր է:
175 (564).
Խենթը օրը օր է ըրեր, խելօքը սպասեր է օրուան:
176 (565).
Խելին խրատը ի՞նչ կ'ընէ, սելին սապօնը ի՞նչ կ'ընէ:

177 (566).
Խնդալը արեւ է տունին մէջ:
178 (567).
Խնձորը ծառէն հեռու չ'իյնար:
179 (568).
Խորոզը իրեն չէօփլուխին վրայ է ուժով:
180 (569).
Խուլին դուռը ուզածիդ չափ գարկ:
181 (570).
Խամէք ըլլայ նէ՝ փեսան կու գայ Շամէն-Պաղտատէն, չըլլայ նէ՝
հարսը վար կ'իջնայ ձիէն:
182 (571).
Խօսիլը ցանել է, մտիկ ընելը՝ քաղել:
183 (572).
Խօսողին մի՛ նայիր, խօսեցնողին նայէ:
184 (573).
Խօսքը խօսք կը բանայ, խօսքն ալ՝ ոռ կը բանայ:
185 (574).
Խօսքը՝ մեծին, ջուրը՝ պզտիկին:
186 (575).
Խօսքի՝ վարպետ, գործի՝ անպէտ:
187 (576).
Խօսքով փիլաւ չես եփեր:
188 (577).
Ծակ ուլունքը գետինը չի մնար:
189 (578).
Ծաղիկը ծաղիկին նայելով կը բացուի:
190 (579).
Ծանր քարը իր տեղը կը մնայ:
191 (580).
Ծեր եզն է որ շիտակ ակօս կը բանայ:
192 (581).
Ծերութիւնը գերութիւն է:
193 (582).
Ծիծը՝ հեռու, կինը՝ մօտիկ:
194 (583).
Ծովը ինկողը անձրեւէն չի վախնար:

195 (584).
Ծովը ինկողը ձեռքը փրփուրին կը ձգէ:
196 (585).
Ծովը տեսնայ՝ ձուկ կ'ըլլայ, ծակը տեսնայ՝ մուկ կ'ըլլայ:
197 (586).
Ծուռ նստինք՝ շիտակ խօսինք:
198 (587).
Կաթէն այրեցաւ, թանը փչելով կը խմէ:
199 (588).
Կաթիլ-կաթիլ կէօլ կ'ըլլայ, կը հոսի, կ'երթայ՝ սէլ կ'ըլլայ:
200 (589).
Կաթկթող ջուրով ջրադաց չի դառնար:
201 (590).
Կա՛մ աղը պակաս է, կա՛մ՝ մաղը:
202 (591).
Կամաց-կամաց բանքակը կ'ըլլայ մանած:
203 (592).
Կայծակը փոթորիկ կը բերէ, նաեւ՝ խաղաղութիւն:
204 (593).
Կապիկը տէրտ չունենայ նէ՝ ոռը կը բերէ, իրեն տէրտ կ'ընէ:
205 (594).
Կապիկին աչքը չըբացուի:
206 (595).
Կատուի պէս կը լըզվոտուին, շունի պէս կը գզուտուին:
207 (596).
Կատուն տունը չըլլայ նէ, մուկերը ճիրիթ կը խաղան:
208 (597).
Կատուին ըսին՝ ք...քը դեղ է, տարաւ խոր թաղեց:
209 (598).
Կատուին խաղը՝ մուկին մահը:
210 (599).
Կարմիր ոսկին՝ սեւ օրին:
211 (600).
Կեանքը անիւ մըն է. մէյ մը՝ կ'ելլէ, մէյ մը կ'իջնայ:
212 (601).
Կեանքին ձմեռը միշտ ձիւնոտ կ'ըլլայ:
213 (602).
Կեցած գործին վրայ ձիւն կը նստի:

214 (603).
Կեցար, կեցար Աագ Ուրբա՞ք տաճկացար:
215 (604).
Կծծիին դրամը գերեզմանը կ'ուտէ:
216 (605).
Կնիկ կայ՝ տուն կը շինէ, կնիկ կայ՝ տուն կը քանդէ:
217 (606).
Կողովին մէջինը՝ փորս, սնտուկին մէջինը՝ կոնակս:
218 (607).
Կոյր աչքէն արցունք չի գար:
219 (608).
Կոյրին հետ պառկողը շիլ կ'արթըննայ:
220 (609).
Կոյրին քարը՝ կոյրին աչքին:
221 (610).
Կովը կը մեռնի՝ կաշին կը մնայ, մարդը կը մեռնի՝ անունը կը մնայ:
222 (611).
Կովը մեռաւ, կաթը հատաւ:
223 (612).
Կոտոշը ետքը կը բուսնի, բայց ականջէն կ'անցնի:
224 (613).
Կուշտը անօթին մանր կը փրթէ:
225 (614).
Կրակին հետ խաղ չ'ըլլար:
226 (615).
Կօշիկ կարողին կօշիկը ծակ կ'ըլլայ:
227 (616).
Հագուստը ըսաւ. «Դուն զիս պահէ պոխչի մէջ, ես քեզ պահեմ
մարդու մէջ»:
228 (617).
Հալեպ գացինք բրինձի, տունին պլորտէն ալ ինկանք:
229 (618).
Հալեպը՝ հոն է, կանգունը՝ հոս:
230 (619).
Հայր մը գաւակ մը չէ կրցեր պահել, մայր մը քառասուն գաւակ
շահեր, պահեր է:
231 (620).
Հասկցողին՝ մէկ, չհասկցողին՝ հազար ու մէկ:

232 (621).
Հաստ ու բարակ մէկ գին է. վա՛յ բարակը մանողին:
233 (622).
Հարամը կու գայ, հալալն ալ կը տանի:
234 (623).
Հարս ըսածդ լեզու կ'ունենայ, խօսիլ՝ չունենար:
235 (624).
Հարսը հէ՛մ փալանին կը յարմարի, հէ՛մ՝ սէմերին:
236 (625).
Հարուստէն աղջիկ առնելը դժուար է, պահելը՝ դիւրին:
237 (626).
Հարուստին կառքը լեռէն վար կը սահի, աղքատը շիտակ տեղը
կը շուարի:
238 (627).
Հարուստին ունեցածը աղքատին չէնէն կը յոգնեցունէ:
239 (628).
Հարցնելով Պաղտատ կ'երթան:
240 (629).
Հաց ու պանիր՝ կեր ու բանիր:
241 (630).
Հալը դազին նայեր է՝ ոռը պատներ է:
242 (631).
Հակիթին մէջը մազ կը փնտոտ:
243 (632).
Հեռուն տավուլին ձայնը անուշ կու գայ:
244 (633).
Հեռուին սուրբը գօրաւոր կ'ըլլայ:
245 (634).
Հին համամը, հին թասը:
246 (635).
Հիւանդութիւնը ասեղին ծակէն կը մտնայ, տավուլ-գլուխայով
դուրս չ'ըլլար:
247 (636).
Հողը լուր չի տայ:
248 (637).
Հոր փորողը հորին մէջը կ'իյնայ:
249 (638).
Հրէային գլուխը կ'աշխատի, հայուն՝ ձեռքերը:

250 (639).

Հրեշտակ մինչև հրեշտակը մարդն է:

251 (640).

Ձին չեղած տեղ, էշն ալ ձիու տեղ կ'անցնի:

252 (641).

Ձուկ բռնողը թրջուելէն չի վախճար:

253 (642).

Ձուկը ծովուն մէջը զին չունի:

254 (643).

Ձուկին հարցուցեր են՝ ծովէն ի՞նչ լուր ունիս, ըսեր է՝ բերանս
լեցուն է ջուրով:

255 (644).

Ճանճ չպիտի ըլլամ՝ պատին փակիմ:

256 (645).

Ճանճը բան մը չէ, ամնա միտէ կը պղտորէ:

257 (646).

Ճիշդ խօսողին զլուխը ծակ է. ամէն մէկը կը զարնէ:

258 (647).

Ճպռոտ աչքին՝ մուխը մահանա:

259 (648).

Ճրագը իր տակը լոյս չի տար:

260 (649).

Մագը՝ երկար, խելքը՝ կարճ:

261 (650).

Մայր մը տասը զաւակ կերակրեր է, տասը զաւակը մէկ մայր մը
չեն կրցեր կերակրել:

262 (651).

Մարգարէն իր գիւղին մէջ յարգ չունի:

263 (652).

Մարդ կայ՝ մարդու քահանայ, մարդ կայ՝ մարդու սատանայ:

264 (653).

Մարդը մարդու երես կը նայի. Աստուած մարդու սիրտը կը նայի:

265 (654).

Մարդուն աչքը դուրս գայ, անունը դուրս չըզայ:

266 (655).

Մարդուս աչքը արուն մը հողը կը կշտացնէ:

267 (656).

Մարդս մարդով շէն է:

268 (657).

Մեղքը՝ լալով, պարտքը՝ տալով:

269 (658).

Մեղքը մեղք է. մեղքին մեծը պատիկը չկայ:

270 (659).

Մեր պաղի խաս մէյվէքը չէօլի արջերը կերան:

271 (660).

Մզկիթը ինչքան մեծ ըլլայ, մօլլան իր գիտցած «Ալլահուաքաարը»
պիտի կարդայ:

272 (661).

Մէկ աչքը միսին լոյս չի տար:

273 (662).

Մէկ կանուխ արթնցողը, մէկ ալ կանուխ ամուսնացողը կը շահի:

274 (663).

Մէկ կը ցատկես չէքիրկէ՛, երկու կը ցատկես, չէքիրկէ՛, երրորդին
փոսը կ'իյնաս, չէքիրկէ՛:

275 (664).

Մէկուն էշը եթէ միսին ախտը պառկի՝ ազգական կ'ելլան:

276 (665).

Մէկուն մօրուքը վառեր է, միսը՝ կեցիք տաքնամ ըսեր է:

277 (666).

Մէկուն՝ ծով, միսին՝ սով:

278 (667).

Մէկուն՝ տեղահանութիւն, միսին՝ մեղահանութիւն:

279 (668).

Մէկ քա՛հ-քահը խալըպ մը պըրզօլա արժէ:

280 (669).

Մէյ մըն ալ հարս ըլլամ նէ՛ ձի նստիլը սորվեցայ:

281 (670).

Մերսիմ երթալ կ'ուզէ, բայց կ'երթայ թերսին:

282 (671).

Մոմին հարցուցին՝ ինչո՞ւ այդպէս կ'այրիս: Ըսաւ՝ կոչումս է. կը
սպառիմ, որ լոյս տամ:

283 (672).

Մուկին շէնը ծովուն օգուտ է:

284 (673).

Մուհապալէքը տունը վեր կը բռնէ:

285 (674).

Մօր պէս սիրելի չկայ, Պաղտատի պէս տեղ չկայ:

286 (675).

Մօրուք չունիմ քի խօսքս անցնի:

287 (676).

Յօնքը շինելուն՝ աչքը հանեց:

288 (677).

Նամագի միտք չունիմ քի ականջս էգանին ըլլայ:

289 (678).

Նաչարը կ'ուտէ բանջարը:

290 (679).

Նէ՛ հատիկ, նէ՛ Չատիկ. խեւն է հագեր երկու շապիկ:

291 (680).

Նէ՛ Շամին շէքերը, նէ՛ արապին երեսը:

292 (681).

Նոյն ծաղիկէն օձը թոյն կը շինէ, մեղուն՝ մեղր:

293 (682).

Նորածինին՝ օրօրոց, մեռելին՝ դագաղ:

294 (683).

Նուէր ձիուն ակռաները չեն հաշուեր:

295 (684).

Շամը ու՞ր, կանգունը ու՞ր:

296 (685).

Շատ աշխատողին՝ չուլէ շապիկ, քիչ աշխատողին՝ արլատ վարտիք:

297 (686).

Շիտակ խօսողին ձին քամքած պէտք է ըլլայ:

298 (687).

Շուն մը չսիրողը շուն մը չ'արժեր:

299 (688).

Շունը շան միս չ'ուտեր:

300 (689).

Շունէն մագ պոկելն ալ քեար է:

301 (690).

Ո՛չ սխտոր կ'ուտեն, ո՛չ ալ բերանս կ'այրեն:

302 (691).

Ոսկին կ'արի՛լ քէֆը չ'արեր:

303 (692).

Ոսկին ցելսին մէջ անգամ կը փայլի:

304 (693).

Ով որ ուզածը կ'ըսէ, չուզածը կը լսէ:

305 (694).

Ով ուրիշին փոս կը փորէ, աղ փոսը ինքը կը լեցնէ:

306 (695).

Ոտքին տրելիս չիկայ, Հասանտաղ փայտի կ'երթայ:

307 (696).

Որ հաց՝ հոն կաց:

308 (697).

Որ մոտապալէ՞՛ հոն բերքէք:

309 (698).

Որ որ ոսկին կը հոսի՝ հոն լեզուն կը պապանձուի:

310 (699).

Չալելով-չալելով եղանակ մը պիտի գտնանք:

311 (700).

Չամուտ մըն է՝ պատին զարկ. եա՛ կը փակի, եա՛ չէ:

312 (701).

Չամուտն էլաւ, պաթախը մտաւ:

313 (702).

Չգտաւ Կարապետ, էլաւ եղաւ մարապետ:

314 (703).

Չլացող չօճուխին կաթ չեն տար:

315 (704).

Չ'ուտեր, չըխմեր՝ տօլապը կը դնէ, կը հոտեցնէ:

316 (705).

Չուտողին մալը ուտողին հալալ է:

317 (706).

Չսպասած քարդ աչք կը հանէ:

318 (707).

Չօճուխը կը նմանի կա՛մ հօրը, կա՛մ մօրը, կա՛մ ալ ծուռ շիտակ

կնքահօրը:

319 (708).

Պահէ՛ յարդը, կու գայ ժամանակը:

320 (709).

Պաղած օձը նախ զինքը տաքցնողը կը խայթէ:

321 (710).
Պապայիս տունը հեռու ըլլայ նե՝ ուզածիս պէս կը նետեն:
322 (711).
Պատռուի ան գլուխը, որ տասը գլուխ չի պատռուիր անոր համար:
323 (712).
Պարապ հասկին գլուխը միշտ բարձր կ'ըլլայ:
324 (713).
Պարապ տակառը շատ աղմուկ կը հանէ:
325 (714).
Պարտքը՝ տալէն, մեղքը՝ լալէն:
326 (715).
Պարսիմաթ ունիս նե՝ թաթխտ տէ կեր:
327 (716).
Պզտիկ հաւը միշտ փիլիճ է:
328 (717).
Պզտիկ քուն կը քաշէ, մեծ երազ կը տեսնայ:
329 (718).
Պիլպիլը ոսկի խաֆէսը դրին, «Ա՛խ վաթան» ըսաւ:
330 (719).
Պոչը մալէզը կը թաթխտ:
331 (720).
Պտուղ տուող ծառին քար կը նետեն:
332 (721).
Պտուղը ծառին տակը կ'իյնայ:
333 (722).
Ջուրը կը վազէ, խենթը կը դիտէ:
334 (723).
Ջուր տեսնայ՝ ձուկ կը դառնայ, կատու տեսնայ՝ մուկ կը դառնայ:
335 (724).
Ջուրը պատէն վեր կը հանէ:
336 (725).
Ջուրը՝ պզտիկին, խօսքը՝ մեծին:
337 (726).
Ջուրին սափորը ջուրին ճամբան կը կոտորուի:
338 (727).
Սաճը վառուեցաւ, խմորը վերջացաւ, ամուսինը խելօքցաւ
կեանքը վերջացաւ:

339 (728).
Սատանան ոտքը բարձրացուց, դուն հոն կոխեցիր:
340 (729).
Սարը արածեց, լիճէն ջուր խմեց:
341 (730).
Սէրը կը բացատրուի, տէրտը կը պատմուի:
342 (731).
Սխտորը, քացախը եթէ հաշիւ ընես՝ փաշա չես կրնար ուտել:
343 (732).
Սոխը սխտորին հետ բարեկամ են:
344 (733).
Սուտ կայ՝ տուն կը քանդէ, սուտ կայ՝ եկեղեցի կը շինէ:
345 (734).
Սուտին պոչը կարճ կ'ըլլայ:
346 (735).
Սպասէ՛, էշու՛կս, գարունը կու գայ, եօնճան կը բուսնի:
347 (736).
Վագող ձիուն գլխուն չեն գարներ:
348 (737).
Վա՛յ ան մարդուն, որ մէջք չունի:
349 (738).
Վա՛յ քեզ քաղաք, որ թագաւորդ մանուկ է:
350 (739).
Վեր թքնեմ՝ պըլլիս է, վար թքնեմ՝ մօրուքս:
351 (740).
Տակէն գլուխ չելածին աչքէն արցունք չ'ելլար:
352 (741).
Տաշած քարը գետինը չի կենար:
353 (742).
Տարի կայ՝ օր չ'արժէ, օր կայ՝ տարի կ'արժէ:
354 (743).
Տավուլին ձայնը հեռուէն անուշ կու գայ:
355 (744).
Տղայ ծնայ՝ իմս է ըսելով, ամուսնացուցի՝ օտարինն է ըսելով:
356 (745).
Տղան՝ մայրէն, դրամը՝ հայրէն:
357 (746).
Տուն փլուղին տունը չ'ըլլար:

358 (747).

Տուները՝ գատ, տերտերը՝ գատ:

359 (748).

Տունը՝ քահանայ, դուրսը՝ սատանայ:

360 (749).

Տունին հաշիւը շուկային չքոնեց:

361 (750).

Յար լեռին տուեր են՝ չի դիմացեր, մարդուն տուեր են՝ դիմացեր:

362 (751).

Փաթրթրըճի մարդիկ կը նմանին ան հաւերուն, որոնք հակիթ մը կ'ածեն, ամբողջ ազարակը ոտքի կը հանեն:

363 (752).

Փեսան տղայ չըդառնար, հարսն ալ՝ աղջիկ:

364 (753).

Փնտռողը Աստուած է գտեր:

365 (754).

Քարոտ ոռին փեմայէ շալուար:

366 (755).

Քեստանէն կեղեւէն էլեր է, կեղեւին «սեւ ես» ըսեր է:

367 (756).

Օձը կաշին կը փոխէ, մարդը բնութքը չի փոխեր:

368 (757).

Օձը օձ է նէ՝ մարդուն ջուր խմած ատենը չի խայթեր:

369 (758).

Օձին խայթածը կ'աղեկնայ, լեզուին կճածը՝ չ'աղեկնար:

370 (759).

Օտարէն եկածը ժում չ'ըլլար, ըլլայ ալ նէ՝ ատենին չ'ըլլար:



ԽՐԱՏԱԿԱՆ ԱՄԱՅՈՒՎԾՔՆԵՐ

1 (760).

Ազնութիւնը մի՛ կորսնցներ ամէն պարագային:

2 (761).

Ականջդ ետեւ նետէ, տես քու մասիդ ի՛նչ կը խօսին:

3 (762).

Ականջդ՝ երկու, լեզուդ՝ մէկ. երկու լսէ, մէկ խօսէ:

4 (763).

Աղէկ օրերուդ երեսիդ խնդացող շատ կ'ըլլայ:

5 (764).

Աղքատին դրամ տուողը Աստծուն տուած կ'ըլլայ:

6 (765).

Աղօթ՝ որ սրբանաս, աշխատէ՝ որ կշտանաս:

7 (766).

Աճապարանքով որոշում մի՛ առներ՝ կը սխալիս:

8 (767).

Ամառը հաւաքէ, որ ձմեռը ուտես:

9 (768).

Ամբարտաւանութենէ հեռու մնա:

10 (769).

Ամենամեծ երջանկութիւնը ան է, երբ քեզ կը սիրեն:

11 (770).

Ամէն բանի վախճանը գովելի է:

12 (771).

Ամէն բան մի՛ խօսիր, ամէն բան մի՛ տեսնար, ամէն բան մի՛ լսեր:

13 (772).

Ամէն գաղտնիք ուրիշին մի՛ ըսեր:

14 (773).

Ամէն երեսիդ խնդացողը բարեկամ մի՛ կարծեր:

15 (774).

Ամէն խօսք ամէն տեղ մի՛ ըսեր:

16 (775).

Ամեն շաբաթ հիւանդանոց մը, գերեզմանատուն մը, տառապեալ,
աղբատ ընտանիք մը այցելէ:

17 (776).

Այսօրուան գործը վաղուան մի՛ ձգէր:

18 (777).

Ան բանը որ չես ուզեր, որ քեզի ընեն՝ ուրիշին մի՛ ըներ:

19 (778).

Ան մարդը որ համբերութիւն չունի, կը նմանի առանց իղի
լամբարի:

20 (779).

Ան մարդը, որ խրատ չ'ընդունիր, կը նմանի առանց դեկի
շոգենաւու:

21 (780).

Ան որ խաչ կը հանէ, պաշտպան մը ունի:

22 (781).

Անուշ «ոչ»ը կոշտ «այո»էն աղէկ է:

23 (782).

Անօթի պառկէ, պարտքով մի՛ արթննար:

24 (783).

Աշխատող ձեռքը մի՛ կտրեր, այլ՝ բռնէ եւ համբուրէ:

25 (784).

Աշխարհը մէկ յոյս է, մէկ ալ յուշ է:

26 (785).

Աջ աչքիդ տեսածը ձախ աչքը պէտք չէ տեսնայ:

27 (786).

Աջ ձեռքիդ ըրածը ձախ ձեռքը պէտք չէ գիտնայ:

28 (787).

Առանց խաչ հանելու հաց մի՛ կտրեր:

29 (788).

Առանց կօշիկի քալէ, առանց դրամի՛ ոչ:

30 (789).

Առանց քննելու ոչ մեկը մի՛ դատապարտեր:

31 (790).

Առաջ աշխատանք, ետքը՝ զրօսանք:

32 (791).

Առաջուրնէ մի՛ ծրագրեր ապագան:

33 (792).

Աս խօսքերս ականջիդ օդ ըրէ:

34 (793).

Աստուած կ'ուշանայ, բայց չի մոռնար:

35 (794).

Աստուած վերէն վար չ'իջնար, բարի մարդ մը դէմդ կը հանէ:

36 (795).

Աստուած տկարներուն հետ է:

37 (796).

Աստուծմէն վախցի՛ր, ծնողքդ եւ օրէնքը յարգէ՛:

38 (797).

Աստուծոյ դատաստանը ծուռ չ'ըլլար, սուր կ'ըլլայ:

39 (798).

Արիւնը արիւնով չեն լուար:

40 (799).

Աւելի լաւ է խելացի ըլլալ, քան թէ ուժեղ:

41 (800).

Աւելի լաւ է չսկսիս, քան թէ կէս ձգես:

42 (801).

Բարեկամդ եթէ մրջիւն ալ ըլլայ, ոտքիդ տակը մի՛ առնէր:

43 (802).

Բարեկամիդ հետ կեր խմէ, առուտուր մի՛ ըներ:

44 (803).

Բարի բարեկամը իր գործերէն յայտնի կ'ըլլայ:

45 (804).

Բարիք ըրէ, որ բարիք գտնաս:

46 (805).

Բերանդ բանալուդ՝ ա՛չքդ բաց:

47 (806).

Բերանէդ ելածը ականջդ թող լսէ:

48 (807).

Գաղթականութիւնը մարդուն նկարագիրը կը փոխէ:

49 (808).

Գետը չտեսած փաչաներդ վեր մի՛ քաշեր:

50 (809).

Գերեզմանը չիմացածիդ ո՛չ աղջիկը առ, ո՛չ ալ տղան:

51 (810).

Գերիի պէս աշխատէ, տիրոջ պէս վայելէ:

52 (811).
Գէշ խօսողը կը նմանի բոցի, քանի որ չի կրնար այրել՝ կը սեւցնէ:
53 (812).
Գէշ խօսողին երես չեն տար:
54 (813).
Գինի մի՛ խմեր լաի տեղ, ան քեզ կը տանի դէպի գէշ:
55 (814).
Գինովութիւնը ուրիշ բան չէ, քան թէ ուզելով խենթեմալ:
56 (815).
Գիրքը մարդուն ամենէն լաւ բարեկամն է. հաց չ'ուզեր, ջուր չ'ուզեր, նեղութիւն չի տար, բայց օգուտ կու տայ:
57 (816).
Գործը էշ է. պիտի քշես որ յառաջ երթայ:
58 (817).
Գործէն մի՛ վախճար. գործը քենէ թող վախճայ:
59 (818).
Գործը եթէ ձգես՝ չի վերջանար:
60 (819).
Գոցէ բերանդ, որ ճանճ չմտնայ:
61 (820).
Գտածիդ մի՛ ուրախանար, կորսնցուցածիդ ալ մի՛ լար:
62 (821).
Դատաստան կայ՝ գալու, պատասխան կայ՝ տալու:
63 (822).
Դուն չես մնար, անունդ կը մնայ:
64 (823).
Դուն քեզ լաւ ճանչցիր, որ քեզ ճանչնան:
65 (824).
Դուող աղէկ կղպէ՛, դրացիդ գող մի՛ բռներ:
66 (825).
Դուրս ելած դուող մի՛ գոցեր. օր մը ետ կու գաս:
67 (826).
Դրամը լաւ ծառայ է, բայց գէշ տէր:
68 (827).
Դրամը վաստկողին խելքը՝ մէկ, թօփ ընողինը՝ տասնմէկ:
69 (828).
Դրացիիդ համար դուն մէկ ուզէ, որ Աստուած քեզի երկուքը տայ:

70 (829).
Եթէ վատահոութիւնդ կորսնցնես, ուրիշ ոչինչ ունիս կորսնցնելիք:
71 (830).
Եղածիդ պէս երեցիր:
72 (831).
Երեսդ որ կարմրեցաւ՝ մէջդ Աստուած խօսեցաւ:
73 (832).
Երեսիս մի՛ նայիր, բախտի՛ս նայէ:
74 (833).
Երկու ականջ, մէկ բերան, իմացիր ըսածիդ սրբան:
75 (834).
Երկու աչքէդ մէկուն մի՛ հաւատար:
76 (835).
Երկու կարծիք կը պատերազմին մեր մէջը՝ «այո»ն եւ «ոչ»ը:
77 (836).
Երջանիկ կեանք չկայ, կան երջանիկ պահեր:
78 (837).
Երջանկութիւնը ուշ կու գայ եւ շուտ կ'երթայ:
79 (838).
Եօթը անգամ մտածէ խօսելէդ առաջ:
80 (839).
Եօթը չափէ, մէկ ձեւէ:
81 (840).
Չառիվերը զառիվար ալ կ'ըլլայ:
82 (841).
Չաւակդ սիրէ, բայց Աստուած աւելի շատ սիրէ:
83 (842).
Ինչ որ լսես՝ մէջդ պահէ:
84 (843).
Ինչ որ կը փնտռես՝ առանց գտնալու, յաճախ կը գտնաս՝ առանց փնտռելու:
85 (844).
Ինչ որ սկսիս, պէտք է վերջացնես:
86 (845).
Ինչ չափով չափես, ան չափով կը չափուիս:
87 (846).
Իրար հասկնալը եւ միասին գործակցիլը եղբայրանալ ըսել է:

88 (847).

Լաւ է գէշ ըսեն, քան թէ՛ էշ ըսեն:

89 (848).

Լաւ է մարդուն աչքը ելլայ, քան թէ անունը:

90 (849).

Լաւ օրերու բարեկամները շատ կ'ըլլան:

91 (850).

Լաւը ըսէ, որ լաւը ըլլայ:

92 (851).

Լաւութիւն ըրէ՝ ծովը նետէ, մարդիկ չիմանան՝ ձուկերը կ'իմանան:

93 (852).

Լեզուն ոսկոր չունի, ինչպէս կուգէ կը պտտուի:

94 (853).

Լեղի խտոր դեղ կ'ըլլայ:

95 (854).

Լեղի խօսքը գէշ կ'ըլլայ:

96 (855).

Խաբելով հեռու կ'երթաս, բայց ետ չես դառնար:

97 (856).

Խամ հագիր, խաս վայելցուր:

98 (857).

Խելքդ տուր մէկ գործի, միտքդ տուր խորհուրդի, մի՛ գոջար բռնած գործիդ:

99 (858).

Խենթին մի՛ հարցներ, ան ինքը կ'ըսէ:

100 (859).

Խնայելը մեղք չէ, մսխելն է մեղք:

101 (860).

Խրատէն էն աղէկը խօսքը չէ, գործն է:

102 (861).

Խօսիլը ցանել է, մտիկ ընելը՝ քաղել:

103 (862).

Խօսքը թոչուն չէ, բայց կը թռի, չես կրնար բռնել:

104 (863).

Ծանր եղիր՝ օխա կը կշռես:

105 (864).

Ծառը արմատով գորաւոր է, մարդը՝ բարեկամով:

106 (865).

Կեանքը անուշ է, ինչպէս ալ որ ան ըլլայ:

107 (866).

Կեանքը սանդուխ մըն է, կ'ելլես, կ'իջնաս. երանի՛ անոր որ ելած ատենը ամբարտաւանութեան չի տրուիր:

108 (867).

Կ'երթամ մի՛ ըսեր՝ ճամբան կը լսէ. կը ծախեն մի՛ ըսեր՝ ապրանքը կը լսէ:

109 (868).

Կէնճութեանդ վաստկածդ ծերութեանդ ծալած ոսկի է:

110 (869).

Կովը կը մեռնի՛ կաշին կը մնայ, մարդը կը մեռնի՛ անունը կը մնայ:

111 (870).

Կորսուած ամէն բան տեղը կու գայ, միայն արժանապատուութիւնդ տեղը չի գար:

112 (871).

Հագուստդ պահէ նոր ժամանակէն, պատիւդ պահէ կէնճ ժամանակէդ:

113 (872).

Հագար հեղ մեղր ըսէ, բերանդ չ'անուշնար:

114 (873).

Համեստութիւնը ամենամեծ առաքինութիւնն է:

115 (874).

Հաւատքը կեանքի յոյսն է:

116 (875).

Հոն ուր բարութիւն կայ, հոն կայ երջանկութիւն:

117 (876).

Հորը ձգած մերասով որդին բախտաւոր չ'ըլլար:

118 (877).

Ձեռքէն առնուածը միշտ պարտք է, կուգես նէ՛ պապայեղ առ:

119 (878).

Ձին ճանչցիր քալուածքէն, աղջիկը՝ նայուածքէն:

120 (879).

Ձուկը ջուրը առետուր մի՛ ըներ:

121 (880).

Ճաշին գէշը չ'ըլլար՝ եփ հանելով ուտես նէ, խօսքին գէշը չ'ըլլար՝ մտածելով խօսիս նէ:

- 122 (881).
 Գիշոյ որոշումը յաջողութեան կէսն է:
 123 (882).
 Մարդը մարդ ընդունէ՝ հարուստ թէ աղքատ:
 124 (883).
 Մեծ լօխմա կեր, մեծ մի՛ խօսիր:
 125 (884).
 Մեռելներուն վրայ գէշ մի՛ խօսիր:
 126 (885).
 Մէկ անուշ լեզու, մէկ սիրով նայուածք՝ կ'երեւին դրախտի նման:
 127 (886).
 Մէկ բարի խօսքը կը դարձանէ վերք մը:
 128 (887).
 Մէկու մը կօշիկը չհագած՝ զինքը մի՛ դատեր:
 129 (888).
 Միակ բանը որ պիտի մնայ, եթէ ունիս, առաքինութիւնը եւ բարիքներդ պիտի մնան կոթող:
 130 (889).
 Մի՛ բարձրանար՝ կախուիս, մի՛ ցածնար՝ կոխուիս:
 131 (890).
 Մի՛ ըլլար անօրէն՝ կը գտնաս Երկնաւորէն:
 132 (891).
 Մի՛ ըլլար ճպտուի պէս, այլ եղիր մրջինի պէս:
 133 (892).
 Մի՛ ըներ այն, որ չես ուզեր թեզի ընեն:
 134 (893).
 Մի՛ ըներ կատակը, թէ վնաս կայ տակը:
 135 (894).
 Մի՛ ըներ շարիք. չտեսնաս բարիք:
 136 (895).
 Մի՛ խնդար դրացիիդ, կու գայ զլուխիդ:
 137 (896).
 Մի՛ նախանձիր ուրիշին, քու նախանձը կը փաթթուի վիզիդ:
 138 (897).
 Մի՛ վստահիր ուժիդ, դրամիդ, գեղեցկութեանդ. անցատր են:
 139 (898).
 Մի՛ ուրախանար յաջողութենէ, մի՛ յուսահատիր ձախորդութենէ:

- 140 (899).
 Մինչեւ որ եօթը դուռ չծեծես, դուռ մը չի բացուիր:
 141 (900).
 Մուսապալէթը տունը վեր կը բռնէ:
 142 (901).
 Յարգէ կինը, որ թեզ ծնաւ:
 143 (902).
 Յարգուած հայրը ամենալաւ օրինակն է տղուն համար:
 144 (903).
 Յիշէ՛ որ մերկ աշխարհ եկար եւ մերկ պիտի մեկնիս այս աշխարհքէն:
 145 (904).
 Շամէն Պաղտատ գործ մի՛ ըներ:
 146 (905).
 Շատ զիտես, քիչ խօսէ:
 147 (906).
 Շատ խնդալուն վերջը լաց է:
 148 (907).
 Շատ խօսքը առանց սուտի չ'ըլլար, շատ դրամը առանց հարամի չ'ըլլար:
 149 (908).
 Շատ մի՛ հպարտանար, որ չիյնաս շատ վար:
 150 (909).
 Շատ նեղութիւններ չես ունենար, եթէ լեզուդ թեզի քաշես:
 151 (910).
 Շիտակ խօսքը լեղի կ'ըլլայ:
 152 (911).
 Ոխը սիրտին մէջ պէտք չէ մնայ, ոխը պէտք է երկինք բարձրանայ:
 153 (912).
 Ո՛չ աղի եղիր, որ թութեն, ո՛չ ալ անուշ եղիր, որ կլլեն:
 154 (913).
 Ո՛չ Շամին շաքարը, ո՛չ արաբին երեսը:
 155 (914).
 Ով ինչ կ'ընէ՝ իրեն կ'ընէ:
 156 (915).
 Ով մարդու մէջ չէ մտեր, խակ պտուղ է՝ մի՛ ուտեր:

157 (916).

Ով որ կը ճանճրանայ աշխատանքէն, կը գրկուի կեանքի ուրախութենէն:

158 (917).

Ով որ կը տնկէ բարութիւն՝ կը հնձէ սէր:

159 (918).

Ով որ չի նայիր ծնողքին, կը գտնայ զաւակներէն:

160 (919).

Ոտքդ եօրդանիդ կէօրէ երկնցուր:

161 (920).

Ո՛ր երկիրը երթաս, անոնց գտակը դիր:

162 (921).

Որչափ կը հարցնես՝ անչափ կը սորվիս:

163 (922).

Որչափ կը պրպտես, անքան խելքդ կը զարգանայ:

164 (923).

Ունեցածէդ մի՛ դժգոհիր, հաշտուի՛:

165 (924).

Ունիս՝ տուր, կրնաս՝ ըրէ, փոխարէնը ոչինչ մի՛ սպասեր:

166 (925).

Ուշ եկուր, անուշ եկուր:

167 (926).

Ուշադրութիւն ըրէ՝ չշատախօսես, որ չվիրաւորես:

168 (927).

Ուշացած խորհուրդը ոչինչ արժէ:

169 (928).

Ուրիշին եարտըն ընես նէ, Աստուած ալ քեզի եարտըն կ'ընէ:

170 (929).

Ուրիշին չուանովը հորը մի՛ իջնար:

171 (930).

Ուրիշի ունեցածին աչք մի՛ տնկեր:

172 (931).

Չամուռին քար մի՛ նետեր՝ վրադ կը ցատկէ:

173 (932).

«Չգիտեն, չեն տեսեր» ըսէ՝ հեռու կ'ըլլաս փորձանքէ:

174 (933).

Պահէ գաղտնիքդ, որ յաջողիս:

175 (934).

Պատիւը զին չունի. երանի անոր որ պատիւ ունի:

176 (935).

Պզտիկ սխալները մեծ վնասներ կը բերեն:

177 (936).

Պէթբրէն պէթբրը կայ:

178 (937).

Պտտիր աշխարհքը, բայց տե՛ս Գօնիան:

179 (938).

Ջուրը չտեսած մի՛ բուսիկնար:

180 (939).

Սատանային հետ ընկեր մի՛ ըլլար:

181 (940).

Միրելի ըրէ անձդ քու կեանքիդ օրինակովը:

182 (941).

Միրէ քեզ սիրողը՝ գետինի չափ ցած եթէ ըլլայ, մի՛ սիրեր քեզ չսիրողը, եթէ Եգիպտոսի փարատոնն ալ ըլլայ:

183 (942).

Վառուած կրակին քիւրէկով հով մի՛ տար:

184 (943).

Տաւը հատ տգէտ բարեկամ ունենալուդ՝ մէկ հատ խելացի թշնամի ունեցիր:

185 (944).

Տգէտ բարեկամ ունենալէդ շատ աւելի լաւ է խելացի թշնամի ունենալը:

186 (945).

Փորդ չկշտացնելիք տեղ անօթութիւնդ պէլլի մի՛ ընէր:

187 (946).

Փուշերու մէջ յաճախ կը գտնաս ծաղիկներ:

188 (947).

Փափսուքը տուն կ'արբէ:

189 (948).

Քահանայ ալ ըլլաս՝ նորէն կարգովդ պիտի կենաս:

190 (949).

Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես:

191 (950).

Քաջութիւնը մարմինէն չէ, այլ հոգիէն:

192 (951).

Քարտէսին վրայ տեղը կրնաս փոխել, բայց ճակատագիրը չես կրնար փոխել:

193 (952).

Քեզի քարոզ գարնողին դուն հացով զարկ:

194 (953).

Քէօնէն, քօփալէն, չօլախէն հեռու՝ փախիր:

195 (954).

Քիչ սիրէ, որ քիչ ցաւիս, քիչ յուսայ, որ քիչ խաբուիս:

196 (955).

Քու արժանապատուութիւնդ բարձր պահէ:

197 (956).

Քու լեզուդ քեզ կը բարձրացնէ, քու լեզուդ քեզ կը ցածցնէ:

198 (957).

Օձի պէս խորամանկ եղիր, աղանձիի պէս անմեղ:

199 (958).

Օտարը օտար է, որչափ ալ ինձ ըլլայ:

200 (959).

Օտարին աչքը սուր է, ականջը՝ հրացան:



ԱՆԷԾՔՆԵՐ

1 (960).

Աղէկ օր չտեսնաս:

2 (961).

Աչքդ քէօնայ:

3 (962).

Աստուած հախէդ գայ:

4 (963).

Աստուած հոգիդ առնէ:

5 (964).

Աստուած պէլադ տայ:

6 (965).

Աստուծմէն գտնաս:

7 (966).

Աստուծոյ դատաստանին գաս:

8 (967).

Աստուծոյ քարը քէփէիդ իյնայ:

9 (968).

Բերանդ չորնայ:

10 (969).

Գացած ճամբադ չգիտնաս:

11 (970).

Գետինը մտնաս:

12 (971).

Գետնին տակը անցնիս:

13 (972).

Գրողը տեսնայ երեսդ:

14 (973).

Դժոխքի բաժին ըլլաս:

15 (974).

Զաւակէդ չխնդաս:

16 (975).
Զառակներուդ խերը շտեսնաս:
17 (976).
Լեզուդ բերանիդ մէջ չորնայ:
18 (977).
Լեշդ թող հոտի:
19 (978).
Խազայի գաս:
20 (979).
Խեւնաս, խել պատերը իյնաս:
21 (980).
Խորթլամիչ ըլլաս:
22 (981).
Կեանքիդ թելը կտրի:
23 (982).
Կերածդ քիթէդ գայ:
24 (983).
Հողը գայ գլխուդ:
25 (984).
Հողը մտնաս:
26 (985).
Ձիւնը գայ գլխուդ:
27 (986).
Մուրատդ փորդ մնայ:
28 (987).
Մուխդ մարի:
29 (988).
Յանկարծակիի գաս:
30 (989).
Ոտրդ կտրի:
31 (990).
Ոտքիդ վրայ չկրնաս կայնիլ:
32 (991).
Ուրախութիւն շտեսնաս:
33 (992).
Ուրիշին մուխթաճ ըլլաս:
34 (993).
Չգիտնաս քալած ճամբադ:

35 (994).
Չհասնէիր ծնուելու:
36 (995).
Պապանձուիս:
37 (996).
Մանդարամէտի բաժին ըլլաս:
38 (997).
Մատանան փորդ մտնայ:
39 (998).
Մատկիս ինչալլահ:
40 (999).
Մարսաղնաս:
41 (1000).
Վուճութդ վերնայ:
42 (1001).
Տանլայի գաս:
43 (1002).
Տունդ գլխուդ փլի:
44 (1003).
Փառս-փարչա ըլլաս:
45 (1004).
Փորդ չկշտանայ:
46 (1005).
Քալած ճամբադ չգիտնաս:
47 (1006).
Քէտնաս, քէտ պտտիս:
48 (1007).
Օջախդ թող մարի:
49 (1008).
Օրուան հացի կարօտ մնաս:
50 (1009).
Օր ու արել շտեսնաս:



ՕՐՀՆԱՆՔ-ՄԱՂԹԱՆՔՆԵՐ

- 1 (1010).
 Անուշ ըլլայ:
 2 (1011).
 Անփորձանք ըլլաս:
 3 (1012).
 Աչքդ լո՛յս:
 4 (1013).
 Աչքի լոյսով մնաս:
 5 (1014).
 Արեւը քու զաւակներուդ:
 6 (1015).
 Աստուած ամէնուն խրսմէքը թող տայ:
 7 (1016).
 Աստուած բարին կատարէ:
 8 (1017).
 Աստուած գործիդ յաջողութիւն տայ:
 9 (1018).
 Աստուած երեսդ մայի:
 10 (1019).
 Աստուած զաւակներուդ բարին արթնցնէ:
 11 (1020).
 Աստուած ընդունելի թող ընէ:
 12 (1021).
 Աստուած թող գրկէ քեզ:
 13 (1022).
 Աստուած լոյսը ցուցնէ:
 14 (1023).
 Աստուած խելք ու շնորհք տայ քեզի:
 15 (1024).
 Աստուած համբերութիւն տայ:

- 16 (1025).
 Աստուած հոգիդ լուայ:
 17 (1026).
 Աստուած հոգին լուսաւորէ:
 18 (1027).
 Աստուած մուրատիդ հասցնէ:
 19 (1028).
 Աստուած ողորմած է:
 20 (1029).
 Աստուած ողորմի քու անցաւորաց:
 21 (1030).
 Աստուած ոտքէ ձեռքէ չձգէ:
 22 (1031).
 Աստուած ույժդ անպակաս ընէ:
 23 (1032).
 Աստուած ույժդ աւելցնէ:
 24 (1033).
 Աստուած ուրիշի դուռին մուխթաճ չընէ:
 25 (1034).
 Աստուած չարէ, փորձանքէ ազատէ:
 26 (1035).
 Աստուած պահէ քեզ:
 27 (1036).
 Աստուած սրտիդ համեմատ թող քեզի տայ:
 28 (1037).
 Աստուած տայ:
 29 (1038).
 Աստուած քեզ ազատէ ատ պէլայէն:
 30 (1039).
 Աստուած քեզի խելք ու շնորհք տայ:
 31 (1040).
 Աստուած քեզ խնդացնէ:
 32 (1041).
 Աստուած քեզի օգնական ըլլայ:
 33 (1042).
 Աստուած քեզ չար փորձանքներէ, չար վայրկեաններէ պահէ:
 34 (1043).
 Աստուած պահէ քեզի:

35 (1044).
Աստուածամօր ձեռքը միշտ վրադ ըլլայ:
36 (1045).
Աստուծոյ աչքը վրադ ըլլայ:
37 (1046).
Աստուծոյ օրհնութիւնը վրադ ըլլայ:
38 (1047).
Աստծու բարին:
39 (1048).
Բարեւ:
40 (1049).
Բարի ախորժակ:
41 (1050).
Բարի գիշեր:
42 (1051).
Բարի իրիկուն:
43 (1052).
Բարի լոյս:
44 (1053).
Բարի ճանապարհ:
45 (1054).
Բարի յաջողում:
46 (1055).
Բարի վերադարձ:
47 (1056).
Բարի օրեր:
48 (1057).
Բարով վայելես:
49 (1058).
Բարի տեսանք:
50 (1059).
Գլուխդ ողջ ըլլայ:
51 (1060).
Գործիդ քերտք:
52 (1061).
Երթաք բարով:
53 (1062).
Երկրագունդը բարի երազով թող ապրի:

54 (1063).
Չաւակի ցաւ չտեսնաս:
55 (1064).
Չաւակներովդ ուրախանաս:
56 (1065).
Չաւակներուդ խերը տեսնաս:
57 (1066).
Չօրանաս:
58 (1067).
Էրիկդ գլուխէդ անպակաս ըլլայ:
59 (1068).
Թեւերդ թռչուն ըլլան, ոտքերդ պինդ ըլլան, բռնած գործդ շուտ
ըլլայ:
60 (1069).
Լոյսերուն մէջը պառկի (ննջեցյալին):
61 (1070).
Խելք ու շնորհքով ապրիս:
62 (1071).
Ծլիս, ծաղկիս:
63 (1072).
Կաթս հալալ ըլլայ քեզի:
64 (1073).
Կեանքդ երկար ըլլայ:
65 (1074).
Կեանքիդ մէջը ցաւ չտեսնաս:
66 (1075).
Կոխած տեղդ վարդ թող բուսնի:
67 (1076).
Հայր Աբրահամին պերտքէքը մէջը ըլլայ:
68 (1077).
Հոգիդ դրախտ երթայ:
69 (1078).
Հոգիդ լոյսի մէջ ըլլայ:
70 (1079).
Հող բռնես՝ կանանչ թող դառնայ:
71 (1080).
Չայնդ անապատ:

72 (1081).
Ձեռքերդ դալար մնան:
73 (1082).
Չիթենիին վրայ ինչքան տերեւ կայ, այնքան տարի թող ապրիս:
74 (1083).
Մեծնաս՝ մեծ պատուի արժանանաս:
75 (1084).
Մեռելներուդ հոգիին ըլլայ:
76 (1085).
Մուրատիդ հասնիս ինչալլա՜հ:
77 (1086).
Ննջեցեալիդ օրերը քեզի ըլլան:
78 (1087).
Շատ տարիներու:
79 (1088).
Շէն կենաս:
80 (1089).
Շէն ու պայծառ մնաս:
81 (1090).
Շէնք ու շնորհքով մնաս:
82 (1091).
Ողջ ըլլաս:
83 (1092).
Ողջոյն:
84 (1093).
Ոտքդ ուղուով ըլլայ:
85 (1094).
Չարչարանքդ ապաշխարանք ըլլայ:
86 (1095).
Չոր բռնես՝ կանաչ դառնայ:
87 (1096).
Ջուրի պէս երկար կեանք ունենաս:
88 (1097).
Մէր ու մոտապալէթի մէջ ըլլաս:
89 (1098).
Մերունդի տէր ըլլաս:
90 (1099).
Սիմոն ծերունի դառնաս:

91 (1100).
Վարդի պէս բացուիս ինչալլահ:
92 (1101).
Վարձքդ կատար:
93 (1102).
Վերջդ բարի ըլլայ:
94 (1103).
Տունդ շինուի:
95 (1104).
Փառք Աստուծոյ:
96 (1105).
Քալած տեղդ վարդ թող բուսնի:
97 (1106).
Քար բռնես՝ ոսկի թող ըլլայ:
98 (1107).
Քէսիդ պօլուքիւն:
99 (1108).
Օճախդ չմարի:
100 (1109).
Օր ու արեւ ունենաս:



ԴԱՐՉՈՒԱԾՔՆԵՐ

- 1 (1110).
 Ադամ Եւայէն (շատ հին):
 2 (1111).
 Աժան Կարապետ (աժանագին):
 3 (1112).
 Ալիքի տոպրակ (հարուստ):
 4 (1113).
 Աղբօր պէս (մտերիմ):
 5 (1114).
 Ականջ գոցել (չլսել):
 6 (1115).
 Ականջ դնել (գողունի լսել):
 7 (1116).
 Ականջը բանալ (հասկցնել):
 8 (1117).
 Ականջը չտեսնալ (ձեռք չբերել):
 9 (1118).
 Ականջի ետեւ ձգել (յետաձգել):
 10 (1119).
 Ականջին դպնալ (լսել):
 11 (1120).
 Ականջին օղ ընել (յիշել):
 12 (1121).
 Ակռաները հաշուել (արատները գիտնալ):
 13 (1122).
 Աղ ու հաց (երախտիք):
 14 (1123).
 Այրած սիրտ (վշտացնալ):
 15 (1124).
 Այրած սիրտի մխիթարանք (սփոփիչ):

- 16 (1125).
 Անուշ լեզու (քաղցրախօս):
 17 (1126).
 Անուշ ցեց (մաշող սեր):
 18 (1127).
 Աշխարհքը գլխուն փլիլ (կործանուի):
 19 (1128).
 Աշխարհքին վերջը (տագնապալի):
 20 (1129).
 Աչք աչքի չունենալ (ատելի):
 21 (1130).
 Աչքէ ելած (անբաղձալի):
 22 (1131).
 Աչքը բաց մնալ (զարմանալ):
 23 (1132).
 Աչքը դուրսը (անհաստարիմ):
 24 (1133).
 Աչքը խածնել (համիլ):
 25 (1134).
 Աչքը ծակ (ազահ):
 26 (1135).
 Աչքը կուշտ (ոչ ազահ):
 27 (1136).
 Աչքը մտնալ (սիրաշահիլ):
 28 (1137).
 Աչքը ջուր կտրիլ (սպասել):
 29 (1138).
 Աչքի տակ ունենալ (նկատի առնել):
 30 (1139).
 Աչքի լոյս (սիրելի):
 31 (1140).
 Աչքի փուշ (ատելի):
 32 (1141).
 Առանց վարտիք (աղքատ):
 33 (1142).
 Արգիլուած պտուղ (մեղք):
 34 (1143).
 Աւելը թերս դնել (չընդունիլ):

35 (1144).
Բաժակը լեցուիլ (համբերութիւնը հատնի):
36 (1145).
Բամպակ դառնալ (կակուղնալ):
37 (1146).
Բարակ մանող (բժախնդիր):
38 (1147).
Բաց բերան (անգաղտնապահ):
39 (1148).
Բաց սիրտ (անկեղծ):
40 (1149).
Բարի ծաղիկ (անբարոյ կին):
41 (1150).
Բերան ծռել (խնդրել):
42 (1151).
Բերանը քանջար կը հաւաքէ (լռակեաց):
43 (1152).
Բերանէն կտրել (զրկել):
44 (1153).
Բերանէն փախցնել (զաղտնիքը յայտնել):
45 (1154).
Բերանը ծեփել (լռեցնել):
46 (1155).
Բերանը կաթ կը հօտի (դեռահաս է):
47 (1156).
Բերանը փախլայ չի թրջուի (անգաղտնապահ է):
48 (1157).
Բերանը փնտռել (խօսք քաշել):
49 (1158).
Բերանը փօրեագին բանալ (սովի մատնուի):
50 (1159).
Բերանը քիրա կուզէ (քչախօս է):
51 (1160).
Բերանի ձիւթ (բամբասանքի նիւթ):
52 (1161).
Բերանին սանձ դնել (լռեցնել-զսպել):
53 (1162).
Բռնէ քեչել մարդուն փէրչէնը (անհնար է):

54 (1163).
Գիրկս նստեր է, մօրուքս կը փետտէ (ապերախտ է):
55 (1164).
Գլխարկը ծուռ դնել (պարծենալ):
56 (1165).
Գլխուն նստիլ (ընկճել, բեռ դառնալ):
57 (1166).
Գլխուն կայնիլ (հսկել):
58 (1167).
Գլուխ գլխի (խորհրդաբար):
59 (1168).
Գլուխ հանել (յաջողիլ):
60 (1169).
Գլուխ ուռեցնել (շատախօսել):
61 (1170).
Գլուխը ուտել (ոչնչացնել):
62 (1171).
Գործ բռնել (ձեռք զարնել):
63 (1172).
Գրպանը ծակ (շռայլ):
64 (1173).
Դասը առնել (հասկընալ):
65 (1174).
Դաս տալ (խրատել):
66 (1175).
Դուռ բանալ (ելքը գտնել):
67 (1176).
Եզիպտական ստրուկ (ստրկամիտ):
68 (1177).
Եղունգը չարծենալ (անարժէք ըլլալ):
69 (1178).
Ետնէն իյնալ (հետամուտ ըլլալ):
70 (1179).
Երագ տեսնալ (զուր յուսալ):
71 (1180).
Երես դարձնել (հիասքափուիլ):
72 (1181).
Երեսի միւռոն (պատիւ):

73 (1182).
Երկար ականջ (սուանակ, տխմար):
74 (1183).
Երկար լեզու (շատախօս):
75 (1184).
Երկինքէն ինկած (անբասիր, անտեղեակ):
76 (1185).
Երկու ոտքը մէկ փապուճի մէջ դնել (ստիպուած):
77 (1186).
Երկու քարին արան (երկմիտ):
78 (1187).
Էշ կերեր է, էշ մեծցեր է (անկիրք է):
79 (1188).
Էշը չոքել (անել վիճակի ըլլալ):
80 (1189).
Թեթև ոտք (յաջողակ):
81 (1190).
Թելին դպնալ (խանգարել):
82 (1191).
Թելերը կոտրել (յուսահատեցնել):
83 (1192).
Թոյլ բերան (անգաղտնապահ):
84 (1193).
Թուրը կլլել (դժուարանալ):
85 (1194).
Թուրը բերանը չորնա (վախնալ):
86 (1195).
Ինկած ելած (փորձառու):
87 (1196).
Ինքզինքը ուտել (անհանգստանալ):
88 (1197).
Իր իղովը տապկուիլ (տանջուիլ):
89 (1198).
Իրիցկինը տօլմա կը փաթթէ (հագուադէպ է):
90 (1199).
Լոյս բացուիլ (բախտատրուիլ):
91 (1200).
Լեզուն բերանին մէջ կը դառնա (լեզուանի է):

92 (1201).
Խելացի Դաւիթ (անխելք):
93 (1202).
Խելք խելքի (զաղափարակից):
94 (1203).
Խելքը աշխատցնել (մտածել):
95 (1204).
Խելքը մտնալ (համոզել):
96 (1205).
Խելքը պառկիլ (համոզուիլ):
97 (1206).
Խելքը ուտել (խելքէ հանել, մոլորեցնել):
98 (1207).
Խելքի տոպրակ (ծաղրական՝ անխելք):
99 (1208).
Խենթ կով (խելակորոյս):
100 (1209).
Խենթի փէօստէքի (վերջ չունեցող աշխատանք):
101 (1210).
Խոտ ուտող (անբան):
102 (1211).
Խօսք նետել (սիրահետել):
103 (1212).
Ծակ աչք (անկուշտ):
104 (1213).
Ծանր խօսք (վիրատրանք):
105 (1214).
Ծունկին վրայ աղօթք չունի (ապերախտ է):
106 (1215).
Կայծին կոխած (անհանգիստ):
107 (1216).
Կապը կտրած (սանձարձակ):
108 (1217).
Կէսգիշերուայ երազ (անպատեհ):
109 (1218).
Կէս ճամբան մնալ (չյաջողիլ):
110 (1219).
Կիպրոսի էշ (յիմար):

111 (1220).
Կծու պիպեռ (դաժան):
112 (1221).
Կոտրած շերեփ (խառնակիչ):
113 (1222).
Կոտրած սիրտ (սրտաբեկ):
114 (1223).
Կոնակ ունենալ (հովանաւորուի):
115 (1224).
Կոնակը շոյել (հարուածել):
116 (1225).
Կոնակ դարձունել (խռովի):
117 (1226).
Կրակ դառնալ (կատողի):
118 (1227).
Կրակի զին (սուղ):
119 (1228).
Կրակի հետ խաղալ (վտանգաւոր գործ ձեռնարկել):
120 (1229).
Հալած իղ (ղիւրիւն):
121 (1230).
Հայր Արրահամի պերեքթ (առատութիւն):
122 (1231).
Հանած վառած (ճարպիկ):
123 (1232).
Հացը ծունկին (սպերախտ):
124 (1233).
Հացը կտրել (գրկել):
125 (1234).
Հինա դնել (ուրախանալ):
126 (1235).
Հինայած ետել (հանրաճանաչ):
127 (1236).
Հոգին առնել (սպաննել):
128 (1237).
Հոգին հանել (չարչարել):
129 (1238).
Հոգին սատանային ծախել (ուրանալ):

130 (1239).
Հոտ առնել (կռահել):
131 (1240).
Հոտը ելլալ (զաղտնիքը բացուիլ):
132 (1241).
Չախ է (անյաջողակ):
133 (1242).
Չախորդ Փանոս (անճարակ):
134 (1243).
Չեռք ձեռքի տալ (գործակցիլ):
135 (1244).
Չեռք տալ (1. օգնել, 2. յարմար ըլլալ):
136 (1245).
Չեռքէ ինկած (հին):
137 (1246).
Չեռքէն բռնել (աջակցիլ):
138 (1247).
Չեռքը բաց (առատածեռն):
139 (1248).
Չեռքը երկար (զոդ):
140 (1249).
Չեռքը ծանր (հարուածող):
141 (1250).
Չեռքը վրան դնել (1. հովանաւորել, 2. տիրել):
142 (1251).
Չեռքի թաշկինակ դառնալ (չարաշահուիլ):
143 (1252).
Չէք է (ջրի երես ելլող է):
144 (1253).
Ճակատը բաց (շիտակ):
145 (1254).
Ճակատը համբուրել (զնահատել):
146 (1255).
Ճակատի քրտինք (ազնիւ աշխատանք):
147 (1256).
Ճամբան կտրել (խանգարել):
148 (1257).
Ճամբան նայիլ (սպասել):

149 (1258).
Ճամբան փոխած (անբարոյական):
150 (1259).
Ճանկր իյնալ (զերուի):
151 (1260).
Ճերմակ երես (արդար):
152 (1261).
Մագերը աւել դարձնել (ծառայել):
153 (1262).
Մակարդ է (խառնակիչ է):
154 (1263).
Մահանա մուրալ (փափաքի):
155 (1264).
Մաղով ջուր կրել (ապարդիւն աշխատի):
156 (1265).
Մատը լգել (օգտուի):
157 (1266).
Մատերու վրայ հաշուած (քիչ):
158 (1267).
Մատերուն վրայ խաղցնել (ուզածը ընել տալ):
159 (1268).
Մարդ դառնալ (ինքնահաստատուի):
160 (1269).
Մետաքս դառնալ (կակղի):
161 (1270).
Մէջքը կտարել (խարխլի):
162 (1271).
Միտոն չունեցող (անպատկառ):
163 (1272).
Միտքէն Երուսաղէմ անցընել (ակնկալել):
164 (1273).
Մոլորուած ոչխար (սխալած):
165 (1274).
Մոխիրի վրայ նստիլ (սնանկանալ):
166 (1275).
Մուկ դառնալ (խեղճանալ):
167 (1276).
Մօրուք փետտող (անշնորհակալ):

168 (1277).
Մօրուքը կտրել (անպատուել):
169 (1278).
Մօրուքը հաշուել (թուլութիւնն իմանալ):
170 (1279).
Նոյի ազոալ (չվերադարձող):
171 (1280).
Շափխայիս հարցուր (անարժան է):
172 (1281).
Շարայի որկոր (որկրամոլ):
173 (1282).
Շարքի պէս (բարի):
174 (1283).
Շուքը ծանր (պատկառելի):
175 (1284).
Շուքին նստիլ (հովանաւորուի):
176 (1285).
Շուն դառնալ (կատղի):
177 (1286).
Ողջ մեռել (վտիտ):
178 (1287).
Ոռը բաց (շռայլ):
179 (1288).
Ոռի վարտիք դառնալ (ստորանալ):
180 (1289).
Ոռին վրայ նայիլ (նահանջել):
181 (1290).
Ոսկի մատներ (շնորհաշատ):
182 (1291).
Ոտք կոխել (յամառի):
183 (1292).
Ոտքերը ամպոտ (ամմեղ ձեւացող, երագող):
184 (1293).
Ոտքը իյնալ (աղաչել):
185 (1294).
Ոտքի կայնիլ (աստիճանաբար զօրանալ):
186 (1295).
Ոտքին տեղ ընել (տեղաւորուի):

187 (1296).
Չար աչք (նախանձ):
188 (1297).
Չար սահաք (անյաջող պահ):
189 (1298).
Չարը տանիլ (փրկուիլ):
190 (1299).
Չենկէն կախ (շատախօս):
191 (1300).
Պաղ ապուր (անհամ մարդ):
192 (1301).
Պապայիս գինը (սուղ):
193 (1302).
Պապանձումն Չարարիայի (լռակեաց):
194 (1303).
Պարապ տակառ (անգէտ):
195 (1304).
Պատերը ականջ ունին (անվստահելի է):
196 (1305).
Պատին վրայ ճանճ կայ (լրտես կայ):
197 (1306).
Պատիւին կերցնել (ընդունիլ):
198 (1307).
Պողազ պատռել (ճամարտակել):
199 (1308).
Պոչ խաղցնել (գայթակղեցնել):
200 (1309).
Պոչը ալէվ առած (անհանգիստ):
201 (1310).
Պոչը խուզել (դատտիարակել):
202 (1311).
Պոչը հանգուցել (վերջացնել):
203 (1312).
Պոչը ձգել (ազատ ձգել):
204 (1313).
Պոչը տնկել (խոռովիլ):
205 (1314).
Պոչով սուտ (անհնարին բան):

206 (1315).
Պորտը փողոցը կապուած (զբօսաւեր):
207 (1316).
Ջուր ծեծող (դատարկախօս):
208 (1317).
Ջուրը պատէն վեր հանել (դժուարացնել):
209 (1318).
Ջուրին երեսը ելլալ (արդարանալ):
210 (1319).
Սաճի հաց (երկերեսանի):
211 (1320).
Սառած լատա (անտարբեր):
212 (1321).
Սատանայի կամուրջէն անցնիլ (դժուարութիւն յաղթահարել):
213 (1322).
Սատանայի ձին հեծնիլ (կատղիլ):
214 (1323).
Սատկած ոջիլ (դանդաղաշարժ):
215 (1324).
Սարը ճիզմէլի Մահմէտ աղա (անյայտ):
216 (1325).
Մեւ երես (անամօք):
217 (1326).
Մեւ կատու անցնիլ (խոռովիլ):
218 (1327).
Մէֆիլ Կարապետ (աղքատ):
219 (1328).
Միրտ հատցնել (մտահոգուիլ):
220 (1329).
Միրտը մտնալ (սիրաշահիլ):
221 (1330).
Միրտէն հանել (չսիրել):
222 (1331).
Մողոմ Գոմոր (1. դժնաղէմ, 2. խառնափնթոր):
223 (1332).
Մոխի գլուխ (անարժէք):
224 (1333).
Մողմոն իմաստուն (ամենազէտ):

225 (1334).
Սուտ Քրիստոս (խարեբայ):
226 (1335).
Սուտի տոպրակ (ստախօս):
227 (1336).
Սուրբի կտոր (անբասիր):
228 (1337).
Սուրբ Մարտիրոսի ջուր (օրհնուած):
229 (1338).
Սուրբ Սարգիսի մոխիր (հագուագիւտ):
230 (1339).
Վագ անցնիլ (հրաժարիլ):
231 (1340).
Վայրի կատու (կատարի):
232 (1341).
Վերնատունը պարապ (անխելք):
233 (1342).
Վիզ ծոել (խնդրել):
234 (1343).
Վիզին նստիլ (բեռ դառնալ):
235 (1344).
Վրայ գլուխ (հագուստ):
236 (1345).
Վրաս գրէ (անհատատալի է):
237 (1346).
Տախտակը պակաս (անխելք):
238 (1347).
Տակէն դուրս գալ (արդարանալ):
239 (1348).
Տակը մնալ (պարտուիլ):
240 (1349).
Տակէն կ'երթայ՝ խապար չէ (անտեղեակ է):
241 (1350).
Տասը մատը մոմ դարձնել (նուիրուիլ):
242 (1351).
Տէւին ոռը մերտիվէնսիզ կը պագնէ (բարձրահասակ է):
243 (1352).
Տիտիքը չալել (խօսքը առաջ տանիլ):

244 (1353).
Տոպրակը թօթուել (գաղտնիքը գիտնալ):
245 (1354).
Տունը տեղէն հանել (իրար անցընել):
246 (1355).
Փակ բերան (գաղտնապահ):
247 (1356).
Փապունիս թէքը (անարժէք):
248 (1357).
Փէշին տակը առնել (հովանաւորել):
249 (1358).
Փիւրիզ հանել (պատճառ բռնել):
250 (1359).
Փորի ցաւ ունենալ (կարիք ունենալ):
251 (1360).
Քար կտրիլ (զարմանալ):
252 (1361).
Քար սիրտ (անխիղճ):
253 (1362).
Քար քաշել (տքնիլ):
254 (1363).
Քարը քարին դնել (շինել):
255 (1364).
Քէսէն բաց (առատածեռն):
256 (1365).
Քիթ պոչ ընել (չհամակրիլ):
257 (1366).
Քիթ քիթի տալ (մտերմանալ):
258 (1367).
Քիթէն ինկած (նմանակ):
259 (1368).
Քիթը խոթել (խառնուիլ):
260 (1369).
Քիթը կախել (դժգոհիլ):
262 (1370).
Քիթը մտնալ (մտերմանալ):
262 (1371).
Քիթը տնկել (գոռոզ):

263 (1372).
Քիթի փու (մտերիմ):
264 (1373).
Քիթին խնդալ (հեզնել):
265 (1374).
Քիթին չտանիլ (չհամհի):
266 (1375).
Օձ տաքցնել (թշնամի աճեցնել):
267 (1376).
Օրը մեռցնել (ժամավաճառութիւն ընել):
268 (1377).
Օրը օր ընել (վայելել):
269 (1378).
Օրօրոցը օրօրել (երախտիք ունենալ):
270 (1379).
Ֆէնէռի պէս (լուսատր):



ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1 (1380).
Անդին մաղարա,
Ասդին մաղարա,
Քրիստոսը մէջը
Դիրիք կը խաղայ:
(Ժամացոյց)

2 (1381).
Ալալոս, փալալոս,
Ցատկոտող Մարկոս:
(Լու)

3 (1382).
Աստեղ պուպուզ,
Աստեղ պուպուզ,
Գործը լմնցաւ՝
Դուռնէն դուրս:
(Աւել)

4 (1383).
Անուն ունիմ, մարմին չունիմ,
Կարճ ու երկար հասակ ունիմ,
Քեզի հետ միշտ ընկեր եմ ես,
Բայց գիտցիր որ ոչինչ եմ ես:
(Շուք)

5 (1384).
Աչքեր ունի, ոտքեր չունի,
Մարդ կը սպաննէ՝ ձեռքեր չունի,
Հակիթ կ'ածէ՝ փետուր չունի,
Աղ ի՞նչն է, ըսէ նայիմ:
(Օձ)

6 (1385).

Առանց մազի կը մաղուիմ,
Հողին մէջը կը շաղուիմ,
Ծառին, բոյսին կեանք կու տամ,
Սեւ հողը կը ներկեն կանաչ:
(Անձրեւ)

7 (1386).

Ասեղ չտեսած տոպրակ,
Կացին չտեսած փայտ,
Տէյիրմէն չգացած ալիր:
(Փշատ)

8 (1387).

Ասեղ ունի՝ դերձակ չէ,
Կը կծկուի՝ կծիկ չէ,
Ոտքեր ունի՝ մարդ ալ չէ,
Հակիթ կ'ածէ, հաւ ալ չէ,
Ըսէք տեսնան, առ ի՞նչ է:
(Ոգնի)

9 (1388).

Աստուած կը շինէ տունը,
Մարդը կը բանայ դուռը:
(Չմերուկ)

10 (1389).

Բերդէն ինկաւ՝ բացուեցաւ,
Ջուրը ինկաւ՝ չհալեցաւ:
(Հակիթ)

11 (1390).

Գիւղակ մը կայ մարդով լեցուն,
Չկայ այնտեղ ձան ու ձուն,
Հոն արաղաղը չի հաներ ձայն,
Իսկ գիւղացիք՝ չեն արթննար:
(Գերեզմանատուն)

12 (1391).

Դիակը կ'ուտեն,
Դագաղը կը նետեն:
(Արեւածաղիկ)

13 (1392).

Դրամով չ'առնուիր,
Տոպրակը չ'իղրուիր,
Ատկէ արուոր բան
Չի գտնուիր:
(Քուն)

14 (1393).

Թագաւոր մը կայ հինոց,
Գլխուն քազն է օսկէ սղոց,
Ելաւ կանչեց ննջեցելոց՝
Քրիստոս յարեաւ ի մենելոց:
(Աքաղաղ)

15 (1394).

Իմ տափուկս՝ քու տափուկդ,
Իմ լուրդս՝ քու ծակուկդ:
(Երկանաքար)

16 (1395).

Ինքը փայտէ, գլուխը մազէ,
Ես կը քաշեն, ան կը վազէ:
(Ճախարակ)

17 (1396).

Իչիչիկ պիճիճիկ
Մէջը լեցուն թուրշուճիգ
(Լեմն)

18 (1397).

Լոյս կ'ըլլայ, մութ կ'ըլլայ,
Մէկ մարդը երկու կ'ըլլայ:
(Հայելի)

19 (1398).

Խորունկ հոր մը ունիմ ես,
Մէջը ամէն ինչ կը գտնես:
(Ականջ)

20 (1399).

Կակուղ կաշի,
Ո՛չ կը հալի,
Ո՛չ կը մաշի:
(Լեզու)

21 (1400).

Կապուտիկ, կապուտիկ,
Անունը ըսեմ՝ չգիտնաս ինչ:
(Կապ ու տիկ)

22 (1401).

Կռնակը փայտ է, փորը մազ է,
Առտուները վրադ կը վազէ:
(Խոզանակ)

23 (1402).

Կրակը կը ձգեմ՝ չ'այրիք,
Ջուրը կը նետեմ՝ չիտանիր,
Գետինը կը թաղեմ՝ չիփտտիր:
(Անուն)

24 (1403).

Հողին տակ
Մօրուքով Տէր Հայր:
(Մոխ)

25 (1404).

Ձեր մօր գաւակն է ան,
Բայց ձեր եղբայրը չէ,
Հապա ի՞նչն է:
(Զոյր)

26 (1405).

Ճերմակ տուն,
Չունի դուռ:
(Հակիթ)

27 (1406).

Մէկ մաքինա մը գիտեմ,
Մարդու խելքի արդիւնք է,
Կը մտածէ, կը գրէ.
Աշխարհքին կը զարմացնէ:
(Համակարգիչ)

28 (1407).

Մէկ անգամ ան կը ցանուի,
Եւ անընդհատ կը հնձուի,
Բայց երբեք ան չի պակսիր,
Թէ գիտես՝ ըստ ինձի:
(Գլխու մազեր)

29 (1408).

Մութը տուն, մութը տուն,
Հոռոմ պապին մէջը քուն:
(Լեզու)

30 (1409).

Մօրուքէն կը բռնեմ՝
Կռնակս կը ցատկէ:
(Կողով)

31 (1410).

Նայիմ, նայիմ՝
Ծակը մտնիմ:
(Թել ասեղ)

32 (1411).

Շուն մը ունիմ
Բերանը երկաթ:
(Սնտուկ)

33 (1412).

Ո՛չ քալելն կը յոգնի,
Ո՛չ ուտելու պէտք ունի,
Բայց ինքն է որ քեզ կ'ըսէ.
— Ե՛լ, կե՛ր, պառկե՛, աշխատե՛:
(Ժամացոյց)

34 (1413).

Չէօը ճերմակ, հունտը սեւ,
Չեոքով կը ցանեն, աչքով կը հնձեն:
(Գիրք)

35 (1414).

Չորս քէօշէ քուրսի,
Մէջը լի ոսկի,
Էլլող մտնողը մէկ խօսքի:
(Եկեղեցի)

36 (1415).

Սեւ էր առաջ՝ կը կարմրի,
Երբ կեր չունի՝ կը մարմրի,
Բերան չունի՝ լափել կընայ,
Բայց ջուր խմել չի սիրեր ան:
(Կրակ)

37 (1416).

Վրան մարմար, տակը մարմար,
Մէջը աղուոր մէկ թռչնակ:
(Կրիայ)

38 (1417).

Վրաս կ'առնեն՝ կու լայ,
Վար կը դնեն՝ սուս կ'ըլլայ:
(Չութակ)

39 (1418).

Ուռում Երէն ջուր կը խմէ,
Հինտիստանէն ձայն կը հանէ:
(Հնդկահաւ)

40 (1419).

Փուշեր ունի՝ վարդ չէ,
Միշտ կը խաղայ՝ գուարթ է,
Բերան ունի՝ ձայն չունի,
Ու միշտ խենթ է գով ջուրի:
(Չուկ)

41 (1420).

Քիթ ունի, աչք չունի,
Կը քալէ քայց իզ չունի:
(Նաւակ)

42 (1421).

Բան մը կայ,
Որ չես ուզեր ունենալ,
Բայց եթէ ունենաս,
Չես ուզեր կորսնցնել:
(Դատ)



ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

1 (1422).

Մեզի կար մէկ տանձի ծառ,
Տանձի ծառի ծայրը կար
Մէկ ծանր տանձ.
Ո՞ր է մեր տանձի ծառը,
Ո՞ր է մեր տանձի ծառի
Ծայրի ծանր տանձը:

2 (1423).

Դուրս տարի պարկ մը գարի.
Մէկ պարկ գարին դուրսէն տարին:

3 (1424).

Այսօր կէտօրին տանիս պաշարը,
Տանիս պաշարը այսօր կէտօրին:

4 (1425).

Զնոռնաս գալ մեր թաղը.
Խնձոր կ'ուտես դուն վաղը:

5 (1426).

Չուկը ուտեմ,
Մուկը նետեմ,
Մուկը նետեմ,
Չուկը ուտեմ:

ՅԱՆԳԱԻՈՐ ԱՍԱՅՈՒԱԾՔՆԵՐ

1 (1427).

Աղջիկ, աղջիկ՝
Քարէ չղջիկ:

2 (1428).

Աման՝
Բանկալթրի⁶⁴ համան:

3 (1429).

Այո՛, այո՛ - ո՛չ, ո՛չ՝
Էվէ՛տ, Էվէ՛տ - հայը՛ր, հայը՛ր:

4 (1430).

Աս բանը բան չէ,
Գնայ պապայիդ կանչէ:

5 (1431).

Դուն ես, դուն ես,
Կլորիկ շուն մըն ես:

6 (1432).

Ե՛ս, պապա՛մ, ե՛ս՝
Քե՛ս, պապա՛մ քե՛ս (կտրի՛ր):

7 (1433).

Երազ տեսայ մաշալլահ,
Խէր ըլլայ ինշալլահ:

8 (1434).

Երիտասարդ է՝
Անունը վրան է:

9 (1435).

Իշտէ ասանկ բաներ՝
Մայտանոզը քէօֆթներ:

10 (1436).

Խօսքս մտիկ ըրէ,
Աթոռին վրայ տիտիկ ըրէ:

11 (1437).

Հաճի՛
Հարամ է մեզի:

12 (1438).

Համմէ՛
Շարքս ծամէ:

13 (1439).

Հաց՝
Բերանդ բաց:

14 (1440).

Մեղա՛յ՝
Մեղուին ք...քը աղա:

15 (1441).

Մերսի՛
Փապուճընըն թերսի:

16 (1442).

Ո՛չ, ո՛չ՝
Ուտես կատուի պոչ:

17 (1443).

Սի՛, սի՛, սի՛
Ֆասուլիա փլաքիսի⁶⁵:

18 (1444).

Տաշեմ, տաշես,
Արտաշես:

19 (1445).

Տղա՛յ, տղա՛յ՝ ոսկի ճղայ,
Ա՛ն քոչաներդ, զնա՛ խաղա:

20 (1446).

Տնտես՝
Հաշիդ շիտակ տես:

21 (1447).

Ուրբաթ, Շաբաթ, Կիրակի,
Քէտանեսին քէպապի,
Պօյրդ սիրեմ, Ագապի՛:

22 (1448).

Օ՛ֆ, օֆիկ՝ Սամաթիալը⁶⁴ Սօֆիկ,
Գումգարուլը⁶⁴ Որդիկ,
Ենիգարուլը⁶⁴ Սուրբիկ:

23 (1449).

Փառք քեզ, Տէ՛ր,
Պէքեարները կարգես, Տէ՛ր:



ՀԱՒԱՏԱԽՔՆԵՐ

- 1 (1450).
Եթէ ականջող զնգայ, քեզ կը յիշեն:
- 2 (1451).
Եթէ աղը թափուի, տունին մէջ կռիւ կ'ըլլայ:
- 3 (1452).
Եթէ աչքդ խաղայ, հիւր պիտի գայ:
- 4 (1453).
Եթէ ասփիղ մէջը քերուի, դրամ պիտի առնես:
- 5 (1454).
Եթէ գիշերը եղունգ կտրես, բախտդ կը գոցուի:
- 6 (1455).
Եթէ գիշերը սեղանին ծածկոցը դուրսը թօթուես, տունին պերէքը կը փախի:
- 7 (1456).
Եթէ գիշերը տունը ալես, կ'աղքատնաս:
- 8 (1457).
Եթէ գիշերը ծամոց ծամես, մեռելներու միսը ծամած կ'ըլլաս:
- 9 (1458).
Եթէ լաթերդ թերս հագնիս գործերդ թերս կ'երթան:
- 10 (1459).
Եթէ կօշիկը հակառակ կողմի ձգես, տունին մէջը մարդ կը մեռնի:
- 11 (1460).
Եթէ հայելին իյնայ կտորի, ընտանիքին անդամներէն մէկը կը մեռնի:
- 12 (1461).
Եթէ հացին սեղանը թուրթով մաքրես, տունին պերէքը կը փախի:
- 13 (1462).
Եթէ հաւը տունին մէջ արլորի պէս կանչէ, անյաջողութիւն կ'ըլլայ:

- 14 (1463).
Եթէ դարդան գոգոյ, դժբախտութիւն կ'ըլլայ:
- 15 (1464).
Եթէ ճամբան առջեւէդ սեւ կատու անցնի, ճախորդութիւն կ'ըլլայ:
- 16 (1465).
Եթէ մարդու ոտքին տակը տափակ է, անբախտ կ'ըլլայ:
- 17 (1466).
Եթէ մկրատին բերանը բաց մնայ, տունին մէջը կռիւ կ'ըլլայ:
- 18 (1467).
Եթէ մրջիւնին վրայ կռիւես, ան կ'անհիծէ:
- 19 (1468).
Եթէ մուճակը թերս դրուած ըլլայ, տունին մէջը մարդ կը մեռնի:
- 20 (1469).
Եթէ նորածինի առաջին կտրուած եղունգները հայրը գրպանը պահէ, գործերը յաջող կ'երթան:
- 21 (1470).
Եթէ շունը առանց պատճառի ոռնայ, մերձաւորի մահ կը պատահի:
- 22 (1471).
Եթէ պատառաքաղը գետին իյնայ, էրիկ մարդ պիտի գայ, եթէ դգալ կնիկ:
- 23 (1472).
Եթէ սանրուած մազը փողոց նետես, թռչունին ոտքը կ'անցնի, ան կ'անհիծէ:
- 24 (1473).
Եթէ սատանայական բանի մը հանդիպիս՝ երեք անգամ խաչ հանէ եւ Յիսուս Քրիստոս ըսէ, որ գերծ մնաս փորձանքէն:
- 25 (1474).
Եթէ վառուած ձէթը թափուի, մերձաւոր մը կը մեռնի:
- 26 (1475).
Եթէ տունին մէջը հովանոց բացուի, մարդ կը մեռնի:
- 27 (1476).
Եթէ տունին մէջ ապակեղէն կտորի, չարը կտանի:
- 28 (1477).
Եթէ քառսունքը չելած մանուկին լաթերը գիշերը դուրսը ձգես, սատանաները կը զարնեն, սատանայակոխ կ'ըլլայ:

ԱՂՕԹՔՆԵՐ

ՀՄԱՅՎԱԿ ԱՂՕԹՔՆԵՐ

1 (1478).

ԱՂՕԹՔ ՉԱՐ ԱՉՔԻ⁶⁶

Լուծը լուծանեցին,
Արդարը ազատեցին,
Չար աչքը չար փուշը դրին,
Մեղաւորը տանջեցին.
Մէկը՝ չար աչքին,
Մէկը՝ չար նիաթին,
Մէկը՝ չար խորհուրդին:

2 (1479).

ԱՂՕԹՔ ՉԱՐ ԱՉՔԻ⁶⁷

Չար աչքը ճաթի,
Չար կուշտը փաթի,
Աչք տնկողին աչքը ճաթի:

3 (1480).

ԱՂՕԹՔ ՉԱՐ ՆԱԶԱՐԻ

Մարիամ մայր, ո՞ր կ'երթաս,
Առ սեւ կոթ դանակը,
Մտիք Ադամայ դրախտը,
Կտրէ՛ չար աչքը,
Կտրէ՛ չար նազարը,
Բժշկէ՛ որուն որ կ'աղօթեմ:

4 (1481).

ԱՂՕԹՔ ՎԱԽԻ

— Հայր Արրահամ, ո՞ր կ'երթաս:
— Մեւ երկրի եկեղեցին.
Քրիստոս Տէրն եկաւ,
Սիրտին մտաւ,
Գլուխը ելաւ,
Աչքն իջաւ,
Վախը առաւ,
Խաւարեցաւ:

5 (1482).

ԱՂՕԹՔ ՄԱՆՈՒԿԻ ՓՈՐԱՅԱԽԻ⁶⁸

Աստուածամայրը կոյս է,
Դրախտին մէջը նստած է,
Հացը զարի է,
Դգալը կուճուկ է.
Թո՛ղ տուր աս մանուկին
Խիթուկները, թո՛ղ տուր:

6 (1483).

ԱՂՕԹՔ ՕՉԸ ԽԱՅԹԱԾԻ

Երլան, երլան, եալ օթի,
Չալրգ օթի, պալ օթի,
Երլանը պաղլատըլար,
Տէսթանը սեօյլետիլեր,
Երլան՝ չո՛ւշ, երլան չո՛ւշ:

Օձ, օձ, կլոր խտտ
Փշախտտ, մեղրախտտ,
Օձը կապեցին,
Աղօթքը ըսին,
Օձը չկայ, օձը չկայ:

7 (1484).

ԵՒ ՄԱՀԱԲԵՐ ԴԱՌՆԱԹՈՅՆ ՕՉԻՆ

Եւ մահաբեր դառնաթոյն օձին,
Եւ որ ի նմա ասեաց տիեզերացաւ շարութիւն,
Ի սատակունն եղիցի նորին,
Նոյն ինքն ի կորուստ, անբժշկական հարուած,

Տանջանացն սովաւ մատնիցի,
Կապեցի եւ ընթռնեցի:
Չար իշխանքն հալածին,
Որ ընդ ծառայս քո մատնեցին,
Երեւոյն նշան խաչին,
Անբերութիւն կործանեցի.
Ամէն:

8 (1485).

ԵԼԼԱՆՔ, ԵՐԹԱՆՔ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԸ

Ելլանք, երթանք սուրբ տաճարը,
Չեղքս առնեն սուրբ գիրքերը,
- Մարիամ մայր, քո՞ւն ես մը, արթո՞ւն ես մը:
- Ո՛չ քուն եմ, ո՛չ արթուն (տեսիլք կը տեսնայ).
Եկան մեր Տէրը բռնեցին,
Չեղքը ոտքը կապեցին,
Խաչին վրայ հանեցին,
Փայտին վրայ խաչեցին,
Գլուխը փուշէ թագ դրին,
Բերանը աղու լեցուցին.
Յորդանան քաղաքին գետինը թնդաց,
Երկինքին աստղերը վար թափեցան,
Արեւը, լուսինը խաւարեցան,
Դժոխքները արուեցան:
Մարիամ մայրը դրախտը նստաւ,
Այս աղօթքը ով որ գիտէ,
Օրը երեք անգամ յիշէ,
Աստուած անոր մեղքերը քաւէ:
Ամէն:

9 (1486).

ԱՍՏՈՒԱԾԱՍԱ՛ՅՐ, ՄԵՂԱՅ ՔԵՉ

Աստուածամայր, մեղայ քեզ,
Օրհնած ջուրով լուա՛ մեզ,
Սուրբ աղօթքով սրբէ՛ մեզ,

Ամենայն շարէ փրկէ՛ մեզ:
Ամէն:

10 (1487).

ԳԻՇԵՐՈՒՄԱՆ ԱՂՕԹՔ

Պաղատիմ առ Ս. Խաչն
Աստուած ամենակարող,
Որ վասն իմոյ մեղացս մեռար
Ի վերայ խաչափայտին՝ լեառն թիգ:
Հանապազ աղաչեմ գրեզ
Ս. Խաչ Յիսուս Քրիստոսի,
Ողորմեա՛ ինձ,
Հասո՛ գմեղաւորս
Ի ճանապարհն փրկութեան,
Ազատեա՛ եւ գերծեա՛
Ի հոգեւոր եւ ի մարմնաւոր վտանգից,
Ո՛վ խաչ Յիսուսի Նազովրեցոյ,
Չոր պաշտեմ յաւիտեան,
Հալածեա՛ յինէն գշար ոգին,
Չի փախուստ լիցի յինէ
Յաւիտեանս յաւիտենից
Ամէն:

11 (1488).

ՊԱՌԿԵՍՅԻ, ԳԵՐԵՉՄԱՆՍ ՊԱՌԿԵՍՅԻ

Պառկեցի, գերեզմանս պառկեցի,
Հոգիս, մարմինս քեզ թելիմ ըրի,
Ով սուրբ Աստուազամար.
Մէն պէնի տիշման էլինէ վէրմէ:
(Դուն ինձ թշնամիին ձեռքը մի՛ տար).
Ամէն:

12 (1489).

ՀԻՄԱ ԵՍ ՊԱՌԿԻՄ ՊԻՏԻ

Հիմա ես պառկիմ պիտի,
Յիսո՛ւս, աղօթք ընեն պիտի,

Բոլոր մեղքերս դուն ներէ,
Հապա նորէն չարքննամ,
Շնորհ ըրէ՝ մօտդ գամ.
Ամէն:

13 (1490).

ԽԱՉՆ ԽԱՉԻ ՎՐԱՅ

Խաչը խաչի վրայ,
Խաչը բարձիս վրայ,
Ահա կը մտնամ գերեզման,
Հոգիս քեզի էմանաթ,
Պահապան հրեշտակ.
Ամէն:

14 (1491).

ՃՐԱԳԸ ՄԱՐԵՑԱԻ

Ճրագը մարեցաւ,
Չարերը խափանուեցան,
Խաչը բարձիս տակ,
Գաւազանը սրտիս վրայ,
Մո՛րք Աստուածամայր,
Դու՛ն եղիր ինձ պահապան.
Ամէն:

15 (1492).

ՕՀԱՆ, ՕՀԱՆ, ՈՍԿԵՔԵՐԱՆ

Օհան, Օհան Ոսկեքերան,
Եօքը խաչ, եօքը Աւետարան,
Գլխուս վրան դուն պահապան,
Օրհնեա՛ Տէր մեզ, Յիսուս Քրիստոս.
Ամէն:

16 (1493).

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԶԱՐՏԱՇ

Սուրբ Սարգիս զարտաշ,
Մեհրամա եօլտաշ,

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵՂՔԱՅՐ

Սուրբ Սարգիս եղբայր,
Թշուառին բարեկամ,

Հէր քիմ քի պիզիմ դափույա կէլիքստ՝
Էլի՛ պաղլու, տիլի՛ դաշ:

Ով որ մեր դուռը գայ՝
Չեոքը՝ կապուի, լեզուն՝ քար:

17 (1494).

ԱԹԷՇ ԱԼԷՎԻՆ ԿԷՕԶ-ԿԷՕԶԻ

ԿՐԱԿԻ ԲՈՅԸ ԱՉՔ ԱՉՔԻ

Աթշ ալէվին կէօզ-կէօզի,
Նուռ կիպի փառլոյօր իւզի,
Խաչ իստիւնտ տուրան գուզը,
Վատ էտքիմ՝ վերմէզ իսմին,
Չէվրէսի ճէլալընտան կիզէլ,
Քէնտիսի նուռ իսիմլէր եազար,
Իսմիմիզի եազմա՞զմըսըն:
- Կէօքտէն սիզին իչին կէլտիմ,
Էօմրիմ սիզէ պատ էյլէտիմ,
Իստէրիմի վերմէ՞զմիսին,
Յիսու՛ս հերքէշիմի:
Գորզմա, գորզմա,
Պէն սէնին պերապէր իմ,
Էքրաֆընա հի՛չ պազընմա,
Չիւնքի սէնին քանըրըն՝ պէն իմ,
Սանա եարտըմ էտէճէիմ,
Սանա տեսքէն օգույաճայըմ,
Սանա գուվէք վերէճէիմ:

Կրակի բոցը աչք աչքի,
Դէմքը լոյսի պէս կը փայլի,
Խաչին վրայ եղող գառնուկ,
Խնդրեցի, չտուաւ անունը,
Շրջապատը իր փայլէն սիրուն,
Ինքը լոյս՝ անուններ կը գրէ,
Մեր անունները գրած չէ՞ս:
- Երկինքէն եկայ ձեզի համար,
Կեանքս զոհեցի ձեզի համար,
Իմ ուզածս չպիտի՞ տար.
Յիսուսը ասէնունն է:
Մի՛ վախնար, մի՛ վախնար,
Ես քեզի հետ եմ,
Բնաւ շուրջդ մի՛ նայիր,
Քանի որ ես քեզ ծանօթ եմ,
Ես քեզի պիտի օգնեմ,
Պիտի երգեր տրվեցնեմ,
Քեզ պիտի զօրացնեմ:

Իսա տէտի. - Պէն չոսյան ըմ,
Պէնիմքիլէրի քանըրըմ,
Օնլար իչին ճան վերիրիմ:
Իսա տէտի. - Պէն գափու ըմ,
Գուրթուլաճազ պէնտէն կիրէր,
Կիրէր, չգար, օրլազ պուլուր:

Յիսուս ըսաւ. - Ես հովի եմ,
Իմիններս ես կը ճանչնամ,
Անոնց համար կեանքս կու տամ:
Յիսուս ըսաւ. - Ես դարպաս եմ,
Փրկուողը ինձմէ կ'անցնի,
Կ'ելլայ կը մտնայ, սնունդ կը գտնայ:

Ռա՛ պ, սէն պանա եարա,
Հէր հալըմ մալում սանա,
Սէնտէն պաշխա Ալլահը եօ՛ք
Տայիմ մուխթաճըմ սանա,

Տէ՛ր, դուն իմ օգնականն ես,
Ամէն վիճակս յայտնի է քեզ,
Քեզմէ գատ ուրիշ Աստուած չկայ,
Մշտապէս կարօտ եմ քեզ,

Գօլըն, գանատըն, սիփերըն,
Իւքսէք օլա՝ սէն սըն.
Ամէն:

Թեւս, քիկունքս, յենարանս,
Բարձրադիրս դուն ես.
Ամէն:

18 (1495).

ԵԱԹՏԸՄՍԱՂԸՄԱ

ՊԱՌԿԵՑԱՅ ԱՋԻՍ

Եաթտըն սաղընա,
Տեօնտիւն սոլընա,
Մէլէքլէր շահիթիւն օլսուն
Տինիմի իմանընա,
Ալլահ՝ պաշ.
Յիսուս՝ եղլաշ,
Քիւն քիմե քեօթիւլըք եափարսա՝
Աղզը՝ քիլիթ, տիլի՝ թաշ.
Ամէն:

Պառկեցայ աջիս,
Դարձայ ձախիս,
Հրեշտակները վկայ ըլլան
Կրօնքիս, հաւատքիս.
Աստուած գլխատրս է,
Յիսուսը՝ ուղեկիցս,
Ով որու գէշութիւն ընէ՝
Բերանը կղպուի, լեզուն քարանայ.
Ամէն:

19 (1496).

ԱՂՕԹՔ ՆՈՐԱԼՈՒՄՆԻ՞՞


— Նոր լուսին, նոր շնորհատր,
Իմ աղբարս նոր թագատր,
Ծեր գացիր, կենճ էկար,
Ինձ ի՞նչ բերիր արմաղան:
- Քեզի՝ խըսմէթ,
Սրտիդ՝ մուհապպէթ,
Ձեռքիդ՝ պէրէքէթ:


20 (1497).

ԱՂՕԹՔ-ՍԱՂԹԱՆՔ

Ամենասուրբ Երրորդութիւն,
Տուր հիւանդաց բժշկութիւն,
Եւ մեր մեղացս՝ թողութիւն,
Ազգիս Հայոց՝ սէր միութիւն,
Եւ աշխարհին՝ խաղաղութիւն.
Ամէն:

IV ԾԷՍՆԲ





I (1498). Մ Կ Ր Տ Ո Ւ Բ Ի Բ Ե

Անձպէս որ ամուսնութեան Ս. Պատկին կնքահայր եւ կնքամայր եղած է, ան ալ նոր ծնած մանուկին կնքահայրը, կնքամայրը կ'ըլլայ: Անոնք նախօրոք պէպէքին հագուստները եւ նուէրները կը շտկեն:

Ինչպէս հարսնիքի ժամանակ, մկրտութեան ատենն ալ նախօրոք եկեղեցիին հետ կը պայմանաւորուին օրը, ժամը, քանի՛ հոգետրականով եւ ի՛նչ աստիճանի կնունք պիտի ըլլայ, անշուշտ ըստ սակագնի: (Եկեղեցիի նստարաններուն վրայ ծաղիկներ ամրացնել, հրաւիրատուներ պատրաստել, աս բոլորը մասնաւոր հաստատութիւն կայ, կը կարգաւորէ):

Կիրակի օրը, տունէն եկեղեցի գացած ատենը մայրը պէպէքին հագուստները կը հագցնէ. կնքահօր ձեռքը կու տայ: Եկեղեցին պէպէքին հագուստները կը հանեն: Կնքահօր կուրծքին ճերմակ ձեռագործուած անձեռոց կը դնեն, վրան ալ խալու մը, որոնք պէպէքին մայրը շտկած կ'ըլլայ: Կնքահայրը պէպէքը խալուին վրան կը բռնէ:

Տէր հայրը, դպիրները կը սկսին Ս. Գիրք կարդալ, երգել: Մկրտող հոգետրականը կնքահօրը կը հարցնէ.

— Մանուկը ի՞նչ կը խնդրէ:

Ան կը պատասխանէ.

— Հաւատք, յոյս, սէր եւ մկրտութիւն:

Երեք անգամ կը հարցնէ: Երեք անգամն ալ նոյն պատասխանը կ'առնէ:

Յետոյ պէպէքին անունը կը հարցնէ: Կնքահայրը կ'ըսէ.

— Երազ:

«Երազ» ըսելով կը կարդան: Պէպէքին սուրբ անագանը կը խոթեն կը հանեն: Միտոնը կը քսեն՝ ճակատին, ափերուն մէջը, ոտքերուն տակերը, բերանին, աչքերուն, ականջներուն:

Գերշ. Տ. Մեսրոպ արք. Մութաֆեանը շատ սքանչելի կ'ըսէ աս բոլորը: Լսելը արժէ. «Աս ականջներդ աղտոտ խօսքեր չլսեն, աս շրթունքներդ աղտոտ խօսքեր չարտասանեն, այլ միայն բարի խօսքեր ըսեն: Աս աչուկները միայն աղուոր բաներ թող տեսնան: Աս ոտքերը թող միայն շիտակ ճամբաներ երթան»: Ես, անշուշտ, չեմ կրնար անոր ըսածները հիմա բառ առ բառ յիշել, բայց զինք լսել կ'արժէ:

Պէպէքը կնքահայրին ձեռքը կու տան: Յետոյ տանարին շուրջը կը դարձնեն զինք: Կնքամայրը հագուստները բերած կ'ըլլայ, կը հագցնէ: Նուէրը կու տայ: Միւսներն ալ կարգով կը մօտենան, հարը, մարը կը շնորհաւորեն, ոսկեղէն, արծաթեղէն նուէրները կու տան, կ'ըսեն՝ «Բարի գաւակ ըլլայ», իսկ կնքահօրը եւ կնքամօրը կ'ըսեն՝ «Աստուած ընդունէ»: Եկեղեցիի դուռէն դուրս ելլալու ատենը ամէն ընտանիքի տուփ մը ճերմակ շաքարներ լեցուած պոնպոններն էր կու տան, որոնք նաեւ տունները որպէս յիշատակ կը պահուին:

Եկեղեցիէն վերջը կա՛մ քովի սրահին մէջ քոքթէյլ փարթի կ'ըլլայ, պէյպի փարթի կ'ըլլայ՝ ոտքի վրայ հիւրասիրութիւն, եւ կամ սեղաններու շուրջը:

Մկրտուած պէպէքին հայրը, մայրը ի նշան յարգանքի եւ երախտագիտութեան աղուոր, մեծկակ արծաթ կամ քրիսթալ տուփով շաքար, շօգօլաներով եւ ծաղիկներով ճամբու կը դնեն կնքահայրը եւ կնքամայրը:

Երեքշաբթի օրը, կէսօրէն վերջը մկրտուած պէպէքը կնունքէն կը հանեն: Ներկաները նուէրներ կը տանին:

Տունին մեծ սենեակին մէջտեղը լէհէն մը կը դնեն, մէջը ջուր կը լեցնեն, կնքուած պէպէքը մէջը կը խոթեն, կը լուան: Ներկաները ոսկի, արծաթ, թղթադրամ կը նետեն ջուրին մէջը կամ քովը կը դնեն: Կնքամայրը պէպէքը կը լուայ: Նորէն հագուստներ տարած կ'ըլլայ, կը հագցնէ: Ատ ջուրին մէջը պէպէքին միտոնոտ հագուստներն ալ կը լուայ եւ ջուրը մաքուր տեղ մը կը թափէ՝ կամ ծառի մը տակ, կամ ածուխի վրայ, որ մարդ վրան չկոխէ:

Յետոյ կը մօտենան քոքթէյլի սեղանին թէյ, լիմոնատ, փասթա կամ անուշեղէն կը ճաշակեն:

Ամէն բան լմնալէն ետքը ամէն մարդ իր տունը կ'երթայ. «Էվիի էվիին, քէօյի քէօյինէ, էվի օլմիյանա՛ սըշան տելիիինէ» (Տուն ունեցողը՝ տուն, գիւղ ունեցողը՝ գիւղ, տուն չունեցողն ալ՝ մուկին ծակը):



2. (I499). Ա Մ Ո Ւ Մ Ն Ո Ւ Յ Ո Ւ Յ



ամանակին, Անատոլի գաւառացի հայերը հարսնիքին Հինգ-
շաբթի օրը օծիտտես կ'ընէին: Կնքամայրը հարսին անկո-
ղինը կը շտկէր, հրաւիրեալները վրան դրամներ եւ շաբա-
րեղէն կը նետէին: Հարսին օծիտ, երբ փեսային տունը կը տանէին,
կեսուրմայրը օծիտը բերողներուն պոխչայով նուէրներ կու տար:

Ուրբաթ օրը կնքամայրը եւ քանի մը կիներ հարսնցուն բաղմիք
կը տանէին: Շաբաթ օրը փեսացուն ճկոյթը հինա կը քսէին: Վերջնայ
տղուն կողմինները հարսնցուն տունը կ'երթային, հինան կը տանէին
ափսէի մը մէջ՝ վրան մոմեր շարած եւ չոր եւ թարմ պտուղներով լեցուն
սինի մը:

Կնքամայրը թեփսիի մը մէջ օղիով կը շաղուէր հինան. վրանայ
15-20 հատ մոմ կը վառէին:

Էրիկմարդիկ կէօթերիշի պէս բաներ կ'ընէին, կը կատակէին:
Սապէս օրինակ՝ հարսնցուն եղբայրը կէս կամ մէկ ոսկի կ'ուզէր, որ
թոյլ տայ հինան քսել:

Վերջապէս հինան կը քսէին հարսնցուի ափին մէջը, հինայով
խաչ կ'ընէին կամ եղունգը կը ներկէին: Աղջիկներու ափերուն մէջ ալ
հինա կը քսէին: Եւ տղու կողմինները հարսնցուն տունէն անպատճառ
բան մը կը գողնային: Մայրերուն առջինէն աղջիկները կ'երգէին եւ կը
խաղային, այսինքն՝ կը պարէին.

Պու կէճէ պիր գըզ գընասը,
Էլիստէ մումյար եանասը,
Եանա-եանա՝ քիւ օլասը,
Չէքին աթընըն պաշընը,
Չաղը՛րըն պէյ քարտաշը,
Իզին վերսին տիւյիմա:

Այս գիշեր աղջիկ մը կը հինայուի,
Ձեռքերուն մոմեր կը վառուի,
Վառվելով-վառվելով կը դառնան մոխիր:
Քաշեցէք ձիուն գլուխը,
Կանչեցէք իշխան եղբայրը՝
Հրաման տայ հարսնիքի:

Այդ գիշերին կ'ըսէին. «Գընայ կէճէսի», այսինքն՝ հինայի գիշեր,
եւ կ'երգէին.

Գընայը կէթիր, անա՛,
Բարմաղը պաթըր, անա՛,
Չաղը՛րըն քէշիշի,
Կէօսին պու իշի:
Պու կէճէ տիւյիմ կէճէսի.
Եանընտա եաթար օղլան:

Հինան բեր, մայրի՛կ,
Մատը թաթխէ, մայրի՛կ,
Կանչեցէք քահանան,
Որ վերջ տայ այս գործին.
Այս գիշեր հարսնիքի գիշեր է,
Քովը պիտի պառկի տղան:

Կամ՝

Կէլիճէ պաքըն, կէլիճէ,
Գընայար եագմըշ էլիճէ,
Եազըզ ինճէճիկ պէլիճէ.
Տիւշիւշ չապխընըն էլիճէ:

Ապա տեսէք հարսնցուն,
Հինա է դրեր ձեռքին:
Մե՛ղք իր բարակ մէջքին.
Ինկած է անտակի ձեռքը:

Կամ սապէս կ'երգէին.

Օղլան պիզիմ, գըզ պիզիմ,
Չաթլասըն գայնանասը,
Կէլիյօր տիւյիմ ալայը,
Գայնանայար չէքսին հալայը:
Լու՛, լու՛, լու՛, լու՛...

Տղան մերն է, աղջիկը՝ մերը,
Թող պայթի գօքանչ մայրը,
Հարսնետրները կու գան,
Սկեսուրները թող բռնեն պարը:
Լու՛, լու՛, լու՛, լու՛...

Կամ կատակելով, բայց աղջկան ծնողքը ճաթեցնելով, կ'երգէին.

Ալտըք քըզընըզը,
Ի՞թ կէօսին իզիւնիւզը:

Առինք ձեր աղջիկը,
Շունը տեսնայ երեսնիդ:

Իսկ հարսնցուն փոխարէն կ'երգէին.

Սուփրատա քօյտըմ քաշըլըմ,
Փաթլատըմ, կէթտիմ էշիյէ,
Իշտէ քոյուպ կիտիյօրըմ,
Սիզէ գուլում էտիյօրըմ:

Դգալս դրի սեղանին,
Յուգուած գացի շէմին,
Ահա արդէն ես կ'երթամ՝
Ձեզի վիշտ պատճառելով:

Գըզ անասը, գըզ անասը,
Գըզ անասը եագըշըր՝

Աղջկան մայրը, աղջկան մայրը,
Աղջկան մայրը կը վայլէ՝

Կիւլէյիճին ղայնանասը,
Էլիճնտ մումլար եանասըն:

Ամուսիճին զոքանչը
Ձեռքերուն մոմեր թող վառ:

Հիմա, երբ գաւառներէն շատ հայ ընտանիքներ եկած հաստատուած են Պոլիս եւ հայկական եկեղեցիներուն շուրջը համախմբուած, հարսնիքները շատ աւելի տարբեր, շատ աւելի հայկական, քիչ մը նոյնիսկ աւելի արդիական ձեւով կ'ըլլան:

Առաջ տղուն ծնողքը աղջիկտեսի կ'երթային եւ ընտանիքին հարսը իրենք կ'ընտրէին: Հիմա աղջիկ տղայ գիրար կը տեսնան համալսարանը կամ ուրիշ տեղ մը, իրարու կը համակրին: Տղան ծնողքին կը յայտնէ. անոնք եթէ համաձայն են, գործի կ'անցնին:

Տղուն ծնողքը նշանախօսութեան կ'երթան: Մատանի մը կամ պիլէզիկ մը կը դնեն աղջկան ձեռքը, ի նշան խօսքկապի:

Մենք առաջին անգամ ըլլալով որոշեցինք երթալ մեր հարս Առլէթը ուզելու: Եղբայրս՝ Տիգրան Ալթուն այնքա՛ն գեղեցիկ սկաւ իր խօսքը, որ մոռնալու բան չէր: Յովհաննէս Թումանեանին պէս Տիգրանը սկաւ. «... Մենք Ձեր օճախը եկած ենք, հաց չենք ուզեր Ձեզանից, հող տուէք մեզ Ձեր տնից»:

Առլէթը եւ Արարատը արդէն իրարու հետ նախապէս հասկցուած էին, բայց աղջկան ծնողքը իրար նայելով ըսին. «Մենք մեծ-հայր, մեծ հօրեղբայր ունինք. անոնց պէտք է հարցնենք»: Անշուշտ ատ ձեականութիւն ըլլալը Տիգրանը հասկցաւ եւ իր բարի ժպիտովը ըսաւ. «Եթէ Ձեր աղջիկը պիտի չտաք, մենք ալ զինք կը փախցնենք»:

Արդէն Առլէթին մօրեղբայրը Տիգրանին ընկերն էր. Տիգրանին խօսքը յարգած ըլլալու համար տնեցիներուն ճաշի սեղան դնել տուաւ, վրան ալ ըմպելիով: Կերանք, խմեցինք, զրուցեցինք: Վերջն ալ Առլէթը անուշ սուրճ մը հրամցուց: Մենք ալ անոր մատը մատանի մը անցուցինք, խօսքկապը ըրինք:

Հիմա մեր օրերուն ամուսնութեան համար պէտք է՝

Նախ՝ բժշկական արտօնութիւն, որ երկու կողմերն ալ ստող են. ընտանիքներուն մէջ ժառանգական հիւանդութիւն չկայ:

Ապա՝ առանց քաղաքացիական գրանցումի եկեղեցական պսակադրութիւն չ'ըլլար: Նախօրոք թուղթեր կը լեցնեն, կը վաւերացուին, յետոյ միայն եկեղեցական պսակ կրնան ընել:

Տղուն կողմը եկեղեցիէն օր կ'անէ, թէ ո՛ր օրը, ո՛ր ժամուն կրնայ

պսակադրութեան արարողութիւնը կայանալ:

Կ'որոշեն թէ քանի՛ հոգեւորական պիտի ներկայ գտնուի. քանի՛ քահանայ, քանի՛ վարդապետ, քանի՛ եպիսկոպոս պիտի հանդիսավարեն: Եկեղեցիի երգչախումբին երգեցողութիւնը պիտի ըլլա՞յ թէ ո՞չ: Աս բոլոր հարցերը նախօրօք ըստ սակագնի կը լուծուին: Սակագները մկրտութեան, պսակադրութեան եւ թաղման համար զատ կ'ըլլան: Եւ եկեղեցին դրուած կ'ըլլան: Անոր համեմատ ալ եմթակաները ընտրութիւն կ'ընեն: Արդէն մասնատր հաստատութիւններ կան, որ կը կազմակերպեն այդ բոլորը (եկեղեցիին նստարանները ծաղիկներով զարդարելը, հրաւիրատոմսերը գեղեցիկ ծրարներու մէջ՝ վրան երկու ամուսնական մատանի, հարսնիքի երկու ներմակ շաքար, ամրացուած երկու ծաղիկ, որու մէջ զոյգերուն ծնողքը հանդիպով այս կամ այն ընտանիքը իրենց զաւակներուն ս. պսակի խորհրդին ներկայ գտնուելու կը հրաւիրեն՝ խաչեղբայրութեամբ այսինչ-այսինչեանի, եւ այլն):

Պսակին օրը փեսան եւ կնքահայրը կու գան եկեղեցիի դուրսը կը կենան, հրաւիրեալները եւս: Աղջկան կողմը աջ կողմը կը կենայ, տղային կողմը ձախ կողմը: Եկողները գիրար կ'ողջունեն, կը ձեռնուին: Ամէն մարդ կը տեղաւորուի: Եկեղեցիին սրահը կը լեցուի: Արդէն ժամը ճիշդ 4.30-ին հարսը կու գայ կա՛մ պապային, կա՛մ եղբօրը, կա՛մ հօրեղբօրը թելը մտած, քովը՝ կնքամայրը, որ հարսը կը բերէ: Հարսին ետեւէն ալ քանի մը մատմուսազէլ տօներ, կարսոն տօներներ կու գան:

Ատ ատեն փեսան կը մօտենայ հարսին քովի այրմարդուն, ձեռքը կը համբուրէ, աղջկան թելը կը մտնայ, խորանին առջեւ կը տանի. կնքահայրը եւ կնքամայրը անոնց ետեւը կը կենան: Աղջկան մաման, պապան, պարագաները աղջկան կողմը կը կենան, տղու կողմինները՝ տղուն կողմը:

Մեր Արարատին եւ Առլէթին պսակը հանդիսավարող հոգեւորականը գերշ. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեանն էր: Ան սքանչելի կերպով կատարեց:

Մանաւանդ շատ յուզիչ էին իր խօսքերը, որոնք ինքը շատ աղէկ կ'ըսէ, բայց եւ մօտաւորապէս ըսեմ. «...Առլէթ աղջի՛կս, դուն Արարատին կինը ըլլալով պիտի հոգ տանիս անոր մինչեւ կեանքիդ վերջը, քանի որ աշխարհիս վրայ ամէն տեսակ դժուարութիւններ, հիւանդութիւններ, անգործութիւն, եւ այլն կան: (Նույնը նաեւ Արարատին ըսաւ:) Այո՛: Ան ատենը աս հիւրերուն ներկայութեամբը, անոնց վկա-

յութեամբը, ձեզ պիտի ամուսնացնեմ»: Կը տանի խորանին առջեւ, արարողութիւնը կ'ընէ: Գլուխնուն զատ—զատ նարօտը կը կապէ, գլուխ գլուխի կու տայ, կնքահայրն ալ խաչը մէջտեղնին՝ գլուխնուն վրայ կը բռնէ: Ծարականներ կը կարդան: Աթոռ կը բերեն, հարսը, փեսայը դիմաց կը նստեցնեն, յետոյ ոտքի կը հանեն: Գինի կը բերեն: Գինին վրայ կը կարդան: Քիչ մը կը խմցնեն: Ատ միջոցին երկու կողմերու մայր հայրերը, կնքահայրն ու կնքամայրը ես կը խմեն: Ծնծղաները կը չալեն, եւ այլն:

Վերջը հրաւիրեալները մէկիկ-մէկիկ կը մօտենան, հարս ու փեսան կը շնորհատրեն, նաեւ ծնողքը. «Աչքերնիդ լոյս», «Մէկ բարձի ծերանան», «Խէրերնին տեսնաք», «Երջանիկ ըլլան» կ'ըսեն, իսկ կնքահայր կնքամայրին կ'ըսեն՝ «Վարձքերնիդ կատար», «Չարչարանքնիդ ապաշխարանք ըլլայ» ու կը շնորհատրեն, զարդեղէն նուիրողները եկեղեցին մէջը հարսին վիզը կամ ձեռքը կ'անցընեն: Դուրս ելլալու ատեն փեսային կողմը ամէն մէկ ընտանիքին անուշիկ պօնպօնյերներ կու տայ՝ մէջը հարսնիքի ճերմակ շաքարով:

Նորապսակները նկարուելու կ'երթան, եւ կամ լուսանկարիչը եկած կ'ըլլայ: Յետոյ կա'մ եկեղեցիին կից սրահը, կա'մ ճաշարան մը, կա'մ պանդոկ մը վարձուած կ'ըլլայ. չունեւորները տղուն տունը կը ժողվուին:

Հարս ու փեսան տունէն ներս մտած ատեննին բրինձ, շաքար, դրամ կը թափեն վրանին՝ ի նշան յաւերժ, համատեղ սիրոյ եւ քաղցր ու բարգաւաճ կեանքի: (Ի մէջ այլոց, Հայաստանի մէջ տեսանք հարս ու փեսային ուսերուն լաւաշներ նետած էին, երեւի նոյն նպատակով: Ատ նորութիւն էր մեզի համար):

Ժողովուրդը սեղաններուն շուրջը կը տեղատրուի: Օրումն խօսնակը ներս կը հրաւիրէ նորապսակները: Եղբայրս՝ Տիգրան Ալթունայր օրը շատ գեղեցիկ հանդիսավարեց՝ ըսելով. «Ես կը հաւատամ որ ինչպէս ցաւերը, երբ մարդոց կողմէ կը բաժնուին՝ կը թեթեւանան, այնպէս ալ ուրախութիւնները, եթէ մարդոց կողմէ բաժնուին, շատ աւելի թանկագին եւ իմաստալից կը դառնան: Ահա թէ ինչու ես այսօր այդ հպարտութիւնը կը զգամ բոլորիդ հետ հոս գտնուելուս: Այսօր ես նորապսակներու Նոր Կեանքին գիրքին մէջը պիտի անցնիմ՝ առաջին անգամ արտասանելով եւ ներս հրաւիրելով Տէր եւ Տիկին Արարատ, Առէթ

Մօրերը»: Նորապսակ զոյգը ուրախ զուարթ ժպիտով ներս եկան, պար մը պարեցին, նստեցան եւ խրախճանքը սկսաւ:

Յետոյ նորապսակները մեղրալուսնի կ'երթան՝ Իզմիր, Անթալիա, Ամերիկա, Ֆրանսա, ալ փարայիդ համեմատ:

Չխօսկանութիւնը գիւղերու մէջ շատոնց վերցած է: Հարսը մեր տունին մէջ տունին աղջիկն է, շրջապատուած սիրով եւ գուրգուրանքով: Անշուշտ ան ալ կը յարգէ մեզ եւ փառք Աստուծոյ, իրար հետ միշտ սիրով եւ մուհապալէթով ենք: Աստուած թող շատ չսեպէ:





3 (1500). Յ Ո Ւ Ղ Վ Ր Կ Վ Բ Ո Ր Ո Բ Թ Ի Բ Ե Ծ



աւաններուն մէջ ննջեցեալի վրայ կ'ողբային, երգեր կը հիւսէին եւ բարձրաձայն ու լացակոմած կ'երգէին: Այդ երգերը մեծ մասամբ թրքերէն կ'ըլլային. ինչպէս օրինակ՝ Կիւրիւնենց նորահարս Փէրուզի վրայ երգուած սգերգը.

*Սաչը պոյնընա տօլալը,
Օէօյլէ պիր տէօնտիւմ
պագտըմ քի,
Փէրուզ քէֆիւնտ տօլալը,
Փեշքիրի չէքթիւմ տիրէկտէն,
Անամ աղլար իրեկտէն.
Պու սօքթօրլար սօքթօր տէյի.
Տօքթօր կէթիրին Ֆրէնկտէն:
Էվլէրին էօնիւ եոննա,
Աթ եայըլըր գըրֆա-գըրֆա:
Կիրիւնին պէշ գըզը վար՝
Իչիւնտ Փէրուզըմ եօսմա:*

*Վարսերը վիզին պլլուած,
Սապէս շրջուեցայ, տեսայ որ
Փէրուզը պատանքուած է:
Սրբիչը քաշեցի սիւնէն,
Մայրս կու լար սիրտէն.
Այս բժիշկները բժիշկ չեն.
Բժիշկ բերէք Ֆրանսայէն:
Տուներուն առաջ առուոյտ կը
բուսնի,
Ձին կուշտ-կուշտ կ'արածէ:
Կիրիւնենք հինգ աղջիկ ունէին՝
Մէջերնէն Փէրուզս էր գեղեցիկ:*

Հիմա Պուլտոյ մէջ հանգուցեալը հոգին աւանդելէն վերջը՝ եկեղեցիէն քահանան կու գայ, կարճ աղօթք մը կ'ընէ, դիակը կը տանին եկեղեցուց հոգեւորանը, ուր զայն սառնարանի մէջ կը պահեն: Մնացած բոլոր գործերը կազմակերպիչ հաստատութիւնը կ'ընէ: Տնեցիները չեն վագ-վըզեր:

Թաղումը առանց քաղաքապետարանի բժշկի արտօնագրի չ'ըլլար: Առանց այդ թուղթի թաղում կարելի չէ: Թաղումի օրը, ժամը կ'որոշուի, թերթերուն մէջ կը ծանուցուի: Գերեզմանատան դռան առաջ գրատախտակին վրայ ալ կը գրուի: Աս արարողութիւնն ալ հարսնիքի

եւ մկրտութեան պէս իր աստիճանները ունի, ըստ սակագներու: Յուդարկատրութեան օրը ննջեցեալը կը լուան, եկեղեցի տարուած ճերմակեղէնը եւ հագուստը կը հագցնեն, խասայով կը պատանքեն, դագաղը կը դնեն, գլխուն տակը բամպակէ պզտիկ բարձ մը:

Առհասարակ ծանօթները տօմարի ստորագրութեամբ իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն: Տօմարը եկեղեցիին բակը դրուած կ'ըլլայ, ուր կը գրանցուին՝ «փոխան ծաղկեպսակի» ի'նչքան կը յատկացնէ տունեալ անձը համայնքի հասարակական կամ մշակութային որեւէ հաստատութեան ի նպաստ: Կը պատահի որ եւ՝ ծաղկեպսակ կը բերեն, եւ՝ «փոխան ծաղկեպսակի» միթական նուիրատուութիւն կ'ընեն:

Դագաղը եկեղեցիէն ներս կը տանին, բայց դասէն դուրս կը դնեն: Քահանաները, վարդապետները, եպիսկոպոսները, ըստ հարկի, դագաղին շուրջը կը ժողվուին: Կ'ըլլայ որ հանգուցեալը ոչ մէկ հարազատ կ'ունենայ եւ կամ ոչ մէկ կարելիութիւն, անոր ալ իրեն պատշաճ հոգեհանգստեան արարողութիւնը կ'ընեն, ըստ իր վաստակի:

Յետոյ դագաղը առանց երաժշտութեան կը տանին գերեզմանատուն: Ընդհանրապէս, ըստ սովորութեան, միայն այրմարդիկ գերեզմանատուն կ'երթան:

Կիները եկեղեցիին կից սրահին սեւ պաստառներով եւ սեւ սփոնգներով ծածկուած սեղաններուն շուրջ կը տեղաւորուին. դիմացը, պատուոյ սեղանին հանգուցեալին հարազատները կը նստին: Կը հիւրասիրեն՝ սուրճ պիսկուիով: Քահանան ալ կու գայ «Հոգուցն հանգուցելոց Քրիստոս Աստուած մեր ...» կը կարդայ: Աս «Տան կարգ» կը կոչուի, որը առաջ տունին մէջը կը կատարուէր: Գերեզմանատունէն վերադարձին այրմարդիկ ալ սուրճով պիսկուի կ'առնեն, հարազատներուն ցաւակցելով հրաժեշտ կ'առնեն, իրենց տուները կ'երթան: Ըստ հին օրէնքի՝ եօթը օր առ տունին մէջը լուացք չեն ընէր, կրակ չեն վառէր, քանի որ մեղք է: Ձախէն աջէն մօտիկները սգատր տնեցիներուն համար ճաշ կը բերեն:

Հանգուցեալը ո'ր օրը որ մեռած ըլլայ, մէկ շաբաթ ետքը այդ նոյն օրը կիրակմուտքը կ'ընեն: Սուրճ կ'եփեն, վրայէն իմրիկ հելվա կը հրամցնեն:

Ծաբաթ իրիկուն, ժամը երեքէն վերջը հանգուցեալին ընտանիքը ճաշ կը պատրաստէ՝ մածունով չօրպա կամ հանգուցեալին սիրած մէկ ճաշը, օրինակ՝ փուռի մէջը միս եւ փիլա, ճերմակ ֆասուլիա՝ փիագ,

սու պէտքերի, ճերմակ պանիր, սալաթա: Անուշեղէն չ'ըլլար: Սուրճ մըն ալ՝ վերջը:

Քառասուն օր գերեզմանատուն չեն երթար:

Քառասունըփն բոլորը գերեզմանատուն կ'երթան: Հողակոյտին վրայ տաներէցի կամ հրաւիրեալ քահանաներու մասնակցութեամբ հոգեւոր արարողութիւն կ'ըլլայ: Ծաղկեպսակ տանողներ կ'ըլլան: Կրկին ցաւակցութիւններ կը յայտնեն: Այս անգամ ներկաները կը մեծարուին առհասարակ թանով, պէտքերով կամ ուրիշ խմորեղէնով:


Առաջ մկրտութեան, հարսնիքի եւ յուղարկատրութեան ատեն «փոխան ծաղկեպսակի» նուիրատուութիւն կ'ըլլար, իսկ հիմա միայն այն յուղարկատրները, որոնք «փոխան ծաղկեպսակի» բարենպաստակ նուիրատուութիւն մը կ'ուզեն ընել: Նախ՝ կազմակերպիչ հաստատութեան մասնաւոր թուղթը կ'ըլլայ՝ «Այսինչին յուղարկատրութեան կամ մկրտութեան եւ կամ հարսնիքին առթիւ» խորագիրը կրող, թուղթին վերայ ներկաները ընթեռնելի ձեռագիրով կը ստորագրեն: Ատ սեղանէն ետքը, զատ սեղանի մը վրայ ուրիշ պաշտօնական թուղթ մը կ'ըլլայ: Հոն ալ ժողովրդին կողմէ ըլլալիք «փոխան ծաղկեպսակի» բարենպաստակ հաստատութեանց եղած նուիրատուութիւնները կ'ընդունուին՝ «փոխան ընկալագրի»: Ժողովուած գումարները առաւելագոյնը մէկ ամսուան ընթացքին այդ հաստատութիւններուն կը յանձնեն (ուրիշ ձեռնարկներէ ալ կը ժողվուի եւ բոլորը մէկ անգամէն կը յանձնուին) պատկան հաստատութիւններուն:


Մեր համայնքին մէջ նախապէս ասանկ հաստատութիւն մը չկար: Նկատուած պահանջքին վրայ է որ աս տեսակ կազմակերպութիւն մը հիմնուեցաւ, որպէսզի եղած նուիրատուութիւնները մէկ ձեռքի մէջ ժողվուին, ապա բաժանումը կատարուի եւ իրենց նպատակին ծառայեն: Նուիրատուութիւնները ժողվողը վերջը այդ ցանկով կը յանձնէ գումարը՝ «փոխան ընկալագրի», որպէսզի կարենան հսկողութիւնը ապահովել:

Արդէն մամուլով ալ կը հրապարակուին այդ նուիրատուներուն անունները եւ յատկացում զումարները, ըստ պատկանելոյն: Այս ձեռով Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցին, հայկական դպրոցներուն, որբանոցներուն, աղքատախնամ կազմակերպութիւններուն, դպրաց դասերգչախումբերուն կը հասնի իրենց բաժինը: Նման մտածուած եղանակներով ալ կը յարատեւէ մեր համայնքային կեանքը:

V

ԵՐԳ-ԵՐՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐ





Օրօր, իմ խուշիկ *

II. 1. 1 (259)

Զննոյ

1

Օր-օ՛ր, օր-օ՛ր, իմ խու-շիկ, Բը-նա - ցիր մը -
 շիկ մը - շիկ, Լեռ-ներ, ձո-րեր ձիւն ե - կեր,
 իմ ձա-գու - կիս քուն ե - կեր: Օր-օ՛ր, օր-օ՛ր,
 ան - նը - ման, Մայր մը չէ բե - րեր նը - ման,
 Խո-շոր ճեր-մակ լու-սրն - կան Մա-թեր է օ-րա -
 նիդ վե - րայ:

* Այս եւ յետագայ երգերու նոթագրութիւնը
 ծայնածապակէն կատարել է երաժշտագետ Ռարօ Զալիքեանը:

Սիրուն, անմեղ իմ գառնուկ

II. 9. 3 (383)

Զննազին

2

Սի-րուն, ան-մեղ, իմ գառ-նուկ, Բուր-դրդ սպի-տակ ու փա-փուկ,
 Դաշտ վա - զե - լով ու ա - րուտ, Կը քա - շես մօ - րրդ կա-րօտ:
 Աղ-ուոր գառ-նուկս իմ սի-րուն, Ե - կուր ցատ-կէ քովս ի վեր,
 Ըստ-ուե-րին տակ ծա - ոե-րուն, Ուր կը փը - չեն մեղմ հո - վեր:

Սիրաս կը թոի

II. 5. 22 (311)

(U surբրակ)

Յուզումնալից

3

Սիր-տըս կը թը - ոի շաղ - ցի քա-րին պէս,
 Ա-րիւնս կը փըշ-րուի շաղ - ցի ալ - րին պէս,
 Երբ պի-տի լուս-նայ գի-շեր դա-րի պէս, Տես-նէ-ի նը -
 րան խա - չի լոյ-սին պէս: խա - չի լոյ-սին պէս:

(Բ՝ տարբերակ)

Սիր - տըս կը թը - ուի ջաղ - ցի քա - րին պէս,
Ա - րիւնս կը փըշ - րուի ջաղ - ցի ա - լիւ - րին պէս,
Երբ պի - տի լուս - նայ գի - շեր դա - րի պէս, Տես - նե - ի նը -
րան խա - չի լոյ - սին պէս: խա - չի լոյ - սին պէս:

Վարդ քաղելէն

II. 5. 21 (310)

Աւխոյժ

Վարդ քա - ղե - լէն կու - գաս, եար, Ձեռ - քըդ մը - տեր է
փու - շը չար, Վար - դի փու - շէն չար է - իր,
Հի - մա լը - ման մարդ է - դար: Ա՛խ, իմ եար,
սի - րուն եար, Ա - րե - լին տակ մի՛ կե - նար,
Թէ որ ե - րե - սըդ սեւ - նայ, Իմ սիր - տը չի

դի - մա - նար: Հե - ու տե - դեր մի՛ եր - թար,
Կը կո - րիս, մեծ է աշ - խարհ, Հե - տո ես քեզ
զըտ - նո - դին, Աշ - խար - հը տամ՝ ետ չի տար:

Մեր տունն է ձեր տան դիմաց

II. 5. 19 (308)

Յուզավառ

Մեր տունն է ձեր տան դի - մաց,
Քեզ կ'ը - սեմ կա - մաց - կա - մաց՝
Հին օ - րե - րուն դը - րա - ցին
ես քեզ շա - տոնց սի - րե - ցի:
Հարսն է պա - կաս իմ տու - նես,

Սըր - տիս սի - բա - ծը դուն ես 5
 Ես՝ աղ - բառ. դուն՝ աղ - բա - տիկ,
 Տուն կ'ը - նենք քր - չիկ - բը - չիկ:

Ես սիրում եմ քեզ

II. 5. 20 (309)

Սիրահան

6 Պա-տեկ կախ-ուած իմ ջու-թա-կը ին-կաւ փր-շըր-ուեց.
 Վեր-ջին ան-գամ այ-բաժ սըր-տիս ար-ձա-գանք տը-ուեց:
 ուեց: Ա՛խ, իմ ա-նուշ եար, ին-չո՞ւ հե-ռա-ցար,
 ին - չո՞ւ գիս թո-ղիր, թո-ղիր մո-ռա-ցար,
 Ա՛խ, իմ ա-նուշ եար, ին - չո՞ւ հե-ռա-ցար,
 ին - չո՞ւ գիս թո-ղիր, թո-ղիր մո-ռա-ցար:

Կաղանդ Պապան

II. 7p. 4 (339)

Խախտալի

7 Ինչ աղ-ուոր է այս ի-րի-կուն, Վա-ռենք մո-մեր
 գոյ - նըզ-գոյն, Նոր տա - րին է հիւր ե - կեր,
 Կա-ղանդն ալ հետն է բե - բեր: Ու - բա-խու-թիւն
 ա - մէն դին, Թա-ղը բո-լորը կը ժըպ-տի,
 Շեն-շող եր-գեր ու նու-ագ, Կը հըն - չեն միշտ
 շա - բու - նակ: Մէկ մ'ալ դու - որ կը զար-նեն,
 Բո-լոր սիր-տեր թունդ կ'ել-լեն, Հայ-տե՛, տը-ղա՛ք,
 խան - դա - վառ, Ա - մէն-քըս մէկ իջ-նանք վար:
 Բա-րի ե - կար հայ-րիկ ջան, Միշտ անձ-նու-էր
 ժը - բա-ջան, Ա - րի մեր շէ - ներ ու տուն,
 Կա-ղան - դրդ ալ բե - բիր դուն:

Շարժի՛ր, շարժի՛ր թաշկինակը

Աւսոյժ

II. 8. 7 (375)

8

Շարժի՛ր, շարժի՛ր, շարժի՛ր, շարժի՛ր, թաշ - կի-նա -
կը, իր-կուն կըր-լայ կը դըր-կեմք ո սի-րած եա - րը:
Վե - րի պախ-նան տան - ծե - րը, Հո՛ւ պ, հո՛ւ պ
կը - ցեց ման - չե - րը, երբ որ օր - իորդ
կը տես - նան, եան կը դը - ցեց ֆե - սե - րը:
Շարժի՛ր, շարժի՛ր, շարժի՛ր, շարժի՛ր, թաշ - կի - նա -
կը, իր-կուն կըր-լայ կը դըր-կեմք ո սի-րած եա - րը:

Սուտ է, սուտ է

Սրընթաց

II. 8. 1 (370)

9

Սուտ է, սուտ է, սուտ է, Ա - մէն բան սուտ է,
Օ - դին կը խը-մենք, Մէ-գէն ալ կ'ու-տենք,
Աս աշ-խարհ-քին մէջ, Ա - մէն բան սուտ է:
Աս աշ-խարհ-քին մէջ, Քէ - ֆը կը վայ - լենք:

Ախչիկին կարմիր ֆիտան

Երգիծանով

II. 8. 5 (374)

10

Ախչի-կին՝ կար-միր ֆիտան, մա-մա-լին՝
պաս - մայ, Պա-պա-լին՝ չու-լէ շալ-ուար
ուչ-խուր չու-ցե - նայ, ուչ-խուր չու-ցե - նայ,
ուչ-խուր չու-ցե - նայ, պա-պա-լին նայ:

Հալա, հալա, հալա, նիննոյ ի

Աւսոյժ

II. 5. 2 (296)

11

Աշ-կէյն ա - նու - նիդ Շու - շան, Հա-լա, հա-լա, հա - լա,
նին - նոյ ի, Մա - տա - նիս տամ քեզ նը - շան,
Հա-լա, հա-լա, հա-լա, նին-նոյ ի: Շու-շա - նը շու-րը գը-նաց,
Հա-լա, հա-լա, հա - լա, նին-նոյ ի, Մա-տա - նին մա -
տը մը - նաց, Հա-լա, հա-լա, հա - լա, նին - նոյ ի:

Վերջին հրաժեշտը

Հարօսալի

II. 5. 23 (312)

12 Ա - հա մո - տե - ցաւ մահ - ուան ժա - մե -
 րըս, Ալ չեմ դի - մա - նար բո - լոր
 ցա - լե - րըս, Կր գատ - ու իմ՝ ձեզ - մե
 սի - րուն ծա - դիկ - ներ, Բայց դադ - րում չու -
 նից իմ սեւ ա - չուկ - ներ:

Պու աքշամ կիւն

Աւխոյժ

I. 7. 23 (210)

13 Պու աք - շամ կիւն՝ պա - թար - քե՞ն կէլ,
 Պու աք - շամ կիւն՝ պա - թար - քե - նը կէլ,
 Ա - մա՛ն, կէ՞ն քալ - մա՛ է - րէ - քէ - նը կէլ,
 Ա - մա՛ն, կէ՞ն քա - լը - մա՛ է - րէ - քէ - նը կէլ,

Թա - հա - միւլ քալ - մա - տը ա - ըը - թըք,
 Թա - հա - միւ - լը քալ - մա - տը ա - ըը - թըք,
 Սա - քըն կէ՞ն քալ - մա՛ է - րէ - քէ՞ն կէլ,
 Ա - մա՛ն, կէ՞ն քա - լը - մա՛ է - րէ - քէ - նը կէլ:

Քիմսէյէ էթմէմ շիքայէթ

Յուզալար

I. 7. 25 (212)

14 Քիմ - սէ - յէ էթ - մէմ շի -
 քա - յէթ, Աղ - լա - ըրմ պէն
 հա - լի - մէ, Քիմ - սէ -
 յէ էթ - մէմ շի - քա -
 յէթ, Աղ - լա - ըրմ պէն հա -
 լի - մէ, Թիթ - րէ - րիմ

Միւն
րիմ կի - պի. Պար
տըբ - ճա իս - տի քա - լի - մէ:
իս - տի - քա - լի - մէ:

Հաստաերմ՝ եաշըյօրում

1. 7. 24 (211)

Շորուն

15 Հաս-տա-երմ՝ եա - շը - յօ - րում
Կեօ-րիւն-մէգ հա - յա - լին - լէ,
Պէլ-քի պիր կիւն, պիր կիւն տի - է
Պէք-լէ - րիմ ու - մուտ ի - լէ:

Սահակեան սան

II. 4. 2 (287)

Վեհրուն

16 Սա-հակեան սան քա - րի-քաս-տիկ, Մէկ սիրտնո-
գի՝ մեծ ու պրզ-տիկ, Ազ - ցի քար-քով,
քա - րի վար-քով, Քուր եղ-քայր-ներ ենք քո - վէ քով:

Պա-տի ա-նոնց, որ անձ-նու-եր. կըր-թու-թեան
չանք չեն խը - նա - յեր, Պա - տի, պա - տի ա -
նոնց յա - ւետ, Կ'ուխ-տենք ըլ - լալ ե - րախ - տա - գետ:

Արմաշու Դպրեվանուց Օրհներգը

ճնայուն

1. 7. 15 (202)

17 Ի փառս է - իր նըշ - մար-տութեան Կա-նուցեալ յարկս
Ի կա-տարու-մըն փըր-կութեան Տե-սեալ չըր-նադս
այս վը - սեմ, Յաս - տե - դա-զարդն ի յօ - րե-ւան
այս պար-տեզ, Ըզ - հայ - րի - նեաց ոչ ա - նա-զան
Տայ յան-ցա-նել մեզ ի նեմ: Աստ գի-տութեան եւ հա - լա - տոց,
Դրախ-տին ըզ վայր ցուց - ցէ մեզ: Աստ հա - լա - տոց եւ գի-տութեան
Հըս-կեն ո - գիք իրրյոր-րան, Մի - ոյն ի յայս մի-տոյն ի բոց
Փըր-թին ծաղ-կունք գե-ղա-զանք, Բուր ու մ'նյերկ-րէ եւ երփն ուղ-փեան
սըր-բեալ զհո-գիս մեր հա-մայն: Լույս եւ հուր, Երփն եւ բույր,
Յօ - դին շը - րեղ ի դրա-սանք:
Քնար եւ փող, Քիրտն եւ ցող: Շո - դե - ցէք ի
յարկ ուխ-տիս, Սըփ - ոե - ցէք ճա - նանչ եւ գեղ, Հըն - չե -
ցէք յան-դուլ գեղ-գեղ, Յո - դե - ցէք յա - ւերժ յա - տիս:

ծածին (1838), ՔուրուշեՎի Երեման Ա. Խաչ (1836-1838, Յովհաննէս Արք. վերեանի հետ), Բերայի Ա. Երրորդութիւն եկեղեցիները, վերանորոգած է Զեյթին-պուրնոյի Ա. Յակոբը (1852), Պանտրոմա քաղաքի հայկական գիւղի Ա. Սարգիսը (1858), Բաբերդի Լսոնք գիւղի Ա. Լուսաորի վանքն ու եկեղեցին, Մեքթեփի Հարպիլէն Բանկալթիի, Հարպիլէ Սիփանի օճախը, Սկիտարի ճեմարանը (1838, Յովհաննէս Արք. վերեանի հետ), Պեշիքթաշի Հայոց գերեզմանատունը եւ անոր պարիսպը (1848) եւ այլն: Կարապետ Ամիրա Պալեանը մօտիկէն կապուած էր հայ համայնքի ընկերային կեանքին: Օգնած է Յարութիւն Ամիրա Պեզնեանի ծախքով կառուցուող Ազգային Հիւանդանոցի շինութեան: Անոր նիւթական աջակցութեամբ հիմնադրուած է Պոլսոյ Ա. Յակոբ վանքի ծառանգատրաց վարժարանը: Ետիզուլէի ազգային հիւանդանոցին կից հիմնած է երկրագործական ուսումնարան: Բազմակողմանի զարգացած անձ մը եղած է: Այցելած է Անի ուսումնասիրելու այդ քաղաքին ճարտարապետական կոթողները: Կարծիք կայ, թէ իր նախագծած շէնքերուն մէջ օգտագործած է հայ ճարտարապետութեան կարգ մը աւանդոյթներ:

¹⁷ **Պալեան Սարգիս** (1831, Ստանպոլ - 1899, Ստանպոլ) - Կարապետ Պալեանի որդին է: Փարիզի Գեղարուեստի ուսումնարանը աւարտելէ վերջ, կը վերադառնայ Պոլիս եւ կ'աշխատակցի հօրը: Ծարտարապետութեան գուգընթաց զբաղած է գիտարարութեամբ: Իր հնարած մեքենան ցուցադրուած է Լոնտոնի Միջազգային ցուցահանդէսին, արժանանալով մրցանակի: Կարապետ Պալեանի մահէն ետք եղբօրը՝ Յակոբ Պալեանին հետ աշխատած է որպէս արքունի ճարտարապետ: Կառուցած է Պէլլէրպէյի նոր (1864), Չրաղանի (1863-66), Ելտրզի (1861-76), Գանտիլի Ատիլէ Սուլթանի, Պալթալիմանի ծովափնեայ պալատները, բազմաթիւ ապարանքներ, զօրանոցներ, եւ այլն: Էրէյիի եւ շրջակայքի անխա-հանքերը որոնելու, ածուխ հայթայթելու, փոխադրելու, վաճառելու, ինչպէս նաեւ Պաղտատի երկաթուղիին շինարարութեան մեծաշնորհը թրքական կառավարութիւնը Սարգիս Պալեանին վստահած էր: 1878-ին պետութեան զխալոր ճարտարեպետի բարձրագոյն կոչումին արժանացած է: Զբաղած է հայ համայնքի կրթական խնդիրներով, կառուցած Պեշիքթաշի Մաքրուհեան, Տօլապտէրէի Արշակունեաց եւ Վանի վիլայէթի Մերամեր գիւղի վարժարանները: Սկիտարի Պաղարպաշի Հայոց գերեզմանատունը թաղուած է:

¹⁸ **Ապտիւլ Համիտ Բ** (գահակալած է 1876-1909) - ընդունած է սահմանադրութիւնը, սակայն երկու տարի ետք՝ 1878-ին, չեղեալ յայտարարելով ցրուած է խորհրդարանը եւ հաստատած միահեծան իշխանութիւն:

¹⁹ **Օրմանեան Մարադիա** (1841, Ստանպոլ - 1918) - եղած է յայտնի հանրային գործիչ, հրապարակախօս, պատմաբան, բանասէր, Պոլսոյ Հայոց Պատրիարք (1896-1908): Իր օրօք բարեկարգուած եւ նորոգուած է Պատրիարքարանը: Դպրաց դասերը վերակնազմուած են եւ պատրաստուած է 70 յոդուածներէ բաղկացեալ կանոնագիր մը: Նորոգուած եւ վերաշինուած են Գումգաբուի Մայր եկեղեցին, Ֆէրիզ գիւղի Ա. Վարդանանց, Պալաթի Ա. Հրեշտակապետաց, Խասգիւղի Ա. Ստեփաննոս, Պիլիքտէրէի Ա. Հոփսիսմեանց, Պեշիքթաշի Ա. Աստուածածին, Բերայի Ա. Երրորդութիւն, Սամաթիոյ Ա. Գէորգ, Մաքրի գիւղի Ա. Աստուածածին եկեղեցիները: Օիշլիի գերեզմանատան մուտքին կառուցուած է երկյարկանի շէնք մը: Ա. Փրկիչ Ազգային Հիվանդանոցը ընդարձակուած է, հիմնովին վերաշինուած է: Ունեցած է բեղուն գրիչ. իր ամենախոշոր երկն է «Ազգապատում»ը. արժէքաւոր է նաեւ «Խոհք եւ խօսք»ը:

²⁰ Սուլթան Ապտիւլ Համիտի օրօք չափազանցուած ու անհեթեթ գրա-բնութիւն կը կիրարկուէր ո'չ միայն հայ, այլեւ երկրի բոլոր լրագիրներու եւ դպրոցներու համար: Արգիլուած էր գործածել նաեւ H₂O բանաձեւը:

²¹ **Խրիմեան Մկրտիչ (Հայրիկ)** (1820, Վան - 1907, Էջմիածին) - հոգեւորական, գրող, խմբագիր: 1854-ին Վանի Աղթամար վանքը վարդապետ ձեռնադրուած է: Գրական-մշակութային բեղուն գործունէութիւն ունեցած է: Սակայն հանդիպելով յետադէմ տարրերու դիմադրութեան՝ Վանէն մեկնած է Կ. Պոլիս: Հոն մշակութային գործիչ Պողոս Օտեանի նիւթական օժանդակութեամբ հիմնած է տպարան մը, 1855-էն յոյս ընծայած է «Արծուի Վասպուրական» հանդէսը, զոր 1858-ին փոխադրած է Վան՝ անեցնելով կարգ մը գրողներ եւ հրապարակախօսներ, ինչպիսիք էին Գ. Սրուանձտեանցը, Ա. Թոխմախեանը: Ապա մամուլը փոխադրած է Մուշ՝ հրատարակելով «Արծուիկ Տարօնոյ» հանդէսը՝ Գ. Սրուանձտեանցի աջակցութեամբ: 1869-1873-ին ընտրուած է Կ. Պոլսոյ Պատրիարք: 1878-ին գլխաւորած է Պերլինի Վեհաժողովին ներկայացած հայկական պատուիրակու-թիւնը: 1895-ին միաձայն ընտրուած է Ամենայն Հայոց Կաթողիկոս:

²² **Ալիշան Ղեւոնդ** (1820, Ստանպոլ - 1901, Վենետիկ) - բանաստեղծ, բանասէր, պատմաբան: Իր ուսումը կը ստանայ Վենետիկի Մխիթարեան միաբանութեան Ա. Ղազար վանքը. տիրապետելով կարգ մը լեզուներու: 1840-էն կը դասաւանդէ Մուրատ-Ռափայէլեան վարժարանէն ներս, իսկ յետագային կը դառնայ անոր տեսուչը: Այդ տարիներէն կը սկսի գրական-բանասիրական գործունէութեամբ զբաղիլ: Իր բազմաթիւ աշխատութիւններէն յիշարժան են «Սիսուան - համադրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ» (1895), «Այրարատ - բնաշխարհ Հայաստանեայց» (1890), «Սիսական - տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի» (1893), եւ այլն, որոնք փաստական հարուստ նիւթ կը պարունակեն այդ նահանգներուն աշխարհագրութեան, տեղագրութեան, բուսական, կենդանական եւ հանքային հարստութիւններուն, ինչպէս նաեւ պատմական անցեալին, հնութիւններուն, ազգագրութեան եւ այլ խնդիրներու մասին: Նկատենք որ Ալիշան այս աշխատասիրութիւնները գրած է առանց այդ վայրերը այցելած ըլլալու, սակայն անոնք այսօր ուսումնասիրողներու կողմէ իբր սկզբնաղբիւր կ'ընկալուին:

²³ **Դուրեան (Զրմայալեան) Պետրոս** (1851, Սկիտար, Ստանպոլ - 1872) հայ տաղանդաւոր բանաստեղծ եւ թատերագիր: 1867-ին կ'աւարտէ Սկիտարի ճեմարանը: Կ'աշխատի որպէս ղեղագործի աշակերտ, գրագիր, տնային ուսուցիչ, դերասան: Իր անգուգական քնարերգութեամբ արծարծած է մարդու մէջ մարդկային արժէքները գնահատելու, պահպանելու եւ զարգացնելու ճիւղը:

²⁴ **Մարի Նուարդ** (Մարի Գարայեան, 1853, Ստանպոլ - 1885, Ստանպոլ) - 1869-ին Թ. Ֆասուլեանեանի թատերախումբին հետ հիւրախաղերով կը մեկնի Նոր Նախիջեւան, 1870-74-ին կը մասնակցի Պ. Մաղաքեանի «Արեւելեան թատրոնին», 1881-82-ին հանդէս կու գայ Թիֆլիս: Յետագային Մ. Անակեանի թատերախումբին առաջատար դերասանուհին կը դառնայ, կատարելով բանաստեղծական հերոսուհիներու դերեր: Մարի Նուարդի դերակատարումները յատկապէս փայլած են իրենց յուզականութեամբ, պարզութեամբ եւ անկեղծութեամբ:

²⁵ **Արոնեան Յակոբ** (1843, Արրիանապոլիս - 1891, Ստանպոլ) - հայ մեծ գրող, երգիծաբան, լրագրող, հրապարակախօս:

²⁶ **Արշակեան Հերանոյշ** (1887, Ստանպոլ - 1905, Ստանպոլ) - իր քնարաշունչ բանաստեղծութիւններուն մէջ արտայայտած է ընկերային թախծոտ տրամադրութիւններ:

²⁷ **Մանկեան Մարտիրոս** (1837, Ստանպոլ - 1930, Ստանպոլ) - 1859-ին բեմ բարձրացած է: 1861-1867-ին եղած է Պոլսոյ «Արեւելեան թատրոնի» առաջատար դերասաններէն, 1872-79-ին մասնակցած է Պ. Մաղաքեանի եւ Յ. Վարդու-վեանի, իսկ 1880-82-ին Թիֆլիսի հայ թատերախումբերուն: Կատարած է դասա-կան եւ մշտնորամաթիւր տպաւորիչ դերեր: 1885-1914-ին եղած է «Օսմանեան տրա-մաթիւր թատերախումբին» տնօրէնը. գեղարուեստական ղեկավարը եւ առաջա-

տար դերասանը: Մնակեանի խումբը պոլսահայ վերջին թատերական կազմակերպություններէն էր, որ նպաստեց նաեւ թուրք արհեստավարժ տրամաթիք թատրոնի զարգացումին:

²⁸ **Վարդովեան Հակոբ** (1840, Ստանպոլ - 1898, Ստանպոլ) - յայտնի հայ թատերական գործիչ, բեմադրող, դերասան: 1861-էն կը խաղայ հայ առաջին արհեստավարժ թատերախումբին՝ «Արեւելեան թատրոն»-ին մէջ, 1863-ին կը մեկնի Չմիրոնիս, «Վասպուրական թատրոն»-ի ուժերով ներկայացումներ կու տայ: 1868-ին սուլթանական կառավարութենէն կը ստանայ տասը տարուան գործունէութեան պետական մենաշնորհ՝ ներկայացումներ հայերէն եւ թրքերէն բեմադրելու պայմանով: «Վարդովեան թատրոն» կը դառնայ Մերձասոր Արեւելքի ամենամեծ եւ կայուն ծրագիրով գործող թատերախումբը: Այն ունէր եօթանասուն դերասան-դերասանուհիներ, քանի մը դերուսույցներ, քսան հոգիներ նուազախումբ: «Վարդովեան թատրոն» նկատելի դեր կատարած է հայ եւ թուրք թատերագրութեան զարգացման համար: Այդ խումբին ապսպրանքով գրուած են Պ. Դուրեանի, Ռ. Սէտեֆեանի, ինչպէս նաեւ թուրք նշանատր թատերագիրներ Նամրոզ Բեմալի, Օնեսէտտին Սատին եւ ուրիշներու գործերը, որոնք թրքական դասական գրականութեան լուսազոյն նմոյշներէն են: Թուրքիոյ օբլէրէային արուեստի սկզբնաւորումը նոյնպէս կապուած է այս թատերախումբին հետ: «Վարդովեան թատրոն» դարձած է Օսմանեան կայսրութեան մայրաքաղաքը ապրող տարբեր ժողովուրդներու հոգեւոր մերձեցումի կեդրոն, սպասարկելով ոչ միայն հայ եւ թուրք, նաեւ այլ ազգերու հանդիսատեսներ:

²⁹ **Թաղէս Էֆէնտի (Էքսերճեան)**, 1858, Ստանպոլ - 1913, Ստանպոլ) - հայ ջութակահար, երգաստեղծ: Կատարողական բարձր արուեստի շնորհիւ Բեմանի Թաղէս անունով կը հռչակուի: Թորքերէն շարքեր, թիրքիներ, պէշտէֆներ, սեմայիներ, որոնք մինչեւ հիմա ալ Անգարայի, Ստանպոլի եւ այլ քաղաքներու պետական երգչախումբերու կողմէ կ'երգուին, ձայնասփիտն կամ հետատեսիլէն կը հաղորդուին:

³⁰ **Ուտի Հրանդ (Էրմէ) Բենքիլեան** (1901 - 1977) - ծնած է Ատաբազար: Հազի չորս օրուայ մանուկ տեսողութիւնը կորսնցուցած է: 1917-ին ընտանեօք փոխադրուած է Գոնիս: Երաժշտութենէն հասկցող բարեկամ մը իրեն ուտի դասեր տալու պատրաստակամութիւն յայտնած է, բայց ծնողքը ի վիճակի չէ եղած գալիս ուտ մը գնել: Զինքը ճանչցողներ քով քովի գալով ուտ մը գնած եւ իրեն տուած են: Ան սկսած է ինքն իրեն Գոնիսի ժողովրդական երգեր նուագել: Յետո Բեմանի Ակօբոս, Բեմանի Տիգրան եւ Ուտի Գրիգոր Էֆէնտիներէն դասեր առնելով եւ յամաօրեն աշխատելով յայտնի դարձած է: Երգած է եւ՝ հայերէն, եւ՝ թուրքերէն: 1965-ին հրատիրուած է Երեւան եւ հանդէս եկած տպաւորիչ համերգով մը: 1995-ին Նիւ Եորքի Traditional Crossroads ընկերութիւնը լոյս ընծայած է երկու խտացեալ սկաւառակներ նուիրուած արեւելեան-թրքական ուտի դպրոցի հիմնադիր, անուանի վիճահար եւ երգիչ, ուսուցչապետ Ուտի Հրանդին: Սոյն երգանուագացանկին մաս կը կազմեն նաեւ Ակնայ սիրային երկու երգեր:

³¹ **Թաքսիմ** - արեւելեան երաժշտութեան մէկ տեսակն է. նուագողը այդ պահուն կը յօրհնէ եղանակ մը, տուեալ մագամին՝ ձայնաշարին համապատասխան: Թագսիմները ընդհանրապէս քանոնով, ջութակով, ուտով կը կատարուին:

³² **Բեմանի Սարգիս** (1885 — 1944) - ծնած է Պոլիս: Հայրը իսկիւտարքի քէմէնչէնի Օննիկ Էֆէնտիէն էր, որմէ ժառանգած է իր երաժշտական տաղանդը: Հայրը եղած է իր ուսուցիչը: Մինչեւ օրս իր յօրհնած երգերը Ստանպոլի երգահանդէսներու յայտագրին մաս կը կազմեն: Կեանքի վերջին փոխադրուած է հաստատուած է Փարիզ:

³³ **Իրմա (Գարաճա) Թօթօ (Իրմա Ֆելէքեան)** (1912, Ստանպոլ - 1992,

Ստանպոլ) - արեւմտահայ բանաստեղծ Սիմոն Ֆելէքեանի թոնն է: Մայրը՝ Մառի Ֆելէքեանը, եղած է պոլսահայ թատրոնի ճանաչուած դերասանուհիներէն: Գիտցած է հայերէն, թրքերէն, ֆրանսերէն, անգլերէն, իտալերէն, ռուսերէն: Սորված է Պալէ: Բեմ բարձրացած է վաղ տարիքէն: Հանդէս եկած է Պոլսոյ տարբեր թատրոններու մէջ («Մեմալ Սահիր», «Մուսմեր Գարաճայի», «Հայք օբլէրէ»): 1955-էն հանդէս կու գայ իր հիմնած «Իսթանպոլ թիյաթօսը» թատերախումբին հետ: Նկարահանուած է «Պողոզիչիմիս Էսրարը», «Լէյլա», «Պաքիթիլեր» եւ այլ շարժանկարներու մէջ: Հանդէս է եկած թրքական, անգլիական, ֆրանսական, իտալական երգերու կատարումներով: Ամուսինը՝ Մեմէտ Գարաճա, եղած է յայտնի դերասան, որդին՝ Մեմ Գարաճա, անուանի երգիչ է: 1986-ին յաջողութեամբ հանդէս է եկած գերմանական թատրոնի «Գանազեն» ներկայացումի մէջ:

³⁴ **Եղիայեան Զաւէն (Պաշտատցի)** - Պոլսոյ Հայոց պատրիարք եղած է 1913-1915-ին եւ 1919-1922-ին: Իր օրօք Պատրիարքարանի ներկա շէնքը, որ ծրագրուած էր Օրմանեան Պատրիարքի ժամանակ, գործածութեան կը դրուի: Իր պատրիարքութեան Ա. շրջանը զուգահեռ է Ա. աշխարհամարտին նախորդող տարիներուն: Իր օրօք կը կազմուի «Ազգային խնամատարութիւն»ը, որ տարիներով հազարաւոր որբեր եւ գաղթականներ կը խնամէ: 1922-ին ստիպուած էր Պոլսէն հեռանալու:

³⁵ Գալֆայեան աղջկանց որբանոցը Պոլսոյ հայ համայնքին պատմութեան մէջ իր նշանակալից տեղը ունի: Այն 1866-ին հիմնուած է, Սրբուհի մայրապետ Գալֆայեանի կողմէ: Սրբուհի մայրապետը նաեւ հիմնադիրն է Գալֆայեան Ուխտի միաբանութեան: Երբեմնի ընտանեզուրկ հայ որբուհիները մինչեւ հիմա նրախտագիտութեամբ կը յիշեն իրենց հարազատ «Գալֆայեան Տան» միաբան քոյրերուն ինքնամոռաց նուիրումութիւնը, տիպար մայրեր պատրաստելու անոնց սուրբ առաքելութիւնը:

Եկեղեցաւեր եւ ազգանուէր այդ միաբանութեան քոյրերէն այսօր միայն առաքինագարդ քոյր Հոփիսիմէ սարկաւազ Աստուծեանը մնացած է:

³⁶ **Աբիլ եւ Մաթոս Ունճեան** եղբայրները Պոլսոյ հայ համայնքին յայտնի ազգայիններէն եղած են: Անոնք Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցին Ունճեան յարկաբաժինը, ինչպէս նաեւ Գատր գիւղի Արամեան-Ունճեան վարժարանը շինել տուած են:

³⁷ **Օզանեան Անդրանիկ** (1865, Շապին Գարահիսար - 1927, Ֆրէզո) - հայ ժողովուրդի ազգային հերոս:

³⁸ **Աքաթիւրք Մուսթաֆա Բեմալ** (1881 - 1938) - Թուրքիոյ պետական, քաղաքական եւ ռազմական ղեկավար: Թուրքական Հանրապետութեան հիմնադիր եւ առաջին Նախագահ (1923 - 1938):

³⁹ **Մարթայեան Յակոբ, «Տիլաշար»** (1895, Ստանպոլ - 1979, Ստանպոլ) - լեզուաբան, թրքագետ, մանկավարժ: Աւարտած է Պոլսոյ Ամերիկեան Ռապրտ գոյեճը, որ յետագային դասախօսած է թրքագիտութիւն, դառնալով այդ հաստատութեան տնօրէնը: Ստացած է Ամերիկեան ակադեմիական «Արուեստից Մագիստրոս» տիտղոսը եւ փրօֆէսուօրի կոչում:

Մինչեւ 1932 ապրած է Պէյրութ, Սոֆիա, գրադած է հայագիտութեամբ: Ստանձնած է Պէյրութի առաջին հայկական վարժարանին տնօրինութիւնը: Հիմնած է «Ռահպիլիայ», «Մշակոյթ» թերթերը (Սոֆիա), խմբագրած «Լոյս» շաբաթաթերթը (Պէյրութ):

Ան գիտակ էր կարգ մը լեզուներու՝ թուրքերէն, արաբերէն, եբրայեցրէն, անգլերէն, ֆրանսերէն, պոլկարերէն, ռուսերէն, լեհերէն, նաեւ մեռած հիթիթերէն եւ շումերերէն:

Թուրքիան երոպականացնելու եւ գիտութիւնն ու մշակոյթը զարգացնելու նպատակով նոր պետութեան ղեկավար Մուսթաֆա Բեմալը, գնահատելով Է.

Մարթայեանին գիտկիքները, 1932-ին հրաւիրած է որ ան Պուլկարիայէն գալ, Թուրքիա հաստատուի: Զայն «Տիլաչար» անուանած է, այսինքն՝ լեզու բացող, ինչպէս որ Յ. Մարթայեան ալ Մուսթաֆա Քէմալը օժտած է «Աթաթիրք» (Թուրքերու Հայր) մականունով:

Յ. Մարթայեան Անգարայի համալսարանի մէջ դասախօսած է լեզուաբանութեան պատմութիւն եւ ընդհանուր լեզուաբանութիւն: Եղած է 1932-էն ստեղծուած Թուրքական լեզուաբանական միութեան (Türk dil kurumu) ղեկավար անդամներէն՝ մեծապէս նպաստելով արաբական այբուբենը լատինականով փոխարինելու, թրքերէնը օտարաբանութիւններէն մաքրելու եւ թրքական բառարմատներէն նոր, արդիական բառեր ստեղծելու գործին:

Յ. Մարթայեան եղած է Մուսթաֆա Քէմալ Աթաթիրքին զլիստր խորհրդապետու ոչ միայն լեզուի, գիտութեան, մշակոյթի, այլ եւ ուրիշ մարզերու մէջ, քանի որ երկրին ղեկավարը կը ջանար շատ բան գիտնալ ուրիշ երկիրներու եւ պետական կարգերու մասին, որպէսզի այդ բոլորը օգտագործէ ի նպաստ Թուրքիոյ յառաջդիմութեան:

⁴⁰ **Գարեգին Ա. Խաչատուրեան (Տրապիզոնցի) Պատրիարք** - պատրիարքական գահին կը նստի 1951-1961-ին: Արմաշական մեծանուն հոգևորականը մշակութային եւ վերանորոգչական մեծ երախտիք կ'ունենայ: Ան կը ջանայ Պատրիարքական Աթոռին հեղինակութեանը նոր փայլ հաղորդել: Հանրային կեանքը, որ բաղդատաբար մարած էր, նոր ոգևորութիւն եւ թափ կ'տանէ: Իր օրօք Ֆերի գիւղին վարժարանը կը վերաշինուի եւ կ'ընդարձակուի: Կ'ընդարձակուի նաեւ նոյն թաղի եկեղեցին: 1953-ին Սկիւտարի բարձունքին վրայ Ս. Խաչ Դպրեվանքը կը հիմնէ, որ անոր կրթասիրական եւ շինարարական ձեռնարկներու ամենացայտուն կոթողը կ'ըլլայ եւ ձեւով մը շարունակութիւնը՝ Կոլոտ Պատրիարքին հիմնադրած ճեմարանին, ինչպէս նաեւ Արմաշու մեծահամբաւ Դպրեվանքին: 1952-ին «Շողակաթ» հանդէսին հրատարակութեան հիմ կը դրուի: Կը ձեռնարկուի Կետիկ Փաշայի Ս. Մեսրոպեան եւ Գատրգիւղի Արամեան-Ունճեան վարժարաններուն վերաշինութեան: Ս. Խաչ Դպրեվանքը արդիական երկրորդ շէնքով մը կ'օժտուի:

Գարեգին Ա. Տրապիզոնցի Պատրիարքը բառին բուն իմաստով հայրապետ մըն էր: Իր քարոզներուն մէջ համայնքին բոլոր ներկայացուցիչներուն մշտապէս հայրական խրատներ կու տար:

Իր հոգևոր հօր՝ մեծանուն Պատրիարք Եղիշէ Արք. Դուրեանին տիպարը ունենալով, լուստես եւ լուսամիտ Գարեգին Ա. Պատրիարքը աշխատասիրած է «Աշխարհի լոյսն ի Հայս» երկասիրութիւնը: Ունի նաեւ կարգ մը ուրիշ կարեւոր աշխատասիրութիւններ:

⁴¹ **Գալուստեան Շնորհք Պատրիարք** (աւագանի անունը՝ Արշակ) (1913, Եօզղատ, Իյտէի գ. - 1990, Ս. Էջմիածին) - նախապէս Կեսարիոյ Թալաս գիւղի ամերիկեան որբանոցը կը խնամուի, ապա Երուսաղէմի Ժառանգատրաց վարժարանը կը յաճախէ: 1935-ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի եւ կը վերակոչուի Շնորհք արեղայ՝ ծառայելով Երուսաղէմ, Անթիլիաս, Լոնտոն, Գալիֆոնիա, Միլանո: 1961-ին Պուլսի Հայոց Պատրիարք կ'ընտրուի: Իր նախորդին՝ Գարեգին Խաչատուրեան Պատրիարքին օրօք սկսուած Գատրգիւղի Արամեան-Ունճեան եւ Կետիկ Փաշայի Ս. Մեսրոպեան վարժարաններուն շինութիւնները իրենց լրումին կը հասնին: Կը վերանորոգուի Սահակեան վարժարանը: Մեծ վերանորոգութեան կ'ենթարկուի Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցին, Պէյքօզի, Գանտիլի, Եշիգիւղի եւ Գընալը կղզիի եկեղեցիներուն մանր նորոգութեանց կողքին: 1962-ին Ղալաթիոյ նոր Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հիմնարկէքը կը կատարէ: Կը յիշատակուի Պուլսոյ Հայոց Պատրիարքութեան հաստատման 500-ամեակը: Այդ առթիւ լոյս կը տեսնէ «Շողակաթ»-ին բացատիկ (1461-1961)

յրբեխնական հանդէսը: Իր հանդիսապետութեամբ եւ հովանաւորութեամբ կը նշուի նաեւ Պատրիարքութեան հիմնադրութեան 525-ամեակը եւ իր գահակալութեան 25-ամեակը: Կը վախճանի 8 մարտ 1990-ին Ս. Էջմիածնի մէջ, ուր կը գտնուէր հովուական այցելութիւն տալու համար աղէտի գօտիի իր հօտին: Պուլսոյ պատրիարքական գահի ամենաերկարակեաց հովուապետը եղած է:

⁴² **Սվաճեան Ծահան Արքեպիսկոպոս** (ծն. 1926, Ստանպուլ) - 1954-ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի: 1966-ին Ս. Էջմիածնի մէջ եպիսկոպոս կ'օժտուի: Երկար տարիներ Պուլսոյ Հայոց Պատրիարքութեան կրօնական ժողովին ատենապետ եղած է: Ծրջան մը նաեւ պատրիարքական փոխանորդ եղած է, Ս. Խաչ Դպրեվանքի տեսուչ: Պուլսոյ տարբեր դպրոցներէ ներս ուսուցչութեան պաշտօն վարած է: Նախագահն է Սկիւտարի միացեալ դըպրաց դասերգչախումբին:

⁴³ **Գազանճեան Գարեգին Բ. Պատրիարք** (աւագանի անունը՝ Պետրոս) (1927, Ստանպուլ - 1998, Ստանպուլ) - կրթութիւնը առած է շրջան մը Կեդրոնական, ապա նաեւ՝ Երուսաղէմի Ժառանգատրաց վարժարաններուն մէջ, ուր յետագային, որպէս կուսակրօն, վարած է փոխ-տեսուչի պաշտօն: Գարեգին Պատրիարք Խաչատուրեանին հրաւերով վերադարձած է Պուլս, 1954-ին պաշտօնական բացումը կատարած Ս. Խաչ Դպրեվանքին եւ ծայրագոյն վարդապետ ձեռնադրուելով՝ դպրեվանքին տեսչութիւնը ստանձնած:

1960-էն՝ Ուաշինկթընի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ: 1967-ին եպիսկոպոս օժտուած է: Աւելի վերջ Աւստրալիոյ Հայոց առաջնորդ կարգուած է: Երկար տարիներ այս պաշտօնին վրայ մնալէն վերջ, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան լուսարարապետ ընտրուած է: 1990-ին Պուլսոյ Հայոց Պատրիարք ընտրուած է: Իր օրօք Պատրիարքութեան հիմնադրութեան 535-ամեակը նշուած է:

⁴⁴ **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս** (աւագանի անունը՝ Նշան Սարգիսեան) (1932, Քեսապ - 1999, Ս. Էջմիածին) - նախապէս ծննդավայրի վարժարանը յաճախած է, ապա ուսումը շարունակած Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքը եւ Օքսֆորտի Համալսարանը, գիտական աստիճան առած: 1949-ին սարկուազ կը ձեռնադրուի, 1952-ին՝ կուսակրօն քահանայ՝ վերակոչուելով Գարեգին արեղայ: 1955-ին վարդապետական գաւազան կը ստանայ եւ կը պաշտօնավարէ դպրեվանքի մէջ՝ տեսուչի պաշտօնով: Կը մասնակցի միջեկեղեցական կարգ մը համագումարներու եւ ժողովներու, որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ներկայացուցիչ: 1963-ին Խորէն Ա կաթողիկոսի տնօրինութեամբ իրեն Օայրագոյն վարդապետի աստիճան կը շնորհուի: 1964-ին եպիսկոպոս կը ձեռնադրուի: 1963-ին «Հայաստանեայց եկեղեցւոյ համալսարանական ուսանողներու միութիւնը» (ՀԵՀՄ) կը հիմնէ: Աստուածաբանութեան, գրականութեան, պատմութեան եւ մշակոյթի միջ կը դասախօսէ ՀԸԼՄ Դարուի Յակոբեան երկրորդական վարժարանի, Պէյրութի «Համագազանի» Նշան Փալանճեան ճեմարանի, Պէյրութի Ամերիկեան Համալսարանի եւ կարգ մը եկեղեցիներու մէջ: 1971-ին Գարեգին եպիսկոպոս կ'ընտրուի եւ կը ստանձնէ Պարսկա-Հնդկաստանի թեմին առաջնորդութիւնը, զարկ տալով թեմին հոգևոր-մշակութային կեանքին: 1974-ին Ամերիկայի հիւսիսային թեմի առաջնորդ կ'ընտրուի, իսկ 1983-ին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս: Իր գործունէութեան 18 տարիներու ընթացքին Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ յայտնի դարձած է ազգային, կրօնական, մշակութային եւ շինարարական գործերով, մասնաւոր հոգատարութեան առարկայ դարձնելով Անթիլիասի դպրեվանքը, ուր տպագրուած են աւելի քան 350 հատորներ: Բազմաթիւ յօդուածներու եւ հատորներու հեղինակ է, որոնք հրատարակուած են աշխարհի տարբեր լեզուներով: Ի դէպ, 1994-ին Գարեգին Բ Կաթողիկոսին բարեշնորհ հովանավորութեամբ Երեւան հրատարակուած են տողերս գրողին երկու ստուար հատորները, որոնք կ'ամփոփեն Կիլիկիոյ եւ արեւմտահայոց բերանացի աւանդութիւնները: 4 Ապրիլ

1995-ին Ազգային-եկեղեցական ժողովը Գարեգին Բ Կիլիկիոյ Կաթողիկոսը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց՝ վերակոչելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա:

Ամենայն Հայոց Հայրապետը 8 Մայիս 1996-ին Յոնաց Օրթոտոքս եկեղեցւոյ Տիեզերական Տ.Տ. Պարթոլոմէոս Ա Պատրիարքին հրաւերովը կը ժամանէ Ստանպուլ, իսկ միւս օրը կը հիւրասիրուի Գարեգին Բ Պատրիարքին կողմէ: Մայիս 12-ին կը նախագահէ Թուրքիոյ Պատրիարքական Աթոռի հիմնադրութեան 535-ամեակի հանդիսութեանը:

Իր մահկանացուն կը կնքէ Ս. Էջմիածին, յետ տեսական ծանր հիւանդութեան:

⁴⁵ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը 10 Դեկտեմբեր 1996-ին այցելեց Հոնոմ, ուր կաթողիկէ եկեղեցւոյ պետ Ն.Ս. Յովհաննէս-Պողոս Բ Պապին հետ միջեկեղեցական կարեւոր խնդիրներ քննեց:

⁴⁶ **Մուրաֆեան Մեսրոպ Արքեպիսկոպոս** (աւագանի անունը՝ Միգաս, Վարդան) (ծն. 1956, Ստանպուլ) - սկզբնապէս կը յաճախէ Պոլսոյ Էսայեան ազգային վարժարանը, ապա կ'աւարտէ Պոլսոյ անգլիական Գօլէճի բարձրագոյն բաժինը, Շթուրթկարթի Ամերիկեան Գօլէճի գեղարուեստի եւ պատմութեան բաժինը եւ ԱՄՆ-ի Թեննիսի գահանգի Մեմփիսի պետական համալսարանին կրօնքի, ընկերաբանութեան եւ փիլիսոփայութեան ճիւղերը: 1977-ին սարկաւագութեան աստիճան կ'ընդունէ, 1979-ին՝ Շնորհք Պատրիարքի ձեռամբ կուսակրօն քահանայ կ'օծուի եւ կը վերակոչուի Մեսրոպ արեղայ: Ապա կը մեկնի Երուսաղէմ, երբայական համալսարան՝ խորանալու Ս. Գրային հնագիտութեան եւ երթայեցերէնի մէջ եւ կը ստանայ Ս. Գրային հնագիտութեան թեկնածուի գիտական աստիճան, միաժամանակ ժառանգաւորաց վարժարանի ընծայարանի մէջ դասաւանդելով անգլերէն եւ Հին Կտակարանի ներածութիւն:

1982-ին կը վերադառնայ Պոլիս եւ Շնորհք Պատրիարք Հօր քարտուղար եւ եկեղեցիներու ընդհանուր քարոզիչ կը նշանակուի, մանկանց եւ երիտասարդաց համար Ս. Գրքի ուսուցման եւ շարականի երգեցողութեան դասընթացքներ կը կազմակերպէ: Մէկ տարի ետքը Թուրքիոյ հայոց պատրիարքութեան դիւանապետը կ'ըլլայ: 1986-ին ծայրագոյն վարդապետութեան աստիճան կը ստանայ եւ Վազգէն Ա Կաթողիկոսի կողմէ եպիսկոպոս կը ձեռնադրուի՝ Պոլսոյ Իշխանաց կղզիներու փիճակաւոր տեսուչ նշանակուելով: 1990-ին կրօնական ժողովի ատենապետ կ'ընտրուի, միջեկեղեցական եւ միջկրօնական գծով պատրիարքական փոխանորդ եւ եկեղեցիներու համաշխարհային կանոնագիտութեան միջազգային ընկերակցութեան անդամ կը նշանակուի: Ան գործուն մասնակցութիւն կ'ունենայ միջեկեղեցական կարգ մը համագումարներու եւ ժողովներու, որպէս Հայոց Պատրիարքութեան փոխանորդ-լիազօր:

Լեզուներու գիտակ Մեսրոպ Մուրաֆեանի ջանքերովը կը տպագրուի պատրիարքութեան «Լրաբեր» հայերէն եւ թրքերէն տեղեկատուն (խմբագիր՝ Տրդատ քհն. Ուոունեան), ինչպէս նաեւ «Շողակաթ» հանդէսը, որուն զխառր խմբագիրն է:

Գարեգին Բ Պատրիարքի հովանաւորութեամբը եւ Մեսրոպ Սրբազանի անմիջական ղեկավարութեամբը 1996-ին կը կազմակերպուի Պոլսոյ Հայոց Պատրիարքական Աթոռի հիմնադրութեան 535-ամեակին նուիրուած միջոցառումներու շարքը, ընդ որում նաեւ իր բնոյթով եզակի «Վարդավառի» միջազգային գիտաժողովը: Թուրքիոյ կառավարութեան արտօնութեամբ կ'իրականանայ Կեսարիոյ Ս. Գր. Լուսաւորիչ (1996) եւ Սամանտաղի (Մուսա լեռ) Վազգէն գիղիկն Ս. Աստուածածին (1997) եկեղեցիներուն վերակառուցումը, Գընալը կղզիին Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ զանգակատունին եւ խորանին վերանորոգութիւնը եւ բարեգարդումը: Մասնաւոր պատուիրակութեամբ կը մեկնի Տիարպէքիր՝ տեղի գերեզմանատան եւ Ս. Կիրակոս եկեղեցւոյ, նաեւ Մերտինի

Տերիկ գիղիկն Ս. Գեւորգ «Կարմիր» եկեղեցւոյ վերանորոգութիւնը կազմակերպելու: Այս եւ ուրիշ բազում առաքելագործութիւններու հետ՝ Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեանի զխառրութեամբ յաճախ կը կազմակերպուին մշակութային եւ գեղարուեստական ձեռնարկներ: Մեսրոպ Սրբազան նաեւ մի քանի յուրս ուսումնասիրութիւններու հեղինակ է:

Գարեգին Բ Պատրիարքի մահէն յետոյ կրօնական ժողովի կողմէ Պատրիարքական տեղապահ կ'ընտրուի, իսկ 21 Նոյեմբեր 1998-ին՝ Պոլսոյ Հայոց Պատրիարք:

⁴⁷ 1996-ին մեր լաւ եւ գրի առած ժողովրդական այս յուշը հիմը դարձած է «ժողովուրդին ծառան ըլլալը շատ մեծ պատիւ է» մեր գեղարուեստական դիմանկար-ակնարկին, որ լոյս տեսաւ եւ արեւելահայերէն, եւ արեւմտահայերէն (Տեւ, Վերծին Սվազլեան, «Գարուն», Երեւան, 1997, թիւ 7, էջ 29-31: «Ժամանակ», Ստանպուլ, 1997, Օգոստոս 11: «Ազգ», 1998, Նոյեմբեր 21 նուիրուած Թուրքիոյ Հայոց նորընտիր պատրիարք Մեսրոպ Արք. Մուրաֆեանի զանակալութեան սկզբնաւորմանը: Որպէս յօդուածի բնաբան օգտագործած ենք նախորդ յուշի մէջ յիշատակուած Շնորհք Պատրիարքի խօսքը. «Քսանհիւզ տարի աղօթեցի տիրոջը, որ ժողովուրդիս գլուխը աղուոր հովի մը ըլլայ, Տէրը Մեսրոպը դրկեց»):

⁴⁸ **Ալթուն Նազար** (1924, Կեսարիա - 1994, Ստանպուլ) - Պոլսոյ հայ համայնքին հեղինակաւոր յայտնի դէմքերէն եղած է: Բազմաթիւ են Նազար Ալթունին կառուցած յարմարաւետ եւ գեղեցիկ բնակելի շէնքերը, ինչպէս նաեւ բարեգործութիւնները: Շատեր գինք երախտագիտութեան զգացումով կը յիշեն: Նազար Ալթունի այրին՝ Տիկին Վարդուհի, այս գրոյցը պատմող անոր դուստրը Տիկին Տիգրանուհին, ինչպէս նաեւ յայտնի ազգային դարձած անոր որդին՝ պր. Տիգրան Ալթուն, Տիկին Շնորհիկին հետ, զորս ի մօտոյ ճանչնալու բախտը ունեցայ, հաւատարմօրէն կը շարունակեն Նազար Ալթունին բարեգործական աւանդները: Արժանաւոր հօր, արժանաւոր որդւոյ՝ պր. Տ. Ալթունին եւ բոլոր հարազատներուն նախաձեռնութեամբը Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի մուտքին մօտ Նազար Ալթունի յիշատակին ներմակ մարմարով շտապ օգնութեան մասնաճիւղը շինել տուած են: Պր. Տ. Ալթունի նիւթական աշակցութեամբը իրականացան նաեւ մեր կազմած «Հայ ժողովրդական Հեթիաթներու» վան-վասպուրական հատորին համակարգչային աշխատանքները: Այդ հատորը աւելի ուշ գերաշնորհ Տ. Մեսրոպ Աշճեանի բարեշնորհ հովանաւորութեամբ լոյս տեսաւ 1998-ին, Երեւանի մէջ:

⁴⁹ Մայրը իր ցուցամատին ծայրովը նորածին մանուկին քիթիկին, կզակին եւ այտերուն հպելով կը խաչակնքէ՝ կրկնելով այդ խօսքերը, մինչեւ մանուկը սկսի ծափիլ:

⁵⁰ Այս եւ յետագայ «Տան, տան»ներով գիրկի մանուկը վեր-վեր թոցնելով կը պարեցնեն:

⁵¹ Մանուկին ափերը բանալով ծափիկ ընել կու տան եւ կ'երգեն:

